Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17706

196

05 OCT 2011
AUG 2006

9(495)
Գ-41

Հ. ԳԵԼՑԵՐ

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ԲԻԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԳԵՐՄԱՆԵՐԷՆԻՑ ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ ՄՈՎՍԻՍԵԱՆ

1004
17694

Հայոց Ազգագրական Դպրոց
Թիֆլիս

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻՉ Ա.

Վեհափառ. Եւ Սրբազնագոյն Կաթուղիկոսի

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1901

14 MAR 2013

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԿՈՎԿԱՍԱԳԻՏԱԿԱՆ—ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

Երուանդ Լալայեանից.

Дозволено Цензурою, 1 Сентября 1897 г. г. Тифлисъ.

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ
ԲԻԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

H. Gelzer.

ABRISS DER BYZANTINISCHEN

Kaisergeschichte.

ՆԱԽԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՉԻ

«Ով երբ և իցէ պարապել է բիւզանդական անցեալի ասպարիզում, նա գիտէ թէ ինչքան զգալի և ցաւալի է, որ դեռ չկայ բիւզանդական պատմութեան համառօտ, վստահելի և գիտութեան նոր պահանջներին համապատասխան մի նկարագրութիւն։ Ահա այդ պակասը այժմ լրացել է. արքունական խորհրդական Պ. Հ. Գելցերը, Ենայի պատմութեան պրոֆեսորը՝ յանձնառու է եղել իմ խընդիրքով տալ Բիւզանդական Պատմութեան նկարագրութիւնը, որ գրքիս յաւելուածն է կազմում (էջ 911—1067). Գրուածքի արժանիքի և թերութեան բացարձակ պատասխանատուն ինքը Պ. Հ. Գելցերն է»։*

Այս խօսքերը գրողը Կարլ Կրումբախերն է իւր Բիւզանդական Մատենագրութեան Պատմութեան յառաջաբանի մէջ։ Եթէ մինչև այսօր նոյն իսկ գերմաներէն լեզուով պակասել է բիւզանդական պատմութեան յարմար գործածելի մի ձեռնարկ, դա ունի իւր պատճառները։ Մինչդեռ յունական դասական անցեալի իւրաքանչիւր երևոյթ, գրական—պատմական, գեղարուեստական, փիլիսոփայական ևն. սկսած

* Տես. Karl Krumbacher, Geschichte der byzantinischen Litteratur, München, 1897 էջ XI, յառաջաբան։

միջին, մանաւանդ վերածնութեան դարերից քաղաքակրթ Եւրոպայի խորը և բազմակողմանի ուսումնասիրութեան առարկայ էր և է, նոյն յունական կեանքի անմիջական ժառանգն ու շարունակողը՝ Բիւզանդիոնը իւր յայտնի արևելա—յունական քաղաքակրթութեամբ անուշադիր էր թողնուել և մինչև անգամ արհամարուել. միայն վերջերս են զգացել այդ ընթացքի սխալը և մեծ եռանդով սկսել թերին լրացնել. նոր ուղղութեան ամենազօրեղ զարկ տուողը եղաւ Միւնխէնի պրոֆեսոր յիշեալ Կ. Կրումբախերը, որ 1890 թ. հրատարակեց առաջին անգամ բիւզանդական գրականութեան պատմութեան առաջին ընտիր ձեռնարկը և հաստատ օրինակներով ապացուցեց, որ ոչ միայն արհամարհելի չէ, այլ և անհրաժեշտ է լաւ ուսումնասիրել բիւզանդականանցեալը մարդկային քաղաքակրթութեան կապն ու ընթացքը լաւ ըմբռնելու համար: Նրա զուտ գիտական հիմունքների վրայ դրած գիրքը, թէև իբրև առաջին փորձ ոչ զուրկ թերութիւններից, մեծ յաջողութիւն ունեցաւ և ամենակարճ ժամանակում տարածուելով՝ վաստակեց բիւզանդական անցեալով հետաքրքրուող բաւական թուով բարեկամներ: Երկու տարի անց՝ 1892 թ. նա սկսեց հրատարակել „Byzantinische Zeitschrift“—Բիւզանդական Լրագիր» և յաջողացրեց որ բավարական տէրութիւնը Միւնխենի համալսարանում բիւզանդական առարկաների համար առանձին պրոֆեսորութիւն հաստատի. Օրինակը խրախուսեցուցիչ էր. նոյն առարկաների համար այս մի քանի տարուայ ընթացքում պրոֆեսորութիւններ են հաստատուել Ռուսաստան՝ Պետերբուրգում, Հոլանդիա, Լեյդենում, Հունգարիա՝ Բուդապեստում. բացի այդ

1894 թուից սկսած Պետերբուրգի կայսերական ակադեմիան Վասիլեվսկու խմբագրութեամբ հրատարակում է «Византійскій Временникъ—Բիւզանդական ժամանակագիր» թերթը. ևի վերջոյ Կրումբախերի գրքի առաջին հրատարակութիւնը ամենակարճ ժամանակում սպառուելով, նա 1896 թ. հրատարակել է նոյնը երկրորդ անգամ, որը առաջինի համեմատութեամբ առ նուազն երեք անգամ աւելացրած է, թէ թերի մասերի լրացումներով և թէ նոր գլուխների աւելանալով, որ չկային առաջինի մէջ: Որև է հինգ վեց տարուայ ընթացքում սկսած և այդքան մեծ չափով ծաւալ ստացած բիւզանդական ուսումնասիրութեան գործը ամենից շատ մեզ Հայերիս համար է մխիթարական և ամենից շատ մեզ պիտի հետաքրքրէ և ուրախացնէ:

Ո՞ւմ յայտնի չէ, որ մեր պատմական համարեա ամբողջ անցեալը ամենասերտ կերպով միացած էր յունական և մասնաւորապէս բիւզանդական կեանքի հետ. մանաւանդ սկսած այն ժամանակից, երբ Բիւզանդիոնում և Հայաստանում հաստատուեց քրիստոնէութիւնը՝ որով երկու հարևան ազգերի մէջ աւելի ամրացան քաղաքականեմտաւորական կապերը. Հայերը անընդհատ շփման մէջ էին Յոյների հետ, երբեմն իբրև դաշնակից և բարեկամ, երբեմն իբրև թշնամի կամ հալածեալ և ընկճեալ. թէ հալածուած և թէ բարեկամ ժամանակ միշտ ընդունել են Յոյներից ահագին քաղաքակրթական պաշար, փոխարէնը Բիւզանդիոնի գահին այնպիսի հայազն գահակալներ տալով, որոնց իշխանութեան ժամանակամիջոցը բիւզանդական կայսրութեան ամենափայլուն և ամենածաղկեալ շրջանն է համարուած, որոնք քանիցս աղատելեն բիւզանդականգահը ապահով

կորստից, իսկ ընդհանուր մարդկութեան համար պահպանել են դարերի քաղաքակրթութիւնը բարբարոսանալուց և անհետանալուց։ Մինչև օրս այդ փոխադարձ յարաբերութիւնների մասին մեր ունեցածն ու գիտեցածը գլխաւորապէս, կամ համարեա բացառապէս, ծագել է հայկական աղբիւրներից, որը բացի այն որ բնականաբար միակողմանի է եղել, շատ մասերով էլ թերի էր։ Մեզ համար շատ դժուար էր մտնել բիւզանդական գրականութեան ահագին և խիտ անտառը և այնտեղից անհրաժեշտ օգուտն ստանալ. իսկ այսօր շնորհիւ Եւրոպացի անխոնջ գիտնականների ջանքերին բացուած և դիւրացած են անտառի ճանապարհները. այսօր այլ ևս ներելի չէ, որ Հայոց պատմութեամբ և մատենագրութեամբ պարապենք առանց ամեն քայլափոխում բիւզանդականի օգնութեանը դիմելու։ Ահա այդ անհրաժեշտութիւնից առաջնորդուած, թարգմանում ենք պրոֆեսոր Գելցերի աշխատութիւնը ամբողջովին, որ որոշուած էր մաս մաս տպելու «Արարատի» մէջ. բայց յետոյ յարմար դատուեց հրատարակել առանձին գրքով։

Գելցերը յունական պատմութիւնը*սկսում է 395 թ. և հասցնում է մինչև 1453 թուականը՝ ինքը շրջանների բաժանելով։ Համարեա հաղար տարուայ զանազան անցքերով բազմահարուստ պատմութիւնը՝ գրքի ծաւալի պատճառաւ ստիպուած լինելով ընդամենը միայն 156 մեծագիր ութածալ էջերի մէջ ամփոփելու, չափազանց համառօտելէ. բայց

*Abriss der byzantinischen kaisergeschichte. Bearbeitet von H. Gelzer.

անկախ այդ հանգամանքից՝ նա կարողացել է մեծ վարպետութեամբ ոչ միայն քաղաքական այլ և կրոնական հարցերին և ժամանակակից հասարակական ամենից աւելի աչքի ընկնող երևոյթներին բաւական չափով տեղ տալ իւր նկարագրութեան մէջ։ Թէ նա իբրև պատմաբան ինչ առաւելութիւններ ու թերութիւններ ունի, այդ մասին ոչինչ չենք կարող ասել. միայն նա հայկական տեսակետից իւր դասակից մասնագէտներից այն բացարձակ առաւելութիւնն ունի, որ լաւ գիտէ Հայոց գրականութիւնն ու պատմութիւնը և Հայերի մասին կարծիքներ յայտնում է իւր ունեցած գիտութեան հիման վրայ՝ անկողմնապահ և անկանխակալ։ Նա պատմութեան ընթացքում շարունակ յիշում է բիւզանդականի հետ կապ ունեցող հայկական դէպքերը, որ հայերէն չիմացողի ուշադրութիւնից կարող էին վրիպել։ Նախընթացում յիշածի հետ՝ այս հանգամանքն էլ բաւական կարևոր և դրդիչ էր, որ ես օգտակար համարեցի թարգմանել այս գործը։ Զափազանց համառօտութեան շնորհիւ ասացուածքների մէջ մեծ խրթնութիւններ և մինչև անգամ անորոշութիւններ կան, որ արտայայտուելու են նաև թարգմանութեան մէջ, որ այդ պատճառով սաստիկ դժուար էր։ Այս յայտնի լինելով, պահանջուում է ընթերցողի ուշադրութիւնը աւելի մեծ չափով։

ՄԵՍՐՈՊ Վ. ԱՐԴԱՊԵՏ

1897 թ. Յունիս 24.
Ս. Էջմիածին

ՆԱԽԱԲԱՆ

Ընդհանուր պատմութեան ընթացքում շրջաններ և սահմանափակումներ ընդունելը ուղղակի պատահական է և դրա համար միանգամայն քմահաճոյական, քանի որ պատմութիւնն ինքը, որի մէջ անցած և յաջորդող դէպքերը միացած են պատճառական կապերով, բաժանմունքներ չէ ընդունում։ Նա մի շարունակուող յարատևութիւն է։ Այդ պատճառով ոչ մի ձեռնարկութիւն այնքան անխորհուրդ չէ կարող լինել քան այն որ կամենում են, հետևելով մեր սովորական գործածական դարձած ընդհանուր պատմութիւններին, հաստատապէս որոշել հռովմէական տէրութեան վախճանը և հին ու միջին դարերի սահմանը։ Մեր դպրոցներում ժամանակագրական կարգով որոշուում էր կամ որոշուում է մազաչափ ճշտութեամբ՝ ընդհանուր պատմական տեսակէտից այդ նշանաւոր դարագլխի նոյն իսկ տարին։ Եւ այն էլ սովորաբար ուշադրութեան են առնում միմիայն արևմուտքը. մինչդեռ այդ հակապատմական է, որ գերադասեն համարում միայն արևմտեան մասը և ի նկատի առնում նրա պատմական զարգացումը և ըստ այնմ՝ առանց այլևայլութեան, հռովմայեցւոց կայսրութեան և հին դարի վերջը 476 թիւը ընդունում, որովհետև այդ թուին հռովմէական տէրութեան—Imperium Romanum—արևմտեան բաժնի վերջին օրինական կայսրը գահից ղրկուեց և Թոշակի կապուեց։ որ, եթէ ընդհանուր պատմութեան տեսակէտից դատենք, այնքան նշանաւոր դէպք էր, ինչքան Սերբիայի Միլան թագաւորի հրաժարականը 1892 թուին։ Բայց ժամանակակիցները այդ այդպէս ասուած ընդհանուր պատմական կարևորութիւն ունեցող եղելութեանը այնքան քիչ նշանակութիւն են տուել, որ նոքա—և ամենից առաջ յաղթանակող Գերմանացիները—առաջուայ պէս շարունակել են Օդովակրի և յետոյ Թէոդորիխի երկիրը Հռովմայեցւոց տէրութեան մի մասը համարել, իրենց հպատակներին կայսեր հպատակներ ճանաչել և պահպանել են կայսերական տէրութեան վերաբերեալ արուած կարգադրութիւնները։

Ահա այդ էր պատճառը, որ ոսկեղբամը նոյն իսկ գերմանական կոչուած տէրութիւնների մէջ կտրուում էր կայսեր պատկերով։ Մինչև անգամ Գոթերը վստահանում էին Բուստինիան կայսեր դէմ յանդիման յայտա-

բարել, թէ նոքա մշտապէս յարգել են կայսեր առանձնաշնորհութիւնը։ Իսկ աէրութեան արևելեան մասը, որը կարողացաւ պահպանել հնուց ժառանգած քաղաքակրթութիւնն աւելի մեծ եռանդով և յաջողութեամբ քան արևմտեան մասը, ոչ մի կերպ չէ կարող երկու մասերի՝ հին և միջին դարերի բաժանուել։ Յամենայն դէպս Իսլամի երևալուց ոչ առաջ, որովհետև միայն հերակլ կայսեր իշխանութիւնից յետոյ, այն զարմանալի կռուով, որ վարեց Բիւզանդիոնը սեմիտական ցեղի ահեղ յարձակման դէմ, սկիզբն է առնում դարուկէս շարունակուող մտաւոր խաւարը, որը պարզ կերպով սահմանում է տիեզերքի նոր օրերի մուտքը։ Բայց եթէ, օրինակի համար, համառօտ բիւզանդական պատմութիւնը սկսուէր Լևոն Իսաւրացու դահակալութիւնից, ընթերցողը կզրկուէր իսկապէս ամենակարևոր և ընդհանուր—պատմական ամենանշանաւոր դարուծանօթութիւնից, մի շրջանի՝ որի մէջ պէտք է որոնել այն նախապայմանները և սկսուածքները, որոնք վերջը բիւզանդական առանձնայատուկ դարաշրջանի պատմական զարգացումն են ցոյց տալիս։

Սակայն նոյնքան էլ պարզ է և հասկանալի, որ հեշտութեամբ չենք կարող մերժել պատմական նիւթի շրջանների և սահմանափակումների բաժանումն։ Բայց մեր մէջ պէտք է կենդանի լինի այն գիտակցութիւնը, թէ մենք իսկապէս միմիայն յեցափայտ ենք գործ դնում, որպէս զի կարողանանք առարկայի մասին ձեռք բերել մի ընդհանուր հայեացք։ Հէնց այդ իսկ պատճառով, ցանկալի է հնուս մնալ այն ընդհանրացած պրոֆէսորական և վարժապետական իմաստակութիւնից, որ ոչ մի պատմական դրուածք կամ դասագիրք վաճառքի չեն հանում մինչև որ նա չունենայ աւելի լաւ պատճառաբանուած շրջաններ, կամ կըտրըտուած չլինի տրամաբանօրէն ուղիղ համարուած բաժանմունքներով։ Սակայն մենք ևս այս դէպքում էլի նպատակահարմար ենք գտնում թողնել, որ աւանդական ընդունուածը մնայ։ Մենք շատ վաղուց է վարժուել ենք՝ Արկադիոսից մինչև Կոնստանդին Թ (395—1453) կայսրների պատմութիւնը միացնել և ընդունել իբրև արևելահռովմէական կամ բիւզանդական պատմութիւն։ Այս անդամ էլ միայն գործնական հայեցակէտին դերակշռութիւն տալով, կըպահպանենք մենք ևս այդ հին՝ Փրանկական դասաւորութիւնը. թէև շատ լաւ յայտնի է, որ այդ բաղմից ժխտուել է անգամ այն գիտնականների կողմից, որոնք սկզբունքով պատմական շրջանների բաժանման որոգեորուած կողմնակիցներ են։ Բաւական արդ-

դարացի կերպով շեշտուել է, թէ չնայած որ Թէոդոսի մահուանից յետոյ տէրութիւնը բաժանուել է, ժամանակակիցները դեռ երկար դարեր հասկացողութիւն ունէին միայն մի հռովմէական տէրութեան մասին— Res publica կամ Manus publica — սովորաբար այդպէս էին անուանում Է և Ը դարերում Սպանիայում և Փրանկների թագաւորութեան մէջ։ Ուստի կարելի է արևմտահռովմէական տէրութեան— ինչպէս նաև բնականաբար արևելահռովմէական տէրութեան—մասին խօսել միայն Կարլոս Մեծի արևմտահռովմէական կայսրութեան հաստատելուց յետոյ։ Այդ էլ այն չափով է ուղիղ և յարմար, բայց և այն չափով սանդղական, ինչպէս իրաւաբանների լեզուի մէջ գործածական է, որ նոքա Օդոստոսից մինչև Դիոկղէտիանոսի ժամանակը—Dyarchia – երկպետութիւնն են կոչում, իսկ մնացած շրջանը— Monarchia—միապետութիւն։ Իսկապէս իրաւ է և ուղիղ՝ եթէ սահմանադրութիւնը աչքի առաջ ունենալով ասենք, որ այդ շրջանում տէրութիւնը բաժանուած էր կայսեր և սենատի մէջ։ Սակայն իրապէս արդարացի են նաև պետական իրաւունքի մէջ այնքան ազէտ համարուած տարեղիրները, որոնք Կեսարի և Օդոստոսի ժամանակից են սկսում հռովմէական միապետութիւնը՝ և այդպէս էլ է

իրապէս։ Թէկուզ ժամանակակիցները և մի քանի գիտնականներ ուրիշ կերպ են հասկանում Թէոդոսի մահուանից մինչև Կոստանդնուպոլսի անկումը գոյութիւն ունեցող տէրութիւնը արևելահռովմէական է, իսկ Զ։ մարդուն Ը դարից ի վեր զուտ յունական է։

Որպէս զի գործնական կարիքներին բաւականութիւն տանք և ոչ թէ որ և է բարձր։ «պատմական-փիլիսոփայական» հայեցակէտի համար յենարան ստեղծենք, նիւթը բաժանում ենք հետևեալ սոորաբաժանումների։

		Էջ.
Ա. Նախայուստինիանեան շրջան	395—518	7
Բ. Յուստինիանի եւ իւր յաջորդների դարագլուխ .	518—610	53
Գ. Հերակլի հարստութիւնը եւ Իսլամի դեմ պատերազմ	610—717	110
Դ. Վերածնութիւն սիրիական (Իսաւրեան) կայսրների ժամանակ եւ պատկերամարտութիւն	717—867	152
Ե. Արեւելահռովմէական իշխանապետութեան բարձրագագաթը հայկական հարստութեան ժամանակ .	867—1025	194
Զ. Տերութեան անկումը .	1026—1081	267
Է. Կոմնենների եւ Անգելների	1081—1204	316
Ը. Նիկիայի կայսրութիւն .	1204—1261	396
Թ. Պալեոլոգների վերահաստատութիւնը եւ կործանումը	1261—1453	427

Ա.

ՆԱԽԱՅՈՒՍՏԻՆԻԱՆ ՇՐՋԱՆ

(396—518)։

Թէոդոսոս Մեծը (379—395), մեծ հօր հանճարեղ որդին, այն զօրավարների և տէրութեան վերկոյների երկար շարքի վերջին անդամն էր, որոնք Կլաւդիոս Գոթիկոսից մինչև Վաղէնտինիանը երկաթեայ բռունցքներով վերստին կռել են հիմնից ի վեր խախտուած տիեզերական իշխանութիւնը։ Նա ներկայանում է Վաղէնտի սարսափելի հարուածից՝ Ադրիանուպօլսի—bellum lacrimabile—արիւնահեղ կռուից յետոյ։ իբրև գերմանական վտանգից տէրութեան ամենափայլուն կերպով պահպանող և ազատիչ։ Մի անգամ էս տէրութեան հողից յետ մղուեց գոթական ժողովրդի ալիքը։ Նեցքուստ էլ նրա կառավարութիւնը դարաշրջան է կազմում։ և այդ այն յաղթութիւնով, որ սարսաւ ուղղափառ եկեղեցին արիանոսութեան դէմ՝ յենուած կայսերական ծանրակշիռ ազդեցութեան վրայ։ բացի այդ՝ եռանդուն միջոցներ ձեռք առնուեցան վերջացնելու հին հեթանոսութեան մնացորդները, որ դեռ կուռ էր հռովմէական արիստոկրատիայի մէջ։ Նա իւր մահուան ժամանակ՝ 398 թ. Յունուարի 17՝ ամբողջ տէրութիւնը թողեց կառավարելու իւր երկու որդիներին՝ Արկադիոսին և Հոնորիոսին։ Վերջինը ստացաւ արևմտեան կէսը։ Իտալիա (Իտալիա և Աֆրիկա) և Գաղղիա (Գաղղիա—Սպանիա—Բրիտանիա) պրէֆեկտորութիւնները, մինչդեռ նրա աւագ եղբայրը արևելքի վրայ էր իշխում։ Իլլիւրիկա (Դակիա և Մակեդոնիա) և Արևելք (Ասիա, Պոնտոս, Օրիենտ, Թրակիա, և Եգիպտոս) պրէֆեկտորութիւնները։

Թէոդոսի մղած պատերազմը իւր գահակից կայսեր Եւգենիոսի դէմ, զրկել էր ամբողջ արևելքը զօրքերից։ Եւ ահա մինչդեռ հոները ճորայ պահակով ներս մտնելով՝ յարձակուել էին տէրութեան արևելեան մասի վրայ, գոթական դաշնակիցները, որ բանակել էին Միւսիայում և Թրակիայում, իրենց արքայական զօրապետի առաջնորդութեամբ աւերում էին Իլլիւրիկայի հիւսիսային մասը և սպառնում էին մայրաքաղաքին։ Միայն երբ Սթիլիքոնը արևմուտքից վրայ հասաւ, Գոթացին ստիպուեց ամրանալ Թեսալիայում։ Բայց որովհետև Արկադիոս կայսրը Ռուֆինոսի դրդմամբ,

գուցէ ոչ առանց պատճառի, պահանջեց, որ Ստիլիքոնը հեռանայ և արևելեան գնդերը Իտալիայից յետ ուղարկի Կոստանդնուպոլիս, վերջիններիս Գայնասի հրամանատարութեան տակ յարձակուելին մայրաքաղաքի վերայ։ Ռուֆինոսը նոցա զոհ գնաց. և նրա տեղը բռնեց իրրև զեկավարող մինիստր Նեստորիոս ներքինին. և ահա Աղարիքը ձեռնարկեց իւր զարհուրելի արշաւանքը Յունաստանի դէմ Թերմոպիւլէի անցքով։ Նլեւսիսը, Պիրէոսը, Մեգարան, Կորինթը, Արգոսը և Սպարտան ընկան գոթական հրոսակների ձեռքը. իսկ մոլեռանդ վարդապետները նոցա քրիստոնէական և բարբարոսական եռանդը բորբոքել էին մինչև վայրենի կատաղութիւն՝ հեթանոսութեան վերջի ապաստանարանների և ամրութիւնների դէմ։ Սակայն երբ նոքա արշաւում էին Էլիսի վրայ, հետևից նոցա վրայ ընկաւ վերադարձած Ստիլիքոնը և գոթական զօրքը փակեց արկտեան Փոլօէ սարահարթում։ Սպասածին հակառակ՝ խաղաղութիւն կայացաւ և արևելահռովմէական կառավարութիւնը երկիւղ ազդող Գոթին նշանակեց Իլլիւրիկայի զօրաց հրամանատար—magister militum per Illyricum.

Աւելի վտանգաւոր դարձաւ Փռիւգիայում բնակեցրած Գրութունգների և Օստրոթ-

ների ապստամբութիւնը Կոմէս Տրիբիգիլդի առաջնորդութեամբ։ Արևելահռովմէական արքունիքում գերակշռում էր հռովմէական ազգային կուսակցութիւնը. Գերմանացիների զօրապետները, զօրեղ Գայնասը և նրա կողմնակիցները, սասսիկ վիրաւորուած էին։ Իրաւ է Տրիբիգիլդը կորստաբեր հարուած ստացաւ Պեսիդիայի քաջ ժողովրդից, բայց երբ Գայնասը նրա դէմ ուղարկուեց և ծածուկ միացաւ նրա հետ, հռովմէական Լեոն զօրապետը, իւր պաշտօնակցից դաւաճանուած, պարտութիւն կրեց Գոթացու ձեռքից։ Գայնասը և Տրիբիգիլդը ընդհանուր կացութեան տէր դարձան և ստիպեցին կայսեր արձակել իւր մինիստրին։

Գայնասը եկաւ Քաղկեդոն. և սարսափած Արկադիոսը պարտաւորուած էր մայրաքաղաքում բնակարան տալ Գոթերի զօրքին։ Այնպէս էր թուում, թէ արևելքը նոյնպիսի բեկորների պիտի բաժանուի, ինչպէս յետոյ արևմուտքը։ Գերմանական ցեղից թագաւորը պատրաստ էր այստեղ Թէոդոսի հարստութեան տեղը բռնելու։ Սակայն մայրաքաղաքի ժողովուրդը ոտքի կանգնեց, երբ որ արիոսական Գոթերը սկսեցին վիրաւորել նրա կրօնական զգացմունքները։ Գոթերը ստիպուած էին քաղաքից հեռանալ. ով ուշացաւ, ենթարկուեց ժողովրդի կատա-

զուրթեան։ Գայնասը աւարի առնելով Թրակիան՝ պատրաստուեց Աբիւդոսի մօտից Ասիա անցնել, բայց Փռաւիտա հաւատարիմ գոմը հռովմէական նաւատորմիղով ոչնչացրեց նրա զօրքը։ Հոների թագաւոր Ուլդէսը կայսերական արքունիք ուղարկեց դէպի Թրակիա փախչող ապստամբի գլուխը։ Փռաւիտան՝ տէրութեան ազատարարը, կոնսուլի ասպիճան ստացաւ, թէև ինքը հեթանոս էր։

Նոյն Արկադիոսի ժամանակ Բիւզանդիոնում բորբոքուեց տէրութեան—imperium և հոգևորականութեան—sacerdocium հին կռիւը, որի ելքը կառավարութեան և եկեղեցու համար Արևելահռովմում տիպիքական մնաց։

Յովհաննէս Անտիոքացին, որ յետոյ եկեղեցուց Ոսկեբերան մականուանուեց, ոյժ ստացած իւր ճարտասանութեամբ և ժողովրդից վայելած յարգանքով, Շոպենդիոյ պուրիտանների նման, ոչ կայսերական տան փարթամութիւնն էր լռութեան տալիս և ոչ էլ հարուստների բարքուվարքի ապականութիւնը։ Նա ինքն անձամբ ճգնաւորական ամենախիստ կեանք էր վարում և մի և նոյն ժամանակ իբրև կրօնապետ՝ պապական իշխանապետութեան դիտակցութիւն ունէր։ Ասիան, որի գլխաւոր կեդրոն Եփեսոսը հպարտ էր Յիսուսի սիրելի աշակերտի հիմնած եկեղեցիով

Յովհաննն իւր այդի ճանապարհորդութեան ժամանակ անխնայ ուժով ենթարկեց Նոր-Հռովմի քահանայապետների իշխանութեան, որոնք 381 թուից հաւասարուել էին Հին-Հռովմի քահանայապետներին։ Նրա թշնամիները գլուխ բարձրացրին։ Իրաւ է, նա շատ հեշտութեամբ ազատուեց մայրաքաղաքի իւր հակառակորդ դատարկ և անընդունակ ճարտասան Սիւրիացի Սեվերիանոս եպիսկոպոսից, բայց իրերի դրութիւնը աւելի ծանրացաւ, երբ կառավարութիւնը նրա դէմ հանեց նրա ոխերիմ թշնամի՝ Աղէքսանդրիայի փառասէր և սկզբունքներից զուրկ Թէոփիլոս պատրիարքին։ Աղէքսանդրացին 391 թ. նոր էր կործանել Սերապէյոնը և առանձին մեծ ու փայլ հռչակ ունէր իբրև կուռքի կործանիչ։ Ս. Աթանասից և նրա յաջորդ Պեարոսից ի վեր, որը 381 թ. տիեզերական ժողովի ղեկավարն էր, արևելքը սովորել էր Ս. Մարկոսի գահի յաջորդներից սպասել հոգևոր գործերի վերջնական վճիռը։ Թէոփիլոսը կարողացաւ իւր մեքենայութիւններին սուրբ գործի կերպարանք տալ։ դրա համար նա գըրաւեց և գործակից արաւ Կոստանտիայի դրեթէ հարիւրամեայ ուսումնական, բայց սասսիկ սահմանափակ Եպիփանին՝ հերձուածողների դէմ մարտնչողին։ Նոքա՝ այսպէս ասած «կաղնի» մօտ կայացած ժողովում՝ Նոր-Հը-

ռովմի քահանայապետին յայտարարեցին պաշտօնից զրկուած. սակայն սա, օգտուելով մայրաքաղաքի ժողովրդի յուզմունքից, փառաւոր յաղթութիւն տարաւ: Թէոփիլոսը փախաւ և կառավարութիւնը փոքրոգութեամբ յետ նահանջեց. մինչդեռ Յովհաննէսը՝ իւր յաջողութիւնով աւելի համարձակ դարձած, կայսրուհուն իսկ անձնապէս խիստ վիրաւորեց: Ժողով գումարուեց 404 թ., որով նա վերջնականապէս զրկուեց, թէև արևմտահռոմէական կառավարութիւնը և արևմուտքի Հոնոկենտ Բ պապը մեծ եռանդով նրա համար աշխատեցին: Նամակագրութիւններով նա պահպանեց իւր ազդեցութիւնը նոյն իսկ Կոկիսոնում՝ իւր աքսորման տեղում, ուստի տէրութիւնը որոշեց քշել նրան հեռու Կովկաս. բայց դժբաղդ ծերը Պիթիոս՝ իւր աքսորավայրը չհասած, ճանապարհին մեռաւ: Ընդհանուր եկեղեցին բարձր է պահպանել «տիեզերական ուսուցչի» յիշատակը. Պրոկղոս պատրիարքը 438 թ. հանդիսաւոր կերպով նրա նշխարները բերեց մայրաքաղաք, և Թէոդոս Բ-ը ծնկաչոք սրբի մատրան առաջ թողութիւն էր խնդրում իւր մեղաւոր ծնողների համար: Բայց չնայած այդ հաճոյական և մեծահոգի ձևերին, այնու ամենայնիւ կայսերական իշխանութիւնը սկզբունքով մեծ յաղթու-

թիւն էր տարել: Նա առաջին անգամն էր՝ հիմնուած իւր գերիշխանութեան վրայ, կարգաւորել իւր դէպի եկեղեցին ունեցած յարաբերութիւնը, և այդ առանձին նշանակութիւն ունէր Բիւզանդիոնում:

Երբ 408 թ. Արկադիոսը մեռաւ, նա թողեց մի անչափահաս որդի, Թէոդոս Բ Փոքրին, որը իբրև ճշմարիտ ծիրանածին՝ իւր երկարամեայ իշխանութեան ժամանակ 408—450 երբեք չափահաս չդարձաւ: Մինչև 414 թ. տէրութեան գործերը կառավարում էր Թիկնապահների առաջնորդ-praefectus praetorio-Անթեմիոսը, որ ունէր կոնսուլ և պատրիկիոս բարձրագոյն պատուոյ տիտղոսները և միանդամայն խելացի քաղաքագէտ էր: Յետոյ կառավարութիւնն անցաւ կայսեր քաղաքագէտ Պուլքերիա քրոջ ձեռքը, որ կառավարում էր սենատի խորհրդակցութեամբ: Նա իւր եղբօրը 421 թ. պսակեց մի փիլիսոփայի լաւ կրթուած աղջկայ՝ Ամենայիսի հետ, որի քրիստոնէական անունն էր Եւդոկիա. սա շատ շուտով միացած Քրիսափիոս ներքինու հետ մեծ ազդեցութիւն ձեռք ձգեց կառավարչական գործերի վրայ: Եւդոկիայի անկումի յետոյ վերջինս կայսեր միանգամայն իւր ձեռքն առաւ մանաւանդ նրա իշխանութեան վերջին տարիներում: Պուլքերիան դժգոհ,

առանձնացել էր իւր մասնաւոր պալատը։

Մինչդեռ արևմուտքը աւերակ էր դարձել, և Գոթերը՝ Սուեբներն ու Վանդալները անկախ տէրութիւններ էին հաստատել Գաղղիայում, Սպանիայում և Ափրիկայում, իսկ արևմուտքի անուանական կայսրը իրապէս սահմանափակուած էր միայն Ապենինեան թերակղզու մէջ, տէրութեան արևելեան մասը այդ վտանգաւոր շրջանում դիմացաւ բախտաւոր և բաւականաչափ հանդարտ կերպով։ Թէոդոս Բ-ի երկար իշխանութիւնը ընդհանրապէս շատ ազգաւոր է արտաքին պատահարներով։ Հոնորիոսի մահից յետոյ Արտաքսերքսոս և իւր որդի Ասպար զօրավարները բաւական յաջող կերպով կարգաւորեցին Իտալիայի գործերը. նոքա վերահաստատեցին օրինաւոր իշխանին, որը Յովհաննէս բռնապետից հեռացուած էր, և նորից դերակշռող դարձրին արևելքի ազդեցութիւնը։

Թէոդոս մեծի ամենամեծ քաղաքական սխալը, մեծ եռանդով փորձեց նորից ուղղել Թէոդոս Փոքրի՝ բազմիցս արհամարհուած կառավարութիւնը։ Տրդատից և Գրիգոր Լուսաւորչից յետոյ հայկական, ինքնուրոյնութիւնը կորցրած՝ բայց առանձին կարևոր նշանակութիւն ունեցող թագաւորութիւնը դաշնակցութեամբ միացած էր հռովմէական տէրութեան

հետ։ բայց 365 թ. Յովհաննոս կայսեր ամօթալի խաղաղութեան շնորհիւ, կորել էր այդ ազդեցութիւնը։ Իրաւ է, Վաղէնտինը խելացիութեամբ Պապին թագաւոր էր նշանակել և օգնել էր, բայց երբ հռովմայեցիք անազնիւ ճնապարհով սպանեցին նրան, սաստիկ պատերազմ սկսուեց Հայոց քրիստոնեայ—կղերական և զրադաշտական նախարարների մէջ։ Եթէ հռովմայեցիները լաւ հասկանային իրենց քաղաքական շահերը, նոքա պէտք է ամեն կերպ ինչպէս որ Կոստանդինի տան կայսրներն էին արել, պաշտպանէին Մամիկոնեաններին, որոնք հոգևորական կուսակցութեան առաջնորդներն էին։ Փոխանակ դրան՝ միանգամայն անհասկանալի կուրութեամբ—այդ բանում նրան կարելի է համեմատել Փրիդրիխ Մեծի հետ—Թէոդոսը 387 թ. Պարսից տէրութեան հետ համաձայնութիւն կայացրեց և բաժանեց հայկական թագաւորութիւնը. մի բաժանմունք՝ որի մէջ առիւծաբաժինը արևելցիներին ընկաւ։ Նախկին Մեծ Հայոց թագաւորութեան միայն մի հինգերորդ մասն ընկաւ հռովմայեցիներին՝ Թէոդոսուպոլիս (Կարին) գլխաւոր քաղաքի հետ։ Մնացած մասը, որտեղ շարունակեց էլի 40 տարի գոյութիւն ունենալ Պարսիկներից նշանակուած Հայոց անուանական թագաւորութիւնը, պարսկական իշխանութեան

100'1
17694

տակ ընկաւ։ Պարսիկները թոյլ էին տալիս իրրև եկեղեցական և ուսումնական լեզու միայն ասորերէնը. յունարէնի ոչնչացման համար կռիւ յայտարարուեց։ Հայաստանի երկու մեծ հանճարները, ս. Սահակը և Մեսրոպը, որոնք տառերի գիւտից յետոյ մայրենի լեզուով թարգմանել էին Ս. Գիրքը, սարսափուած էին Պարսից իշխանաւորների հալածանքներից փախչել յունական բաժինը։ Հռովմի այն ժամանակուայ արքունիքը, այդ դէպքում անհամեմատ աւելի հեռատես քան հարստութեան նախահայրը, Հայերի սկսուածքը հանրական կողմից ըստ կարելւոյն օգնում էր և տէրութեան միջոցներով նպաստում էր երկու մեծ Հայերի թարգմանչական գործին։ Այդ հոգևոր գործի ջանքերով առաջ եկաւ Հայոց թարգմանական հարուստ գրականութիւնը, (Ոսկեայ դար Հայոց գրականութեան) որ միանգամայն կախումն ունէր յունականից. և ժողովուրդը, որ մինչև այդ ժամանակը գրականութիւն չունէր, մնաւ քաղաքակիրթ ազգերի շարքը։ Դրանով Հայաստանը վերջնականապէս անջատուեց արևելքի բարբարոսութիւնից և ընդ միշտ միացաւ արևմտահելլենական բարեկրթութեան հետ։ Այդ ծառայութեան մի մասը որոշ չափով պատկանում է արհամարհուած Թէոդոս Փոքրին։

Բայց դառնանք այժմ և հետևենք քաղաքական արտաքին դէպքերին։ Այդ շրջանում տէրութեան համար իսկապէս վտանգաւոր դարձաւ Հոների մեծացած իշխանութիւնը։ Անթեմիոսը 412 թ. յաջողութեամբ յետ էր մղել այդ բարբարոսների յարձակումը, իսկ Դանուբի վրայ մի նաւատորմիղ պահպանում էր տէրութեան սահմանը. բայց 424-ից ի վեր կայսրը թափառականների թագաւորին հարկ էր վճարում։ Դրութիւնը աւելի վատացաւ, երբ քաջամարտիկ Ատտիլան իւր զօրքով բանակ դրեց Պանոնիայում. 441 թ. բացի Հոներից Պարսիկներն էլ սկսեցին սպառնալ տէրութեան սահմաններին, իսկ Վանդալներն ու նոցա հետ միացած ծովահէնների նաւատորմիղը թալանում էին տէրութեան ծովային ափերը։ Դանուբի ամրոցները՝ Վիմինացիում և Սինգիդունում, Մարգոս և առաքելանման Կոստանդնի ծննդավայր Նախսոս, Փիլիպուպոլիս և տէրութեան ուրիշ կարևոր քաղաքներն ընկան Հոների թագաւորի հարուածների տակ։ Մայրաքաղաքը արդէն դողում էր. բայց անառիկ Ասեմոս քաղաքի բերդակալ քաջ զօրքը յաջողութեամբ պաշտպանուեց և նորից վերակենդանացրեց Հռովմայեցիների թուլացած քաջութիւնը։ Անատոլիոսը 443 թ. խաղաղութիւնը գնեց վճա-

բելով 6000 ֆունտ ոսկի և տարեկան 700 ֆունտ հարկ։ 447 թ. վերսկսեցին թշնամութիւնները, բայց վերջ դրուեցին Մասիքմոսի դեսպանութեամբ։ Նրան ուղեկցում էր ճարտասան Պրիսկոսը քարտուղարի պաշտօնով. սա թողել է մեզ Հոնների գլխաւոր բանակի վերին աստիճանի հետաքրքիր և շատ կենդանի նկարագրութիւնը։ Խաղաղութիւնը վերահաստատուեց բայց մինչև Թէոդոսի մահը շարունակեցին հարկ վճարել։

Այդ կառավարութիւնը աւելի կարևոր էր և համարեայ վճռողական նշանակութիւն ունեցաւ եկեղեցական ժամանակակից խնդիրների վերաբերութեամբ։ Քրիստոնեայ կառավարութիւնը պաշտօնապէս և բռնի կերպով ճնշել էր աստուածների հին պաշտամունքը, բայց եկեղեցին «լայն բացեց իւր դռները» և խելացի տնտեսութեամբ դիւրացրեց հնահաւատների մուտքը նոր համայնքի մէջ։ Նոքա նորից գտնում էին իրենց հին հեթանոսական աստուածներին քրիստոնեայ սրբերի մէջ, միայն տարբեր տարազով։ Ամբոխի և մանաւանդ կանանց մէջ պահանջ էր դիմել շատ անուն ունեցող բնութեան մեծ Աստուածուհուն, դրա համար եկեղեցին բարձրացրեց Աստուածածնի պաշտամունքը. հեթանոսներն էլ ծաղրում էին Մարիամի ջերմ պաշտամունքը և նրան անուա-

նում էին «Նոր Կիւբելէ» կամ «Նոր Իզիս»։

Ալէքսանդրեան աստուածաբանները հետևելով Որիգէնի այլաբանական բացատրութեան, ներկայանում էին մոգայի աստուածաբանութեան ամենաջերմ պաշտպաններ, մինչդեռ Անտիոքի դպրոցը իւր մեծ ղեկավարներով՝ Դիոդորոս Տարսոնացու և Թէոդորոս Մոպսուեստացու ձեռքով, թէև առանց հետևանքի, կռուում էր ժամանակի ամենաուժեղ հոսանքի դէմ և փորձում հաստատուն պահպանել Սուրբ Գրքի լուրջ և ուսումնական մեկնաբանական արուեստը։ Նեստորը, մայրաքաղաքի նոր պատրիարքը, որ ծագում էր Գերմանիկէ քաղաքից և հաւատարիմ էր իւր հայրենիքի աւանդութիւններին, թէ ճառերով և թէ գրութիւններով կռուում էր theotókos—աստուածածին դարձուածի դէմ, որ իւր կարծիքով հակասաստուածեան էր, որովհետև չափազանց յուզեց մայրաքաղաքի ժողովրդի բարեպաշտական զգացմունքները։ Սուրբ Կիւրեղը, որ Թէոփիլոսի եղբօրորդին էր և Ալէքսանդրիայի առաքելական գահի վրայ նրա յաջորդը, և որ հռչակուած էր իբրև եկեղեցական ատենաբան և հեղինակ, և քաջ տեղեակ էր եկեղեցական քաղաքականական վարչական գաղտնիքներին անցաւ նրա հակառակորդների դլուխը։ Ի զուր էր աշխատում Նեստորը, որին կայսերական

իշխանութիւնը մի ժամանակ հովանաւորում էր, իւր ընթացքը փոխել։ Աղէքսանդրիայի աթոռակալը չկամեցաւ ձեռքից բաց թողնել ցանկալի առիթը՝ առանց խոնարհացնելու մայրաքաղաքի իւր հակառակորդին, որը շատ էր դէպի բարձրը ձգտում։ Եփեսոսում 431 թ. գումարուեց տիեզերական ժողով։ Արևմուտքի պատրիարքը՝ Կեղեստինոս պապը, որ սահմանափակ մէկն էր և անտեղեակ էր եկեղեցական վէճի իսկական պատճառներին, քրիստոնէութեան առաջի գահի ծանրակշիռ հեղինակութիւնը դրեց Կիւրեղի կշռի նժարի վրայ։ Ժողովը սկսեց իւր գործերը և չսպասեց որ դային արևելքի եպիսկոպոսները, որոնք հակուած էին Նեստորի կողմը, և ոչ էլ ուշադրութեան առաւ կայսերական ներկայացուցչի ընդդիմութիւնը։ Նեստորին հրատարակեցին պաշտօնից զրկուած։ Սակայն երբ հասաւ Յովհաննէս Անտիոքացին, երկրորդ ժողով գումարեցին կայսերական իշխանութեան համաձայնութեամբ. ոչքա էլ պաշտօնազուրկ արին Կիւրեղին և Մեմնոն Եփեսացուն։ Բայց հոգևորականութեան և ժողովրդեան ահագին բաղմութեան տրամադրութեան առաջ սաստիկ թուլացան թէ կառավարութիւնը և թէ Անտիոքի եպիսկոպոսը։ Կիւրեղին դուր գալու համար, որը չէր խնա-

յել արքունիքի ազդեցիկ անդամներին գրամական նուէրներ տալու, զոհեցին Նեստորին. նա մեռաւ աքսորում։ Ասորական հոգևորականութիւնը միութեան դաշն կապեց Եգիպտոսի պատրիարքի հետ և այն էլ այնպիսի պայմաններով, որի տակ կարող էր ստորադրել՝ առանց խղճի խայթի նաև նոր հռովմէական պատրիարքը, որը ենթարկուել էր նղովքի։ Կիւրեղի բաղմաթիւ վկայութիւնները, որով նա փորձել է պաշտպանել այդ միութիւնը, ցոյց են տալիս նրա դաւանաբանական շփոթութիւնը և ապացուցանում են բացարձակապէս, որ Աղէքսանդրիայի մեծ եկեղեցականի համար այնքան հաւատը չունէր նշանակութիւն, ինչքան իշխանական իրաւունքը։ Եւ իսկապէս այդ հոգևորական փաբաւոնը տէրութեան մէջ ամենաղօրեղ մարդն էր դարձրել. մայրաքաղաքում եկեղեցական բարձր պաշտօնները զեկավարում էին նրա արբանեակները։ Ցէրութիւնը ծանր պարտութիւն էր կրել—և այդ տեսնում էր ամեն ոք—և այդ պատահում է ամեն անգամ, երբ բիւրոկրատիան, որը հաւատի գործերում իսկապէս անտարբեր է, փորձում է կռուել գաղափարի ներկայացուցիչների դէմ՝ ինչպէս է եկեղեցին։ Այնպէս էր թուում, որ կարծես թէ հոգևորական տիեզերական իշխանութեան

ղեկը պէտք է անցնէր ս. Մարկոսի յաջորդին։ Եւ երբ 449 թ. փոքր Ասիայի եպիսկոպոսներից մէկը՝ Աղէքսանդրիայի պատրիարքին տիեզերական եպիսկոպոս հռչակեց, դրանով նա իսկապէս հպատակուեց պայմաններին որոնք արդէն իրապէս գոյութիւն ունէին։

Հիմնական փոփոխութիւն առաջ բերեց Հին Հռովմի նոր պապը, Լեւոն Մեծը (442—454). սա էլ իրրև աստուածաբան մեծ չէր, բայց առաջնակարգ եկեղեցական քաղաքագէտ էր։ Նա հասկացաւ նորից ուղղել իւր նախորդի անընդունելի սխալը։ Աղէքսանդրիան աստուածաբանութեան հեւեւողներից մէկը, Կոստանդնուպօլսի Եւտիքէս վարդապետը, իւր վարդապետական խցի մէջ նուիրուած լինելով բնաղանցական մտածողութեան, ընկել էր կատարեալ հերձուածի մէջ. այդ բանը մայրաքաղաքի Փլաբիան պատրիարքին, որը արդէն զզուել էր Աղէքսանդրեան լուծից, ամենացանկալի առիթ տուաւ նրան եկեղեցական պատժի ենթարկելու։ Լեւոն պապը մի դաւանութեան թուղթ—epistola dogmatica—ուղարկեց Փլաբիանին և հաւանութիւն ցոյց տուեց Նոր Հռովմի իւր պաշտօնակցի արածներին։ Կիւրեղի յաջորդ Դիոսկորոսը հեշտութեամբ չտարաւ այդ հարուածը, կայսեր ամենակարող Քռիւսափիոս մինիստրը նրա

գործիքն էր։ Եփեսոսում՝ եգիպտական յաղթանակի տեղում, տիեզերական նոր ժողով գումարեցին (449 թ. աւազակային ժողով կոչուած). այդ սուրբ համարուած ժողովում իշխում էր բռնի ոյժը, բայց իսկապէս ասած՝ ոչ աւելի քան այն ժողովներում, որ ընդունում է եկեղեցին։ Ընայած Հռովմի բողոքին, Եգիպտոսը միանգամ էլ ամէն կերպ յաղթող դուրս եկաւ, և այն ուսմունքը, որ յետոյ—Monophysitismus—մի ընութեան դաւանութիւն էր կոչուում, կարծես թէ բոլոր արևելցիների ընդունած հաւատն էր դարձել, երբ յանկարծ մեռաւ Թէոդոսը 450 թ. յուլիսի 20-ին։ Քաղաքագէտ Պուլքերիա կոյսը իւր ձեռքը առաջարկեց ծեր սենատոր Մարկիանոսին և բարձրացրեց նրան կայսերական գահ։ Սա առաջի կայսրն էր, որ օծուեց մայրաքաղաքի պատրիարքի ձեռքով։ Իշխանութեան փոփոխութիւնով նշան տուուեց կառավարչական հիմնական նոր ուղղութեան։ Աղէքսանդրիայի պատրիարքը Եփեսոսի երկու յաղթութիւնով կանգնած էր ամենաբաւ ճանապարհի վերայ, թէ տէրութեան մէջ առաջին ոյժը լինելու և թէ Արևելահռովմը դարձնելու մի եկեղեցական պետութիւն։ Ահա այդ պատճառաւ կեանքի և մահու հարց էր բիւզանդական կառավարութեան համար եգիպտական պատրիար-

քի անկումը։ Բիւզանդիոնը խելացի կերպով հասկացաւ զրաւել և լաւ դաշնակիցներ դարձնել արևմտահռովմէական կառավարութիւնը և Հին Հռովմի պատրիարքին։ Քաղկեդոնում 451 թ. ժողով գումարուեց, որտեղ ստիպեցին արևելքի չափազանց ինքնակամ պատրիարքներին ընդունել հաւատոյ այն դաւանութիւնը, որ նախապէս կազմուած էր Հռովմի դիտութեամբ, դիմելով նոյն իսկ սարսափ ազդող միջոցների։ կայսերական զլխաւոր ներկայացուցիչները գործում էին միանգամայն պապի դեսպանի համաձայնութեամբ։ Դիոսկորոսին պաշտօնից զրկեցին և աքսորեցին, ինչպէս երբեմն Նեստորին։ Վերջինիս ամենահաւատարիմ կողմնակիցները՝ Թէոդորիտոս Կիւրոսացին և Իբաս Եդեսացին վերահաստատուեցին իրենց աթոռներում։ Արևելահռովմէական տէրութիւնը եկեղեցական գործերում էլ յաղթանակելով, նորից ամրացրեց իւր գերիշխանութիւնը։

Արտաքին գործերից յիշուելու է այն, որ Մարկիանոսը վերջ տուաւ Հոներին հարկ վճարելը։ Ատիլան զրաղուած լինելով արևմուտքում, չկարողացաւ զօրեղ կերպով Բիւզանդիոնի դէմ գործել։ Նրա արագ անկումը ազատեց ընդմիշտ արևելեան տէրութիւնը այդ վտանգից։

Թուում էր թէ արևելցիները իրենց ստրկական բնաւորութեամբ անկամ և լուռ համակերպուել են և ընդունել Քաղկեդոնի որոշումները։ Բայց այդպէս միայն թուում էր։ Աղեքսանդրեան ուսումը, որով առանձնապէս շեշտուում էր Քրիստոսի Աստուածութիւնը, իսկ նրա մարդկութիւնը ընդհակառակը համարեա թէ անհետանում էր, արևելեան բարեպաշտ ժողովրդի հաւատն էր։ Փոքր Ասիայում, Ասորիքում և մանաւանդ Եգիպտոսում շարժուեցին Կիւրեղի և Դիոսկորոսի ուսման հետևողները, որոնք միայն սարսափել էին բայց չէին յուսահատուել։ Արևելահռովմէական տէրութեան համար Քաղկեդոնի որոշումը, քաղաքական տեսակէտից նայած, դուցէ նրա ամենամեծ դժբախտութիւնն էր։ Ցանկացել էին զլորել Աղեքսանդրիայի տիեզերական պապին, բայց դրա փոխարէն ստեղծել էին ներքին կրօնական պառակտումներ ամբողջ տէրութեան մէջ։ Այն դարաշրջանում, երբ որևէ քաղաքական մտածողութիւն սկսում էր եկեղեցական գիտակցութիւնից, ասորական և եգիպտական ազգային գիտակցութիւնը, որ հակայուսական էր, սկսեց ամուր կպչել հակաքաղկեդոնեան վարդապետութեանը։ Եւ այդ հանգամանքը արդէն Մարկիանոսի յաջորդ Լեւոն Ա (457—474) զգաց շատ որոշակի։

Լեւոն, մեծ մականուանեալ, օրթոդոքս Յոյն էր՝ ծագումով Թրակիայից. նա իւր գահակալութեամբ պարտական էր արեւելեան զօրաց հրամանատար—magister militum per orientem—ամենազդեցիկ Ասպար Ալանին. արիոսեան հաւատը սրան իրեն արդելք եղաւ գահ բարձրանալու, բայց Լեւոնի իշխանութեան առաջի շրջանի ամբողջ ընթացքում կառավարութեան ղեկը կենդրոնացած էր նրա ձեռում: Լեւոնը եւ Մարկիանի պէս օծուեց մայրաքաղաքի պատրիարք Անատոլիոսի ձեռքով 457 թ. Փետրուարի 7-ին: Ասպարը, ինչպէս Գայնասը, յենուել էր զօրքի գերմանական տարրերի վրայ. եւ թուում էր, թէ սա էլ՝ ինչպէս միաժամանակ Ռիկիմերը Իտալիայում, կամենում էր թագաւորներ կարգելու դեր կատարել:

Բայց այդ նպատակի համար սխալ հաշիւ էր արել Լեւոնի ընտրութեան մէջ: Դա Անթեմիոսի կամ Ողիբրիոսի նման անուանական կայսր չէր: Նա Գերմանացիների դերակշիռ ազդեցութեան դէմ՝ հանդէս բերեց իւր հայրենակիցների Իսաւրացի թիկնապահ զօրքը որ նոր էր ժողովել: Նոցա առաջնորդ Թարաղիկոդիսային, որ խորամանկ եւ սառը զգացմունքներով մի բարբարոս էր, հելլենացրեց, տալով նրան Զենոն քաղցրահնչիւն անունը

եւ ամուսնացրեց կայսեր Արէանդնէ աղջկայ վրայ: Ասպարը մեծ դժուարութեամբ կարողացաւ վերջապէս կատարել տալ կայսեր տուած խոստումը, իւր որդի Պատրիկոսին կեսար հրատարակել տալու: Կայսեր մեծայոյս նաւատորմիղը, որ ուղարկեց Ափրիկայի ծովահինութեամբ պարապած Վանդալների սարսափելի տերութեան դէմ, անյաջող ելք ունեցաւ նաւատորմղի հրամանատար՝ կայսեր Բասիլիսկոս փեսայի բացարձակ անընդունակութեան շնորհիւ: Ասում են՝ որ Ասպարը նախանձից նպաստել էր անպէտք եւ ժլատ զօրապետի նշանակելուն, որովհետեւ նա չէր ցանկանում որ կայսրը պատերազմական փառքի արժանանար: Սակայն 471 թ. Ասպարին եւ նրա որդի Արտաբուրիոսին սպաննեցին կայսեր հրամանով: Այդ հարուածը, որով թագաւորն ազատուեց ճնշող խնամակալութիւնից (Majordomat) եւ տերութիւնը գերմանական իշխանութիւնից, զօրեղ տպաւորութիւն թողեց ժամանակակիցների վերայ եւ երկար ժամանակ պահուում էր առակներում:

Եկեղեցական գործերում Լեւոնը անշեղ շարունակեց իւր նախորդի քաղաքականութիւնը: Մարկիանոսի մահից անմիջապէս յետոյ Աղեքսանդրացիք սպանել էին Պրոտերիոս պատրիարքին, որ բռնութեամբ կարգուել էր

նոցա վրայ։ Ողորմելին բացարձակ արժանի էր այդ վիճակին, որովհետև սկիզբը Դիոսկորոսի արբանեակը լինելով, վերջը բոլորովին ենթարկուել էր նրա հակառակորդներին և անպիտան գործիք դարձել։ Դիոսկորոսի ամենաջերմ կողմնակիցներից մէկին՝ Տիմոթէոսին, մեծ ցոյցերով ս. Մարկոսի գահը բարձրացրին։ Լեւոնը այդ բանին ըջօրէն վերաբերուեց. դժուար էր նոր ժողով գումարել, այդ հաւասար կըլիներ բացարձակ կերպով անվստահութիւն արտայայտել Քաղկեդոնի ժողովին։ Դրա փոխարէն կայսրը հաւաքեց բոլոր եկեղեցական նահանգների մետրապոլիտների և եպիսկոպոսների և իւր տէրութեան յոյների աստուածաբանների կրօնական կարծիքները. դոցանից մեծագոյն մասը յօգուտ Քաղկեդոնի էր։ Բռնաւորին հալածեցին և Տիմոթէոսին Բազիլիկոս (արքայական) մականուն տալով, —առաջին անգամն էր, որ օրթոդոքս կուսակցութիւնը ճանաչուեց իրրև կառավարութեան կուսակցութիւն (Melchites Մելքիտես)—ընտրեցին Աղէքսանդրեան գահի վերայ։ Հաղուագիւտ դէպքերից մէկն էր, որ բիւզանդական կառավարութիւնը յաջող ձեռք ունեցաւ եկեղեցական գործերում, որ շատ զգուշութեամբ պիտի շարժել։ Տիմոթէոսը—ինչ որ այն ժամանակները շատ անսպասելի էր—իրան ցոյց

տուեց մեղմ և համբերող։ Նա մինչև անգամ իւր եկեղեցական հակառակորդների սէրը և յարգանքը գրաւեց, թէև հրաժարուեցին սրա հետ էլ միանալուց։

Լեւոնը իւր մահուանից յետոյ, 474 թ. փետրուարի 3-ն, իշխանութիւնը կտակեց իւր համանուն անչափահաս թոռ Արէադնէի և Զենոնի որդուն։ Փոքր Լեւոնը 474 թ. հանդիսաւոր կերպով իւր հօրը կայսրակից օծեց և այնքան յանկարծակի մեռաւ, որ Զենոնը, որը այդպիսով գահի միակ տէրը դարձաւ, բնականաբար ենթարկուեց ամենասոսկալի կասկածների։

Նոր կայսր Զենոնը, որը յենուում էր իւր հայրենակից կոպիտ և ատուած Իսաւրացիների վրայ, շատ անժողովրդական էր։ Այդ պատճառով կայսրամայր փառասէր Վերինան փորձեց գահ բարձրացնել իւր անընդունակ եղբօրը՝ Բազիլիսկոսին։ Իսաւրացի ամենանշանաւոր զօրավարներից մէկը՝ Իլլուսը դաշնակից էր դաւադրութեան։ 475 թ. վերջին Զենոնը ստիպուեցաւ իւր կնոջ հետ փախչել իւր հայրենի երկիրը։ Կոստանդնուպօլսում ժողովրդական կատաղութիւնն արտայայտուեց Իսաւրեան երեկոյով։ Բազիլիսկոսը յենուեց միաբնակների կուսակցութեան վրայ, որոնք 20—25 տարիներից ի վեր ճնշուած էին։

Աքսորուած Տիմոթէոսը վերադարձաւ Աղէքսանդրիա, ժողովրդեան մեծ ուրախութիւն պատճառելով։ Ասիայի եպիսկոպոսները շտապեցին յայտնել իրենց համաձայնութիւնը կայսրութեան նոր հաւատի մասին։ Սակայն Բազիլիսկոսը մի աններելի սխալ գործեց։ Հետևելով սահմանափակ Նգիպտացու խորհրդին, փորձեց մայրաքաղաքի եպիսկոպոսապետին պատրիարքական իրաւունքից զրկել, որ հիմնուել էր Յոհան Ոսկերերանից և հաստատուել Քաղկեդոնում և Եփեսոսին՝ Յովհաննէս Աստուածաբանի քաղաքին, նորից վերադարձնել նրա աւագութեան հին իրաւունքը։ Այդպիսով նա վիրաւորեց Ակակիոս պատրիարքին, որը իւր բարեպաշտութեամբ և խելացիութեամբ չափազանց սիրուած էր ժողովրդից։ Վերջինս, վստահացած ժողովրդի համակրանքի վրայ, ամուր պահպանեց Քաղկեդոնի օրթոդոքսութիւնը, և Բոսփորի ափին Դանիել սիւնակեանցը իւր սիւնից յայտարարեց որ ուղղահաւատութիւնը վտանգուած է։ Այն ժամանակ Բազիլիսկոսը այլ ևս ի զուր փորձեց յետ վերցնել իւր սեպհական շրջաբերականով յայտարարած հաւատը։ Իլլուսը և իւր եղբայր Տրոկունդոսը անցան Զենոնի կողմը. Բազիլիսկոսին և նրա ընտանիքը փակեցին Իսաւրեան մի ամրոցում և սովամահ արին։

Զենոնը իւր վերահաստատութեամբ (477) ամենից առաջ պարտական էր մեծ պատրիարքին։ Ուստի կառավարութեան կողմից խելացի կարգադրութիւն էր, որ կրօնական խնդիրների կարգաւորութիւնը թողին այդ պատրիարքին, որ այնքան մեծ չափով քաղաքական հասկացողութիւն էր ցոյց տուել։ Ակակիոսը օրինակելի կերպով դուրս եկաւ այդ վիշտից հարցերի միջից։ Նրա շարադրած հենոտիկոնը-հաւատոյ դաւանանքը (482), որ Զենոնը հրատարակեց, պահպանեց երկու սերնդի համար եկեղեցու խաղաղութիւնը։ Նրա մէջ ամուր պահուեց Նիկիայում և Եփեսոսում հաստատուած և ընդունուած հին հաւատը, իսկ Քաղկեդոնի դժբախտութիւն բերող որոշումներն իսկապէս մի կողմ նետուեցին։ Ս. Կիւրեղի հին դաւանութիւնը վերահաստատելով, Աղէքսանդրիայի և Անտիոքի պատրիարքներին միջոց տուեց վերստին հաղորդուել պետութեան եկեղեցու հետ. պատրիարքների օրինակին հետևեցին նոցա հօտը, բացառութիւն կազմեցին մի քանի աննշան մոլեռանդներ։ Դրանով է բացատրուում այն, որ միաբնակ եկեղեցին օրացոյցների մէջ՝ սրբերի կարգին է դասում Զենոնին և Անաստասին, որ նրա յաջորդն էր և նրա պէս էր մտածում։ Ամբողջ տերութեան մէջ քրիստոնեայ եկեղեցու

վերահաստատուած խաղաղութեան օգուտը անսահման էր, որի դէմ առանձին նշանակութիւն չունէր այն հանդամանքը, որ Հին Հռովմի պապ Փելիքս Գ-ը հանդիսաւոր կերպով իրան բաժան յայտնեց։ Ազգովին և քաղաքականապէս Լատիններն արդէն բաժանուած էին, հետևապէս եկեղեցական բաժանումը միայն դրա անհրաժեշտ հետևանքն էր։ Հաւանական է, որ Ակակիոսը՝ խաղաղութիւնը հաստատելուց յետոյ՝ ընդունած լինի սիեզերական պատրիարքի տիտղոսը՝ իբրև միացեալ եկեղեցու առաջնակարգ հոգևոր պետ, իսկ դա յետոյ շատ անգամ վէճի առարկայ էր։

Քաղաքական խնդիրներում Զենոնի կառավարութիւնը շարունակեց յետոյ էլ բաւական անհանդիստ դրութիւն ունենալ։ Իրաւ է, Մարկիանոս իշխանի ապստամբութիւնը շուտով խաղաղացրին, բայց վտանգաւոր դարձաւ մի ուրիշ ոնձնաւորութիւն։ Զօրականների առաջնորդ Իլլուսը արքունիքում ասպիճանաբար ձեռք էր բերել այնպիսի ամենակարող մի դիրք, որ իսկապէս այդ տարիներում նրան պէտք է համարել արևելեան պետութեան իրական կառավարիչ։ Զօրքը, ամենից առաջ նրա հայրենակից Ասաւրացիք, անպայման ենթակայ էին նրան։ Բացի այդ, նա հովանաւորում էր ուսումնականներին և հեղինակներին, դոցա միջից շատ անգամ դուրս էին գալիս տերութեան բարձր պաշտօնեաներ և դոցա մէջ էին հեթանոսութեան յայտնի և ծածուկ բաղմաթիւ հետևողներ, այդպէս Լևոնտիոսը՝ Թրակիան զօրքի հրամանատարը, Պամպրեպիոսը՝ որ պրոֆեսոր էր սկիզբը Աթէնքում, յետոյ մայրաքաղաքում և քաղաքական խնդիրներում առաջնակարգ հեղինակաւոր անձն էր, Մարսոսը և ուրիշները։ Իլլուսը շատ յաճախ հրապարտանում էր իւր դիրքի կարևորութեամբ, իսկ այդ հանդամանքը տեղիք էր տալիս ընդհարումների նրա և չափից դուրս ինքնահաւան Արէադնէ կայսրուհու մէջ և որ վերջը յառաջ բերեց պառակտում։ Ուստի շատ զսպմանալի էր, որ կայսրը արևելքի զօրաց հրամանատարութիւնը այդ անխիղճ յանցապարտին հաւատայ։ Երևում է, նա չէր կարող ուրիշ կերպ վարուել։ Իլլուսը դէն ձգեց դիմակը. նա միացաւ արտակարգ վառասէր կայսրամայր Վերինայի հետ, որ ընդունեց նորա բոլոր ծրագիրները։ Իլլուսի դրդմամբ նա Լևոնտիոսին Տարսոնում կայսր օծեց մի մատուռի մէջ և ներկայացրեց հպատակներին. 484 թ. Յունիսի 27 սա հանդիսաւոր կերպով մտաւ Անտիոք։ Նոր կայսրը և նրա կողմնակիցները իսկապէս Իլլուսի ձեռքին պարզ գործիք էին և անմիտ է այն ենթադրու-

թիւնը, իբր թէ նոքա մոռացել են նորից վերականգնել հեթանոսութիւնը. այդ առաջ է եկել նրանից, որ Զենոնի վերահաստատուած կառավարութիւնը շատ փիլիսոփաների և քերականների արիւնոտ մարտիրոսութեան ենթարկեց: Ընդհակառակը նորահաստատ կառավարութիւնը իւր ծրագրի մէջ ընդունել էր քաղկեդոնական ուղղահաւատութեան պաշտպանութիւնը. դրանով նա գրաւեց արևելքի բարձր հոգևորականութիւնը, որի ամենայայտնի անդամները մերժել էին հենոտիկոնը:

Բայց ժողովրդի մէջ քչերն էին հետևում այդ ուղղութեան. ժողովուրդը վարդապետների և քարոզիչների ազդեցութեան տակ էր, իսկ դոցա մեծ մասը միաբնակներ էին: Նոր կառավարութիւնը ժողովրդի մէջ յենարան չունէր, ուստի Զենոնի ուղարկած Գոթացի Յոհաննէս զօրավարը առանց դիմադրութեան յաղթեց Ղլուսին և փակեց Ոսաւրեան այն Պապիրիոն դղեակի մէջ, որի մէջ երբեմն մնացել էին Վերինա կայսրուհին և Մարկիանոսը իրենց աքսորի ժամանակ: 488 ապստամբների գլուխները ուղարկուեցին Կոստանդնուպոլիս: Այդ բոլորի բնական հետևանքը այն եղաւ, որ արևելքի շատ եպիսկոպոսներ պաշտօնազուրկ եղան, ամենից առաջ Անտիոքի Կալանդիոն պատրիարքը: Քաղկեդոնա-

կանութեան հետևողները ծանր պատժուեցին Ղլուսի կողմնակցութեան համար: Անտիոք եկաւ Զենոնի հին սիրելիներից մէկը, Պետրոսը, որին մի անգամ արդէն պաշտօնից զրկել էին, որովհետև միաբնակ ուղղութեան ծայրայեղ կողմնակից էր, բայց այժմ ընդունեց Ակակիոսի միարարական բանաձևը: Արևելքում կատարուած քաղաքական նոր փոփոխութեան հետ կապ ունի Եդեսիայի պարսկական ուսումնարանի փակումը 489 թ., որը Նեստորի հետևողների վերջին ապաստանարանն էր: Քաղաքական տեսակէտից նայած, շատ խելացի կարգադրութիւն էր, որ արևելեան նահանգներում պաշտպանում էին միաբնակ ուղղութիւնը: Որովհետև նեստորականները պաշտօնապէս Պարսից տերութեան մէջ ճանաչուած քրիստոնեայ հաւատացեալներն էին, իսկ հռոմը խելացի կերպով պաշտպանութիւն ցոյց տուեց նոցա ոխերիմ թշնամիներին, որոնք այդպիսով իրենց հաւատի շնորհիւ, աներկբայ հաւատարիմ կը մնային հռոմէական տերութեանը:

Զենոնի ժամանակ իրերի դրութիւնը անհամեմատ աւելի կասկածելի էր տերութեան Եւրոպական մասում: Գոթերը, թողնելով իրենց բնակավայրերը Պանոնիայում անընդհատ ձգտում էին դէպի հարաւ և նորից

սկսեցին տէրութեան համար անվերջ վտանգ դառնալ։ Զենոնի համար առանձին բախտաւորութիւն էր, որ Ամալների թագաւորական ցեղից անկախ, ժողովրդի մէջ զօրեղ կողմնակիցներ ձեռք բերից հասարակ ծագումից մի զինուոր՝ Թէոդերիխը, որին Յոյները—Strabos—Սարաբոս կամ Տիարիոսի որդի էին կոչում։ Զօրքի երկու առաջնորդների հակառակութիւնը տէրութեան փրկութիւնն էր։ Կառավարութիւնը, որ ոսկի չէր խնայում կարող էր ապահով լինել, որ, եթէ Թէոդորիխներից մէկը կամ միւսը իւր դէմ կռուէր, միւսը անպատճառ իրան կօգնէր։ Թէև այս էլ կար, որ իւրաքանչիւր անգամուայ դաշնակիցը Մակեդոնիայում և Թրակիայում աւելի մեծ աւիւրումներ էր կատարում քան բացարձակ թշնամին։ 478 և 481 թ. Տրիարիոսի որդին յարձակուեց մայրաքաղաքի վրայ, իսկ 487 թ. Թէոդորիխ մեծը։ Երկուսն էլ յաջողութեամբ յետ մղուեցին։ Վերջինիս դէմ Հռովմայեցիներից դուրս եկաւ մի հակառակորդ, որ թէ քաջ էր և թէ յաջող՝ Սարինեան զօրապետը։ Բայց սա շուտ մեռաւ և տէրութիւնը նոր նեղութիւնների մէջ ընկաւ. մանաւանդ երբ Տրիարիոսի որդին մի հասարակ զինուորից ապանուելով, Գոթերի թագաւորը հակառակորդից ազատուեց, որին Հռովմայեցիները, կոնսուլ և պատրիկիոս տիտղոսներ շնորհելով, ի զուր աշխատել էին գրաւել։ Անզուսպ «դաշնակիցներին» նոր բնակութեան տեղեր տուին Դանուբի հովտում։ այդ ժամանակ Ռաւդեր ազգի փախստական իշխանի դեսպանութիւնը Մեծ Գոթի ուշքը գարձրեց Իտալիայի վրայ, Ինչպէս որ Օդովակրը ձգտել էր, որ Բիւզանդիոնը նրան ճանաչէր արևմուտքի կայսերական զօրապետ և կուսակալ, այնպէս էլ այժմ որովհետև սիրում էր այն հասկացողութիւնը թէ հռովմէական տէրութիւնը անբաժան է, Զենոն կայսրը իսկապէս առանձին դաշնագրութեամբ Թէոդորիխին նշանակեց իւր յաջորդ և իշխանութեան մէջ երկրորդ, իսկ նրա ձեռքի տակ փոքր Գերմանացիները կայսերական զինուորներ էին համարուում։ Նա պահանջեց կայսրից Ծիրանի և ստացաւ նրա յաջորդ Անաստասից։ Թէոդորիխը միշտ շեշտում էր իւր կախումը կայսրից։ Իսկ սա, որ քաղաքական իրաւունքների ձեռապաշտ հետևող չէր, այլ շատ սառը դատող դրական քաղաքագէտ էր, միայն այն ժամանակ թեթևացած շունչ քաշեց, երբ նրա «հաւատարիմ հպատակը» Վերոնայի մօտ յաղթեց Օդովակրին և վերջնականապէս մնաց Իտալիայում։ Ահա այդպիսով է տէրութիւնը վերջնականապէս ազատուել գերմանական ցե-

ղից իշխողներ ունենալու վտանգից։

Զենոնի մահուան ժամանակ 491 թ. Ապրիլի 11-ին երևան եկաւ, թէ ինչքան ուժեղ է թագաւորական ցեղի նշանակութիւնը ժողովրդի մէջ։ Կայսեր ընտրութիւնը կախուած էր այրի կայսրուհի Արիադնէից, Լևոն Ա-ի աղջկանից. և նա կայսր ընտրեց և միևնոյն ժամանակ իւր համար ամուսին մի քաջածանօթ աշխարհական պաշտօնեայ՝ Անաստաս Սիլենտիարացուն, (491-518)որը— ինչ որ շատ բնորոշ էր այդ ժամանակների համար շատ չանցած քիչ էր մնացել, որ Անտիոքի պատրիարք ընտրուէր։ Սրա կառավարութիւնը համեմատած Զենոնի հետ, համեմատաբար խաղաղ էր։ Իրաւ է հէնց սկզբում ընդհարումներ եղան Իսաւրացիների հետ. նոցա հայրենակից Զենոնը մի տեսակ պրետորեանների դիրք էր տուել մայրաքաղաքի մէջ՝ Փոքր Ասիայի հարաւային լեռնոտ երկրի այդ կոպիտ և կռուասէր հրոսակներին. Զենոնի ազգականները և կողմնակիցները ստացել էին զինուորական ամենակարևոր պաշտօնները։ Սակայն խռովարար ամբոխը, դգդուած իրենց առաջնորդներից, քաղաքական կռիւ սկսեց։ Բայց կայսրը ցոյց տուեց իւր եռանդը։ Նա Իսաւրացիներին զրկեց իրենց ստացած ցորենի բաժնից։ Նոքա արիւնալից կռուից յետոյ

քաղաքից դուրս վռնդուեցին։ Սակայն Զենոնի եղբայր՝ Լոնգինոսը, որը ձգտել էր թագի, անցաւ ապստամբների դլուխը։ Պատերազմը շարունակուեց վեց տարի Փոքր Ասիայի հարաւում։ Ապստամբութեան գլխաւորները, որոնք մի տեսակ ազգային բնաւորութիւն տուին, բոլորից սիրուած անձինք էին։ Նոցա հետ էր Ապամէի նախկին արքեպիսկոպոս՝ Կոնոնը, որ իւր աղօթագիրքը փոխել էր սրի հետ։ Բայց Կոտիւէի յաղթութիւնից յետոյ 493 թ. ապստամբութիւնը նուազեց, միայն շարունակուեց պատահական յարձակումներով և ամրոցների պաշարումներով և լոկ տեղային բնաւորութիւն ունէր. արևելահռոմէական կառավարութիւնը ազատուեց Իսաւրեան պատուհասից։

Տէրութեան եւրոպական մասի հիւսիսային նահանգները Գոթերի հեռանալուց յետոյ ժողովրդից զրկուելով, ենթարկուեցին երկրի ներսում ապրող բարբարոսների անընդհատ յարձակումներին։ 493, 505 և 517 թ. յիշուում են Գոտերի արշաւանքներ. սոցա մասին կարծում են թէ այն ժամանակուայ օլաւոնական թափառական ցեղերից էին։ Նոքա յաղթում են հռոմէական զօրաւորներին և թալանելով ներս են խուժում Թրակիա, Մակեդոնիա և Թեսալիա։ 499 թ. փիննական

Բուլգարները ծանր հարուած են հասցնում Հռովմայեցիներին Զուրտա գետի մօտ, իսկ 502 թ. ասպատակում են Թրակիան։ Կայսրը երկար պարիսպ քաշելով պաշտպանեց մայրաքաղաքը։ Այդ շրջանից է սկսւում Բալկանեան թերակղզու ժողովուրդների պաւոնանալը, որ տիեզերական պատմութեան համար առանձին նշանակութիւն ունեցաւ։

Անաստասի ժամանակուայ բոլոր պատերազմներից ամենակարևորը Պարսից դէմ մղածն էր, որի մասին շատ լաւ տեղեկութիւն ունինք Զուքնին վանքի վարդապետ՝ Ասորացի Յեսուայ սիւնակեացի ժամանակակից պատմութիւնից։ Երկու իշխանութիւններն էլ խախտել էին հին դաշինքները, բայց պատերազմի իսկական պատճառը ուրուն Հռովմայեցիները, երբ նոքա Պարսից բաժնի Հայոց քրիստոնեայ նախարարներին իրենց հովանաւորութեան տակն առան։ Քրիստոնեայ Հայերը Յոյներին բարեկամ էին մինչև որ, Յուստինիանի անմիտ քաղաքականութեան շնորհիւ, կորաւ այդ հարևան տէրութեան համակրանքը։ 502թ. Կաւատը սկսեց պատերազմը, տիրեց Թէոդոսուպոլսին (Կարին, Էրզրում)՝ Յունաց բաժնի Հայաստանի գլխաւոր քաղաքին։ 503 թ. սկզբին երեք ամսուայ պաշարումից յետոյ մատնութեամբ ընկաւ Ամիդ քաղաքը, որը

տէրութեան ամենագլխաւոր ամրոցն էր Միջագետքում։ Դժբախտ քաղաքը զգաց գազանաբարոյ յաղթողի ամբողջ կատաղութիւնը, որ Հռովմայեցիներին նորից վերադարձրուեց միայն 504 թ.։ Հռովմայեցւոց զօրագեղների մէջ աչքի էր ընկնում մանաւանդ զօրականների առաջնորդ (Celer) Կելերը։ Թէ Յունաց և թէ Պարսից Միջագետքը սարսափելի կերպով աւերուում էր թէ թշնամիներից և թէ բարեկամներից, երբ վերջապէս երկու կողմն էլ ուժասպառ եղան, 506 թ. խաղաղութիւն հաստատեցին՝ հիմք ընդունելով պատերազմից առաջ գոյութիւն ունեցող կացութիւնը։ Հիւսիսային ժողովուրդները Պարսիկներին նեղն էին լծել, կայսրը օգուտ քաղեց այդ հանգամանքից և հակառակ դաշնադրութեան, շինեց Դարա կարևոր ամրոցը, որ սպառնում էր Մծբին քաղաքին։

Ներքուստ կառավարութիւնը եռանդուն կերպով պարապած էր վերանորոգութիւններով։ Թէ ժամանակակիցները և թէ յետագաները շատ են գովում կայսեր այն կարգադրութիւնը, որով նա վերացրեց ոսկու և արծաթի հարկը, որ շատ էր ճնշում բոլոր դասակարգերը։ Նա փորձեց նմանապէս պաշտօնների վաճառման դէմ կռուել։ Բնորոշ է ժամանակի ճգնաւորա—վարդապետական հա-

յեաց.քների համար, որ ժողովրդին արգելում էին նոյն իսկ բարեկենդանի անմեղ զուարճութիւնները, որոնց մէջ իբր թէ գտնում էին հեթանոսութեան մնացորդներ։ Ինչպէս որ Անաստասի ժամանակակից Գելասիոս պապը Հռովմում վերջնականապէս արգելեց Լուպերկուլիան տօները, այնպէս էր կայսրը արգելեց աղջկայ շորեր հագած տղայ պարողների պարերը, ինչպէս նաև Բրիւտայի մայիսեան տօները իրենց ժողովրդական հանդիսաւոր պարերով, որովհետև ամբոխը հարբում էր, չափը կորցնում և ծագում էին շատ անդամ արիւնահեղ վախճան ունեցող ծեծկրտոյ։ Սակայն կառավարութիւնը ցոյց տուեց իւր խոկական քրիստոնէական առաքինութիւնը, երբ վերջացրեց չափազանց ժողովրդականութիւն ստացած մեծ տօները՝ գլադիատորների և վայրենի գազանների մենամարտութիւնները կրկէսում։

Անաստասի կառավարութիւնը առանձին կարևոր նշանակութիւն ունի ոչ այնքան քաղաքական, ինչքան եկեղեցական տեսակէտից։ Կայսրը, իւր նախորդի նման, լոկ քաղաքագիտական միտումներից դրդուած չէր միաբնակներին բարեկամ այլ նա հետևում էր եկեղեցական այդ ուղղութեանը իւր սրտի խորին համոզմամբ։ Նրա գլխաւոր խորհրդատուն՝

Մարինոս Ասորին նոյնպէս բացարձակ միաբնակ էր։ Զնայած դրան, կայսրը եկեղեցական քաղաքականութեան մէջ ընտրեց միջին ճանապարհը։ Որովհետև Եւրոպան և մանաւանդ մայրաքաղաքը հակուած էին դէպի քաղկեդոնականութիւնը, նա առժամանակ համբերեց Եփիմէոս պատրիարքին, որը նոյնպէս քաղկեդոնական էր, և երբ 496 թ. նրան հրաժարեցրին, նրա յաջորդ Մակեդոնիոսը թէև սաստիկ դրեց հենոտիկոնին, բայց իրան ցոյց էր տալիս կայսեր եկեղեցական քաղաքականութեան կամակոր հակառակորդ։ Արևելեան նահանգներից Եգիպտոսը բացարձակ միաբնակ էր, մինչդեռ Պաղեստինը իւր բազմաթիւ վանքերի վարդապետներով օրթոդոքս էր։ Ասորիքում տիրում էր Փլաբիանի մեղմ, միջին կուսակցութիւնը։ Հենոտիկոնը ընդհանրապէս ընդունում էին իբրև տէրութեան հանգանակ. բայց նրա մեկնութեան մէջ արտայայտուում էր կուսակցութիւնների խորը հակառակութիւնը։ Եգիպտացիք և ծայրայեղ մոնոֆիզիտները յայտնում էին, թէ նրա միջոցաւ մերժուում է քաղկեդոնականութիւնը, մինչդեռ ընդհակառակը՝ մայրաքաղաքում բացատրում էին որ նրա մէջ իսկապէս արտայայտուած է այն ժողովի որոշումների ընդունելութիւնը։ Միջին կուսակցութիւնը խելացի

կերպով. կարծիք չէր յայտնում այդ դժուար հարցի մասին, այլ մոնոֆիզիտներից մղուած առանց իւր համոզմանը հակասելու, բացի Նեստորից, նզովում էր նաև Անտիոքի դպրոցի միւս ներկայացուցիչներին, մանաւանդ Դիոդորոս Տարսոնացուն և Թէոդորոս Մոփսուեստացուն: Անաստասը շատ դովելի դիրք էր բռնել: Նա թոյլ էր տալիս, որ նահանգներումը, որտեղ ծագումով, լեզուով և պատմութիւնով միմեանցից բոլորովին տարբերւում էին, պարզօրէն պահպանուեն տեղային սովորութիւնները և գոյութիւն ունեցող հայեացքները: Կառավարութիւնն էլ, առանց յեսին մոքի, սրտով աշխատում էր պահպանել խաղաղութիւնը և միութիւն ստեղծել: Նոյն իսկ Հռովմի՝ օրթոդոքսութեան կենդրոնի հետ, թէ կայսրը և թէ նրա պատրիարքները քանիցս հաշտութեան փորձեր արեցին: Անաստաս Բ. խաղաղասէր պապի օրով բանակցութիւնները ընթանում էին բաւական յաջող, սակայն նրա վաղաժամ մահը ի դերև հանեց խաղաղութեան յոյսերը: Որովհետև Հռովմի յամառ պահանջը՝ թէ պէտք է Ակակի անունը հանել եկեղեցական դրքերից, Արևելահռովմի պատուին դէմ էր և անընդունելի: Միւս կողմից՝ ծայրայեղ մոնոֆիզիտները անընդհատ մայրաքաղաք էին ուղարկում վարդապետներից դեսպանութիւններ. սոցա առաջնորդները՝ հանձարեղ Սեվերոսը և եռանդոտ Քսենայիաս Հիերապօլսեցին կայսեր շատ դուրեկան էին: Մէկը միւսի հետևից ժողովներ էին գումարում, բոլորն էլ առանց հետևանքի: Արքունական մատուռներում սուրբ Աստուածը երգում էին մոնոֆիզիտների յաւելուածով. (Աստուած) «որ վասն մեր խաչեցար»: Կոստանդնուպօլսի խուսափարար ժողովուրդը, որը սովորաբար ոգևորուում էր և տաքանում միայն կրկէսի ձիարշաւներով և ձեռնածուներով, նոյն յախուռն զգացմունքներով իւր վերայ առաւ օրթոդոքսութեան պաշտպանի դերը և վտանգաւոր կերպով ապստամբում էր հաւատի համար: Բարկացած կայսրը 512 թ. Սիդոնում ժողով գումարեց, որի վրայ պարտք դրուեց մի այնպիսի պատասխան խմբագրել, որ այլ ևս կասկածների տեղիք չը լինի: Ժողովի բանիմաց և չափաւոր ղեկավարները՝ Փլաբիան Անտիոքացին և Նղիա Երուսաղէմացին դէմ էին որևէ ծայրայեղ կարգադրութեան, որով վշտացրին Կամաբիլայից պաշտպանուած մոլեռանդներին: Կայսրը փոքր առ փոքր ծերացել էր, յոգնել և դիւրագրգիռ դարձել: Նա ձանձրացել էր շարունակ բանակցելով երբէք խելքի չեկող աստուածաբանների հետ, և որոշեց միանգամից միա-

նալ մոնոֆիզիտների հետ, որոնք աւելի վրձռողական էին։ Այդ էր պատճառը, որ նա գիտակցօրէն թողեց իւր մինչև այդ ժամանակուայ եկեղեցական շափաւոր քաղաքականութիւնը։ Նրա մասին մեղմօրէն վկայում է Յեսուա սիւնակեանցը, թէ նա յիմարացել էր ինչպէս ծերացած Սողոմոնը։

Մակեդոնին հեռացրին և նրա տեղը կարգեցին Տիմոթէոսին, որ ծայրայեղ մոնոֆիզիտ էր. սա խսկոյն յարաբերութիւն հաստատեց արևելքի եկեղեցիների հետ։ Փլաբիան Անտիոքացին, շուտով նաև Նղիա Երուսաղէմացին աքսոր քշուեցին, և Անտիոքի առաքելական գահը բարձրացաւ մոնոֆիզիտների առաջնակարգ ուղղութիւն տուող Սեվերոսը։ Տիւրոսի 513 թ. ժողովում հանդիսաւոր կերպով վերսին ընդունեցին հենոտիկոնը և նզովեցին քաղկեդոնականութիւնը։ Բայց այս անգամ էլ կայսրը ցոյց տուեց իւր մեղմութիւնը. նա յատուկ արգելից Լիբանեան Փիւնիկիայի կուսակալին, որ վերջինս այժ չգործ դնէ Նպիփանէի և Արեթուզայի ըմբոստ եպիսկոպոսների դէմ. նա չէ ցանկանում պատիժ գործ դնել նոյն իսկ այն ժամանակ, երբ կասկածելի և վտանգաւոր պատահարներ տեղի կունենան, եթէ պատժելով մի կաթիլ արիւն անգամ թափուի։

Բայց անհնար էր, որ կայսեր քաղաքականութեան փոփոխութիւնը եւրոպական նահանգներում ընդունուէր առանց հակաճառութեան։ 512թ. մայրաքաղաքում ծագեց մի այնպիսի սարսափելի յեղափոխութիւն, որ մինչև կայսերական թագն անգամ վտանգի մատնեց. բնականաբար ըմբոստացել էին, որպէս զի պաշտպանած լինին վտանգի ենթարկուած օրթոդոքսութիւնը։ Մարինոսի և Պղատոն պրեֆեկտի տները կողոպտեցին և այրեցին. ժողովրդի կատաղութեան զոհ դնացին մի քանի դժբախտ մոնոֆիզիտ վարդապետներ։ Այդ սարսափների ժամանակ ամբողջ օրերով ամբոխը կրկէսներում երգում էր օրթոդոքս բնագրով շարականներ։ Արդէն Արիոբինթոսին կայսրը հրատարակեցին, երբ յանկարծ կրկէսն եկաւ Անաստասը՝ առանց թագի և կայսերական զարդարանքի և մուներտի միջոցով յայտարարեց, թէ ինքը պատրաստ է հրաժարուելու, բայց բաղմաձլեան ամբոխի կառավարութիւնը անհնար մի բան է, պետութեան կառավարութիւնը միայն մէկին պիտի յանձնել։ Ծերացած գահակալի աներկիւղ լեզուն ազդեց ամբոխի վերայ դիւթիչ զօրութեամբ, աղմկալից ուրախութիւնով նրան նորից կայսր ճանաչեցին և ցրուեցին իրենց տները։ Կառավարութիւնը մեծ եռանդով

շուտով վերականգնեց խաղաղութիւնը։

Արևմտեան նահանգների այդ տրամաբանութիւնից օգուտ քաղեց մի զօրավար, Վիտալիանը, ծագումով Միւսիայից, որ մի կոպիտ և փառասէր անձն էր, 514 թ. Դանուբի նահանգներում բարձրացրեց ապստամբութեան դրօշը։ Օրթոդոքս հաւատը նրա համար այնքան նշանակութիւն ունէր, ինչքան երբեմն Իլլուսի համար. բայց նա դիտէր, որ եթէ իւր ծրագրի մէջ մտցնի քաղկեդոնականութեան պաշտպանութիւնը, դրաւած կըլինէր Նեստորայի հոգևորականութեան և ժողովրդի համակրութիւնը։ Զօրեղ զօրքի գլուխ անցած, ըստ ոմանց 50,000 «Հոների» հետ, 514 թ. արշաւեց մայրաքաղաքի վրայ և կայսեր այնպէս սարսափեցրեց, որ սա խաղաղութեան համար բանակցութեան մէջ մտաւ և խոստացաւ ժողով գումարել արևմուտքի հետ միութիւն հաստատելու։ Հազիւ հաղ յետ էր քաշուել Վիտալիանը, նրա դէմ ուղարկեցին Կիւրեղ զօրավարին, որը սակայն յաղթուեց։ Սարսափելի ջարդ կրեց նաև կայսեր հօրեղբօրորդին՝ Հիւպատիոսը, նրա զօրքի մեծ մասը կոտորուեց, ինքն էլ գերի ընկաւ։ Ինչպէս առաջ Օդեսոս և Անքիալոս, այժմ էլ Սողոպոլիսը ընկաւ ապստամբների ձեռքը. նա սպառնում էր մայրաքաղաքին ծովի կողմից էլ։

Կայսրը ստիպուած եղաւ դնել իւր հօրեղբօրորդուն, 5000 ֆունտ ոսկի վճարել, իսկ Վիտալիանին պաշտօնապէս ճանաչել Թրակիայի զօրքի հրամանատար-magister militum per Thraciam։ Հերակլէի ժողովը չկայացաւ, թէև Հորմիդաս պապը Թէոդորիխի թոյլտուութեամբ ուղարկել էր իւր ներկայացուցիչներին. և դրա պատճառը այնքան կայսեր երկչոտութիւնը չէր, ինչպէս Թէոփանէան է յայտնում, ինչքան Հռովմի եկեղեցական քաղաքականութիւնը և դաւանաբանական հայեցակէտը, որի հետ այն ժամանակուայ Բիւզանդիոնը չէր կարող որ և է միութիւն հաստատել։ 515 թ. պատերազմներ տեղի ունեցան ապստամբ Սկիւթացւոց և կայսեր մէջ. սակայն Մարինոսը հիմնովին յաղթեց նոցա ծովի վրայ՝ Սիւկիայի (Բերութ) մօտերքում և մայրաքաղաքին հանգըստութիւն պարգևեց։ Վիտալիանը յետ քաշուեց դէպի հիւսիս. նրա արշաւանքը վերջնականապէս անյաջող եղաւ։

Ծերացած կայսեր անընդհատ գլխացաւութիւն էր պատճառում հոգևորականութիւնը։ Պաղեստինում մեծ ոյժ ունէին վանականները և ճգնաւորները. նոքա սուրբ Սաբայի և նրա ընկերների գլխավորութեամբ մեծ համախմբումներ էին կատարում և բողոքում այն արքունի աստուածաբանութեան դէմ, որ

տիրում էր Կոստանդնուպոլսում։ Ալիքսանդրիայում գործը մինչև անգամ փոքրիկ ապստամբութեան հասաւ. որովհետև 517 թ. քաղաքի Ցունաց աղնուականներն, առանց ժողովրդի և հոգևորականութեան կամքը հարցնելու, Դիոսկորոսին պատրիարք էին նշանակել։ Բայց ճարպիկ եպիսկոպոսը հասկացաւ զրաւել իւր հակառակորդներին և, անձամբ Կոստանդնուպոլիս ճանապարհորդելով, հաշտեցրեց իւր հետ նաև կառավարութիւնը։ 515 թ. Արէադնէն արդէն մեռել էր. 518 թ. ապրիլի 9-ն նրան հետևեց իւր զառամեալ ամուսինը։ Զառամելութիւնից յիմարացած ծերը կորցրել էր որ և է վճռողականութիւն և գործելու ցանկութիւն, այնպէս որ նա իւր յաջորդների մասին անմտաբար ոչինչ կարգադրութիւն չէր արել, թէև նա ունէր աղջկեցիկ և հանճարեղ աղգականներ։

Անաստասի մահով վերջանում է Արևելահռովմի պատմութեան առաջին շրջանը։ Երկու անգամ տէրութեանը վտանգ էր սպառնացել արևմուտքի պէս գերմանական զինուորական դասակարգի իշխանութեան ենթարկուելու, երկու անգամն էլ յաջող և վերջնականապէս ազատուել էր։ Այդպիսի շրջանում երբ կրօնական և եկեղեցական խնդիրներն այնքան սուր կերպարանք ստացան, ինչքան դուցէ

միմիայն ԺԶ դարում, կայսերական կառավարութիւնը ընդհանրապէս առաջ՝ ցոյց էր տուել մեծ չափաւորութիւն և հմտութիւն։ Եթէ հաշուի չառնենք Անաստասի վերջի տարիների սխալները, ամեն ինչ ամենալաւ դոյնով է ներկայանում։ Յուզուած մտքերը աստիճանաբար խաղաղուեցին։ Առանձին նշանակութիւն չունէր, որ արևմուտքը նեղացած ուռչում էր։ Բայց այդ բոլոր յուսալից պայմանները ոչնչացրեց մի պետ, որը իւր սահմանափակութեան մէջ չափազանց փառասէր էր և միութեան ախտով հիւանդ։

Բ.

ՑՈՒՍՏԻՆԻԱՆԻ ԵՒ ՆՐԱ ՑԱՋՈՐԴՆԵՐԻ ԴԱՐԱԳԼՈՒԽՈ (518—610)

Երբ գահը թափուր մնայ, իշխանութեան յաջորդի մասին մտածում էր ամենակարող սենեկապետ Ամանթիոսը։ Նա մտադրուել էր իւր եղբօրորդի Թէոկրիստոսին կայսր հրատարակել տալ։ Այդ նպատակի համար նա հարուստ միջոցներ տուեց Իլլիւրիացի Ցուստինին, որը ունէր ալքունի ամենաաչքի ընկնող մի պաշտօն՝ պալատի պահապանների հրամանատարութիւնը—comes excubitorum (կանանոցի հրամանատար) և նա պիտի գրաւէր այդ

ազդեցիկ պրետորեաններին ներքինու ծրագրի համար։ Սակայն խաբեբայ Ղլիւրիացին բարբարոսին վայել խորամանդուԹեամբ՝ այդ միջոցները գործ դրեց իրեն կայսր հրատարակելու։ Սենատը և ժողովուրդը՝ ինչպէս միշտ՝ այս անգամ ել համաձայնուեցին։ Ցուստինը ճանաչուած էր իբրև հմուտ զինուոր՝ բնաւորուԹեամբ կոպիտ և օրԹոդոքսուԹեան ջերմ կողմնակից։ Որ ԱմանԹիոսին իսկոյն մի կողմ ձգեցին՝ շատ բնական էր այն ժամանակուայ բարք ու վարքի համար։ Դրերի վիճակը հիմնովին փոխուեց և այդ արտայայտուեց նրանով՝ որ Վիտալիանը փայլուն դիրք ստացաւ։ Նա ստացաւ զինուորական բարձր հրամանատարուԹիւն՝ իսկ 520 Թ. հիւպատոսուԹիւն։ Ցուստինի (518—527) կառավարուԹիւնը արտաքին պատահարներով շատ աղքատ է՝ Թէ և ոչ աւելի քան անիշխանուԹեան ժամանակ. նա մի տեսակ նախապատրաստուԹիւն էր իւր եղբօրորդու երկարամեայ և նշանաւոր ԹագաւորուԹեան համար։ Միայն կովկասեան մանր իշխանների պատճառաւ Պարսից և նրա մէջ տեղի ունեցաւ ընդհարում՝ որը սակայն շուտ վերջացաւ։ Ցուստինի կառավարուԹեան ամենակարևոր դէպքը Հին Հռովմի հետ հաւատոյ միուԹեան վերահաստատուԹիւնն է 519 Թ. որ պապականուԹեան ամենամեծ յաղԹանակնե-

րից մէկն էր՝ և որը պարսկական անունով Հորմիզդաս Կամպանացի պապի գործն էր։ Վիտալիանը իբրև օրԹոդոքսուԹեան գլխաւոր նեցուկ՝ կանգնած էր ամենառաջին կարգում։ Նրա ԹելադրուԹեամբ դատապարտուեց մոնոֆիզիտների հոգևոր պետը՝ հանճարեղ Սեվերոս Անտիոքացին։ Անհերքելի է՝ որ կառավարուԹեան կասկածը գնալով աճում էր՝ երբ նա տեսնում էր այդ բռնակալ և անսկզբունք մարդու գործողուԹիւնները՝ որը սակայն շատ էր սիրուած զինուորներից։ Երբ նա հոգևորականուԹեան համակրանքն էլ զրաւէր՝ ԹագաւորուԹեան համար այնպիսի քաղաքական վտանգ կը ներկայացնէր՝ ինչպէս երբեմն Սեվերոսի տան համար Թիկնապահների առաջնորդ Պլաւտիանն էր։ Ուստի շատ պարզ է՝ որ կառավարուԹիւնը հետևեալ տարին արդէն յետ չնահանջեց անհրաժեշտ չարագործուԹեան առաջ և ոչնչացրեց կայսեր իրական պաշտօնակցին՝ և հազիւ Թէ սխալ լինի հասարակական կարծիքը՝ որ կայսեր եղբօրորդուն էր համարում յանցանքի սկզբնապատճառ։ Մի առժամանակ կառավարուԹիւնը ստիպուած էր կամայ Թէ ակամայ եկեղեցական քաղաքականուԹեան մէջ ընԹանալ Վիտալիանի բռնած ճանապարհով։ ՄիուԹիւնը կընքուեց՝ որի համար Արևելահռովմը չափա-

զանց թանգ վճարեց։ Դատապարտեցին իրենց աղգային եկեղեցու ամենաթանգ պետերի յիշատակը, յուշարձանների միջից ջնջեցին Մեծ Ակակիոսի և նրա յաջորդների անունները։ Դրա միակ բացատրութիւնը այս կարող է լինել, որ գահաժառանգ Յուստինիանը, որի համաձայնութիւնը ձեռք բերելու համար հռովմէական հոգևոր ատեանը առանձին եռանդով աշխատում էր՝ լաւ և ուղիղ ըմբռնած լինելով նրա կարևորութիւնը, հենց այն ժամանակն էր մտածում և ծրագիրներ կազմում արևմտեան տէրութիւնը նորից միացնելու։ Եթէ հարկաւոր էր գրաւել արևմտեան լատինախօս նահանգների և նրա ազդեցիկ ու թունդ օրթոդոքս հոգևորականութեան համակրանքը, ամենաառաջին պայմանն էր հռովմի հետ հաշտութիւն կայացնել, և դրա համար ոչ մի գին բարձր չէր։ Ամենամեծ խստութեամբ տէրութեան նոր հաւատը ընդունել տուին արևելքում և Փոքր Ասիայում։ յիսունից աւելի եպիսկոպոսներ, մեծաւ մասամբ բարեպաշտ, ուսումնական և ծերացած մարդիկ զրկուեցին պաշտօններից և ենթարկուեցին խիստ աքսորի։ Միայն չհամարձակուեցին Եգիպտոսին ձեռք տալ։ դեռ էլի յիսուն տարի շարունակ մոնոֆիզիտները այդտեղ ապաստան էին գտնում և Փոքր Ասիայի և Ասորիքի այդտեղ փախած

եկեղեցական պետերը անդադար վիճում էին Քրիստոսի մարմնի ապականութեան և անապականութեան մասին։ Արևելահռովմի համար քաղկեդոնութեան վերահաստատութիւնը մի անուղղելի քաղաքական սխալ էր։ Վեցերորդ դարում նկատելի էր, որ ամեն տեղ արթնանում էր ազգայնութեան գիտակցութիւնը, բայց դարու հոգու համեմատ՝ այդ արտայայտուում էր եկեղեցու միջոցաւ։ Ասորական և եգիպտական եկեղեցիները, որ սկիզբն առան Յուստինիանի ժամանակ, ատելութեամբ տէրութիւնից երես դարձրին։ այդ շատ կարևոր նահանգների մէջ սկսեց տիրապետել հակատէրունական և հակաթագաւորական զգացմունքը։ Այն ժամանակուայ տմբողջ արևելքում նկատելի դարձաւ հակահռովմէական ուղղութիւնը։ Նոյն բնազդական ժողովրդական ատելութիւնը ոգևորում էր նաև Յոյներին՝ Լատինների դէմ։ Յուստինիանով է սկսում այն դարձը, երբ փորձում են թոթափել լատինական պաշտօնական պալատական և դատաստանական լեզուի անհաճոյ շղթան։ Ուստի տէրութեան օգտի տեսակէտից կարելի է միայն ցաւել, որ հռովմի հետ միութիւն կայացաւ։ Սակայն Վիտալիանը և Յուստինիանը ընդունել տուին իրենց ուզածը և 525 թ. Զատկին՝ Կոստանդնուպոլի-

սը ներկայ եղաւ մի հանդիսի, թէ ինչպէս Յովհաննէս պապը, որին Թէոդորիկը յանձնարարել էր մի բաւական չարագուշակ պաշտօն՝ գնալ և համոզել որ Արևելահռովմը մեղմութեամբ վարուի արիանոսների հետ, մայրաքաղաքի պատրիարքական եկեղեցու մէջ պատուոյ տեղը նստեց՝ տիեզերական պատրիարքից բարձր և պատարագ մատոյց լատիներէն լեզուով։ Յուստինիանն արդէն իրապէս իւր ձեռն էր առել կառավարութեան իսկական ղեկը, երբ 525 թ. ապրիլի 1-ին Յուստինը նրան կայսրակից հրատարակեց և օծեց։ Մի Եւնոյն ժամանակ նրա ամուսին Թէոդորան ևս, որ առաջ կրկէսում պարող կին էր, իւր կայսերական հօրեղբօր ձեռքից ստացաւ թագ։ Կայսրուհու, որին Յուստինիանը այնքան յարգում էր, նախկին կեանքը, ինչպէս որ պիտի եզրակացնել նրա առաջուայ քաղաքացիական ապրուստի եղանակից, արատներից անաղարտ չէ եղել. բայց մի բան չպէտք է մոռանալ, որ այն հայհոյանքները, որ դարերի ընթացքում թափուել են նրա գլխին, ծագում են մի գրքից, որ յիշատակարանների՝ ամենակասկածաւոր գրականութեան (Memoiren litteratur) կատարելատիպն է։ Թէ արքունիքի մթնոլորտից հեռացրած սենեկապետը՝ իւր գաղտնուած ծերութեան մէջ, անլուր և թունաւոր ստեր է հնարել, հեշտ է շատ դէպքերում ապացուցանել, որով ստիպում է զգոյշ լինել նրա միւս ցուցումների վերաբերմամբ ևս։ Յամենայն դէպս, Թէոդորայի վարքը իրրև թագուհու, անարատ է։ Նրա թշնամիներն էլ չեն կարող ժխտել, որ նա արտակարգ հասկացողութիւն և խելք ունէր քաղաքական և թէ եկեղեցական գործերում։ Եթէ Յուստինիանը իւր արտասովոր կնոջ խրատներին աւելի լսած լինէր, դրանից տէրութեան համար դժբախտութիւն չէր ծագիլ։

527 թ. օգոստոսի 1-ն մեռաւ Յուստինը և Յուստինիանը (527—565) իրապէս միապետ դարձաւ։ Յուստինիանի կառավարութիւնը բիւզանդական պատմութեան մէջ կազմում է կարևոր յեղաշրջան. Արևելահռովմի պետը նորից փորձում է դրաւել արևմտեան տէրութիւնը, որ խլել էին գերմանացիները, և վերականգնել նախկին տիեզերական միապետութիւնը։ Աննկուն հետևողութիւնը, որով նա իւր կառավարութեան ամբողջ ժամանակամիջոցում առաջ տարաւ իւր աշխարհակալական ծրագիրը, վերջ ի վերջոյ յաջողութեամբ պսակուեց և նրա անունը մեծացրեց յետագայ սերունդների առաջ։ Սակայն տիրապետութեան այդ յանդուգն քաղաքականութիւնը վեր էր տէրութեան զինուորական և տըն-

տեսական ոյժերից և դա էր իսկապէս հիմքը, որ յետագայ դարերում քայքայումը անխուսափելի դարձաւ։ Արևելահռովմի այս ազնուած կայսեր թէ արտաքին և թէ եկեղեցական քաղաքականութիւնը հաւասարապէս վնասակար էր և կործանիչ տէրութեան համար։

Պատերազմները, որ մղում էին գլխաւորապէս օտար երկրներից վարձուած զինուորներով, կայսրից պահանջում էին ահագին միջոցներ։ Անաստասի հարուստ գանձարանը դատարկուել էր մասամբ Յուստինի ժամանակ, որ ոչ մի կերպ անտեսաբար չէր կառավարում և մանաւանդ նրա եղբօրորդու շռայլելովը, որ ուզում էր ժողովրդեան համակրանքն իրան գրաւած ունենալ։ Մեծածախս կառավարութեան միշտ աճող կարիքներին ստիպուած էր բաւարարութիւն տալ՝ ելևմտից զեկավար՝ թիկնապահների զօրապետ (praefectus praetorio) Յովհաննէս Կապպադովկացին, որ կոպիտ և բռնակալ մի անձն էր, իւր միջոցների մէջ ընտրութիւն չէր անում, բայց իւր անընկճելի եռանդով՝ տնտեսական գործերում մի արտակարգ հանճար էր։ Այն մութ պատկերը, որով ժամանակագիրները ներկայացնում են նրա ագահութիւնն ու կոշտակերութիւնը, ապահովապէս մեծաւ մասամբ հաստատ է։ Բայց

չպէտք է մոռանալ, որ արևելքին սովոր է կառավարութեան վերայ նայել իբրև իւր երդուեալ թշնամու վերայ, որը ծծում է իւր հպատակների տնտեսական միջոցները, իսկ նրա ելևմտից մինիստրին համարում է ամենազզուելի գործիք այն իշխանութեան, որը կողոպտում է մասնաւոր մարդկանց փողի քսակները։ Յուստինիանը լաւ հասկացաւ իւր մինիստրի կարևորութիւնը և նրան պաշտօնի մէջ պահեց իւր կառավարութեան ամբողջ առաջին կիսում։

Ներքուստ կառավարութիւնը մեծ եռանդով գործեց ամենից առաջ ձիարշաւի խմբակցութիւնների դէմ, որոնք չափազանց ուժեղացել էին։ Անարդար կըլիներ, եթէ կրկեսի կուսակցութիւնները համարէինք լոկ սուլթանական քմահաճոյքով կառավարուած մայրաքաղաքի անզուսպ ամբոխի խմբակցութիւններ կամ նէապոլիտական խուժանի (Maffia) նման ազատ ոմնադիրների ամբոխում։ Խմբերը կոչուում էին «դեմոյի» — «ժողովրդականք» և ունէին իրենց կանոնաւոր ընտրած առաջնորդներին։ Նախահելլենական քաղաքացիութեան դիտակցութիւնը նրա մէջ իւր վերջին ապաստարանը, իւր մարմնացումն էր գտել։ Ամենից շատ կարելի է նոցա համեմատել նախկին Պատրիցիների ժամանակ մակե-

դոնական «ekklesia Alexandrias —Ագէքսանդրիայի ժողովներին»։ Կրկեսի այդ խմբերը, շնորհիւ մայրաքաղաքի արտակարգ նշանակութեանը, այնպիսի ազդեցութիւն էին ձեռք ձգել, որ կառավարութիւնը ստիպուած էր նոցա հետ հաշուի մտել։ արքունիքը և պաշտօնեաները պարտաւոր էին որոշ գոյնի պատկանել։ Մինչդեռ Անաստասի ժամանակ իշխել էին կանաչները, Յուստինիանի ժամանակ զէկն անցաւ կապոյտների ձեռքը։ Կառավարութիւնը 532 թ. սկզբում փորձեց անկողմնակալ կերպով խառնուել նոցա գործերին, պատժելով երկու խմբերից չարագործներին, որպէսզի այդպիսով կարողանայ վերջապէս ազատուել կուսակցութիւնների խնամակալութիւնից։ Սակայն դրա պատճառաւ ծագեց Նիկայի կոչուած խռովութիւնը։ Քաղաքում սոսկալի հրդեհ պատահեց և աւելի մեծացրեց յեղափոխականների կատաղութիւնը։ Ի զուր անցան կայսեր ջիջողութիւնները՝ պաշտօնից հեռացնել ամենատաքի պաշտօնեաներին, թէև ինքըն էլ անձամբ, ինչպէս երբեմն Անաստասը, կրկեսի մէջ խոնարհութիւն ցոյց տուեց։ Երեան եկան զեկավարների նպատակները. յունուարի 19-ին Հիւպատիոսը՝ Անաստասի եղբօրորդին, հակաթոռ կայսր հրատարակուեց։ Դրութիւնը չափազանց վտանգաւոր էր։ Կայսրը

և նրա դիւանը, նոյն իսկ Բելիզար հռչակաւոր զօրավարը, որոշել էին փախչել։ Այդ բոպէում Թէոդորան իւր վճռողականութեամբ աղատեց թագաւորութիւնը։ Նորընտիր կայսրը վճռողական բոպէում չունեցաւ անհրաժեշտ եռանդը։ Կապոյտներին դրամի միջոցաւ և խոստումներով նորից գրաւեցին, մինչդեռ Բելիզարը և Մունդոսը ապստամբութիւնը խեղդեցին արեան մէջ։ Պաշտօնաթող ծառայողները նորից բռնեցին իրենց տեղերը։ Նիկայի ապստամբութեան յաղթական ճնշումը մի տեսակ սահմանաքար է կազմում արևելահունական զարգացման համար։ Ժողովուրդը և սենատը դադարում են դերակատար լինելուց քաղաքականութեան մէջ։ Բացարձակ միապետութիւնն առանց սահմանափակման, իշխող է դառնում։

Այժմ վերջապէս կարող էր Յուստինիանը հեռամուտ լինել իւր վաղուց փայփայած աշխարհակալական ծրագրերին։ Բնորոշ է, որ արդէն հետևեալ տարին Վանդալների տէրութեան հետ հաշիները վերջացրին։ 532 թ. սեպտեմբերին Պարսիկների հետ յաւիտենական խաղաղութեան դաշն կապուեց, որով կարելի եղաւ արևմուտքի դէմ յարձակողական պատերազմ սկսել։ Գերմանական ծովահէնների աֆրիկեան տէրութիւնը վաղուց

ընկել էր իւր բարձրութիւնից։ Տիրապետող սակաւաթիւ Վանդալները կասկածանքով էին նայում իրենց հպատակների բազմութեան վերայ, որ թէ ծագումով և թէ կրօնով իրենցից տարբերուում էին։ Ազատասէր Մաւրիտանցիների դէմ պատերազմը անյաջող էր։ Հիլդիրիքսը (523—530) այն կարծիքն էր ունեցել, թէ տերութիւնը կարելի է փրկել միանալով Բիւզանդիոնի հետ և ոյժ տալով կաթոլիկ հպատակներին։ Գելիմիրը (530—533) ընդհակառակը կերպասեց «աղգային» քաղաքականութիւնը։ Յուստինիանի քաղաքական միջամտութիւնը յօգուտ գահաղուրկ թագաւորի, մեաց առանց հետևանքի, ինչպէս որ յուսացել էր արևելահռովմէական դիւանը։ Սակայն կայսերական խորհրդատուները արդարացի կերպով զինուորական և տնտեսական պատճառներով ամենածանր կասկածներ էին յայտնում։ Կայսրը սկսել էր տատանուել, մանաւանդ երբ լսեց Ելևմից մինիստր Յովհաննէսի ծանրակշիռ կարծիքը. բայց արևելքի մի եպիսկոպոսի «աստուածառաք» երդը նրան թելադրում է հաստատուն մնալ իւր սկզբնական որոշման մէջ։ Անկասկած որոշման օգնել են Տրիպոլսի և Սարդինիայի ապստամբութիւնները, որոնք բարեկամաբար յակուած էին դէպի Հռովմայեցիները։

Ը։ 533 թ. Կոստանդնուպօլսի նաւահանգըստից արշաւեց նաւատորմիղը, որ ունէր 10,000 հետևակ և 5000 ձիաւոր զինուորներ, Բելիզարի անսահման հրամանատարութեան տակ։ Աֆրիկա անցնել շատ դիւրացրեց Օստրոթների կառավարութիւնը, որը անհեռատեսութեամբ օգնեց Նոցա. Սիկիլիայի պաշտօնեաները պատուէր էին ստացել հռովմէական նաւատորմիղին ամեն տեսակ նպաստ հասցնել։ Բախտը նպաստեց Բելիզարին սպասածից աւելի։ 533 թ. սեպտեմբերին նա իջաւ Աֆրիկա և գրաւեց բնիկների համակրանքը. մինչդեռ Վանդալները անսպասելի կերպով յարձակման էին ենթարկուած, միայն այն ժամանակ մտածեցին պաշտպանուելու, երբ թշնամին իրենց հողի վրայ էր։ Տասներորդ մղոնաչափի մօտ Գելիմիրը անհամեմատ մեծ զօրքով յարձակուեց թշնամու վերայ։ Բելիզարի յաղթութիւնը որոշեց նաև մայրաքաղաքի վիճակը, որը ոչնչացաւ ուրախ աղաղակներով։ Յաղթուած թագաւորը փախաւ Բուլլա Ռեգիա։ Նա իւր եղբօր՝ Յաղոնի զօրքով ուժեղացած, որը նորից ընկճել էր ապստամբ Սարդինիան, նորից դուրս եկաւ Բելիզարի դէմ։ 533 թ. դեկտեմբերին Տրիկամարոնի մօտ Վանդալները յաղթուեցին երկրորդ անգամ։ Թագաւորը փախաւ Նումիդեան լեռները։

Նա շուտով անձնատուր եղաւ և զարգարեց յաղթողի իրաւացի արժանացած յաղթական գնացքը մայրաքաղաքում։ Վանդալների թագաւորութեան մաւրիտանական և կղզիների տիրապետութիւնները անձնատուր եղան առանց ընդդիմութեան։ Զորսամենայ արշաւանքով Հռովմայեցիները նորից ձեռք էին բերել Աֆրիկան։ Բելիզարը գլխաւոր հրամանատարութիւնը յանձնել էր Դոմեստիկոս Սոլոմոն քաջ զօրապետին. սա արշաւեց աւրասեան լեռնային երկրի խորքերը, որ անջատուել էր Վանդալների անկանոն իշխանութեան ժամանակ։ Ամրոցներով ապահովացրին Հռովմայեցիների նոր գրաւած երկիրները։ Թէև հեռաւոր տարիներում Հռովմայեցիները բաւական յաճախ անգամ սուիպուած էին կռիւներ մղել թէ Մաւրերի և թէ նոյն իսկ իրենց ապստամբ զօրականների փառասէր առաջնորդների դէմ, ընդհանրապէս հռովմէական իշխանութիւնը հաստատուեց Աֆրիկայում։ Կարթագէնը այն թեմի գլխաւոր քաղաքը դարձաւ, որ համարեա դարուկէս ենթակայ էր արևելեան տէրութեանը։

Համարեա Վանդալների տէրութեան կործանումից անմիջապէս յետոյ, սկսուում է Իտալիայի Օստրոգոթների դէմ պատերազմը։ Նա տևեց մօտ 20 տարի և դրա պատճառը Յուստինիանի կառավարութեան եղանակի մէջ պիտի որոնել։ Պատերազմը սկսուեց շատ թերի միջոցներով և մեծաւ մասամբ այդպէս էլ շարունակուեց։ Ինչքան դրաւիչ և յանդուգն էր աշխարհակալական քաղաքականութիւնը, այնքան ողորմելի և խեղճ էր զինուորական ոյժը։ Թէև իրաւ է այդ դդացումը աւելի ոյժ ստացաւ վերջին Ամալների միանդամայն անմիտ քաղաքականութեամբ, որով նոքա ժողովրդի մէջ ծագեցրել էին չափազանց հակառակութիւն և տէրութիւնն էլ թուլացրել։ Ամալասվիտան՝ Թէոդորիխ Մեծի աղջիկը, և նմանապէս Թէոդահատը, որ յետոյ առաջինի կառավարչակից և սպանողը դարձաւ, երկուսն էլ իրենց հռովմէական կրթութեամբ և ուսումնականութեամբ օտարացել էին իրենց ցեղից։ Ամալասվիտան Հռովմայեցիներին նըպաստում էր և պաշտպանում տէրութեան կառավարութեան ղեկը յանձնուած էր Հռովմայեցի մարդկանց։ Երկու կառավարիչներն էլ ինքնակործան գաւառների յարաբերութեան մէջ էին մտել Արևելահռովմի հետ։ Բայց երբ սպանեցին թագուհուն, որ դաշն էր կապել Յուստինիանի հետ, կայսրը ցանկալի պատճառ ունեցաւ պատերազմ յայտարարելու։ Բելիզարը 535 թ. Սիկիլիայում ափիջաւ 7500 մարդկանցով։ Համարեա ամբողջ կղզին ըն-

կաւ նրա ձեռքը. մինչդեռ Մունդոսը յարձակուեց Դաղմատիայի վերայ։ Ողոմելի Ամալը (Թէոդահատը) արդէն որոշել էր իւր դահը Յուստինիանին տալու, երբ Օստրոթների զէնքի յաղթութիւնը Դաղմատիայում փոխեց նրա մտադրութիւնը, և ազգային պատերազմասէր կուսակցութեան ձեռքը ձգեց կառավարութիւնը։ Բելիզարը անյապաղ մտաւ Սուրբին Ռաւենա, որի բնակիչները բացառապէս Հռովմայեցիներ էին։ Մի այն Նէապոլը կարճ ժամանակով ընդդիմացաւ։ Մինչ այդ թագաւորը անգործ սպասում էր մայրաքաղաքում։ Այդ ժամանակ ժողովրդի կատաղութիւնը փոխուեց բացարձակ ապստամբութեան։ Ամբոխները հրատարակեցին դահաղուրի. Թէոդահատը փախչելիս սպանուեց, և Վիտիգէսին, որ թագաւորական ծագումից չէր, վահանների վերայ բարձրացրին (թագաւոր կարգեցին)։ Սակայն գործը հսկայական էր. աղատել հիմքից խախտուած տէրութիւնը, այդ թէև քաջ, բայց սահմանափակ և ընդհանուր կացութիւնը ըմբռնելու անկարող մարդու ոյժերից միանգամայն վեր էր։ Փոխանակ Հռովմը պահպանելու, նա շտապեց Ռաւենա, այնտեղ պատկուեց Ամալասվինտայի դուստր՝ Մատասվինտայի հետ, որպէսզի օրինական դարձնէ իւր թագաւորութիւնը։ Միևնոյն ժամանակ

կարծում էր, որ հիւսիսում հեշտ կլինի հեռուել Փրանկների ընթացքին, որոնց երկու կողմն էլ աշխատում էին գրաւել։ Այն ժամանակ Բելիզարը 536 թ. Դեկտեմբերի 9-ին հոգևորականութեան, սենատի և ժողովրդի հրաւիրելով գրաւեց Հռովմը, որ շատ թոյլ էր պաշտպանուած։ Ռումանական բնակիչների համակրանքը նրան դիւրութիւն տուաւ հեշտութեամբ վերցնել Միջին—Իտալիայի կարևոր տեղերը։ Վիտիգէսը ամենայն ոյժով աշխատեց ուղղել իւր սխալը։ Նա գոթական բոլոր զօրութիւնով արշաւեց Հռովմի վերայ, և սկսեց այն հռչակաւոր պաշարումը որ տևեց մի ամբողջ տարի. և չնայած որ կայսերական կառավարութիւնը կարողանում էր շատ քիչ օգնութիւն հասցնել, բայց Բելիզարի հանճարեղ ղեկավարութեամբ առաջնորդուած, պաշտպանութիւնը վերջացաւ Գոթերի կատարեալ անյաջողութիւնով, երբ Բելիզարին ստրատեգ նշանակեցին Յովհաննէս զօրապետը գրաւեց Արիմինում կարևոր քաղաքը. միւս կողմից էլ նրա Ռաւենացիները ստիպեցին Վիտիգէսին 538 թ. մարտին յետ նահանջել։ Միաժամանակ Բիւզանդիոնից նոր օգնութիւն հասաւ։ Նարսէս ներքինին երևաց Պիցենումում 7000 ընտրեալ զօրքով։ Սակայն նրա ունեցած հրահանգութիւնը, որ կայսերական դիւանից դիտմամբ

անորոշ էր խմբագրուած, նրան տալիս էր հասկանալ թէ Բելիզարից անկախ դիրք։ Թէ ինչքան էր ընկել Գոթերի վարկը, այդ երևում է նրանից, որ Մայլանդն էլ է փորձում Բելիզարի կողմն անցնել։ Մունդիլասը Լիգուրիայից այնտեղ անցաւ և գրաւեց այդ նշանաւոր քաղաքը և հարևան տեղերը։ Բայց այդ ժամանակ վերջապէս Գոթերի թագաւորը Փրանկների թագաւորի հետ դաշն կապեց, նոցա տալով Պրովանսը։ Գոթերը և Թէոդիբերդից ուղարկուած Բուրգոնդիոնները տիրեցին Մայլանդին։ Շատ չանցած Աւստրազեան թագաւորը ինքը երևաց Վերին Իտալիայում սարսափի մէջ ձգելով ոչ պակաս Գոթերին քան Յոյներին։ Երբ Փրանկները յետ քաշուեցին, Բելիզարը տիրեց Փեզուլէ և Աւքսիմում և 539 թ. պաշարեց Գոթերի Ռավեննա մայրաքաղաքը։ Նա ինչքան քաջ զօրավար էր, նոյքան էլ հմուտ քաղաքագէտ էր, և հասկացաւ իր դերև հանել Իտալիայի բաժանման ծրագիրը որ առաջարկել էին Փրանկները Գոթերին։ Այդ ժամանակ էր որ կայսերական դիւանի միջամտութեամբ կարծես թէ առանց հեռևանքի էին մնալու նրա ձեռք բերած յաջողութիւնները։ Խոսրովը, որին անհանդիստ էին անում Հռովմի յաղթութիւնները, պատրաստուել էր յարձակուելու Ասորիքի վրայ։

Ուստի Յուստինիանի օգուտն էր ինչպէս էլ լինի վերջացնել արևմուտքի պատերազմը։ Նա Գոթերի թագաւորին առաջարկեց 90 դեսի միւս ափի երկիրները, մինչև մնացած թերակղզին մնալու էր Հռովմայեցոց ձեռքին։ Բելիզարի ըմբոստ փառասիրութիւնը ի վնաս տէրութեան՝ ոչնչացրեց այդ շատ խելացի ծրագրի իրագործումը։ Նա ձևի համար ընդունեց Գոթերի թագաւորի առաջարկութիւնը, որի համաձայն ինքն էր ընդունելու Իտալիայի թագաւորի աստիճանը։ Ռավեննան անձնատուր եղաւ, և թագաւորը գերի ընկաւ։ Վերին Իտալիայի գոթական հրամանատարները, համարեա առանց բացառութեան, յայտնեցին իրենց հնազանդութիւնը և հպատակութիւնը։ Թուում էր որ ամբողջ Իտալիան նորից վաստակուած էր Հռովմայեցոց պետութեան համար։ Այն ժամանակ Բելիզարին կանչեցին որ ստանձնի Պարսից դէմ պատերազմի հրամանատարութիւնը։ Նա առանց վարանելու կատարեց այդ հրամանը, և Կոստանդնուպոլիս տարաւ Գոթերի թագաւորին ու թագաւորական պալատի գանձերը։

Հռովմի յաղթանակը վաղաժամ էր։ Անհեռատեսութեամբ հրամանատարութեան զանազան զօրապետների մէջ բաժանելը և նոր կառավարութեան տնտեսական ճնշումը այն-

պիսի սխալները էին, որոնցից օգտուեց ազգաստերների կուսակցութիւնը։ Սոքա ապստամբեցին։ Երկու կարճ միջանկեալ կառավարութիւններից յետոյ, Բադուիլային կամ Տոտիլային 541 բարձրացրին թագաւորական վահանի վրայ։ Մի տարուայ մէջ տեղի ունեցաւ կատարեալ փոփոխութիւն։ Հռովմայեցիները մի քանի պատերազմներում յաղթուեցին։ Առանց ժամանակ կորցնելու դխաւոր տեղերի պաշարմամբ, Գոթերի թագաւորը յաղթական ընթացքով անցաւ Միջին—Իտալիա։ 542 թ. հարաւն էլ էր նրան հպատակում։ 543 թ. ընկաւ Նէապոլը։ Ի զուր Բելիզարին նորից Իտալիա հրաւիրեցին։ Սա պաշտօնով ուրիշից կախուած, շատ քիչ զօրքով և առանց փողի, չկարողացաւ արդելք լինել, որ Տոտիլան 546 թ. Հռովմին էլ չտիրէր։ Քաղաքը զրկուեց իւր բնակիչներից, հրդեհի մատնուեց, պարիսպների մի մասը կործանեցին. և միայն Բելիզարի միջամտութիւնը քաղաքագիտական եղանակաւ՝ արդելք եղաւ նրա վերջնական աւերման։ Բայց երբ թագաւորը դէպի Լուկանիա քաշուեց, Բելիզարը մնաւ Հռովմ։ բնակիչները նորից վերադարձան և արագութեամբ պարիսպները նորոգեցին։ Տոտիլայի փորձը՝ յետ գրաւել քաղաքը, անյաջող անցաւ։ Սակայն այդպէս էլ Բելիզարի կացութիւնը շատ

դժուար էր։ Կայսերական դիւանը նրան օգնութիւն չէր հասցնում։ Կարիք էլ չկայ կարծելու՝ թէ Յուստինիանը այդպէս վարուում էր չար դիտաւորութեամբ։ Հիւսիսային ժողովուրդների յարձակումը Բալկան թերակղզու վրայ և տէրութեան գանձարանի կատարեալ դատարկութիւնը, բաւականաչափ պարզում են կառավարութեան այդ վարմունքը։ Բելիզարը վերադարձաւ Կոստանդնուպօլիս։ Հռովմը նորից ընկաւ Գոթերի ձեռքը։ Տոտիլան համարեա բացարձակ տէր էր Իտալիայի։ Նրա նաւատորմիղը տիրեց և աւարի առաւ Սիկիլիան, յարձակման էր ենթարկում Սարդինեան և Էպիրոտեան ափերը։

550 թուականը նշանաւոր է Յուստինիանի Իտալական քաղաքականութեան յեղաշրջմամբ։ Գերմանոսը՝ Կայսեր եղբօրորդին, Օստգոթների Մատասվինտա իշխանուհու ամուսինը, իբրև ընդհանուր զօրապետ (generalissimus) պէտք է յանձն առնէր Իտալիայի զօրաց հրամանատարութիւնը։ Մտադրուած էր գերմանական և հռովմէական ազգակցական կապերով, հաշտեցնել գերմանական և հռովմէական ազգային տարրերի միմեանց հակասող շահերը։ Սակայն Գերմանոսը անակնկալ մեռաւ Սերդիկայում՝ պատերազմի պատրաստութիւնների ժամանակ, որը ձգձ-

ուել էր, որովհետև Սլաւոնները և Հոները հեղեղել էին Իլլիւրիկումը։

Վերջապէս Յուստինիանը արտայայտեց իւր եռանդը պատերազմական գործում։

Նարսէսի անձի մէջ դտաւ իւր ցանկացած առաջնորդին, որի զինուորական բարձր հանճարի առաջ բոլորը խոնարհուում էին կամովին. սա իւր ձեռին ունենալով հարուստ դրամական միջոցներ, կարողացաւ հէնց առաջին անգամ հանդէս գալուց ապաւորութիւն թողնել իւր զօրքովը, որի մեծագոյն մասը բարբարոսներից տուած օժանդակ գնդերն էին։ Նրանց մէջ առաջին տեղը բռնում էին Լանգոբարդների թագաւորի վարձկանները, որ նա ուղարկել էր համաձայն իւր կռած դաշինքի։ Չնայած որ Փրանկներն ու Գոթերը փորձեցին Նարսէսի ճանապարհը կտրել, նա ցամաքով հասաւ Ռաւեննա։ Միջին Իտալիայի Ապենիններում՝ Տագինայի մօտ (552 թ. ամառուայ մէջ) տեղի ունեցաւ վճռողական ճակատը, որը կարելի է այդ ազնիւ ցեղի ազգային հարուածը համարել և որը իսկապէս վերջ տուաւ Գոթերի իշխանութեանը Իտալիայում։ Յուստինիանական պատերազմը Տեյայի առաջնորդութեամբ 553 թ. վերջացաւ Կամպանիայի Սալնոսի մօտի պարտութիւնով։ Աւելի վտանգաւոր դարձաւ Հռովմայեցիների հա-

մար Փրանկների արդէն շատ ուշացած միջամտութիւնը։ Նոցա երկար չեզոքութիւնը փայլուն ապացոյց է, թէ Մերովինգեան հարստութիւնը քաղաքականապէս դեռ ինչքան տհաս էր։ Այժմ էլ Փրանկները իրենց գործը շատ վատ տարան։ Ալեմանա—Ֆրանկական ժողովրդական յարձակումը Լեւթարիս և Բուտիլինոս հերցոգների առաջնորդութեամբ, մասամբ ժանտախտի զոհ գնաց, մասամբ Նարսէսի Թրին Կապուայի մօտ։ Նրբ, գլխաւորապէս Գոթերի մնացորդների օգնութեամբ, ոչընչացրին նաև այդ ստոր խառնիճաղանջ ամբոխին, ամբողջ Իտալիան վերջնականապէս վերստին ընկաւ Հռովմայեցւոց իշխանութեան տակ, և տերութեան հետ նոր միացած Թերակղզին կարգաւորելու կարևոր պաշտօնը յանձնուեց Նարսէս պատրիկիոսին։

Ժամանակով՝ Օստրոթների իշխանութեան կործանելուց յետոյ, անմիջապէս հետևում է Պիրինեան Թերակղզու գործերի մէջ միջամտութիւնը։ Որպէս զի Ագիլա գահաժառանգին Վեստրոթների Աթանագիլդ թագաւորի դէմ պաշտպանած լինեն, 554 թ. Սպանիա ուղարկեցին Լիբերիոս պատրիկիոսին։ Կորդուբան ընտրեցին յունական սպանիական նահանգի միջնավայր. բայց նոցա անհաստատ տիրապետութեան էական մասերը կազմում

էին, թէև Դանը և ուրիշ պատմագիրներ աւելի մեծ են ընդունում, մի քանի կարևոր ծովային ամրոցներ, Խչպիսիք են Կարթագո, Սպարտարիա, Մալակա և Ասիդոնիա։ Այդ յարձակողական պատերազմները, որ միանգամայն բարձր էին Արևելահռոմի ոյժերից, արդելք դարձան պաշտպանելու պետութեան հիւսիսային սահմանները, որ անհամեմատ կարևոր էր։ Մենք լսում ենք, որ Հոները, Սլաւոնները և Անտերը անդադար յարձակւում էին Դանուբի հարաւային նահանգների վրայ։ Իլլիւրիկումը և Թրակիան նոցա աւերումների մշտական տեղերն էին։ Աւելի սարսափելի էր 540 թ. արշաւանքը, որը տարածուեց մինչև Ցունաստան և ընդդիմութիւն դաւ միայն Իսթմոսի ամրութիւնների առաջ։ 559 թ. Հոները (Բուլգարները) և Սլաւոնները սպառնում էին նոյն իսկ մայրաքաղաքին. զառամեալ Բելիզարը նրանց յետ մղեց։ Կառավարութեան ամրութիւնները՝ պաշտպանուած չլինելով բաւականաչափ զօրքերով, մնացին միանգամայն անօգուտ. դրամ վճարելը և ընծաները՝ փոխանակ յետ կանգնեցնելու անյագ բարբարոսներին, շարունակ գրգռում էին նոցա անցնել Դանուբը։

Արևմտեան պատերազմների պատճառաւ տրամադրելի զօրքերի պակասութիւնը զգալի եղաւ նաև դէպի Պարսկաստանը ունեցած թոյլ քաղաքականութեան մէջ։ Ցուստինի մահուանից անմիջապէս առաջ, ծեր Կաւատը պատերազմ էր սկսել չնչին պատճառներով, որի ժամանակ Բելիզարը առաջին անգամ իբրև զօրավար դեր կատարեց։ Դրա մէջ ուշադրութեան արժանի է Արաբների կարևոր դիրքը և հանդէս գալը. որոնք մինչև այդ կառավարւում էին երկու մեծ տերութիւնների սահմաններում իբրև փոքրիկ աւատական իշխանութիւններ և այն չափով ու այնքան ժամանակ էին հնազանդւում, ինչ չափով իրանց էր հաճելի։ Մունդիրը, Ղսիրայի աւատական իշխանը, կռւում էր Պարսից բանակում։ Ցուստինիանը 531 ին Սարակինոսների բոլոր դաւառակները, որ հպատակում էին Հռովմին, ստորադրեց Ղարիթին, Գաբալայի որդուն, և նրան թագաւորական տիտղոս տուաւ։ Նրա պարտքն էր ամենից առաջ դէմ դնել Պարսից մասի իւր հայրենակիցներին։ Նոյն տարին պատերազմի դաշտ դուրս եկաւ ինքը՝ Պարսից թագաւորը և Բելիզարին լաւ ջարդ տուաւ Կալինիկոսի մօտ, թէև յաղթութիւնը առանձին նշանակութիւն չունեցաւ։ Թագաւորի մահից և Ղոսրովի գահ բարձրանալուց յետոյ, 532 թ. հաս-

տատուեց յաւիտենական խաղաղութիւնը, որի մէջ Հռովմը յանձն առաւ ստորացուցիչ պայմաններ. ամենից առաջ տարեկան տուրքեր պիտի վճարէր Կովկասեան ամրութիւնների պահպանութեան համար. Հռովմը ամեն կերպ կամենում է ազատ լինել արևմուտքում գործելու: Արդէն ութ տարի յետոյ երկրորդ պատերազմը սկսուեց: Դրա համար այնքան էլ հարկաւոր չէին Վիտիգէս թագաւորի և Հռովմէական Հայաստանի ճնշուած մեծամեծների դեսպանութիւնները: Խոսրովը ինքը կամենում էր պատերազմ, որովհետև իւր Հռովմէացի հակառակորդի աշխարհակալութիւնը և իշխանութեան ծաւալելը իրան երկիւղ էր ազդում: Նա պատերազմը վարեց անսովոր եռանդով: Արդէն 540 թ. յարձակուեց Ասորիքի վրայ: Ամուր քաղաքները ստիպուած էին մեծ գումար վճարել որպէս զի նա հեռանայ: Որոնք պաշտպանւում էին, ընկնում էին մէկը միւսի հետևից, ամենից առաջ ընկաւ Անտիոք գլխաւոր քաղաքը: Նրա բնակիչներին արևելցիների հին սովորութեամբ տեղափոխեց իւր մայրաքաղաքի մօտը, որտեղ նա հիմնեց մի նոր Խոսրով—Անտիոքիա յունական-քրիստոնէական հաստատութիւններով: Հետևեալ տարիներում Միջագետքի կռուի դաշտում պատերազմը մղում էին փո-

փոխակի յաջողութեամբ: Ամենայայտնի դէպքը Եդեսիայի անյաջող պաշարումն է Պարսիկների կողմից 544 թ.: Ասորական քրիստոնեաները ամուր կերպով հաւատում էին իրենց սուրբի՝ մեր Տիրոջ «անձեռագործ դաստառակի» հրաշագործ պաշտպանութեանը: 545 թ. տեղի ունեցաւ զինադադար: Սակայն Խարիթի և Մունդիրի մէջ կռիւը շարունակւում էր, ինչպէս նաև Լազիստանում: Այդ նահանգը, որ համապատասխան էր հին Կոլխիսին, կապուած էր Հռովմի հետ, որտեղից նշանակւում էին նրա թագաւորները՝ աւատական հպատակութեամբ: Երբ հիմնարկեցին Պետրա նաւահանգիստը և հռովմէական պաշտօնեաները մենաւաճառութեամբ կեղեքում էին Լազերին, ժողովրդի կատաղութիւնը շատ սասկացաւ: Գոբազէս թագաւորը անցաւ Պարսից կողմը: Խոսրովը, որ Վրաստանի տէրն էր, անյաջողութեամբ օգտուեց հանգամանքից, որպէս զի կարողանայ հաղորդութիւն հաստատել Սև ծովի հետ: Կարևոր Պետրան ընկաւ Պարսից ձեռքը: Բայց երբ 549 թ. Հռովմայեցիները նորից վերսկսեցին պատերազմը աւելի մեծ եռանդով, Լազերը կրկին անցան նոցա կողմը. ինչպէս որ սովոր են վարուել այդպիսի աւազակաբարոյ թագաւորութիւնները, բռնել ուժեղի կողմը: 551 թ. Հռովմայեցիք վերսին

գրաւեցին Պեսրան. և հետևեալ տարիների ճակատներում օրէցօր աւելի էին յաղթող հանդիսանում։ Ուստի զինադադարը տարածուեց նաև Լազիստանի վրայ և վերջապէս 562 թ. հինգամեայ խաղաղութեան դաշն կապուեց։ Դրանով Հռոմայեցիք պարտաւորուում էին տարէցտարի բաւական խոշոր դումար վճարել. իսկ դրա փոխարէն Լազիստանը ընդմիշտ նոցա ենթակայ ճանաչուեց. և դա է միակ յաջողութիւնը, որ ձեռք բերին արեւելքում։

Ինչպէս որ Յուստինիանի կառավարութիւնը արտաքուստ յայտնի նշանաւոր սահմանաքար է ներկայացնում բիւզանդական պետութեան զարգացման մէջ, այնպէս էլ ներքին կառավարութեան մէջ բնորոշուում է մի շարք մեծագործ կարգադրութիւններով։ Այդտեղ առաջին տեղը բռնում են շինութիւնները։ Գուցէ բիւզանդական պետութեան ոչ մի շրջան չունի այնպիսի մեծ շինարարական գործունէութիւն, ինչպէս Յուստինիանի կառավարութիւնը։ Նոր քաղաքներ հիմնեցին, հները զարդարեցին բաղանիքներով, ջրմուղներով և պալատներով. շինեցին կամուրջներ։ Կանոնաւոր կերպով երկրի բոլոր սահմանները ամրացնում էին բերդերով, որոնք, իրաւ է, հիւսիսային սահմաններում, որ ամենից շատ

էին վտանգի ենթակայ, չէին կատարում իրենց դերը. իսկ ամենից շատ զարմանալի է, համապատասխան դարու բնաւորութեան, կրօնական հիմնարկութիւնների շատութիւնը։ Յուստինիանը առանձին եռանդով աշխատում էր եկեղեցիների և վանքերի շինութեան համար։ Էլ-Աքսան Երուսաղէմում և մանաւանդ Ս. Սոֆիայի տաճարը Կոստանդնուպոլսում, դեռ այսօր էլ վկայ են իշխանապետի բարձր զգացմունքներին։ Նա իրաւունք ունէր հպարտանալու թէ Սողոմոնին էլ է գերազանցել։ Թէ ինչեր կարող էին անել, նաև հարուստ հպատակները, որոնք նոյնպիսի զգացմունքներ ունէին, դեռ այն ժամանակներում, ցոյց է տալիս բարեպաշտ Յուլիան սեղանաւորի գործը՝ Ռավեննայի Սան-Վիտալէի հրաշագեղ շինութիւնը, որը շինուել է մենակ այդ մասնաւոր մարդու միջոցներով, և զարդարուել գոյներով հարուստ մոզաիկներով։

Յուստինիանի կառավարութիւնը իւր արտաքին բոլոր շքով չէ կարող երջանիկ համարուել. տեղի ունեցան բաւական արտասովոր դժբախտ պատահարներ։ 542 թ. զարհուրելի ժանտախտը, որը չորս տարի շարունակ տևեց, ժամանակակիցների համար համարւում էր աստուածային բարկութեան ապացոյց։ Բազմաթիւ երկրաշարժներ աւերե-

ցին ամենափառաւոր քաղաքներ։ Ամենասարսափելի հարուածը դիպաւ Անտիոքին, որ Յուստինի ժամանակ, 526 թ-ի զարհուրելի աւերումից երկու տարի յետոյ, նորից նոյնպիսի դժբախտութեան հանդիպեց։ Վերաշինութեան ծախքերի համար կայսերական գանձարանը կանոնաւոր կերպով տալիս էր շատ մեծ նպաստ։ Դժուար է հասկանալ, թէ ինչպէս նա կարողանում էր թէկուզ փոքր ի շատէ, բաւարարութիւն տալ այդ չափազանց մեծ պահանջներին մեծածախս պատերազմների հետ միասին։ Հպատակները զանգատւում էին հարկերի ծանրութեան տակ, բայց իսկապէս մեծ գործեր էլ էին կատարւում։

Ամենից առաջ Յուստինիանի անունը յետագայից համար միացած է հռովմէական օրէնքների հետ, որին նա ամբողջացրած ձև տուեց։ Ամենապլխաւորն էր մի գրքի մէջ միացնել արդարադատութեան բոլոր աղբիւրները՝ իրաւունքը և օրէնքները-jus et leges-դրանով հնացած իրաւունքները կրճատւում էին, գրականութեան միջից հակասութիւնները վերանում։ Նոր կարգերի պիտի ենթարկէին բաւական թւով իրաւագիտական հաստատութիւններ։ Այդ կարևոր մեծ գործը յանձնուեց իրաւագէտների մի յանձնաժողովի Տրիբոնիանի ղեկավարութեամբ։ 529 թ. դուրս

եկաւ Յուստինեան ձեռագիրը-codex Iustinianeus-, որ մի ժողովածու էր բոլոր այն սահմանումների (Constitutio) որ ընդհանուր ընդունելի էին։ 533 թ. գլուխ բերեցին աւելի դժուար գործը՝ իրաւաբանական գրութիւններից ստեղծել օրէնքների մի գիրք-Digestae։ Մի ևնոյն ժամանակ հաստատութիւնների համար կազմեցին իրաւագիտութիւն սովորելու մի դասագիրք, որը պիտի օրինական ոյժ ստանար և գործածութեան մէջ մտնէր ղիզեստների հետ միաժամանակ, 533 թ. Դեկտեմբերի 30-ին։ Յանձնաժողովի վեցամեայ աշխատութիւնը երևան էր հանել նրա առաջի հրատարակութեան՝ կոդեքսի զանազան թերութիւնները։ Ուստի 534 թ. լոյս տեսաւ նախնական ընթերցուածների կրկնուած կոդեքս-Codex repetietae praelectionis-։ Յուստինիանը հանդիսաւոր կերպով յայտարարեց, թէ դրանով վերջապէս լրանում է օրինադրութիւնը։ Ապագայ սահմանումների համար նախատեսնուեց առանձին յաւելուած՝ նոր սահմանումներ-Novellae Constitutiones-։ Նրբ օրէնքի այս նոր գիրքը ոյժի մէջ մնաց, դատաստանատներում միայն այդ էին թոյլ տալիս. միայն դրա վրայ էին պարտաւոր ուսուցանելու պետութեան յայտնի դպրոցներում՝ Կոստանդնուպոլիս, Հռովմ և Բեյրութ։

Վերջապէս պէտք է յիշել Յուստինիանի գործունէութիւնը նաև եկեղեցական խնդիրների վերաբերեալ։ Ոչ մի կայսր եկեղեցական գործերի վերահսկողութիւնը այնպիսի եռանդով չէ տարել, բայց ոչ մի կայսր էլ չէ տեսել որ իւր գերիշխանութիւնը այնպէս անսահման կերպով ընդունուէր եկեղեցուց, ինչպէս Յուստինիանը։ Նա իրապէս թագաւոր էր և քահանայ։ «Հակառակ կայսեր կամքի և հրամանի առ հասարակ ոչինչ չպէտք է պատահի եկեղեցու մէջ», յայտարարում է 536 թ. ժողովը։ Եւ իսկապէս Յուստինիանը չափաւոր կերպով աղդել է կրօնի դաւանաբանական զարդացման վրայ՝ մեծաձաւալ յօդուածներով. դրա ապացոյցն է նրա նամակը Մենասին Որիդինեան թիւր հաւատի մասին և 543 թ. նրա հրովարտակը երեք վէպի մասին։ Անուրանալի է, որ նա իւր եկեղեցական քաղաքականութեան մէջ ամեն կերպ ձգտում էր 519 թ. ծանր սխալը նորից ուղղել և մոնոֆիզիտներին յետ դրաւել։ Եդիպտոսում իշխում էին «հեստեաղները»։ Ասորիքում և Միջագետքում ժողովուրդը նոցա կողմն էր, և այդ հանդամանքը պարտական էր իւրաքանչիւր կառավարութիւն ի նկատի առնել։ Բացարձակ կերպով նոցա պաշտպանում էին թէ Թէոդորա կայսրուհին, որ այս խնդրում էլ արտայայտեց իւր քաղաքագիտական սրատեսութիւնը և թէ կայսերական տան և արքունիքի բազմաթիւ անդամները։[1] Գայթակղութեան քարը մնում էր քաղկեդոնականութիւնը։ Ի զուր անցան Լեոնտիոսի և սկիւթեան վարդապետների փորձերը՝ փոխել Լեոնի յօդուածները, համաձայնեցնելով Կիւրեղի ասուածաբանութեանը. այնպէս որ եթէ Սեվերոսը՝ մոնոֆիզիտների ամենայայտի ուսուցիչը, փոքր ինչ բարի կամք ունենար, միութիւն ստեղծելու հնարաւորութիւն կար. ի զուր էր որ կայսրը իւր հրամանների մէջ լռութեան էր տալիս քաղկեդոնական յօդուածները։ 533 թ. կրօնական զրոյցի ժամանակ արտայայտեցին ամենամեծ զիջողութիւն, բայց այդ էլ մոնոֆիզիտների վրայ ազդեցութիւն չարաւ։ «Ասուածապաշտ Աւգուստան» (կայսրուհին) անդադար աշխատելով իւր բարեկամների համար, յոյս ունէր օրինական ճանապարհով ոչնչացնել քաղկեդոնականութիւնը։ Մայրաքաղաքի գահի վրայ արդէն բարձրացել էր նրան համակարծիք Անթիմոսը։ Բայց Հռովմի

---

1. Յուստին Բ-ը եւ Սոֆիան մինչեւ գահ բարձրանալը մոնոֆիզիտների կողմն էին պահում։ Ժողովրդի հասկացողութեան մէջ «հեստեաղները» համարւում էին բարեպաշտներ, եւ այդ արդարացի է։

Ագապետ պապը, Եփրեմ Անտիոքացուց զգուշացրած, ճիշտ ժամանակին միջամտեց։ Արևմուտքը, որ քաղաքականապէս նորից գըրաւուել էր, չէր կարելի թոյլ տալ որ եկեղեցական խնդիրներով նորից բաժանուի։ 536 թ. ժողովը նզովեց Անթիմոսին և Սեվերոսին։ Նրբ 537 թ. Աղեքսանդրիայի Տիմոթէոս պրքեպիսկոպոսը մեռաւ և նրա յաջորդի ընտրութեան մասին ժողովրդի ու ազնուականութեան մէջ անհամաձայնութիւն ծագեց, կայսերական կառավարութեան համար ցանկալի առիթ էր, անլուր բռնութիւններով մոնոֆիզիտների այդ վերջին ապաստանարանում ևս ընդունել տալ տէրութեան եկեղեցին, թէև իրաւ է միայն արտաքին ձևով։ Կայսերական եկեղեցու կողմը միայն պահում էին խեղճութեան մատնուած, երբեմն հարուստ միջոցների տէր՝ մոնոֆիզիտների եկեղեցական կալուածներով դրաւուած արքեպիսկոպոսութիւնը, բարձր պաշտօնեաները և քաղաքի Ցունաց ազնուականների մի մասը։ Սակայն բոլոր այդ անյաջողութիւնները չկարողացան նրան յետ պահել, որ մի կողմ թողնէր իւր միապարական ծրագրերը և դաւանաբանութեան մէջ աշխատելու ձգտումը, որ հիւանդութեան էր հասցրած։ Սակայն եկեղեցական քաղաքագիտութեան տեսակէտից,

չափազանց նուրբ մտածուած մի կարգադրութիւն էր երեք գլուխների դատապարտութիւնը։ Անտիոքեան դպրոցի մեծ ուսուցիչը՝ Թէոդորոս Մոփսուէստացին, որի մասին քաղկեդոնականութիւնը լռութիւն էր պահպանել, Թէոդորիդ Կիւրոսացու և Իբաս Եդեսացու գանագան գրութիւնները, մարդիկ որոնց ուղղահաւատութիւնը չորրորդ ժողովը յատկապէս ճանաչել էր, այժմ—հարիւր տարի անցնելուց յետոյ—, նզովքի ենթարկուեցին։ Բայց դա ոչ միայն միանգամայն քաղկեդոնականութեան դէմ էր և լռելեայն դատապարտութիւն Լևոն մեծի տոմարաբանութեանը, այլ և իրապէս սրբագրում էին այն ժողովը և գործնական կեանքից հանում։ Պարզ կերպով վերականգնեցին հին հենոտիկոնների ծրագիրը։ Հռովմից դատապարտուած Ակակիոսը և սուրբ Փլաբիանը դրանով փառաւոր կերպով արդարացան։ Միութիւն ստեղծելու համար հաղիւ թէ կարելի լինէր աւելի մեծ զիջումներ անել։ Բայց այդ բոլորը շատ ուշ եղաւ։ Թէև արևելքի պատրիարքները և եպիսկոպոսները, որ սովոր էին հաւատալու ինչ որ կայսերական դիւանը նոցա առաջարկում էր, ծանր սրտով՝ բայց ընդունեցին։ Թոյլ և փոփոխամիտ Վիգիլիոսը, որ բազմել էր Պետրոսի գահի վրայ, ամենաողորմելի

կերպով կայսեր մատնեց, որը իրապէս կառավարում էր եկեղեցին, Հռովմի եկեղեցու գիրքն ու աստիճանը: Տիեզերական հինգերորդ ժողովը փակուեց միանգամայն հլու հպատակուելով կայսեր հրամաններին: Զնայած դըրան, այդ արդիւնքն էլ, որ ամբողջ պետութիւնը ամենաշօրեայ գոգման մէջ էր դրել, երևաց իբրև կատարեալ անյաջողութիւն: Մոնոֆիզիտները մնացին իրենց բաժան դըրութեան մէջ: Ընդհակառակը Իտալիան և Աֆրիկան դոնում էին՝ թէ այդ որոշումներով ճնշուում է քաղկեդոնականութիւնը, որ բարձր էր գնահատուում ամբողջ արևմուտքում: Վերին Իտալիայի և Իստրեան եպիսկոպոսները պառակտումը հաստատեցին հերձուածի, որ մի քանի սերունդ տևեց: Եւ Աֆրիկայի Փեկունդոս Հերմիանեցի եպիսկոպոսը համարձակ խօսքերով կայսեր երեսին էր զարկում, սուրբ գրքից օրինակներ բերելով (Ոսիաս, Դաթան, Աբիրոն և ն.), որ նա իւր իշխանութեան իրաւունքների սահմանից անցնում է: Միայն Քրիստոսն է որ միաժամանակ թագաւոր է և քահանայ. նա չի տուել թագաւորներին այն, ինչ որ քահանային է յատուկ: Սոքա այնպիսի ձայներ են, որ արդէն հնչել էր Դոնատոս Մեծը. և այդ հին ժամանակներից ի վեր կազմում է արևմըտեան եկեղեցու արդարացի առանձնայատկութիւնը: Օրինականութեան մէջ քարացած արևելքը այդ բաները կը լսէր մեծ զարմացմամբ, գուցէ նաև արդար բարկութեամբ. սակայն յետագայ դարերում նոյն բաները արձագանք գտան նաև Բիւզանդիոնում:

Այդ բոլոր անյաջողութիւնները Յուստինիանին չշփոթեցին և նա շարունակեց մերձեցում դուրս բերել: Դեռ իւր թագաւորութեան վերջի տարին, առանց յոգնեցնու, դաւանաբանութիւններ արտադրող քահանայ-կայսրը, մի հրովարտակ արձակեց, որ բարեպաշտ ականջների համար շատ վիրաւորական էր, որով տերութեան դաւանանք էր հրատարակուելու «Աֆթարտոդոկետիսմոսը»— Տիրոջ մարմնի անապականութեան ուսումը, որ նոյն իսկ մոնոֆիզիտներից շատերից մերժուած էր: Միայն կայսեր վաղահաս մահը 565 թ. ազատեց օրթոդոքս եկեղեցականներին հաւատոյ ամենամեծ հալածանքներից՝ պաշտօնազրկութիւնից և աքսորից:

Մինչդեռ մոնոֆիզիտների վրայ նայում էին ընդհանուր եկեղեցուց թէկուզ «բաժանուած» անդամների վրայ, և նոցա հետ վարուում էին ակներև մեղմութեամբ. ինչպէս սովոր է միշտ վարուելու բիւրոկրատիան, երբ նա գործ ունի լաւ կազմակերպուած և հա-

լատարիմ հետևողներ ունեցող եկեղեցական համայնքների հետ, առանց այլևայլութեան էին վարուում միւս հեստեալ համայնքների հետ, որոնք թէ-ով փոքր էին։

Յուստինիանի, իւր կառավարութեան ընթացքում արձակած մի շարք հրովարտակները ապացուցանում են, թէ ինչպիսի եռանդով ձգտում էր որ կայսերական հաւատը բոլոր հպատակներն ընդունեն։ Հին հերձուածողների մնացորդները, որոնց մէջ Արիանոսները իրենց հիմնարկութիւնների հարստութիւններով կառավարութեան ազահութիւնը շարժել էին, երեք ամիս ժամանակ ստացան ընդունելու պետութեան կրօնը. այլապէս սպառնում էր աքսոր։ Սամարիտացիների վրայ էլ դրծադրեցին կրօնափոխութեան այդ բռնի ձևը. բայց բոլոր ժողովուրդը ոտքի կանգնեց և մի նոր կայսր հրատարակեց։ Մի այն արեան հեղեղների մէջ ընկճուեց ապստամբութիւնը։ Երկիրը կործանուեց։ Դրա հետ միասին սկսուեց կանոնաւոր ինկվիզիցիական դատաստան հելլենական կրօնի բոլոր թէ ծածուկ և թէ յայտնի հետևողների դէմ. բայց հէնց բարձր դասակարգի և պաշտօնեաների միջից էին դրա բաղմաթիւ հետևողները։ Որոշուեց ստացուածների գրաւում և իրաւազրկութիւն քաղաքական պաշտօն ստա-

նալու։ Բաւական թուով յարգուած պաշտօնեաներ ինքնասպանութիւն գործեցին։ Հին կրօնի կենտրոնը Աթէնքն էր, և ներկայացուցիչները նոր պղատոնեան փիլիսոփայութեան ուսուցիչներն էին։ Յուստինիանը, որի համար ամենից առաջ կարևոր էին հնահաւատ հաստատութիւնների հարուստ կալուածները, 529 թ. յարքունիս գրաւեց պղատոնեան ակադեմիայի հիմնարկութեան կարողութիւնը, և այնտեղի համալսարանում արգիլեց փիլիսոփայութեան և իրաւագիտութեան ուսումը։ Վերջին եօթ ուսուցիչները դաղթեցին Պարսկաստան։ Հեթանոսական հոգևորականութիւնը Փոքր-Ասիայում դեռ բազմաթիւ կողմնակիցներ ունէր, մանաւանդ գիւղական ժողովրդի մէջ։ Յովհաննէս Եփեսացին, Ասորի պատմաբանը, որը ինքն իրան անուանում է հեթանոսների առաջնորդ և կուռքերի կործանող, և միանգամայն գրաւած էր Յուստինիանի վստահութիւնը, յետագայ տասնամեակներում մեծ չափով աշխատել է նոցա հաւատափոխութեան համար։ Նա հպարտանում է թէ 70,000 մարդ է մկրտել։

Անհամեմատ ուրախալի պատկեր է ներկայացնում եկեղեցու զարգացումը արտաքին կողմից։ Յուստինիանը իւր կրօնական-քաղաքական կառավարչական ծրագրի գլխաւոր

նպատակն էր համարում, ինչպէս որ պետութեան մէջ հաստատեց հաւատի միութիւն, նմանապէս հեթանոսների մէջ տարածել քրիստոնէական կրօնը։ Նա նոյն իսկ իւր քաղաքական կապերը այդ նպատակին էր ծառայեցնում, և իւր հաւատոյ առաքեալների համար ձեռք բերում հարեան զօրեղ իշխանների հովանաւորութիւնը։ Ուստի Յուստինիանի, ինչպէս նաև նրա անմիջական նախորդների ժամանակը, ներկայանում է միսիոնարական գործունէութեան ամենածաղկեալ զարգացման միջոց։

Քրիստոնէական քարոզչութիւնը միաժամանակ յաջող ընթացք ունէր Հելուրների մէջ՝ Սինգիդունումի շրջակայքում, որ Սև ծովի հիւսիսում ապրող Հոնական ցեղ էր, և Կովկասեան աղգերի մէջ։ Նոցա թագաւորները մկրտուելու համար դալիս էին մայրաքաղաք. սոցա ընդունած կրօնին հետևում էր ժողովուրդը։ Աֆրիկայում Սահարայի օվազիսներում տարածուեց քրիստոնէութիւնը։ Նմենում քրիստոնեաների արիւնալից հալածանքը երրայական Դհու Նուվաս թագաւորից, գլգռեց արևելքի բոլոր քրիստոնեաներին։ Նմենի յաղթական տիրապետութիւնը 526թ. Աբեսինիայի Նթովպիական թագաորի կողմից, մեծ ուրախութիւն պատճառեց

ամենքին և կայսերական հրամանով եգիպտական մի հոգևորական, եպիսկոպոսի կոչումով ուղարկուեց հարաւային Արաբիա։ Միսիոնարութեան մէջ աւելի գործունեայ էին մոնոֆիզիտները։ Մի Ասորի վարդապետ քարոզում էր Օրտէիրների մէջ՝ որոնք հաւանականօրէն հարաւային Հայաստանի մի քրդական ցեղ էին։ Յուստինիանի ժամանակ սկսեց Յուլիանը՝ Աղէքսանդրիայի մի կրօնաւոր, Նուբիացիներին դարձնել, իսկ նրա սկսածը վերջացրեց նրա յաջորդ Լոնգինոս եպիսկոպոսը։ Նոբաաների թագաւորը և ժողովուրդը ընդունեցին քրիստոնէութիւնը։ Նմանապէս «Ալոդէիր մեծ ազգի» թագաւորը ընդունեց մկրտութիւնը։ Այդտեղից սկսած ամբողջ դարեր Նուբիական եկեղեցին սերտ կապուած մնաց Աղէքսանդրիայի մոնոֆիզիտ պատրիարքութեան հետ։

Սակայն չնայած Յուստինիանի թագաւորութեան արտաքին փայլին, նրա ձգտումների մեծութեանը, որ չէ կարելի ժխտել, այնու ամենայնիւ նա իւր մահուան ժամանակ (14 Նոյեմբ. 565) թողեց տէրութիւնը միանգամայն խախտուած վիճակի մէջ։ Նրա ոյժերից շատ բարձր էր արևմուտքի տիրապետութիւնները պահպանել. դրա համար պակասում էին միջոցները։ Եւ ինչ կարող էր օգ-

նել հաղիւ հաղ դլուխ բերած եկեղեցական միութիւնը, երբ Յոյների և Լատինների մէջ արդէն գոյութիւն ունէր ազգային ատելութիւնից ծագած խորը պառակտում։ Ուստի կայսեր եկեղեցական քաղաքագիտական կարգադրութիւնները սխալների մի շղթայ են. դոցա շնորհիւ է իսկապէս սկիզբն առել և զարգացել Ասորիների ու Եգիպտացիների ազգային առանձնակի ձգտումները։ Այն դարը իւր ամենափայփայած մաքերը ծածկում էր եկեղեցականութեան քողի տակ։ Մոնոֆիզիտեան ուսումը ծառայում էր արևելցիներին իբրև նոցա ազգային զգացմունքների խօսուն արտայայտութիւն. իսկ դա ստիպանաբար հեռանում էր հռովմէական կայսրութեան միութիւնից։ Կայսրութեան արևելեան նահանգների անջատումը, որ տեղի ունեցաւ Է-րդ դարում, իսկապէս ծնունդ և սնունդ է առել Յուստինիանի եկեղեցական քաղաքականութեամբ, ինչպէս որ արևմուտքում նորա սկսած տիրապետական քաղաքականութիւնը, որով պետութեան ոյժերը արևմուտքի վրայ ծախսուեցին, թուլացրեց կառավարութեան գործունէութիւնը արևելքում։

Յուստինոս երկրորդը (565—578) Յուստինիանի եղբօրորդին, որ նրանից գահաժառանգ էր նշանակուել, կարողացաւ շուտով մեծ եռանդով գահին տիրանալ, մանաւանդ

իւր կին, փառասէր Սոֆիայի և պալատի պահապանների առաջնորդ Տիբերիոսի օգնութեամբ, մասամբ բռնութիւն գործ դնելով կայսերական տան դժգոհ իշխանների դէմ։ Կայսեր յաջորդաբար կրկնուող խելացնորութիւնը, որ վերջը տեղական դարձաւ, պատճառ եղաւ, որ 574 թ. Տիբերիոսին որդեգրեց և կեսար հրատարակեց. սա էր այնուհետև Սոֆիա կայսրուհու հետ միասին իրապէս վարում իշխանութիւնը և վերջն էլ (578—582) նորա յաջորդը դարձաւ։

Այդ կառաւարութիւնները ներկայացնում են կարևոր յեղաշրջան։ Արդէն Յուստինիանի ժամանակ սկսել էր անհետանալ լատիներէնը և դադարել էր պետութեան պաշտօնական լեզու լինելուց. այժմուանից սկսած նրան քիչ քիչ դուրս էր մղում յունարէնը։ Այդ փոփոխութիւնը նկատում են լանգոբարդեան և ասորական ժամանակագիրները, որ Մաւրիկիոսից սկսում են «յունական» կայսրների շարքը։

Ներքուստ Յուստինի խնայողութիւնը շատ օգնեց պետութեան տնտեսութեանը, թէև դրանով աճեց զօրականների դժգոհութիւնը։ Դրա հակառակը Տիբերիոսի անմիտ շռայլութիւնը նրան ժողովրդական դարձրեց, բայց իսկական պատճառ եղաւ կառավարութիւնների առաջ ծագած դժուարու-

թիւններին։ Եկեղեցական խնդիրներում երկու պետերն էլ անբամբասելի օրթոդոքս էին։ Նոցա աղետաբեր ղիջողութիւնը արքունիքի պատրիարքի առաջ, որին թոյլ էին տալիս, նաև նպաստում էին մոնոֆիզիտներին օգնելու, պատճառ եղաւ որ արևելեան նահանգները վերջնականապէս օտարացան։

Արտաքուստ Յուստինիանի մահով առաջ եկած գահական փոփոխութիւնը արտայայտուեց կառավարութեան նախկին քաղաքականութեան կատարեալ փոփոխութեամբ։ Պետութեան դիրքը անհրաժեշտապէս պահանջում էր, որ կառավարութիւնը իւր ըլխաւոր ուշքը դարձներ երկրի հիւսիսային և արևելեան սահմանները ապահովելու։ Ուստի առաջին տեղն են բռնում Դանուբի հիւսիսում ապրող ժողովուրդների և Պարսիկների հետ ունեցած յարաբերութիւնները։ դրա փոխարէն արևմուտքը յետին տեղն էր բռնում։ Արևելքի տափաստաններում ծնունդ էր առել Թուրքերի զօրեղ տէրութիւնը։ Հռովմայեցիները շուտով նոցա Խաքանի հետ քաղաքական յարաբերութիւններ են սկսում։ Աւելի ծանրակշիռ էր որ Յուստինիանի թագաւորութեան վերջին տարիներում, Դանուբի հիւսիսային նահանգներում հանդէս եկան Ավարները։ Մաճառական ատորին դաշտավայրերի

արևելքում սլաւոնական ցեղերը ընկան նոցա ձեռքի տակ։ Նոյնպէս շուտ և յաջող կերպով նոքա միջամտեցին գերմանական պետութիւնների՝ Լանգոբարդների և Պանոնիայի Գեպիտների գործերին, որովհետև սոքա սաստիկ թշնամացել էին միմեանց։ Նրբ դրութիւնը այդպէս փոխուեց, հարկաւոր էր Հռովմի ամբողջ ուշադրութիւնը։

Կառավարութիւնը այդ վտանգաւոր թշնամիների հանդէպ ցոյց տուեց կատարեալ և հաստատակամ քաղաքականութիւն։ տարեկան տուրքերը, որ Յուստինիանը սովորաբար վճարում էր Ավարներին, նոքա յաջորդը դադարեցրեց։ քանի որ նոքա առժամանակ զբաղուած էին Լանգոբարդների և Գեպիտների կատաղի կռիւներով, օգնեցին Լանգոբարդներին և 567 թ. նպաստեցին Գեպիտների կատարեալ կործանմանը, մինչդեռ Հռովմայեցիները վերջիններիս ոչ մի օգնութիւն չէին ցոյց տուել։ Ավարները, որոնք Լանգոբարդների հեռանալուց յետոյ մաճառական ատորին դաշտավայրերի տիրապետողներն էին դարձել, ինչպէս նաև սլաւոնական բազմութիւ ցեղերը, աւելի և աւելի էին սպառնում Դանուբի հարաւային նահանգներին։ Այդտեղ Հռովմը ցոյց տուեց մեծ խելք և ընդհանրապէս կռիւ մղեց պատուով։ սակայն չնայած որ Տիբերիոսը

ինքն էր առաջնորդում։ Հռովմայեցւոց զօրքը ծանր պարտութիւն կրեց։ խաղաղութիւնը դնեցին միայն հարկ վճարելով։ Տիբերիոսի կառավարութեան ժամանակ 581 թ. կորցրին սահմանում նշանաւոր Սերմիում ամրոցը։ Դրանով կնքուեց հիւսիսային նահանգների վիճակը։

Այժմ պարզ կիրպով երևաց՝ թէ Յուստինիանի տիրապետական քաղաքականութիւնը ինչպէս բարձր է եղել պետութեան ոյժերից։ Երբ 568 թ. Լանգոբարդները ներս խուժեցին Իտալիա—նոցա հրաւիրուելը Նարսէսից վերջերում ստեղծուած առասպել է —, պետութիւնը միջոց չունէր անհրաժեշտ զօրքերով պաշտպանելու այդ նշանաւոր նահանգները։ Մի քանի տարիների ընթացքում յաղթող աշխարհակալները տիրապետել էին հիւսային Իտալիան և Տուսկիան. Սպոլենտիումի և Բենեվենտումի մէջ հրամայում էին լանգոբարդեան հերցոգներ։ Նմանապէս այն ամուր քաղաքները, որ առաջի յարձակման ժամանակ ընդիմութիւն էին ցոյց տուել, Լանգոբարդների առաջ մէկը միւսի յետևից բաց արին իրենց դռները՝ 572 թ. Տիկինումը, յետագայ սերունդների օրով Պատավիումը և Կրեմոնան։ Հռովմէական տիրապետութիւնը շուտով սահմանափակուեց, չհաշուած հարաւային Իտալիան և Սիկիլիան, Ռեվեննայով և նրա հարևան Էմիլիա և Պենտապոլիս քաղաքներով, յետոյ Հռովմի և Նէապոլի նահանգներով։ Դրա հետ մնացին լիգուրեան և վենետեան ծովափնեայ քաղաքները։ Այն դաշնագիրը որ ոչնչացրեց Բելիզարը, Հռովմէացիներին աւելի բաժին կթողներ, և փոխանակ Լանգոբարդների «անուանելու անարժան» և «գարշահոտ» ժողովրդին հարևան ունենալու, կունային Օսագոթների ասպետական և աղնիւ ցեղին։ Ուստի յետագայ ժամանակներում շարունակ տուժում էին այն սխալների համար, որ կատարուել էին և թոյլ էին տրուել, և որոնցից բաղկացած է Զ-րդ դարու այդ Լուդովիկոս ԺԴ-ի աշխարհակալական քաղաքականութիւնը, որ շատերի զարմանքն էր շարժել։

Հռովմի գործունէութեան առաջն առնում էին միաժամանակ սկսուած Պարսից պատերազմները։ Առիթը տուել էին Հայերը, որոնք, սաստիկ յուզուած Պարսիկների յանդուգն քայլից, որ թոյլ էին տուել ատրուշան շինել Դուինում՝ նոցա գլխաւոր հոգևոր քաղաքում, 571 թ. ապստամբուել էին Պարսից դէմ, Յոյներից օգնութիւն էին խնդրել և գտել։ Նոցա հետ միացան նոյնպէս Վրացիները։ Դրանով սկսուեց այն պատերազմը, որ

երբեմն ընդհատուելով խաղաղութեան դաշնագրութիւններով, ամբողջ 20 տարի տևեց։ Մինչդեռ Հռովմայեցիք անդադար պաշարել էին Մծբինը, Պարսիկները 573 թ. գրաւեցին նշանաւոր Դարան և ամբողջ Ասորիքը աւարի առան։ Երբ Տիբերիոսը խնամակալութիւնը ձեռք ձգեց, զինադադար արաւ, որ չէր տարածուում Հայաստանի վրայ։ 575 թ. այդտեղից Խոսրովը արշաւեց մինչև Կապպադովկիա և կրակեց Սեբաստիա և Մելիտենէ։ Բայց երբ երկու անգամ ջարդ կրեց Ցունաց աւելի գերազանց զինուորական ոյժից, Պարսից թագաւորը հպիւ կարողացաւ Եփրատի վրայով իրան ազատել։ Հայաստանը ընկաւ Հռովմայեցիների ձեռքը։ Մինչ այդ 576 թ. նորից արտաքսուեցին և կռիւը դարձեալ շարունակուեց։ Մաւրիկիոսը՝ կանոնոցի հրամանատարը—comes excubitorum—կայսրից նշանակուեց արևելքի զօրաց հրամանատար, և մեծ յաջողութեամբ պատերազմի դաշտը փոխեց Պարսից հողի վրայ։ Խոսրովի մահը 579 թ. արդելք եղաւ խաղաղութեան յաջող դաշն կապելուն, որի համար մի քանի անգամ հաղորդակցութեան մէջ էին մտել։ Նրա որդի և յաջորդ պատերազմասէր Որմզդի դէմ Տիբերիոսը ամենայն եռանդով շարունակեց պատերազմը։ 581 թ. Հռովմայեցիները Կոնստանտինի մօտ մի փառաւոր յաղթութիւն տարան։

Մի տարի յետոյ (582—602), Մաւրիկիոսը (Մօրիկ) ինքը դահ բարձրացաւ։ Նա ամենից առաջ հասկացաւ ներքուստ խնայող տնտեսական քաղաքականութեամբ պետութեան բաղմատեսակ պահանջներին բաւականութիւն տալ, թէև հէնց դրանով պատճառ եղաւ որ իրան չէին սիրում և դրան վերջ ի վերջոյ զոհ դնաց նորա դահը։ Եկեղեցական խնդիրներում նա միանգամայն հետևում էր իւր նախորդների քաղաքականութեանը։ Միայն մոնոֆիզիտների հալածանքները սահմանափակեցին մայրաքաղաքի պատրիարք Յովհաննէս Պահեցողի դրդմամբ։ Սա, որ մի սուրբ ճգնաւոր էր ամենամաքուր կեանքով և համոզուած օրթոդոքս, ցոյց էր տալիս այնպիսի համբերողութիւն, որ անսովոր էր տեսնել թէ տեսականապէս այլ կերպ ուսուցանող ճգնաւորների կողմից և թէ այն ժամանակուայ բոլոր դաւանութեան պատրիարքների կողմից։ Դրան հակառակ աւելի անխիղճ կերպով էր կառավարութիւնը դատ վարում Ասորիքի կարծեցեալ հեթանոսների դէմ։ Մոլեռանդ մոնոֆիզիտ ամբոխը դրանց թուլցն էր համարում նաև Անտիոքի տէրութեան եկեղեցու պատրիարքին։ Բայց սա լաւ էր ճանա-

չում այդ մարդկանցը. և իւր հաւատի մաքրութիւնը ապացուցեց նրանով, որ մի մեծ կրկէս շինեց, «Սատանայի եկեղեցի» ինչպէս որ բարեպաշտները ողբալով կոչում էին։ Աւելի նշանաւոր էր կռիւը Հին-Հռովմի հետ։ Գրիգոր Ա պապը (590—604) հակառակ էր իւր նորհռովմէական պաշտօնակցի իբրև նորութիւն ընդունած տիտղոսին, որ տիեզերական պատրիարք էր կոչւում, թէև իրապէս անարդար կերպով. որովհետև այդ տիտղոսը մի դարուց ի վեր գործածութեան մէջ էր և Հռովմը երբէք չէր հակառակել։ Ռւստի կառավարութիւնը և արևելքի պատրիարքները բոլորն էլ անցան մայրաքաղաքի եկեղեցու պետի կողմը, որ յաղթանակելով պահպանեց իւր տիտղոսները։ Պապի դեղեցուած դանդատին կայսրը և Անտիոքի մեծայարգ Անաստաս պատրիարքը բաւական արհամարհալից պատասխան տուին. ակներև է որ այդ բոլորը նոքա չնչին բանակռիւ էին համարում։ Եւ Հռովմն էլ յետագայում այդ բանից յետ է կանգնել լռելեայն։

Պարսկական պատերազմը դեռ մի քանի տարի էլ շարունակեց փոփոխակի յաջողութեամբ։ Հռովմէական մի շարք յաղթութիւններից յետոյ, 589 թ. տեղի ունեցաւ նշանաւոր Մարտիրոսոպոլսի առումը։ Բայց այդ

ժամանակ կատարուեց մի բոլորովին անըսպասելի փոփոխութիւն, որ հարևան տէրութեան վիճակը հռովմայ պետի ձեռքը ձգեց։ Բահրամ Զոբին զօրավարի ապստամբութիւնը կոլսոի մատնեց Պարսից թագաւորի կեանքն ու գահը. նրա որդի Խոսրով Բ իբրև փախստական եկաւ Հռովմէացիների մօտ։ Մաւրիկիոսը միջամտեց նրա օգտին, և 591 թ. արշաւանքը միջոց տուաւ նրան իւր ժառանգական գահը բարձրանալու։ Մաւրիկիոսը ինչքան յաջող էր իբրև զօրավար, այնքան վատ քաղաքագէտ էր. նա բոլորովին չհասկացաւ հանգամանքների արտակարգ շնորհից օգտուել։ Նոր հաստատուած խաղաղութեամբ յետ ստացան միայն Դարան և Մարտիրոպոլիսը. յետոյ Պարսից թագաւորը Հռովմայեցիներին տուաւ Հայաստանի մեծագոյն մասը։ Դրա փոխարէն նշանաւոր Մծբինը մնաց Պարսից ձեռին։

Նոր կառավարութիւնը արևմուտքում նմանապէս ցոյց տուեց ուժեղ քաղաքականութիւն։ Նշանակութիւնից զուրկ չէ, որ Մաւրիկիոսի օրով է առաջին անգամ էքսարխ տիտղոսը գործածական է դառնում Ռաւեննայում և Կարթագոյում։ Իտալիայում և Ափրիկայում, որոնք հաւասարապէս վտանգի ենթակայ էին Լանգոբարդներից և Մաւրնե-

ից, կարգւում են էքսարխները՝ զինուորական նահանգապետների ընդարձակ իրաւունքներով, որոնք քիչ քիչ իրենց են ենթարկում նաև քաղաքական վարչութիւնը։ Էքսարխութիւնների հաստատութիւնը կարելի է մի տեսակ առաջին գործողութիւն համարել թեմանների կազմակերպութեան և հաստատութեան, որ կեանքի մէջ մտաւ Է դարում։ Վերին Իտալիան նորից գրաւելու համար Մաւրիկիոսը դաշն կապեց Փրանկների հետ։ Սմարագդուս էքսարխը առանձին եռանդ էր արտայայտում։ Սակայն ձեռք չբերեցին որ և է մնայուն յաջողութիւն. միայն Լոնգոբարդների յառաջխաղացութեան առաջը փակուեց։

Տէրութեան հիւսիսային սահմանը շարունակ վտանգուած էր։ Ավարներից խաղաղութիւնը գնել էին մեծ հարկեր վճարելով. դոցա փոխարէն առաջիններից գրգռուած, սկսեցին ներս խուժել սլաւոնական ցեղերը որ Ավարներին հպատակ էին։ Ժամանակակից Ասորի գրողների վկայութեամբ Ավարները[1] և Սլաւները աւելի խորը հարաւ մտան։ 581

1. Ավարները Սլաւների վերաբերմամբ ներկայացնում են ազնուականների սակաւաթիւ մի դասակարգ։ Ընդհանրապես զարմանալի է, որ այդ դարերում բոլոր ան-

թ. վերջիններս արշաւում են ոչ միայն Թրակիա, այլ ամբողջ խմբերով բնակութիւն են հաստատում Թեսալոնիկէի շրջակայքում, և գաղթում մինչև Պելոպոնիս՝ մոռացուած այնտեղ մնալու։ Աւանդութիւն կայ, որը իրաւ է ուշ ստեղծուած է և անվստահելի, թէ այն ժամանակները Նպիդաւրոս-Լիմերայի Լակեդէմոնացի բնակիչները փախուստ տալով սլաւոնական հոսանքի առաջ, հաստատուել են մօտիկ ընկած ժայռակղզու վրայ և հիմք դրել Լիմպորիում Մոնեմբազիա քաղաքին, որ վերջում մեծ նշանակութիւն ստացաւ։ Եւ իսկապէս դարուկէս անց ծովագնացները Կիւնուրիան անուանում են «սլաւոնական աշխարհ»։ Թէ սլաւոնական տարրը հելլենական նահանգներում ինչքան զօրեղ էր, ապացուցանում է այն, որ 623 թ. սլաւոնական մի նաւատորմիղ յարձակւում է Կրետէի վրայ և աւարի առնում։ Ընդհակառակը առասպելների շարքին պէտք է դասել Փոլմրէյերի ծայրայեղ և արկածախնդրական ենթադրութիւնը

հաւանմաս լինի Ուրալ-ալտայական փոքր ցեղերը սնուցանում են Գերմանացիներին եւ Սլաւոններին. ուրեմն նոքա պէտք է ունենային զինուորական, քաղաքական եւ մտաւոր գերազանցութիւն. բաւական է յիշել Հոներին (գոթական եւ գերմանական ուրիշ ցեղերի տիրողներ էին), Ավարներին եւ Բուլգարներին։

—և այդ վաղուց է յայտնի— իբր թէ Մաուրիկիոսի օրով զարհուրելի կերպով ոչնչնչացրել են խեղճ հելլենական բոլոր ժողովուրդը (բացի մի քանի ծովաբերդերից) և Հելլասն ու Պելոպոնէսը սլաւոնացրել։ Թէև դրա հերքումը այսօրուայ Յոյները չեն կատարել, որոնք առաջնորդւում են ոչ այնքան գիտական, ինչքան ազգասիրական հիմունքներով։ Հանճարեղ Փոլմրէյերի վայրագ զառանցանքների հիմքը խեղացի ուսումնասիրութեամբ խախտելու գլխաւոր ծառայութիւնը պատկանում է գերմանացի Կ. Հոպֆին։ Թէև սա էլ միւս կողմից հակառակ ծայրայեղութեան է հասնում՝ ժխտելով, թէ Մաուրիկիոսի ժամանակուայ սլաւոնական աւարառական արշաւանքները որևէ մնայուն հետք չեն թողել, և իւր աշխատութեան մէջ հաստատուն հիմքով չէ առաջնորդուել։ Թէ այսօրուայ Յոյների շատ յայտնի մասը Յոյն դարձած Սլաւոններ են, ոչ մի կասկած չկայ։ Յունաստանի համար բախտաւորութիւն էր այսպէս չափաւոր ձևով կատարուած ժողովրդական խառնուրդը, որովհետև հին ժողովուրդները որ ապրում են բացարձակ առանձնութեան մէջ, յետ են մնում և խեղճանում. բաւական է յիշել Իսրայէլացիներին։ Այդ վտանգից ազատուեց Յունաստանը Ե և Զ դարերում սլաւոնական արեան խառ-

նուրդով։ Այսպէս յետագայ սերունդների ժամանակ կատարելապէս սլաւոնացան Բալկանեան թերակղզու հիւսիսային մասում այսօրուայ սերբ-կրոատեան և բուլղարական լեզուների սահմանները։ 583 թ. Սինգիդոնում, Վիմինացիում և Դանուբի ուրիշ ամրոցներ ընկան Ավարների և նոցա հպատակ Սլաւոնների ձեռքը։ 587 թ. նոցա ենթարկուեցին Միւսիայի քաղաքները. Ռատիարիա, Դորոստոլոն և ուրիշներ, մինչև Մարկիանուպօլիս. Հեմուսի հարաւային երկիրը մինչև Ադրիանուպօլիս փոքրիկի կողոպտում էին Ավարները և Սլաւոնները։ Իրերի դրութիւնը բարւոքուեց միայն 591 թ., երբ Մաուրիկիոսը Պարսիկների հետ խաղաղութեան դաշն կապելուց յետոյ, հնարաւորութիւն ստացաւ իւր զէնքի ոյժը անհամեմատ մեծ չափով դործ դնել եւրոպական սահմանների պաշտպանութեան համար։ Այդ պատճառով ըսկսուեց կռիւը կրկնակի կատաղութեամբ։ Ավարները պաշարեցին Թեսալոնիկէն և սպառնում էին նոյն իսկ մայրաքաղաքին։ Բայց 593 թ. հռովմէական Պրիսկոս ընտիր զօրավարը անցաւ Դանուբը և 601 թ. քանիցս անգամ նոցա հիմնովին յաղթեց, առաջ Վիմինացիում մօտ, յետոյ հիւսիսային ափերով առաջ խաղալով, Թեյսի մօտ՝ Դեպիդների նախկին

բնակավայրում։ Հետևեալ տարին էլ պատերազմ մղուեց շատ յաջող. բայց զօրագնդերը գոգռուած կայսեր անժամանակ և անտեղի խնայողութիւնից, յայտնի կերպով ապըստամբեցին, երբ 602 թ. պէտք է ձմերէին Դանուբի միւս կողմում։ Զինուորների յուզումը բնորոշ է, որ նոցա գլուխն էր անցել ստորին աստիճանի մի զինուոր, Փոկաս հարիւրապետը։ Մաւրիկիոսը փորձեց կրկեսի խմբերին՝ կապոյտներին և կանաչներին զինելով, պաշտպանել մայրաքաղաքը։ Բայց երբ զօրքը ընթացաւ դէպի մայրաքաղաքը, այդտեղ էլ ծագեց յեղափոխութիւն։ Կայսրը գլուխ կորցրած, ամեն ինչ կորած համարեց և իւր ընտանիքի հետ փախաւ ասիական ափը։

602 թ. նոյեմբերին Փոկասը կայսր օծուեց (602—610) և իւր հաստատուելուց անմիջապէս յետոյ հրամայեց գլխատել կայսեր և նրա որդիներին։ Բաղմաթիւ մահուան վճիռներ արձակեց, որպէս զի դրանով հաստատուէր բռնակալի իշխանութիւնը։ Պատմագրութիւնը, որ կայսեր յետագայ հակառակորդների բացարձակ կողմնակից է, նրան ներկայացրել է ամենասև գոյներով։ Բայց նա դրանով ճշմարտութիւնն է պահպանել։ Արևելահռոմում դրանից աւելի վայրենաբարոյ և անընդունակ իշխանութիւն երբէք գոյութիւն չէ ունեցել։

Խոսրովը գահակալութեան փոփոխութիւնից խոկոյն օգտուեց, և սկսեց թշնամութիւնները իւր «հայր» Մաւրիկիոսի վրէժը առնելու պատրուակաւ։ Նարսէսը, արևելքի ամենաընդունակ զօրապետը, Պարսիկների սարսափը, Եդեսիայում ապստամբուեց և փորձեց միանալ Խոսրովի հետ։ Փոկասը, որպէսզի կարողանայ իւր բոլոր ոյժը գործ դնել արևելքում, տարեկան հարկը մեծացնելով, Ավարների հետ խաղաղութիւն հաստատեց։ Նարսէսը հաւատալով կայսեր եղբօրորդի Դոմենտիոլոս զօրապետի խօսքին, անձնատուր եղաւ և Փոկասի ձեռքով սպանուեց խարդախ կերպով։ Պարսիկները մի շարք յաղթութիւններ տարան։ 606 թ. ընկաւ սահմանի ամենագլխաւոր ամրութիւնը՝ Դարան, Ասորիքը և Միջագետքը հեղեղուեցին նոցա այրուձիով։ 608 թ. Փոքր Ասիայի վրայով հասան մինչև Քաղկեդոն։ Մայրաքաղաքի մէջ պաշտօնեաները և ազնուականները խիստ թշնամաբար էին տրամադրուած դէպի պետը։ Միայն արիւնալից սարսափներով էր Փոկասը կարողանում պաշտպանել իւր իշխանութիւնը։ Բայց չափազանց ընդունակ Պրիսկոս զօրապետը՝ որին Փոկասը փեսայացրել էր և կանանոցի հրամա-

նատար կարգել՝ միացաւ Ափրիկայի Հերակլէոս եպարքոսի և նրա եղբայր Գրիգորի հետ։ Սոքա բաւական ժամանակ էր գինուում էին։ Նիկեատոսը՝ Գրիգորի որդին ցամաքային ճանապարհով արշաւեց Եգիպտոսի վրայ և սաստիկ կռուից յետոյ՝ ալրեց Աղէքսանդրիային, մինչդեռ Հերակլէոսը, Էքսարխի որդին ափրիկեան նաւատորմիղով ուղղակի նաւեց մայրաքաղաքի դէմ։ Եւ նա՝ առանց ճանապարհին՝ որ և է լուրջ ընդդիմութեան պատահելու՝ Հոկտեմբերին 610 թ. հասաւ Բիւզանդիոնի նաւահանգիստը։ Փոկասը զոհ գնաց ժողովրդեան կատաղութեան սարսափելի կերպով։ Նրա հետ միասին ընկան նրա գեկավարները՝ Դոմենտիոլոսը, Բոնոզոսը և Լեոնտիոսը։ Հոկտեմբերի 5-ն Հերակլէոսին (Հերակլ) ժողովուրդը և սենատը հանդիսաւոր կերպով հռչակեցին Աւգոստոս և օծեց Սերգիոս պատրիարքը։

Հերակլից սկսած կարող ենք պատմութեան մէջ նոր հատուած որոշել։ Նրա կառավարութիւնը միաժամանակ սահմանաքար է, արդէն մեռնող ժամանակաշրջանի և սկիզբն է միանգամայն մի նոր դարաշրջանի։ Դասական—հելլենական քաղաքակրթութիւնը՝ որ իւր կենսունակութիւնը պատայայտեց մանաւանդ պատմագրութեան մէջ (Պրիսկոս—Մալքոս—Պրոկոպիոս—Ագաթիաս—Մենանդրոս)՝ իւր

վերջի շառաւիղը ունեցաւ Թէոփիլակտոս Սիմոկատէսին՝ Սերգիոս հանճարեղ պատրիարքի ձեռնասունին՝ որ հովանաւորում էր գիտութիւնները։ Յետոյ շուտով սկսում է համարեա կատարեալ բարբարոսութեան շրջանը՝ որ աւում է դարուկէս։ Արևելքի դէմ մղած պայքարեան սոսկալի պատերազմը՝ որ շարունակուեց բոլոր այդ դարաշրջանում՝ ընդունցրեց թէ օրէնքները և թէ մուսաներին։ Արդարև միայն իմաստակները կարող են արհամարհանքով խօսել և մտածել այդ գրականութիւնից զուրկ դարաշրջանի մասին։ բայց այդ ժամանակը հիմնովին կործանուեց հին յունական փառահեղութիւնը։ Այդտեղից իսկապէս կարող ենք դարաշրջանի գարձը դնել։ մենք թողնում ենք հին դասական դարը և ոտք ենք դնում միջին դարու շէմքի վրայ։

Յուստինիանի եղբօրորդու հրաժարականից ի վեր կայսերական ծիրանին հագել էին բացառապէս զօրապետներ և զինուորներ։ Հերակլն էլ նմանապէս զինուորական էր։ բայց նա ծագում էր մի այնպիսի ընտանիքից՝ որ երկու սերունդից սկսած վարել էր քաղաքական և զինուորական բարձր պաշտօններ։ Նա նախասահմանուած էր իշխան լինելու և առանձին բախտ ունեցաւ հիմնադիր լինելու մի նոր ծաղկեալ հարստութեան՝ որ յաջոր-

դաբար հինգ սերունդ տևեց։ Տէրութեան ղեկը գտնուում էր մի հանճարեղ զօրապետի և խոհական կարգադրիչի ու քաղաքագէտի ձեռին։ Բայց դրութիւնը համարեա թէ յուսահատական էր։ Նեբոսան կողոպտում էին Ավարները և Սլաւները. Ասիայում ասպատակում էին Պարսիկները. բոլոր ամուր քաղաքները գողում էին նոցա առաջ։ Նոքա անցան Եփրատը։ Հռովմայեցիների դէմ 611 թ. տարած մեծ յաղթութիւնից յետոյ, նոցա իշխանութեան ներքոյ ընկան Անտիոքը, Ապամէան, Լիմեսան և Կապադովկիայի Կեսարիան։ Կայսեր փորձերը խաղաղութիւն հաստատելու, անյաջող անցան. Խոսրովը յոյս ունէր վերջնականապէս նուաճել Հռովմայեցւոց պետութիւնը, և հետևեալ տարիների պատահարները կարծես արդարացնում էին նրան։ 613 թ. Պարսից Շահբարազ զօրապետը առաւ Դամասկոսը, 614 թ. անցաւ Յորդանանը և գրաւեց Երուսաղէմը։ Սուրբ քաղաքը մոխրակոյտ դարձրին, բնակիչներին կոտորեցին կամ տեղափոխեցին Պարսկաստան։ Նմանապէս Զաքարիա պատրիարքին և «կենաց փայտը»՝ Սուրբ Խաչը, տարան Տիզբոն քաղաքը։ Այս պատահարը առաջ բերաւ ահագին յուզմունք։ Հաւատոյ նշանի կորուստը բոլոր քրիստոնեաների կողմից, նաև Հռովմէական

պետութեան սահմաններից դուրս, նկատուեց իբրև անսահման դժբախտութիւն՝ մանաւանդ Փրանկների բարեպաշտ ժողովրդի կողմից։ Գոնէ պատրիկիոս Նիկետասը կարողացել էր միայն ազատել ս. Սպունդը և ս. Գեղարդը և բերել մայրաքաղաք։ Շահինը՝ Պարսից երկրորդ զօրապետը, 615 թ. արշաւեց մինչև Քաղկեդոն։ Թէև հռովմէական Փիլիպպիկոս զօրավարի յարձակմունքը Հայաստանի վրայ ստիպեց նրան առժամանակ յետ խաղալ, սակայն 619 թ. Պարսիկները տիրեցին Անկիւրիային և դրանով իշխում էին հաղորդակցութեան այն դծերի վրայ, որոնք միացնում էին մայրաքաղաքը Ասորիքի և Ասիայի հետ։ Նոյն տարին Պարսից իշխանութեան ներքոյ ընկաւ Եգիպտոսը իւր Աղեքսանդրիա դիւաւոր քաղաքով, որ այնքան անհրաժեշտ էր մայրաքաղաքին ուտեստի պաշար հայթայթելու։

Հասկանալի է, որ կայսրը, յուսահատական դրդման մէջ, որոշեց Աֆրիկա փախչելով ազատուել։ Բայց պետական խորհրդի մեծամեծները, և ամենից առաջ թէ ազդասէր և թէ քաղաքագէտ Սերգիոս պատրիարքը նրան յետ պահեցին։ Զափն անցած քաղաքական դժբախտութիւնը առաջ բերեց, ինչպէս 1806 թ. Գերմանիայում, բարոյական և քաղաքական հիմնական յեղաշրջութիւն։ Հե-

բակը հետևեալ տարիները գործ դրեց զօրքը լրացնելու և վարժեցնելու, որ Զենոնի ժամանակ համարեա թէ բոլորովին քայքայուել և ոչնչացել էր։

Երբ նա մայրաքաղաքում հաստատեց խնամակալութիւն, որի անդամներն էին իւր անչափահաս և կայսերակից որդի Կոստանդինը, պատրիարքի և Բոնոս պատրիկիոսի ղեկավարութեամբ, 622 թ. դարձեալ դուրս գնաց Պարսից դէմ։ Կայսեր արշաւանքները ունէին բացարձակապէս խաչակրաց արշաւանքների բնաւորութիւն։ Նոքա ուղղուած էին սուրբ քաղաքը կործանողի և սուրբ Խաչը յափշտակողի դէմ։ Ինչպէս որ իւր նաւատորմի նաւերը, որոնցով նա առաւ Կոստանդնուպօլիսը, զարդարուած էին Աստուածածնի պատկերով, այժմ և զօրքերն ու իրենց առաջնորդները հաւատում էին որ գնում են Ամենափրկչի ներկայ պաշտպանութեան տակ։ Հերակլը արդէն հասել էր Պարսից սահմաններին, երբ Ավարների արշաւանքը սաստկեց նրան յետ դառնալ։ Աւելի նշանաւոր էր երկրորդ 624 թ. սկսած արշաւանքը։ Կայսրը յաղթանակով հայաստանի միջով հասաւ մինչև Ատրպատական։ այստեղ նա ջարդեց իրան Պարսից թագաւորին և կործանեց — դրանով արդէն որոշուում է պատերազմը իբրև կրօնական պատերազմ — նոցա

մեծահռչակ կրակատունը Գանձակում։ Բայց նա ստիպուած էր թողնել իւր մտադրութիւնը՝ մեղական կիրճերով մտնել բուն Պարսկաստանը, որովհետև Շահրբարազը Փոքր Ասիայից և Շահինը նորակազմ զօրքով գալիս էին նրա դէմ։ Նա քաշուեց դէպի հիւսիսային երկիրները և դաշնակցութիւն հաստատեց Լազերի, Վրացոց և Աբխազների հետ, որոնք կանոնաւոր և ճիշդ վարձ ստանալով, զինուորներ էին տալիս, որ շատ յաջողակ էին ամէն տեսակ գործերում։ 625 թ. նրա դէմ դուրս եկաւ Պարսից մի երրորդ բանակ Շահրապլականի առաջնորդութեամբ։ Հերակլը ստիպուած էր հիւսիս՝ հոների երկիրը քաշուել։ Այստեղից նա մտաւ Պարսից մասի Հայաստանը և ձմեռուայ սկզբին Շահրբարազին փառաւոր ջարդ տուեց։ բայց յաղթութիւնից չկարողացաւ օգտուել։ Ընդհակառակը նա իւր յոգնած զօրքով Տաւրոսի վրայով և Ասորիքով յետ նահանջեց Փոքր Ասիա, և Պարսիկները չկարողացան նրան արգելք լինել։

Ամառը 626 թ. հանդիպում ենք կայսեր արդէն նրա երրորդ արշաւանքի ժամանակ, Լազիկայի մօտ։ Նա յաջողել էր Պարսիկների դէմ գրաւելու Խազարների հզօր իշխանին, որոնք բնակւում էին ռուսական-դիրգիզկան սափրասաններում։ Սակայն առանց հետևանքի

մնաց, երբ միացեալ ոյժով պաշարեցին Թիֆլիզը։ Հետևեալ տարին վերջապէս, տաժանելի յառաջխաղաղութիւից յետոյ, ձմեռուայ կիսին (12 Դեկ. 627) Նինուէի մօտ տեղի ունեցաւ վճռողական մեծ ճակատը, որով Պարսից զօրքը խորտակուեց։ Դրանից անմիջապէս յետոյ կողոպտեցին և կործանեցին միշարք թագաւորական դղեակներ, որոնց մէջ էր Խոսրովի կայանը՝ Դաստակերտը, և ազատեցին շատ քրիստոնեաների։ Անհնար էր Տիզբոնի վրայ յարձակուել, որովհետև Պարսիկները Նահարվանի բոլոր կամուրջները կործանել էին և միւս կողմում պատրաստի սպասում էին։ Հերակլը յետ խաղաց բուսական վտանգաւոր ճանապարհներով՝ մեղական լեռնոտ երկիրներով։ Յաջողութեամբ հասաւ տէրութեան սահմանը, անցաւ Փոքր Ասիայի միջով և, ժողովրդի անսահման ցնծութեամբ, յաղթանակող կայսրը մտաւ իւր մայրաքաղաքը։ Դարձի ժամանակ ճանապարհին նրան արդէն լուր էր հասել Պարսից թագաւորի հետ պատահած ազէտի մասին (25 Փետրվ. 628 թ.)։ Նրա որդի Շերոէն խաղաղութիւն խնդրեց, և նրան տուին զինադադար։ Պարսկական գնդերը դուրս եկան հռովմէական նահանգներից, և Հերակլը մի կերպ վերահաստատեց կարգը. 629 թ. Շահբարազը ամենից վերջը յետ քաշուեցաւ Եգիպտոսից։ Նոյն տարին ս. Խաչը

կրկին Երուսաղէմ ուղարկուեց։ Կայսրը ինքը բոլոր հոգևորականութեան հետ, ժողովրդի ցնծութեամբ, Խաչը նորից կանգնեցրեց (629 թ. 14-ն Սեպտ.), և այն ժամանակից սկսած եկեղեցին հանդիսաւոր կերպով ամեն տարի տօնում է Խաչվերացի յիշատակի օրը։ Հերակլ կայսեր այդ գործը բոլոր քրիստոնեաների վրայ մեծայուն տպաւորութիւն թողեց, որը յետոյ ամբողջ դարեր անջնջելի է մնացել։ Երևում է, որ հետևեալ տարին Պարսիկների հետ հաստատուել է կանոնաւոր խաղաղութիւն։

Հերակլը կանգնած էր իւր փառքի գագաթնակէտին։ Պարսից թագաւորութիւնը գահակալական անընդհատ յեղափոխութիւններով տակն ու վրայ եղաւ և թուլացաւ, և այսպիսով կարծես թէ արևելքի վտանգը ոչնչացաւ ընդմիշտ։

Մինչդեռ այդպիսով տէրութեան ամբողջ ոյժը կենդրոնացրած էր արևելքում երկրի վիճակը կանոնաւորելու, արևմուտքում անփոխարինելի կորուստներ եղան։ 619 թ. Վեստգոթների Սիսեբուտ թագաւորի ձեռքն էին ընկել Յունաց ձեռքում եղող Սպանիայի քաղաքները, և նրա յաջորդ Սվինթիլան (621—631) վերջնականապէս մաքրեց հռովմէական տէրութեան մնացորդները Պիրինէյեան թե-

գրակզզու վրայից։ Նոյնպէս սարսռած էին Հերակլի ժամանակ անգառնալի կորած համարել Դանուբի գիծը, որ Մաւրիկիոսի ժամանակ մեծ դժուարութեամբ պահպանել էին։ Հեմոսի և Դանուբի միջի տարածութիւնը վաղուց արդէն տղողել էին սլաւոնական գաղթականները։ Յետագայ ժամանակագրութիւնը պատմում է, թէ Սերբերը և Կրովատները Հերակլի ժամանակ արդէն բռնել էին իրենց պատմական բնակավայրերը, և նրանով են իրենց մըխիթարում, որ իբր թէ այդ ցեղերը բռնել էին այդ երկիրները կայսեր հաւանութեամբ՝ Աւարների դէմ կռուելու։ Դրապէս բոլորովին դրա հակառակն է ուզել։ Հռոմմայեցիները դժուարութեամբ էին պաշտպանում Դալմատիայի ծովային քաղաքները։ Աւելի երկիւղալի էր վըտանգը Ավարների կողմից։ 623 թ. նոքա նեռս խուժեցին մինչև մայրաքաղաքի մօտերը, և կառավարութիւնը կարողացաւ խաղաղութիւն գնել միայն չափից դուրս մեծ հարկի վճարումով։ Միաժամանակ Սլաւները շարունակում էին աւելի մեծ թուով մըտնել եւրոպական նահանգները։ Նոցա թեթև մակոյկները կողոպտելով 623-ին հասան մինչև Կրետէ։ Դեռ աւելի սարսափելի էր 626 թ. Յուլ. 29-ի յարձակումը։ Ավարները և Սլաւները ծովի և ցամաքի կողմից

ճնշում էին մայրաքաղաքը. մինչդեռ միաժամանակ Շահրարազը Պարսից զօրքով կանգնած էր ասիական ափի՝ Քաղկեդոնի մօտ։ Բայց քաջամարտիկ բերդապահ զօրքը յետ մղեց բոլոր յարձակումները։ Օդոստոսին Ավարները և Սլաւները սարսռած էին յետ խաղալ։

Ռուժերի այս վերջին զօրեղ լարումից յետոյ, Ավարները այլ ևս տէրութեան համար վտանգ չէին ներկայացնում։ Սլաւոնական ցեղերը յետագայ տասնամեակներում ևս շարունակում են իրենց գաղթական հոսանքը զէպի Հեմուս թերակղզին, որ սկսել էին Մաւրիկիոսի ժամանակ. նոքա խիտ խմբերով բնակութիւն են հաստատում Միւսիայում, Մակեդոնիայում, Հելլասում և Պելոպոնէսում։ Ուրալ—Ալտայեան Բոլգարները, որ շատ շուտ են յիշւում Դանուբի ժողովուրդների մէջ, նշանաւոր դեր էին խաղում արդէն, երբ առաջին անգամ հանդէս են գալիս։ Հերակլը արևելքի վիճակի մէջ կարգ հաստատելուց յետոյ, 635թ. նոցա իշխան Կուվրատի հետ դաշն կապեց, որպէսզի նրան զինի Սլաւների և Ավարների դէմ։ Կուվրատը բաւական չափով արդարացրեց իւր վրայ դրած յոյսերը, և շնորհակալ կայսրը նրան տուաւ պատրիկիոս ատիտղոսը։ Այժմ Ավարները սահմանափակուած մնային Պանոնիայի իրենց բնակավայրերում։

Պարսկական պատերազմների յաղթական վախճանն այն եղաւ, որ քաղաքականապէս Նորից գրաւեցին տաս տարուց աւելի պետութիւնից խլուած մոնոփիզիտ նահանգները՝ Ասորիքը և Եգիպտոսը։ Շատ բնական է, որ կառավարութեան ամենաբղձալի փափագներից էր լինելու՝ բարոյապէս Նորից տիրել այդ երկիրներին, որոնք կրօնապէս ու ազգովին Հռովմայեցւոց պետութիւնից օտարացել էին, և յուսով էին թէ կարող են հաւատի միաբարութեամբ Նորից նոցա բարեկամացնել ընդհանուր պետութեան հետ։ Ինքը կայսրը խորհրդակցութեան մէջ մտաւ Յակոբիաններին յայտնի վիճակաւորների հետ։ Անսպասելի կերպով միութիւնը գլուխ եկաւ։ Մայրաքաղաքի Սերգիոս պատրիարքի խորհրդով, որ օրինակելի կառավարիչ էր և շատ խելացի եկեղեցական քաղաքագէտ, առաջարկած բանաձևը. «Մարդ Աստուածը, երկու բնութիւն ունենալով, արել է ամեն ինչ աստուածային և մարդկային զօրութեամբ միանգամայն համապատասխան էր եկեղեցու հին ուսմանը և եղիպտացիների ինչպէս նաև Ասորոց կատարեալ հաւանութիւնը գտաւ։ Փաղիսի Կիւրոս եպիսկոպոսը, որին կայսրը ճանաչել էր իւր կովկասեան արշաւանքի ժամանակ, Աղէքսանդրիայի գահին արժանանալուց յետոյ, իրան

ցոյց տուեց կայսերական քաղաքականութեան համար խիստ պէտքական և ընդունակ գործիք։

Հայաստանում որը Նորից Հռովմայեցւոց ձեռքն էր ընկել, Նոր կաթուղիկոսից գումարած ժողովը իւր կատարեալ համաձայնութիւնը տուաւ «Աստուծոյ սիրելեալ» կայսեր հաւատոյ դաւանութեանը։ Եւ ինչ որ ամենից կարևորն էր, Հռովմի Հոնորիոս եպիսկոպոսը, որ նոյնքան մեղմ ինչքան և հասկացող մի անձ էր, ընթանում էր Սերգիոսի հետ ձեռք ձեռքի տուած։ Կարծես ամեն ինչ ամենալաւ յոյսեր էր տալիս, երբ յանկարծ Երուսաղէմի Նորընտիր պատրիարքը՝ Սոփրոնիոսը, որ ինքը գերազանց ուսումնական էր և բարեպաշտ ճգնաւոր, ողորմած Յովհաննէս Աղէքսանդրացու դպրոցից (610—619), բայց մի և նոյն ժամանակը կլքոտ և սահմանը չիմացող մոլեռանդ մէկն էր, ամենախիստ կերպով հանդէս եկաւ հպարտ հպարտ գլուխ բերած միաբարական ուսման դէմ։ Գիտութեամբ և բարեպաշտութեամբ հաւատարապէս յարգուած եկեղեցւոյ պետի կարծիքը ահագին ազդեցութիւն թողեց։ Բարեպաշտները հառաչում էին և յայտարարում թէ դաւանութեան մաքրութիւնը վտանգուած է։ Ի զուր փորձեր արին Հին և Նոր Հռովմի շատ խելացի պատ-

ըիալքները խաղաղացնել «բարկացած սուրբին»։ Ինչպէս սովորաբար, սա պարտական էր Աստուծուն աւելի լսել քան մարդկանց, և այդպէս էլ խուլ մնաց նոցա ամենահամոզեցուցիչ առարկներին։ Հերակլը փորձեց աղդել խաղաղութեամբ և 638 թ. հրատարակեց Սերգիոսի շարադրած հրովարտակը—Ekthesis—որը իրաւ է յատկապէս շեշտած լինելով մի կամքի ուսման յայտարարութիւնը, չէր կարող փոթորիկը հանդարտացնել։ Մանաւանդ արևմուտքի նահանգներում՝ Իտալիայում և Ափրիկայում լայնածաւալ զրգռմունք ծագեց և քահանաների զրգռմամբ ակրում էր ուղղակի յեղափոխական տրամադրութիւն։ Կայսեր նախկին քարտուղարը, ս. Մաքսիմոսը, որ ափիատոսելեան դպրոցում հիմնովին կրթուած և մաղաչափ ճիշդ տրամաբան էր, ուղղակի անհաւատարիմ կերպով աւելի բարձրացրեց տաքարիւն Ափրիկացիների յուզմունքը և իւր ոչ այնքան բարեպաշտ եռանդով և բոլոր ոյժով աւելացրեց արքայական դիւանի դժուարութիւնները։ Այդպիսով կառավարութիւնը, որ չափազանց վտանգուած էր նոր պատերազմների երկիւղից, տեսաւ թէ ինչպէս միաժամանակ նաև ներքուստ թուլացած է կրօնական պառակտումների շնորհիւ։

Պարսկական զօրութիւնը կոտրելուց յետոյ, թուում էր թէ արևելքի իրերի դրութիւնը կարգաւորուած է։ Ինչպէս կարող էին Բիւզանդիոնում նոյն իսկ երազել, որ Արաբիայի պէս պատմութիւնից զուրկ մի երկիր յանկարծ, մետէորի նման, լուսին կտայ և կհանդիսանայ ապագայի համար այդքան զօրեղ ընդհանուր պատմական ներկայացուցիչ։ Ինչպէս կարող էին Հռովմայեցիները նախատեսել, որ Իսլամի ոգևորութիւնը՝ պատերազմել կրօնի համար, իրենց պետութեան համար այնքան սարսափելի պիտի լինէր։ Մուսուլմանների առաջի յարձակումների վրայ, որ անցան առանց յիշուելու արժանի հետևանք թողնելու, երևում է ակներև որ մայրաքաղաքում շատ թեթեւ են նայել։ Բայց երբ 634 թ. Բոստրան, Արաբիայի հռովմէական նահանգի գլխաւոր քաղաքը, անհաւատների ձեռքն ընկաւ, կայսրը ինքն անձամբ գնաց ասորական Անտիոք մայրաքաղաքը։ Սակայն նրա զօրապետները պատերազմեցին անյաջող։ 635 թ. ընկաւ Դամասկոսը, ասորական նշանաւոր քաղաքները անձնատուր եղան, և 636 թ. Եարմուկի մեծ ճակատը վերջնականապէս որոշեց Ասորիքի վիճակը։ Սուրբ քաղաքը, որ նոր էր մոխրակոյտից բարձրացել, 637 թ. Սոփրոնիոս պատրիարքի ձեռքով երկամեայ պաշարումից յետոյ անձնատուր եղաւ Օմարին դաշնագրու-

թեամբ։ Միջագետքի և Եգեսիայի դրաւումով ամբողջ արևելքը ընկել էր Արաբների ձեռքը։ Մոնոֆիզիտ քրիստոնեաների համակրանքը շատ անգամ տիրապետողների կողմն էր և դրանով են մասամբ բացատրւում այդ անօրինակ յաջողութիւնները։

Ամբի առաջնորդութեամբ Արաբները հաստատուել էին նաև Եգիպտոսում։ Լիւկոպոլսից ոչ հեռու և յետոյ Հելիոպոլսի մօտ Յոյները ջարդ կրեցին. Բաբիլոն, Նիկիու և ուրիշ քաղաքներ պաշարմամբ առնուեցին։ Երբ Հերակլը 641 Փետրուարի 11 մեռաւ, նոցա ձեռին էր ամբողջ երկիրը բացի Աղեքսանդրիա մայրաքաղաքից։ Նոր կառավարութիւնից արտօնութիւն ստացած, Կիւրոս պատրիարքը Ամրուի հետ յարաբերութեան մէջ մտաւ և դաշն հաստատեց։ Սակայն դահակալութեան փոփոխութեան պատճառաւ, մայրաքաղաքում չընդունեցին այդ համաձայնութիւնը, թէև ոչ մի հնար չունէին նաւատորմիղով զօրեղ պաշտպանութիւն ցոյց տալ Աղեքսանդրիային, որը խիստ նեղն էր ընկել։ 643 թ. Սեպտեմբերի 29-ն բաղմայաղթ Ամրուն մուտք գործեց Նեղոսի քաղաքը։ Եգիպտոսում էլ նմանապէս Կոպտերի ատելութիւնը Յոյների դէմ յաղթողներին ցոյց էր տուել զօրեղ օգնութիւն։ Հերակլի բոլոր գործը ոչնչացաւ և պետութիւնը

սահմանափակուեց Փոքր Ասիայով, Հեմուս թերակղզիով և լատինական արևմուտքի կիսախախտ իշխանութիւններով։

Հերակլի երկրորդ ամուսինը, նրա քեռաղջիկ փառասէր Մարտինան, որի հետ ամուսնացել էր եկեղեցու դէմ մեծապէս մեղանչելով, կամենում էր իւր ամուսնու մահից յետոյ էլ պահպանել իշխանութիւնը։ Սակայն ղօրքը իշխանութիւնը տուեց նրա երկու որդիներին. Կոստանդին Բ-ին, որ մեռած կայսեր երկարամեայ պաշտօնակիցն էր և նրա փոքր եղբայր Հերակլին (Հերակլէոնաս), Մարտինայի որդուն։ Կոստանդինը՝ իսկական կառավարիչը որ վաղուց հիւանդ էր, մեռաւ արդէն 641 թ. Մայիսի 26-ին։ Շուտով տարածուեց այն մեղադրանքը թէ խորթ մայրն է թունաւորել. և դահակալական փոփոխութեան ժամանակ պաշտօնապէս արտայատուեց այդ, բայց դժուար է հաւատալ։ Հերակլէոնասը մայրաքաղաքում կայսր ճանաչուեց։ Իրապէս կառավարում էին Մարտինան և Պիւռոս պատրիարքը։ Սակայն ղօրքը և իրենց առաջնորդները մեռած կայսեր որդիների կողմն էին։ Արդէն 641 թ. աշնանը կայսրը և նորա մայրը դլորուեցին և Կոստանդինի անչափահաս որդին՝ Կոնստանտը (պաշտօնապէս՝ Կոնստանտինոս) կայսր հրատարակուեց (641—668)։

Տէրութեան երկիրների մեծ մասի կորուստը Հերակլի ժամանակ, անմիջապէս նրա (տէրութեան) համար օդոտակար դարձաւ։ Կորուստին ըմբոստ, ազգովին թշնամի զանազան ժողովուրդների տարրերը։ Փոքր Ասիայի և Հեմուս թերակղզու բնակիչները, որոնք մնացել էին կայսեր հպատակ, լեզուով և կրօնով միացած խումբ էին կազմում և կատարելապէս հաւատարիմ։ Դրանից բացի ուրիշ օգուտ էր թեմերի վարչական կազմակերպութիւնը։ Արդէն Յուստինիանը և նրա յաջորդները առաջի քայլերն արել էին փոխելու Դիոկղետիանոսի հին զինուորական և քաղաքային վարչական ձևը, ընդհանուր կառավարութիւնը ամփոփելով զինուորական գլխաւորների ձեռքում։ Հերակլի և նրա յաջորդների զինուորական նեղութիւնների ժամանակ կառավարութիւնը սահմանեց Փոքր Ասիան և աստիճանաբար ամբողջ պետութիւնը բաժանել մի շարք զինուորական հրամանատարութիւնների—թեմերի։ Այդ նահանգներում հրամայող զօրապետները՝ ստրատեգները, զօրագնդերի ընդհանուր հրամանատարութիւնից զատ իրենց ձեռքին միացրել էին քաղաքային վարչութեան ղեկը։ Այդ եղանակը վերակարգուեց և կատարելագործուեց սիրիական հարստութեան հանձարեղ կայսրների օրով։ Եւ դա ազատել է տէրութիւնը։[1]

Կոնստանտը երբ իրապէս կառավարութեան գլուխն անցաւ, ցոյց տուեց անընկճելի և ինքնուրոյն բնաւորութիւն, և իբրև իշխան միանգամայն արժանի իւր ծանր պաշտօնին։ Անասելի դժուարութիւններով նա կարողացաւ արաբական յարձակումը կանգնեցնել։ Մոա-

---

1. Հանմանատիր թեմերի կարգաւորութեան համար մանրամասն Ց. Բ. Բուրի (J. B. Bury: a history of the later Roman Empire II էջ 399 եւլն—Պատմութիւն Հռոմայեցոց վերջին կայսրութեան), գերազանց (թեև առանձին մասերով ազատ չէ պակասութիւններից եւ սխալներից) ուսումնասիրութիւնը. «Թեմերի կարգաւորութեան սկիզբը —origin of the system of Themes»։—Ըստ այնմ Է-րդ դարում ապացուցանելի են նահանգների կառավարութեան հետեւեալ զինուորական նահանգապետները։

Ա. Ասիայում. 1. Օպսիկիոն (Բիւրինիա), 2. Անատոլիկոն (Ա. Հայք եւ Պոնտոս), 3. Արմենիակոն (Ա. եւ Բ. Կապպադովկիա եւ Գ Հայք), 4. Թրակեզիոն (Ասիան հին նահանգը), 5. Կիբիւրայոտիսի Տրուանգարիացը (ծովապետութիւնը) (Պամփիւլիա եւ Պիսիդիա)։

Բ. Եւրոպայում. 1. Թրակէ. 2. Հելլաս, (Պելոպոնեսի հետ), 3. Իտալիայի կամ Ռավենայի էքսարխութիւնը այս գաւառներով. Ա. Ուրբիկարիա, Բ. Կամպանիա, Գ. Անեոնուարիա, Դ. Էմիլիա, Ե. Ապուլիա, Զ. Բրեթիում, Է. Սիկիլիա, Ը. Վենետիա, 4. Կարթագոյի կամ Ափրիկայի էքսարխութիւնը (մեծ մասամբ կորած) այս գաւառներով Ա. Պրոկոնսուլարիա, Բ. Բիզակիա, Գ. Նումիդիա, Դ. Մաւրիտանիա Ա, Ե. Մաւրիտանիա Բ.=Սեպտում, Զ. Սարդինիա։

վիայի ձեռքով՝ որ Ասորիքի գործունեայ հրամանատարն էր՝ կազմակերպուած էր մի նաւատորմիղ։ 648 թ. նա յարձակուեց Կիպրոսի վրայ և առաւ Կոնստանդին գլխաւոր քաղաքը։ Մի տարի անց կործանեցին Արադոսը։ 654 թ. Արաբները կողոպտեցին Ռոդոսը. Հռովմայեցիք նոյնպէս կորցրին Հայաստանը՝ երկրի բնիկ իշխանի դաւաճանութեամբ։ Նոյն իսկ տէրութեան մայրաքաղաքի դէմ ուղարկուած զօրեղ նաւատորմիղից 655 թ. յաղթուեց կայսերականը լիւկիական ափերի մօտ։ Բայց Օթման խալիֆի մահը (656 թ.) և դրա պատճառով ծագած երկրի ներքին խռովութիւնները Մուավիային ստիպեցին ոչ միայն խաղաղութիւն հաստատել՝ այլ մինչև անգամ տէրութեանը հարկ վճարել։ 663 թ. թշնամութիւնները վերսկսեցին։ Տարէցտարի Արաբները ներս էին խուժում Փոքր Ասիան և կողոպտում։ 668 թ. նոքա հասան մինչև Քաղկեդոնը. Ամորիոնին տիրեցին և իսկոյն նորից կորցրին։ Հաստատուն բանի չէին հասնում։ Պետութեան զինուորական ոյժի շնորհիւ տեղի չունեցան յիշելու արժանի մեծ մեծ կռուտներ։

Խաղաղութեան ժամանակամիջոցը կայսրը դործ դրեց «Սկլավինիայի» դէմ արշաւելու՝ որ անկասկած մակեդոնական ցեղեր էին՝ որ պա-

շարել էին Թեսալոնիկէն։ Նոցանից շատերը պետութեան հարկատու դարձան։ Ներքուստ Արևելահռովմը շարունակում էր միակամութեան խնդիրներով լարուած դրութեան մէջ մնալ։ Արևմուտքը զօրեղ կերպով բողոքել էր կայսերական դաւանութեան դէմ։ Ափրիկայի փառասէր էքսարխ Գրիգորիոսը՝ որ վարդապետների բարեկամ էր՝ իւր նահանգը օրթոդոքսութեան գլխաւոր կեդրոն դարձրեց՝ որտեղ արևելքի տիրապետած նահանգներից շատ փախստականներ ապաստանարան էին գտնում՝ նա ինքն իրան հակաթոռ կայսր հրատարակեց։ Բայց նորա միօրեայ իշխանութիւնը որ հիմնուած էր «ձշմարիտ հաւատոյ» վրայ՝ արդէն 647 թ. խորտակուեց յաղթանակով ներս խուժող Արաբների առաջ։ Համարեա Ափրիկան ամբողջովին ընկաւ նոցա ձեռքը։ Կայսրը՝ որպէսզի եկեղեցական խաղաղութիւնը վերահաստատի՝ 648 թ. մի հրովարտակ – typos – արձակեց՝ որով արգելում էր Աստուծոյ կամքերի և զօրութիւնների թուի մասին վէճերը։ Սակայն վարդապետների գլխաւոր առաջնորդներից ամենանշանաւորը՝ ս. Մաքսիմոսը՝ յայտնեց թէ կայսրը իրաւունք չունի խառնուելու կրօնական հարցերում և Մարտին Ա. պապը 949 թ. Լատերանի ժողովում հրամայեց հանդիսաւոր կերպով նզովել միակամութեան դա-

ւանութիւնը ինչպէս նաև Լկթէզիսը եւ Տիպոսը։ Բայց կայսրը կկեղեցուոյ ազատութեան մասին նոր ուսման հանդէպ հաստատ պահեց արևելքի հին աւանդութիւնը, և արտայայտեց արտասովոր կամք։ 653 թ. Մարտին պապը կալանաւորուեց Ռաւեննայի էքսարխի ձեռքով և բերուեց մայրաքաղաք, որտեղ նրա դէմ դատ բացին։ Նա մեռաւ աքսորի մէջ Խերսոնում. տպաւորութիւնը ցանկացածն էր. որովհետև նրա յաջորդները՝ Եւգենիոսը և Վիտալիանը շատ հլու մնացին կառավարութեանը։ Նը-մանապէս ս. Մաքսիմոսին էլ, որ խորը կերպով խառն էր ափրիկեան խռովութեան մէջ և մեղադրւում էր հայրենիքի դաւաճանութեան մէջ, նոյն վիճակը հասաւ։ Հին-Հռովմի հետ եկեղեցական միութեան վերահաստատութիւնը կայսերական յաղթութեան ակընյայտնի նշանն էր։

Ոչ միայն եկեղեցական շփոթութիւնները, քաղաքական հանգամանքներն էլ կայսեր ուշադրութիւնը դարձրին արևմուտքի վրայ։ Արևելքի կորցրած նահանգներից սկսեցին բաղմաթիւ փախստականներ տեղաւորուել Սիկիլիայում, որով սա բուն յունական նահանգ դարձաւ, որ բիւզանդական ափրակտութեան համար արևմուտքում խիստ կարևոր էր։ Հետևեալ ժամանակի համարեա բոլոր պապե-

րը ծագում են ասորական և յունական գաղթականների այդ ընտանիքներից։ Այդ հանգամանքից բոլորովին անմիտ կերպով եզրակացրել են, թէ դրանում յունական քաղաքականութեան ձգտման արտայայտութիւն կար, մինչդեռ այդ պիտի բացատրել նրանով որ հին հռովմէական պատրիարքական հոգևորականութեան մէջ այդ տարրը գերակշռում էր։ Արդէն 652թ. Արաբները յարձակում էին դործել կղզու վրայ, որ սակայն մեծ ծրագրով ձեռնարկած կողոպուտի արշաւանք էր. այնուամենայնիւ նպատակայարմար էր այդտեղ լրջօրէն նրանց դէմ դնել։ Ակներև էր որ կայսրը հեռուն գնացող ծրագրեր ունէր, երբ 672 թ. զօրեղ նաւատորմիղով անցաւ Աթէնքի վրայով Տարենտ։ Որոշուած էր վազուց ի վեր պետութեան արհամարհուած արտաքին կենդրոնները՝ արևմրտեան նահանգները, ինչպէս նախկին ժամանակներում, դարձնել տերութեան յենարանը։ Հին-Հռովմը պէտք էր նորից մայրաքաղաք դառնար։ Սակայն կայսրը, որ աննկուն իւր կեանքի վերջին օրերը նուիրեց իւր այդ ռոմանտիքական վերահաստատութեան ծրագրին, չկարողացաւ լրացնել նրա նոյն իսկ ամենառաջին պայմանը՝ Ռաւենայի առումը Լոնգոբարդների ձեռքից։ Նրա փորձերը Բենեվենտի հերցոգութիւնը նորից Հռովմայեցւոց իշխա-

նուիրեան տակ առնել, անցան ապարդիւն։ Կայսրը Հռովմին կարճ այցելութիւն տալուց յետոյ, իւր համար մնայուն նիստ ընտրեց Սիրակուսը՝ աշքը դէպի Ափրիկա յառած։ Այդտեղ յաջողուեց Կարթագոն և մի քանի ծովային գլուխներ յետ դրաւել։ Բայց Հռովմայեցւոց նաւատորմիղները, որ ուղարկում էր կայսրը, կամ Արաբներից էին յաղթւում կամ փոթորկից խորտակւում։ Ժամանակակիցները բարձրաձայն գանգատւում էին տուրքերի և նեղութիւնների ծանրութիւնից, որ հետևանք էր արևմտեան նահանգների համար ձեռնարկած ապտակարդ միջոցներին։ Բոլորը շունչ քաշեցին, երբ զօրեղ իշխանը 668 թ. Սիրակուսի բաղնիքներում շունչը տուեց մարդասպանների հարուածների տակ։

Միղիղիոս (Մժեժ) անունով մի Հայ, որ ինչպէս երբեմն Հելիոդաբալոսը զինուորներին տուր էր եկել ոչ ուրիշ բանով, այլ միայն իւր մարմնի դեղեցկութեամբ, Սիկիլիայում կայսր հրատարակուեց։ Բայց Կոնստանդի որդին՝ Կոնստանտինոս Դ. Պոգոնատոս (668—685), որ մինչև այդ Բիւզանդիոնում վարել էր սէրութեան գործերը, մեծ նաւատորմիղով ափ իջաւ, և շատ շուտ բռնակալութեան վախճան պատրաստեց։ Երբ նա վերադարձաւ, Անատոլեան թեմերի զինուորները նրան սա-

պեցին իւր հերակլ և Տիբերիոս եղբայրներին կայսրակից անուանել։ Զինուորները կամենում էին,—որ շատ բնորոշ է դարու միանգամայն աստուածաբանական մտածողութեան եղանակին—երկնային երրորդութեան պատկերը երկրի վրայ ունենալ։ Միայն 680 թ. կարողացաւ Կոստանտինը ազատել միապետութեան, որին նա մասնակից արաւ իւր մանկահասակ Յուստինիան Բ որդուն։ Կոստանտինը երիտասարդ էր գահը բարձրացել. նա իւր ստանձնած գործին միանգամայն աւժանի գտնուեց։ Ոսլամի հետևողները ահագին ջանքեր էին անում։ Համարեա ամեն տարի յեղեղում էին Փոքր—Ասիան։ Եղիպտական Սարակինոսները 699 թ. ափ իջան Սիկիլիայում։ Բայց գլխաւոր հարուածը պատրաստուած էր մայրաքաղաքի դէմ։ Անդադրում և քաջամարտիկ Մուավիան 672 թ. պատրաստեց մի ահեղ ծովային արշաւանք։ 673 թ. Ապրիլից մինչև Սեպտեմբերը նաւատորմիղը կանգնած էր Կոստանդնուպօլսի առաջ. բայց նոցա բոլոր հարուածները անզօր էին կայսեր խոհեմ պաշտպանողական միջոցների առաջ։ Ժամանակագիրների նկարագրութիւնները պաշտպանողութեան առաջին տեղը տալիս էին Կալլինիկոս ինջինների յունական կրակին. հռովմէական նաւատորմղի հրրակիրները ոչնչանում էին արաբական նաւերը։

Մինչդեռ Արաբները տիրապետում էին Եգիպտոսն ծովին և 674 թ. անցողակի իրենց ենթարկեցին Կրետէն, իրենց հաստատուն բանակից՝ Կիւզիկոնից անօրինակ յամառութեամբ տարէցտարի իւրաքանչիւր ամառ նորոգում էին իրենց յարձակումները մայրաքաղաքի դէմ միշտ նոյն անյաջողութեամբ։ 677 վերջին պաշարումը. Պամֆիլիայի ափերի մօտ պատահած փոթորիկները և կիլիկիայեան նաւատորմիղի յարձակումը համարեա բոլորովին ոչնչացրել էին հպարտ արմադան։ Միաժամանակ Մարգարիտները, որ Ցաւրոսեան լեռների քրիստոնեայ աւազակային գնդեր էին, ամրացրել էին Լիբանանում և իրենց աւարառութիւններով, որ մինչև Երուսաղէմ էր հասնում անհանգստացնում էին նոցա ամեն տեղ. Մոսվիան ստիպուած էր երեսնամեայ խաղաղութիւնը գնել տարեկան հարկ վճարելով։ Բիւզանդիոնը աւելի յարձակումների դէմ հանդիսացել էր իբրև զօրեղ պատուար քրիստոնէական քաղաքակրթութեան համար. ժամանակակիցները գնահատեցին Արևլահռովմի մեծ գործի բարձր արժանիքը, և բազմաթիւ դեսպանութիւններ Ավարների խաքանից և արևմուտքի թագաւորներից ու ազգերից շնորհաւորում էին կայսեր՝ նորա տարած յաղթութեան համար։

Մինչդեռ պետութեան կենդրոնում այդ դէպքերն էին պատահում Հեմուս թերակղզու երկրորդ գլխաւոր քաղաքը՝ Թեսալոնիկէն շարունակ վտանգի մէջ էր։ 675—681 թ. համարեա ամեն տարի կրկնուող յարձակումների պատճառով, որ կատարում էին Մակեդոնիայում և Թեսալիայում բնակուած սլաւոնական ցեղերը։ Մանաւանդ սարսափելի էր 675 թ. յարձակումը, երբ քաղաքը պաշարուեց թէ ցամաքի և թէ ծովի կողմից։ 677 թ. Ավարները երևացին նրա պարիսպների տակ։ Բայց Սլաւոնների անհամաձայնութիւնը և պառակտումները և քաղաքացիների հերոսական ընդդիմութիւնը, որոնց առաջնորդում էր իրենց Յովհաննէս արքեպիսկոպոսը, ազատեց քաղաքը։ Ինչպէս որ մայրաքաղաքի յաղթութեան բախտը վերագրում էին շնորհառատ Աստուածամօր օգնութեանը, Թէսալոնիկէումն էլ վերագրում էին ս. Դեմետրիոսին։

Աւելի մեծ նշանակութիւն ունեցաւ Բուլգարների երևան գալը հռովմէական հողի վրայ։ Այս Փիննա—Ուգրեան ժողովրդի ամենահին բնակատեղին գտնւում էր սարմատական դաշտավայրում։ Բայց վաղուց անջատուել էին բազմաթիւ խմբեր և չուել դէպի արևմուտք։ Նրանցից մէկը հաստատուել էր Դնեստրի, Դանուբի և Սեւ ծովի անկիւնում։ Իրենց Ռասերիխ (Ապպերուխ ըստ Յունաց)

քաջ և գործունեայ իշխանի ժամանակ նոցա հոսանքը տարածուեց մինչև Միւսիա։ Կոստանդինը, նախատեսնելով վտանգը, մեծ ուժով նրանց դէմ դրեց։ 679 թ. ծովային և ցամաքային զօրքով երևաց Դանուբի ստորին մասում։ Սակայն արշաւանքը միանգամայն անյաջող ելք ունեցաւ. ասում են որ պատճառը կայսեր յանկարծակի հիւանդանալն էր։ Ցոյները ստիպուած էին Դանուբի և Հեմուսի միջի երկիրը դադարկել։ Իսպերիխը այստեղ հիմնարկեց իւր նոր տէրութիւնը, որի կենդրոնն էր Վարնա, յետոյ Պրեսլաւ և Դրըստեր (Սիլիստրիա)։ Բուլգարները ապացուցին որ իրենք տիրող ժողովուրդ են՝ արդակարդ քաղաքագիտական հմտութեամբ և վարչական մեծ հանճարով։ Դանուբի երկիրների Սլաւները ստիպուած էին ենթարկուելու նոցա իշխանութեանը։ Երևում է որ փիննական տիրապետող դասակարգը շուտով միացել է հպատակների հետ և մի ժողովուրդ կազմել, և որովհետև նոքա, ինչպէս գերմանական տիրապետողները Սպանիայում և Իտալիայում, յաղթուածի լեզուն փոխ առան, ուստի առաջին անգամ կազմակերպուեց մի մեծ սլաւոնական պետութիւն։ Սլաւոնական բազմութիւն դաղութները, որոնք վաղուց բնակութիւն էին հաստատել պետութեան հիւսի-

սային նահանգներում, տէրութեան համար լուրջ վտանգ չէին ներկայացնում իրենց առանձնութեան, բաժան բաժան կացութեան և քաղաքական հասկացողութիւն չունենալուն պատճառաւ. իսկ նորահաստատ բոլգարական պետութիւնը ընդհակառակը կոչուած էր ամենասոսկալի կերպով դեր խաղալու Արևելահռոմի վիճակում։

Յետագաները Կոստանդինի վերաբերմամբ, որ խիստ և անընկճելի զինուորական անձն էր, պահպանել են արտաքսովոր շնորհակալ յիշողութիւն, ոչ այնքան նրա քաղաքագիտական—զինուորական մեծագործութիւնների համար, այլ որովհետև տէրութեանը վերադարձրեց եկեղեցական խաղաղութիւնը։ Նա վեցերորդ տիեզերական ժողովով՝ 680-681 կործանեց *միակամութիւնը*—Monotheletismus—և վերականգնեց օրթոդոքսութեան իշխանութիւնը։[1] Այդ սաւը դատող բնաւորութեան համար գերակշռել են քաղաքագիտական հիմունքները։ Մոնոֆիզիտ նահանգները վերջնականապէս կորել էին. ուրեմն ինչո՞ւ, քանի որ պատճառ չկար, հաստատուն պահել այնքան ատելի միաբարական հրովարտակը։[1]

1. Դոնև այդպէս է պատմում աւանդական եկեղեցական պատմութիւնը։ Իսկ իրապէս հին դաւանութիւնը, որ

Դրա վրայ աւելացաւ մի երկրորդ հանգամանք. Վիտալիան պապը հաւատարիմ կերպով օգնել էր կայսերական կառավարութեանը իտալական բռնակալների դէմ մղած պատերազմներում: Հռովմի պապի դիւանի ազդեցութիւնը արևմուտքում անպայման վճռողական էր: Որպէսզի Իտալիան և Հռովմը պահպանուի պետութեան համար, պէտք էր որ բիւզանդական արքունի ատաւուածարանութիւնը ստորադրուէր հռովմէականութեան: Մեծ Սերգիոսի յիշատակը, ինչպէս երբեմն

աւանդուած էր ս. հայրերից եւ դեռ Յուստինիանի ժամանակակից Մենասի ձեռքով հանդիսաւոր կերպով յայտարարուած—Մենասի թղթի մասին ս. հայրերի գրութիւնների հնագրական ուսումնասիրութիւնները մասամբ կասկածաւոր բնաւորութիւն ունին—փոխարինեցին Մաքսիմոսի բողոքին նոր դաւանաբանական ձեւակերպութիւններով, որը ընդունեց Մարտին պապը: Ագաթոն պապը ներողութիւն է խնդրում իւր հոգեւոր խորհրդատուների տգիտութեան համար: Սակայն չնայած դրան, Յոյն ատաւուածաբանները խոնարհուեցին նոցա առաջ: Երեւում է որ այստեղ էլ, ինչպէս Քաղկեդոնում, նշանակութիւն է ունեցել կայսերական ատիպունը: Բայց եւ այնպէս Անտիոքի համարձակ Մակարիոսը պատրաստ էր հին եկեղեցական հաւատի ճշմարտութեան համար կոտոր կոտոր լինել: Եւ իսկապէս ժողովին պատիւ չէ բերել, որ նզովել է երկու այնպիսի սկանաւոր եւ ճշմարիտ սուրբ մարդկանց, ինչպէս են Հին-Հռովմի Հոնորիոսը եւ Նոր-Հռովմի Սերգիոսը:

Ակակիոսինը, նզովուեց, դրա հետ միասին նաև միաբարութեան միւս գլխաւորների յիշատակը: Առանձին նշանակութիւն չունէր, որ դատապարտուածների մէջ Հռովմի Հոնորիոսի անունն էլ կար: Չնայած դրան, գուցէ Զ ժողովը մնում է միակ ամենավճռողական յաղթութիւնը, որ Հռովմը տարաւ արևելքի դէմ:

Կոստանտինոսին յաջորդեց նրա հազիւ 16 տարեկան որդի Յուստինիանը (685—695, 705—711), որ արժանի ժառանգ էր հերակլեան հանճարեղ հարստութեան. բայց իւր հօր և պապի բնաւորութեան կոպիտ գծերը նրա մէջ այլանդակութեան պատկերի էին ձեւափոխուել. յեռագանների յիշողութեան մէջ ապրում էր կորովով լի և մեծապէս ընդունակ իշխանը իբրև լոկ գազանաբարոյ և զզուելի բռնակալ: Նրա տաստարդ և անփորձ կառավարիչը զուրկ էր որ և է խոհականութիւնից: Այս դէպքում էլ պէտք էր կրկնել, ինչ որ Սալոմոն Ռամշվագից, Կոստանցի խելօք եպիսկոպոսը Augia dives-ի վանահօրը գրեց. «աւաղ քեզ երկիր, որոյ թագաւոր մանուկ է»: Համարեա ծաղրալի կերպով խորը համոզուած իւր իշխանապետական կոչման վեհութեան մասին և պապակած գործելու հիւանդ ծարաւով, արձակեց՝ միայն իշխաններին վայել անշնորհակալութեամբ իւր հօր փորձուած

մինիստրներին և իրան շրջապատեց բնաւորութիւնից զուրկ խարդախ անձինքներով, որոնց խորամանկութեան խաղալիք էր դարձել, չնայած իւր բոլոր իշխանական խաղերին։ Արդէն նրա պապ Կոնստանտը—որ ապացուցանում է Սիկիլիայի անջատումը — անպայման բնական վիճակի մէջ չէր. ուստի կարելի է բաւական չափով թեթևացնել Ցուստինիանի մեղքերը, ի նկատի առնելով նրա ապացուցուած կեսարական խելացնորութիւնը։ Արաբների հետ արտաքուստ շատ յաջող խաղաղութիւն հաստատուեց, նոքա պարտաւորուեցին հարկ վճարել աւելի մեծ չափով։ Երկու մեծ պետութիւնները որոշեցին Կիպրոսը, Հայաստանը և Վրաստանը իրրև մի տեսակ «ընդհանուր տիրապետութիւն» վիասին կառավարել։ Բայց Հռովմայեցիների փոխադարձ պարտաւորութիւնը—Մարդայիտներին հեռացնել և բնակեցնել Փոքր Ասիայում և Թրակիայում նկատուեց իրրև ծանր սխալ։ Իրաւ է քրիստոնէական կրօնի համար այդ յառաջամարտիկները կարող էին վայրենի աւազակային գնդեր լինել, նէապոլիտական աւազակների նման, որոնց զէնքը օրհնեց Ռուֆֆոն կարդինալը, բայց նոցա աւերումները և բարբարոսութիւնները աւելի չէին, քան ինչ որ կատարում էր արդար պատերազմի ժամանակ, և նոքա հարուածում էին միայն «Աստուծոյ անիծեալ, անհաւատ Հագարացոց»։ Ուստի քրիստոնէական ժողովուրդները խիստ յարգում էին նոցա և դատապարտում էին կայսեր, որ ինքն անձամբ կործանեց հռովմէական պետութեան «երկաթէ պարիսպները»։ Դրա հակառակ կարծես կայսեր արշաւանքները Բուլգարների և Սլաւոնների դէմ սկզբում յաջողութեամբ պսակուեցին։ Նա Բուլգարներին յետ մղեց, Հերբոսի և Սարիմանի գաւառների Սլաւոններին ընկճեց և յաղթանակով առաջ անցաւ մինչև Թեսալոնիկէ։ Սլաւոններին մեծ խմբերով տեղափոխեցին Ասիա, Հելլեսպոնտոսի նահանգները և Օպսիկիոն թեմը, և նոցանից կազմեցին զօրքի մի առանձին բաժին 30,000 հոգուց բաղկացած։ Սակայն նա ծանր հարուածներ կրեց Բուլգարներից թէ իւր վերադարձի ժամանակ և թէ երևաց՝ որ իւր նոր սլաւոնական զինուորները միանգամայն անվստահելի են։ Երբ 691 թ. Ցուստինիանը առանց հիմնական պատճառի լուծեց Արաբների դէմ խաղաղութիւնը, 692 թ. Կիլիկիայում Սեբաստոպոլսի մօտ ծանր պարտութիւն կրեց, գլխաւորապէս իւր սլաւոնական օգնական գնդերի դաւաճանութեան պատճառով։ Հետևանքը այն եղաւ, որ Հայաստանը նորից ամբողջովին Արաբների ձեռքն ընկաւ։

Ահագին զումպարները, որ կլանում էին մեծաձախս պատերազմները և կառավարչի շինարարական խելացնորութիւնը, և երբ դրամը ժողովելու համար Թէոդոտոս և Ստեփաննոս մինիստրները իրենց թոյլ էին տալիս անտանելի քմահաճութիւններ և ճնշումներ, ժողովրդի համար չափազանց ատելի դարձրին կառավարութիւնը: Երբ 695 թ. Լևոնտիոսը, ասիական պատերազմներում վարժուած մի զինուոր, ապստամբուեց, հաւատալով իւր ընկերների վարդապետական նախագուշակութեանը, նրա հետ իսկոյն միացան քաղաքացիները և հոգևորականները, Լևոնտիոսին ողջունեցին իբրև կայսր, իսկ Յուստինիանի քիթը կտրելով աքսորեցին Քերսոն:

Այդպիսով վերջին պետի մեղքի պատճառաւ, օրինական կայսերական ամբողջ տունը 85 ամեայ կառավարութիւնից յետոյ, զրկուեց իւր իշխանութիւնից. հետևանքները պետութեան համար սաստիկ կործանիչ եղան. զօրքը, վստահ իւր ամենակարողութեան վրայ, մոցրեց իսկական մամելուկեան վարչութիւն: 22 տարուայ ընթացքում շատ շուտ մէկը միւսի յետևից յաջորդել են վեց իշխան, որոնք ըստ մեծի մասին թագը պարտական էին լինում զինուորներին:

Լևոնտիոսի կարճ կառավարութիւնը

(695—698) նշանաւոր է նրանով, որ Ափրիկան վերջնականապէս կորցրին: Ամենամեծ տոկունութեամբ Հռովմայեցիները այդտեղ պահպանել էին, շարունակ պատերազմելով Արաբների դէմ, իրենց ծովային ամրութիւնները: Արաբների յաղթական յառաջխաղացը, որ 697 թ. նոյն իսկ Կարթագոյին տիրեցին, ստիպեց Հռովմայեցիներին դործ դնել վերջին ջանքը: Յովհաննէս պատրիկիոսը դրաւեց քաղաքը, յաղթեց թշնամուն և նորից տիրեց «Ափրիկայի ամրոցին»: Սակայն նա հէնց հետևեալ տարին ստիպուեց յետ քաշուել Արաբների մի նոր նաւատորմիղի առաջ: Կարթագոն ընկաւ, և Հռովմայեցիների տիրապետութեան տակ մնաց միայն Սեպտումը, որտեղ Վեստգոթների օգնութեամբ կարճ ժամանակ մնաց մի հռովմէական նահանգապետ: Յովհաննէսը նաւով յետ էր դարձել, որ օգնութիւն տանի. սակայն վերադարձին Կրետէում խըռովութիւն ծագեց: Ապսիմարոս ծովապետը, կամ կիբիրայոտների դրունդարիոսը Տիբերիոս անունով կայսր հրատարակուեց (698—705) և շուտով տիրեց մայրաքաղաքին: Լևոնտիոսը այլանդակուած մնաց վանք: Տիբերիոսի կառավարութիւնը այնքան էլ անբախտ չէր: Նրա ընդունակ հերակլ եղբայրը ասիական դնդերի գլուխն անցած, մի քանի

անգամ յաջող յաղթեց Արաբներին՝ թէև իրաւ է՝ չկարողացաւ արգելք լինել որ նոքա չհաստատուէին Կիլիկիայում։ Հայերի ապստամբութիւնը յօգուտ Հռոմի՝ շատ շուտով արիւնալից վախճան ունեցաւ արաբ զօրապետի ձեռքով։

Հուրջ վտանգ էր ներկայացնում կառավարութեան համար անդադրում Յուստինիանը։ Նա փախել էր Խազարների մօտ և պահուել Խաքանի աղջկայ վրայ որի քրիստոնէական անունը Թէոդորա էր։ Նա՝ միայն իւր զարմանալու արժանի եռանդի շնորհիւ, կարողացաւ ազատուել բարբարոսների իշխանի դաւադրութիւնից, որին գրաւել էր Յուստինոս ոսկին։ Փոքրաթիւ հաւատարիմների հետ փախաւ, վտանգաւոր ծովագնացութիւնից յետոյ հասաւ յունական մի մակոյկի վրայ Դանուբի բերանը և յարաբերութեան մէջ մտաւ Իսպերիխի յաջորդ Տերվելի հետ (Տերբելիս), որին նա միանգամայն իւր կողմը քաշեց։ Սլաւոնական և բուլգարական զօրքը 706 թ. նրան տարան Բիւզանդիոն։ Խորամանկութեամբ յաջողուեց քաղաքին տիրանալ։ Տերվելին կեսար կարգեց և առատ վարձատրելով արձակեց։ Մայրաքաղաքը այնպիսի սոսկալի պատժի ենթարկուեց կիսախելացնոր կայսրից, որի նմանը չէր տեսնուել։ Իւր երկու հակառակորդ կայսրներին քաղաքի փողոցներում անպատիւ կերպով ցոյց տալով, գլխատեց կրկէսում։ Կոնստանտինոս պատրիարքը, որ Յուստինիանի գահընկէցութեան օրը հրատարակել էր Տիրոջ օր և օծել էր երկու կայսրներին, կուրացած աքսորուեց Հռոմի։ Հակառակ կուսակցութեան բոլոր յայտնի զինուորականները սոսկալի մահ կրեցին։ Նոյն վիճակը հասաւ բազմաթիւ քաղաքացիների և զինուորների, այնպէս որ ասիական պատերազմների ժամանակ ստիպուած էին զօրքի շարքը լրացնել պատերազմում վարժուած գիւղացիներով։ Բոլորը սարսափում էին այդ խելացնոր զարհուրելի բռնակալի վերահաստատութեան ժամանակ։

Արտաքուստ Յուստինիանի երկրորդ իշխանութիւնը բաւական անյաջող էր։ Բուլգարների դէմ ձեռնարկած մի մեծ արշաւանք, որի ժամանակ կայսրը տիրեց Անքիալոս քաղաքին, վերջացաւ կատարեալ անյաջողութեամբ։ Հալիւ ազատուեց Յուստինիանը և իւր զօրքի մի մասը ծովային ճանապարհով։ Ի զուր փորձեց օգնութեան հասնել Տիւեանա քաղաքին, որ պաշարել էին Արաբները։ 709 թ. քաղաքը դաշնագրութեամբ ընկաւ անհաւատների ձեռքը։ Կայսրը առանձին ատելութեամբ լցուած էր Ռավեննա և Քերսոն քաղաքների դէմ, որ բացարձակ պահել էին

հակառակորդների կողմը։ 710 թ. Ռավեննա մի նաւատորմիղ ուղարկեց, քաղաքի մեծամեծներին դաւաճանութեամբ կալանաւորեցին և ուղարկեցին Կոստանդինուպոլիս պատժելու. քաղաքի Կլասիս նաւահանգիստը կրակի զոհ դնաց։ Արիւնարբուշա մարդու համար կորստաբեր դարձաւ Քերսոնը պատժելու ցանկութիւնը։ Այնտեղ ուղարկած մի նաւատորմիղ դրաւել էր քաղաքը. բայց դարձին մեծաւ մասամբ կործանուել էր։ Քերսոնում մնացած բերդապահները, կայսեր կատաղութիւնից վախենալով, որովհետև նրա արիւնալից հրամանների միայն մի մասն էին կատարել, միացան բնակիչների հետ։ Ապստամբները Խազարների օգնութեան դիմեցին։ Ծագումով Հայ մի յայտնի զինուորական Փիլիպիկոս Վարդանէս, որին Տիբերիոսը հալածել էր և Յուստինիան Բ-ը յետ էր կանչել, ապստամբութեան գլուխն անցաւ։ Թեթև միջոցներով ձեռնարկած փորձը՝ Քերսոնը նորից ենթարկել կայսերական իշխանութեան անյաջող անցաւ։ Մի երկրորդ աւելի ուժեղ նաւատորմիղ Մաւրոս պատրիկիոսի առաջնորդութեամբ պաշարեց քաղաքը. արդէն աշտարակներից երկուսը կործանուել էին հռովմէական պաշարման մեքենաների հարուածներից, երբ հասաւ Խազարների օգնութիւնը։ Նաւատորմիղը զինադադար արեց, և բաւական

բնորոշ է թէ ինչքան ատելութիւն էր հաւաքուած խելացնոր յանցապարտի գլխին—միացաւ ապստամբների հետ։ Յուստինիանը լուր չստանալով իւր նաւատորմղի գործունէութեան մասին, իւր զօրքերով անցաւ ասիական ափը և շտապեց մինչև Սինոպէ որպէսզի Կրիմից լուր ստանայ։ Մինչ այդ Փիլիպպիկոսը արդէն գրաւել էր մայրաքաղաքը և ուղարկեց նրա դէմ իւր գործակցին՝ Սպաթարիոս Էլիասին որին Յուստինիանը առաջ Քերսոնի ոլքոն էր կարգել։ Դամատրիս դաշտավայրում բռնակալը մնալով անօգնական, ինչպէս որ արժանի էր, սպանուեց Էլիասի ձեռքով։ Նրա անչափահաս Տիբերիոս որդին արդէն աւելի առաջ սպանուել էր մայրաքաղաքում, որի ժամանակ ամենաանվայել կերպով ոտի տակ էին տուել եկեղեցու ապաստանարանի իրաւունքը։ Հերակլի տունը, որ տէրութիւնը ազատել էր Պարսիկներից և Արաբներից, արմատից ջնջուեց։

Փիլիպպիկոս (711-713) նոր կայսրը ցոյց տուեց իւր կատարեալ անընդունակութիւնը։ Բուլգարները Յուստինիանի վրէժն առնելու պատրուակաւ, ասպատական մի արշաւանք ձեռնարկեցին մինչև մայրաքաղաքի դռները։ 712 թ. Ամասիան և Միսթիան, 713 թ. Պիսիդիայի Անտիոքը ընկան Արաբների ձեռքը։

թերահաւատութիւնից, կամ գուցէ որպէսզի դրաւի իւր հայրենակից Հայերին—նա Հայերին նոր բնակութեան տեղեր տուաւ աւերակ դարձած Մելիտենէ քաղաքում և չորորդ Հայքում —կայսրը իւր արևելեան հոգևորականների համաձայնութեամբ, բայց Հին-Հռովմի բացարձակ ընդդիմութեամբ, մի անգամ էլ մի անցողական յաղթութիւն պատրաստեց միակամութեան դաւանութեան համար: Մինչ այդ՝ Թրակիայի Օպսիկիոն թեմի զինուորականների ապստամբութիւնը պատրաստեց նրա իշխանութեանը վաղաժամ վախճան: Հոգեգալստեան կիրակին 713 թ. մի յայտնի քաղաքային պաշտօնեայ, գաղտնի քարտուղար Արտեմիոսը Անաստաս Բ անունով 713-715 կայսր օծուեց: Սա իսկոյն մտքերը խաղաղացրեց վերահաստատելով օրթոդոքսութիւնը: Բայց նա ամենից առաջ իւր ուշքը դարձրեց կանոնաւոր ծրագրով կարգաւորելու զօրքը, որ երկար ժամանակուայ անիշխանական դրութեան պատճառաւ կատարելապէս քայքայուած և անհնազանդ էր դարձել: Խիստ պատժի ենթարկեցին վերջի դահակալութեան փոփոխութեան մասնակցողներին: Նա ընդհանրապէս շատ յաջող ձեռք ունէր զօրապետական իշխանութիւնը բաժանելու ամենակարևոր ինդրում: Լսելով որ Մոսլիմները մեծ պատրաստութիւն են տեսնում մայրաքաղաքին տիրելու, սրան ամրացրեց պաշտպանութեան համար, և նաւատորմիղն էլ հրաման ստացաւ Ռոդոսի մօտ ժողովուելու, որպէսզի Արաբների դէմ յարձակողական պատերազմ սկսելով նոցա առաջն առնեն: Բայց Օպսիկիոն թեմի զինուորները սովորած կայսր փոխելու, նորից խռովեցին, սպանեցին իրենց ծովապետին և նաւեցին մայրաքաղաքի դէմ: Գաւառական մի բոլորովին աննշան պաշտօնեայ, Թէոդոսիոս (715-717) հակառակ իւր կամքին, կայսր հռչակուեց: Մայրաքաղաքը դաւաճանութեամբ ընկաւ ապստամբների ձեռքը: Սակայն ամենանշանաւոր զօրապետները, Անատոլեան թեմի Լևոն և Հայկական թեմի Արտաւազդ հրամանատարները չընդունեցին նոր կայսր: Մինչ այդ Սուլթանն խալիֆը աւարտել էր իւր պատրաստութիւնը. նորա զօրապետները որ մտել էին Ասիա, Լևոնին թագ ունները որ մտել էին Ասիա, Լևոնին թագ առաջարկեցին: Սա ձևի համար նոցա հետ յառաջարկեցին: Սա ձևի համար նոցա հետ յարաբերութեան մէջ մտնելով, օգնութեան հարաբերութեան մէջ մտնելով, օգնութեան հասաւ նշանաւոր Ամորիոն քաղաքին որ պաշարուած էր: Արաբացոց մեծ զօրքը, առանց յիշատակութեան արժանի մի գործ կատարելու, ստիպուած էր աւերուած երկրից յետ քաշուել: Այժմ Լևոնը առանց արգելքի արշաւեց մայրաքաղաքի վրայ: Թէոդոսիոսը պատ-

բիարքի և սենատի համաձայնութեամբ հրաժարուեց գահից։ 717 թ. Մարտի 25-ն Լեւոն Գ-ը (717—741) կայսր հրատարակուեց։ Սարասափելի վտանգը, որին մարաքաղաքը ենթակայ էր Մոսլիմների կողմից, ազդել էր այդ վճռի վրայ։

Հերակլի տունը յոյժ թութեամբ պատերազմել էր Իսլամի դէմ։ Աւանդական պատմութիւնները զարմանքով գովում են Կարլ Մարտելին, որ Աբդրահմանին Պուատիէի մօտ ջարդել էր, և ոչ առանց հիմքի։ Բայց այդտեղ կատարելապէս մոռանում ենք արժանաւորապէս գնահատել Արևելահռոմի աւելի ուժեղ մեծագործութիւնը։ Սա իւր հարիւրամեայ մրցման մէջ յետ է մղել ոչ թէ աշխարհակալի վերջի շառաւիղին, այլ դէմ էր դրել նրա գլխաւոր ոյժի հարուածներին։ Արևմտեան քաղաքակրթութեան կիզակէտը և ապաստանարանը այն ժամանակուայ համար Փոքր Ասիան էր։ Նոր դաւանանքները, որ իբրև ճշմարիտ ուսմունք յայտարարւում էին քրիստոնէական աշխարհին պետութեան մէջ գումարուած բազմաթիւ ժողովներում, մեծաւ մասամբ փոքր ասիական եպիսկոպոսների մտածածներն են։ Փոքր ասիացիներն էին այն թեմերը կամ զօրաց մարմինները, որ յետ էին մղում արևելքի ժառանգական թշնամուն. Սլաւոններից ո-

ղողուած՝ պետութեան եւրոպական մասը այս թէ հետեւեալ շրջանում քիչ դեր է խաղում։ Փոփոխութիւն տեղի ունեցաւ միայն բուլգարասպան Բազիլիսկոսի յաջողութիւններով և երբ արևելքը անապատ դարձաւ զզուելի Սելջուկների յարձակումներից։ Իրաւ է շատ արագ էր տիրապետել զարհուրելի ուժասպառութիւնը։ Ամբողջ սերունդներ աւելի պատերազմական դրութիւնը զօրքը կատարելապէս վայրենացրել էր. նա կատարելապէս վրստահիւ արտակարգ նշանակութեան վրայ, իշխում էր անսահմանափակ։ Ամենալաւ ժամանակն էր, որ մի երկաթէ բռունցք կարգ և օրէնք հաստատէր։ Եւ երևաց այն մարդը, որ արեան և երկաթի միջոցաւ պէտք է գործուի բերէր տէրութեան վերածնութիւնը։

Դ.

ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆ

ՍԻՐԻԱԿԱՆ (ԻՍԱՒՐԵԱՆ) ԿԱՑՍՐՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

ԵՒ

ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ

(717—867)

Լեւոն Իսաւրացու [1] գահ բարձրանալը տէրութեան պատմութեան մէջ նշանաւոր յեղաշրջաններից մէկն է, և իսկական ընդհանուր պատմական նշանակութիւն ունեցող բոպէ է։ Արաբների վերջին, բայց ամենասարսափելի վտանգը այդ հանճարը իբրև զօրապետ ընդմիշտ ոչնչացրեց։ Նա ներկայանում է պետութեան իսկական վերանորոգիչ՝ զօրքը վերանորոգելով, տնտեսութիւնը կանոնաւորելով և վարչական կազմը կարգաւորելով։ Սիրիական հարստու-

[1] Ես գործ եմ ածում այդ մականունը որ ամբողջ դարերի սխալով արքագործուած է, քանի Լեւոնը ծագում է Գերմանիկէից, հեռաւոր Սիրիացի էր։

թեան ժամանակ Հռովմայեցոց կայսրների բազմաչարչար հպատակների համար ծագում է աւելի լաւ ապագայի արշալոյս։ Սակայն այս մեծ կառավարիչն էլ չունէր իւր Աքիլլեսեան գարշապարը։ Նա ևս այն ոյժի-մարդկանց նման էր, որոնք արտաքին քաղաքականութեան և պատերազմի դաշտում յաջողակ լինելով, սխալ համոզման մէջ են ընկնում՝ թէ կրօնական մի զօրութիւն ինչպիսին եկեղեցին է, կարող է արտաքին ոյժով և օրէնքների յոդուածներով ընկճուել պետութեան լծի տակ։ Վարդապետ պատմագիրները միակողմանի շեշտել են նրա այս ծանր սխալը, և դրանով նսեմացրել մեծ զինուորականի և քաղաքագէտի պատկերը։

Լեւոնի կառավարութեան առաջին տարին է ընկնում Կոնստանդնուպօլսի յիշատակութեան արժանի պաշարումը։ Մ՝ասլամանը, որ պիրել էր Պերգամոնին և ձմերել Ասիայում 717 թ. ամառը Աբիւդոսի մօտից անցաւ Հելեսպոնտը։ Օգոստոսի միջին նա բանակ դրեց մայրաքաղաքի առաջ, և սեպտեմբերի սկզբին Սուլէյմանի առաջնորդութեամբ հասաւ նաւատորմիղը։ Սակայն պաշտպանութիւնը Լեւոնը առաջ տարաւ նոյնքան մեծ խելքով ինչքան և եռանդով։ Յունական կրակը ոչնչացնում էր նաւերը։ Թէև մոսլիմները ամենամեծ տոկունութեամբ դիմացան արտասովոր ձմրան խիստ ցրտերին, և մի ամբողջ

տարի համբերեցին մայրաքաղաքի առաջ, վերջապէս ստիպուած էին 718 թ. օգոստոսին ահագին կորուստներ կրելուց յետոյ, յետ քաշուել Ասորիք։ Այս դէպքի ընդհանուր պատմական նշանակութիւնը շատ դժուար է ըստ արժանոյն գնահատել։ Արաբների յառաջ խաղալը իւր գագաթնակէտին հասաւ. Բիւզանդիոնը և իւր կայսրը նոցա յետ վանելով՝ ազատեցին քրիստոնէութիւնը և արևմուտքի քաղաքակրթութիւնը։ Դեռ այսօր էլ Ակաթիստոս շաբաթանի մէջ օրթոդոքս եկեղեցին գոհունակութիւն է յայտնում երեք մեծ հերոսներին՝ Հերակլ, Կոնստանդին Դ և Լեւոն Գ-ին, որոնք ազատեցին երկիրը Աւարների, Պարսիկների և Արաբների վտանգից։ Լեւոնի իշխանութեան օրով դարձեալ յաճախ կրկնուեցին մոսլիմների յարձակումները Փոքր Ասիայի վրայ. բայց դրա այլևս տէրութեան համար հոգսերի առարկայ չէին, և 740 թ. Արաբների դէմ մի մեծ և վճռողական յաղթութիւն տարան Ակրոյինոսի մօտ։ Հիւսիսի զօրեղ պետութեան հետ լաւ յարաբերութիւն հաստատեցին նրանով, որ գահաժառանգ Կոստանդինը ամուսնացաւ Խազարների Էյրենէ իշխանուհու հետ։ Երկրի ներսի ապստամբութիւնները կայսրը խորտակում էր արագ գործողութեամբ։ Սիկիլիան, որ ապստամբուել էր մայրաքաղաքի պաշարման

ժամանակ և մէկին հակաթոռ կայսր էր հրատարակել, առանց նեղութեան նորից ընկճուեց։

Երբ այդպիսով ներքուստ և արտաքուստ ապահովեցրել էր երկիրը, մեծ կայսրը կարողացաւ մտածել պետութեան վերածնութեան մասին։ Թէ նա ինչքան եռանդով աշխատում էր օրէնսդիրութեան համար, ապացոյց կարող է ծառայել իւր և իւր կայսրակից Կոստանդին որդու հետ միասին հրատարակած «Ընտրութիւն օրինաց» որ գոյութիւն ունեցող օրէնքների համար մի համառօտ ձեռնարկ էր, և որի մէջ երևում է օրէնքների մէջ կատարուած դարերի զարգացումը՝ քրիստոնէութեան ազդեցութեան տակ։ Երկրագործութեան վերաբերեալ կարգադրութիւնները (nomos georgikos) որով կանոնաւորւում էին հողատէրերի և ազատ հողատէր գիւղական համայնքների յարաբերութիւնները վարձակալների հետ, սկիզբն են առել այն հանգամանքից, ինչպէս հաւանականօրէն ենթադրում են, որ երկրի մէջ գաղթել են այլ և այլ օտար ազգեր (Մարդաիտներ և Հայեր՝ Փոքր Ասիայում, Սլաւոններ՝ Հեմուս թերակղզում)։ Բնորոշ է որ այդ նոր վարձակալներն ու գիւղացիները՝ հակառակ հներին, հողի հետ միացած գաղութներ էին՝ անձնապէս ազատ։

Ինչ ամենից առաջ նա իւր խնամքը դարձրեց զօրքի վրայ։ Թուլացած կարգապահու-

թիւնը վերահաստատուեց, և թէ ինչքան մնայուն էին զօրքի վերաբերեալ նրա կարգադրութիւնները, ապացուցանում են իւր սեպհական և իւր որդու զինուորական յաջողութիւնները։ Դրա հետ միասին կապուած է նրա կարգաւորութիւնը նահանգների մասին։ Թեմերի հաստատութիւնը, ինչպէս Հերակլեանների հաբբաստեան ժամանակ ստեղծուել էր աստիճանաբար՝ շնորհիւ ժամանակի նեղութիւնների և պետական թշնամիների պատերազմների, Լեւոնի ձեռքով ստացաւ իւր վերջին ձեւակերպութիւնը։ [1] Դանձարանը Փիլիպիկոսի վատ-

[1] Այն ժամանակուայ թեմերն էին՝ Ասիայում. 1. Օպսիկիոն, 2. Անատոլիկոն, 3. Թրակեսիոն, 4. Արմենիակոն, 5. Կիբիրայոտիկոն, 6. Բուկելարիոն 7. Կոլոնեյա։ (՞.)

Եւրոպայում. 1. Թրակէ, 2. Հելլաս Պելոպոնեսի հետ, 3. Մակեդոնիա (՞), 4. Սիկիլիա Կալաբրիայի հետ։

Վերջապէս Կոստանդինոս Պորփիւրոգենեսոսը ԺԸ-րդ դարու սկզբում թուում է. Ա. Ասիայում՝ 1. Անատոլիկոն, 2. Արմենիակոն, 3. Թրակեսիոն, 4. Օպսիկիոն, 5. Օպտիմատոն, 6. Բուկելարիոն, 7. Պափլագոնիա, 8. Խալդիա, 9. Մեսոպոտամիա (Միջագետք) 10. Կոլոնեյա, 11. Սեբաստեյա, 12. Լիկանդոս, 13. Սելեւկիա, 14. Կիբիրայոտիկոն, 15. Կիւրոս, 16. Սամոս. 17. Էգեյեան ծովը. 18. Կապպադովկիա։

Բ. Եւրոպայում՝ 1. Թրակէ, 2. Մակեդոնիա, 3. Ստրիմոն, 4. Թեսաղոնիկէ, 5. Հելլաս, 6. Պելոպոնես, 7. Կեֆալենիա, 8. Նիկոպօլիս, 9. Դիրոսախիոն, 10. Սիկելիա, 11. Լոնգիբարդիա, 12. Խերսոն։

նելով, և արաբական պատերազմների մեծ ծախսերով սաստիկ դատարկուել էր. միայն խիստ անաչառական օրէնքներով հարկ էր կարգը վերականգնել, հարկերի ծանրութիւնը վարչական միակ միջոցն էր, որ արեւելցիներն էլ էին խիստ զգում, որոնք այլապէս համբերող են և սարուկ։ Ժողովուրդը աւելի երանի էր տալիս արաբական իշխանութեան տակ եղող քրիստոնեաներին. և կայսեր կոչում էր նոր Փարաւոն։ Սակայն պետութեան անաւարութեան մէջ վերահաստատուեց հաւասարակշռութիւնը։

Բայց և այնպէս պետութեան վերածնութեան համար կատարուած այս մեծագործութիւնները չեն, որ պահպանել են կայսեր յիշատակը յետագայ սերունդների մէջ, որոնք իրաւ է արտակարգ թշնամաբար էին վերաբերուում դէպի նրան, այլ եկեղեցական վէճերը։ Պատկերամարտութիւնը ծագում է փոքր ասիական արմատից։ Պետութեան եկեղեցու միութիւնից հեռանալ համոյնքները ներսում և թերակղզու արեւելքում (Մոնոֆիսիտները, Պաղիկեանք) դէմ էին գոյութիւն ունեցող պատկերապաշտութեան՝ իբրև անաստուածութեան։ Փռիւգիայի Ի եպիսկոպոս՝ Կոստանդինոս Նակոլէյա քաղաքից ընդունեց այդ ուսմունքը և հետեւողներ գտաւ նոյն իսկ բարձր հոգեւորականութեան մէջ։ Իսլամի մեղադրանքը՝

ուղղուած պատկերների, նշխարների և սրբերի պաշտամանն դէմ, թէ Քրիստոսի հաւատը բազմաստուածութիւն է, ապաւորութիւն էր թողնում զարգացեալների վրայ և մտածել տալիս։ Ուստի կայսրը, երբ նա իւր 726 թ. հրովարտակով հանդէս դուրս եկաւ պատկերապաշտութեան դէմ, ենթակայ էր այն կրօնական հոսանքին որ ասիական նահանգներում խորը տարածուել էր։ Աւելի ուժեղ էր ամբողջ պետութեան միւս մնացած մասի ընդդիմութիւնը։ Ամենից առաջ ամեն տեղ վարդապետները սկսեցին պաշտպանել պատկերապաշտութիւնը և դրանով՝ յունական եկեղեցու առանձնայատկութիւնը։ Վարդապետների համար պատկերներ նկարելը ապրուստ վաստակելու գլխաւոր ապրիւրներից էր, հետևապէս պատկերամարտութիւնը գոյութեան կռիւ։ Մայրաքաղաքի բնակիչների յուզմունքը կարելի եղաւ հանդարտացնել միայն զէնքի ոյժով։ Սրբերի պատկերական պաշտամանը մանաւանդ ամուր կպած էին Յունաստանի և կղզիների բնակիչները, որոնց աչքում նոքա բռնել էին իրենց հին ցեղական աստուածների և հերոսների տեղերը։ Նոցանից զինուած մի նաւատորմիղ, մի հակաթոռ կայսեր առաջնորդութեամբ 727 թ. նաւեց մայրաքաղաքի դէմ. բայց սոքա զոհ գնացին յունական

կրակին, ինչպէս երբեմն Սալամինեան մարտիկները, որ կռուում էին հելլենական հայրենի աստուածների համար։

Երբ նոյն տարին կայսերական հրովարտակը պատկերների մասին հասաւ Իտալիա, Գրիգոր Բ պապը իրան յայտարարեց նրան դէմ և բանադրեց կայսերական էքսարխին։ Ամբողջ նահանգը դիմեց բացարձակ ապստամբութեան և միացաւ Լանգոբարդների հետ։ Սակայն Վենետիկեցոց հաւատարմութիւնը, ինչպէս նաև Պապի բռնած խելացի քաղաքապետական դիրքը, արգելք դարձան Արևելահռովմի կառավարութեան հետ կատարեալ պառակտմանը. և միանգամ էլ ազատուեց բիւզանդական տիրապետութիւնը Իտալիայում։

Կռիւը անցաւ սահմաններից դուրս։ Ալիֆի ուղղահաւատ հպատակները եռանդով պաշտպանում էին պատկերապաշտներին. նոցա դատը գրականութեան մէջ ամենից առաջ փայլուն կերպով պաշտպանում էր Յովհաննէս Դամասկացին։ Աւելի վճռողական դանուեց Լեոնը։ Տիեզերական Գերմանոս պատրիարքը՝ որ պատկերապաշտութեան ջերմ պաշտպան էր, ստիպուած էր 729 թ. տեղի տալ Անաստասին՝ որ կայսեր համախոհներից էր։ Իրաւ է անյաջող անցաւ Հռովմին և Իտալիային նորից տիրապետել. 731 թ. արևելա-

հռովմէական նաւատորմիղը ոչնչացաւ Ագրիա-կան ծովում. բայց Ստորին Իտալիայում և Սիկիլիայում՝ որտեղ մնացել էր Յունաց իշխանութիւնը՝ յարքունիս դրաւեցին Ս. Պետրոսի կալուածները: Այդ երկիրները և ամբողջ Իլլիւրիկում՝ որ մինչ այդ ենթակայ էին Հին-Հռովմի պապերին՝ ենթարկուեցին Կոստանդնուպոլսին: Պատկերամարտութիւնը ասպիճանաբար պարզ կերպով շահերի կռիւ էր դարձել: Մի կողմը կանգնել էին բարձր պաշտօնեաները և նմանապէս եպիսկոպոսները՝ որ կայսեր էին յատկացնում եկեղեցին պահպանելու և կառավարելու իրաւունքը՝ միւս կողմից ժողովրդի համակրութեան վրայ յենուած վարդապետներն էին՝ որոնք բացասում էին աշխարհական իշխանութեան որևէ միջամտութիւն հոգևորական գործերում:

Երբ Լեւոնը 741 թ. Յունիս 18-ն[1] մեռաւ և իշխանութիւնը թողեց իւր հասակն առած

[1]. Է եւ Ը դարերի ժամանակները գլխաւորապես կրկնուած են Թեոփանէսի՝ շատ անգամ միայն մօտաւորական ճիշտ թուերը: Այդ ամբողջ շրջանը ժամանակագրական տեսակէտից՝ պէտք է նորից հիմնովին ուսումնասիրուի կանոնաւոր կերպով՝ ի նկատի առնելով ասորական, արաբական եւ հայկական ուսումնասիրութիւնները, որովհետեւ մինչեւ օրս որոշ վանողական աղբիւրների յեն հասել Պագիսի, Դուշշմիտի եւ Բուրիւսի դատողութիւնները:

ու եռանդուն Կոստանդին Ե. որդուն (Կոպրոնիմոս 741—775) կռիւը իւր կատարեալ բորբոքման մէջ էր: Կայսեր անները՝ Հայազգի Արտաւազդը օգտուելով պատկերապաշտների գոգոմունքից և զօրքի մէջ բազմաթիւ Հայերի յատուկ համակրանքից՝ ապստամբեց: Մայրաքաղաքը և պատրիարքը անցան նրա կողմը: Միայն երկամեայ պատերազմից յետոյ Կոստանդինը կարողացաւ նորից վերցնել մայրաքաղաքը և կատարել հակաթոռ կայսեր դժը:

Այդպիսով կայսրը կատարելապէս հաստատելով իւր իշխանութիւնը՝ մեծ յաջողութեամբ առաջ տարաւ պատերազմը արտաքին քաղաքականութիւնը: Արաբների դէմ կռուում էր բացարձակ յաջողութեամբ: Մի մեծ նաւատորմիղ՝ որ նորից պէտք է խլէր Կիպրոսը Յոյներից՝ 746 հիմնովին խորտակուեց: Դերմանիկէյա՝ Մելիտենէ (Մալատիա) և մինչև անգամ Թէոդոսուպոլիսը Հայաստանում (752 թ.) վերստին գրաւեցին: Յօգուտ Հռովմայեցիների ծառայեց խալիֆի աէրութեան խռովութիւնները՝ որ սկսեցին Օմանիդների կործանումով և Աբբասիդների հաստատութիւնով. իրաւ է 756 թ. իրերի դրութիւնը նորից փոխուեց:

Ամենամեծ զօրութեամբ կայսրը պատերազմում էր Բուլգարների դէմ: Ոչ պակաս

քան ուժ անգամ գուրս եկաւ դաշտ նոցա դէմ։ Ծանր պարտութիւնները նրան չէին յուսահատեցնում, և 763 թ. փայլուն յաղթութիւնը առաջ բերեց թշնամու երկրում դահակալական փոփոխութիւններ և Բուլգարների կատարեալ թուլութիւն. միայն Կոստանդնի կառավարութեան վերջի ժամանակները Գերիկը (Ցելերիդոս) վանդաւոր դարձաւ։

Ամբողջ Հելլասի և Պելոպոնէսի սլաւոնանալը յիշում է միայն մի տարբեր, որ այդ դէպքը կապում է Կոստանդնի կառավարութեան ժամանակ՝ 746 թ. պատահած սարսափելի ժանտախտի հետ, որ պետութեան համար այնպիսի մի հարուած էր, ինչպէս Յուստինիանի ժամանակուայ ժանտախտը։ Սակայն կայ անժխտելի վկայութիւն, որ Սլավոնները Պելոպոնէսում Լեւոնի ժամանակ արդէն հին բնակիչներ էին։ Մենք արդէն տեսանք, որ հելլենական նահանգների սլավոնանալը, որը Պելոպոնէսի վերաբերմամբ սահմանափակուած մնաց միշտ երկրի միայն մի քանի մասերում, անհամեմատ աւելի շուտ էր սկսուել։

Եկեղեցու հետ կռուի մէջ կայսրը անհամեմատ աւելի ծայրահեղ էր և խիստ քան իւր հայրը։ Նա փորձեց պատկերապաշտ վարդապետների ընդդիմութիւնը կոտրել՝ կանոնաւոր

հալածանքներ յարուցանելով, որ կառավարութեան վերջին տարիները աւելի սաստկացաւ արիւնալից մարտիրոսութիւններով, վանքերի կալուածների խլելով և ուխտաւորներին՝ աշխարհական դարձնելով։ Նրա թեթեւամիտ ծաղրը եկեղեցու հաւատի մասին՝ սարսափ ազդեց նոյն իսկ արքունի պատրիարքներին, որոնք նրան խիստ ենթակայ էին։ Սակայն եպիսկոպոսութիւնը միացաւ կայսերական եկեղեցական քաղաքականութեան հետ և այդ՝ հանդիսաւոր կերպով արքացած յայտարարեց 754 թ. կրօնական ժողովի մէջ, թէև այդ որոշումները չընդունեցին ոչ արևելքի պատրիարքները և ոչ էլ Հռովմի պապը։ Իւր կայսրութեան ամբողջ ընթացքում կայսրը ամենայն վճռողականութեամբ և խստութեամբ ամուր պահպանեց վարդապետների և պատկերների դէմ վարուելու իւր ընտրած եղանակը։

Նրա որդի Լեւոն Դ-ը (775 780) իւր կարճաւուր կառավարութեան ժամանակ մասամբ չափաւորացրած, բայց անփոփոխ պահեց իրենից նախնեաց ժամանակուայ եկեղեցական քաղաքականութեան հիմունքները։ Արաբների հետ անընդհատ շարունակուող սահմանային կռիւները Գերմանիկէի մօտ 778 թ. յաղթութիւնով Յոյների համար յաջող վախճան ունեցան։

Սրա մահուանից յետոյ (8 Սեպտեմբերի 780) նրա փոքրահասակ Կոստանդին Զ որդու փոխարէն կառավարութեան դեկը ձեռն առաւ խելօք և չափազանց փառասէր Էյրենէ կայսրուհին՝ մի խումբ պալատականների հետ ի միասին, որոնց մէջ ամենանշանաւոր և ազդեցիկն էր Պատրիկիոս Սատրակիոսը։ Արաբասիդների հետ սահմանային պատերազմը շարունակուում էր, որի դաշտը բացառապէս յունական Փոքր-Ասիան էր։ Պատերազմները Յունաց համար դժբախտ վախճան ունեցան և կայսրուհին ստիպուած եղաւ 783 թ. եռամեայ զինադադարը դնել հարկ վճարելով տարեկան 70,000 ոսկի։ Հարուն-ատ-Ռաշիդը 786 թ. մի շարք ամրութիւններ շինեց, որ յետոյ փոյլուն ծառայութիւններ մատուցին և որ հասցնելով Մալաթիայից մինչև Տարսոն, դրանով Հռոմայեցիներին խիստ դգալի դարձրեց իւր զինուորական գերազանցութիւնը։ Սատրակիոսը աւելի յաջող պատերազմ էր մղում Բալկանեան թերակղզու վրայ։ Նա ստիպեց Մակեդոնիայի և Հելլասի սլաւոնական իշխաններին հարկ վճարել և յաղթանակով անցաւ ամբողջ Պելոպոնէսի վրայով։

Աւելի նշանաւոր էր այն, որ կայսրուհին յաջողեցրեց վերականգնել եկեղեցու խաղաղութիւնը՝ չնայած զինուորական կուսակ-

ցութեան և բարձր հոգևորականութեան ընդդիմութեանը։ Տիեզերական ժողովը, որ սկզբում որոշուած էր մայրաքաղաքում գումարել, բայց յետոյ կայսերական պահապան գնդի բռնած սպառնական դիրքի պատճառաւ 787 թ. բացին Նիկիայում, որը ոչնչացած հրատարակեց 754 թ. կեղծ ժողովի որոշումները, վերահաստատեց օրթոդոքսութիւնը և պատկերների պաշտամունքը պարտադիր արաւ հաւատացեալների համար։ Ըստ այնմ էլ նորից խաղաղութիւն հաստատուեց Հռոմի և արևմուտքի մէջ։ Դաւանաբանական տեսակէտից վարդապետական կուսակցութեան յաղթութիւնը կատարեալ էր, բայց կայսրութիւնն իրան վերապահեց կառավարչական իրաւունքը եկեղեցական բարձրագոյն վերահսկողութեան խնդրում։ Ռուսի եկեղեցու բացարձակ ազատութեան ներկայացուցիչները՝ Պատոն վարդապետը և նրա եղբօրորդի մեծն Թէոդորոս Սատուդիոնցին անընդհատ լարուած յարաբերութեան մէջ մնացին կառավարութեան և կայսեր ենթակայ Տարասիոս և Նիկեփորոս պատրիարքների հետ։

Ամենամեծ վճռողականութեամբ Էյրենէն իւր ձեռին պահեց կառավարութեան դեկը նաև երբ իւր որդին մեծացաւ։ Նա ինքնակամ 788 թ. լուծեց որդու հարանիսաուն-

թիւնը Ֆրանկների իշխանութիւնի հետ, որ քաղաքականութեան համար մեծ նշանակութիւն ունէր և սոխակց ուրիշի վրայ ամուսնանալ։ Բայց զօրագնդերի ապստամբութիւնը 790 թ. միապետութիւնը տուաց Կոստանդինին։ Սա հաւատարիմ իւր տան աւանդութեան՝ քաջութեամբ կռուեց Բուլգարների և Արաբների դէմ, թէև ընդհանրապէս անյաջող։ Սակայն 792 թ. մեծ սխալ գործեց երբ իւր փառասէր ու անխղճմտանք մօրը Նորից պաշտօնակից կարգեց։ Նրա դաղտնի գործն էր, որ կայսրը բաժանուեց իւր նախկին կնոջից և նորից 795 թ. ամուսնացաւ Թէոդոտէ պալատական օրիորդի հետ։ Որովհետև արքունի հոգևորականութիւնը, ամենից առաջ պատրիարքը, այդ բանը լռութեան տուեց, խիստ ուղղութեան հետևող անձինք, որոնց պաշտպանում էր Էյրենէն՝ Պղատոնը և Թէոդորոսը և սոցա հետևող վարդապետական կուսակցութիւնը հրաժարուեցին եկեղեցական հաղորդակցութիւն ունենալու Կոստանդնի և նրա պատրիարքի հետ։Կայսեր նշանակուած պատիժները՝ բանտ և աքսոր, վարդապետներին դարձրին եկեղեցական ազատութեան մարտիրոսներ և ինչպես խարդախ Էյրէնէի ծածուկ ցանկութեան, աւելի մեծացրին նրա որդու անժողովրդականութիւնը։ Երբ սա անվիտ կարգադրութիւններով իրանից խլեց նաև զօրագնդերի սրտերը, Էյրենէն հասկացաւ գրաւել սոցա։ Կոստանդինը մատնուեց, կալանաւորուեց և իւր հրեշաւոր մօր հրամանաւ կուրացաւ 15 Օգոստոսի 797 թ։

Նորից միապետ դարձած կայսրուհու փոխարէն իշխանութիւնը վարում էին նորա ներքինիները, սկզբում Ստաւրակիոսը (մեռաւ 800 թ.), յետոյ Այետիոսը, որոնք իրանց բռնութիւններով կատարեալ դաւաճանութեան էին հասնում։ Էյրենէն Արաբներից խաղաղութիւնը գնեց դարձեալ փող վճարելով։

Կարլոս մեծի կայսր օծուելը 800 թ. Դեկտեմբերի 25-ին արևմուտքի համար մեծ նշանակութիւն ունեցող մի դէպք էր։ Հռովմէական եկեղեցական իշխանութիւնը դրաւոր յայտարարեց իւր միաւորութիւնը Ֆրանկների պետութեան հետ, և երկրորդ մայրաքաղաքը՝ Հին—Հռովմը ընդ միշտ անջատուեց արևելքից։ Այժմից սկսած ամենայն իրաւամբ կարելի է խօսել արևմտահռովմէական պետութեան մասին։ Սակայն Բիւզանդիոնը չհասկացաւ յարաբերութիւն հաստատել այդ նոր մեծ պետութեանը հետ։ Ֆրանկների կռիւները Արևելահռովմի խաղաղական սեպհականութիւնների մասին Էյրենէի կառավարութեան ժամանակ չվերջացան։

Ամենազօրաւոր պաշտօնեաների և մեծամեծների դաւադրութեամբ 802 թ. Հոկտեմբերին Էյրենէն դահակալ եղաւ և նրա տեղը բռնեց այն ժամանակուայ ելևմտից ընդհանուր նախարար Նիկեփորոսը (802-811)։ Արդէն մի տարի յետոյ Լեսբոս կղզու վրայ նախկին կայսրուհին խեղճութեան մէջ մեռաւ, ինչպէս որ արժանի էր։ 85-ամեայ կառավարութիւնից յետոյ կործանուեց սիրիական հարստութիւնը. այդ առաջին անգամն էր, որ այդպիսի փոփոխութիւն կատարւում էր քաղաքային պաշտօնեաների դեկավարների և ոչ թէ զօրքի ու նրա առաջնորդների ձեռքով։

Նիկեփորոսը իրան ցոյց տուեց միանգամայն իբրև լաւ կայսր։ Նրա տնտեսական խիստ կարգադրութիւնների պատճառաւ նրան չէին սիրում, բայց այդ անհրաժեշտ էր Էյրենէի վատնիչ կառավարութիւնից յետոյ։ Հարկից ազատ չմնացին նաև եկեղեցական կալուածները, և նա լաւ էր հասկանում զգալի կացուցանելու իւր վերահսկողութիւն եկեղեցու վրայ։ Նիկեփորոս նոր պատրիարքը (806) ընթանում էր նրա հետ միանգամայն ձեռք ձեռքի տուած. և վարդապետական կուսակցութեան անհաշտ ներկայացուցիչներին աքսոր էին քշում։ 803 թ. Կարլոս Մեծի հետ խա-

պաղութիւն կապեցին և դրանով ապահովեցին Արևելահռովմայեցիների տիրապետական իրաւունքները Ստորին—Իտալիայի, Վենետիկի, Իստրիայի և դաղմատական ափերի վրայ։ Բայց 805 թ. Վենետիկը բաժանուեց, և միայն Միքայէլ կայսեր ժամանակ 812 թ. վերջնական խաղաղութիւն հաստատուեց։ Աւելի դժբախտ էին նրա պատերազմները Արաբների դէմ։ Երբ նա հրաժարուեց հարկ վճարելուց, կայսերական զօրքը սկսեց ծանր պարտութիւններ կրել և սահմանի մի շարք բերդեր ընկան թշնամու ձեռքը։ Կիպրոսը և Ռոդոսը կանոնաւոր կերպով ասպատակւում էին. կայսրը ստիպուած էր 806 թ. աւելի ստորացուցիչ պայմաններով ընդունել խաղաղութիւնը։

Պեռութեան պատմութեան մէջ դարէշրջան է կազմում սլաւոնական տարրերի յետմղումը որ սկսեց այդ ժամանակը։ 807 թ. Պատրէի քաջ քաղաքացիները մի փառաւոր յաղթութիւն տարան Պելոպոնէսից ներս խուժող Սլաւոնների դէմ։ Թէև ծովի կողմից սոցա օգնում էին Ափրիկայի մոսլիմները։ 810 թ. սկսած տէրութիւնը կռանդով իրան նուիրեց մի մեծ նպատակի. հելլենական կանոնաւոր դաստիարակութիւններով նորից յետ խլել Յունաստանի այն գաւառները ուր սլաւոնական բնակութիւն էր հաստատուել։ Միան-

գամոյն խելացի էր որ կայսրը իւր բոլոր ոյժերը ուղղեց Բուլգարների տէրութեան դէմ, որը Կրում պատերազմասէր իշխանի օրով նոր վտանգաւոր ոյժ էր դարձել։ 809 թ. Սերգիկէն ընկել էր։ Երկու տարի մեծամեծ պատրաստութիւնից յետոյ Նիկեփորը որոշեց հիւսիսային պետութեանը զօրեղ հարուած տալ։ Սակայն սկզբում թէև յաջող, մի մեծ ճակատի մէջ 26 Յուլիսի 811 թ. կայսրը կորցրեց դահը և կեանքը։ Մակեդոնիան և Թրակիան զոհ գնացին յաղթողներին։

Ստաւրակիոսը՝ նրա որդին, որ ծանր վիրաւորուած ազատուել էր պատերազմի դաշտից, ստիպուած էր արդէն 811 թ. Հոկտեմբերի 2-ին իշխանութիւնը յանձնել իւր Ռանդաբէ Միքայէլ Ա բարեպաշտ փեսային, որը գտնուելով միանգամայն խիստ կրօնասէր կուսակցութեան ձեռքում, պատերազմի ծրագիրը կազմել էր տալիս Ստուդիտների վանահօրից, իսկ Բուլգարների առաջ ցոյց տուեց իւր չափազանց անընդունակութիւնը։ Զօրքը և ժողովուրդը բուռն կերպով պահանջում էին ամենաընդունակ զօրավար՝ Հայազգի Լեւոն Ե-ին (813—820) «պաշտպանել հայրենիքի շահերը, և ազատել քրիստոնեայ տէրութիւնը»։ Զգալով իւր սահմանելիք գործի ծանր պատասխանատուութիւնը՝ Լեւոնը տատանւում էր։ Նա յետոյ զինջաւ միայն պարտաճանաչութիւնից դրդուած։ Բուլգարները բանակել էին մայրաքաղաքի առաջ։ Կայսեր մի դաւաճանական յարձակման շնորհիւ Կրումի վրայ, մինչդեռ խաղաղութեան համար հաղորդակցութեան մէջ էին, շրջակայ նահանգները ենթարկուեցին սարսափելի աւարառութեան։ Անդրիանուպոլիսը ընկաւ Բուլգարների ձեռքը։ Ուստի բուլգարական իշխանի յանկարծական մահը Արևելահռոմի համար մեծ բախտաւորութիւն էր։ Եւ երբ Լեւոնը 817 թ. Մեղեմբրիայի մօտ մի արիւնալից յաղթութիւն տարաւ և ապա մտաւ Բուլգարների երկիրը, սոյա Օմորտագ իշխանը ստիպուեց երեսնամեայ խաղաղութեան դաշն կապել Հռոմայեցիների հետ։ Արևելքում Լեւոնը յաջողութեամբ պաշտպանում էր սահմանը Աբբասիդների դէմ. և նմանապէս Սիկիլիան հանգստութիւն գտաւ սպառնական ծովահէններից, երբ նա դաշն կապեց ափրիկեան Ագլաբիդների հետ։

Աւելի կործանիչ էր նրա արած քայլը եկեղեցական խնդիրներում։ Անձնապէս նա ճշմարիտ բարեպաշտ էր և իսկապէս համբերող. բայց զօրքի և հոգևորականութեան մի մասից դրդուած՝ թողեց Նիկեփոր կայսեր խելացի եկեղեցական քաղաքականութիւնը և

հանդէս եկաւ պատկերապաշտութեան դէմ։ Դրա հետեւանքն այն եղաւ, որ պատրիարքի պետական եկեղեցական կուսակցութիւնը և Թէոդորոս Ստուդիոնի եկեղեցական ազատութեան նախանձախնդիր կուսակցութիւնը— «Politichi և Zelenti»—միացան կառավարութեան դէմ գործելու։ Արդէն քաղաքական հալածանաց քայլեր էին, որ գահից զրկեցին զառամեալ և ընդհանուրից սիրուած Նիկեփորոս պատրիարքին և նրա տեղը բաւական անցաւոր կերպով նշանակեցին Թէոդորոս Մելիսենոս պապատականին (815), և ապա ժողով գումարեցին որ վերահաստատեց 754 թ. հակապատկերապաշտ որոշումները և նզովեց պատկերապաշտներին։ Սակայն կայսրը առանձին մեծահոգութեամբ և չափաւորութեամբ վարուեց իւր եկեղեցական հակառակորդների հետ։ Երբ նա 820 թ. Զատիկնեաց տօնին զոհ գնաց իւր ընկեր Միքայել զօրապետի սարքած դաւադրութեանը, նոյն իսկ պաշտօնազուրկ պատրիարքը յայտարարեց, որ սպանուած կայսրը մեծ ծառայութիւն է մատուցել և նպաստել տէրութեան երջանկութեանը։

Միքայել Բ-ը (820-829) Ամորիոնից, փռիւգական նոր հարստութեան հիմնադիրը, կրօնապէս բացարձակ անտարբեր էր։ Նա էապէս ամուր պահպանելով իւր նախորդի եկեղեցական քաղաքականութիւնը, սակայն անսահման համբերութեամբ նպաստեց օրթոդոքսներին։ Բայց և այնպէս նրա իշխանութիւնը այնքան էլ հաստատուն չէր։ Երկու անգամ գահին բռնի կերպով տիրապետելը աղդել էր վարակիչ եղանակաւ։ Թոմաս ծեր զօրապետը, որ զինուորներից շատ էր սիրուած, և Լեւոնի ու Միքայէլի նախկին զինակիցն էր, 822 թ. ապստամբուեց Փոքր-Ասիայում, և համարեա բոլոր երկիրն ընկաւ նրա ձեռքը։ Ապըստամբութիւնը անատեսական-յեղափոխական իմաստ վտանգաւոր գոյն ունէր, որովհետև ժողովրդի ամենատարրին խաւերից էին մեծ բազմութեամբ միանում ապստամբի հետ։ Սա յարաբերութեան մէջ մտաւ Արաբների հետ։ և նոցա թոյլտուութեամբ Անտիոքի պատրիարքը նրան օծեց կայսր։ Բայց նրա կրկնակի փորձը (822 և 823 դարնանը) վերցնել մայրաքաղաքը, անյաջող անցաւ կայսեր և իւր Թէոփիլոս որդու հմուտ պաշտպանութեան շնորհիւ։ Թոմասը Թրակիայում Բուլդարներից Զարդ կրելով, մտաւ Արկադիուպոլիս։ Երբ քաղցած քաղաքը անձնատուր եղաւ 824 թ. հոկտեմբերին ապստամբը սովորական տանջանքներով մահուան դատապարտուեց։

Բայց տէրութեան համար ամենամեծ վտանգը սպառնում էր ափրիկեան և սպա-

նիական Արաբների ծովային ամոզ ոյժից։ Կորդովայից արտաքսուած ապստամբները հաստատուել էին սկիզբը Եգիպտոսում (815 թ.) և այնտեղից 823 թ. ի վեր սպառնում էին Կրետէին։ Այդ խառնակ ամբոխը, որին Եգիպտոսից էլ արտաքսեցին, Աբու Հաֆս Օմարի առաջնորդութեամբ մտաւ կղզին և 826 թ. բոլորովին նուաճեց։ Մինչև 961 թ. Օմարի յաջորդները կառավարում էին իբրև անկախ իշխաններ։ Աւազակների այդ ողորմելի պետութիւնը Էգեյեան ծովի պատուհասը դարձաւ, և մեծայուն սպառնալիք՝ կղզիներին ու ծովափնեայ քաղաքներին։ Արևմուտքում էլ Միքայէլը անյաջողութիւն ունեցաւ։ Փատիմիդեան Արաբները դաւաճան մեծամեծների յորդորներից դրդռուած՝ սկսեցին հաստատուել Սիկիլիայի վրայ, և այն խաղը, որ խաղացել էին Սիկիլեցւոյ հետ 1200 տարի առաջ Կարթագենացիք, սկսուեց այս անգամ էս աւելի դժբախտ փախճանով։

Երբ Միքայէլը 829 թ. մեռաւ, իշխանութիւնը թողեց իւր Թէոփիլոս որդուն (829-842), որ Արևելահռովմի կայսերական գահի ուրախացուցիչ երևոյթներից մէկը չէր։ Այդ խիստ փառաբանուած՝ բայց իսկապէս անանձնական իշխանի յատկութիւններն էին. մեծութեան ցնորք արևելեան սուլթանների օրի-

նակի նմանութեամբ, ամենագէտ լինելու շփոթ, որը անկախ էր վճռում զինուորական, ինչպէս նաև եկեղեցական կառավարչական հարցերը, և կատարեալ անհասկացողութիւն ժամանակի պահանջները ըմբռնելու։

Սիկիլիայում շարունակում էր Միքայէլի օրով սկսուած պատերազմը։ Պատրիկիոս Թէոդորոսը ընկաւ 831 թ. Մենայոնի (Մինաոյ) պաշարման ժամանակ. 832 թ. Սարակինոսները տիրեցին Պանորմոսին։ Արևմուտքի մի-ուս իշխանների, Կորդովայի խալիֆների և Ֆրանկական կայսրութեան հետ Բիւզանդիոնը բարեկամական յարաբերութիւններ էր պահպանում դեսպանութիւնների միջոցաւ։ Բիւզանդացիներին առանձնապէս բարեկամ էին պոնտական վանականութեան համար այնքան նշանակութիւն ունեցող Խազարները. սարսափ ազդող Պաչինակների դէմ (Պեչենեգներ) խաքանի խնդիրքով, Թէոդորա կայսրուհու եղբայր Սպաթարոկանդիդատոս Պետրոնոս Կոմեփարոսը Դոնի վրայ շինեց Սարկել ամրոցը («Սպիտակաուն»)։ Նրա առաջարկութեամբ սահմանափակեցին Խերսոնի հասարակապետութեան ազատութիւնը այնչափով, որ մի սատրապ նշանակուեց իբրև կայսերական կառավարիչ՝ վերահսկելու այդ նշանաւոր գաղթական երկիրը, մինչև մինչ

այդ համարեա անկախ կառավարում էր պրոակցոնը՝ արքոնտների այսպէս ասուած «քաղաքի հայրերի» հետ։

Աւելի կատաղի էին Մամուն (813—833) և Մութասիմ (833—842) խալիֆների դէմ մղած պատերազմները։ Խալիֆի տէրութեան մէջ ծագած սարսափելի անտեսական յեղափոխութիւնը՝ Բաբեկի ձեռքի տակ միացած կոմունիստների (խուռմառիաներ) ձեռքով, պետութեան բաւականը մեծ ծառայութիւն էր ցոյց տուել։ Խորասանից մի Պարսիկ իշխան, որի քրիստոնեայ անունը Թէոփոբոս էր, իւր գունդերով անցաւ Յոյների կողմը։ այդ Պարսիկ վարձկանների թիւը հասնում էր 30,000-ի։ Թէոփիլոս լաւ հասկանալով տէրութեան շահը, աւելի լաւ համարեց կռիւ սկսել, քան թէ այդ փախստականին յանձնել իւր իրաւական տիրոջը։ Թէոփոբոսին խիստ պատուում էին և ամուսնացրին կայսեր Հելենա քրոջ վրայ։ Մութասիմը գործ դրեց խիստ մեծ ջանքեր։ կանոնաւոր կերպով ամբողջ զօրքը նորից կարգաւորեց Ցաճիկ և Բերբեր վարձկաններով։ Սակայն հռովմէական զօրապետները՝ Մանուէլը և Թէոփոբոսը յաջողութեամբ մտան Արաբների երկիրը, 837 թ. առան Սամոսատան, և կործանեցին Զապետրան (Սոզոպետրա)՝ անհաւատների իշխանի

ծննդավայրը։ Նրա կատաղութիւնը սահման չունէր։ Բոլոր զօրքերը ժողոված 838 թ. արշաւեց Փոքր-Ասիա, որպէս զի պետութեան գլխաւոր ամրութեանը՝ Ամորիոնին, փոխադական հարստութեան որբանին, Նոյնպիսի վիճակ պատրաստի։ Ցաճիկները մի սարսափելի արիւնալից յաղթութիւն տարան։ 55 օր արիասիրտ Այեսիոսը պաշտպանեց քաղաքը։ Արքեպիսկոպոսը և մեծամեծները պայմաններ առաջարկեցին անձնատուր լինելու, չընդունեցին։ Խալիֆը կամենում էր վրէժ և ոչ յաղթութիւն։ Փառաւոր քաղաքի վիճակը զարհուրելի էր։ Ի զուր կայսրն ինքը դուրս եկաւ պատերազմ։ Նա չունէր իւր զօրապետների զինուորական տաղանդը։ և կռիւները անյաջող էին վերջանում Բիւզանդացիների համար։ Նոքա ստիպուած եղան խաղաղութիւնը գնել պատերազմի ծախքերը վճարելով։ Զնայած այդ կործանիչ պատերազմներին, երկրի մէջ զօրեղ կերպով ծաղկում էին վաճառականութիւնը և արդիւնաբերութիւնը։ Տնտեսական կառավարութիւնը շատ ընտիր էր։ և երբէք դրամական միջոցները չէին պակասում կառավարութեան մեծամեծ կարիքներին։ Սակայն այդ կայսեր արժանիքը չէր, որ միայն դժուարացնում էր անտեսական հաւասարակշռութեան կարգաւորելը իւր անսահման խելացնոր շինա-

բարութեամբ՝ այլ պաշտօնեաներին էր՝ որոնք ամենագեղեցիկ կերպով կատարում էին իրենց պաշտօնը։

Եկեղեցական խնդիրներում կայսրը ցոյց տուեց իւր կատարեալ խեղճութիւնը իբրև սահմանափակ լուսաւորուած մոլեռանդ մէկը՝ որը չէր հասկացել նոր ժամանակի ոգին։ Ուր հօր խելացի համբերողութեան փոխարէն՝ նա սկսեց մանրակրկիտ քահանայական դաժան հալածանք։ 832 թ. նոր հրովարտակով արգելեց պատկերները և մանկամտութեամբ փորձում էր օրթոդոքս եկեղեցու սրբերի պատուոյ մականունները խլել։ Կայսրը ինքը մտնում էր կրօնական վէճերի մէջ. Ղազարոսը և երկու Թէոդորները արիւնալից մարտիրոսութեամբ տուժեցին՝ իրենց մտաւոր բարձրութեան և տրամաբանական գերազանցութեան պատճառաւ։ Ի զուր էր փորձում Յովհաննէս խոհուն քերական պատրիարքը սանձել կայսերական քմահաճոյքը. Թէոփիլոսը այնպէս էր նպաստում գիտութիւններին ինչպէս բռնակալներն են անում։ Նա իւր իսկապէս իշխանական անշնորհակալութիւնը ցոյց տուեց մահուան մահճումն անգամ՝ երբ խարդախութեամբ սպանել տուեց ազնիւ Թէոփորոսին և զուարճութեամբ դիտում էր նրա արիւնշաղախ գլուխը։

Նրա Միքայէլ Գորգու համար (Հարբեցող 842-867) խնամակալութիւնը ձեռք առաւ խելացի և գործունեայ, բայց սահմանափակ բարեպաշտ Թէոդորա մայրը՝ որի խորհրդականներն էին Լոգոթետ (օրէնսդիր) Թէոկրիստոսը՝ Թէոդորայի հօրեղբայրը Մանուէլը և իւր եղբայր Բարդասը։ Սա էր իսկապէս կառավարութեան ոգին՝ որին յաջողուեց աստիճանաբար իւր մրցակիցներին հեռացնել։ Բարդասը մի «գերմարդ» էր՝ կրօնի և բարոյագիտութեան ամէն կասկածանքներից բարձր՝ որոնցով ազդւում են միւս մահկացուները։ Նա սառնասիրտ՝ առանց ամենաթեթև խղճի խայթ զգալու՝ ի կատար էր ածում մի օգտակար յանցանք։ Եկեղեցական խնդիրները քննում էր միայն նպատակայարմարութեան տեսակէտից։

Այդ սկզբունքներին համեմատ մինիստրները կայսրուհու համաձայնութեամբ դադարեցրին կրօնական համոզմունքների դէմ փոքրոգի անձանց յատուկ անհաճոյ վէճերը. հարիւրամեայ կռիւը առաջ էր բերել հասարակական կարծիքի մէջ անչափ յոգնածութիւն և մի տեսակ անտարբերութիւն։ Վաղուց իվեր հալածուած վարդապետները ցընծում էին։ Ուսումնական պատրիարքը սոփուած հրաժարուեց՝ և յոյթոդների կող-

վից ենթարկուեց նախատինքի՝ կոպտաբար և անսիրտ եղանակաւ։ Մեթոդիոս Յունոսովանողը՝ ծագումով Սիկիլիայից՝ որ իրրև աքսորական սուրբ Պետրոսի մնաց Հռովմում լատիներէնից յունարէն էր թարգմանել սրբոց վարքերը և դրանով ահագին նշանակութիւն ունեցաւ արևելքի և արևմուտքի քաղաքակրթական յարաբերութիւնների վերաբերմամբ։ Անդէաս առաքեալի դահը բարձրացաւ։ Նա միայն այն ժամանակ թողութիւն տուեց մեռած կայսեր՝ երբ ստիպեց կայսերական սրբուն մի պաշտօնական սուտ ասելու։ Հասկանալի է որ միւս եպիսկոպոսութիւններն էլ բաժանեցին բացառապէս վարդապետների և պատկերապաշտների մէջ։ 843 թ. մի ժողովում՝ որ խիստ աղմկալից էր՝ հանդիսաւոր կերպով վերահաստատուեց ճշմարիտ հաւատը՝ և դեռ այսօր էլ օրթոդոքս եկեղեցին ամեն տարի մեծ շքով տօնում է (Kyriake des orthodoxias) օրթոդոքսութեան կիւրակէն։ Դաւանաբանօրէն յաղթութիւնը կատարեալ էր. իսկ եկեղեցական քաղաքագիտութեան տեսակէտից կատարեալ նաւաբեկութիւն կրեցին թէ Թեոդորոս Ստուդիոնցին և թէ «եկեղեցու ազատութեան» միւս կողմնակիցները։ Եկեղեցու ազատութեան միտքը՝ ինչպէս որ այդ յաղթանակ ունեցաւ արևմուտքում ԺԲ դարում՝ Արևելա-

հռովմի կայսրները ոչնչացրել են նոյն իսկ արմատի մէջ՝ և եկեղեցու վերաբերմամբ պահպանեցին այն հեղինակութիւնը՝ որ բնորոշ մնաց ինչպէս Արևելահռովմի՝ այնպէս էլ միւս ուղղափառ եկեղեցիների համար (Բուլգարիա՝ Սերբիա՝ Ռուսաստան)։ Եկեղեցու շահի տեսակէտից այդ անսահման փրկարար էր. Նոր-Հռովմի Թ և Ժ դարերի պատրիարքների համեմատութիւնը ժամանակակից պապերի հետ անպայման յօգուտ առաջիններին է։

Սիկիլիայում արևելահռովմէական կառավարութիւնը հակառակ իւր աննկուն ընդդիմութեանը միայն կորուստներ ունէր։ Մեծ Ագլաբիդ Աբու ալ Աբբաս Մոհամեա Ա-ի (841—856) ժամանակ Ափրիկեցիք 842 թ. վերցրին Մեսինան՝ 845 թ. մի շաբք դղեակներ. 846 թ. մի դժբախտ ճակատում ընկան 9000 քրիստոնեայ. 847 թ. պաշարումով առան Լևոնտինոյի՝ 854 թ. Բոթերը (Butera) և չնայած քրիստոնեաների (858) մեծ ծովային յաղթութեանը՝ Արաբները անարգել առաջ էին խաղում։ 859 թ. նոքա տիրեցին Լիննային՝ 864 թ. Նետոսին՝ և վերջին յետ խլելուց յետոյ՝ 866 թ. առան երկրորդ անգամ։ Ինչպէս որ Է դարում Սիկիլիան Ափրիկայից և Ասորիքից փախչող քրիստոնեաների ապաստանարան էր՝ այդպէս էլ այս և յետագայ դա-

բում դժբախտ կղզու բազմաթիւ քրիստոնեաները փախան Կալաբրիա և Պելոպոնէս։ Զափաղանց ընդունակ խնամակալութիւնը իւր բոլոր գործունէութիւնը ցոյց տուեց այդ սլաւոնացած երկրի վրայ։ Թէոկրիստոս Բրիյեննիոսը Պելոպոնէսի ստրատեգ կարգուելով, 849 թ. զօրեղ զօրքով կատարեալապէս խաղաղացրեց անհնազանդ սլաւոնական ցեղերին։ Ամենավայրենի և պատերազմասէր ցեղերը՝ Միլենգցիք (Միլենցիք) և Եզերիցիք (Եզերցիք), որոնք բնակւում էին Պենտադակտիլոս լեռներում, ստիպուեցին կանոնաւոր հարկ վճարել։ Խալիֆի պետութեան դէմ, որի համար նրա Ցածրիկ պահպան գնդերը Նոյնպիսի պատուհասներ էին դարձել, ինչպէս երբեմն Արեմտահռովմի համար իւր գերմանական գնդերը, կառավարութիւնը կռուում էր մեծ յաջողութեամբ։ Դժբախտաբար այստեղ էլ զէլոտեան կայսրուհու կոյր մոլեռանդութիւնը ամէն ինչ ոչնչացրեց։ Ցունական պետութեան սահմաններում, Տաւրոսից և Եփրատից արևմուտք, ապրում էին Պօղիկեանք, որոնք աշխարհականացած պետական օրթոդոքսութեան հանդէպ՝ պաշտում էին Ս. Գրքի ճշմարիտ քրիստոնէութիւնը։ Ի դարու կայսրների ժամանակ հալածուելով, պատկերամարտ կայսրների խելացի քաղաքականութեամբ բաւական

լայն ազատութիւն ունէին։ Այդ քրիստոնեայ Մակաբայեցոց քաջ գնդերը կազմում էին օգտակար սահմանային կենդանի ամրութիւն Իսլամի դէմ։ Նոցա ամրանալուն շատ էր նպաստել նոցա եկեղեցու ընտիր գլուխը՝ Սերգիոսը (800 թ.)։ Միքայէլ Ա և Լեւոն կայսրների հալածանքները նոցա մի մասին ստիպել էին անցնել արաբական սահմանը։ Բայց այդ ընտիր ժողովրդի մէջ տիրեց կատարեալ յուսահատութիւն, երբ Թէոդորան սկսեց իւր սաստիկ արիւնալից հալածանքը։ Նոքա էլ սպանեցին հաւատոյ հալածիչներին, որոնք իրենց արիւնը ոչ ոքի յետ չէին մնում սպանիական ինքվիզիտորների առաջնորդներից, և սկսեցին աւազակային արշաւանքներ պետութեան մէջ։ Աղանդի զինուորական-քաղաքական գլուխ ճանաչուեց Կարբէասը, հռովմէական նախկին մի զինուորական և սկսեց Տեգրիկէ սահմանի բերդից պետութեան գնդերի դէմ խիստ յաջող յարձակողական կռիւ մղել ինչպէս միջին դարում Վալդենցիք և Պիեմոնտցիք։

Կառավարութեան ոգին Բարդան էր, զուրկ բարոյական հիմունքներից, բայց քաղաքականութեան մէջ խիստ հմուտ։ Նա իւր անսահման փառասիրութեան պատճառաւ չէր խղճահարւում իւր քրոջորդի Միքայէլի

անարկ վարքը և կոպիտ զգայական զուարճութիւնները ամեն կերպ խրախուսելու։ 856 թ. Թէոդորային սահպեցին յետ քաշուելը և Միքայէլը (856–867) արդէն միայն անուամբ էր կառավարում. իրապէս Արևելահռովմը կառավարում էր ամենակարող մինիսարի ձեռքով։ Մայրաքաղաքը իւր երիտասարդ կայսրից գիտէր միայն այն՝ ինչ որ լսում էր նրա մանկամիտ զեխութիւնների մասին։ Նա իւր զուարճութիւնների ուսուցիչ (maître de plaisir) Գռիլլոսին, Պետրոս Մեծի նման, կարգեց հաբեցողութեան պատրիարք (Sauf-patriarch) և սրա ընկերակիցների հետ, որոնց ճնշում էր զզուելի եղանակաւ յանդգնաբար անարգել եկեղեցին, և որոնց կարգեց իւր զեխութիւնների համար մետրոպոլիտներ, հրապարակօրէն խեղաթիւրում էր Ս. արարողութիւնները և հասարակօրէն փողոցում ծաղրեց սիեզերական պատրիարք ս. Իգնատիոսին (846-858 և 867-878), որ Միքայէլ Ա Ռանդաբէ կայսեր որդին էր, որին Լևոն Ե ներքինացրել էր և վարդապետ դարձրել Նիկետաս անունով։

Արդէն Թ-րդ դարու առաջի կէսում Սկանդինաւեան Ռոսները (Rós), հիւսիսային յանդուգն զիւցազուններ, որոնք ընկճել էին իրանց իշխանութեան տակ Դրեգովիչ, Կրիվիչ և Ռատիմիչ բարեսլաւ և կամաղուրկ սլաւոնական ցեղերին, Դնեպրի վրայ նաւելով իրանց ծովահիներով՝ յարձակում էին գործել յունական Փոքր Ասիայի հիւսիսային (Ամասարիս) ափերի վրայ։ 860 թ. Յունիսի 18-ին, Միքայէլի 5-րդ տարին, այդ սարսափ ազգով Ռոսների 200 մակոյկները երևացին պետութեան մայրաքաղաքի առաջ։ Փոտիոս պատրիարքի երկու ճառերը լաւ և կենդանի արտայայտիչ են այն զարհուրելի կաշկանդիչ սարսափի տպաւորութեանը, որ գործեց բնակիչների վրայ այդ հիւսիսային սոսկալի կայծակի ցոլացումը։ Մեծ պատրիարքը դրա մէջ տեսնում էր աստուածային ծանր պատիժ հռովմէական քրիստոնէից մեղքերի համար։ Քրիստոնեաները Աստուածամօր օգնութեան էին վերապրում Ռուսների վտանգից ազատուելը և յաղթութիւնը, այն օգնութեան որով արդէն խորտակել էին Խոսրովի պարսկական նաւատորմիղը և Մոսվիայի արժատան։

Այդ շրջանի ամենանշանաւոր դէպքը, բուլգարական հարցի ծագումն է և դրա հետ միասին հին-հռովմից բաժանուելը։ Երկու մեծ սլաւոնական առաքեալները՝ Մեթոդիոս և Կոստանդինը (յետոյ երբեմն վարդապետ Կիւրիլլոս) տարան անուանեալ դլագոլիտեան այբուբենի գիւտով և Սլաւոնների լեզուներով

Ս. Գրքի թարգմանութիւնով, այնպիսի անմահ ծառայութիւն են մատուցել այդ ազգերին, ինչպէս Ս. Մեսրոպը և Ս. Սահակը նոյնպիսի մեծագործութիւնով Հայաստանին։ Այս սուրբ մարդիկը թէ այսպէս և թէ այնպէս քաղաքակրթական դարի սկիզբն են դրել այն ժողովուրդների մէջ, որ իսկապէս առաջ առանց քաղաքակրթութեան էին, որովհետև այբուբենից զուրկ էին։ Մերական մեծ տէրութեան մէջ, ուր արդէն ընդունել էին քրիստոնէութիւնը գերմանական քարոզիչներից, ապա այն ժամանակ արդէն սլաւոնացած Պանոնիայում երկու եղբայրները սկսեցին իրենց չափազանց արդիւնաւէտ գործունեութեան գրաւեցին ժողովրդի սիրտը, որովհետև եկեղեցական պաշտաման մէջ չէին գործ դնում լատինական լեզուն, ինչպէս գերմանական քարոզիչ եպիսկոպոսները, այլ սլաւոնականը։ Գերմանացիների զօրեղ ընդդիմութեան հանդէպ, Հռովմը զարմանալի մեծահոգի լայնսրտութեամբ իւր որոշումը տուաւ յօգուտ ազգային տեղական լեզուի։ Սակայն լատինական եպիսկոպոսների թշնամութիւնների դէմ որոնց օգնում էր աշխարհական իշխանութիւնը և որոնք գործում էին բռնութեամբ, Կիւրիլլոսը չկարողացաւ դիմանալ Մեթոդիոսի մահից յետոյ. Հռովմը թոյլ տուց որ նա ընկնի։ Յովհաննէս

Ը-ը իւր մեծ նախորդների՝ Նիկողայոս Ա և Հադրիան Բ-ի հաւասարակից յաջորդ չէր։ Մերական տէրութիւնը մաս մաս եղաւ և պանոնական Սլաւները ընկճուեցին ներս խուժող Մաճառների ձեռքի տակ։ Կարծես թէ փինոնա-ուգրական սերնդի ամենակոպիտ հեթանոսութիւնը ոտի տակ էր տալու այդ յուսալից սերմերը։ Բայց Մեթոդիոսի փախբատական աշակերտներից մէկին՝ Ս. Կղեմէսին, Բուլղարների Բորիս ցարը եպիսկոպոս կարգեց իւր՝ այն ժամանակը բաւական լայնածաւալ պետութեան երրորդ մասի վրայ։ Բորիսը (852—888) լաւ հասկացաւ, որ իւր ժողովուրդը սեղմուած լինելով Փրանկների և Հռովմայեցիների մեծ պետութիւնների և մերական թագաւորութեան մէջ, քրիստոնէական ազգութեանը երկար չէ կարող դիմանալ։ Սովորական սահմանային պատերազմներից մէկի (864 կամ 865) խաղաղութիւնը հաստատելիս նա ինքը մկրտուեց հանդիսաւոր կերպով. կայսրը ինքն էր նրա կնքահայրը, և սրանից վերցրեց սրա քրիստոնէական Միքայէլ անունը։ Յոները նրան զիջան սահմանի մի մասը, Զագորա կոչուած, դաշինքը ամրացնելու համար։ Այս ծանրակշիռ դէպքերի ժամանակ Իգնատիոս պատրիարքը այլ ևս չէր իշխում։ Նա քաջութիւն էր ունեցել պետու-

թեան գեկավար ամենակարող Բարդասին հանդիսաւոր կերպով զրկելու եկեղեցու հաղորդութիւնից, որովհետև նա ազգապրծութեամբ կենակցում էր իւր հարազատ հարսի հետ։ Պատրիարքին պաշտօնազուրկ արին և նրա տեղը կարգեցին Փոտիոս գիտնական պետական մարդուն, որ մի քանի օրուայ մէջ (20—24 Դեկտ. 858 թ.) ստացաւ եկեղեցական բոլոր աստիճանները և ազգ ու թշնամական կըրքոտութեամբ գահազուրկ պատրիարքի բարեկամներին և կողմնակիցներին հալածելուց յետոյ, վարեց իւր պատրիարքութիւնը խակապէս արժանավայել և շատ մեծ փառքով։ Փոտիոսը յունական ազգի արժանավայել ծընունդն էր Հռովմի պահանջների դէմ, որը Հռովմի հանդէպ պաշտպանում էր այդ իրաւունքները ոչ այնքան վարպետութեամբ, որքան յամառութեամբ։ Հռովմը հատկանալի պատճառաւ դանգատում էր ճանաչելու այնչափ ապօրինի կերպով դահ բարձրացած պատրիարքին։ Մինչև անգամ Հռովմական մի ժողով (863 թ.) նրան գահազուրկ յայտարարեց։ Եթէ դրանով արդէն Հռովմի գիւանի և պետութեան յարաբերութիւնը սասարկ լարուեց, անջատումն անխուսափելի եղաւ երբ Հռովմը խառնուեց բուլգարական գործերում։ Բուլգարների նոր քրիստոնեայ ցեղը սլաւոնական

ճշմարիտ խորամանդութեամբ յարաբերութեան մէջ էր մտել Հին-Հռովմի հետ, որպէսզի տիեզերական պատրիարքի ճնշիչ գերիշխանութեան դէմ հակառակորդ ունենայ։ Նիկողայոս Ա-ը (858-867) յօժարութեամբ հետևեց նորան։ Հռովմէական եպիսկոպոսները բուլգարական եկեղեցական նահանգներում մացրին լատինական ծէսը։ Հռովմը Ը-րդ տիեզերական ժողովից յետոյ, անընկճելի յարատևութեամբ շարունակել էր յայտարարել իւր օրինական իրաւունքները իլլիրական եկեղեցու թեմի վրայ։ Եւ ըստ երևոյթին արդէն ձեռք էին բերել առաջի յաջողութիւնը։ Բայց ուղիղ այդ ժամանակ յունական ազգը մի մարդու պէս կանգնեց և դէմ դրեց այդ հնացած պահանջներին։ Պատկերամարտութեան ժամանակ գրաւած եկեղեցական թեմերի պահպանութեան խնդրում Իգնատեանք, որ Փոտիանների երդուեալ թշնամիներն էին, ձեռք ձեռքի տուած էին ընթանում։ Երբ յետոյ Իգնատիոսի վերահաստատութեան ժամանակ, հաշտութեան ժողովի մէջ (869) Հռովմի ներկայացուցիչները հանդէս եկան իրենց իլլիրական պահանջներով, Յոյները սառը խօսքերով յայտնեցին. ատատիկ անպատկառ է, որ դուք, քանի որ թոթափել էք Յունաց իշխանութիւնը և ընկել էք Փրանկների ձեռքը, կամենում էք մեր

տիրոջ իշխանութեան սահմաններում վիճակներ ունենար։ Բիւզանդացիք դիւրըմբռնելի գիտակցութեամբ ինչպէս Յովսէփ Բ-ը, չեն կամեցել իրենց պետութեան սահմաններում արտաքին հոգևոր պետի վիճակային իրաւունքները ճանաչել և թոյլ տալ։

Եթէ այն ժամանակուայ Հռովմը իսկապէս քաղաքագիտական խելք ունենար, ինչպէս շատ անգամ առանց քննութեան վերագրում են նրան, պէտք էր այն բոպէին յետ կանգնէր։ Յունական ազգային զգացմունքը Էյրենէի պարտութիւնից յետոյ սաստիկ զգայուն էր դարձել։ Խիստ ուղղութեան հետևող մարդիկը, օրինակ Ս. Թէոդորոս Ստուդիտը, անպայման անձնուէր մնալով Հին-Հռովմին, այնպէս էին կորցրել իրենց ժողովրդականութիւնը, ինչպէս Դ-րդ դարում Հայաստանի մէջ Ս. Ներսէսը և Հայրապետական կուսակցութիւնը՝ որ յենուել էին մի կողմից Մեծ Կապադովկացու վրայ և խիստ յունասէր էին։ Ռոսի Փոտիոսը մեծ վճռողականութեամբ հանդէս եկաւ Հռովմի դէմ իբրև յունական ազգի յառաջամարտիկ և նրա կրօնական ինքնուրոյնութեան նախանձախնդիր։ Այդ է 867 թ. (Enkyklios Epistole) Տիեզերական թղթի ընդհանուր-պատմական նշանակութիւնը։ Փոտիոսի աստուածաբանական պարզաբանութիւնները թոյլ

են. նոքա վերաբերում են Ծէսի և կարգապահութեան մէջ եղած փոքրանշան զանազանութիւններին, որ բոլոր ժամանակներում լռելեայն համբերել են իւրաքանչիւր առանձին եկեղեցու մէջ։ Վէճի նիւթ եղող միակ դաւանաբանական կէտը՝ Հոգոյն Սրբոյ բխման մասին, և սրանից ծագած բազմահատոր բայց աննշան վիճաբանական գրականութիւնը, առանձին փայլուն գոյնով չէ ներկայացնում յունական և կամ լատինական աստուածաբանների հոգեկան զարգացման բարձրութիւնը, թէ այդ և թէ հետևեալ դարերում։ Եթէ սրտանց ցանկանային երկու եկեղեցիների միութիւնը, այն ժամանակ Յոհան Ոսկեբերան Դամասկացու բանաձևը կարող էր միմեանց հասկանալու հիմնաքար կազմել։ [1]

---

[1]. Երբ խնդիրը մի ոսկի ֆենեֆ հակառառող աստուածաբանների տեսակէտից, անկասկած պէտք է համաձայնել որ Յոյները իրաւունք ունէին։ Սպանիական եւ Ֆրանկեան եկեղեցիները հանգանակի յաւելուածով (filioque) եւ յուրոյ իսկապէս նորամուտիւն էին մտցրել հնուց արքացած աւանդութեան մէջ, եւ հոռոմական կրօնական ատեանը սկզբում Լեւոն Գ-ի ժամանակ (795—816) ուժով դէմ էր դրել, յետոյ արտայայտել է (tolerari posse)« կարելի է համբերել», եւ վերջը ընդունել է այդ փոփոխած բանաձեւը։ Սակայն առաջի յորս տիեզերական ժողովի գործերը պարզ ցոյց են տալիս, որ այն ժամանակուայ եկեղեցին դեռ կարդում էր

Սակայն գաւանաբանութիւնը և կարգապահութիւնը լոկ պատրուակներ էին. իրապէս և ճշմարտութեամբ ազգային էր խնդիրը: Մեծ Փոտիոսի անմոռանալի ծառայութիւնն է որ կրօնապէս էլ է ազատել Յունաց ազգը Հռովմից, որը քաղաքականապէս փոխուց էր ազատուել:

Մինչ այդ արքունիքում մեծ փոփոխութիւններ էին տեղի ունեցել: Բարդասը, այդ անբարոյական հանճարը, որի համար բոլոր իր նման մարդիկը լոկ քարեր էին իւր խազի տախտակի վրայ, գոնէ մի ազնիւ ոգևորութիւն ունէր գիտութիւնների համար: Նա հիմնեց մի տեսակ բարձրագոյն դպրոց փիլիսոփայութեան, լեզուագիտութեան և բնական գիտութիւնների համար, որտեղ նախկին պատրիարքի՝ գիտնական Յովհաննէս քերականի աշակերտները սովորցնում էին փիլիսոփայութիւն, քերականութիւն, ճարտասանութիւն, երկրաչափութիւն և աստղաբաշխութիւն: Նա փորձեց բարձրացնել նաև իրաւագիտութիւնը: Բայց նա կրեց, ինչի որ

չկեղծած հանգանակը: Ուստի յեզուագիտական եւ հնագրագիտական տեսակէտից Յոյները կատարեալ իրաւունք ունէին: Ուրիշ հարց է, արդեօք արժէր-արդ մեղմ ասենք-որ որևէ աստուածաբանական հրաւիրեան պատճառաւ ընդհատուեր եկեղեցոյ միութիւնը, որ ոչ դար էր տեւել:

արժանի էր իւր գործերով: Մինչդեռ նա կայսեր համար ամենակոպիտ զուարճութիւնների դռներ էր բաց անում, յոյս ունէր որ կարող է անսահման իշխել. սակայն կայսերական գլխ ընկերակիցների մէջ կար մի գեղեցկահասակ ախոռապան, Բազիլեոս, հայկական ծագումով մի մարդ Մակեդոնիայից, որտեղ է տաբրիներից ի վեր Փոքր-Ասիայի բազմաթիւ բնակիչներ էին գաղթել: Բազիլեոսը շուտով կայսեր և կանանց առաջի սիրելին դարձաւ, հանճարեղ մէկն էր կրակոտ փառասիրութեամբ: Նա միացաւ իւր երկրացի Սմբատի հետ, որ մի բարձրաստիճան պաշտօնեայ էր և կայսեր համաձայնութեամբ 866 թ. սպանեց ամենակարող կեսարին: Նոյն տարուայ Մայիսի 26 նա դարձաւ կեսար և կայսրակից և իշխանութիւնը վարում էր ամենափայլուն կերպով: Երբ Միքայէլը, իւր նշանաւոր մօր ազդեցութեամբ ազատուելու ցանկութիւն արտայայտեց, նա սրան էլ սպանել տուեց 867 թ. Սեպտեմբերի 23 իւր հաւատարիմ վարձկանների ձեռքով: Այն յանցանքը, որ Միքայէլ Բալբոսը գործել էր իւր սիրոջ և բարեկամի դէմ, սարսափելի կերպով ատուածային դատաստանով վրէժ էր հանուել նրա թոռից:

Ե.

ԱՐԵՒԵԼԱՀՌՈՎՄԷԱԿԱՆ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՇՐՋԱՆԸ. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(867—1025)

Բազիլեոս Ա-ը (867-886) մակեդոնեան փառաւոր հարստութեան հիմնադիրն է, որ համարեա երկու ամբողջ դարերի ընթացքում ներկայանում են իբրև տիեզերքի ճշմարիտ վերահաստատողներ (restitores orbis) հռովմէականութեան տիեզերական իշխանութեան վերջի՝ ամենակատարեալ շրջանի վերաբերեալ։ Այն եղանակը, որով նա գահի տէր դարձաւ, Բազիլեոսին ամենաթեթև խղճահարութիւն չէր պատճառում։ Նա պատկանում էր այն հանճարեղ, բայց սոսկալի ուժեղ բնաւորութիւններին, ինչպէս էին Սուլլան, Թէոդերիխը, Խլոդովիխը, Նապոլէոն Ա-ը, որոնք անօգուտ ցանք չեն գործում, բայց օգտակար եղեռնայանգործութիւնը կատարում են կամ կատարել են տալիս հոգեկան ամենամեծ հանգստութեամբ իբրև ճակատագրական անհրաժեշտութիւն։ Նոր հարստութեան հայկական ծագման մասին չէ կարելի կասկածել։ Աքսորուած Փոտիոսը արդէն պատրաստել էր մի ճիւղագրական ծառ, որպէս զի արքունիքում նորից պատուի արժանանայ, որի մէջ նոր կայսեր ծագումը հասցնում էր Արշակին և Տրդատին։ Հայ ասպետները և վարձկանները՝ որոնք այդ դարում իրենց քաջութեամբ դեռ պահպանում էին հռովմէական պետութիւնը, բոլորն էլ իրենց սերած էին համարում հին Արշակունիներից և Պահլաւունիներից, և այդ այնպիսի իրաւունքով, ինչպէս մեր «հին ազնուականութեան» բազմաթիւ ընտանիքները իրենց նախնիներին համարում են խաչակիրներին և միջնադարեան ասպետներին։

Նոր կառավարութիւնը շտապեց Հռովմի հետ որոշ յարաբերութիւն ստեղծել։ Փոտիոսին աքսորեցին և Ինգնատիոսին նորից պատրիարք կարգեցին (867-877)։ 869 թ. ժողովը, որ Հռովմայեցիները ութերորդ են կոչում, Նիկոլայոս Ա-ի յաջորդ Հադրիան Բ-ի ամենամեծ յաղթանակն էր։ Փոտիոսի հետևողները ստիպուեցան ամենախիստ կերպով յետառնել իրենց կարծիքը, եթէ կամենում էին եկեղեցու հաղորդութիւնից չը զրկուել։ Այս դէպքում էլ հռովմէական եկեղեցական դիւանը ինքն իրեն ամենամեծ վնասը հասցրեց

լիւր անզգոյշ քաղաքականութեամբ։ Նոքա մեծամիտ ընթացքով ամենազգալի կերպով վիրաւորում էին Յունաց ազգային ինքնագիտակցութիւնը և նոյն իսկ ծեր Իգնատիոսին, որ լաւ էր տրամադրուած դէպի Հռովմայեցիները։ Շուտով առիթ եղաւ նոր անհամաձայնութեան։ Անհասկանալի անհեռատեսութեամբ Հադրիան Բ-ը Փոտիոսին, որ յետոյ պապ եղաւ, և այն ժամանակ Բուլգարիայում հռովմէական լեգատ էր, չհաստատեց Բուլգարիայի արքեպիսկոպոս թէև ցարը սաստիկ ուզում էր։ Բարկացած Միքայէլը արդէն վերջնականապէս անցաւ Յոյների կողմը, և ահա այդ տեղից սկսած բուլգարական եկեղեցին միշտ հաւատարիմ մնաց օրթոդոքս եկեղեցուն, դէպի որը ուղղուած էին բնական և պատմական զարգացմամբ։ Վերահաստատուած Փոտիոսը (877-896) նորից յաղթանակող էր։ Նա խարդախեց մինչև անգամ չափազանց խորամանկ Յովհաննէս Ը-ը պապին։ մութ և խորամանկ գաղտնի խաղերի մէջ, որի ժամանակ իրական ճշմարտութիւնը հրեշտն բարձրից զանցառութեան է տրուում, միշտ Յոյները Լատիններին գերազանցել են։ Հեռեւանքը եղաւ Հռովմից բաժանումը և յունական ազգի ազատութիւնը կամ առաջնութիւնը։ Ս. Փոտիոսը ամենափառաւոր կերպով իրագործեց իւր եկեղեցական քաղաքագիտական ծրագիրը։

Բազիլիոսը արտաքուստ էլ ամենաժուռաբ պայմանների մէջ արտայայտեց միանգամայն նպատակայարմար և ուժեղ քաղաքականութիւն։ Ամենից առաջ Բիւզանդիոնը նորից ծովերին տիրող դարձրեց։ Իրաւ է Արևելահռովմայեցիները համարեա կորցրած և թշնամու առաջ բաց արևմտեան Սիկիլիա նահանգում կուռում էին ոչ այնքան յաջող, բայց զարմանալի յամառութեամբ զիջանում էին միայն քայլ առ քայլ։ 868 թ. Մալտան կորել էր։ Հռովմայեցիները միացած Ֆրանկների քաջարի Լուդովիկոս Բ կայսեր հետ 872 թ. Սալերնոյի մօտ փառաւոր կերպով յաղթեցին Սարակինոսներին։ Բայց 878 թ. Մայիսի 21 վերջապէս Սիրակուս մայրաքաղաքն էլ ընկաւ՝ քաջաբար երկար պաշտպանուելուց յետոյ։ Աւելի մեծ եռանդով Բազիլիոսը հասկացաւ կարգ հաստատել Ադրիատում։ Վենետիկի հետ հին դաշնադրութիւնը վերանորոգուեց։ Սարակինոսների հետ միացած՝ սերբական ծովահէնների խիստ հարուածեցին դալմատեան ափերի մօտ, և առանց ուշադրութիւն դարձնելու թուլամտի Կարոլինգների բողոքին, նա սարսեց դալմատեան Կրօատների Մեծ Ժուպանին (Grossjupane) ընդունել Ոսկեղ-

Ջիւրի մայրաքաղաքի գերիշխանութիւնը։ Ռազմական աւազակաբարոյ խուժանը, որը Ափրիկայից, Կրետէից և Կիլիկիայից անդադար կողոպտում էր Յունաստանի և Ադրիայի ափերը, 880 և 881 տարիների փառաւոր ծովային յաղթութիւններից յետոյ, ըստ արժանայն օրինակելի կերպով սարսափելի արիւնալից պատժի ենթարկուեց։ Քաղաքակրթութիւնը և քրիստոնէութիւնը երկաթէ բռունցքով խորտակեցին կորանի հեաւոդների բարբարոսական ծովագնացութիւնը։ Փրանկեան իշխանութեան թուլանալը Ստորին-Իտալիայում յոգուտ Արևելահռովմայեցիների ծառայեց։ 875 թ. նոցա անձնատուր եղաւ նշանաւոր Բարին, որ այդ ժամանակից սկսած Յոյների գլխաւոր զինամթերը դարձաւ արևմուտքում։ Կայսեր քաջ զօրականները Արաբներին քշեցին Կալաբրիայից և կազմակերպեցին Լոնգիբարդիա նոր թեմը, որ կարևոր փոխարինութիւն էր կորած Սիկիլիայի տեղ։

Նախորդ կառավարութիւնը մի ծանր խնդիր էլ թողել նրան՝ կրօնական պատերազմը Պօղիկեանների դէմ, որոնք Միքայէլի կառավարութեան ժամանակ Կարբէասի առաջնորդութեամբ մեծ յաջողութիւն էին ունեցել։ Սորա նշանաւոր յաջորդ Խրիզոխէրը 871 թ. առաջի արշաւանքում յաղթուեց,

և կայսրը ձեռք բերեց անսահման աւար։ Միայն նա չկարողացաւ անառիկ Թերպիկէն առնել։ Հետևեալ տարին նա իւր առպատական արշաւանքները տարածեց մինչև Սամոսատան և նախկին չորրորդ Հայքը, թէև նրան չյաջողուեց գրաւել ամուր Մելիտենէն։ 874 թ. նշանաւոր դէպքն այն էր, որ Խրիզոխէրը բաւական խարդախ և սաստիկ եղանակաւ սպանուեց մի Յոյնի ձեռքով, որին նա առաջ շատ էր օգնել։ Բարեպաշտ աւազակային հալսարակապետութիւնը կորցրեց իւր քաղաքական և կրօնական գլխին։ Պօղիկեանների խնդիրը արդէն դրանով վերջացաւ։

Բազիլեոսին յաջորդեցին իւր որդիները և կառավարչակիցները՝ Լևոնը (886-912) և Աղեքսանդրը։ որովհետև վերջինը բոլորովին անձնատուր էր եղել զուարճութիւնների, իրապէս իշխում էր փիլիսոփան, որը 904 թ. իւր եղբօր նաև անուանական իշխանութեանը վերջ տուաւ։ Ընդհանուր կարծիքով նրան համարում էին Միքայէլի որդի։ Հայրը և որդին միմեանց չէին սիրում։ և առաջներում որդին հօրը դէմ դաւադրութիւն էր կազմել։ Լևոնը իւր հանձարեղ հօր ուղղակի հակապատակերն էր։ ուսումնական խմաստակ և մարմնով թուլամորթ, ուստի այդ պատճառով էլ ինչպէս Անգղիայի Յակովը Ա թագաւորը,

հաւատացած իւր կայսրութեան ասատուածանմանութեանը։ Սակայն պարզամիտ է, այն պատմական հարցակէտը, որ նրանից են սկսում հռովմէական միահեծանութեան բընակատութեան փոխուիլը և զգացուած ողբում են Լեւոնի ժամանակ յունական քաղաքների քաղաքացիական ազատութեան կորուստը։ Ընդհակառակը իրապէս մակեդոնական հարստութեան ժամանակ տեղի է ունեցել փոփոխութիւնը դէպի աւատականութիւն։ առանձին նահանգներում հարստացած ընտանիքները ասպիճանաբար այժ են ձեռք բերում, Նոցա առանձնակի ձգտումները ասպիճանաբար սաեղծել են պետութեան յարատև թուլութիւնը այնպէս, ինչպէս նոյն շարժով ընթացող արևմտեան ժամանակակից դեռ բաւական բարբարոսական պետական կազմութիւնները։

Լեւոնը ինքն իրան անպատուեց իւր կառավարչական առաջի գործողութիւններից մէկով։ երբ նա սիրեց մեծ Փոտիոսին ստորագրել հրաժարական թղթի տակ։ Կայսրը օրիորդաբար եկեղեցու զեկավարութիւնը հաւատաց իւր հարիւ տասն և ութ տարին լրացած եղբայր Սանփանին։ Նոյն եղանակով յետոյ էլ կայսերական իշխանների մէջ՝ Թէոփիլակտոսը (933-956) արժանացաւ այդ ասպիճանին, ինչ որ բոլորովին արտասովոր էր

արևելահռովմէական պետութեան մէջ։[1] Այդ յիշեցնում է իրերի վիճակը Հայաստանում, որտեղ կաթուղիկոսների ընտանիքը թագաւորական ընտանիքի հետ խնամէացած էր։ Փոտիոսը՝ արժանացած ընդհանուրի յարգանքին քաշուեց մի վանք. «անկասկած աւելի երջանիկ, քան եթէ մնար պատրիարքական գահի վրայ և եթէ ինը պապ նրան բանադրէին»։[2] Լեւոնի ժամանակ հանդէսով հրատարակուեց նաև այն եկեղեցական նոր կարգադրութիւնը՝ բաղմահռչակ դիատիպոզիսը (Diatyposis), որով նա Հեմուս թեբակղզու եպիսկոպոսների համար, որոնք առաջ ենթակայ էին Հռովմին, հաստատուն տեղ որոշեց պետութեան հոգևորականութեան ժողովների մէջ, այնպէս որ դրանով վերջ տրուեց հոգևոր հովիւների մէջ մինչև այդ տեղի ունեցող այն անվայել դրութեանը, որ երբեմն ծեծով էր վերջանում։

---

[1] Գահազուրկ ընտանիքների վանական ժառանգները բնականապէս հաշուի չեն առնուում, ինչպէս Ապսիմարոսի որդի Թեոսիոս Եփեսացին եւ Իգնատիոս պատրիարքը։ Միայն մի բիւզանդական իշխան եմ գտել Ամորիոնի գահի վրայ, Ադրիան պանսեբաստոս Մերասոսը, իրեւ վրդ. Յովհաննէս Կոմնենի։

[2] Միլիոյ՝ Պատմ. Բիւզ. կայսրութեան հաս։ Ս. էջ 313 (Finlay hist. of the B. Empire).

Սաթլիանոս Նիոյկեսարացու ժամանակ Ոգնատեանք նորից իշխանութեան հասնելով, յարաբերութիւն սկսեցին Հռովմի հետ, և երկար բանակցութիւններից յետոյ, վերջապէս 900 թ. միութիւնը իսկապէս գլուխ եկաւ։ Սակայն այդ միայն հռովմէական եկեղեցու կառավարութեան և բիւզանդական պետութեան վարչութեան պարզ արտաքին միութիւն էր. նա այնքան քիչ արժէք ուներ, ինչպէս բոլոր այն բազմաթիւ միութիւնները, որ ստեղծուում էին հետևեալ վեց ու կէս դարերի ընթացքում։ Ժողովուրդները շարունակում էին առաջուայ պէս բաժան մնալ ազգովին և կրօնապէս։

Բայց աւելի նշանաւոր է Լէոնի օրէնսդրական գործունէութիւնը։ Արդէն Բազիլեոսը նորից մշակել էր տուել Յուստինիանի օրէնսգիրքը և 879 թ. հրատարակել այդ աշխատութեան արդիւնքը՝ պրոխեյրոս կանոն (Procheiros kanon-առձեռն կանոնագիրք) որի վրայ 884-886 թ. աւելացաւ գործածութեան մէջ եղած օրէնքների երկրորդ ձեռնարկը՝ էպանագոգէ-Epanagoge։ Նրա որդու ժամանակ ամբողջ տէրութեան համար հրատարակուեց իսկական գլխաւոր աշխատութիւնը՝ բազիլիկա-Basilika-ժողովածուն 887-893 թ. 60 գրքերով իբրև ընդհանուր գործածութեան օրէնսգիրք։

Արտաքուստ նրա կառավարութիւնը դէպքերով աղքատ է և խիստ դժբախտ։ Քրիստոնեաները Սարակինոսների դէմ պատերազմում էին փոփոխակի յաջողութեամբ։ Բիւզանդացիք կողոպտում էին մինչև խորը Ասորիքը։ Իսլամական ծովահէնները դարձեալ առաջուայ պէս Էգեյեան ծովի պատուհասն էին։ 888 թ. ասպատակեցին Սամոսը, 902 թ. Թեսալիայում կործանեցին Դեմետրիասը։ Այս յարձակումների իսկական դեկավարը և քրիստոնեաների ամենակատաղի թշնամին, ինչպէս միշտ, փոքր ասիական ծովափերից մի հաւատափոխ էր Լեւոն Տրիպոլսեցին։ Նորան յաջողուեց միմիայն 54 նաւով, որոնց նաւավարները մեծաւ մասամբ «Ոթոմպացիներից» էին, երբ նա յանկարծակի երևաց Յուլիսի 29 904 թ. բոլորովին անպատրաստ Թեսալոնիկէի առաջ, որ պետութեան երկրորդ քաղաքն էր, երկու օր անցած ծովի կողմից մտանել քաղաքը և անչափ աւար առնելով և գերիներ վերցնելով (22,000 հոգի) հեռանալ։ Սիկիլիայում և Ստորին Իտալիայում ևս տարեգիրները փիլիսոփայի ժամանակ հայտնում են միայն դժբախտ պատահարներ։ 889 թ. Յոյները Ափրիկացիներից ծովի վրայ մեծ ջարդ կրեցին Միւլէի (Մելազոյի) մօտ։ 901 թ. ընկաւ Ռեգիոնը, իսկ 902 թ. Տաւ-

բոմենիոնը՝ որ յունական իշխանութեան վերջի յենարանն էր։ Նմանապէս Բարին Ստորին Իտալիայում թէև ժամանակաւոր, ընկաւ Բենեվենտի Լանգոբարդների ձեռքը։ Ամեն տեղ Լեւոնի թոյլ և անընդունակ կառավարութիւնը թողնում էր իւր բնորոշ կնիքը։ Բուլգարների հետ էլ չհասկացան խաղաղութիւն պահպանել։ Սիմէոն ուժեղ ցարը (893 927), որ վեցերորդ պատրիարքը կարգելով բուլգարական ինքնագլուխ եկեղեցոյ հիմնադիրն էր դարձել, չկամեցաւ այլ ևս երկար համբերել, որ իւր պետութիւնը կողոպտուի մի քանի Յոյն մեծ վաճառականների մենավաճառութիւնից։ Սակայն Բիւզանդիոնը դիմեց քաղաքական կուի այն միջոցին, որ վաղուց յաջողութեամբ փորձուել էր։ Նա Բուլգարների դէմ հանեց Մաճառներին։ Սոքա յունական նաւատորմիղի օգնութեամբ մտան Բուլգարիա։ Սիմէոնը հաղիւ էր պաշտպանւում իւր ամրութիւններից։ Բայց Բուլգարները հետամուտ լինելով աւարով ծանրաբեռնուած թշնամուն, հիմնովին ջարդեցին նոցա Բեսարաբիայի տափաստաններում։ Այժմ կարելի էր Յունաց հետ հաշուի մտնել։ Երբ Սիմէոնը նոցա փառաւոր յաղթեց Բուլգարոփիւգոսի մօտ, իւր զէնքի ծանրութեամբ հարուածեց նաև Մաճառներին։ Դրնեպրի Պաշինակների (Պեչենեգների) օգնու-

թեամբ Բեսարաբիայում յարձակուեց Մաճառների ընտանիքների վրայ, երբ սոքա արշաւանքի էին դուրս գնացել։ Նոցա կամ կոտորեցին կամ գերեցին և Մաճառներին ստիպեցին վերջնականապէս իրանց համար պետութիւնը հաստատել Դանուբի և Թեյսի մէջ։ Ապա Բուլգարները Յոյների հետ խաղաղութիւն պահպանեցին։ Նոցա մէջ զօրեղ կերպով տարածուեց բիւզանդական-քրիստոնէական քաղաքակրթութիւնը և գրականութիւնը և բարերար ազդեցութիւն գործեց կոպիտ ժողովրդի վրայ։ Սիմէոնի դարէշրջանը բուլգարական գրականութեան ոսկեդարն է համարւում։

Այս ընդհանուր-պատմական դէպքերին հռովմէական կայսերական կառավարութիւնը մասնակցում էր միայն իբրև բոլորովին անգործ հանդիսատես։ Դրա փոխարէն արքունիքը խիստ զբաղուած էր բարձրագոյն ամուսնական խնդիրներով։ Թուլամորթ Լեւոնը երեք կին էր ունեցել։ Թէ զոցանից ամենանշանաւորը՝ Ս. Թէոփանոն, իւր ողորմելի ամուսնուն չէր սիրում, իսկապէս շատ հասկանալի է։ Ուստի նա կենակցում էր իւր հարճ Զոէյի հետ, որից նա մի որդի ունեցաւ, և այդ նրան անչափ ուրախութիւն պատճառեց։ Նա կամենում էր երրորդ ամուսնու մահից յետոյ, իւր ընտրեալ սիրուհուն կայսրուհի

դարձնել, որպէս զի որդուն օրինաւոր ժառանգ ճանաչէ։ Սակայն հոգևորականութիւնը իրեն գլուխ ունենալով Նիկողայոս Միւստիկոս պատրիարքին, ամենայն ուժով դիմադրեց նրա չորորդ ամուսնութեանը. և դրանով աւելի քաջութիւն արտայայտեց, քան իւր հոգևոր եղբայրները Ռուսաստանում ԺԶ դարում։ Նիկողայոսին գահազուրկ արին, և մի ուրիշ դիւրաթեք հոգևորական, Եւթիմիոսը, որը ընդհանրապէս յարգուած մէկն էր, բարձրացաւ պետութեան առաջի գահի վրայ։ Արևելեան պատրիարքների համաձայնութիւնը հեշտութեամբ ստացան։ Նոցա ներկայացուցիչները՝ խեղճ վարդապետներ, վազուց էին վարժուել դրամական ընծաների առաջ երբեմն փոտիոսեաններին երբեմն իգնատիոսեաններին ձայն տալ։ Աւելի վատ էր, որ Հռովմն էլ, որ արդէն դէպի անկումն էր ընթանում նոյնպէս ձայնակցեց իւր ներկայացուցիչների միջոցով։ Յունուարի 6, 906 թ. տեղի ունեցաւ Կոստանդին գահաժառանգի հանդիսաւոր մկրտութիւնը։

Լևոնի մահից յետոյ (11 Մայիսի 912 թ.) յաջորդեց իւր եղբայր Ա ղ է ք ս ա ն դ ր ը (912-913), որ մի և նոյն ժամանակ անչափահաս գահաժառանգ Կոստանդնի խնամակալն էր։ Խիստ ողորմելի իշխանը հազիւ էր կառավարում, նա միանգամայն ենթակայ էր իւր եղբօր հակառակորդներին։ Նոր պատրիարքի և Նիկողայոսի կողմնակիցների մէջ գոյութիւն ունէր ամենասխալիմ թշնամութիւն, այնպէս որ կային այնպիսիները, որ հաւատ էին ընծայում այն ամենաանմիտ լուրերին իբր թէ պաշտօնազուրկ պատրիարքը գաւաճանական յանցապարտ հնարներ է մտածում Լևոն կայսեր դէմ։ Բիւզանդիոնում շատ սովորական հակառակ հոսանքը նորից սկսուեց։ Իւր հակառակորդի բացարձակ խարդաւանքի շնորհիւ ապաբախտ Եւթիմիոսը գահազուրկ եղաւ։ «Նրա վրայ յարձակուեցին իրրև վայրի գազաններ, բռունցքներով հարուածում էին և մերունքը փետուում»։ Նիկողայոսը նորից (912-925) հանդիսաւոր կերպով գահ բարձրացաւ։ Արտաքուստ Աղէքսանդրը հասկացաւ միայն այն անել, որ անտեղի հպարտութեամբ թուլացրեց իւր և բուլգարական զօրեղ ցարի միջի լաւ յարաբերութիւնները. սակայն պետութեան բախտից նա արդէն մեռաւ միամեայ վատ կառավարութիւնից յետոյ 913 թ. Յունիսի 6, երբ նա իւր անչափահաս եղբօրորդու համար խնամակալութիւն էր հաստատել Նիկողայոս պատրիարքի առաջնութեամբ։

Պատրիարքից զատ խնամակալական խորհրդում մասնակցում էր միայն մի նշանաւոր

մարդ՝ Յովհաննէս Էլադասը. միւսները Աղէքսանդրի նախկին սիրելիներն էին, անձինք սլաւական ծագումից։ Կոստանդին Ծիրանածինը (913-959) մարմնացեալ սկզբունքն էր. Le roi règne, mais il ne gouverne pas-թագաւորը իշխում է, բայց նա չէ կառավարում։ Թէ անչափահաս և թէ չափահաս ժամանակը նա երբէք չէ կառավարել. և չէ կարելի ժխտել, որ այդ պետութեան համար բախտաւորութիւն էր. որովհետև երկրի վիճակը մնաց բացառապէս աւելի ընդունակ ձեռքերում, քան եթէ գիտութեան հովանաւորող Ծիրանածինը ինքը կառավարէր։ Զնայած դրան՝ փորձել են Ժ-րդ դարի առաջի կէսը ներկայացնել իբրև անկման շրջան՝ համեմատած պատկերամարտութեան շրջանի կայսրների հետ, որոնց շատ են բարձրացնում։ Իրաւ է՝ մակեդոնեան հարստութիւնը, երկու հոգու բացառութեամբ, միայն անունով է կառավարել, բայց դրա փոխարէն, ինչպէս հին կայսերական ժամանակները Իլլիւրական կայսրների օրով, սկսած Կլաւդիոս Գոթիկոսից մինչև Կոնստանդինը, կառավարութեան ղեկը յանձնուել էր զինուորական բարձրագոյն խորհրդի արտակարգ ընդունակ և գործունեայ զինուորականներին, որոնք մեծաւ մասամբ հայկական ծագման մարդիկ էին։ Կոստան-

դինոս Դուկասը. որ մի խիստ ընդունակ զինուորական էր, փորձեց գլորել խնամակալութիւնը, ինչպէս երևում է, պատրիարքի գիտութեամբ, որը կամենում էր աւելի հաճոյքով կառավարել այդ ոյժի մարդու հետ, քան թէ այն ժամանակուայ խնամակալութեան պալատական անդամների հետ։ Բայց երբ նա իրան կայսր հրատարակեց, յանձին հեռատես Յովհաննէս Էլադաի գտաւ իւր հաւասարակից հակառակորդ. Դուկասը և իւր ցեղը ջնջուեցին։ Յովհաննէս Էլադասը կայսեր ցանկութեամբ հրաւիրեց կայսրամայր Զոէին, որին Աղէքսանդրը հեռացրել էր պալատից, և սա մտաւ խնամակալութեան մէջ։

Արտաքուստ սկսեցին քաղել Աղէքսանդրի անխորհուրդ քաղաքականութեան պտուղները։ Սիմէոնը իւր բուլգար զօրքով ասպատակելով 913 թ. հասաւ մինչև մայրաքաղաքը. հետևեալ տարին Բուլգարները դաւաճանութեամբ առան մինչև անգամ Ադրիանուպօլիսը, թէև Յոյների հանդէպ չկարողացան պահպանել։ Կառավարութիւնը պատրաստում էր լուրջ գործողութիւն։ Բոլոր զօրագնդերը, ասիականն էլ, ժողովեցին Եւրոպայում Բուլգարներին մեծ հարուած տալու, և առաջնորդութիւնը յանձնուեց տէրութեան ամենաընդունակ զօրավարներից

մէկին՝ Լեւոն Փոկասին։ Միաժամանակ Բիւզանդական ոսկին ազդել էր Պաշինակների ղդացմունքի վրայ. սոցա շարժմանը պէտք է օգնէր հռովմէական նաւատորմիղը Ռոմանոս ծովապետի առաջնորդութեամբ։ Սակայն Ռոմանոսը բաւական երկդիմի դիրք բռնեց։ Նրա մեղքն էր որ Պաշինակներից սպասած օգնութիւնը ժամանակին չհասաւ, ուստի Հռովմայեցիք Լեւոնի առաջնորդութեամբ սարսափելի հարուած կրեցին Աքելոյոսի մօտ 917 թ. Օգոստոսի 20։ Երկու հակառակորդների՝ Լեւոնի և Ռոմանոսի խարդախ մրցութիւնը վերջացաւ Լեւոնի կատարեալ պարտութեամբ։ Կոնստանտին կայսրը միայն անուամբ հրատարակուեց չափահաս. 919 թ. Մարտի 25 կառավարութիւնը իւր ձեռքն առաւ Ռոմանոս Լեկապենոսը, որը հրատարակուեց զօրաց մեծ հրամանատար—Grosshetairreiches, (արտաքսահմանեան պահապան գնդերի զօրապետ)։ Նրա Հելենա աղջկայ վրայ ամուսնացաւ կայսրը, նա արդէն նոյն տարուայ Ապրիլ ամսում ստացաւ Բազիլիոպատոր (կայսրահայր) նորահնար աստիճանը և իւր բարձր զինուորական հրամանատարութիւնը տուեց իւր որդի Քրիստափորոսին։ Թոյլ Կոստանտինը շուտով իւր զօրեղ աներոջ անուանեց Կեսար, և նա 919 թ. Դեկտեմբերի 17 հանդիսաւոր կերպով Նիկողայոս պատրիարքից օծուեց կայսրակից 919—944)։

Պետութեան գլխաւոր սպառնալիքներն էին Բուլգարները և կրետական ծովահէները։ Բուլգարների տէրութիւնը Սիմէոնի ժամանակ (893—927) իւր բարձրութեան դագաթնակէտին հասաւ։ Նրա գործածած տիտղոսը «Բուլգարների ցար և Հռոմների իշխող (Antokrator)» բացորոշում է նրա պարզ դիտաւորութիւնը, քաղաքականապէս Արևելահռովմի ծերացած պետութեան տեղը բռնել, ինչպէս որ Պրեսլաւի մեարապլիտը, որ պատրիարքութեան աստիճանի էր հասել, ակնյայտնի կերպով պէտք է տիեզերական պատրիարքի տեղը բռնէր։ Ադրիանապօլսից, Մեսեմբրիայից և Վոդենայից շարունակ առաջ անցնելով, Բուլգարները ընդլայնում էին իրենց սահմաններում ի հաշիւ հռովմէական պետութեան. որ արևմուտքում հանում էր մինչև ադրիական ծով. երբ տիրեցին հին Իլլիւրական երկիրներին։ Բիւզանդիոնը դիմեց իւր փորձուած հին քաղաքականութեանը, Սերբերին և Կրովատներին ուղղեցին իրենց եղբայրների դէմ՝ արևելեան Բալկանեան թերակղզում։ Աղոդոբոտրոսի (927) Կրովատներից կրած ծանր պարտութիւնը և նոյն տարին պատահած Մեծ ցարի մահը սկիզբն են

բուլգարական պետութեան անկման. Սիմէոնի որդին, բարեպաշտ, խաղաղասէր և թոյլ Պեդիր ցարը (927-968) կարճ ընդհատումներից յետոյ, Մակեդոնիայում Հռոմի հետ խաղաղութիւն հաստատեց. և երկու մեծ պետութիւնների մէջ սերտ բարեկամութիւն հաստատուեց, երբ ցարը ամուսնացաւ Ռոմանոս կայսեր թոռ Մարիայի վրայ. որը առաջի բիւզանդական թագուհին էր բուլգարական գահի վրայ. Տիեզերական պատրիարքարանի քաղաքական ամենախելացի խաղն էր, որ հանդիսաւոր կերպով ընդունեցին բուլգարական պատրիարգութիւնը. դրանով բուլգարական ազգային եկեղեցին վերջնականապէս մնաց օրթոդոքս համայնութեան մէջ և Հին-Հռոմի հետ կտրուեց ամէն մի կապ։

Ստորին Իտալիայում Ռոմանոսը պատուաւոր եղանակաւ անկորուստ պահեց բիւզանդական տիրապետութիւնը։ Էդեսիան Ծովի սարսափելի պատուհասը, հաւատափոխ Լևոն Տրիպոլսեցին 924 թ. Յովհաննէս Ռադինոս Ծովապետից Լիմնոսի մօտի ահեղ Ծովամարտում այնպէս հիմնովին պատժուեց, որ կարելի էր ասել թէ Ծովային վտանգը ընդհանրապէս անցած է։

Վերակենդանութեան զօրեղ ձգտման ապացոյց են Ծառայում ամենից առաջ արեւելքի հանգամանքները, արևելքում մղած պատերազմը Բաղդատի խալիֆութեան դէմ, որը խորը կերպով քայքայուել էր և կազմալուծուում էր իւր առանձին մասերի։ Հայազգի ընտիր զօրապետ Յովհաննէս Կուրկուասը քսաներկու տարուայ ծանր պատերազմներից յետոյ (920-942) տէրութեան սահմանները առաջ տարաւ Հալիւսից մինչև Եփրատ և Տիգրիս։ Ապոխապս (Աբու-խաֆս) Մալաթիայի (Մելիտենէ) Էմիրը 928 թ. Հռոմի հետ դաշն կապեց։ Դրանով այդ կամրջագլուխը՝ մինչ այդ անհաւատների գլխաւոր յարձակման տեղը. Հռոմէացւոց պետութեան զօրեղ պաշտպանութեան տեղը դարձաւ։ Էմիրի գնդերը Հռոմէական զօրքերի հետ կռուում էին իրենց հաւատակիցների դէմ։ Յաղթութիւնը ասանելուց յետոյ, Հռոմէացիների հետ միասին յաղթանակով մտան մայրաքաղաքը, իրենց հետ բերելով գերուած Հագարացիներ։ Անհաւատ Հագարացիների համար այդ դժբախտութեան մի զարմանալի և անսպանելի նշան էր, պատմում է ուրախացած ժամանակագիրը (Գէորգ Համարտ)։ Ապոխապսի յաջորդները զրջացին իրենց ուրացութիւնը. Ծաղկեալ Մելիտենէն և նրա հարևան քաղաքները դրաւեցին և կործանեցին։ Հռոմէական մի կուրատոր

(Հոգաբարձու) հրամանատար էր այն տեղերի վրայ, որ այնքան երկար ժամանակ Իսլամի իշխանութեան տակ էր։ Իսկ Կուրկուասը «մեծ զօրավարը» ամեն տեղ յաղթութեան նշան կանգնեցրեց, լայնացրեց Հռովմայեցիների սահմանները և կործանեց Հագարի որդիների շատ քաղաքներ։

Դրա հետ միասին ահագին նշանակութիւն ունէր արևելեան քրիստոնեաների վերածնութիւնը. Հայերի և Վրացիների, որոնք թոթափեցին Իսլամական լուծը, Բագրատունիները արդէն Բալիկեանոսի ժամանակ հաստատել էին մի նոր հայկական անկախ տէրութիւն, և կայսրը Աշոտ իշխանաց իշխանին թագաւորական թագ էր ուղարկել, երբ որ խալիֆը և՛ս 885 թ. հանդիսաւոր կերպով նրան թագաւոր էր հրատարակել։ Աշոտի (889 թ.) և նրա քաջասիրտ Սմբատ որդու մահուանից յետոյ, Արաբները նորից գերիշխող դարձան. Հայաստանում տիրում էր անիշխանութիւն։ Սակայն Սմբատի արժանաւոր որդի Աշոտ «Երկաթը» (915-928) Վրաց և Արխազների թագաւորների օգնութեամբ մաքրեց երկիրը Արաբներից և Յոյների դաշնակցութեամբ Բագրատունեան իշխանութիւնը հասցրեց ամենամեծ բարձրութեան։ Խալիֆը 922 թ. նրան շնորհեց շահն

շահ-արքայից-արքայ տիտղոսը, դա դաղարկ տիտղոս չէր. դրանով հանդիսաւոր և պաշտօնական կերպով ճանաչուեց նրա գերիշխանութիւնը Վասպուրականի, Աղուանքի, Վրաստանի և Արխազիայի քրիստոնէական ազատական իշխանութիւնների վրայ։

Այդ ժամանակից սկսած Հայաստանը միանգամայն դուրս եկաւ խալիֆայութեան իշխանութեան շրջանից, սերտ կերպով կապուած էր Արևելահռովմի հետ և կազմում էր քրիստոնէութեան համար պաշտպանութեան նախադուռ։ Իսկ Իսլամը, որ մինչև այդ Արևելքի ներկայացուցիչ էր հանդիսանում, ինչպէս երբեմն Պարթևների ժամանակ, յետ մղուեց և սահմանափակուեց միայն, Ադրբեջանի լեռնային սահմանների յայնկոյս մասում։ Հայերը և միանգամայն երկրորդական դերում Վրացիները, այն ժամանակ իշխում էին և իրենց ձեռին ունէին ընդհանուր-պատմական դրութիւնը։ Այդ ազգի քաջ և խելօք որդիները արժանացել էին արևելա-հռովմէական պետութեան թէ բարձր զինուորական շրջանում և թէ կայսերական դիւանում ամենաազդեցիկ և ղեկավարող պաշտօնաներ և վարում էին ամենաարժանաւոր եղանակով։ Կարծես երկնքի օրհնութիւնն էր իջել, «աստուածավախ, քրիստոսասէր» Ռո-

մանոս կայսեր վրայ։ Մծբնի առումից յետոյ հանձարեղ Կուրկուասի ձեռքով. սա ստիպեց Եդեսիայի բնակիչներին, որ վերջին ծայր պաշարուած էին, իրենց քաղաքի մեծ սրբութիւնը յանձնել իրեն՝ «Նորա աստուածային անձեռագործ պատկերը, որ իւր հօր անփոփոխ պատկերն է»։ Ամբողջ տէրութիւնը մեծ ոգևորութեան մէջ ընկաւ։ Հանդիսաւոր յաղթական գնացքով, բոլոր քաղաքներում հոգևորականութեան, մեծամեծների և ժողովրդի ցնծալից պատգամաւորութիւններով ուղեկցուելով. այդ սրբասուրբ պատկերը բերուեց մայրաքաղաք, և այնտեղ ընդունեցին այնպիսի արտակարգ շքով և հանդիսով, ինչպիսին սովոր էր տիեզերական գահի հոգևորականութիւնը կատարել այդպիսի առիթներում։

Ռուսները, որ իրենց Եգոր Մեծ իշխանի առաջնորդութեամբ 941 թ. հաղարից աւելի նաւերի վրայ, 40,000 մարդով անլուր չարիքներ գործելով, յարձակուել էին մայրաքաղաքի վրայ, այնպէս հիմնովին ջարդ կրեցին ցամաքի վրայ Կուրկուասից, իսկ ծովի վրայ Հիերիոնի մօտ Թէոփանէս Պատրիկիոսից, որ երկար ժամանակ հանդարտ մնացին և շուտով Արևելահռոմի հետ շատ նշանաւոր վաճառականական դաշն հաստատեցին։

Երբ այդպիսով Ռոմանոս կայսեր կառավարութիւնը արտաքուստ ցոյց էր տալիս այդպէս ուժեղացած վերածնութիւն, որը ունեցաւ Արևելահռոմի Ժ-րդ դարում, ներքուստ էլ գործում էր արտակարգ եռանդով։ Ռոմանոսը ամենից առաջ իւր գլխաւոր ուշքը դարձրեց, ինչպէս ցոյց են տալիս նրա կարգադրութիւնները, հողատիրական հարցի վրայ։ Նա ուղղակի Աստուծուն էր օրինակ առել երբ նա հոգ էր տանում անտեսապէս թոյլերի մասին հարուստների ճնշումների դէմ։ Մեծ կալուածների աւելանալը կործանել էր պետութեան տնտեսութիւնը։ Այդ պատճառաւ, ասում էր կայսրը, պէտք է օրէնսդրութեան թուրը հանել պատենից ներքին թշնամիների դէմ. որովհետև հպատակների պաշտպանութիւնը բռնակալական ճնշումներից աւելի պակաս պարտք չէ, քան պետութեան սահմանների վերահաստատութիւնը և ամրացնելը։ Արդեօք տրուեց գիւղական կալուածները ազատ վաճառելու և գնելուն Մեծ սովի տարուց 927 թ. սկսած որը առաջին անգամ դրաւեց կառավարութեան ուշադրութիւնը տնտեսական հարցերի վրայ, ոչնչացած հրատարակեցին բոլոր պայմաններն որով մէկը այդպիսի նոր կալուածք էր ձեռք բերել և նորից պէտք է վերադար-

ձնուեր հին սեպհականատէրերին, մինչև անգամ առանց փոխարինելու բարեոքելու համար կատարած ծախքերը։ Միայն տնտեսութիւնը չէր որ վնասուել էր մեծացող կալուածատիրութիւնից՝ այդ վնասակար էր ազդում նաև զինուորականութեան վրայ։ Զինուորական ծառայութիւնը հիմնուած էր. ինչպէս հին հռովմէական կայսրների ժամանակ, զինուորական կալուածների վրայ, որոնք որ անվաճառելի էին։ Եթէ խաշնապահութեան տնտեսութեամբ պարապող մեծամեծները գնում էին այդ հողերը, այն ժամանակ զօրաժողովը դժուարանում էր։ Թէև կառավարութիւնը շատ աննշան յաջողութիւն ունեցաւ՝ այդպէս կռուելով ժամանակի զօրեղ հոսանքի դէմ, այնու ամենայնիւ ամենայն դովքի արժանի է այդ վիանդամայն դեղեցիկ ձգտումը, որով առնուազն սահման տուաց ամենավատ չարիքներին։

Եւ այն էլ չպիտի մոռանալ, որ ներքուստ և արտաքուստ այդքան զօրեղ կերպով դրաղուած կառավարութիւնը, ստիպուած էր շարունակ կռիւ մղել արքունիքի ըմբոստ կուսակցութիւնների և մեծամեծների դաւադրութիւնների դէմ։ Սակայն Ռոմանոսը հասկանում էր խստութեամբ ճնշել ո և է ընդդիմութիւն. սակայն ուշադրութեան արժանի

են այդ դէպքերը՝ ամոթ ազնուականութեան նշանակ ծառայելով։ Դոքա անհամոյ կերպով յիշեցնում են արևմուտքի քաղաքակրթ. աննշան պետութիւնների զուգահեռական համանման պատահարներն։

Անգութ կերպով ամեն ինչ ստի տակ տալով, Ռոմանոսը առանց ակնածութեան, միայն իւր տան մասին էր մտածում։ Ուր բոլոր որդիները անուանեց կայսերակիցներ, Քրիստափորոսը, Ստեփանոսը և Կոնստանտինոսը (924 թ.). նա կայսերական թագ դրեց մինչև անգամ իւր թոռ՝ Քրիստափորի որդի Ռոմանոսի գլխին։ Քրիստափորի մայրը Օդոստուհի կոչուեց. (923 թ.) սրա Մարիա աղջիկը պսակեցին Բուլգարների ցարի հետ։ Վերջապէս Ռոմանոսի չորրորդ որդին, որ հիմնական վարժութիւն ունէր ձիավարութեան արհեստում և որի հոգեկան ընդունակութիւնները հաւասար էին ներկայիս թունդ Արիստոկրատ զուարճասէրի կամ ձիարշաւների սիրահարի հասկացողութեան, ընտրուեց որ զարդարի Ս. Անդրէասի և Ս. Սաքիւռոսի գահը, միակ անարժան պատկերը. որ պղծել է այդ գահը։ Մակեդոնեան կայսերական տան օրինաւոր ժառանգը. ուստիմնական անուանական Կոստանդին կայսրը, երդմնազանցութեամբ. որ սովորական էր այն ժամանակուայ Բուլգաց

մէջ՝ 922 թ. երկրորդական տեղ ստացաւ. յետոյ նրանից առաջնութիւն ստացան նաև միւս Լեկապենները. «և նա՝ որ պէտք էր առաջինը լինէր՝ հինգերորդը դարձաւ»:

Ռոմանոսը թաղեց նաև եկեղեցական վէճը: Երբ կրքոտ Նիկողայոսը 919 թ. Աղէքսանդրի ձեռքով նորից վերահաստատուեց՝ տախտակներից ջնջեց հռովմէական եպիսկոպոսի անունը՝ և չթոյլ տուեց եկեղեցիների մէջ յիշատակութիւնը: 920 թ. մի հանդիսաւոր միութիւն կնքուեց (բնականաբար բոլորովին անօգուտ)՝ որով ընդունուեց յունական եկեղեցու սկզբունքը՝ անընդունելի համարել չորրորդ ամուսնութիւնը: Նիկողայոսը իւր կուրութեան մէջ չէր նկատում՝ որ դրանով ինքը գործիք է դարձել խորամանկ կառավարչի ձեռին: Միակ օրինական ժառանգը նրանով՝ որ եկեղեցին անվաւեր հրատարակեց նրա հօր ամուսնութիւնը՝ բարեպաշտներից հալածուեց իբրև ապօրինի զաւակ՝ մինչդեռ բռնակալի տունը «անում էր՝ ինչ որ Աստուծուն հաճելի էր»: Վարդապետներ և աղքատներ մեծ եռանդով փա սրանում էին՝ «ամենամեծ հաւատացեալ և ամենաջերմեռանդ օրթոդոքս Ռոմանոս կայսեր հրաշալի գործերը և անթիւ բարիքները»:

Այդպէս է այդ դժի մարդը երկաթէ

խարազանով կառավարել բիւզանդական երկիրը: Մակեդոնեան տան փոխարէն Լեկապենների հարստութեան կատարեալ հաստատութիւնը՝ լոկ ժամանակի խնդիր էր՝ երբ ինչպէս որ պայծառ երկնքից մի կայծակ՝ անսպասելի հարուածդ դիպաւ նրան՝ և այն էլ այնպիսի տեղից՝ որ ոչ ոք ոչ սպասել էր ոչ էլ կարող էր սպասել:

Գիտակցօրէն և սկզբունքով անխնայ կերպով Ռոմանոսը ճնշել էր բռնապետական որ և է ձգտում՝ արհամարհելով օտարի բոլոր իրաւունքները: Միայն նա հաշուի չէր առել իւր սեպհական որդիների դաւաճանութիւնը: Սարսափելի վրէժ էր՝ որ այդ հանճարեղ բայց բարոյական հիմունքներից զուրկ յանցապարտը՝ դլորուեց այն անձանց ամենազզուելի անշնորհակալութեան պատճառաւ՝ որոնց շահի համար ոտի տակ էր տուել ամեն աստուածային և մարդկային իրաւունք: Ի զուր էր անցել իւր խստակեաց բարեկամ՝ Սերգիոս վարդապետի գուշակութիւնը՝ թէ նա ունենալու է հեղի քահանայապետի վիճակը: Անդրանիկ որդին մեռաւ հօրից առաջ: Ստեփանոս և Կոնստանդինը 944 թ. Դեկտեմբերի 16-ն կալանաւորեցին իրենց հօրը[1] և ուղարկեցին

1. Թեոփանեսը այդ գործի մասնակից եղած ուղղութիւն ցուցող համարում է Կոստանդին կայսեր: Ուրեմն նա այն-

Պրոտէ կղզու վանքը. «որպէս զի վարդապետների հետ փիլիսոփայութեամբ զարապի»։ Այնտեղ նա մեռաւ 948 թ. «դահից գլորուած, ինչպէս ծեր Կրոնոսը Զեւսից»։

Բայց արդէն 945 թ. Յունուարի 27-ն եկաւ, ապոստամբներն էլ ստիպուած էին հօրը մօտ վանք մտնել, որ ընդունեց նոցա դառը ծաղրով։[1] Ժողովուրդի ցնծութիւնը օրինա-

---

պիսի ողորմելի մի բուլամարը չէր, ինչպէս ընդհանրապէս ընդունում են, նրա անէրը դէպի նրան իւր բռնած դիրքով կատարեալապէս արժանի էր այդ վրիժառութեանը։

1. «Ինչ մեծ տօնախմբութիւն որ Ձերդ Մեծութիւնները բարեհաճել են այցելելու մեզս նուաստութեան։ Ցաւակցութիւնը, կարծում եմ, որ ինձ հալածել է պալատից, չէ թոյլ տուել Ձերդ սիրելիութեանը այնտեղ երկար մնալու։ Ինչման չաւ էիք մտածել, որ ինձ այնման առաջուց ուղարկեցիք։ Որովհետև իմ սիրելի եղբայրներս եւ Աստուծոյ համար հանաչանացողներս, միանգամայն նուիրուած լինելով երկնային գիտութեանը, չէին հասկանալ, թէ ինչպէս վայել է ընդունել կայսեր, երբ նոքա ինձ, որ այնման վարժ եմ կայսերական արքունիքի կարգերին, չունեցային։ Հաճեցէք ուրեմն։ Ձերդ պատրաստ է Ձեզ համար, աւելի բարձր քան երբ նրան զովացրած լիներ Այպենէքը. ինքոյշ լորի, կանաչեղէններ եւ նորաքաղ տանձեր Ձեր տրամադրութեան տակ են։ Ծովից ստացած ընտիր խորտիկներ այստեղ չեն վնասում մեր ստամոքսներս, աւելի սովոր են յաճախակի պատերը։ Բազմաթիւ եւ շքեղ շքախումբը այս աղքատութեան մէջ մեզ չեն հետաքրքիր, նա միայն Ձերդ մեծութիւններին է ընդառաջում, որ եկել էք որպէս զի Ձեր նոր ծերութեան օրերը մենակութեան զոհ տուած չլինէք»։ (Liudprandi anfapod. V. 23)։

ւոր ժառանգի վերահաստատութեան մասին՝ ցոյց տուեց թէ օրինականութեան գաղափարը ինչքան զօրեղ յառաջադիմութիւն էր արել Բիւզանդիոնում, որ մինչ այդ փարժուել էր զինուորական բացարձակ կառավարութեան։ Հարիւր կամ երկու հարիւր տարի առաջ այդ բանը ուղղակի անհասկանալի կլինէր։ 797 թ. երբ ժողովուրդը ցոյց տուեց ամենաթեթև կարեկցութիւն դժբախտ Կոնստանտին Զ-ի համար։ Լեկապենների չափազանց զօրեղ հարստութիւնը յանկարծակի հաւասարուել էր փոշու հետ։ Եւ այն բոլոր խարդախութիւնները որ նիւթում էին անենշան Թէոփիլակտոսի պատրիարքական պալատից, չկարողացան նրանց նորից բարձրացնել։ Կոնստանդինը Լեկապենների կողմնակիցների դէմ յենուեց Փոկասի պատերազմասէր ընտանիքի վրայ։ Փոկաս բարդասը, երբեմն գահակալական թեկնածու Լեւոնի եղբայրը, դարձաւ պալատականների աչքը, իւր երեք հմուտ զինուորական որդիները՝ Նիկեփորոս, Լեւոն եւ Կոնստանտինը ստացան ամենանշանաւոր հրամանատարութիւնները Ասիայում։ Գիտնական մի այն գրքերով հետաքրքրուող մարդու փոխարէն

իսկական կառավարութիւնն անցել էր նրա փառասէր ամուսին Հեկինէի և սրա ընտրեալ Բազիլիկոս հետևորդի ձեռքը։

Ասիայում Համդանիդների դէմ մղած պատերազմը չափազանց ժլատ բարդաս Փոկասի զեկավարութեամբ, սկիզբը այնքան էլ յաջող չէր։ բայց նրա ընդունակ Նիկոփորոս որդուն յաջողուեց կարգ հաստատել զօրքի մէջ և կանոնաւորել վարչական մարմինը։

Կոստանդնի կառավարութեան վերջի փայլ տուողը եղաւ Ռուսաց մեծ իշխանուհու այցելութիւնը, որը իւր բազմաթիւ հետևորդների հետ մկրտուեց 957 թ. մայրաքաղաքում։ Բիւզանդիոնի համար այնքան մեծ նշանակութիւն ունեցող ժողովրդին քրիստոնէութիւն ընդունել տալը վերապահուած էր յետագայ սերունդներին։ Երբ Կոստանդին Է-ը 959 թ. Նոյեմբերի 9 մեռաւ, տէրութիւնը թողեց իւր Ռոմանոս Բ որդուն (959—963), որ շատ երիտասարդ էր, շուայտ և միանգամայն անբարոյական։ Հայրը սկիզբը նրան ամուսնացրել էր Պրովանսի Հուգո թագաւորի ապօրինի Բերթա աղջկայ վրայ. յետոյ գահաժառանգը սաստիկ սիրահարուեց մի պանդոկապետի գեղեցիկ, փառասէր և փչացած աղջկայ՝ Անաստասի վրայ, որին թողել հայրը 957 թ. Թէոփանո անունով գահաժառանգի համար կին առաւ, որ հազիւ 19 տարեկան էր։ Սա կայսերական տան շար ոգին դարձաւ։ Ռոմանոսի ժամանակ իշխանութիւնը վարում էր պատրիկիոս Յովսէփ Բռինգասը, որ խիստ ընդունակ էր։ Նա յանձնեց տէրութեան ամենալաւ զօրավարին, Նիկեփորոս Փոկասին, պալատականների գլխաւոր կրետական ծովահէնների դէմ ուղղած ծովային մեծ արշաւանքի զեկավարութիւնը։ Վաղուց էր այդպիսի փառահեղ արմատ չէր լողացել հռովմէական նաւահանգիստներում։ Ընաիր զեկավարութեանն էլ համապատասխան եղաւ անօրինակ յաջողութիւնը։ Սոսկալի արիւնհեղութեամբ 961 թ. մայիսին յարձակմամբ առան կրետական Խանդաքս գլխաւոր քաղաքը և հոգի հետ հաւասարացրին։ Մահմեդական բնակիչներին կամ դուրս քշեցին կամ հռովմէական քարոզիչներով որոնց առաջնորդն էր Ս. Նիկոնը, քրիստոնէացրին։ Այդ գլխաւոր հարուածով հռովմայեցիները վերջապէս նորից տէր դարձան իրենց ծովերին։

Ասիայումն էլ էր Նիկեփորոսը յաջող։ 962 թ. նրա ձեռքն ընկան Դոլիխէ, Հիերոպոլիս և Կիլիկեան Անարզաբան։ Նա յաղթեց Համդանիտեան ցեղից Սէյֆ Ադդավլային իւր իսկ Հալէպ քաղաքի մօտ, գրաւեց արուար-

ձանները և նոյն իսկ քաղաքը. միայն միջնաբերդը պաշտպանուեց։ Երբ Դամասկոսից արաբական զօրք մօտեցաւ, նա հարուստ աւարով յետ քաշուեց։

Այդ մեծ յաջողութիւնների ժամանակ 963 թ. Մարտի 15 մեռաւ Ռոմանոս Բ. թոդնելով իւր Թէոփանէ կնոջը և երկու անչափահաս որդի Բասիլեոս (957) և Կոնստանդինոս Ը (961 թ)։ Նիկեփորոսը, որ Բռինդասի ղեկավարութեամբ կազմակերպուած խնամակալական կառավարութիւնից առաջ, այրի կայսրուհուն հաւատարմութեան երդում էր առել, երբ լսեց որ նրա դէմ թակարդներ են լարում, ասիական զօրքի գլուխն անցած, երևաց մայրաքաղաքի առաջ, ստիպեց Բռինդասին յետ քաշուել և 963 թ. Օգոստոսի 16ն պատրիարքի ձեռքով կայսր օծուեց և շատ չանցած ամուսնացաւ կայսերական այրու վրայ։ Նիկեփորոս Բ-ի (963-969) և իւր յաջորդ Յովհաննէս Զմշկիկի (969—976) և Բասիլեոս Բուլգարաակտոնոսի (բուլգարասպան) (976-1025) կառավարութիւններն են ներկայացնում քիչ զանգական իշխանապետութեան իսկական բարձրագագաթը։ «Այն ժամանակ երևաց Փոկասը իբրև կայծակ և սլացաւ Հռովմայեցիների թշնամիների դէմ...Նա կոր-

ծանեց, այրեց, գերեվարեց բարբարոսների քաղաքները և երկիրները։ Բիւրաւոր թշնամիներ ջարդեց և տարածեց Հռովմայեցիների իշխանութիւնն ու ոյժը։ Սարսում էին Արաբները. դողում էին Հայերն ու Ասորիները. Սարակինոսները նահանջում էին և թուրքերը փախչում. և Հռովմայեցիները տիրապետում էին նոցա տեղերին ու երկիրներին և Փոկասի անունը բոլորի համար սարսափելի էր» (Գէորգ Համարտոլոս)։

Նիկեփորոսը կազմակերպել էր մի ընտիր զօրք, Հայեր և Վրացիներ, Սլաւներ և Ռուսներ այդ ի մի հաւաքուած օտար վարձկաններ զօրքի միջուկն էին կազմում։ Զինուորական ծախքը կլանում էր տհագին գումարներ, և ժողովուրդը կատաղած էր ծանր հարկերի ճնշման տակ, որ ոչ այնքան ազատավիտ կայսրը բարձել էր քաղաքացի ժողովրդի վրայ։ Հոգևորականութեանն էլ ստիպեցին իրենց հարուստ ստացուածքներից մաս հանել պետութեան ծանր բեռան համար։ Որպէս զի իւր զինուորների հայրենասիրութիւնը գրգռի. պահանջում էր, որ Ցաճիկների դէմ պատերազմի ժամանակ բոլոր սպանուածներին մարտիրոս հրատարակեն։ Լոկ քահանայական սահմանափակութեան արգասիք էր, որ ս. Պոլիկտոսը՝ այն ժամանակուայ տիեզերա-

կան պատրիարքը, բացէ ի բաց մերժեց այդ՝ ս. Բարսեղի կանոնների հիման վրայ, թէև եկեղեցական պատմութիւնից շատ բացառիկ դէպքեր կոգնէր՝ եթէ փոքր ինչ տրամադիր կամք ունենար և աւելի շատ հայրենասիրութիւն: Բայց իրաւ է շատ խելացի Նիկեփորն էլ սահմանափակել էր վանքերի և անկելանոցների անմիտ և անսահման սեպհականութիւններին, և հոգևորականութիւնն այդ բանը նրան չէր ներում:

Հոգևորականութիւնը դարձ՛ալ խանգարեց կայսեր եկեղեցական քաղաքականութիւնը հերցուածողների վերաբերմամբ: Նրա դէրդմամբ Անտիոքի յակոբեանների պատրիարքը յորդոր էր արձակել իւր հաւատակիցներին, գնալ և բնակութիւն հաստատել աւերակ դարձած Մելիտենէում: Կայսեր հանդիսաւոր խոստմամբ, թէ չեն վերսկսուիլ քաղկեդոնականութեան ցաւալի հալածանքները, հաւաքուեցին մեծ թուով Ասորիներ: 28 ասորական եկեղեցի զարդարում էին քաղաքը, բազմաթիւ վանքեր հիմնուեցին քաղաքում և շրջակայքում. Մ՛ար Յոհաննան պատրիարքը՝ Սրեգաս (965—985) մականուանեալը իւր դահը հաստատեց Բարիգկեոնոբիում կոչուած տեղում: Քաղաքականապէս ահագին նշանակութիւն ունէր՝ որ Հռովմայեցւոց պետութիւնը ճանաչում էր նաև իբրև արևելքի քրիստոնեաների պաշտպան: Սակայն Մելիտենէի Յունաց արքեպիսկոպոսը սաստիկ նախանձից մղուած, պատրիարքի աջակցութեամբ յաջողցրեց, որ յայտնապէս դրժելով տուած խօսքը, սկսեցին Ասորի եպիսկոպոսներին բանտ նստեցնել, Կոստանդնուպոլիս հրաւիրել և նման միջոցներով ստիպել միանալ իրենց հետ: Այն բոլոր մանր հալածանքները, որոնց մասին Յոյները լատինական իշխանութեան ժամանակ գանգատւում էին, իրանք էին իբրև իշխողներ գործադրում իրենց Ասորի հաւատակիցների դէմ և դրանով նոյն քաղաքական կարճատեսութիւնը արտայայտեցին ինչպէս Լատինները:

Օտոն Մեծի փորձը՝ արևմտեան կայսրութիւնը արևելահռովմէականի հետ միացնել, անյաջող անցաւ, մասամբ տաքարիւն միջնորդի՝ Կրեմոնայի Լիւտպրանդ եպիսկոպոսի անհմտութեամբ, մասամբ Օտոնի մեծամեծ պահանջներով, որ այնքան միամիտ էր, որ Յոյներից պահանջեց իրան տալ Ստորին-Իտալիայի յունական նահանգները իբրև Թէոփանուհու բաժին:

Աւելի նշանաւոր էին Նիկեփորի յաջողութիւնները Ասիայում: Նա 964 թ. տիրեց Անտարսը, Ռոսոս, Ագանա և Մ՛ոպսուհեստիա

քաղաքներին 965 թ. ընկաւ Տարսոնը որ մի տարի առաջ պաշարուած էր, և ահագին աւար առան։ Միաժամանակ նաւատորմիղը Նիկեփորոս պատրիկիոսի առաջնորդութեամբ առաւ Կիպրոսը։ Երկամեայ միջոցից յետոյ 968 թ. Կայսրը 80,000 զօրքով վերսկսեց ասիական պատերազմը։ Հարուածը ուղղուած էր ասորական Անտիոք մայրաքաղաքի դէմ։ Լաւոդիկիա, Հիերոպոլիս, Հալէպ, Արկա և Էմեսան առան. Տրիպոլիսը և Դամասկոսը հարկ էին վճարում։ Զմեռուայ ընթացքում, յանդուգն և տաղանդաւոր Բուրցես զօրավարին յաջողուեց, որ հրամանատար էր Անտիոքի մօտ բանակ դրած պահապան զօրագնդին, կիլիկիական ձմերանոցից օգնութեան հասնող Պետրոս զօրապետի աջակցութեամբ, գրաւել նշանաւոր մայրաքաղաքը՝ որը 328 տարի հնազանդուել էր անհաւատներին։ Բարկացած կայսրը, որ համա կատասխան հրաման էր արձակել, այդ յաղթութեան դափնին իրան վերապահելու, երկու զօրապետներին էլ զրկեց հրամանատարութեան իրաւունքից։

Աւելի ադնիւ վարուեց Նրէաեին տիրոջի՝ Նիկեփորոսի հետ, որը Կայրուանի Օֆատիմիդների ձեռքը գերի էր ընկել, Սիկիլիային վերստին տիրելու անյաջող փորձի ժամանակ։ Նա նրան ազատեց յետ տալով Մոհամեդի

սուլթանը, որ առել էին Ասորիքի տիրապետութեան ժամանակ։

Իսմանակիցների հպարտութիւնը Ասորիքի և Միջագետքի մինչև յայսկոյս Եփրատի գրաւման պատճառաւ արտայայտուեց նրանով, որ հրատարակուեց Հիերոկլէսի պետութեան նկարագրութիւնը, որ այդ ժամանակից է և պարունակում է Նիկեփորից նորից գրաւած պետութեան չափը։ Դիտաւորեալ կերպով—որովհետև անհաւատներին էին հպատակ—բաց են թողնուած Միջագետքի մեծ մասը յայսկոյս Եփրատի, Փիւնիկեան, Պաղեստինը, Եգիպտոսը և Կիւրենայիկան։

Նոյնպէս զօրեղ էր Նիկեփորոսի քաղաքականութիւնը եւրոպական հոգի վրայ։ Որպէս զի Սիմէոն ցարի յաղթութիւնների վրէժը առած լինի, ծրագրեց ընկճել բուլգարական ամբողջ պետութիւնը։ Տարսոնի անկումից յետոյ 965 թ. արշաւեց Բուլգարիա և այդ նպատակով միացաւ Ռուսաց վայրենաբարոյ Սվեատոսլաւ իշխանի հետ՝ մի մեծ միացեալ գործողութեան համար։ Վերջինս 967 թ. երևաց Սալինայի գետաբերանում զօրեղ ծովահէնների նաւատորմիղի գլուխ անցած։ Դրըստեր և Դանուբի ուրիշ քաղաքներ ընկան հզօր պատերազմական հերոսի ձեռքը, որը Պրեսլաւում հաստատեց իւր

ձմեռուայ բանակը։ Ռուսների ջախջախիչ յաջողութիւնները սարսափեցրին թէ Յոյներին և թէ Բուլգարներին։ Շուտով կայսրը Ս. Պետրոսի՝ Բուլգարների ցարի հետ դաշինք հաստատեց, որ ամրապնդեցին փոխադարձ ամուսնութիւններով և բուլգար իշխաններից պատանդ վերցնելով։ 969 թ. Ռուսները հետ կանչուեցին դէպի Կիեւ Պեղենիգների յարձակումով։ Սակայն արդէն նոյն տարուայ դարնանը Սվեատոսլաւը վերադարձաւ Բուլգարիա և «առաւ Պրեսլավեցը նիզակով»։ Բորիս Բ-ը նրա ձեռքը դերի ընկաւ։ Նրա յարձակումը Հռովմայեցւոց տէրութեան վրայ արդէն ընկնում է հետևեալ կառավարութեան ժամանակ։

Նիկեփորը չէր սիրուած միայն մայրաքաղաքում. նահանգներում ամեն ինչ խաղաղ էր, և զինուորները նրան աստուածացնում էին։ Նա զոհ գնաց դժգոհ սպաների դաւադրութեան, որոնց կարգին էր պատկանում հալածուած Բուռցեսը, և ամենից առաջ Հռովմայեցւոց զօրավարներից ամենաընդունակը՝ Յովհաննէս Զմշկիկը։ Նրա Թէոփանէ ամուսինը դաւադրութիւնից անմասն չէր։ 969 թ. Դեկտեմբերի 10 ընկաւ մեծ իշխողը, և անմիջապէս դրանից յետոյ Յովհաննէս Զմշկիկին կայսր հրատարակեցին։ Նա անկասկած Նիկեփորոսի հետ տէրութեան ամենաընդունակ զօրավարն էր, ազգով հայ, իւր հայրենակիցները ոգևորութեամբ էին խօսում Հռովմայեցւոց կայսր Կիւրժանի (Yannis) մասին։ Այդ ծագումը նրա ժողովրդականութեանը Յոյների աչքում չվնասեց. չէ որ այն ժամանակուայ զինուորական բարձր պաշտօնեաները համարեա միշտ Հայերից էին և Վրացիներից։ Նա ժողովրդի համակրանքը գրաւեց իւր ազնիւ, համարեա շռայլող բնաւորութեամբ, որ շատ էր տարբերում Նիկեփորի խնայող տնտեսութիւնից և երկար ժամանակ դժուար էր շարունակել։ Պոլիւեկտոս պատրիարքը կամենում էր Յովհաննէսին չօծել, որովհետև նրա ձեռները արիւնաշաղախ էին. սակայն սուրբ մարդը առնաւոր սկսեց, և Յովհաննէսին օծեց ու թագ կապեց, երբ սա ոչնչացած հրատարակեց Նիկեփորի եկեղեցական խիստ օգտակար օրէնքները, բայց կայսրը Պոլիւեկտոսի մահուանից յետոյ (970) ցոյց տուեց իւր բացարձակ ինքնիշխանութիւնը՝ նրա կամակոր յաջորդի օրով։ Հայազգի կայսրը քահանաների ստրուկ չէր։

Թէոփանէին, որը երազել էր նոր ամուսնութեան մասին, փակեց մի վանքում ըստ արժանոյն. դրա փոխարէն երկու փոքրահասակ կայսրների հետ վարում էր պատկա-

ռանքով և յարգում էր իբրև պաշտօնակից-ների, ինչպէս Նիկեփորոսն էր ասել, «նա բաւականացաւ առաջի մինիստրի տատիճանով և կայսերական տիտղոսով»:

Մի վտանգաւոր ապստամբութիւն, որ շարժեցին Նիկեփորոսի Լևոն եղբայրը և նրա երկու որդիները, որոնք պահպանում էին Թեթև հսկողութեան տակ, և բոլորն էլ փորձուած զինուորներ էին, 970 թ. ընկճուեց թէև ոչ առանց դժուարութեան. բոլոր ապստամբ իշխաններին կուրացրին: Արտաքին քաղաքականութեան մէջ նա թողեց Նիկեփորի մանրակրկիտ ձգտապաշտութիւնը՝ Լիտիկէտի գուները փոքր կայսրների Թէոփանու քրոջը 912 թ. ուղարկեցին Իտալիա և ամուսնացրին Օտտոնի որդու հետ:

Զմշկիկի օրով բազմաթիւ Պօղիկեաններ և Մանիքէացիք բնակութիւն հաստատեցին Փիլիպպոպոլսի շուրջը: Նա գրանով հետևեց խիստ ընդունակ Կոնստանդին Ե-ի օրինակին: Հենց իւր ծագման պատճառով այնպիսի մըռայլ մոլեռանդութեամբ չէր վերաբերւում դէպի այդ համայնքները, ինչպէս խստապահանջ Օրթոդոքսներն: Հաւանական է որ նա ուղիղ դատած լինի, թէ այդ քաջ գնդերը անսահման աւելի օգտակար են հեմուս թեռակղղու պաշտպանութեան համար, քան

Ասիայում, որտեղ Համիդանիները, Բուխաները, Սաֆթաղիդները ևն. միմեանց դէմ պատերազմում էին՝ միանգամայն թուլացած խալիֆների պետութեան մնացորդների վրայ և որտեղից այլ ևս վտանգ չկար. Թրակեան այդ Պօղիկեանք ևս զօրեղ ազդեցութիւն են գործել նորադարձ Սլաւների վրայ, իրենց մաքուր և խորը զգացուած քրիստոնէութեամբ: Պետրոս ցարի ժամանակ (927—968 Բոգոմիլը կամ Երեմեան տարածեց այդ ուսմունքը իւր հայրենակիցների մէջ. քարոզչութեան այն արտակարգ յաջողութեամբ որ նա ունեցաւ Բուլգարների և Ցոյների մէջ. և ցաւալի նշան է թէ այն ժամանակներում օրթոդոքս եկեղեցին ինչքան չնչին ազդեցութիւն ունէր զգացմունքների վրայ:

Հռովմայեցոց տէրութիւնը աւելի քան երբ և է կարիք ունէր իւր գլուխ ունենալու մի ընդունակ զինուորականի: Սարտափելի Սվեատոսլաւը Բուլգարների տէրութիւնը ընկճելուց յետոյ՝ Նիկեփորի կառավարութեան վերջերում յարձակուել էր Թրակեայի վրայ. 970 թ. անցաւ Հեմուսը, առաւ Փիլիպպոպոլիսը յարձակումով ոչ անլուր չարիքներ գործելով: Զմշկիկը, որ ի զուր առաջարկեց տարեց տարի փող տալ, շտապով հասաւ. 970 թ. Ադրիանուպոլսի մօտ ճակատ տուին,

որը անորոշ մնաց։ 971 թ. կայսրը անցաւ բալկանեան կիրճերը, որ անուշադիր բարբարոսները առանց պահապանների էին թողել և երևաց Մեծ—Պրեսլաւի առաջ։ Զնայած սաստիկ քաջ ընդդիմութեան, Ցոյները յարձակմամբ առան և այրեցին թէ քաղաքը և թէ միջնաբերդը. Զմշկիկը ազատեց Բորիս Բ կալանաւոր ցարին և պահում էր մեծ պատուով։ Սվեատոսլաւը կարողանում էր միայն սարսափներով գիմանալ Դրստերում (Dorostolum Silistria). Բուլգարները մեծ թուով փախչում էին ազատարար կայսեր մօտ։ Մի զօրեղ ճակատ քաղաքի դռների առաջ վերջացաւ ի վնաս Ռուսների՝ Ցոյների այրուձիու շնորհիւ։ Երեք ամսուայ պաշարումից յետոյ, որի ընթացքում գետի կողմից աջակցում էր յունական նաւատորմիղը, և երբ 971 թ. Յուլիսի 22 յունահատական ճիգ էին արել դուրս գալու, հպարտ Ռուսը ազատ ճանապարհ ստանալու պայմանաւ անձնատուր եղաւ։ Սկիթինաւեան բարբարոսի ցանկութեան համաձայն, Զմշկիկը համաձայնուեց նրա հետ տեսակցուել Դանուբի կղզիներից մէկի վրայ։ Դրանից անմիջապէս յետոյ, Ծովահէնների նաւատորմիղը հեռացաւ դէպի Սին Ծովի ափերը։ 972 թ. գարնանը Սվեատոսլաւը ընկաւ Պեղենեգների դէմ պատերազմելիս, և

սոցա Կուբ իշխանը նրա գանգը գործ էր դնում իրրև գինու բաժակ։

Զմշկիկի յաջողութիւնները մթնեցրին Նիկեփորինը, և մեզ համար հասկանալի է, որ ժամանակակիցները այդպիսի մեծ հերոսին ներեցին որ նա գահ էր բարձրացել արիւնաշաղախ ձեռներով։ Բուլգարների պետութիւնը, որ 300 տարիներից ի վեր Արևելահռոմի մի սարսափն էր, ջախջախուած ընկել էր հռոմէական կայսեր ոտների տակ։ Թէև զօրեղ ազգի այդպիսի ոչնչացումը Ռուսների գործն էր. բայց հիւսիսի այդ բնակիչները, որոնցից շատ էին վախենում և համարում էին անպարտելի, տեղի էին տուել Հռոմայեցու կատարելագործուած պատերազմական արուեստի առաջ, և այդ պատճառաւ ամենատաք և ամենաարիւնալից մրցումից յետոյ յաղթութեան ամենափառաւոր վարձը նրա ձեռքն ընկաւ։

Միամիտ Բուլգարները կարծում էին թէ Զմշկիկը կվերահաստատի նոցա ազատութիւնը։ Քաջ, դրական քաղաքագէտը Արևելեան Բուլգարիան պարզապէս միացրեց պետութեան հետ, ինչպէս որ այլ կերպ էլ չէր կարող վարուել, և այդպիսով նորից ձեռք բերեց այնքան կարևոր Դանուբեան սահմանագիծը։ Ցարի թագը ձօնեց մայրաքաղաքի երկնային

իմաստութեանը։ Բոլիսը սափրուեցաւ թողնել Ծիրանին և դարական աստիճանի նշանները և իբրև ողորմելի փոխարինութիւն, ստացաւ Մագիստրի տիտղոս։ Դրստերի Դամիան պատրիարքն էլ զրկուեց դահից և բուլգարական եկեղեցական նոր պետերը—հասկանալի է բոլորն էլ Յոյներ—ինչպէս հին ժամանակներում հնազանդուեցին տիեզերական պատրիարքին։ Միայն արևմտեան բուլգարիայում (Մակեդոնիայում և Ալբանիայում), որը Շիշման ցարը 963 թ. մայր երկրից խլել էր, շարունակեց պահպանելու ազգային և եկեղեցական անկախութիւնը, թէև «գրաճի չորս որդիների» բուլգարական այդ իշխանութիւնը շատ խեղճ բան էր։ Այդ է Յովհաննէս Զմշկիկի մեծագործութիւնը։ Նրա յաղթող սուրը Հռովմայեցւոց տէրութիւնից հեռացրեց Սլաւների վտանգը և կարելի դարձրեց նրա գոյութիւնը հետևեալ երկու դարում ևս։

Կայսրը այդպէս փառաւոր կերպով վերջացնելով իւր գործը Եւրոպայում, ուշքը դարձրեց դէպի Ասիա, ուր նա 972—976 թ. կռուեց մեծ բախտով և միանգամ էլ հռովմէական իշխանութիւնը հասցրեց այն բարձրութեան, ինչպիսին չէին համարձակուել նախագուշակել Պոգոնատորի և Ռոմանոսի ծանր

օրերի ամենայանդուգն երևակայութեան տէր մարդիկն անգամ։ Քրիստոնեաների մեծամեծ յաջողութիւնների պատճառով Մուսլիմները միացել էին վերստին տիրելու Անտիոքին։ Ղեկավարողները Եգիպտոսի չափազանց գործունեայ Փատիմիաններն էին, որոնք սկսել էին հաստատել իրենց գերիշխանութիւնը Ասորիքի վրայ։ Բայց Նիկեփորոս քաջ ներքինին ազատեց Անտիոքը։ Սակայն երբ Բիւզանդացիք առան Ս՝ծբինը, անհաւատները այնպէս սարսափեցին, որ 973 թ. Բաղդատից նոր արշաւանք քարոզեցին և կազմակերպեցին որպէս զի բոլոր մուսլիմները ոտքի կանգնեն։ Ամիդի մօտ բիւզանդական զօրքը ծանր պարտութիւն կրեց։ 974 թ. Զմշկիկը ինքն առաջ հրամանատարութիւնը և ղեկավարեց դէպի Վերին Տիգրիս և Ասորիք ուղղած փայլուն արշաւանքը։ Ամիդ և Մարտիրոպոլիսը անձնատուր եղան, այն տեղի էմիրները սկսեցին հարկ վճարել։ Հիերոպոլիս, Ապամէյա, Էմիզա և Հիլեոպոլիսը առնուեցին առանց յիշատակութեան արժանի ընդդիմութեան։ Նա անցաւ Լիբանոսը և դրաւեց Բեյրութը, որտեղից նա մայրաքաղաք ուղարկեց այդ քաղաքի սուրբերի խաչեցեալի պատկերը։ Այդ ժամանակները Բիւզանդացիք կանոնաւոր կերպով կողոպտում

էին արևելեան քաղաքների նշխարները յօգուտ երկնային իմաստութեան տաճարի։ Բայց ամուր Տրիպոլսի առաջ ի դերև եաւ կայսեր պատերազմական արուեստը։

«Եւ ազգերը մեծ սարսափի մէջ էին Զմշկիկի բարկութիւնից։ Եւ նա տարածեց Հռովմայեցւոց պետութիւնը. փախչում էին Սարակինոսները և Հայերը. սարսում էին Պարսիկները, և ամեն կողմից նրան պարգևներ էին բերում. նոքա նրանից հայցում էին շնորհ և խաղաղութիւն. նա արշաւեց մինչև Եդեսա և մինչև Եփրատ գետը. և երկիրը լցուած էր Հռովմայեցւոց զօրագնդերով։ Ասորիքը և Փիւնիկեան հռովմէական նժոյգ երիվարներից սմբակահար եղան։ Նա մեծամեծ յաղթութիւններ տարաւ և քրիստոնեաների սուրը հնձում էր մանգաղի պէս (Գէորգ Համարտ)։

Թէև իրաւ է շատ բան էր պակաս այդ անցողական յաղթութիւնները յարատև անելու համար։ Գրաւած քաղաքների բնակիչները, որ մեծաւ մասամբ Իսլամներ էին, հնազանդուել էին միայն առաջի սարսափից. նոքա տէրութեան հաւատարիմ մնալու ոչ մի գրաւական չէին ներկայացնում։ Մինչև անգամ ազատուած Անտիոքը իւր դռները փակեց կայսեր առաջ, և միայն Զմշկիկի մահից յետոյ նորից առնուեց։

Երևում է որ Զմշկիկը լաւ էր ճանաչել պետութեան արմատը կրծող որթին, աւազականութեան և մեծ կալուածատիրութեան ընդլայնելը, որ ոչնչացնում էր ազատ գիւղական դասակարգը և մտցնում անասնապահութեան տնտեսութիւն։ Ուժեղացած զինուորական ընտանիքները՝ ինչպէս էին Փոկասները, Սկլերոսները և. իշխանական դիրք էին ձեռք բերել թէ իրենց ունեցած անսահման կալուածներով նահանգներում և թէ իրենց տնձնատուր կողմնակիցների խմբերով։ Օրէցօր հին հռովմէական զինուորական և պաշտօնավարական պետութիւնը աւելի էր կերպարանափոխւում նմանուելով միջնադարեան բարձր ազնուական կազմին։ Զմշկիկի դառը խօսելու անյագ ներքինու մասին[1] որի օգտի համար էր միայն երկիրը աղքատանում և զինուորները արիւնաքամ լինում, անկասկած սարսափեցրել է մանանակիցներին, թէև միամիտ ժողովրդական հեքիաթ է այն պատմութիւնը, իբր թէ ամենակարող պետական կանցլեր Բազիլեոսը որին ամենից շատ էր հարուածելու կայսեր բարկութիւնը, նրան թոյն է տալ տուել։ Դէպի

1. Սենատի նախագահ Բազիլեոսը, Ռոմանոս Ա. կայսեր արտակարգ ընդունակ, բայց եւ արտակարգ անյագ ագահութեան զաւակն էր։

մայրաքաղաք վերադարձի ժամանակ, իւր տարիքների ծաղկեալ հասակում, հաղիւ յիսուն և մէկ տարեկան յանկարծակի մեռաւ կայսր հերոսը 996 թ. Յունուարի 10ն։ Այդպիսի անսպասելի պատահար բնականաբար ժողովրդի հասկացողութեան մէջ կարող էր միայն ամենատոր դաւադրութեան արդիւնք լինել։

Զարիքը, որի վրայ մասնաւոր էր ասել Զմշկիկը, արմատներ էր գցում։ Հետևեալ ժամանակներում աւելի յաճախ անգամ է պատուիրը մեծ ընտանիքների խաղալիք դառնում։ Գուցէ մի երկաթեայ զինուորական, կամ մի զարհուրելի ոյժի մարդ, ինչպէս Սուլան էր, կարող էր արիւնալից ճանապարհով միանգամ ևս կարգ սահմանել։ Նա չերևայ, և երբ երկու հարիւր տարի յետոյ փորձեց Անդրոնիկոս Կոմնենը, արդէն ուշ էր։ Այդ շրջանի առանձնայատկութիւններից է և այն՝ որ մակեդոնական տան օրինական հաստատութեան հետ միասին ստեղծւում էր մի տեսակ խնամակալութիւն (Hausmeiertum)։ Նախկին բացարձակ զինուորական կայսրները, որ մեծաւ մասամբ ծիրանի էին հագնում զօրքի ձեռնտուութեամբ կամ զինուորական դաւադրութիւններով, ներկայանում են միաժամանակ, ընդհանուր պատ-

մութեան մէջ այլ ևս չկրկնուող, իրրև ամենաընտիր իշխանների մի շարք որ ունէին արտասովոր զինուորական և քաղաքագիտական գերազանց յատկութիւններ։ Ժառանգական յաջորդականութիւնը ինքն ըստ ինքեան հակառակ է ամենալաւի ընտրութեան։ կառավարիչների մեծագոյն մասը բնական անհրաժեշտութեամբ օժտուած էին միջակ կամ թոյլ ընդունակութեամբ։ Հին դարում դեռ յայտնի չէր, որ իշխողին կարելի է փոխարինել իւր մինիստրով, ինչպէս նա գոյութիւն ունի սահմանադրական պետութիւնների մէջ։ Մ՚օտաւորապէս դրա նման մի բան էր, որ Բիւզանդիոնը ստեղծեց Ժ-րդ դարում։ Օրինաւոր ծիրանածիններին թոյլ ձեռները չէին կարող վարել իրական կառավարութիւնը, և՝ մենք տեսնում ենք որ բաւական յաջող հետևողութեամբ պետութեան իսկական ղեկը վարում են բարձր ընդունակութեամբ զինուորականներ։ Տէրութեան այդ իրական իշխանները զարդարւում են կայսերական թագով և այդպիսով միանգամայն հաւասարւում օրինական կայսեր, որ կամ Կոստանդին Լ-ի նման առանձնացած սենեակի ուսումնական էր, կամ Բազիլեոսի նման դեռ երեխայ։ Եւ չէր կարելի ժխտել, որ եթէ ոչ Լեկապենները, գոնէ յամենայն դէպս Նիկեփորը և Զմշկիկը

այդ երկրորդական կայսերական պաշտօնը վարել են յօգուտ տէրութեան ամենամեծ շահերի։ Միայն այդ հանգամանքներից ստիպեալ զիջողութիւնն է փրկել տէրութիւնը։

Լեկապեններին անկումից յետոյ զինուորականութեան հետ միասին սկսում է դեր խաղալ նաև քաղաքացիական դիւանական վարչութիւնը։ Բազիլեոս Ներքինին, առաջին Ռոմանոսի անհաջաղաղ որդին, որը մենակ ազատուել էր Կոնստանդին Է-ից իւր տան կործանման ժամանակ, ասաիճանաբար ձեռք էր բերել ամենայն յարգանք ազդող դրութիւն իւր բարձր վարչական տաղանդով, թէ իբրև Սենատի նախագահ և թէ իբրև պետական կանցլեր։ Նիկեփորի, ինչպէս նաև Զմշկիկի ապստամբութեան ժամանակ մասնակից էր եղել։ Այժմ նրա վիջոցաւ քսանամեայ Բազիլեոսը (976—1025) հրատարակուեց ինքնիշխան կառավարիչ։ Սակայն գործերի կառավարութիւնը մնաց ամենակարող Ներքինու ձեռքին։ Սակայն նա սաստիկ սխալուեց եթէ հաշուել էր որ կարող է իւր իշխանական պաշտպանեալին կատարել ապ նրա գիտնական հօր անուանական դերը՝ խիստ ընդունակ և պատերազմասէր իշխանը կասկածանքով էր նայում նրա վրայ, որպէս զի —թէև իրաւ է միայն տասներեք տարի անցնելուց յետոյ—, բոլոր ոյժով նրան ոչնչացող հարուած տայ։

Բազիլեոսը միայն 20 տարեկան էր, երբ պետութեան գլուխն անցաւ։ Իւր եղբայր և կայսրակից Կոնստանդինը մինչև անդամ տասնութ տարեկան էր։ Բայց մինչդեռ վերջինը ամենակարող պետական կանցլերի ցանկութեամբ զուարճութիւնների հետևից էր ընկած, Բազիլեոսը իսկոյն թողեց բոլոր արքունական զուարճութիւնները, իւր երիտասարդ հասակի համար արտասովոր լրջութեամբ և զուարճալի պարտաճանաչութեամբ իրան նուիրեց զինուորական ուսմունքի և վարչական գործերի։ Շատ շուտով նրա բնաւորութեան մէջ ստեղծուեց մի կասկածոտ, խիստ և անզութ գիծ կասկածոտ մեծամեծների շնորհիւ, որոնք միշտ աշխատում էին ստորացնել կայսերական իշխանութիւնը։ Այդպիսի մարդը չէր կարող ժողովրդական իշխան լինել, բայց նա եղել է տէրութեան պահպանող։

Բնական էր, որ մեծամեծներն ու զօրապետները ձգտում էին Զմշկիկի տեղը բռնել։ Ինչպէս որ իրերը մինչև այդ ընթացել էին, իրաւունք ունէին յուսալու հասնել իրանց փառասիրական նպատակին։ Սակայն նոցա հաշիւը սխալ հիմունք ունէր։ Նոցա հանդէպի օրինական իշխողը սոսկ ծիրանա-

ծին չէր։ Դոցա մէջ առաջին տեղը բռնում էր Ասիայի զօրաց հրամանատար Բարդաս Սկլերոսը։ երբ պետութեան կանցլեր Բազիլեյոսը նրան պաշտօնազուրկ արեց, նա բարձրացրեց ապստամբութեան դրօշակը արևելեան սահմաններում և նոր հպատակների, իսլամական աւատական իշխանների օգնութեամբ, երկու անգամ հիմնովին ջարդեց հռոմէական զօրքերը, հեղեղեց ամբողջ Փոքր-Ասիան և լրջօրէն սպառնում էր մայրաքաղաքին։ Դարձեալ Սկլերոսը երկրորդ Նիկեփորոս էր։ Սակայն կենտրոնական կառավարութիւնը իւր նեղութեան րոպէին հրաւիրեց Սկլերոսի մրցակցին՝ Բարդաս Փոկասին, որ կայսերական բարկութիւնից աքսորական տարուում էր Քիոս կղզու մի վանքում, ինչպէս Հերակլը Փիլիպիկոսին, սրան հանեցին իւր վարդապետական խցից և յանձնեցին հաւատարիմ մնացած զօրագնդերի հրամանատարութիւնը։ Ամորիոնի և Բազիլիկա Թերմայի մօտ կառավարութեան զօրապետը երկու ճակատ տանուլ տուեց։ Սկլերոսը իրրև զօրավար Փոկասից բարձր էր։ Սա ստիպուած էր յետ քաշուել դէպի Վրաստան, որպէս զի ուժերութեան հաւատարիմ դաշնակցի՝ Դաւիթ կիւրապաղատի մօտ նոր զինուորներ վարձէ։ Հալիւսի շուրջը Պաւկալեյի մօտ մի երրորդ

ճակատ դարձեալ անյաջող սկսուեց։ սակայն մենամարտութեան մէջ Փոկասը Սկլերոսին ձիուց վայր գլորեց։ երբ ձին առանց ձիաւորի սկսեց վազել ապստամբների շարքի առաջ, նոքա կարծեցին որ իրենց զօրապետը սպանուած է և դիմեցին կատաղի փախուստի։ 979 թ. ամառուայ վերջերում Սկլերոսը ստիպուեց փախչել արաբական սահմանը, որտեղ նա առժամանակ պահուեց իբրև կալանաւոր։

Հետևեալ ութ տարին Փոկասը իւր ձեռքին պահեց ասիական զօրքի հրամանատարութիւնը բացարձակ լիազօրութեամբ, նա յաջող կռուեց Սարակինոսների դէմ և ստիպեց Հալեպի Էմիրին հարկ վճարել։ Սակայն արտակարգ զօրեղ կամքի տէր Բազիլեյոսի եռանդը, որը ոչ մի կերպ չէր ցանկանում անուանական կայսր լինել, այլ ինչպէս իւր անուանակից նախապատը, ամուր քաշեց կառավարութեան սանձը, շարժեց մեծամեծների տհաճութիւնը, որոնք իրար մէջ բաժանել էին քաղաքացիական և զինուորական բարձրագոյն պաշտօնները։ Կայսրներ կարգող Բազիլեյոսը ըստ սովորութեան դաւադրութիւն սարքեց 987 թ. Օգոստոսի 15. Բարդաս Փոկասը իրան կայսր հրատարակեց Եւսաթէոս Մալեյինոսի պալատում (Խարսիա-

նոն թեմուժ)։ Արաբները նրա դէմ հակաթոռ կայսր հրատարակեցին Բարդաս Սկլերոսին՝ քրիստոնեայ փախստականների զօրքով։ Սակայն Փոկասը շուտով նուաճեց նրան և ամենայն ուժով դիմեց օրինաւոր կայսեր դէմ։ 988 թ. նա նուաճեց Փոքր-Ասիայի՝ հացահատիկների երկիրների մեծագոյն մասը. օրինական կայսրը սահմանափակուեց միայն մայրաքաղաքով և Հեմուսի թերակղզով՝ որ հեղհեղուել էր Բուլգարներից։ Ահա առաջին անգամ ռուսական օգնական գնդերը, Վարիագները, եղան տէրութեան ազատարարը։

Մինչև Բազիլեոսի ժամանակը հին Խերսոնը՝ Տաւրիկեան Խերսոնէսի յունական ամենահին քաղաքը, որ այնքան անձնուիրաբար ընդդիմացաւ Ցուստինեան Բ-ի կատաղութեանը, պահպանել էր իւր յունականութիւնը և իւր հին հասարակապետական-ազնուապետական ինքնուրոյնութիւնը։ Դրաւ է՝ Թէոփիլոս կայսրից սկսած այնտեղ էր ուղարկուում իբրև վերահսկող պաշտօնեայ մի հռովմէական ստրատեգ. սակայն քաղաքական և զինուորական բիւրոկրատիայի այդ գլուխը առանձին նշանակութիւն չունէր։

988 թ. Վլադիմիրը, Սվեատոսլաւի որդին ռուսական մեծ զօրքով երևաց Հելլէնների քաղաքի առաջ։ Ինչպէս երբեմն Ամիգը, Կա-

ւատի պատերազմների ժամանակ Պարսից դէմ ուղղած ամենամեծ ամրոցը, այնպէս ընկաւ Խերսոնը մի քահանայի դաւաճանութեամբ։ Բայց այն ժամանակուայ Ռուսներն այլ ևս Փոտիոսի նկարագրած «դարհուրելի, անողորմ, անհաւատ ժողովուրդը» չէր. Վլադիմիրը ցանկանում էր և մկրտուեց Խերսոնի Ամենափրկիչ եկեղեցում. նա հռովմէական տէրութեան հետ, որին իւր նախորդները բազմաթիւ վարձկաններ էին տուել, ամենամտերիմ բարեկամութիւն հաստատեց, երբ կայսեր փոքր քոյրը, ծիրանածին Աննա իշխանուհին, ամուսնացաւ ռուսական մեծ իշխանի հետ։ Նա Հռովմայեցիներին նորից վերադարձրեց դրաւած քաղաքը։ Մեծ իշխանի հրամանին հնազանդ, նրա հաւատարիմ ժողովուրդը սուզուեց Դնեպրի ալիքների մէջ, որպէս զի Ցոյն քահանաներից և վարդապետներից ընդունի «Սուրբ լուսաւորութիւնը»։ Սուրբ Վլադիմիրի մկրտութիւնը օրթոդոքս եկեղեցու տարեգրութիւնների մէջ ամենայայտնի տարեթուերից է. դա այն ժամն է՝ երբ ծնուեց արևելեան եկեղեցու կրօնական և եկեղեցական ժառանգը՝ ռուսական եկեղեցին։

«Ցարդրատի» և Կիևի իշխողների քաղաքական յարաբերութիւններն անպայման

լաւացան։ Ռուսական նոր և թարմ օգնական գնդերով և կայսերական զօրքով երկու իշխող եղբայրները՝ Բազիլեյոսը և Կոնստանդինը արշաւեցին դէպի Աբենդոս ծովաբերդը, որ պաշարել էր Փակոսը, և որը Հելլեսպոնտի ամենակարևոր բանալին էր։ Երկու զօրքերը կռուի պատրաստ՝ կանգնել էին դէմ յանդիման։ Փոկասը իւր սովորութեան համաձայն պատրաստուել էր Բազիլեյոսի հետ մենամարտութեան մտնելու. երբ մի բաժակ սառը ջուր խմելով յանկարծակի մեռաւ՝ ձիուց վայր գլորուեց։ Կատաղի սարսափով ապստամբ գընդերը փախան զանազան կողմեր։ Այդպիսով 989 թ. Ապրելին յանկարծակի վերջացաւ քաղաքական պատերազմը։ Կայսնաւոր Բարդաս Սկլերոսին տարան կայսեր առաջ։ «Այդպիսի մարդու առաջ դեռ երեկ դողում էինք»՝ բացականչեց Բազիլեյոսը՝ երբ անօգնական՝ հաստլիկ ծերը՝ դեռ իւր կայսերական կարմիր կոշիկներով երևաց իւր օրինաւոր տիրոջ առաջ։ Նրան ներեցին և շուտով մեռաւ։

Վերջապէս պետութեան կանցներ Բազիլեյոսին ծեր դաւադրին էլ հասաւ միանգամայն արժանի պատիժը։ Դիւանական համառօտ դատաստանով զրկուեց իւր բոլոր պաշտօններից և աստիճաններից՝ յարքունիս

գրաւեցին նրա առասպելական կարողութիւնը՝ որով նա կարող էր ամբողջ զօրք պահել՝ թոյլ տուին մայրաքաղաքի խուժանին կողոպտելու նրա պալատը և իրան էլ 989 թ. աքսոր ուղարկեցին։ Վեց տարի յետոյ մայրաքաղաք հրաւիրուեց սահմանի բարոններից Ծեստաթէոս Մալեյինոսը՝ որ անսահման կալուածներ ունէր և շրջապատում էր անհամար հետևորդներով։ Նա այլ ևս չտեսաւ իւր կապպադովկեան դղեակը և նրա մահից յետոյ դանձարանը յարքունիս գրաւեց նրա հարստութիւնը։ Իբր թէ նրա տուած խրատի համաձայն՝ թէ ինչպէս պէտք է իշխել նահանգների ազնուականութեան վրայ՝ — հարուստներից արիւն առնել՝ որպէս զի նոքա չզօրեղանան և վտանգաւոր չդառնան —՝ Բազիլեյոսը հետևել է բառացի և ամենայն ճշդութեամբ։ Բազիլեյոսը հրամայեց կործանել պաշտօնների և աստիճանների հասած մի հարուստի դղեակը՝ որը իւր հայրենի գիւղի ամբողջ տեղը դնել և շինել էր. կործանել և նորից գիւղացիներին բաժանել։ Այդ անուանում են արևելեան սուլթանական քմահաճոյք՝ իբրև թէ ներկայիս «օրինական պետութիւնը» ուրիշ կերպ վարուեց անտէր մնացած կալուածների գրաւումներով։ Մինչ գերմանական եկեղեցական իշխանները՝ որոնցից տէրութեան

պատգամաւորների ժողովը առաւ կալուածները և հասցրեց առաքելական ազգատութեան, աւելի պակաս էին զբաղում իրանց իրաւունքների բռնաբարումը, քան այն բարոյականները՝ որոնցից Բազիլեյոսը խլում էր իրենց կալուածները։

Հենց որ Բազիլեյոս կայսրը ընկճեց բարձրը ազնուական ապստամբներին, դարձաւ իւր մեծ պապի՝ Ռոմանոսի օրէնսդրական ուղղութեանը։ 996 թ. նրա հրատարակած օրէնքի լեզուն արտասովոր խիստ է։ Բնական է որ զիւղական կալուածների անվաճառելիութեան մասին հրատարակած կարգադրութիւններն միայն թղթի վրայ էին մնացել։ Այժմ ամենայն խստութեամբ ոչնչացած հրատարակեցին մեծամեծների կալուածատիրական իրաւունքները և առաջն առան այն կեղծ ճանապարհների, որով մեծ կալուածատերերը սկիզբը զիւղական կալուածները եկեղեցական էին դարձնում և այդպիսով իրաւատէր դառնում։ Սառը խոսքերով յայտնում է կայսրը որ տէրութեան շահը պահանջում է, ոչնչացնել հողատիրական հաւաքական մեծ կարողութիւնը և մանաւանդ այդպիսի կալուածները, շարունակաբար յաջորդներին թողնելը։ Այդպիսի զօրութեամբ հասկացաւ հզօր կայսրը դէմ գնել մեծ կալուածատիրական և հողատիրական կարգերին։ Նրա օրէնսդրութեան ամենաուրջ նպատակն էր պաշտպանել միջին և ստորին դասակարգերը, և հենց մենակ այդ՝ լեռնաչափ բարձրացնում է այդ կոպիտ և անկիրթ զինուորականին իւր ամենաընտիր ասպիճանակիցներից շատերից։

Փիլելյը (Անգղիացի պատմիչ) շատ յարմար է ասում. «Բազիլեյոս Բ-ի կառավարութիւնը ցոյց է տալիս բիւզանդական հզօրութեան ամենարարձր ասպիճանը։ Կոստանդինուպօլսի արծիւները նրա կենդանութեան ժամանակ թռչում էին երկար յաղթական ճանապարհով Դանուբի ափերից մինչև Եփրատի ափերը, և հայկական լեռներից մինչև Իտալիայի ծովեզերքը։ Բազիլեյոսի անընկճելի քաջութիւնը, նրա սոսկալի խստասրտութիւնը, նրա անաստրբերութիւնը դէպի զեղարուեստը և գրականութիւնը և նրա կրօնական թերահաւատութիւնը, բոլորը միանում են, որպէս զի նրանից ստեղծեն իւր տէրութեան և իւր ժամանակի մի տիպ։ Նրա կառավարութեան քաղաքականութիւնն էր Եւրոպայի պետական վարչութեան միութիւնը ամրացնել՝ բոլորովին նուաճելով Բուլգարներին և Սլաւներին, որոնք լեզուական նմանութեամբ միացել էին մի ազգութեան մէջ և

բացի այդ մի էին իրենց անհաշտ ատելութեամբ դէպի կայսերական կառավարութիւնը։»

Շիշման Ա-ի որդիները, Եանարայի վրայ Տրնովոյից ծագած ցեղի «Գրաֆի որդիները»[1] վերջին փայլ տարածեցին Բուլգար ժողովրդի վրայ, նրա վերջնական անկումից առաջ։ Շիշման Ա-ը և Դաւիթը զարդարուած էին ցարի տիտղոսով, նմանապէս Սամուէլը (976—1016) ժողովրդի վերջի հզօր, բայց դժբախտ իշխանը։ Նրանց հետ բուլգարական իշխանութեան գլխաւոր կենդրոնը տեղափոխուեց արևմտեան ազատ երկիրը՝ Ալբանիա և Մակեդոնիա։ Ցարի և պատրիարքի կացարանը Պրեսպան էր, Պրեսպա լճի մի անտառոտ կղզի, որտեղ այսօր էլ մնացած են նախկին բերդի պարիսպների և հոյս եկեղեցիների մնացորդները։ Բայց շուտով տեղափոխուեց Օխռիդա, որ գտնուում է ըստ հների Լիբնիտիս լճի մօտ և հարուստ ու փառահեղ իշխանական նիստ էր։ Երբ վերջում Ցոյները գրաւեցին գլխաւոր քաղաքը, թագաւորական գանձարանում դտան մի թագ զարդարուած մարգարիտներով, ոսկեհուռ զգեստներ և հարիւր քաշ ոսկի։ Այդ աւատական կազմ ունեցող տէրութեան գլխաւոր պահպանը զօրեղ և պատերազմասէր բոլեարների դասակարգն էր (Boljarenstand)։ Սամուէլը թագը ստացել էր Հռովմից. նա ողորմած իշխան էր, նաև բոգոմիլների համար։ Ուստի նա չէ ապրում, ինչպէս միւս ցարերը, օրթոդոքս եկեղեցու փառահեղ յիշատակութիւնների շարքում։ Զմշկիկի մահը և Սկլերոսի ապստամբութիւնը ծառայել էին իբրև նշան Դանուբեան Բուլգարների ընդհանուր ապստամբութեանը։ Ամենակարճ ժամանակում Սամուէլը վերականգնեց նախկին մեծ տէրութիւնը։ Նա արշաւեց Թրակիա Թեսալոնիկէի շրջակայքը և մինչև անգամ Հելլասը. Լարիսայից Պրևսպա տարաւ ս. Նահատակ Ակիլլեսի նշխարները։ Բայց Բազիլեյոսը Սամուէլին հաւասար հակառակորդ էր։ Կայսրը միաժամանակ սկսեց զօրծել ցարի դէմ ծովային և ցամաքային զօրքով Փիլիպուպոլսից, Մոսիւնոպոլսից և Թեսալոնիկէից թէև ոչ միշտ յաջողութեամբ, բայց անընկճելի դիմայկանութեամբ։ Սակայն երբ նա 981 թ. Սրեդեցի (Սերդիկա, Սոֆիա) դէմ գնաց, նրա բիւզանդական զօրքը կատարելապէս ջարդուեց։ Տասնուհինգ տարի պատերազմը դադարեց։ Սամուէլը օգտուեց այդ ժամանակամիջոցից միացնելու Դիւռախիոնը և ադրիատական ծովափնեայ երկիրները և Սերբերին էլ ենթարկեց իւր գերիշխանութեանը։ Այն

[1]. Դաւիթ, Մոսես, Ահարոն և Սամուէլ։

ժամանակ Օխռիդայի ակրոթիւնը իւր փայլի բարձր դագաթունն էր։

996 թ. վառուեց երկրորդ պատերազմը։ Սամուէլը յաղթեց Յունաց Գրիգորիս զօրապետին որ ծագում էր Հայոց Տարօնի իշխանական ցեղից և ասպատակելով արշաւեց դէպի հարաւ մինչև Պելոպոնէս։ Սակայն նրա վերադարձի ժամանակ՝ Սպերխեյոսի մօտ բռնակել էր Նիկեփորոս Ուրանոսը։ Գիշերը Յոյները անցան գետը և սարսափելի արիւնհեղութիւն առաջացրին Բուլգարների մէջ։ Սամուէլ մեծ նեղութիւնով ազատուեց և փախաւ իւր կղզու բերդը։ Նրա սեպհական փեսան, հայազգի Աշոտը Յոյներին մատնութեամբ յանձնեց Դիւռախիոնը, որ նրան էին հաւատացել։ Կայսրը միանգամ ևս անյաջող յարձակում գործեց Սրեդեցի նահանգի վրայ, բայց նրա զօրապետները արդէն վերջնականապէս նուաճեցին Դանուբեան Բուլգարիան (1000 թ.) մի տարի յետոյ Յոյները հասատատուեցին Սաորին Մակեդոնիայում. Բեռոյէա, Սերվիա, Վոդենա ընկան նրանց իշխանութեան տակ։ 1002 թ. Բազիլեյոսը առաւ նշանաւոր Բլիւնը, մինչև Սամուէլի Ադրիանուպօլի ասպատակելը անցողակի յաջողութիւն էր։ Կայսրը նուաճեց նաև նշանաւոր Սկոպիէ։ Բայց ամուր Պերնիկը Սարիւ-

մոնի կիրճում մնաց անմերձանալի։ Միայն արևելքի շփոթութիւնները արդելք դարձան կայսեր վերջի դիմութեան հարուածը տալու ցարի տերութեանը։ 1014 թ. տեղի ունեցաւ վերջին պատերազմը։ Փոփոխակի պատերազմը կենդրոնացաւ լեռնական ամուր բերդերի շուրջը։ Սախարուած էին մեկը միւսից յետոյ դրաւել և պահապանների յանձնել. բուլգարական բնակիչներին հին ասորական սովորութեամբ քշեցին մինչև Հայաստան։ Աւելի փայլուն էր Նիկեփորոս Քսիփիասի զէնքի յաջողութիւնը (1014 թ.) նա շրջապատեց արաւ Բելասիկա բերդը (Balathista) և յարձակուեց Բուլգարների վրայ հետևի կողմից։ Բուլգարական ամբողջ զօրքը յունահատական պաշտպանութիւնից յետոյ ոչնչացաւ։ Մեծ դժուարութեամբ ցարը փախաւ Պրիլեպ։ Բազիլեյոսը կուրացրեց 15,000 գերեալներ, այնպէս որ հարիւր կոյրին մի միանանի առաջնորդ էր ծառայում։ Նրը դժբախտների ամբոխը տեսաւ Սամուէլը, ինչպէս հեղին՝ ուշաթնաց գետին գլորուեց։ Սոսկալի սրտի բարախումից արդէն երկու օրից յետոյ 15 Սեպտեմբերի 1014 թ. մեռաւ դժբախտ թագաւորը։ Սամուէլի որդի Գաբրիել Ռոմանը (Radomar), մի քաջ պատերազմող, որի ժամանակ Յոյների ձեռքն ընկան Բիտոլ, Պրիլեպ, Ստիպ, Վո-

դենա և Մոգլենան ի զուր առաջարկեց խաղաղութիւն. 1015 թ. նա սպանուեց իւր եղբօրորդու՝ Ահարոնի որդի Յովհաննէս Վլադեսլաւի դաւաճանութեամբ։ Բռնաւորը, որ Յոյներին կողմնակից էր, բոլգարներից ստիպուեց շարունակել ազգային պատերազմը և 1016 ու 1017 թ. կռուեց յաջողութեամբ։ Բայց նրա ծրագիրը՝ դաշն կապել Պեղենեգների հետ, ի դերև ելաւ Յունաց Դանուբեան բերդերի բերդապահների տրթուն հրսկողութիւնից։ Դիւռախիոնի առաջ, որ Բուլգարները պաշարել էին, ընկաւ 1018 թ. Յովհաննէս Վլադիսլաւը, Օխրիդայի վերջին ցարը։ Բոլգարների մի զօրեղ կուսակցութիւն, Դաւիթ պատրիարքը, Մարիա թագուհին և թագաւորութեան ամենամեծ զօրապետը՝ Բոգդանը, առաջարկեցին խաղաղութիւն, եթէ ճանաչուի իրենց առանձնաշնորհութիւնները։ Բազիլեոսը մայրաքաղաքից ճանապարհ ընկաւ։ Անդրիանուպոլսում նրան ընդառաջեցին բուլգարական լրատուները յայտնելով, որ Պերնիկը և շրջակայ 35 բերդերը անձնատուր են եղել։ Սարուվիկայում պատրիարքը նրան յանձնեց թագուհու նամակը։ Երբ նա հասաւ Օխրիդա, նրա առաջ եկան թագուհին և բոլոր «Գրաֆի որդիները»։ Ալբանիայի լեռներում մի առժամանակ դեռ մնացին պա-

տերազմի կուսակցութեան պարագլուխները, Փրուժին իշխանը և քաջ Իվացը։ Հռովմէական սուրը և բիւզանդական խարդախութիւնը խորտակեցին նաև այդ վերջին ընդդիմութիւնը։

Քառասունամեայ պատերազմից յետոյ սլաւոնական հզօր պետութիւնը, որը այնքան երկար ժամանակ Հռովմայեցւոց պետութեան դէմ յանդիման կանգնել էր իբրև հաւասարակից մեծ տէրութիւն, միանգամայն ընկճուած և փոշու մէջ էր նետուած։ Բազիլեոսը իւր մեծամեծ յաղթութիւնների տպաւորութեան տակ դնաց Աթէնք։ որպէս զի Պարթենոնի, որ ճշմարիտ հաւատին էր նուիրուած, աստուածամօրը բերէ իւր շնորհակալիքը և ընծաներ պարգևէ։ Անսահման էր ցնծութիւնը, երբ «Բուլգարասպանը» մտաւ մայրաքաղաքը։ Զարդարուած ոսկեայ ցից փետուրներով թագով։ 64 տարեկան ծերը իբրև յաղթանակող ձիավարեց ոսկէ դռներից ներս։ Նրա առաջից քայլում էին Մարիա թագուհին, Սամուէլի աղջիկները և կալանաւոր բոլգարները։ Բուլգարական պետութիւնը ջընջուել էր ինքնուրոյն իշխանութիւնների շարքից։ Յուստինիանից ի վեր ոչ մի կայսր այդպիսի զօրութեամբ չէր հրամայել Հեմոս թերակղզու վրայ։

Բազիլեոսը նուաճուած երկրի հետ վարուեց շատ մեղմ և մեծ իմաստութեամբ։ Նա անձեռնմխելի թողեց նրա քաղաքական և եկեղեցական հաստատութիւնները։ Օնոխրդայի ցարի տերութիւնը կարծես անձի վերաւորութեամբ միացել էր հռովմէական մեծ պետութեան հետ։ Նա պահպանեց բոլոր զինուորական և հարկահանական կարգերը. բուլգարական բարձր աղնուականութիւնը պահեց իւր առանձնաշնորհութիւնները։ Օնոխրդայի ինքնիշխան եկեղեցին 1019 թ. ունեցաւ Յովհաննէսին իւր ազգային գլուխ։ Կայսեր երեք ոսկեայ հրովարտակները տարածում էին նրա իշխանութեան սահմանները ոչ միայն բուլգարական ազգային և սերբական վիճակների վրայ, այլ և յունական այն նուաճումների վրայ, որոնք «Սիմէոն ցարի և Պետրոսի՝ փառաց յիշատակութեան արժանի» ժամանակները միացած էին բուլգարական պետութեան հետ։ Մի այն Դրիստայում (Drster-Dorostolum) առաջուայ պէս մնաց մի մետրապօլիտ, որ հնազանդում էր տիեզերական պատրիարքին։ Ցարի տան անդամները և Բոլեարների ընտանիքները տեղափոխուեցին Կոստանդնուպօլիս և ընդունուեցին տերութեան աղնուականների շարքում։ Բազմաթիւ յունական նշանաւոր ընտանիքներ յետոյ նոցա հետ

խնամէական կապեր հաստատեցին. ազնուականութեամբ հպարտ Դուկասները և Կոմնենները հոչակում էին իրենց ծագումը Շիշմանիդներից։

Բուլգարական սարսափելի պատերազմների ժամանակ, կայսրը երբէք իւր ուշադիր աչքը չէր հեռացրել արևելքի խնդիրներից։ 995 գնաց արևելք, որտեղ մի տարի առաջ ընդունակ Նիկեփորոս Ուրանոսը Արաբներից պարտութիւն էր կրել։ Կայսերական զէնքը յաղթական էր։ Նա առաւ Հալէպ, Հեմս և Շայիզար. միայն ամուր Տրիպօլսի պարիսպները նրա յարձակումներին էլ դիմացան։ Նրա դարձից յետոյ Կոստանդնուպօլիս, Հալէպը դարձեալ Ֆատիմիդների ասար դարձաւ։

Ամենի մնայուն էր նրա միջամտութիւնն հայկական հողի վրայ։ Սմբատ Բ-ը 977-989 թ. «աղքատների շահինշահ» և «տէրաքայ»ը, հոյակապ շինութիւններով Անին դարձրել էր արևելքի ամենափառաւոր քաղաքներից մէկը։ Նա և իւր եղբայր Դաւիթը իշխում էին հզօր և բախտաւոր, թէև շարունակ պատերազմելով քրիստոնեայ աւատական իշխանների հետ, որոնց սաղծել էր Բագրատունեաց անհեռատես ընտանեկան քաղաքականութիւնը, և արևելեան Հայաստանի ամիրաների դէմ։ Դաւիթը՝ Տայքի և Վրաստանի մի մասի քաջ

իշխանը 998 թ. իւր հարեւանների օգնութեամբ փառաւոր ջարդ էր տուել Ցեմպոյի մօտ Մամլուն ամիրային և նրա անհամեմատ բազմաթիւ զօրքին։ Նա Բազիլեյոսից ստացաւ Կիւրապաղատ տիտղոսը։ Իւր մահուան ժամանակ 999 թ. Բազիլեյոսին իրան ժառանգ կարգեց, որը Տարսոնից այդտեղ ուղղուեց, գոհ, որ այդպիսով յարմար առիթ է գտնում խառնուելու հայկական գործերում։ Բայց Գագիկի խելացիութիւնը արգելք դարձաւ կայսեր ծրագրերին։ Սրա (Գագիկի) մահուանից յետոյ գահակալական վէճ ծագեց, ուսումնական և թուլամորթ Յովհաննէսի և իւր աւելի ընդունակ Աշոտ եղբօր մէջ։ Վրաց թագաւորի միջամտութեամբ շփոթութիւնը սուր կերպարանք առաւ, մինչև Աշոտը յունական զօրքի օգնութեամբ հաստատեց իւր հեղինակութիւնը։

Այն ժամանակներում 1021 թ. առաջին անգամ երևում են հայկական հողի վրայ Սելջուկեան զզուելի հրոսակները, որ կարծես նախասահմանուած էր Հայաստանի և արևելեան Փոքր Ասիայի համեմատաբար բաւական բարձր քաղաքակրթութիւնը ջնջելու հողի երեսից։ որպէս զի միայն տեղերներ թողնէին, ինչպէս յետոյ իրենց աւելի զարհուրելի եղբայրակիցները՝ մոնգոլները։ Վասպուրականի վերջի Արծրունին՝ Սենեքերիմը սարսափելով իւր երկրի աւերումով Թուրքերի ձեռքից, իւր բոլոր իշխանութիւնը տուեց Բազիլեյոսին, որը դրա փոխարէն նրան տուեց կիսահայ բնակութեամբ Սեբաստիան (մեռաւ 1027 թ.)։ Նաև մահմեդական ամիրաները Վանի շրջակայքի քաղաքներում (Բերկրի, Մանազկերտ, Խլաթ, Արճէշ) բիւզանդական տէրութեան վասալները դարձան, այնպէս Բագրատունեանց իշխանութիւնը շուրջ բոլոր շրջապատուեց հռովմէական տիրապետութիւններով։ Վրաց Գէորգ թագաւորը, որ սպասամբեց Յունաց գերիշխանութեան դէմ և սասպատական արշաւանքներ հասցրեց մինչև Տրապիզոն, ծանր պատիժ կրեց Հռովմայեցւոց հանգստութիւն չիմացող կայսրից, և նրա դաշնակիցը, Յովհաննէս Բագրատունի թագաւորը ստիպուեց Անին զիջանել Բազիլեյոսին և սրանից ստանալ իբրև աւատական իշխանութիւն։ Նրա մահից յետոյ նրա թագաւորութիւնն էլ պէտք էր միանալ կայսեր տէրութեան հետ։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ Կելցենէի մետրապոլտի ձեռքի տակ կազմակերպուեց մի զօրեղ յունական կրօնական վարչութիւն, որ ամենայն ոյժով գոգռում էր Հայերի և Յոյների սոսկալի ատելութիւնը և իրենց ծայրահեղ անհամբե-

բողոքեամբ ամենից շատ են պատճառ դարձել Հռովմայեցւոց պետութեան անկմանը արևելքում։ Բայց այդ ժամանակի սխալներն էին և ոչ Բազիլեոսի։ Անձնապէս ամեն ինչ ձեռնարկում էր, որպէս զի նոր դրաւած արևելեան սահմանը ընդունակ լինի պաշտպանուելու։ Երբ Կոնստանդին Թ-ի ժամանակ Սելջուկները ներս խուժեցին, բոլոր բերդերը և գլխաւորները գտան լաւ ամրացրած և պահպան գնդերով պաշտպանուած։ Այդ գործը այդ անտարտամ զինուորական տաղանդն էր։

Նրա յոգնութիւն չիմացող հոգին չբաւականացաւ այդ յաջողութիւններով։ Ուր երբէք չհանգստացող եռանդով զրահաւորեց մի հզօր արմադա, որով ուզում էր անհաւատներից յետ խլել Սիկիլիան, որ կորցրել էին իւր երկու մեծ պապերը՝ Բազիլեոսը և Լեւոնը։ Այն ժամանակ մահը վրայ հասաւ 66 ամեայ ծերունուն 1025 թ. Դեկտեմբերին, իւր ծրագիրները իրագործելիս։

Սլաւոնների ընկճմամբ և Հայաստանի միացմամբ բիւզանդական տէրութիւնը այնպիսի ծաւալ էր ստացել, որ երբէք չէր լսուած Յուստինեանի օրերից ի վեր։ Բազիլեոսի խստութեան հետ միացած մեղմութիւնը, սլաւոնական միլիոնաւոր հպատակներից չէր խլել նոցա հայրենի հիմնարկութիւնները և

ազատութիւնը։ Վտանգաւոր էր և լաւ մտածուած պետական քաղաքականութիւն չէր արևելքում հայկական իշխանութիւնների միացումը, որ թէ աղդով օտար էին և թէ կրօնապէս բաժան պետութիւն էին կազմում։ Այդ գրաւումը կարող են արդարացնել անհրաժեշտ ստիպողական զինուորական հիմունքներ։ Բայց դրա հետ միացած էր մի ծանր ճակատագիր։ Այդտեղ մոնոֆիզիտական հաւատոյ դաւանանքը դեռ մի իրական ոյժ էր, որը պէտք էր հաշուի առնել։ Այն բոլոր աղէտները որ պատահեցան Յուստինեան և Նախայուստինեան շրջանները Եգիպտոսում և Ասորիքում, այստեղ նորից վերակենդանացան։ Միայն Բազիլեոսի նման անկեղծ զինուորականներն էին կարող, որ երկաթէ մտրակով կառավարում էր վէճ սիրող և միաբարութեան ձգտող կղերականութիւնը, այստեղ էլ նրա քաղաքականութիւնը առաջ տանել յաջողութեամբ և մեստամբ իրերի դրութիւնը բարւոքել։

Մինչ դեռ հակառակը պատահեց։ Ազնուական մեծ կալուածատիրութիւնը մանրդհատ տարածւում էր։ Կայսրները այդ մեծամեծների ձեռին խաղալիք դարձան։ Արևելեան փոքր Ասիայում համարեա բոլորովին անհետացաւ զիւղական ազատ դասակարգը։ Եւ-

բոպայում Սլաւներից խլում էին նոցա ազգային առանձնաշնորհութիւնները և դրանցով վարձատրում էին Յոյներին։ Ամենաընդունակ զօրապետներին նոցա ամենափայլուն ձեռնարկութիւնների ժամանակ կանգնեցնում էին, և այդ անում էր Սէնատի մէջ կենդրոնացած և ուժեղացած քաղաքացիական պաշտօնեաների Օլիգարխիան՝ նախանձից և կասկածից էր դրդուած. իսկ նոքա էլ յուսահատուած ապստամբում էին։ Դրա վրայ աւելացաւ հարկերի անտանելի ծանրութիւնը, որը փոքր առ փոքր բնական տուրքերի (պտղի) վճարին, աւելի ծանր՝ փողային վճարի փոխուելով՝ ստիպում էր Սլաւներին և Ասիացիներին կամ ապստամբուել կամ գաղթել։ Իսկ արքունիքում ժամանակի հոդոյն համեմատ, երբ թէ իշխում էր կատարեալ անդորրութիւն, նուիրուած էին անճաշակ սրամտութիւնների և կատարելապէս աննպատակ գրականական ոգևորութեան։ Իսկապէս շատ հասկանալի է, որ այդպիսի իշխողները և այդպիսի ազնուականութիւնը անկարող էր դիմադրելու թէ Սելջուկներին և թէ Նորմաններին։

Զ.

ՏԷՐՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ

(1026—1081)

Արդէն կայսեր կենդանի մնացած եղբայր Կոնստանդին Ը-ի (1026—1028) կարճատև կառավարութիւնը անհաճոյ կերպով զանազանւում էր իւր նախորդի կառավարութիւնից։ Չէր կարող աւելի մեծ տարբերութիւն լինել քան ինչ որ կար Կոնստանդինի և Բազիլիոսի մէջ, այնպէս որ Բիւզանդացիք նրանց մասին այս առակն ունէին՝ խաչն ու թքատուփը նոյն փայտից։ Կոնստանդինը ինքը բոլորովին անպատերազմասէր էր և կասկածով էր նայում զօրքի և նորա առաջնորդների վրայ։ Զինուորական և քաղաքացիական վարչութեան ամենաբարձր տեղերը նա հաւատաց միայն իրան անձնատուր պալատականներին. օրինակ Սպոնդիլոս ներքինուն ուղարկեցին Անտիոքի կուսակալ, ին երկրորդին Վրաստան, որ թէ խիստ նշանաւոր և թէ պատասխանատու

տեղեր էին։ Մի և նոյն ժամանակ հարկերը ժողովում էին առանց խնայելու։ Բայց այն անիմաստ կազմակերպութիւնը, որ ստեղծել էին երկու նախորդ սերնդի մեծ հանճարները, առ ժամանակ դեռ գործում էր ամենայն ճշտութեամբ։ Կոնստանդինոս Դեղգենէսը 1027 —ին. Դանուբի սահմաններից դուրս վանեց Ներս խուժող Պեղենեգներին, նմանապէս յաղթութեամբ յետ մղուեցին ափրիկեան մահմեդականների յարձակումները, որոնք սպառնում էին Էգեյեան ծովին։ Կայսրը մեռնելուց յետոյ միայն երեք աղջիկ թողեց. Նեգրոպեան կոյս էր, Թէոդորան չէր կամենում ամուսնանալ և այդպիսով մնաց միայն «Ծիրանածին Զոէն», որը արդէն բաւական հասակով էր (նա 48 տարեկան էր). բայց դեռ ամուսնանալու խիստ տրամադիր և մայրաքաղաքի ժողովրդից չափազանց սիրուած. տէրութեան վիճակը կախուած էր այն ամուսնութիւնից, որը կընտրէր կայսերական գահի այդ օրինաւոր աղջիկ ժառանգը։ Հօրը վերջին կարգադրութեան համեմատ նա ամուսնացաւ Ռոմանոս Արգիւրոպուլոս բաւական յարգուած տնատոմի հետ որը ստիպուեց այդ նպատակի համար վաթսուն տարեկան հասակում բաժանուել իւր կնոջից։ Ոչինչ չեն հաղորդում, թէ պատրիարքը և կառավարող սինոդը, որոնք ուղիղ այդ ժամանակները անհաշիւ հրամաններ էին արձակում ամուսնական խնդիրների վերաբերեալ արդեօք որ և է կերպ յանդիմանել են ոչ միայն քահանայական կանոնների, այլ և աստուածային հրամանի ոտնահարութիւնը։

52 տարիներից 'ի վեր միայն Ծիրանածիններ էին գահի վրայ բազմել։ Հասկանալի է, որ Ռոմանոսը՝ որը այդքան բարձրացել էր և ծեր ու երկչոտ մի անձն էր, ամենից առաջ ձգտում էր ժողովրդական զանազան դասակարգերի յարգանքը գրաւել։ Նա ժողովրդին սիրելի դարձաւ նրանով, որ Պեղենեկների պատերազմի ժամանակ գերուածներին յետ գնեց. պարտքի համար բանդարկեալներին՝ ընդհանուր ներումն շնորհեց և մասնաւոր մարդկանց պահանջներին բաւականութիւն տուեց գանձարանից։ Ազնուականութիւնը և բարձր հոգևորականութիւնը դրաւեց՝ դադարացնելով — Alleleugyon—այն է հարուստների պարտաւորութիւնները, որով նոքա իրենց հարկահանական սահմաններում ազքատների չվճարած հարկերի փոխարէն իրանց կարողութիւնով պատասխանատու էին ճանաչւում. իսկ ամենից առաջ Ռոմանոսը քահանաների օրտի ուղած կայսրն էր։ Ս. Սոփիա եկեղեցու հոգևորականութեան առանց այն էլ չափազանց մեծ եկամուտները աւելի մեծացրեց։ Ասորական

հեստեալ եպիսկոպոսները և ականաւոր աստուածաբանները, ամենից առաջ Մելիտէնէ քաղաքում գահակալող բռնութեամբ կանչուեցին Կոստանդնուպօլիս։ Զթոյլ տուին որ վիճաբանութիւն լինի խօսելում աւելի ընդունակ արևելցիների հետ։ այլ երկու բնութեան մասին նոցա դէմ կանոնաւոր Ինկվիզիցիական դատաստան սկսեցին։ Որովհետև նոքա համարեա առանց բացառութեան հաստատակամ էին մնում, աքսոր և բանդ եղաւ նոցա վիճակը։ Անկասկած բարեբարոյ կայսրը այս դէպքում աւելի մղուածն էր քան մղողը։ Ինչպէս պատմում են՝ այդ մասամբ իսկապէս ղղուելի արարքների ժամանակ յայտնի արքունական պաշտօնեաներ դառն արցունք են թափել։ միայն ուղղահաւատ եկեղեցական պետերն էին մնում սառը ինչպէս ժայռ։ Բայց կառավարութիւնը ծանր պատասխանատուութեան տակ ընկաւ։ Դժբախտ Ասորիները ամբողջ խմբերով դաղթեցին մահմեդական երկիրը։ Տէրութիւնը յաջողեցրել էր բոլոր հեստեալների տաճած համակրանքը ոչնչացնել։ մի սխալ որ ծանրը կերպով վրէժ էր հանելու։

Աւելի արժանի էր մի ուրիշ կարգադրութիւն։ Կառավարութիւնը Պաղեստինում իշխող Փագիմիդների համաձայնութեամբ մեծ դումարներ տուաւ Ս. Անաստաս եկեղեցու վերաշինութեան համար, որ կործանուել էր խելացնոր Խալիֆ և Դրուզիների աստուած Հաքիմի հրամանով (967—1021)։ Կայսրէն դեռ բաւական մոլեռանդ շիիական կառավարութեան հակառակութիւնների պատճառաւ շինութիւնը վերջացաւ միայն Կոնստանդին Թ-ի ժամանակ՝ 1048 թ։ Զոէ կայսրուհին սաստիկ նախանձ էր տածում դէպի իւր խելոք և կամքի տէր քոյր Թէոդորան։ Սրան մեղադրեցին որ նա է բուն պատճառը և հեղինակը Պրուզիանոսի (Fruzin) և Կոնստանդին Դիոգենէսի դաւադրութեանը, արդեօք արդարացի՞ կերպով, որոշել դժուար է։ որովհետև Բիւզանդական արքունական խարդաւանանքների մէջ սառութիւնը շատ է։ իսկապէս հաղիւ թէ հաւատալի լինի։ Պրուզիանոսին մեղադրում էին որ գահի է ձգտել։ Կոստանդինոսին՝ որ ծածուկ կերպով դեգել է Սլաւներին և Բուլգարներին ապստամբելու։ Երկու մեղադրութիւնների մէջ էլ արտայայտւում է միայն կառավարութեան անհանգիստ խիղճը՝ բուլգարական հպատակներին վատ կառավարելուն համար։ Թէոդորան և իշխան Փրուժինը սակայն ստեցան մանել վանք։ Կոնստանդինին կամենում էին կուրացնել։ բայց ինքնասպանութիւնը դրա առաջն առաւ։ Բարձր ազնուականութեան բազմաթիւ անդամներին աքսորեցին՝ դաւադրութեան մասնակցած լի-

նելու պատարուակաւ։ Անտիոքի Սպոնդիւլէս կուսակալի մեղքից Բիւզանդացիք 1029 թ. մի ծանր պարտութիւն կրեցին։ 1030 թ. կայսրը ինքը անձամբ եկաւ Ասորիքի պատերազմական դաշտը, որպէսզի Հալէպի և Տրիպոլսի ամիրաներից այնպիսի ջարդ կրէ, որ ինքը և իւր զօրքը հազիւ հասան Անտիոքիս։ Յաղթողները հարուստ աւար տարան։

Այսպէս է առաջին անգամ պատմութեան մէջ հանդէս գալիս Դէորգ Մանիակէս[1] «պատերազմական հերոսը։ Յաջողութիւն ունենալով փոքր կռիւներում, շուտով նա ձեռք բերեց «Ստորին Մարատանի» հրամանատարութիւնը Սամոսատա մայրաքաղաքով։ Նա 1032 թ. մի յանդուգն քայլով Նկեսիայի տէր դարձաւ, քրտինքի ջնջոցի հետ նա Բրիսասոսի Արքար դոպարքոնին ուղղած նամակն էլ ուղարկեց Կոստանդնուպոլիս, իբրև երկրորդ մեծագոյն սուրբ նշխար։

[1] Վամբերին և նրանից յետոյ Նեուտանը (բիւզանդական պետութեան աշխարհակալական դիրքը էջ 43) ասում են որ այդ բառը տաճկերէն է և նշանակէ «ազնուական»։ Բառի այդ բացատրութիւնը երևում է Վամբերու երեւակայութեան արդիւնք. որովհետև այդ բառը չկայ ոչ Պերլի և ոչ էլ Վամբերու իւր սեպհական տաճկական բառգրքի մէջ։

Ծեր կայսրը երկու վերջին տարին շարունակ հիւանդ էր և լուրեր էր պատում որ ամուսինն է թունաւորել։ Յովհաննէս վարդապետը, երբեմն Ռոմանոսի տան սենեկապետը այն ժամանակը բարեգործական հիմնարկութիւնների մինիստրն էր։ Ունէր մի եղբայր որ արտակարգ գեղեցիկ էր։ Թէև ընկնաւոր, Կայսրուհին պառաւութեան հասակին յատուկ՝ ամենամեծ կրքոտութեամբ սիրահարուեց նրա վրայ։ Յամենայն դէպս խիստ անհաճելի էր, որ կայսեր մահից անմիջապէս յետոյ, Ապրելի 11-ին, 1034 թ. կայսրուհին ժողովից բոլոր արքունականներին և նոցա ներկայացրեց իբրև կայսրը իւր նախկին սիրական Միքայէլ Դ Պափլոգոնացուն (1034—1044)։ «Յաղթողին է աւարը», ահա այն սկզբունքը՝ որով առաջնորդուելով՝ կառավարութեան պաշտօնները իրար մէջ բաժանում էր Ռոմանոսի ամենաստորին խաւերից այդքան բարձրացած ընտանիքը։ Յովհաննէսը, իսկական թագաւոր հաստատողը, պետութեան կանցլեր դարձաւ։ Համարեա անսահման արտօնութիւններով մի ուրիշ եղբայրը Կոնստանդինոսը կարգուեց ընդհանուր հրամանատար։ Կամ մեծ դոմեստիկոս Սահակը, որ առաջ նաւագործ էր։ Կայսերական նաւատորմի ծովակալ և նրա Միքայել Կալֆատար որդին վե-

բակոչուեց Կեսար։ Այդ բախտախնդիրները համարեա առանց բացառութեան բոլորն էլ չափազանց ընդունակ մարդիկ էին, նա մանաւանդ Յովհաննէսը, որ վաչական հանճար էր, որը սակայն իւր բռնակալական անկուշտութեամբ և իսկական յունական ագահութեան տնաւորութեան մէջ՝ յիշեցնում էր իւր վատահամբաւ՝ ել և մոլեգնոտ մինիստր անուանակցին Յուստինեանի ժամանակ։

Արդէն Ռոմանոսի ժամանակ ափրիկեան և սիկիլեան ծովահէնները անհանգստացնում էին Ադրիայի ափերը։ Բայց այս անգամ հռովմէական կառավարութիւնը ընդդիմացաւ նոցա ամենայն ուժով։ Ինչքան որ պակասում էր գիւղական ազատ դասակարգը, զոհ գնալով մեծամեծների անխնայ հալածանքներին, որից մի ժամանակ Բուլգարների և մահմեդականների դէմ զլխաւոր և յաղթանակող զօրագնդեր էին կազմուել, այնքան աւելի էր կառավարութիւնը ստիպուած վարձկանների դիմել։ Դոցա մէջ թուով և նշանակութեամբ առաջին տեղը բռնում են «Վարանգները» և «Ռուսները» (Roso-Warjager)։ Սկանդինաւցիներ՝ Ռուսստանից, Նորվեգիայ, Իսլանդիք։ 1066 թ. Վիլհելմ Աշխարհակալի յաղթութիւնից յետոյ բազմաթիւ Դանիացիք և Անգլոսաքսեր լցնում են նոցա շար-

քը։ Բայց ոչ մէկը այնքան հռչակաւոր չէր որքան Հառալդ Հառդրառադէն, Սիգուրդի որդին, Ս. Օլաֆի եղբայրը (Նորվեգիայի թագաւոր 1047 1066), որը 1033 1043 թ. Նորդբոլիկի՝ պատերազմի մարդու (hom de guerre) ձեռքի տակ ասիական հերոս Գէորգ Մանիակէսի հետ հռովմայեցւոց տէրութեան համար կատարեց պատերազմական ամենամեծ գործեր։

1032 թ. Ռագուզայի հասարակապետութեան, որ ամենաշատ ծովագնացներ էին և կայսերական վիցեալ նաւատորմիղը կայսերական, Նասուպլիայի կուսակալ Կոնստանդին Կարանդինոսի առաջնորդութեամբ՝ այստեղ առաջին անգամ միացած Սարակինոսներին այնպէս հիմնովին ջարդեցին, որ նոքա որոշեցին ամենայն զօրութեամբ վրէժը լուծել։ 1034 և 1035 թ. նոքա արշաւանքներ գործեցին Էդեսյան ծովի կղզիների և Էվիկիայի վրայ։ Բայց ծովափնեայ երկիրների կուսակալները (Թրակեսիոն և Կիբիրրայոտիկոն) ոչընչացրին ծովահէնների նաւատորմիղները։ Պատիժը սովորական էր։ Փոքր Ասիայի արևմտեան և հարաւային ափերի երկարութեամբ շարուեցին կախաղաններ և սիւներ։ Յաղթական Հառալդը իւր Վարանգների հետ ափրիկեան ծովեզերքի սարսափն էր։ Դիւաւոր հարուածը պատրաստուած էր Սիկիլիայի համար, որը Փա-

տիվիդներից բաժանուելուց յետոյ, ընկել էր ամիրաների անիշխանական կառավարութեան տակ։ Մանիակէս պատրիկիոսը, որ Ռոմալիայի հրամանատարն էր, հրաման ստացաւ արշաւել Սիկիլեայի վրայ։ Սալերնոյից Լոնգոբարդներ, Ռոմական Նորմաններ և Վարանգներ հառալդի առաջնորդութեամբ՝ ցամաքային զօրքի միջուկն էին կազմում՝ նրա ձեռնարկութեանը օգնում էր նաւատորմիղը կայսեր Ստեփան եղբօր առաջնորդութեամբ։ 1038 թ. յարձակումով առան Մեսինան, և Արաբները Ռամետաի մօտ պարտութիւն կրեցին Մանիակէսի զինուորական արուեստի շնորհիւ։ Մի նոր զօրք, որ ծովի վրայով Ափրիկեայից էին ուղարկել, ջարդուեց 1040 թ. Դրագինայի մօտ։ Բայց անձնական զօրեղ տարաձայնութիւնը՝ հրամանատարի և ծովակալի մէջ պատճառ եղաւ, որ միջամտեց կայսերական զիւանը։ Մանիակէսին կալանաւորեցին և ուղարկեցին մայրաքաղաք։ Այդտեղից կայսերական զէնքից բախտը շուռ եկաւ։

Միքայէլի ժամանակ աւելի վտանգաւոր էր սլաւոնական հպատակների ապստամբութիւնը Հեմուս թերակղզու վրայ։ Պատճառը տնտեսական էր։ Կառավարութիւնը սկսեց՝ համաձայն աւելի բարձր քաղաքակրթութեան պահանջներին, բնական արդիւնքներից հարկ առնելու փոխարէն դրամով սահանալ։ Ամեն տեղ և ամեն ժամանակ ազգերը այդ փոփոխութեան վրայ նայել են իբրև իշխողների խաբութեան և բռնակալութեան վրայ, բաւական է յիշել 1653 թ. Շվեցարիայի ապստամբութիւնը։ Հին նահանգներում արդէն դոգըմունքը շատ մեծ էր, իսկ Սերբա—Բուլգարական կուսակալութիւնների մէջ սկսեց կապադի ապստամբութիւն։ Այնտեղի հպատակները արդարացի կերպով կարող էին բողոքել, որ անտեսական վարչութեամբ ոչնչացնում են Բազիլէոսից առանձնաշնորհուած իրաւունքները։

Պետրո Դելէանոսը (Deljon), ըստ յունական պաշտօնական վկայութիւնների ապօրինի, իսկ իրապէս Սամուէլ ցարի հարազատ թոռը, 1040 թ. բարձրացրեց ապստամբութեան դրօշակը։ Բուլգարական ժողովուրդը կանգնեց իբրև մի մարդ։ Կատաղութեան զոհ գնացին ամենից առաջ մի քանի տղրուկ հարկահան պաշտօնեաներ։ Յետոյ յեղափոխութիւնը հեղեղի պէս տարածուեց։ Վտանգուած էր Թեսալոնիկէն։ Դիւռախիոնը ընկաւ։ դրա հետ միացաւ Նիկոպոլիս թեմը Նաուպակտոս գլխաւոր քաղաքից բացի։ Ալուղիանոս իշխանը, մի բարձր պաշտօնեայ՝ Գրագիի որդի Ահարոնի ցեղից, անցաւ իւր ժողովրդի կողմը։ 40,000

մարդուց բաղկացած մի զօրք 1040 թ. Հոկտեմբերին ամբողջ վեց օր յարձակումներ էր կատարում Թէսալոնիկէի վրայ։ Սակայն հերոսական քաղաքացիները մի անգամ էլ միացրին Յունաց Պոլիսի (քաղաքի) անունը և ազատեցին տէրութիւնը՝ ընդդէմ թոյլ կառավարութեան։ Ինչպէս երբեմն իրենց հայրերը՝ յունական աստուածների և հերոսների վրայ, դուրս էին եկել մեգացի ժառանգական թշնամիների դէմ, այնպէս էլ Ս. Դեմետրիոսը՝ Թեսաղոնիկեցոց հոգի յաղթող պաշտպանը, շնորհեց պատերազմելու քաջութիւն և փառաւոր յաղթութեան ոյժ։ Այդ վճռողական ճակատով ջախջախուեց ապըստամբութիւնը։ Առաջնորդների հակառակութիւնը, որի պատճառով Ալուպիանոսը կուրացրեց Դելեան ցարին և վերջն էլ մատնեց, վերջ տուաւ ապստամբութեանը։ Թեթև միջոցներով Միքայէլը յաղթանակեց բաժան բաժան, առանձնացած կռուողների վրայ. բայց սև լեռների սերբերը պահեցին իրենց ազատութիւնը և Կոնստանդին Թ-ի առաջնորդութեամբ յարձակողական մի զօրախմբի համար այնպիսի վիճակ պատրաստեցին, որպիսին յետոյ այնքան յաճախ անգամ պատրաստելու էին կիսալուսնու վայրենի զօրքերին։ Բուլգարիայում քաղաքական կազմակերպութիւնը միանգամայն յունա-

կանի վերածեցին Օխրիդայի ինքնուրոյն եկեղեցին և բոլոր եպիսկոպոսական աստիճանները, ինչպէս Փանարիոտների տխուր ժամանակներում, բոլորն էլ ընկան մայրաքաղաքի փառասէրների ձեռքը, գլխաւորապէս Սոփիա եկեղեցու հոգևորականութեան ձեռքը, և հելլենական այդ եկեղեցական իշխանները, որոնք իրենց հարուստ տեղերի վրայ նայում էին իբրև ոսկու հանքի վրայ, դեռ բարձրաձայն գանգատւում էին բարբարոսների երկիրը քշուելու համար։ Ինչպէս այդ երևում է Թէոփիլակտոսի անբովանդակնամակներից։ Այն ժամանակուայ Յոյները ցոյց տուին քաղաքագիտական այնպիսի իմաստութիւն, ինչպէս յետոյ Լատինները. այսինքն, մասամբ քմահաճոյերէն, մասամբ կարճատեսութեամբ, ամեն բան անում էին վաղ թէ ուշ առաջացնելու սարսափելի ազգային հակառակութիւն։

Միքայէլ Դ-ի մահից յետոյ Զոէն Միքայէլ Ե Կալաֆատէին, որ մինչ այդ Կեսար էր, կայսր կարգեց։ Ապրիլի 18-ին 1042 թ. հպարտացած բախտախնդիրը իւր պառաւ բարերարուհուն Պրինկիպոս կղզու մի վանք նետեց։ Դա նշան եղաւ մայրաքաղաքի ժողովրդի ընդհանուր ապստամբութեանը։ Ազնուականութիւնը, որ արդարացի կերպով ատում էր և արհամարհում գահը բարձրացած

անելու արկածախնդիր ցեղին, ապստամբութեան գլուխն անցաւ։ Երկու ծիրանածին իշխանուհիները՝ Զոէն և Թէոդորան հաղիսաւոր կերպով հրատարակուեցին օգոստուհիներ Ապրիլի 22 1042 թ. և արևան մէջ խեղդեցին ընդդիմութեան փորձը։ Կալֆատէսը ընդունեց վարդապետական սքէմ։ Բնական է որ նախկին կառավարիչներին պատժեցին, դրաւելով նոցա ստացուածները։ Երկու քոյրերի մէջ խաղաղութիւնը միայն կարճ ժամանակ տևեց։ Յունիսի 11-ին 1042 թ. 62 ամեայ Զոէն ամուսնացաւ Կոնստանդին Թ Մոնոմաքոսի վրայ, որ կայսերական ցեղից էր։ Սա կայսրուհու հետ կառավարեց մինչև 1050 թ. իսկ մենակ մինչև 1054 թ։ Պառաւի բազմաթիւ յիմարութիւններից վերջին, լոկ քաղաքական ամուսնութիւնը՝ ամենամեծն էր։ Տէրութեանը հարկաւոր էր պատերազմող իշխան և Մանիակէսը ամենայարմար թագաւորն էր։ Տէրութեան դժբախտութիւնից յօդուցաւոտ և շուայտ մեկը գահ բարձրացաւ։ Կոնստանդինի կառավարութիւնը տէրութեան վերջի երջանիկ շրջանն էր, որը սակայն կայսեր արժանիքը չէր։ Նա բացարձակապէս հակազինուալական էր, խնայում էր զինուորների վարձը, և անչափ գումարներ էր ծախսում շինութիւնների և գիտութիւնները բարձրացնելու վրայ, որ այդ լուրջ ժամանակները խիստ անյարմար էր։

Իտալիայում Նորմանները, որ կրբեմն Մանիակէսի վարձկաններն էին, դարձել էին յունական իշխանութեան ամենամեծ թշնամիները։ Նոքա 1041 թ. մոտ Ապուլիա նուաճեցին Մելֆին. և երկու անգամ հիմնովին ջարդեցին Կապատան Դոկէանոսին։ Սրա յաջորդը աւելի բախտաւոր չէր։ Բարիի ազգեցիկ եպիսկոպոսը՝ Արգիւրոսը միացաւ նոցա հետ։ Մանիակէսը, որին Միքայել Ե-ը Իտալիա ուղարկեց, որտեղ Յոյներին հպատակ էին մնացել միայն Տարանտոն, Բրենտեսիոն և Հիդրոսը, նորից յաջողութիւնը իւր հետ բերաւ։ 1042 թ. Մոնոպոլի մօտ մեծ յաղթութիւն տարաւ։ Բայց երբ Կոնստանդինը կայսր դարձաւ, որի Սկլերայնա սիրուհու և սրա ազգակիցների հետ սաստիկ թշնամացած էր, հերոսը սաստիկ կատաղեց։ Նա իրան կայսր հրատարակեց. արքունիքը անյաջող փորձ արաւ պաւատման Արգիւրոսին գնել նրա դէմ։ Նա Հիդրոսում նստեց և 1043 թ. Փետրուարին ավ իջաւ Դիւռախիոնում։ Բոլորը սպասում էին, որ հին via Egnatia ճանապարհով յառաջ խաղալով, տէրութեան նոր կայսր կդառնայ։ Սակայն նրա վախճանը Ցեղար Բորջիայի պէս էր. մի պատահական նետի սլաք

սպանեց հզօրին և ոչնչացրեց նրա սկսուածքը։ Կոնստանդինը նորից ամուր նստեց իշխանական փտած գահի վրայ։

Յունաց Իտալական իշխանութիւնը շուտով վերջ ունեցաւ։ Նորմանների յառաջադիմութեան առաջը չկարողացան առնել ոչ արևմուտքի կայսրը և ոչ էլ պապը։ 1055 թ. ընկաւ Հիւդրոսը (Otronto), 1060 թ. ամուր Տրոյան։ Ռեգիոնի և Սկիւլակիոնի առումով վերջացաւ Կալաբրիայի տիրապետութիւնը։ Յունաստանեանի յաղթութիւնների վերջին մնացորդը կորաւ Արևելահռովմի համար։ Նորմանների յաղթութիւնը, որոնք շուտով Սիկիլիային էլ տէր դարձան, միաժամանակ Հին-Հռովմի յաջողութիւնն էր, որ այդպիսով կարողացաւ նորից իւր իրաւունքի սահմանը տարածել ամբողջ Իտալիայի վրայ, որ վաղուց սահմանափակուած էր։ Այդ պատահարների հետ միասին Հին և Նոր-Հռովմի մէջ տեղի ունեցաւ կատարեալ բաժանում։ Լևոն Թ պապը գիտէր իւր նպատակը և հըպարտ էր։ Իւր Նոր-Հռովմի պաշտօնակիցը՝ Միքայել Կեռուլարիոսը ոչնչով յետ չէր մնում նրանից։ Բայց հարկաւոր էր արևմուտքի ամբողջ սահմանափակութիւնը, որպէս զի Միքայել Կեռուլարիոսի թղթի մէջ վիրաւորանք նկատէր, մինչդեռ նա էր վիրաւորեալը։ Ամեն

մի ճշմարիտ օրթոդոքս պէտք էր այն հանգամանքի մէջ, երբ Հիւդրոսի, Հագիա Սեբէրինէի, Ռոսանոնի և Ռեգիոնի մետրապոլիտութիւնները արդէն միացել էին Հին-Հռովմի հետ, որ Յունաց աչքում կիսահերձուածող էր ընդունէր, որ շատ հոգիների փրկութիւնը վտանգուած է, ուստի Միքայէլը պարզօրէն կատարել է իւր բարձր հովուական պարտքը, իբր նա Լևոնի, Օխրիդայի ինքնիշխան եկեղեցու եպիսկոպոսապետի հետ, զգուշացրեց իտալական օրթոդոքսներին (butikoi) կասկածաւորների աղանդներից։ Արևելեան եկեղեցու մի մեղմ բայց և յարգուած աստուածաբան՝ Անտիոքի Պետրոս պատրիարքը, Դոմինիկոսին Գրադոյի (կեղծ) պատրիարքին ուղղած թղթում նախատել է միայն Միքայէլի հրամանների և կարգադրութիւնների կրքոտութիւնը. էապէս միանգամայն նրա հետ համաձայն լինելով։

Կառավարութեան համար այդ կռիւը շատ անհաճելի էր. եթէ դեռ Իտալիան պիտի ազատուէր, պապը անհրաժեշտապէս կարևոր էր։ Սակայն կառավարութիւնը թոյլ էր և ժողովրդի ազգասիրական, հակալատինական գիտակցութիւնը այնպիսի ոյժ էր՝ որ հեշտութեամբ չէր կարելի ընկճել։ Լևոն Թ-ը իրաւ է ամեն ինչ արել էր, որպէս զի իւր ներկա-

յացուցչի վատ ընտրութեամբ՝ կառավարութեան խաղաղասիրական ձգտումներին դէմ գնացած լինի։ Հուսմբերդ կարդինալն կոպիտ և վիրաւորիչ ընթացքը բնականաբար պէտք է որ խորը խոցէր ամեն մի ազնիւ Ցոյնի։ Նոքա խիստ հանդիսաւոր կերպով միմեանց նղովում էին, և վերջ ի վերջոյ ամենից խելացին այդ էր։ Փոտիոսից դլուխ բերած հերձուածի թքով միացումը, որ կեղծ էր և կասկածելի, դադարեց. սկսեցին իրար ճանաչել իրրև բացարձակ, ազնիւ թշնամիներ։

Տէրութեան համար խիստ լուրջ էր Կոնստանդնի ժամանակ Պեղենեպների վտանգը։ Տիւրակ (Տիրախ) խանը կատաղած Ցոյների վրայ ուր նրա ժողովրդի մի մասին Կեղէն ցեղապետի առաջնորդութեամբ ընդունել էին դլուխակները ծածանեցրեց։ Բայց հիմնովին ջարդ կրեց. և հնուց փորձուած վարչական սովորութեամբ։ Բիւզանդացիք գերիներին բնակեցրին Նիշի և Սրեդեցի ամայութիւններում. որ յետոյ իրենց դժբախտութեան պատճառ եղաւ։ Նոր Դաղութի քրիստոնեաները (christianos) օդնութեան կանչեցին Դանուբի միւս ափում ապրող քաջերին (bravos)։ Երկուսը միացան, հրի և սրի մատնեցին ամբողջ Բուլդարիան մինչև Անդրիանուպոլսի դռները։ Նոքա յաղթեցին և ոչնչացրին հռոմէական երեք զօրաբանակ։

Միայն 1051 թ. կարողացաւ աւազակաբարոյ խուժանին դուրս վռնդել Թրակիայից և Մակեդոնիայից. Տիւրակը, ժառանգի ենթարկուելով Պրեսլաւի մօտ՝ իւր դլխաւոր բանակում, խնդրեց խաղաղութիւն բարբարոսին յատուկ երկչոտութեամբ։ Կոնստանդինը արևելքում շարունակեց Բազիլեոսի անմիտ քաղաքականութիւնը։ Անիի Բագրատունիների մէջ Աշոտ Դ—ի մահով, Հայաստանում ծագել էին գահակալական սովորական կռիւները, և Միքայէլ Դ-ը վերջապէս կամեցաւ իւրացնել Հայաստանը։ Բիւզանդական զօրքը պաշարեց հայկական մայրաքաղաքը. բայց Փոփլոդոնացու պատուհասը 1041 թ. ստիպեց նոցա յետ նահանջել։ Հայոց մեծամեծները միացան և տասնեւթ տարեկան Գագիկին թագաւոր կարդեցին. նա և իւր զօրավար Գրիգոր Մագիստրոսը յաջողութեամբ կռուում էին Սելջուկների դէմ։ Բայց հէնց որ Կոնստանդինը ամրացաւ գահի վրայ, միացրեց բոլոր հայկական մանր իշխանութիւնները։ 1045 թ. Գագիկին կանչեցին մայրաքաղաք, և մի տարի յետոյ Ցոյները առան Անին։ Եթէ կային մարդիկ Հայաստանում, որոնք կարծում էին թէ Ցունաց կառավարութիւնը զօրեղ պաշտպանութիւն ցոյց կտայ Հայոց քրիստոնէական կրօնին, հիմնովին զգացին իրենց սխալը։ Մի

խումբ Ցոյն սովալլուկ հոգևորականներ Հայոց հարուստ վիճակների և վանահայրութիւնների գլուխն անցան։ Ուղղահաւատ մոնոֆիզիտների կրօնական հալածանքներին վերջ չկար։ Պետրոս կաթուղիկոսին (մեռաւ 1056 թ.) կանչեցին մայրաքաղաք. երբ սրա յաջորդը մեռաւ, արգելք դարձան նոր կաթուղիկոսի ընտրութեանը։ Նեթներրոդ դարու բոլոր ծանր փորձերը առանց հետևանք էին մնացել Ցոյն եպիսկոպոսների համար, որոնք ոչինչ չէին սովորում և ոչինչ չէին ներում։ Բնորոշ է, որ դեռ Ռոմանոս Դիոգինէս շարաբախտութեան կայսրը իւր արշաւանքի ժամանակ երդուել էր վերադարձին ոչնչացնել հայկական հաւատը։ Հայոց վարդապետները ապաղակում էին առ Աստուած. թող նրան հիմնովին խորտակէ, ինչպէս Ցուլիանին սրին նղովել էր Ս. Բարսեղը։ Ահա Հայերի այս դողդողուած տրամադրութիւնն է մեզ միջոց տալիս լուծելու Սելջուկների յաջողութեան խնդիրը. տրամադրութիւն՝ որի շարժառիթը և պատճառը յունական անվիճելի եկեղեցական վարչութիւնն էր։

Այդ փոքրիկ լեռնային պետութիւնները իւրացնելուց անմիջապէս յետոյ, յունական տէրութիւնը սարսռուած էր ուղղակի դիմադրելու Սելջուկների հարուածներին, որոն

Տուղրուլ Բէգի առաջնորդութեամբ Ասիայում առաջնակարգ ոյժ էին դարձել։ Ցունական չարչիական մանր քաղաքականութիւնը, ինչպէս սովորաբար, խնայողութեան սխալ հաշիւ էր արել։ Ծանր հարկեր էր բարդել նոր տիրած, լեռնային աղքատ գաւառների վրայ և արձակել էր 50,000 Հայ և Վրացի զինուորներ։ Սակայն մեծ Բազիլիոսը, նրանով որ ամենաընտիր ամրութիւնների շարքով ամրացրել էր արևելեան սահմանը, իւր յիմար յաջորդներին ազատութիւն էր պարգևել։ Վասպուրական ներս խուժող Թրքական հրոսակներին ջարդեցին 1048 թ. Ստրագնայի մօտ, բայց Հռովմայեցոց Արքին (Կարին-Թէոդոսոպոլիս), հարուստ վաճառաշահ քաղաքը, որ ամրացրած չէր, հրոսակները մոխիր դարձրին։ Դրա վնասը մասամբ հաւասարուեց նրանով որ յաղթութիւն տարան Նոցա դէմ Կապաոնի մօտ, Վրաց ազգի օգնութեամբ, որ ոաքի է կանգնել։ Տուղրիլբէկի 10.. թ. անձնական յարձակումը ի դերև եկաւ Ս՝անապկերտի ամուր բերդի առաջ։

Կոնստանդինը արտակարգ բախտ ունէր։ 1047 թ. հայազգի Լևոն Թոռնիկի սասակի վտանգաւոր ապստամբութիւնն էր, որը հասել էր մինչև մայրաքաղաքի պատերի տակ, անցաջող անցաւ, և նա Զոէի մահից յետոյ էլ հանդար-

տութեամբ կառավարեց մինչև իւր մահուան օրը՝ 1054 թ։ Նա մեծ հաճոյքով իշխանութիւնը կյանձնէր Մակեդոնիայում զօրքի հրամանատար Նիկեփորոս Բռուէնիոսին. բայց օրինականութեան պահանջը արթնացաւ։ Ժողովուրդը, սենատը և պահպան գունդը, ցնծութեամբ ողջունեցին՝ երբ պառաւ Թէոդորան, «ծիրանածիններից վերջինը», իշխանութեան գաւազանը ձեռքն առաւ (1054-1056) և բռնեց արտասովոր եռանդով։ Թէ նախկին կառավարութեան արբանեակները պատժուեցին աքսորով, հալածանքով և սատացուածքի գրաւումով, բիւզանդական գահակալութեան փոխուելու սովորական կարգերին էր պատկանում։ Միայն այդքանով չվերջացաւ պառաւի դործունէութիւնը, որը կարծես ժառանգել էր իւր հօրեղբօր ամբողջ եռանդը։ Նա կոսկածութեամբ վերաբերուեց դէպի զինուորական բարձր խորհուրդը՝ համաձայն այն ժամանակուայ զիւանների բնածին ուղղութիւնների, և եթէ արդար դատուի ոչ առանց իրաւունքի. որովհետև նրա բարձր ազնուական անդամների համար կայսրութեան ձգտելը և հաստատուելը, ուղղակի ժառանգական և մոդայի հիւանդութիւն էր դարձել։ Նա յետ կանչեց Սկլջուկների դէմ դործող զօրքի հրամանատար, չափազանց ընդունակ Իսահակ Կոմնենին,

և նրա տեղը կարդեց մի աւելի ճկուն պալատական։ Իւր մահուան ժամանակ (30 Օգոստոսի 1056 թ.) կայսերական աստիճանը տուաւ ծեր զօրապետ և սենատոր Միքայէլ Ստրատիոտիկոսին (30 Օգոստոսի 1056-ից մինչև 1057 թ. Օգոստոսի 31.)

Զօրքի ինքնագիտակցութեան համար այդ անտանելի էր։ Ժառանգական իշխանական տան հաստատումը և սէրը, որից Զոէն և Թէոդորան այնպիսի շոշափելի ապացոյցներ էին ստացել, անհետացան մակեդոնիան հարստութեան վախճանով։ Ծագեց մի զօրեղ զինուորական յեղափոխութիւն։ Զօրականները, մեծ մասամբ փոքր Ասիայի կալուածատէրներ, միացան ինչպէս Սեւերոսի կամ Աբրեկանի ժամանակ։ Առանձնակի զօրագնդերի ցնձալից ձայնակցութեամբ 1057 թ. Յունիսի 8 կայսրը հրատարակեցին Իսահակ Կոմնենին՝ սկիզբը Կոստամոնայում, յետոյ Գուանավիայի դաշտում։ Իսկական թագաւոր կարգուեցը՝ Կոստակլոնը, Անտիոքի պաշտօնազուրկ ատրատեֆը, դրդեց Նիկոպոլսի գնդերին էլ միանալ։ Իսահակը արշաւեց Նեկիայի վրայ, յաղթեց կայսերական գնդերը. Միքայէլը հրաժարուեց, և 1057 Սեպտեմբերի 2-ին Իսահակը օծուեց Ս. Սոփիայի եկեղեցում։

Այդ զինուորականների յաղթութիւնն էր

Սենատի արիստոկրատիայի և քաղաքացիական Բիւրոկրատիայի դէմ։ Ուստի կայսեր առաջի ընդունելութիւնը անջնջելի տպաւորութիւն թողեց բոլոր մասնակցողների վրայ։ Սենատորները կանգնած էին և նայում էին դէպի դեսին։ Կայսրը միայն ամենահարկաւոր բաները խօսեց, և իր կամքը զգալ տուեց համարեա թէ միայն գլխի և ձեռքի շարժումով, և խօսելը թողեց իր քարտուղարներին։ Այդ սկսուածքին համաձայն էր կառավարութեան ընթացքը։ Իսահակը ցոյց տուեց արտասովոր եռանդ։ Դրեւ երկարամեայ զօրքի պուխ՝ շատ խիստ կերպով էր զգացել իր գինուորների հէտ Բազիլեոսի մահից յետոյ քայքայուած տնտեսական խառնակ վիճակը։ Նա Վեսպասիանի նման չվախեցաւ ստելի դառնալուց եթէ միայն կարողանար ուղղել տնտեսական դրութիւնը։ Նա ոչնչացրեց պարատականներին և ուսումնականներին նշանակած անպաշտօն ռոճիկները և կարճեց քահանաների մեծ բանակը։ Հիմնական փոփոխութիւն մտցրեց արնտեսութեան մէջ։ Թէ նա ինչքան աննշան ուշադրութիւն էր դարձնում պետական խորհրդի ակնյայտնի ընդդիմադրութեանը, երեւում է նրանից, որ պաշտօնազուրկ արեց Միքայէլ Կեռուլարիոսին, որի հոգեւորական ոտնձգութիւնները անտանելի էին։ Եկեղեցու

այս պետը իւր պապական բարձրայօնութեամբ օրթոդոքս եկեղեցու մէջ իւր նման միայն մէկին ունի, Մոսկուայի պատրիարք Նիկոնին։ Իսահակը Բիւզանդիայում և Ալէքսէյը Ռուսաստանում հէնց ծնունդի մէջ խեղդեցին սկսող պապականութիւնը։

Ծերունի Իսահակը, որ 1059 թ. պեչենեգների և մաճառական աւազակախմբերի դէմ յաջող արշաւանքից յետոյ հիւանդութիւնից աւելի էր թուլացել, այլ ևս համապատասխան չէր կայսրութեան ծանրութեանը։ Նրան աւելի էր թուլացնում Բիւրոկրատիայի լուռ և կրաւորական ընդդիմութիւնը։ «Աստուած» սովորել էին ասելու, «վեց օր ժամանակ է դործածել աշխարհը ստեղծելու, իսկ այս մարդը կամենում է ամեն բան մի օրում շինել»։ Արեւելահռովմի կայսր դառնալը այլ ևս զուարճութիւն չէր, այլ ճակատագրական պաշտօն։ Ինչպէս երբորդ դարում Հռովմում նոյնպէս այստեղ էլ արժանաւորները կայսեր թագը համարում էին պարտաւորութիւն և վիճակ։ Ցոդնած ծերը հրաժարուեց և մտաւ Ստուդիոն վանքը։ Իշխանութիւնը յանձնեց իւր ընկեր և մինիստր Կոնստանդին Ժ. Դուկասին (1059—1067), որ տնտեսական գործերում մի հանճար էր և երկրորդական պաշտօններում վայելուն յա-

ջողութիւն էր ունեցել։ Ակնյայտնի է որ Ռաս-
հակը նրան ընտրել է առաջնորդուած բարո-
յական հիմունքներով, որովհետև հաւատա
ցած էր թէ այդպիսով տէրութեան մեծ բա-
րիք արած կլինի և գահից զրկեց իւր չա-
փազանց ընդունակ Յովհաննէս եղբօրը և նրա
գեռ էլ աւելի ընդունակ որդիներին։ Սակայն
երևաց որ այդ ընտրութիւնը մեծ սխալ էր։

Կոնստանդին Ժ-ով սկսւում է Դուկասնե-
րի դարը, այն է Բիւրոկրատիայի, հռետ-
որների և ուսումնականների[1] իշխանութեան
ամենադժբախտ շրջանը։ Արդէն միանգամ
Մարկոս Աւրելիոսի ժամանակ տէրութեան
համար կորստաբեր հետևանք էր ունեցել Պղա-
տոնի Politeia-յի (պետութեան) գաղափարի՝
փիլիսոփաների գաղտնապետական իշխանութեան
իրագործումը։ Դուկասը սատանիկ բազմացրեց
Սենատի արիստոկրատների թիւը, նոցա
շարքում ընդունելով բազմաթիւ ժողովրդա-
կան տարրեր՝ արհեստաւորներից և բարբա-
րոսներից։ Հին սենատորները, որոնց ազնուա-
կանութիւնը իրաւ է խիստ կասկածելի է

[1] Այս շրջանի մասին հմտամտիր Կ. Նեումանի շի-
տիր աշխատութիւնը Բիւզանդական տերութեան պատմական
դիրքը, հայկական աղբիւրներից առաջ C. Neumann.
Die Weltstellung des byz. Reiches vor den Kreuzzügen.
Leipzig 1894.

և մի օր առաջ սկսուած, այդ բանի վրայ
կատաղութեամբ էին նայում. բայց կարող
էին գանգ նրանով մխիթարուել, որ ժողովրդա-
կան սենատորների կուսակցութիւնը բոլորո-
վին իւր ձեռքն առաւ պետական հարկերը։
Բիւրոկրատները կառավարում էին. առաջի
խօսքը պատկանում էր ել և մտից պաշտօնեա-
ներին։ Դա մի տեսակ փոխարինութիւն էր
քաղաքացիական վարչութեանը զինուորակա-
նութեան դէմ, մայրաքաղաքի գաւառական
ազնուականութեան դէմ որ մինչ այդ վարում
էր զինուորական բարձր պաշտօնները և Ռաս-
հակին կայսր հաստատելու ժամանակ, նորից
արտայայտել էր իւր պրետորիանական ոգին։
Որոշուած էր ընդ միշտ այդ զինուորական
գահակալական ձգման առաջն առնել։ Եւ
այդպէս վարուեցին նրանով, որ կտրեցին զի-
նուորական բիւջէն և զօրքը արձակեցին։
Կայսրը և մինիստրները միմեանց հետ մրցում
էին, որպէս զի գլուխ բերեն սենատի նոր կու-
սակցութեան հակազինուորական գաղափարը։
Ամեն տեղ քչացնում էին զօրքի գլխաւոր
մասը, կարձում վարձը, առանց լրացնելու
թողնում զէնքի և պատերազմական մթերք-
ների պաշարը և չէին ամրացնում սահմանի
ամրութիւնների վնասուած մասերը։ Մի խօս-
քով այն ժամանակուայ Կոստանդնուպոլսին

պակասում էր միայն ժողովրդից ընտրած ըեյլիսառատ (պետական խորհուրդ), որպէս զի կատարեալ լինէր՝ գերազանց եղանակով այս օրուայ սահմանադրական պետութեանց ամբողջ դժբախտութիւնը։

Վարչութեանը համապատասխան էր կառավարութիւնը։ Արևելեան ճգնաժամի մէջ երևաց թուլութիւնը։ Եւ հէնց արևելքումն էր անհրաժեշտ կարիք՝ մի զինուորականի զօրեղ ձեռք։ Որովհետև այնտեղ նոր հղօր կեանք էր սկսուել Սելջուկների մէջ՝ սկսած այն որից երբ մեծ Տուղրիլ բէկի մահից յետոյ 1065 թ. նրա որդին՝ որ մինչ այդ Խորասանի կուսակալ էր՝ Ալփ-Ասլանը կառավարութեան գլուխ առաւ։ Նա ուղղահաւատ սունիների առաջամարտիկն էր՝ և միաժամանակ իւր բոլոր թրքական վայրագութեան հետ՝ քաջայանդուգն և ասպետ անձ էր. իւր հեծելազօրքի աստուածը՝ և կատաղի թշնամի հռովմէական պետութեանը՝ որ կառավարում էր Թուլամորթ բիւրոկրատների և գեղեցկախօս հռետորների ձեռքով։ Նրա յարձակումը Հայաստանի վրայ նշան էր այն սեղի բարձր քաղաքակրթութեան մեռնելուն։ Սելջուկների սուլթանի պատերազմական ճանապարհը իւր ուղղութեամբ թողնում էր միայն սոսկալի ծրագրուած աւերն և ամայութիւն։ Այժմ

համաձայն տաճկասիրական հոսանքին՝ խօսում են «Սելջուկների խիստ զարգացած քաղաքակրթութեան հրաշալի մնացորդների մասին՝ որովհետև Ռումի Սուլթանը՝ Ալաէդդին Կեյկոբադ Ա. (1220—1236) իսկապէս փառաւոր շինութիւններ ունի։ Միայն մոռանում են ի հարկէ այն փոքր հանգամանքը որ բոլոր այդ Սելջուկեան փառահեղութիւնները ոչ թէ ինքնուրոյն՝ այլ պարսկական և բիւզանդական փոխառութիւններ են։ Ուղղակի նոյնպիսի իրաւունքով կարող ենք Պիւքսոսի թագաւորներին՝ որոնք Տանիսում որոշ գեղարուեստական գործեր են թողել Եգիպտականի հետևողութեամբ և փոխառնութեամբ՝ համարել Նեղոսի հովտի ճշմարիտ քաղաքակրթութեան տարածողներ։

Ալփ-Ասլանը կառավարութեան գլուխն անցնելուց անմիջապէս յետոյ անհամար զօրք ժողովեց և արշաւեց դէպի Հայաստան։ Երբ նա արևելքից ներս խուժեց՝ Աղուանքի և Վրաստանի թագաւորները սարսափած անձնատուր եղան։ Այն ժամանակ նա արշաւեց թագաւորական անառիկ Անի ամրոցի վրայ։ Ասիական բարբարոսները իսկապէս սովոր չեն եղել քաղաքներ պաշարել. սակայն անօրինակ զօրութեամբ տաճիկ հրոսակները դիմացան պարիսպների առաջ։ Կենդրոնական կառավա-

լութիւնը փող և զօրք չունենալով, չուզարկեց օգնական գնդեր և այդպիսով 6. Յուլիսի 1064 թ. հրաշալի քաղաքը բարբարոսների աւար դարձաւ։ Միաժամանակ նոցա հեծելազօր գնդերը կողոպտելով. այրելով և յափշտակելով տարածուեցին մինչև Եփրատի նահանգները, Կարսի փոքրիկ իշխանը զգալով իւր թուլութիւնը, ժողովրդական այդ ահեղ հոսանքի առաջ, իւր տէրութիւնը տուեց Յոյներին և փոխարէնը ստացաւ Կամենդավ քաղաքը՝ կիլիկիական Տաւրոսի երկրումն որ պէտք էր շուտով Հայ ազգի համար երկրորդ հայրենիք դառնար։ Փոփոխութիւնը լաւ էր. որովհետև Կարսը շուտով ընկաւ Թուրքերի ձեռքը։

Ինչպէս Ասիայում, Եւրոպայում էլ կառավարութեան քաղաքականութիւնը զօրեղ չէր։ 1064 թ. Մաճառները առան Դանուբեան նշանաւոր Բելգրադ ամրոցը։ Հետևեալ տարին Պեչենեգներից սպասելիք վտանգին փոխարինեց Կումանների սարսափը։ Ուղերը (Օղուզները, որոնց Ռուսները անուանում են Պոլովցի, Յոյները Կումաններ), որ նմանապէս ցեղակոլոլ, ձիահարուստ տաճկական հրոսակներ էին, ապրում էին Թաղիքի վրաններում կերակրուում մատակների կաթով և ձիու մսով, հագնում ոչխարի մորթի, զի-

նուած ըստ սովորութեան ազեղով և նետերով, հետևելով իրենց բազմաթիւ եղբայրների օրինակին, բռնել էին արևմուտքի ճանապարհը, Պեչենեգներին նոքա քշեցին Դնեստրի ափերից՝ Վալախեա։ 1065 թ. նոցանից 60,000 հոգի անցան Դանուբը։ Ի զուր փորձեցին Բազիլեոս Ալեկսիոս և Նիկոփորոս Բոտանիանէս՝ հռովմէական զօրավարները, ընդդիմանալ նոցա։ Քաղաքացիական վարչութեան շնորհիւ, չունէին բաւականաչափ զինուորներ։ Մի հրոսակխուռմբ հասաւ մինչև Թեսալոնիկէ։ Վարակիչ հիւանդութիւնները և երկրի ընդդիմ ժողովրդի կատաղութիւնը ոչնչացրին նոցա։ Դլխաւոր ոյժը՝ ճնշուելով Հեմուսի վրայ, ոչնչացումը հռովմէական խղճալի կառավարութեան արժանիքը չէր, այլ բուլգարական ընտիր զինուորների և վրէժխնդրութեամբ լցուած Պեչենեգների արարքը, որոնք մորթուում էին սասաիկ անգթաբար։ Մնացորդը գթութիւն հայցեց և Մակեդոնիայում բնակութեան տեղ ստացաւ։

Համաձայն հակազինուորական գեղեցկամոլութեան և ուսումնականութեան փայփայելու ախտին, ծերացած կայսրը ամուսնացաւ երկրորդ անգամ։ Եւդոկիա Մակրեմ Բոլիսիանն, որ մի գեղեցիկ և գրասէր տիկին էր, նրանից վեց զաւակների մայր դարձաւ։ Բացի

այդ Դուկասը առաջի ամուսնութիւնից ունէր երեք որդի, որոնք արդէն ապահովութեան համար օծուել էին։ Մեռնող կայսրը, մտածելով միայն իւր տան համար թագը ապահովելու փափագով, փորձեց կայսրուհուն և սենատին պարտաւորեցնել գրաւոր խոստումներով և երդումներով—Բիւզանդացիների մօտ անվստահելի միջոցներ—։ Նէոկիան, թէև ապրում էր միանգամայն ուսումնական իմաստակների մթնոլորտում, որտեղ ուղղութիւն էր տալիս ղղուելի շատախօս Պսելոս փիլիսոփան և ճոռոմաբանը, ապացուցեց, որ ամենահիմնական ճարտասանական անմիտ կրթութիւնն էլ չէ կարող մի խելացի կնոջ միտքը միանգամայն փչացնել։ Նա ճանաչեց այն վնասը, որ հասել էր տէրութեանը նոր ուղղութեան շնորհիւ։ Միայն աւանդական զինուորականութիւնն էր կարող տէրութիւնը փրկել Սելջուկների վտանգից։ Նա լսեց ժողովրդի ձայնին, որ պահանջում էր նորից ամուսնանալ մի քաջ զինուորականի հետ. միայն դրանով կարելի էր ընդհանրութեան այնքան վնասակար Բիւբոկրատիայի առաջն առնել։ Իրաւ է նա սխալ գործեց ամուսին ընտրելիս։ Ռոմանոս Դիոգենէսը՝ Սրեդեցիայի (Sredec) հրամանատարը, այն Կոնստանդին Դիոգենէսի որդին էր, որ իբր թէ երբեմն փորձել էր

Սլաւոնները ապստամբեցնել Ռոմանոս կայսեր դէմ։ Նրա դեռ երեսնամեայ որդուն էլ, որ Ցորքի նման հսկայ էր, տաքարիւն և համարեա խելացնոր փառասիրութեամբ, կասկածոտ Բիւբոկրատիան նոյն մեղադրանքներով դատապարտեց, սակայն դարձեալ անիրաւացի։ Նէոկիան, որ արդէն քառասունն անցել էր, բայց վայելչագեղ էր և աշխոյժ բնաւորութեամբ, հաղիւ էր տեսել չափազանց գեղեցիկ Ռոմանոսին որ որոշեց տիրել նրան՝ Հարաւի կնոջ յատուկ կրակոտութեամբ։ Բայց նրա գրաւոր խոստումը՝ չամուսնանալ երկրորդ անգամ, գտնուում էր սրբազնասուրբ Յովհաննէս Քսիտիլինոսի ձեռին։ Կանացի խորամանկութիւնը լաւ հասկացաւ պատրիարքի թոյլ կողմը։ Ձևանալով թէ մտադիր է նրա բարեկամներից մէկի հետ ամուսնանալ՝ ձեռք բերեց այդ կասկածաւոր թուղթը և զարմացրեց մայրաքաղաքը՝ 1067 թ. Դեկտեմբերին ամուսնանալով Ռոմանոսի հետ։ Դա զինուորական կուսակցութեան յաղթանակն էր. այդ եղանակով խարուած Բիւբոկրատիայի կատաղութիւնը արտայայտուեց իւր գլխաւորների՝ ծածուկ և յայտնի ընդդիմութեամբ, դոքա էին կայսեր եղբայր՝ Յովհաննէս Դուկաս կեսարը, որը իւր երկու որդիների հետ Սենատի մէջ զօրեղ կուսակցութիւն ունէր, բարկա-

ցած պատրիարքը և ամենից առաջ Թիւնալից Պսելոս ճարտասանը։ Դրա վրայ աւելացաւ և այն որ Դուկասից փայփայած Պրեսորեանները՝ Վարեազնելը, նախկին արքունիքի կողմն անցան, հենց միայն նրա համար որ Ռոմանոսը սիրուած էր ազգային զօրքից։ Միայն մի արտաքին փառաւոր յաղթութիւն կարող էր զինուորական կայսեր տալ հարկաւոր դիրքը։

Անհրաժեշտ էր զօրեղ դործով դէմ դընել Սելջուկներին, որ փոքր Ասիայի և Ասորիքի նահանգների մշտական պատուհասն էին դարձել։ Ռոմանոսի քաջութիւնը և զօրավարական հմտութիւնը յոյս էին տալիս, որ տէրութեան համար դուրս է եկել մի նոր Լեւոն Դասաբայի կամ Կոնստանդին։ Դժբախտաբար նրա մոլեգնութիւնն ու դէպի թշնամին ունեցած արհամարհանքը նրան կործանեցին։ Բիւրոկրատիայի երկարատև վատ կառավարութիւնը ոչնչացրել էր զօրքի մէջ կարգը, աննպատակ անտեսութիւնն էլ չէր լցրել տէրութեան դանձարանը։ Վարձկան զօրքերի այլատարաղութիւնը, որոնց հրամանատարները մեծաւ մասամբ իրենց ցեղից ազատներ էին, դժուար և անապահով էր դարձնում ընդհանուր հրամանատարութիւնը և գործողութեան միասնակութիւնը։ Ընտրած դրան 1068 թ. արշաւանքը միանդամայն յաջող անցաւ, որով լաւ պատժեցին թէ Հալէպի մուսուլմաններին և թէ խիստ հարուած տալով յետ մղեցին Սելջուկների աւազակային գնդերը՝ որ կողոպտում էին Պոնտոսի շրջակայքը։

1069. վայրենի աւազակները նորից հեղեղեցին Կոստանդնուպոլիսեան, որը կրեց վանդալական աւերումների և կոտորածների բոլոր սարսափները։ Թաթարական թեթև ձիաւորների առաջ անզօր էր բիւզանդացոց ծանր սպառազինութիւնը, ինչպէս երբեմն Կրասոսի լեգէոնները պարթևական զրահաւորուած ձիաւորների և նետաձիգների առաջ։ Բայց կայսրը վերջ ի վերջոյ կարողացաւ աւազակային հրոսակներին Եփրատից հեռուն քշել, սակայն երբ նա յանդուգն արշաւանքով, նախկին չորրորդ Հայքով կամենում էր անապատների դրաւել Ալպարը, Վանայ լճի ամրոցը, լսեց որ իւր զօրավարը՝ Փիլարետը Կոստանդնուպոլիսում ջարդ է կրել։ Սելջուկները կողոպտեցին մինչև Իկոնիան, Կայսրից փախան նոքա, որ կամենում էր նոցա դարձի ճանապարհը կտրել զոհ տալով հաւաքած աւարը։

Իտալիայի երկրի տարատամ վիճակը ստիպեցին կայսեր 1070 թ. վերադառնալ մայրաքաղաք։ 1068 թ. ընկել էր Հիդրոսը (Otronto) և պաշարման մէջ էր ամուր Բարին։ Ցունաց

գլխաւոր զինարանը Ապուլեան հողի վրայ։ Հերոսական ընդդիմութիւնից յետոյ պահապան գունդը անձնատուր եղաւ 16 Ապրելի 1071 թ։ Դրանով վերջացաւ Յունաց տէրութիւնը Իտալիայում. և 1073 թ. Ամալֆիտաններն էլ մտան Ռոբերտ Գիսկարդի իշխանութեան տակ։ Այլ ևս չէր կարելի այդ տեղի պատուհասի առաջն առնել. բայց արևելքում դրութիւնը աւելի սուր կերպարանք ստացաւ։ Մանուէլ Կոմնենը, Ռսահակ կայսեր եղբօր որդին, որը Ռոմանոսի բացակայութեան ժամանակ ընդհանուր հրամանատար էր, Թաթարներից լաւ ջարդ էր կրել, ինքն էլ գերի բռնուել։ Յոնաէն, որին ս. Միքայելը այնքան անգամ շնորհել էր իւր հրաշագործ օգնութիւնը, այս անգամ ընկաւ Թաթարների ձեռքը։ Հրեշտակապետի սրբավայրը պղծեցին և կողոպտեցին։ Յետոյ Ալփ—Ասլանը հայկական արևելքում պաշարմամբ առաւ Մանազկերտ խիստ նշանաւոր քաղաքը։ Այն ժամանակ կայսրը լարեց իւր բոլոր ոյժերը։ 100,000 մարդուց բաղկացած զօրքի գլուխն անցած, անձամբ դուրս եկաւ Քրիստոսի Թաթարական թշնամու դէմ։ Մի զօրաբաժինը, որ բաղկացած էր գլխաւորապէս Ուզերից և արևմտեան վստահելի վարձկաններից, Փրանսիացի Ուրսել Բայլեյիւլի առաջնորդութեամբ գրաւելու էր

Ղլաթը, գլխաւոր զօրքը կայսեր առաջնորդութեամբ յետ առաւ Մանազկերտը։ Սակայն ձիաւորների կռիւների ժամանակ երևաց Ալփ-Ասլանի պատերազմներում փորձուած գնդերի գերազանցութիւնը։ Կայսրը ի զուր կանչեց Ղլաթի դէմ ուղարկած գունդը. Թաթարները նոցա յետ էին քշել դէպի Միջագետք։ Ալփ-Ասլանը զգալով որ իւր առաջ կանգնած է արժանաւոր մրցակից. առաջարկեց խաղաղութիւն հաստատել։ Ռոմանոսը յիմարաբար հրպարտութեամբ մերժեց այդ։ Տեղի ունեցաւ զարհուրելի ճակատ։ Զարանշան նախագուշակութիւններ սարսափեցրին կայսեր զօրքը, որ նա շտապով ամենակարճ ժամանակում ի միասին էր հաւաքել և ամեն խիստ կարգապահութեամբ էլ չէր կարողացել կանոնաւորել։ Սպանների և զինուորների դաւադրութիւնը և մատնութիւնը սեղհական բանակում թուլացրեց բոլորի եռանդը։ Զնայած դրան առաջի օրը երկու կողմն էլ հերոսաբար կռուեցին առանց որոշման։ Սակայն երբ երկրորդ օրը Անդրոնիկոս Դուկաս իշխանը դաւաճանութեամբ իւր գնդով յետ խաղաց, սարսափը տիրեց զօրքին։ Ուրիշ զօրապետներ էլ հետևեցին Անդրոնիկոսին իրենց վստահացած զօրագնդերով։ Թաթարական հեծելազօրը վայրենի սաստկութեամբ յարձակվով. անարգել առաջ անցաւ

Կայսեր տակի ձին վիրաւորուեց։ Նա գլորուեց և գերի ընկաւ Թաթարների ձեռքը։

Մանազկերտի սոսկալի պարտութեան օրը 1071 թ. բիւզանդական մեծ պետութեան մահուան ժամն էր։ Թէև նրա հետևանքները իրենց բոլոր արհաւիրքներով անմիջապէս զգալի չէին, բայց փոքր Ասիայի արևելեան մասը՝ Հայաստանը և Կապպադովկիան, այն երկիրները որոնցից այնքան կայսրներ և զօրապետներ էին դուրս եկել. և որոնք ներկայացնում էին տէրութեան ոյժը, ընդ միշտ կորած էին, և Թաթարը իւր վրանը զարկեց հին հռոմէական անցեալ փառահեղութեան աւերակների վրայ։ Քաղաքակրթութեան որրանը զոհ գնաց իսլամական բարբարոսութեան և կատաղեալ վայրենութեան։ Ոչ թէ դժբախտ կայսեր, այլ Բիւրոկրատիային և արքունիքի կուսակցութեանը, որ կարճատես կուրութեամբ ընդդիմացել էին զինուորականութեան դէմ, տէրութիւնը կանոնաւորապէս զրկել էին պաշտպանութիւնից և իրենց գլխաւոր ներկայացուցչի ձեռքով ապի դէմ բացարձակ դաւաճանութիւն էին գործել, ծանրանում է այդ սոսկալի հարուածի ծանր բարոյական պատասխանատուութիւնը, որից Ցոյնը այլ ևս չկարողացաւ ոյժի կանգնել և ոչ էլ կարող էր։

Յետագայ բոլոր սերունդները իրաւացի գնահատել են այն ուղղակի անօրինակելի ազնուասրտութիւնը, ինչպէս որ կոպիտ Թաթարը վարուեց ընկճուած և գերուած հակառակորդի հետ։ Նա նրան ազատութիւն տուաւ՝ փոխարէնը առնելով Սելջուկ գերիներին և մի միլիոն Բիւզանդական դրամ։ Միայն յուսահատ ճակատագրական վիճակն էր կարող դրդել անբախտ կայսեր վերադառնալ իւր մայրաքաղաքը։ Նոյն իսկ քաղաքականապէս ամենատարրամիտն էլ պէտք է հասկանար, որ կայսեր անյաջողութեան հետևանքը լինելու էր նրա և նրա հետևողների՝ զինուորական կուսակցութեան անկումը։ Այդպէս էլ Բիւրոկրատները ամենայն վստահութեամբ իրանց ձեռքն առան հաշուէտուները։ Պսելոսի առաջադրութեամբ Նէպոկիան և նրա անդրանիկ անհաղորդ որդին՝ Միքայէլ Դուկասը, հրատարակուեցին կառավարիչներ. իսկապէս կառավարում էր Ռոմանոսի ոխերիմ թշնամին, ծեր Ցովհաննէս Դուկաս Կեսարը։ Պսելոսի կուսակցութեան օժանդակութեամբ, պահանջեց Նէպոկիայից որ իւր ամուսնուն հրատարակէ դահաղուրկ։ Նրը քաջալի կինը դժկամակած մերժեց այդ անամօթ առաջարկը, չնայած նրա խնդրանաց և արտասուքներին, դուրս քշեցին պա-

լատից՝ մաղերը խուզեցին և վանք ուղարկեցին։

Միքայէլ Պարապինակէսը (1071—1078) կայսր հրատարակուեց։ Դժբախտ Ռոմանոսը որ փորձեց նրա դէմ Ասիայում պաշտպանուել և որին միայն զօրքի մի փոքր մասն էր հաւատարիմ մնացել՝ Անդրոնիկոսից փակուելով Ադանայում՝ ստիպուած էր անձնատուր լինել։ Նա հանդիսաւոր կերպով հրաժարուեց և խոստացաւ վանք մտնել։ Անդրոնիկոսը իւր՝ նրա անձի ապահովութեան համար տուած խոստմանը վկաներ կարգեց Քաղկեդոնի՝ Հերակլեայի և Կոլենեայի մետրոպոլիտներին։ Բայց Ռոմանոսը իզուր էր հաւատ ընծայել։ Կառավարիչ Կեսար Դուկասը շատ հեռու էր թէ քրիստոնէական բարոյականութեան սկզբունքներից և թէ ընդհանուր ժողովրդական իրաւունքներից։ Զնայած ամենայն եպիսկոպոսների բողոքներին՝ որոնց հետ աններելի խաղ էին խաղացել՝ Ռոմանոսին կուրացրին ամենազզուելի և ամենաանգութ եղանակով։ Դժբախտ կայսրը զոհ դնաց իւր սոսկալի վէրքերին՝ որ Կեսարի հրամանով դիտմամբ անխնամ էր թողնուած՝ թէև նա իզուր փորձեց պատերազմական դաշտում հերոսական մահով մեռնել։

Թէ արդեւք հնարաւո՞ր էր դեռ ևս փրկել այն ժամանակուայ տէրութիւնը՝ ինչպէս ոմանք կարծում են—Բարձր Հայքի մեծ ռազմագիտական դիրքը դեռ չէր կորած։ Անտիոքը՝ Նիկեան՝ և Ծովափնեայ տեղերը դեռ հռովմէական էին—արդարացի կերպով կարելի է կասկածել։ Հռովմէացոց փոքր-ասիական իշխանութիւնը նման էր Ցուստինեանի յաջորդների իտալական տիրապետութիւններին և այնտեղ էլ «երկաթեայ բռունցքով մի մարդ»՝ Կոնստանտինը կայսրը՝ բոլոր ոյժերը լարելով Լանգոբարդների դէմ՝ անկարող էր եղել որ և է յիշողութեան արժանի գործ կատարելու։ Բացի այդ կատարեալ սխալ է՝ եթէ Սելջուկներին հաւասարեցնում են սոսրական Համդանիդների հետ և թիւրիմացութիւն է երկուսի զինուորական ոյժի համեմատութիւնը։ Ցամենայն դէպս ուղղութիւն տուող քաղաքացիական մանդարինների ամենափարթամ ծաղիկներով ամող վատ կառավարութիւնը՝ ցոյց էր տալիս իսկապէս զարմանալի հմտութիւն՝ քաղաքական բոլոր կարևոր բոպէներում ընտրել ամենաանմիտ որոշումը։ Ամենօրեայ էր ճարտասանութեան և բառագիտութեան քաղաքականութիւնը՝ որին զօրեղ ձեռնտուութիւն էր անում նամակագրութիւնը՝ որը իւր ամենավատ ձգտումներով բոլորովին համապատասխանում էր մեր մամու-

լին։ Նիկիրը կառավարում էին Կեսարը և Նիկոփորիցէս ներքինին, երկուսն էլ ոչ անընդունակ և գործերում ծերացած. բայց բիւրոկրատիական ամբողջ կազմը անդոր էր այնքան ծանր դրութիւններում։ Մինչդեռ անլուր անհասկացողութեամբ անուշադիր էին Թողնում տէրութեան պաշտպանութեան գործը, մինչդեռ խնայում էին զինուորական և ծովային ծախսերը, Թողնում էին որ ամբոցները ու ճանապարհները քանդուին, բարձրը պաշտօնեաների և զեկավարող մինիստրների արքանեակներին վճարում էին ճշտութեամբ, և ալքունիքի, ինչպէս նաև մայրաքաղաքի զուարճութիւններին անհրաժեշտ միջոցները առ ձեռն էին։ Հապիւ է Բիւզանդիոնում գոյութիւն ունեցել դրանից աւելի ապաշնորհ, աւելի ձեռնէրեցութեամբ խեղճ կառավարութիւն, քան այն որ կազմում էին պաշտօնեաների արիստոկրատիայի զեկավարները։

Ինքը կայսրը Պսելոսի արժանաւոր աշակերտն էր. հէնց իւր ուսուցիչն էր նրա մասին ասում, որ Թողնում էր գործերն ընթանալ ինչպէս կուզեն։ Մինչդեռ արևելքում և արևմուտքում հանգամանքները միշտ աւելի էին սրւում, Միքայելը Պսելոսի հետ պարապում էր ճարտասանութեամբ և փորձում էր

ոտանաւորներ գրել։ Բուլգարիայում պաշտօնեաների ճնշումները նորից ժողովրդին հասցրել էին ապստամբութեան։ Բուլգարական ազգային կուսակցութիւնը, Գէորգ Վոյդէչի (Boïtachos) առաջնորդութեամբ, կամենում էր միանալ ցեղակից սերբերի հետ, որոնց Միքայել Իշխանը (1050-1084) պապից ստացել էր Թագաւորի տիտղոս, բուլգարները խնդրեցին նրա որդի Բոդինին իրենց համար ցար։ Նա հանդիսաւոր կերպով, Պետրոս անունով ցար հրատարակուեց և Դամիանոս Դալասենոսին փառաւոր կերպով յաղթեց՝ որի ժամանակ Յունաց զօրապետը գերի ընկաւ։ Ապա Բոդինը արշաւեց Նիշի դէմ, իւր Սերբիացի Պետրիլ զօրապետը Կաստորիայի դէմ։ Սակայն Յոյները նրա դէմ հանեցին բաւական զօրեղ զօրք, որի մէջ բազմաթիւ էին նորմանական վարձկանները։ Բոդինը յաղթուեց և դերուելով՝ քշուեց Անտիոք, որտեղից նա Վենետկեցոց օգնութեամբ փախաւ իւր հօրմօտ՝ Սկոդրա։ Ապստամբութիւնը ընկճուեց վերջումն էլ տեղի ունեցան սովորական անդրմութիւնները։

Այն խաղաղութեան դաշնադրութիւնը, որ Ռոմանոսը կապել էր Ալփ-Ասլանի հետ, նոր կառավարութիւնը խսկոյն քանդել էր, բայց ոչ մի միջոց չէր ձեռնարկել տէրու-

թիւնը պաշտպանելու, այնպէս որ արևելքը զոհ էր տրուած սելջուկեան բարբարոս աւազակախմբերին։ Ալփ-Ասլանի մահից յետոյ 1072 թ. դահ բարձրացաւ հզօր Մելիք-Շահը (1072-1092), որը Հռովմի դէմ կռիւը յանձնեց իւր ընդունակ Սուլէյման եղբօրորդուն։ Այդ քաղաքագէտ բազմահմուտ մարդը, հասկացաւ արևելքում Յոյներին հասցնել ամենամեծ մահու հարուածը։ Ի զուր էին Ռոմանոսը և Բազիլեոսը օրէնքներով կռիւ մղել կալուածների մեծանալուն դէմ, որը ոչ մի տեղ այնքան զարգացած չէր ինչպէս արևելքում։ Ճորտերը և ստրուկները մշակում էին մեծամեծների կալուածները։ Այն ժամանակ Սուլէյմանը մտցրեց տնտեսական յեղափոխութիւն։ Բոլոր այդպիսի գիւղացիները գլխահարկ վճարելով ազատ հրատարակուեցին և այդպիսով կենսական հարցի լուծումով սերտ միացան Սելջուկների իշխանութեան հետ։ Շատ անգամ մուսուլմանական ստրուկները և ոչ օրթոդոքս քրիստոնեաները առանց այն էլ տէրութեան հետ առանձին համակրութեամբ էլ չէին միացած։

Կառավարութիւնը վերջապէս ստիպուած էր սթափուել իւր անգործունէութիւնից։ Սակայն նոր զօրավար՝ Իսահակ Կոմնենը մեծ պարտութիւն կրեց Կեսարիայի մօտ։ Կեսար

Դուկասը, որը յետոյ ստանձնեց ընդհանուր հրամանատարութիւնը, ամենից առաջ գնաց Ուրսէլի առաջնորդութեամբ խռովութիւն յարուցող Նորմանների դէմ, բայց Սանդարիոսի մօտ յաղթուեց Ուռսելից և գերուեց։ Եւ ահա չեղած բան պատահեց։ Նա որ մինչ այդ տէրութեան կործանիչն էր, շուտով միացաւ նորմանական արկածախնդրի հետ։ Հանդէս եկաւ իբրև գահակալութեան ձգտող և արշաւեց իւր հարազատ եղբօրորդու և մայրաքաղաքի դէմ։ Ցուսահատութեան մէջ կենդրոնական վարչութիւնը դիմեց թաթարներին։ 1074 թ. Սուլէյմանը Մելիք-Շահի համաձայնութեամբ Հռովմայեցոց հետ դաշն կապեց, որով նա ճանաչուեց օրինաւոր տէր արևելքում բոլոր գրաւած նահանգների վրայ։ Դրա փոխարէն Սելջուկները խոստացան զօրեղ օգնական զօրք ուղարկել, և հաստատ մնացին իրենց խոստման։ Նոցա ձիաւորները հալածեցին ապստամբների գընդերը և երկու առաջնորդներին էլ գերեցին։ Դուկասը գնաց վանք։ Ուռսելը փախաւ և սկսեց նոր գնդեր հաւաքել Արմենիակոն թէմում։ Նրա դէմ 1074 թ. ուղարկեցին Ալեքսիոս Կոմնենի որդուն, Իսահակ կայսեր եղբորորդուն։ Նա այդպիսով առաջին անգամ յաջողութեամբ հանդէս է գալիս ընդհանուր

պատմական ասպարիզում. որովհետև յաղթանակելով անհանգիստ ապստամբին կալանաւորած բերեց մայրաքաղաք։ Թէև իրաւ է դեռ թաթարների նեղութիւնները փոքր Ասիայում, շարունակում էին նոցա յարձակումներով և աւարառութիւններով։

Բիւրոկրատիայի իշխանութիւնը կործանման համար հասունացել էր։ Այդ էր տիրող համոզմունքը։ Ազատութիւն կարելի էր միայն զրկից սպասել։ Ուստի 1078 թ. Ասիայում և Եւրոպայում բռնկեցին միաժամանակ երկու ապստամբութիւն։ Նիկեփորոս Բոտանիատեսը, Դիւռամիտոնի հրամանատարը, արշաւեց մինչև մայրաքաղաքի դռները, մինչդեռ Նիկեփորոս Բոտանիատես ինքն իրան ինքնիշխան էր հրատարակել փոքր—Ասիայում՝ նախապէս ստորաչուցիչ զիջումներով, ստանալով Սելջուկների համաձայնութիւնը։ Ժողովրդի և ազնուականութեան խառնութիւնը ստիպեց Միքայելին հրաժարուել. նա դարձաւ Եփեսոսի արքեպիսկոպոս, իսկ Նիկեփորոս Գ Բոտանիատեսը (1078—1081) ամենքի կողմից կայսր ճանաչուեց։ Հակառակ կայսեր հիմնովին յաղթեց Ալէքսիոս Կոմնենը Կալաբրիայի մօտ Թրակիայում, նոյնպէս մեծ եռանդով յաղթեց մի քանի միմեանց յաջորդող կայսերական թեկնածուներին, մինչև

1079 թ. նրա հարազատ անները՝ Նիկեփորոս Մելիսենոսը, որ անչափ հարուստ էր և զիւզական զինուորական ազնուականների մէջ մեծ ազդեցութիւն ունէր, Վրին հակառակ կայսր հրատարակեց։ Այդ մարդիկ միանգամայն զուրկ էին ազգասիրական զգացմունքներից։ Դահի համար այդ նոր թեկնածուն դաշն կապեց Սուլեյմանի հետ, որոշելով կիսել Բոտանիատէսից խլած երկիրները։ Անկասկած Ալէքսիանոսը ոչ այնքան, ինչպէս ինքն էր ասում, ազգակցական քնքոյշ զիտումներից զրդուած, այլ որովհետև նա որոշել էր ի զուր տեղից իւր կեանքը վտանգի չենթարկել անընդունակ կայսեր համար, երբ մերժեց Մելիսենոսի դէմ պատերազմի ելնելու։ Իւր փոխարէն ուղարկած Պրոդովեսափարիոսը Նիկիայի մօտ պարտութիւն կրեց։

Տէրութեան վատ դրութեան ժամանակ Միքայել Թ խաղաղասէր կայսեր գործը չէր կարելի անմիտ համարել, որ խնամիութեամբ բարեկամացել էր Ապուլիայի գօրեղ Ռոբերտ Գիւսկարդի հետ։ Սորա անչափահաս Հեգինէ աղջիկը իւր մի քրոջը հետ եկել էր Կոստանդնուպոլիս լաւ կրթութիւն ստանալու համար և նշանուել էր այն ժամանակուայ Կոնստանդին գահաժառանգի հետ (յետոյ վարդապետ Սուդիոնում)։ Խնամակորոյս մայրը՝ Նիկե-

փորոսը նորմանական իշխանուհիներին փակեց մի վանքի մէջ և դրանով դրգռեց տաքարիւն հերոսին մինչև վայրենի կատաղութիւն։ Երբ սա 1080 գործերից ազատուեց, սաստիկ վճիռ ուղարկեց Բիւզանդիոն որով պահանջում էր նորից վերահաստատել Դուկասին։ Ի զուր անցաւ, երբ ցոյց տալով ճրշմարիտ Միքայէլին, վերցրին նրա անունը կրողի կեղծ դիմակը։ Պառակտումը արդէն անխուսափելի էր։

Ալէքսիոս Կոմնենը, զօրապետներից ամենաընդունակը, մինչև այդ օգնել էր Նիկիփորոս կայսերը, որովհետև լռելեայն յուսացել էր թէ նրանից կորզեցրուի իբրև Կեսար։ Բայց երբ անժառանգ ծերը ընդհակառակը կամեցաւ յաջորդ նշանակել իւր եղբօրորդի Սիւնադենոսին, վաղուց դոյութիւն ունեցող լարուած դրութիւնը բռնկուեց բացարձակ թշնամութեամբ։ Ալէքսիոսը փախաւ դէպի Ցուրուլոն. Դուկասի տան, ինչպէս նաև զինուորական կուսակցութեան կողմնակիցները, ամենից առաջ պատերազմասէր Գէորգ Պալէոլոգոսը խմբուեցին նրա շուրջը։ Նա գնաց մայրաքաղաքի դէմ։ Դրութիւնը խիստ կրիտիքական էր. որովհետև ծեր կայսրը և նրա մինիստրները արդէն որոշել էին հաշտութիւն կապել Մելիսենոսի և թաթարների հետ։

Սակայն մի Գերմանացի վարձկանի մատնութեամբ Ալէքսիոսը 1 Ապրելի 1081 բացեց Քրասինեան դուռը։ Դեռ վարեաղները և մի քանի ուրիշ գնդեր հաւատարիմ էին մնացել կայսեր։ Բայց սա ինքը իւր դատը կորած համարեց։ Ապրելի 2 Ալէքսը օծուեց Սոփիայի եկեղեցում։

Կոմնենը իւր թագը պարտական էր զինուորական ապստամբութեան, և դրա բնորոշ վախճանն էր, ինչպէս 900 տարի առաջ Սեպտիմիոս Սեվերոսի օրով, որ մայրաքաղաքի հետ վարուեցին ինչպէս տիրած քաղաքի հետ։ Դրանով ամենակոպիտ պարզութեամբ հասկացրին մայրաքաղաքի Բիւրոկրատիային, որը տէրութիւնը հասցրել էր կործանման, որ նա դադարել է դոյութիւնունենալուց։ Զինուորականները, ինչպէս հնում նորից գործի գլուխ անցան և կարելի է ասել՝ տէրութեան փրկութեան համար։ Կոմնենները այլ ևս չէին կարող տիեզերքին հրամայողներ լինել։ Արևմուտքը մնաց Նորմանների ձեռին, և աւելի կարևոր արևելքը, որտեղ բարձրացաւ Հոռոմ (Իկոնիայի) տէրութիւնը, Սելջուկների ձեռին, բայց այնու հանդերձ այդ հերոս հարստութիւնը հռովմէական բազմաչարչար ազգի համար պատրաստեց նրա վերջի փայլուն վերջալոյսը և հետևեալ շըր-

ջանի տէրութեան կործանման սոսկալի խաւարի ժամանակները յետագայ սերունդները անձկութեամբ և խորին շնորհակալութեամբ յիշում էին այդ հզօր հարստութիւնը, որ տէրութեան ազատարարները և պահպանողներն էին։

Է.

ԿՈՄՆԵՆՆԵՐԸ ԵՒ ԱՆԳԵԼՆԵՐԸ

(1081—1204)

Մեծ Կոմնենը (1081—1118) կանգնած էր մի սարսափելի ծանր խնդրի առաջ։ Նա իշխան էր, եթէ կարելի է այսպէս ասել միայն ծովափնեայ աւերակների վրայ։ Ասիայում համարեա միայն քաղաքներն էին տէրութեան իրական իշխանութեան տակ։ Հիւսիսի եւրոպական նահանգները անընդհատ պատերազմներից աւերակ էին դարձել, սպառուել էր հարկ վճարելու կարողութիւնը։ Դրա վրայ աւելացաւ Բոսանիատէսի անլուր յիմարութիւնից ծագած Նորմանների վտանգը։ Շշմարիտ հարկաւոր էր հերոսական քաջութիւն չյուսահատուելու համար. և մեծ Ալէքսիոսը ունէր

այդ։ Ամենից առաջ նրա ձեռին էր մայրաքաղաքը, որի պարիսպների օղակի մէջ էր միայն քանիցս սահմանափակուած ծանր ապէտների ժամանակ հռովմէական կայսեր իշխանութեան սահմանը, և որի անմատ դիրքը, ամենափայլուն ապագայից է առաքելանման Կոստանդնի նախագուշակող սուր շրջահայեցողութեան. որ միշտ նորից հնարաւորութիւն էր տուել տէրութիւնը կրկին վերականգնել աւերակներից։ Ալէքսիոսը այն անձն էր, որ այդ դժուար խնդրին նուիրեց իւր երկար աշխատալից և անձնազոհ կեանքը՝ այնպիսի զուտ հռովմէական պարտաճանաչութեամբ որ այնքան հաճելի փայլեցնում է բիւզանդական կայսրների մէջ լաւերին։

Ալէքսիոսը իւր գահը պարտական էր զինուորական Արիստոկրատիային և Դուկասին։ Երկուսն էլ հարկաւոր էր յարատև կապել Կոմնենների հետ։ Հէնց սկզբից դատարկուած պետական գանձարանը չէր կարող թոշակ վճարել. Ալէքսիոսը ցոյց տուեց իւր շնորհակալութիւնը ու գնահատութիւնը դասակարգային ատելանական բազմաթիւ ապստամբները շնորհելով. ինչպէս այսօրուայ իշխանները շքանշաններ են բաշխում։ Արժանաւորներին անուանում էին Սեբաստոս, պրոտո Սեբաստոս, պանհիպերսեբաստոս, Սեբաստոկրատոր և ն. Դեռ պահուած

է պատրիարքական գիւանատան մի գրութիւնը, որ մի անփորձի իբրև նամակագիր սովորցընում է, այդ վեհ գաղանիքները թէ նա ինչ դիմումներ և տիտղոսներ պէտք է գործ դընէ, երբ նա մի գրութիւն է ուղղում մի բարձրաստիճան հոգևորական, կամ աշխարհական աստիճանաւորի։ Ինչ որ մենք սովորաբար անուանում ենք բիւզանդական տիտղոսների և կարգերի սովորութիւն, եթէ ոչ իւր ծագումով, գոնէ իւր զարգացմամբ Կոմնենների և հետևեալ ժամանակների գործ է։

Մելիսենոսը որ ձգտում էր գահի, յարմար դատեց հաշտուել իւր հզօր աներոջ հետ. նա դրա փոխարէն ստացաւ Կեսարի տիտղոս։ Բայց որ գլխաւորն է, հարկաւոր էր այն մեծ պատրաստութեան, որ ձեռնարկել էին Նորմանների հերցոգը և նրա քաջարի Բոհեմունդ որդին, դէմ դնել տէրութեան բոլոր ոյժերի միացմամբ։ Ալէքսի պատերազմներում մեծ դեր է խաղում իբրև հաւատարիմներից հաւատարիմ և այդ պատճառով մեծ կալուածներով և իշխանական պատիւներով արտակարգ շնորհաբաշխուած, Վրացի իշխան Գրիգոր Պակուրիանոսը (Բակուր), արևմուտքի մեծ Դոմեստիկոսը։ Նրա հիմնածն է Ստենիմաքի հարուստ վանքը, որ դեռ այսօր էլ հելլենականութեան կենդրոնն է Փիլիպուպոլսի շրջակայքում։

1081 թ. սկիզբը Բոհեմունդը, յետոյ Ռոբերդ Գիւսկարդը ավ իշան 30,000 մարդով Օրիկոսում (Էպիրոս). ինչպէս երբեմն Կեսարը, ծովի և ցամաքի կողմից պաշարեց Դիւռախիոնը, հելլենական ծովակալ ամրոցը Ադրիատում, որը մի և նոյն ժամանակ երկրի ներսը մտնելու համար Էգնատիայի ճանապարհով առաջին հանգոյցն էր։ Մինչ այդ Ալէքսիոսը ամենածանր զոհաբերութեամբ գնել էր Վենետիկցոց օգնութիւնը։ Ոչ թէ հնուց գէպի տէրութիւնը ունեցած հաւատարմութեան պատճառաւ, որ խելք վաճառականները միայն այն ժամանակ էին հարցնում, երբ իրանց օգուտ էր բերում, այլ իրանց լաւ հաշուած շահի համար նոքա զօրեղ նաւատորմիղով օգնեցին Յունաց տէրութեանը Նորմանների դէմ։ Վենետիկի համար այնքան նշանակութիւն ունեցող թանգ գինը այն նպաստաւոր վաճառականական պայմաններն էին, որոնցով արևելեան տէրութիւնը անտեսապէս և վաճառականապէս ուղիղ այնպէս էր կախում ստանում Վենետիկից, ինչպէս այսօր Տաճկաստանը Անգլիայից։ Այդ չէ կարելի Ալէքսի մեղքը համարել. նրա դրութիւնը յուսահատական էր. նա սարսափած էր օգնութիւն վերցնել, որտեղից

կարողանար և վճարել ամէն մի գին։ Վենետիկեցիք էլ ինչ իրենցից էր կախուած կատարեցին։ Վենետիկեան նաւատորմիղը Դոմենիկո Սելվոի առաջնորդութեամբ միացած յունական հետ՝ ոչնչացրեց Նորմանականը։ Ռոբերտ Գիւիսկարդը, ինչպէս Կեսարը, փախաւ դէպի Փարսալոս։ և Ալէքսը հպարտ իւր զօրեղ 70·000 զօրքի վրայ, որոնց մէջ բաղմաթիւ «Վարեանգներ» կային (Անգելսաքսեր և Դանիացիք) չնայած Պալէոլոգի ընդդիմութեան, առաջարկեց նրան ճակատ 18 Հոկտեմբերի 1081 թ։ Նրա վիճակը այն եղաւ ինչ որ Պոմպէյոսինն էր։

1082 թ. սկզբին Գիւիսկարդը պաշարումով առաւ Դիւրախիոնը. բայց սարսափած լինելով վերադառնալ Իտալիա, պատերազմի շարունակութիւնը թողեց Բոհեմունդին։ Ալէքսիոսը գերմանական կայսեր դրամական օժանդակութիւն էր անում, որպէս զի Նորմանների հերցոգին Իտալիայում զբաղեցնի։ Մինչ այդ Բոհեմունդը հաստատուեց Էպիրոսում. 1083 թ. երկու անգամ յաղթեց Ալէքսիոսի նոր զօրքը, նա դրաւեց Կաստորիան, Մոգլենան, Սկոպիէն և բոլոր մակեդոնական քաղաքները մինչև Վարդար։ Բայց բիւզանդական կաշառքը ապստամբութիւն ծագեցրեց նրա զօրականների մէջ, որոնք

դժգոհ էին այդ երկրում ուր աւար չկար։ Բոհեմունդը դնաց Թեսալիայի դէմ. սակայն ամուր Լարիսան վեց ամիս դէմ դրաւ նրա բոլոր յարձակումներին։ Ալէքսիոսը, խելոքացած առաջի անյաջողութիւններից, բաւականացաւ միայն թեթև յարձակողական կռիւներով, որ մղում էր Նորմանների ասպետների համար կորստաբեր եղանակով Սուլեյմանից ուղարկուած Սելջուկեան 7000 ձիաւոր և նեռաձիգ դնդի օգնութեամբ։ Նորմանները չէին հասկացել դոնէ դժգոհ Սլաւների համակրանքը վայելել։ Մեծ Փոտիոսի սուրերը տերութեան ազատարարը եղաւ. որովհետև մեծաւ մասամբ թունդ օրթոդոքս բոլգարները և գիւղացիները Նորմանների վրայ նայում էին իբրև հերետիկոսների վրայ։ 1084 թ. ամառը Բոհեմունդը սահմանափակուած էր միայն Էպիրոսի ծովափնեայ երկրներում. և շտապեց Սալերնո հօրը յայտնելու իւր անյաջողութիւնը։

1084 թ. ծեր Հերցոգը իւր նաւատորմիղով նորից երևաց Ալբանիայում. բայց Կորիւֆոյի (Korfu-Kerkyra) խզճուկ դրաւումից այն կողմը չանցաւ։ Ծովային ճակատներում պատերազմի բախտը փոփոխւում էր, մինչև 1085 թ. Ցունաց և Վենետիկեցոց միացեալ նաւատորմիղը Կորիւֆոյի և Բուտրինտի մէջ

հիմնովին ջարդեց Նորմաններին։ Վարակիչ հիւանդութիւնները ծանր վնասներ հասցրին Ռոբերտի ցամաքային զօրքին, 17 Յուլիսի 1085 թ. ծեր Հերձոգը ջերմի զոհ դնաց։ Նրա որդիների՝ Բոհեմունդի և Ռոգերի վէճերը Սատրին-Իտալիայի տիրապետութեան մասին, հեշտացրեց Հռովմայեցիներին յետ գրաւել կղզիները և ծովային ափերը։ Հռովմէական տէրութիւնը դարձեալ էլ ազատուեց Փրանսիական աւազակաբարոյ ասպետներից։

Հազիւ էր Ալէքսիոսը Նորմաններից ազատուել, տէրութեան վտանգը նրան կանչեց հիւսիս։ Թրակիայում և Բուլգարիայում, չնայած որ խիստ հալածում էին Պօղիկեանները և Բոգոմիլների հաւատը, բայց տարածուել էր պարզասիրա գիւղացիների և հովիւների մէջ, և մինչև անգամ քաղաքի բնակիչների և ազնուականների մէջ։ արդէն տիեզերական պատրիարքներից մէկն էլ կասկածանքի ենթարկուելով, ստիպուեց հրաժարուել (Կոսմաս Ատտիկոս)։ Արդէն 1078 թ. Կումանների արշաւանքի ժամանակ Լեկաս Պօղիկեանը Տրիադիցայի (sredec, Sofia) շրջակայքում և Դոբրոմիր Բոգոմիլը Մեսեմբրիայում հաւատոյ պատերազմ էին սկսել ընդդէմ «ստատանայից բնակարանների՝ կուռք պաշտողներ»։ Այդ միանգամայն յիշեցնում է Թոմաս Միւնցերի (բո-

զոքականութեան ժամանակ) թափառաշրջիկ խումբը, երբ այդ «կատարեալները» իրենց շուրջն էին հաւաքել 80,000 գիւղացիներ։ Իրաւ է մի կանոնաւոր բիւզանդական զօրք առանց դժուարութեան ցիրուցան արեց Աստուծոյ համար մարանչողներին. բայց երբ 1086 թ. Բոլեարները ընդհանուր գործի համար միացան Դրիւստրայի (Drster) շրջակայքի Կումանների հետ, իսկոյն նոցա հետ միացան բոգոմիլները, յայտնի Տռաւդոս Պօղիկեանի առաջնորդութեամբ, տիրեցին Բելջատովոյ լեռնային բերդին և աւերեցին Թրակիան։ Բակուրիանոսը և Բրանասը 1086 թ. Ջարդ կրեցին, այնպէս որ Դրիւստրան և ամբողջ դանուբեան Բուլգարիան բաժանուեց տէրութիւնից։ 1087 թ. երևաց Յելդու-խանը 80,000 Պեչենեգների և Կումանների հետ։ Նիկոդայոս Մաւրո-Կատակոլոնը մեծ դժուարութեամբ էր կարողանում նոցա առաջն առնել, այնպէս որ 1088 թ. Ալէքսիոսը ինքն անցաւ Հեմուսը. բայց Դրիւստրայի սոսկալի ճակատում այնպէս հիմնական ջարդ կրեց, որ Յոյները չկարողացան պատերազմի դաշտը պահպանել։ Թրակիան առանց արգելքի զոհ էր տրուած բարբարոս հրոսակների ասպատակութեանը։ Կոտորածը և աւարառութիւնը տարածուեց մինչև Մայրաքաղաք։ Բայց ինչ-

պէս երբեմն Սելջուքների դէմ, յետոյ խաչակիրների դէմ, բիւզանդական քաղաքագիտութիւնն և դրամը ցոյց տուեց իւր ծառայութիւնը։ 40,000 Կումաններ անցան Ալէքսիոսի ծառայութեան մէջ և 29 Ապրելի 1091 թ. միացեալ Ցոյներն ու Կումանները Լեբունիոնի արիւնահեղ ճակատում այնպիսի ջարդ տուեցին Պեչենեգներին, որ այդ ազգի ժողովուրդը երկար ժամանակ կատարեալ անվնաս դարձաւ։ Սոցա խղճուկ մնացորդները կայսրը բնակեցրեց Վերին-Մակեդոնիայում Մոգլենայի շուրջը։

Վերջին անգամ ազգութեան վանդ ապառնայ հիւսիսային ժողովուրդներից, երբ 1094 թ. կեղծ Կոնստանդին Դիոգենէսը գահի ձգտելով, Կումաններին անցրեց Դանուբի վրայով։ 48 օր պաշարեցին Ադրիանուպոլիսը. սակայն Տաւրոկոմոնի ճակատը այդ շարժմանը վերջ տուաւ։ Աւելի վատ էր արևելքում։ Համարեա ամբողջ Փոքր Ասիան Թաթարների ձեռին էր։ Աւելի խորամանգութեամբ քան զէնքի ոյժով Ալէքսիոսը առաւ Նիկոմեդիան և Սինոպէն։ Սուլեյմանի փոխարէն այժմ իբրև Հռոմի սուլթան իշխում էր Ղլիճ-Ասլանը (1092-1100) Իկոնիայում, իսկ նրա աներ Ցախասը, երբեմն Ցունաց զօրական, բոյն էր դրել 1090 թ. Փոքր-Ասիայի արևմտեան ափերում և Սպորադեան կղզիների վրայ։ 1992 թ. Զմիւռնիան «Հռովմայեցոց կայսեր» մայրաքաղաքը դարձաւ, ինչպէս նա էր իրան անուանում։ Սակայն Ցունաց արծաթը այդտեղ էլ գործեց, և փեսան իւր անօրը 1093 թ. անվնաս դարձրեց։

Հռովմայեցոց եկեղեցին միշտ ցաւ էր զգացել եկեղեցիների բաժանման պատճառաւ։ Ամբողջ դարեր նա մտածում էր յուսալով՝ նորից միութիւն ստեղծել։ Ուստի ամեն անգամ երբ քաղաքականապէս նեղն էին ընկնում, խորամանգ Ցոյները, հանդէս էին բերում միարարական ծրագրեր։ Անհաւատալի է թէ ինչպիսի նրբամտութեամբ միշտ կրկնում էին նոյն բանը պարզամիտ արևմուտցիներին խաբելու և միշտ գտնում էին հաւատացողներ. թէև նոքա երբէք Փլորենտեանի ժողովից առաջ, երբէք յուրջ կերպով չեն մտածել միանալու մասին։ Միայն խաբեբայական խոստումներ էին քաղաքական օգտաւէտ նպատակների համար։ Ահա այդպէս Միքայէլ Թ կայսրը 1074 թ. իւր թագարթն էր գցել Գրիգոր Է մեծ պապին։ Սակայն այս անգամ Ալէքսիոս կայսեր դիմումը՝ օգնութիւն հասցնելու, պատրաստի հող գտաւ. Քրիստոնեաների յաջողութիւնները Սպանիայում, Սիկիլիայի վերսին ազատուելը անհաւատներից զօրեղ կերպով

բարձրացրել էր քրիստոնեաների զգացմունքը։ Բայց նի է Հերակլի ժամանակներից, թէ ինչպիսի զգացուած անձնուիրութեամբ ազգերի պարզ հաւատը կապուած էր այն տեղերի հետ, որտեղ պատել էր ինքը Տէրը։ Երբ Երուսաղէմում համեմատաբար համբերող Փաղիմիդների հալածումից յետոյ, 1078 թ. սկսեցին իշխել կոպիա և մոլեռանդ Օրտոկիդները, ամբողջ Եւրոպայում, որ ճշմարիտ և խորը հաւատացեալներ էին, համարեցին որ մեր Տիրոջը և Փրկչին դրանով անտանելի նախատինք է հասել։

Ուստի Ուրբան Բ պապի խաչակրական քարոզը շարժել է այն ժամանակուայ մարդկութեան սրտերի ամենանուրբ թելերը և հասարակաց կարծիքի առաջ պապականութիւնը, որ սովոր էր յաղթելու, արտասովոր յաջողութիւն ունեցաւ։ Բայց մինչդեռ իտալական հասարակապետութիւնները՝ Վենետիկը, Ջենովան և Պիզան իսկական չարչիական զգացմունքներով հասկացան այդ հզօր կրօնական շարժումը շահագործել միայն վաճառականական կողմից, Ֆրանսիական[1] և Ֆլանդրիայի ասպետականութեան կրակոտ մարդկանց համար սրտի և համոզման գործ էր և արդա-

[1] Այն ժամանակուայ Նորմանները Ֆրանսիացի էին։

բացի է որ նոցա գործերը կոչւում են՝ gesfa Dei Per Francos (Գործք Աստուծոյ ձեռամբ Ֆռանկաց)։ Նոցա արտասովոր յաղթական գնացքը ոչ ոքի այնպէս չուրախացրեց, ինչպէս արևելքի՝ Յոյներից և Թաթարներից անտանելի տանջանքների ենթարկուած քրիստոնեաներին՝ Հայերին և Ասորիներին։ Եթէ Հայերը կարողացան Կիլիկիայում հաստատուել և պահպանել մի կիսաեւրոպական աւատական իշխանութիւն, որ համարեա երեք դար տևեց, ամենից առաջ արևմտքի ժողովրդական մեծ շարժմանն են պարտական։ Նոցա պատմագիրները, մանաւանդ Մատթէոս Ուռհայեցին և Սամուէլ Անեցին ոգևորուած գովասանքով են խօսում արևմտքի Աստուծոյ համար կռուողների և Երուսաղէմի ազատողների մասին և ամենածանր մեղադրանքներ են բարդում ստախօս և ուխտադրուժ Յոյների Ալէքսիոսի և Մանուէլի վերայ։

Եթէ չենք կամենում անարդար լինել, լաւ կըմբռնենք թէ ինչու Հռովմայեցոց կայսրը մեծ կասկածանքով էր նայում խաչակիր զօրքի մօտենալուն։ Որենց հպարտ և պատերազմներում վարժուած ասպետներով շրջապատուած իշխանները վարձկան առաջնորդներ չէին, որոնց կարելի լինէր բիւզանդական

փոքով ըստ ցանկութեան գործի դնել՝ Եւրոպայում կամ Ասիայում։ Նոցա մէջ էր Բոհեմունդը. Տարենտի Հերցոգը, կայսեր ոխերիմ թշնամին։ Յամենայն դէպս բաւական դժուար աշխատանք էր՝ կարողանալ հաշտվարուել այդ ինքնավստահ և տաքարիւն մեծամեծների հետ։ Սակայն կայսեր խարդախ խաղերը, հին դպրոցի քաղաքագէտի վատահամբաւ արհեստը, բաւական չափով սրա-ցրել են Յոյների և Լատինների ատելութիւնը և Յունաց երկչեղութեան և խարդախութեան համբաւը—Ֆրանկներն էլ չէին գերազանցում արտակարգ աղնուութեամբ—Եւրոպայի հասարակական կարծիք են դարձրել՝ շատ հեռանալով արդարութեան սահմանից, նաև մինչև մեր օրերը։

Այստեղ մենք կյիշենք միայն խաչակրաց արշաւանքների ազդեցութիւնը յունական տէրութեան վրայ։ Ալէքսիոսի բանակցութիւնները սկզբից այն արդիւնքն ունեցան, որ Ֆրանսիական իշխանները խոստացան իրենց Պալեստինա-ասորական տիրապետութիւնները հաշուել իբրև հռովմէական կայսրից ստացած ուստական սեպհականութիւն։ Մանաւանդ կայսեր համար գնահատելի է այն, որ նոցա օգնութեամբ նորից գրաւեց Փոքր-Ասիան։ 1097 թ. Ղլիճ-Ասլանը մեծ պարտութիւն

կրեց խաչակիրներից Նիկիայի մօտ։ Սակայն Ալէքսի խարդախ խաղն էր, որի շնորհիւ Նիկիայի Թաթարները՝ քաղաքը, որ նրա համար այնքան մեծ նշանակութիւն ունէր, նրան յանձնեցին։ Քաղաքը պաշարողների կատաղութիւնը, որոնք այդպիսով զրկուել էին իրենց այնքան նեղութիւնների պտղից, կատարելապէս արդարացի էր, և ոչ մի ընծայ կամ բարեկամութիւն չէր կարող լաւ յարաբերութիւնը վերահաստատել։ Բացի այդ, կայսրը այնքան ատելի էր պարտական շնորհակալութեան, որ 1-ն Յուլիսի 1097 թ. Դորիլլայոնի մեծ յաղթութիւնը օգնել էր Բիւզանդացիներին տիրելու արևմտեան Փոքր-Ասիային։ Արևելահռովմի համար դա բացարձակ շլսուած բախտ էր. որովհետև իւր սեպհական ոյժերով նա երբէք չէր կարողանալու Ասիայում որ և է աչքի ընկնող գործ կատարել։

Արևմտեան Փոքր Ասիան միայն խաչակիր ասպետների պատերազմասէր հերոսական ըղձացմանն էր պարտական, որ երկու դար էլ պահպանեց իւր քաղաքակրթութիւնը և ազատուեց բարբարոսներից Լավոդիկիա, Փիլադելֆիա, Սարդէս, Զմիւռնիա, Եփեսոս. Յունաց պատմութեան ամենափայլուն անունները, ազատուեցին անհաւատների ստրկու-

թիւնից։ Բայց կայսեր յարաբերութիւնը Փըրանկների հետ օրէցօր վատացաւ։ Մինչդեռ սոքա յարձակումով առել էին Անտիոքը և Երուսաղէմը, կայսրը միայն առաջ էր խաղացել արևելեան Փոքր-Ասիայում, արդարացի գանգատւում էին խաչակիրները, որոնք նրան այնքան նշանաւոր ծառայութիւն էին մատուցել, որ նա իրենց համար ոչ մի յայտնի գործ չէ կատարում։ Թէև պէտք է ասած կայսեր աչքում իւր քրիստոնեայ դաշնակիցները նոյնքան վտանգաւոր էին, ինչքան հռոմի թաթարները, և եթէ ինկատի առնուին Ռոբերդ Գիւսկարդի ծրագրերն ու 1204 թ. դէպքերը, դրա համար նրան չէ կարելի մեղադրել։

Աւելի լուրջ կերպարանք ստացան Ալէքսիոսի և Բոհեմունդի միջի տարաձայնութիւնները, որը 1098 թ. հաստատուել էր Անտիոքում։ Հայազգի Փիլարէտ կուսակալի դաւաճանութեամբ, Յոյները դեռ 1085 թ. էին թաթարների ձեռքը դցել արևելքի այդ նշանաւոր մայրաքաղաքը, որ երբեմն դրաւել էին Նիկեփորոս Փոկասի մեծագործ զէնքի ոյժով. հասկանալի է, որ նոքա ամեն միջոց գործ կդնէին նրան նորից տիրելու։ 1099 թ. պատերազմ ծագեց Բոհեմունդի դէմ ծովի և ցամաքի վրայ, որը Բոհեմունդը մղում էր

Կիլիկիայում, իսկ նրա դաշնակիցները՝ Պիզացիք, կողոպտում էին Լիւկոս և Կեփալենիա կղզիները։ 1104 թ. նա գնաց Իտալիա և Պասքալիս Բ պապի օգնութեամբ ժողովեց չափազանց մեծ զօրք։ Բայց փոխանակ նրանով անցնելու արևելք, վերսկսեց իւր հօր ծրագիրը, և խարելով Յունաց զօրքը, մտաւ Վելոնան՝ Էպիրոսում։ Սակայն կատարեալ անյաջողութիւն ունեցաւ Դիւռախիոնի պաշարման ժամանակ։ Ալէքսիոսը, վարպետ դարձած Նորմանների առաջի պատերազմում, խոյս տուեց ճակատ տալուց, այլ մեծ հըմտութեամբ կարողացաւ մանր յարձակումներով թուլացնել թշնամու առանց այն էլ նեղութեան մէջ եղող զօրքը և կաշառներով աղդել նրա շարքերում։ 1108 թ. Բոհեմունդը ստիպուած էր Դեվոլում Deabolis) մի խիստ նուաստեցուցիչ խաղաղութիւն կնքել, հրաժարուելով Լավոդիկէի և Կիլիկիայի պահանջից, և Անտիոքի իւր իշխանութիւնը իբրև Յունական աւատական իրաւունք ճանաչել։ 1111 թ. Բոհեմունդը փառազուրկ մեռաւ Ապուլիայում։ Նրա դաշնակիցները, Պիզացիք, հռովմէացոց տէրութեան հետ վաճառականական դաշն կապեցին, որ Բիւզանդացոց համար էլ մեծ նշանակութիւն ունէր, ոչ միայն նրա համար որ իտալական այդ ծո-

վային հասարակապետութեան մինչ այդ շարունակուող ծովահինային արշաւանքների առաջն առնուեց, այլ որովհետև դոցանից մի մասակից դուրս եկաւ Վենետիկցիների դէմ, որոնք վաճառականական մենավաճառութեամբ չափազանց անտանելի էին դարձել՝ ծանր դների շնորհիւ։

1110—1117 թ. Ալէքսիոսը նորից սարսռուած էր ահեղ պատերազմ մղել Սելջուկների դէմ, որոնք իրենց աւարառութիւնը տարածում էին մինչև Պրոպոնտիս։ Սակայն Փելեմիլիոնի դրաւումից և 1116 թ. Պոլիբոտոսի մօտ փառաւոր յաղթութիւնից յետոյ, Մելիք-Շահ սուլթանը 1117 թ. որոշեց հաստատել Ակրայոնի խաղաղութիւնը։ Փոքր-Ասիայի ծովափնեայ ամբողջ երկիրը և Պափլագոնիայի արևմուտքը՝ Փռիւգիայից մինչև Պիսիդիա և Պամֆիլիա տերութեան համար վերջնականապէս ազատուած էր։

Ներքուստ կայսրը սարսռուած էր աւելի քան օգտակար էր պետութեան շահերին, փայփայել բարձր ազնուականութիւնը, որի միջից ինքն էր դուրս եկել և որը ամեն բան արել էր կայսեր բարձրանալու և պահպանելու համար։ Հին միապետութիւնը փառաւոր կերպով մօտենում էր արևմտեան Եւրոպայի աւատական պետութիւններին, որոնց

պետական կազմը օրինակելի դարձաւ Ռուբենեան հայկական թագաւորութեան համար Կիլիկիայում։ Սակայն չնայած իւր անհանդիստ զինուորական կեանքին, Ալէքսիոսը ժամանակ էր գտնում արդարադատութեան և ոստիկանութեան մասին հոգ տանել և ամենից առաջ փառաւոր կերպով կարգի բերել վերին աստիճան քայքայուած տնտեսութիւնը։ Զարմանալի է նրա սերտ յարաբերութիւնը հոգևորականութեան հետ։ Ալէքսիոսը կրօնապէս խիստ հաւատացեալ եռանդուն իշխան էր. նա ինքը երկար ու բարակ վիճում էր Պօղիկեանների և Բոգոմիլների հետ և ում որ չէր կարողանում համոզել, պատժում էր կրակով։ Լևոն փիլիսոփայի մասամբ հնացած եկեղեցական կարգերը, փոխեց համաձայն ժամանակի պահանջներին։ Սակայն ամեն դէպքում հետևում էր մի քաղաքական նպատակի։ Եթէ ուղիղ առաջնորդէին— և կայսրն ունէր խիստ՝ բայց և հոգևորականութեան օգտակար դիտաւորութիւն—չափազանց ազդեցիկ և հարուստ հոգևորականութիւնը, փրկարար ընդդիմադիր ոյժ էր զինուորական ազնուականութեան դէմ, որ անընկճելի էր և միշտ պատրաստ դահի ձգտելու։

Ծերը կարող էր գոհունակութեամբ նա-

յել իւր աշխատալից կեանքի ստեղծագործութիւնների վրայ։ Կատարեալ անիշխանութիւնից և խորին անկումից նա բարձրացրել էր տէրութիւնը այնպիսի աստիճանի վրայ, որ կարող էր ժառանգական մեծ պետութեան գիրքը, եթէ ոչ հին զօրութեամբ, բայց միշտ պատուաւոր կերպով դեռ երեք սերունդ էլ պահպանել։ Բայց նրան չէր վիճակուած հանգստութիւն ունենալ անգամ մահուան անկողնի մէջ։ Նրա ամուսինը՝ բարեպաշտ Էյրենէն, և նրա սիրելին Աննան, պատմութիւն գրողը, խնդիրներով նեղում էին նրան, որպէս զի Աննայի ամուսնուն՝ Նիկեփորոս Բրիւեննիոս Կեսարին կայսերական գահ բարձրացնէ, փոխանակ վաղուց գահաժառանգ նշանակուած Յովհաննէսին։ Սակայն կամքի տէր ծերը, թէև խիստ նեղուած յօդացաւից, անընկճելի մնաց, և երբ 15-ն օգոստոսի 1118 թ. մեռաւ, Յովհաննէսը հասկացաւ սիրելու ժառանգութիւն մնացած գահին, առանց կարիք զգալու սովորական խստութիւնների և վարդապետացնելու միջոցների դիմելու։

Յովհաննէս Բ Կոմնենը (1118—1143) ընտիր իշխանի կատարելատիպ է։ Նա իւր քաջութիւնով և մեղմութիւնով ոչ միայն իւր հպատակների սրտերը գրաւեց, որոնք

այդ պատճառով նրան անուանում էին բարի Յովհաննէս՝ Կալոյովհաննէս, այլ նաև արևմտեան պատմութիւնները լի են նրա գովքով, որը փորձում էր իւր քաղաքական նրպատակներին հասնել ոչ թէ Յոյների մեծ արդէն սովորական դարձած խորամանկ խաբեբայութեամբ, այլ ուղիղ ճանապարհով։ Նա դրանով իւր ընտանիքի առանձնայատկութիւնից բացառութիւն էր կազմում, և այդ երևում է իւր ազգակիցների բռնած ընթացքից։ Իրաւ է խարդախ կայսրամայրը, շուտով քոչ առաւ, որ շատ խելացի էր նրա կողմից, բայց նրա Աննա քոյրը, որ գործ սիրող և մասամբ երևս առած կին էր, որը պառնութեամբ գանգատւում էր, որ իբրև տղամարդ չէ ծնուել, շարունակեց թակարդներ լարել, թէև նրա ամուսինը բաւական խելացի և հանդարտ մի պարոն, ոչինչ չէր ուզում լսել։ Նրա Իսահակ հօրեղբայրը, որ ամեն անգամ յաղթուած զօրավար էր, իւր որդիների հետ ապրում էր Իկոնիայի արքունիքում։ Ահա այդպիսով թէև հէնց իւր մերձաւորներից ամեն կողմից գոգոռուած, այնու ամենայնիւ Յովհաննէսը իւր արքունիքը ազատ պահեց անզթութիւններից։ այդ բանում նրան շատ էր օգնում նրա երիտասարդութեան ընկեր և մինիստր Աքսուխոսը, որ մի ուղղամիտ,

ազնիւ, արտակարգ խելօք և գործերում օգտակար թաթար էր։

Կոմնենների հարստութիւնը խիստ զանցառութեան էր տուել մի բան, ծովագնացութիւնը, մինչդեռ առաջի դարերում արևելահռովմէական նաւատորմիղը իշխում էր ծովերի վրայ և մակեդոնական հարստութեան վերածնութեան ժամանակ ձեռք էր բերել յարգանք ազդող դիրք։ Իրաւ է, Կիբիւրայոտիկոն թեմը, որտեղից առաջի դարերում դուրս էին եկել ծովային հերոսներ և նաւատաներ, մասամբ ընկել էր Սելջուկների իշխանութեան տակ, մասամբ աւերակ էր դարձած և ամայացած։ Բայց Նգեյեան ծովի կղզիները և ափերը իրենց ընտիր ծովագնաց բնակիչներով կարող էին ամենալաւ նաւատաներ տալ, որով կարելի էր առաջնակարգ ծովային ոյժ ստեղծել։ Որովհետև այդտեղ կառավարութիւնը ոչինչ չէր արել. զգաց խիստ ծանր։

Որովհետև Վենետկեցոց ամբարտաւանութիւնից յունական ազգային զգացմունքը խիստ վիրաւորուած էր, ուստի բոլոր հայրենասէրների սրտերում ամենաուրախ արձագանգ գտան Յովհաննէսի նկատմունքը, երբ բացարձակ կերպով հրաժարուեց հաստատել հպարտ վաճառականների վաճառականական առանձնաշնորհութիւնները, որ տացել էին

նոքա իւր հօրից՝ Նորմանների ադէտի կրիտիքական հանգամանքներում։ Այդ միանգամայն յիշեցնում է Բրիտանիայի ծովային քաղաքականութիւնը Դանիայի հանդէպ, երբ Վենետկեցիք սկիզբը յանդուգն ցոյցեր արին իրենց նաւատորմիղով, յետոյ սկսեցին կողոպտել Յոնիական և Էգէյեան ծովափերը։ Վենետկեցոց Վաճառականներին երկրից դուրս քշելը, իրերի դրութիւնը աւելի էր սրացրել։ Դժբախտաբար Արևելահռովմը չունէր յարգանք ազդող ծովային ոյժ։ Ուստի երբ Դոմենիկո Միքիելի դոժը 1126 թ. մի նոր նաւատորմիղով առաւ Կեփալենիան, Յովհաննէսը դիմեց պապի միջնորդութեանը, եկեղեցական միութեան գրաւիչ միջոցին, չնայած քանիցս կրկնուած խաբեբայութեան փորձը, այս անգամ էլ ունեցաւ իւր ազդեցութիւնը պապի դիւանի վրայ, և բաւական տանելի խաղաղութիւն հաստատուեց. իրաւ է դժբախտ կայսրը ստիպուած էր հանդիսաւոր կերպով ի կորուստ իւր տէրութեանը, նորից հաստատել Վենետկեցոց առանձնաշնորհութիւնները։

Աւելի երջանիկ էր Յովհաննէսը իւր ցամաքային քաղաքականութեան մէջ։ Սելջուկների 1120 և 1121 թ. գրաւեց Մեյանդրոսի և Աստյէլի միջի երկիրները։ Փռիւգական Լաոդիկեան, և Սոզոպոլիսը, յետոյ մի շարք

Պիսիդեան և Պամփիլեան քաղաքներ դրաւեցին։ Ասորիքում և Պալեստինում բնակուած Պուլլանները, որոնք իրենց հայրերի հերոսական ոգին փոխել էին իսկ ասիական խորամանկութեան հետ, սխալ քայլ արին երբ Անտիոքի ժառանգ իշխանուհուն սկիզբը առաջարկեցին Մանուէլ գահաժառանգին և յետոյ ամուսնացրին Ֆրանկական իշխաններից մէկի վրայ։ Եւ երբ Անտիոքի դաշնակից Կիլիկիայի Հայերը կայսեր դէմ պատերազմ սկսեցին, վերջինս սկսեց եռանդով գործել տիրեց Կիլիկիային, և Անտիոքի Ռայմոնդ իշխանին ստիպեց խոնարհել իրան։ Անտիոքացոց ապստամբութիւնը և այն դաշինքը որ Հռոմի թաթարները կնքեցին Սեբաստիայի Դանիշմենդի հետ, կայսեր ստիպեցին դնալ Փոքր Ասիական պատերազմի դաշտը։ Նա յաղթանակելով 1139 թ. հասաւ մինչև Նեկսար (Neokaisareie) և հետևեալ տարին թաթարներին կատարեալապէս ոչնչացրեց։

Մաճառների հետ, որոնք քրիստոնէութիւնը ընդունելուց յետոյ համեմատած իրենց Պեչենեգ և Կուման եղբայրակից ժողովուրդներին քաղաքակրթութեան մէջ մեծ յառաջադիմութիւն էին գործել, Ալէքսիոսի օրերից ի վեր տիրում էին ամենաւաւ յարաբերութիւններ, մինչև անգամ Յովհաննէսի ամուսինը հունգարական իշխանուհի էր։ Սակայն Ալմուս իշխանի բռնակալութիւնը, որ Արևելահռովմի հետ բարեկամացած Կոլոման թագաւորին զրկել էր գահից, և նրա Բելա որդուն կուրացրել էր, որպէս զի իւր որդի Ստեփան Բ-ի համար ապահովեցնէ գահը, պատճառ եղան որ արևելահռովմական կայսրը միջամտեց 1124 թ. անբախտ Բելա իշխանի օգտի համար։ Մաճառները, որ սկիզբը յաղթում էին, յետոյ մեծ պարտութիւն կրեցին կայսրից Խրամի մօտ, Դանուբի վրայ։ Բռանիչովա կամուրջի գլխի նշանաւոր կիրքը 1126 թ. կայացած խաղաղութեամբ մեաց հռովմէացոց ձեռին։

Դեռ առաջ կայսրը կարգին պատժել էր Պեչենեգների աւազակաբարոյ ցեղին։ 1112 թ. անցել էին Դանուբը, բայց Հեմուսի կիրճերը լաւ ամրացած էին դաել։ 1123 թ. գարնանը կայսրը այնպէս կոտորեց նոցա, որ այդ տեղից սկսած Դանուբի երկրի այդ պատուհասի անունը ընդ միշտ ջնջուում է պատմութիւնից։ Կայսեր վերջին ջանքը նուիրուած էր Ասորիքի վերատին տիրապետութեանը։ Նիկեփորի և Զմշկիկի ձեռնարկութիւնները այդ հերոսի օրինակներն էին։ Քանի որ 1142 թ. յաջողութիւնները ոչ մի կերպ չէին համապատասխանում իւր յոյսերին, նա մի մեծ

արշաւանք պատրաստեց։ Եւ մի դժբախտ պատահմունքի շնորհիւ վանդաւոր վիրաւորուեց Կիլիկիան Տաւրոսում խողի որս անելիս։ Հաւատարիմ Աքսուխոսը շտապեց մայրաքաղաք, որպէս զի Մանուէլ դահաժառանգի դահակալութիւնը ապահովի։ Եւ երբ «բարի» Յովհաննէսը իւր արիութեան ծաղկեալ հասակում՝ դեռ միայն 55 տարեկան 8 Ապրելի 1143 թ. կնքեց իւր հերոսական մահկանացուն, նրան յաջորդեց իւր որդի Մանուէլը (1143—1180) առանց ընդդիմութեան հանդիպելու։ Աղնիւ, մտաւորապէս խիստ ընդունակ և մարմնով թէ գեղեցիկ և թէ հրաշալական ոյժով Կոմնենի շառաւիղը ունէր իւր բնաւորութեան մէջ, իրաւ է բոլորովին տարբեր քան իւր հայրը, մի զուտ արևմտեան դիծ։ Մանուէլը ասպետի իդէալ էր համաձայն Ֆրանկեան հայացքի։ Զուտ ասպետական էր նաև այն երևակայական դիծը, որ հակառակ իւր հօր և պապի սառը դատող և իրական քաղաքականութեան, մտածում էր բարձրաթռիչ ծրագիր, ձգտում էր անհասանելի նպատակների, և չնայած բոլոր արտաքին փայլին, քիչ չնպաստեց յետագայ զարհուրելի հատուածներին։ Պապից ժառանգել էր աստուածաբանական երակը։ Նա շարունակ բանակցութեան մէջ էր Հռովմի և

Հայաստանի հետ եկեղեցական միութեան համար։ այդ բոլորի միակ հետևանքը եղաւ բաւական հարուստ վիճաբանական գրականութիւն՝ բաժան դաւանութիւնների զանազան լեզուներով։

Մանուէլի համար բնորոշ է նրա տաճած սէրը դէպի լատինները, որ կապ ունէր արևմտասէր հոդեկան ուղղութեան հետ։ Նրա երկու կանայքն էլ արևմուտքի իշխանուհիներ էին, նաև իւր որդիների համար որոնում էր խնամութիւն հաստատել արևմուտքի հետ։ Նա իւր պահպան զինուորները շարունակ վարձել էր տալիս գերմանական ռոմանական և սլաւոնական ազգերի քաջ և պատերազմասէր ժողովուրդների միջից։ Շատ անգամ վարչական պաշտօններում էլ նշանակում էին հաւատարիմ արևմուտցիներ, որոնց մէջ կաշառակերութիւնը, յափշտակութիւնը այնպէս սովորական չէր ինչպէս Հռովմայեցոց մէջ։ Այն ժամանակուայ պետական ել և մոի արտասովոր ծաղկումով Հռովմայեցոց կայսրը դուցէ պարտական էր այդ անարատ օտարականներին այն չափով, ինչպէս զինական տերութեան պետերը պարտական են Շանխայի Անգղիացի մաքսապետներին։ Վենետիկի և Պիզայի մեծ արտօնութիւններ վայելող վաճառականների վրայ 1155 թ.

դաշնագրութեամբ աւելացան նոր և շուտով յաջող մրցողներ՝ Ջենովացիքը։ Այդ բոլորը հասկանալի է կացուցանում թէ ինչու Ցոյների մէջ սաստիկ զարգացաւ ատելութիւնը դէպի լատինները։

Քանի որ Մանուէլի քաղաքականութիւնը ընթանում էր հօրը արդէն լաւ փորձուած ճանապարհով, բախտը նրան միշտ խնդում էր։ Անտիոքի հպարտ և տաքարիւն Ռայմոնդ իշխանի ոտնձգութիւններին նա այնպիսի վերջնական սահման դրեց, որ արևմտքի իշխանի համար խիստ նուաստեցուցիչ էր։ Կալո Ցովհաննէսի դամբարանի առաջ նա ստիպուեց խոստովանել իրան իբրև Հռովմի կայսեր ամենահպատակ վասալ։ Հռոմի Սելջուկներին քշեց մինչև Իկոնիա։ Նաև երկրորդ խաչակիր արշաւանքի վտանգաւոր դրութեան ժամանակ (1147—1149) նա արտայայտեց բարձր քաղաքագիտական հասկացողութիւն։ Հասկանալի է, որ հռովմէական կայսրը խիստ կասկածանքով էր նայում. ժողովրդական այդ լաւայանման հոսանքի մերձանալուն, որ շարժուել էր արևմտեան հասարակական կարծիքի սարսափելի գոռգոռմամբ Եդեսիայի անկման պատճառով։ Նոցա արշաւանքը Հռովմի արևմտեան թեմերի միջով, որոնք Պեչենեգներից, Կումաններից և նման

ցեղերից կանոնաւոր յաջողականութեամբ ծրնուել էին, ընդհանուր դժբախտութիւն էր, և բոլորովին անարդար էր Փրանսիացիների գանգատը, որոնք հետևեցին միայն 1147 թ. աշնանը։ Ցունաց կառավարութեան և յունական ժողովրդի խնայողութեան և խարեբայութեան մասին. նոյն տարուայ ամառը այնտեղով անցնող Գերմանացիները չափազանց նեղել էին երկիրը։ Կոնրադ Գ թագաւորի հետ դեռ կարելի եղաւ մի կերպ վարուել։ Արդէն երկու պետերը միմեանց հետ խնամէացած էին, որը սակայն արգելք չեղաւ, որ երբ Կոնրադը անցաւ մայրաքաղաքով, որպէս զի ստուեր չձգուի իրենց ասոյնձանին և վեհափառութեանը, խոյս տուին փոխադարձ այցելութիւն անելու։ Բնական է որ թեթև ընդհարումներ չպակասեցին, գերմանական կոպիտ զօրքի և առանձին նրբութիւն չունեցող ընիկների մէջ։ Իսկ ընդհանրապէս Ասիա անցան առանց ակն յայտնի դժուարութիւնների։ Աւելի վատ եղաւ երկրի դրութիւնը Փրանսիացիների հետ։ Նոքա արդէն չափազանց դժգոհ էին Ցոյների խնամքից՝ Թրակիայից անցնելու ժամանակ, իսկ մայրաքաղաքի պարիսպների առաջ մօտ էր բացարձակ դժգոհութիւնը։ Արդէն Փրանսիական գլխաւոր խորհրդարանում մտածում

էին Կոստանդնուպոլիսը յարձակումով առնել։ բայց յունական քաղաքականութիւնը և ճշմարիտ բարեպաշտ Լուդովիկոս Ը թագաւորը, որը Աստուծոյ համար պատերազմելու իսկական նպատակը կրբէք աչքից չէր դցում, արգելք եղաւ այդ անարժան միտումներին։ Մեր նպատակից հեռու է կանգ առնել խաչակիր զօրքի և նրա Դամասկոսի դէմ անյաջող արշաւանքի վրայ, որոնք առանձնացած արշաւելով, առանձնացած էլ ենթարկուեցին Իկոնիայի Սելջուկների հարուածներին և տխուր վախճան ունեցան։ Մանուէլ կայսեր օգուտն այն եղաւ, որ 1149 թ. Թեսալոնիկէում Գերմանացոց թագաւորի հետ ամուր դաշն կապեց Նորմանների դէմ։

Ասորիքի խեղճ Փրանկ իշխանները, աբեւմուտքից օգնութիւն չդտնելով, սկսեցին Մանուէլի հետ, հէնց որ սա իւր հաշիւները, Նորմանների հետ վերջացրեց, յարաբերութեան մէջ մտնել։ Մանաւանդ պատանց էր Երուսաղէմի Բալդուին Գ-ի բարեկամական կապը։ Բայց կայսրը սաիպուած էր Անտիոքի դէմ, որ միշտ վար կառավարող պետութիւն էր, և որտեղ 1153 թ. իշխում էր կոպիտ և զեղխ Ռայմոնդ Շատի Լիոնի իշխանը, 1159 թ, արշաւանքով ցոյց տալ իւր անընկճելի խստութիւնը։ Ռայմոնդը

և նրա հայազգի դաշնակիցները նորից ստիպուած էին յունական գերիշխանութիւնը ճանաչել։ Էյրենէ կայսրուհու մահից յետոյ (Bertha von Sulzbach) Մանուէլը 1161 թ. ամուսնացաւ Անտիոքի Մարիա իշխանուհու վրայ, որ հռչակուած էր իւր գեղեցկութեամբ։ Նուր-էդ-դինին Առաջաւոր-Ասիայի ամենահզօր վեհապետին միջնորդելով Պաղեստինի քրիստոնեաների համար, բաւական նպաստաւոր խաղաղութիւն հաստատեց։ Նաև Բալդուին Գ-ի յաջորդի, Երուսաղէմի Ամալրիկ թագաւորի հետ Մանուէլը ամենալաւ յարաբերութիւն ունէր։ 1169 թ. 200 նաւերից բաղկացած յունական նաւատորմիղը օգնում էր նրա յարձակմանը Դամիետի դէմ, որ անյաջող վախճան ունեցաւ։

Հիւսիսի պայմանները այնքան վտանգաւոր չէին, երբ բարբարոս հրոսակները մասամբ ոչնչացել և մասամբ ընտանիացել էին։ Ցարաբերութիւնները վատացաւ Մաճառների հետ, որովհետև նոքա օգնում էին Սերբիայի և Բոսնիայի պետական նպատակներին, երբ սոքա ձգտում էին ազատուել, թէև այդ կախումը աւելի անուանական էր քան իրական։ Ցոյները տիրեցին նշանաւոր Զիւգմինը և 1115-1154 պատերազմ մղեցին ընդհանրապէս պատուաւոր կերպով։ 1162 թ. Մանուէլը միջամտեց

Արպադիտեան իշխանների անընդհատ դահակալական վէճերին։ որոնք խնամական կապերով միացած էին իւր հետ։ 1165 թ. առան Զիւգժինը և Սերմիոնը, նմանապէս կարճ ժամանակով գրաւեցին մաճառական Դաղմատիան, որ Հերակլի ժամանակներից կորել էր։ Անդրոնիկոս Կոնդրոստեփանոսի 18-ն Յուլիսի 1167 թ. փառաւոր յաղթութիւնը Հունգարներին ստիպեց ընդունել 1168 թ. խաղաղութիւնը, որ Արևելահռոմի համար շատ փառաւոր էր։ Շատ չանցած Բելա Գ-ը (1173-1196), որի դահակալական իրաւունքը պաշտպանում էր Բիւզանդիոնը, կառավարութեան գլուխն անցաւ և նրա ժամանակ Հունգարիան թէ քաղաքականապէս և թէ քաղաքակրթապէս մնաց Բիւզանդիոնից կախուած մի տէրութիւն։

1151 թ. ազատ Սերբերն էլ տուժեցին, քանի որ նոքա միացել էին Հռոմայեցոց ժառանգական թշնամի՝ Նորմանների հետ։ Կայսրը մի յաջող արշաւանքով Պրիմիսլավ թագաւորին դարձրեց արևելահռոմէական վասալ։ Խորամանգ և ճկուն Մեծ Ժուպան Ստեփան Նեմանջայի հետ, որ (1159 թ. սկսած) մեծ Սերբիայի իշխանական տան հիմնադիրն էր, գոնէ լուրջ տարաձայնութիւններ չծագեցին։ Չնայած այդ բոլոր արտաքին փայլին, այդ

յաջողութիւնները յարատևութեան գրաւական չունէին, ինչպէս ցոյց տուեց սլաւական մեծ ապստամբութիւնը՝ հազիւ մի սերունդ յետոյ։

Դլխաւոր վտանգը, ինչպէս կայսեր պապի ժամանակ, տէրութեանը սպառնում էր Նորմանների կողմից, և չէ կարելի ժխտել որ այս անգամ մեծ մեղքը բարդւում էր իր կայսեր՝ Մանուէլի վրայ։ Ռոգեր թագաւորը կամեցել էր իւր որդու համար ամուսնական կապեր հաստատել հռոմէական կայսերական տան հետ։ Սակայն կայսրը մի տեսակ ցնորամիտ և այն ժամանակները միանգամայն աննպատակայարմար բիւզանդական հպարտութեամբ ոչնչացրեց իւր դեսպանի դաշինքը, որ հաստատել էր Պալերմոյում, հրամայեց դժբախտ քաղաքագէտին սպանել, իբր թէ նա կաշառուել է Ռոգերից, և այդպիսով շարժեց նրա չափազանց կատաղութիւնը, որով տէրութեանը անրուժելի վէրք հասցրեց։ Ռոգերը շուտով խաղաղութիւն հաստատեց Ափրիկայի մուսլիմների հետ, և իւր Խրիստոսատուլոս ծովապետը 1147 թ. Բոլինդիզիում նաւատորմիզ հաւաքեց, որի մասին յայտնի չէր։ արդեօք պէտք է խաչակիրներին Պաղեստինա տանեն թէ յարձակուեն բիւզանդական տէրութեան վրայ։ Շուտով նաւեցին

դէպի Կորիւֆօ, որտեղ հարկերի ծանրութեանց սովորական դժգոհութիւնը ապստամբութիւն էր ծաղեցրել, և որտեղ Նորմաններին ընդունեցին գրկաբաց։ Սակայն հարուստ վաճառականական Մոնեմբեղիա քաղաքի դէմ ձեռնարկած փորձը անյաջող վախճան ունեցաւ։ Ցարոյայի և Ատտիկայի աւերումից յետոյ Սիկիլեան նաւատորմիղը նորից անցաւ արևմուտք, որտեղ Ակերմանեան-Էտոլիան ծովակները կողոպտելուց յետոյ Կրիսայում ափ իջաւ, և ուղղակի արշաւեցին Թեբէի վրայ։ Այն ժամանակուայ Թեբէն իւր ապրեշումեայ գործուածներով և ծիրանեայ զգեստներով կայսրութեան ամենահարուստ արդիւնաբերական քաղաքն էր։ Նորմանները կատարելապէս աւերեցին։ Նոքա վերցնում էին ոչ միայն ոսկի, արծաթ և եկեղեցական թանկագին իրեր, այլ իրենց հետ տարան նաև խանութների լիքը ամբարած հարուստ մթերքները։ Ահագին քանակութեամբ ապրեշումի կծիկներ և ներկած կաշիներ տարան նաւերի վրայ։ Ի վերջոյ ստիպուած էին դրժբախտ բնակիչները խոստովանել, որ իրենց ունեցածից ոչինչ չեն ծածկել։ Զնայած դրան՝ բազմաթիւ առաջնակարգ մարդկանց ստիպեցին փրկանք վճարել. ապրեշումեայ գործաւորներից ամենահմուտներին ընտրեցին և ուղարկեցին Սիկիլիա։

Նորմանները Բոյոտիայից արշաւեցին Կորընթի դէմ։ Սիկեփորոս Կալուփէսը հէնց առաջի պահանջին յանձնեց անընկճելի Ակրոկորինթը, այնպէս որ նոյն իսկ Սիկիլացի ծովապետը բացականչեց. Նա կաւում է երկընքի հովանաւորութեան տակ, որը բերդակալին վախկոտ է դարձրել ինչպէս ջահիլ աղջիկ։ Այդ հարուստ արդիւնաբերական քաղաքն էլ ենթարկուեց հիմնական կողոպուտի մինչև անգամ եկեղեցու մասունքներն էլ էին վերցնում, իսկ գերիների մէջ կային բազմաթիւ հմուտ վարպետներ։ Նոքա չէին մոռանալ յարատև գրաւել քաղաքը, այլ որոշել էին միայն կանանաւոր կողոպտել։ Հելլասի և Պելոպոնէսի ծաղկեալ վաճառականութիւնը և հարուստ արդիւնաբերութիւնը դրանով մահացու հարուած ստացան, որից այլ ևս չվերականգնացան։ Երբ նոքա Սիկիլիա վերադարձան, Թեբէի և Կորինթի արհեստաւորներին սոցա ընտանիքներով բնակեցրին Պալերմոյում և պահում էին շատ ազատ, այնպէս որ արդիւնաբերութեան այդ ճիւղը անսպասելի զարգացում ունեցաւ։ Հռովմէական պետութեան մենաշնորհութիւնը, որ մինչև այդ կառավարութիւնից խնամում էր առանձին նախանձով և ամենամեծ զգուշապահութեամբ, ապրեշումեայ փարթամ ըզ-

գեստների և զառ կտորների պատրաստութիւնը, շուտով Նորմանների տէրութեան մէջ մի մրցակից ունեցաւ որ օրէցօր խիստ վտանգաւոր դարձաւ։ Դանուբի վրայ ծագած խռովութիւնները արգելեցին կայսեր Ռոգերից վրէժ առնել։ Բայց Վենետիկցիք երբ արտօնութիւն ստացան առանց մաքսի առևտուր անել Կրետէում և Կիւբրոսում, իրենց նաւատորմիղով օգնեցին կայսեր Կորիւֆեոյի պաշարման ժամանակ։ Զնացած Նորմանների զօրեղ ընդդիմութեանը՝ 1149 թ. ամրոցը անձնատուր եղաւ։

Մանուէլը պատերազմը տեղափոխեց Իտալիա։ Դա միակ ճանապարհն էր ազատուելու նորմանական ծովահէններից, որոնք իրենց աւարառութիւնները հասցնում էին մինչև Կոստանդնուպօլսի դռները։ 1151 թ. ժամանակաւորապէս գրաւեց Անկոնան, որով մեծ յուզում առաջ բերեց իւր հին բարեկամների՝ Վենետիկցոց մէջ։ Երբ 1154 թ. Նորմաններից պարտութիւն կրեց, Մանուէլը բանակցութիւններ սկսեց Պապի և կայսեր հետ. բայց երկուսն էլ շպէտք էին և չէին կարող օգնել նրա ծրագիրներին որպէս զի նա հաստատուի Իտալիայում։ Արևմուտքը ոչինչ չէր կամենում լսել յունական Իտալիայի մասին։ Ապուլիայում հաստատուելու

փորձերն էլ խղճալի վախճան ունեցան, յունական նաւատորմիղը միայն պարտութիւններ էր կրում և Նորմանները սկսեցին անարգել կողոպտել յունական ջրերի մէջ։ Բայց Վիլհելմ Ա. որ 1154 թ. ժառանգեց իւր հօր գահը, Ռոգեր չէր, ուստի վերջապէս 1158 թ. Յոյների համար նպաստաւոր խաղաղութիւն հաստատեցին։

Հօր վիճակը որդուն չէր խրատել։ 1170 թ. ընդհարում տեղի ունեցաւ սաստիկ ուժեղացած Վենետիկի հետ։ Վենետիկցոց ապրանքների գրաւումը և տէրութեան մէջ ապրող Վենետիկցիների գերութիւնը 1171 թ. յուզում և փոթորիկ առաջացրեց ջրանցքների քաղաքում։ 1171 թ. Վիդալէ Միքիէլի Բ դժի անձնական ղեկավարութեամբ Վենետիկեան նաւատորմիղը կործանեց Ցրավը և Ռագուզային էլ ընդունել առաց հասարակապետութեան գերիշխանութիւնը։ Յետոյ նաւատորմիղը մտաւ Էգեյեան ծովը, և Փիոս կղզուց դժը բանակցութիւններ սկսեց կայսեր հետ։ Բայց մի մահաբեր վարակիչ հիւանդութիւն ստիպեց Վենետիկցոց շտապով վերադառնալ։ Դիպուածն ելաւ նոցա փորձը, երբ 1173 թ. գերմանական հրամանատարի. Մայնցի Իսրիստիան արքեպիսկոպոսի հետ միացած փորձեցին Յոյներից առնել Անկոնան, որով-

հետև Լանգոբարդցիք սաստիկ նեղն ընկած քաղաքին օգնութեան հասան։ Բայց երբ 1175 թ. Յունաց թշնամի Էնրիկօ Դոնդոլցի ձեռնտուութեամբ Վենետիկը դաշն կապեց Սիկիլեայի Վիլհելմ Բ-ի հետ, Մանուէլը նահանջեց։ Վենետիկցիք նորից ձեռք բերին իրենց հին առանձնաշնորհութիւնները և պատերազմական ծախքերի համար ստացան մի միլիոն ու կէս դուկատ։

Ամենից շատ Մանուէլը վնասել է ազգութեանը իւր ապագայի համար ունեցած ծրագրերով, որոնցով անուղղայ Բիւզանդացին հետամուտ էր Յուստինիանի աշխարհակալական գաղափարները իրագործելու։ Իւր քաղաքագէտների վրայ պարտք էր դրել յաւարարութիւններ սկսել Իտալիայում՝ Պապի դիւանում, յետոյ հռովմէական կայսեր բոլոր թշնամիների հետ և արևմուտքում մրցքերը պատրաստել։ Սակայն իշխանները առանձին սէր չցոյց տուին նրան։ Դրա փոխարէն 1169 թ. սերտ յարաբերութիւն հաստատեց Լոմբարդիայի քաղաքների հետ։ Վենետիկը յունական փոդ էր ստանում իրրև նպաստ։ 1167 Անկոնան յունական պահապան զօրք մտաւ։ Ամենից առաջ կայսրը փորձեց խելօք և գործունեայ Ալեքսանդր Գ-ին, երբ սա Բարբարուսայի հետ խիստ թշնամացած էր։ գրաւել իւր կողմը խոստանալով արևելքի և արևմուտքի եկեղեցիները միացնել այն պայմանով, եթէ նա իրան արևմուտքի կայսր կօծէ։ Այս անգամ կայսրը իսկապէս այդ կամենում էր լրջօրէն. յունական մի ժողովի վրայ պարտք դրուեց Հոգոյն Սրբոյ բխման մասին այնպիսի մի ձևակերպութիւն ընդունել, որ նման լինէր արևմտեան ուսմանը։ բայց այդ խնդրում օրթոդոքս հոգևորականութիւնը գլխաւորապէս պատրիարքը անընկճելի էր։ Պապն էլ չհամաձայնուեց կայսեր օծումը։ նրա շահը չէր անդառնալի բաժանուել գերմանական ազգութիւնից։ նա մինչև անգամ չէր էլ կարող վստահանալ։ Գործնականապէս ոչնչի չհասան։ կայսրը մի յուսախաբութիւնից միւսի մէջն էր ընկնում։ Ցաւալին այն էր որ նրա այդ լաւատես երազները ազգութեան իրական վնասներ էին հասցնում։ որովհետև դրանով խախտուել էին այն քաղաքական յարաբերութիւնները, որ իրերի բնական ընթացքից ցոյց էր տրուած։ Մանուէլի արիզերական քաղաքականութիւնը բաժանում է առաջ նրա նախորդների հին դաշնակիցների՝ արևմուտքի կայսրների մէջ։ Մինչդեռ երկուսի ընդհանուր թշնամութիւնը Նորմանների դէմ կարծես պէտք է որ այսպէս ասած բնական

անհրաժեշտութեամբ մեծացներ արևելքի և արևմուտքի կայսրներին։ Մանուէլի քաղաքագէտները սարսռած էին ամենամեծ հընազանդութեամբ անօգուտ զիմումներ անել Գերմանիայի թշնամիներին։ Այդ ռոմանտիկական փայփայած գաղափարները զրկեցին տէրութիւնը նրա հին փորձուած կապերից և չկարողացան հաստատել ոչ մի վստահելի դաշինք։ Ինչքան որ շատանում էր տէրութեան թուլութիւնը, այնքան աւելի նա կախում ունէր զօրեղ հարևանների բարեացակամութիւնից։ Դրա փոխարէն կայսեր քաղաքականութիւնը օրէցօր աւելի սանդեց առանձնացած դիրք։ Երբ 1177 թ. Վենետիկի խաղաղութեամբ գերմանական կայսրը հաշտուեց Հռոմի և Լոմբարդիայի քաղաքների հետ, Մանուէլը ծանր կերպով շոշափեց Գերմանիայի զգացմանց փոփոխութիւնը։ Բարբարոսան քաղաքական բարեկամական կապեր հաստատեց նրա իսլամական ժառանգական թշնամիների հետ՝ Հռոմի Ղլիճ-Ասլանի, և Սալահ-էդ-դին մեծ Քուրդի հետ։ Հռոմի հետ հէնց Մանուէլի թագաւորութեան վերջին տարիներն էին յարաբերութիւնները սասսիկ լարուած։ Ղլիճ-Ասլան Բ-ը (1156-1193) սկզբում յարգանք էր մատուցել կայսեր և օգնութեան զօրք ուղարկել, բայց ասպիճանաբար դաշնալուծութեան և երկիւղութեան պատճառով, նա Հռոմի համար դարձել էր ամենավտանգաւոր թշնամին։ 1176 թ. կայսրը մտաւ նրա տէրութիւնը։ Սակայն նրա գլխաւոր զօրքը ծանր արիւնալից պարտութիւն կրեց հարաւային Փռիւգիայում, ոչ շատ հեռու առասպելներից հռչակաւոր Կելլէնէից։ Միւրիոկեփալոն գիւղակի մօտ կայսրը հազիւ կարողացաւ հասնել առաջապահ գնդին, որը անվնաս էր մնացել, ինչպէս նաև վերջապահ գունդը, որը Անդրոնիկոս Կոնդոստեփանոսի հմուտ ղեկավարութեամբ յաջողութեամբ իւր համար ճանապարհ էր բաց արել։ Չնայած դրան՝ Ղլիճ-Ասլանը առաջարկեց բաւական արդար խաղաղութիւն, որը կայսրը ընդունեց, բայց չկատարեց։ Ուստի 1177 թ. Սելջուկները վերսկսեցին պատերազմը։ Սակայն նոցա հիւսիսային զօրաբաժինը, որը Բիւթինիայում պաշարել էր Կլաւդիուպոլիսը, յաղթուեց Մանուէլից, մինչդեռ հարաւային զօրքը, որը Մէանդրոսի հովտով արշաւել էր դէպի Էգէյեան ծովը, կատարեալ պարտութիւն կրեց Յովհաննէս Վատացէսից։ Հետևանքն այն եղաւ որ կայացած խաղաղութիւնը Յոյների համար բաւական նպաստաւոր էր։ Դա անդրադրում կայսեր վերջին պատերազմական գործն էր,

որը իւր հօր նման վարաժամ մեռաւ՝ 24-ն Սեպտեմբերի 1180 թ. դեռ 58 տարեկան հասակում։

Մանուէլի անչափահաս Ալէքսիոս Բ որդու փոխարէն կառավարութիւնը վարում էին կայսրամայր Մարիան և Ալէքսիոս Պրոտոսեբաստոսը, կայսեր եղբօրորդին։ Այդ կառավարութիւնն էլ ընթացաւ սովորական լատինասէր ուղղութեամբ, թէև Ժողովրդի և հոգևորականութեան մէջ վաղուց էր եռում լատինական կատաղի ատելութեան լուռ բարկութիւնը, և մինչև այդ միայն Մանուէլի զօրեղ ձեռքն էր կարողացել հանդարտ պահպանել այդ ազգային հելլենական ազգասիրական բորբոքումները։

Այն ժամանակ ազգային ոգևորուածների գլուխն անցաւ Անդրոնիկոս Կոմնէնը, որի նման հանճարեղ ոչ ոք չկար։ Եթէ այդ խորը հանճարեղ մարդը ունենար բարոյական կըրթութիւն և համեղուած սկզբունքներ, նա կարող էր հռովմէական ազգի վերածնողը դառնալ՝ քաղաքական ինչպէս նաև կրթական ասպարիզում։ Անդրոնիկոսը որ մի բնատուր իշխանական բնաւորութիւն էր, հաւասար մեծ՝ թէ իրրև զօրապետ և թէ իրրև քաղաքագէտ, աստուածաշնորհ ճառախօս, իւր մէջ ուներ համարեա բոլոր այն արժանիքները, որ այն ժամանակուայ ուղղութիւն տուող շրջանների՝ արևելքի և արևմուտքի տուրնիրներով և զուարճութիւններով զրաղուած ազնուական դասակարգի աչքում ամենարարձր և ամենամեծ զարմանք ազդում էին։ Իւր հօրեղբօրորդի Մանուէլի նման արտակարգ գեղեցկութեան և հերկուլենեան ոյժով մի մարդ լինելով. նա ասպետ էր առանց երկիւղի և արատի, սիրահարի անձնուիրութեամբ նուիրուած որսորդութեան, քաջահմուտ մարմնամարզական բոլոր վարժութիւններում, և դեռ երիտասարդական հասակից վարժուել էր մարմնական ամեն մի նեղութիւն կրելու։ Այդպիսի անձը բնականաբար զինուորների և ազնուականների աստուածն էր։ Բայց փառած արմատից չի կարող առողջ ծառ բուսնել։ Նրա հայրը Կալոյովհաննէսի այն ազգատուաձան եղբայրն էր, որը իւր ազգը մատնելով, դլխաւորապէս ապրում էր Հռոմի արքունիքում, և եթէ մահմեդական չէր, բայց անտարբեր էր դէպի եկեղեցին, և ուստի, ինչպէս բնական էր, զուրկ էր բարոյական սկզբունքներից։ Այն ժամանակուայ քարացած օրթոդոքսութիւնը ոչ արևելքում և ոչ էլ արևմուտքում չունէր այլ ևս այն ոյժը, որ կարողանար քրիստոնէական հաւատի հետևողներին բարոյապէս էլ կրթել։

Արևելքում լուրջ և ճշմարիտ բարեպաշտ աշխարհական մարդիկը դիմում էին Բոգոմիլեան աղանդին, արևմուտքում Պատարեանների և Ալբիգենզերի ուսմանը։ Ազնուականութեան և հասարակութեան բարձր դասակարգերի մէջ հաւատի կողմից տիրում էր կատարեալ անտարբերութիւն, որ իւրաքանչիւր հաւատոյ դրական ուսմունք, թէկուզ Թորան լինէր այդ, թէկուզ Աւետարանը կամ Ղուրան, համարում էին միմեանց հաւասար, կամ մինչև անգամ մարդկային խարեբայութիւն, մի աշխարհահայեցողութիւն՝ որի բընական անհրաժեշտ հետևանքն էր կրթութեամբ բարձր կանգնածների համար բոլոր բարոյական սահմանների ոտի տակ տալը և անբարոյական զեղս ապրելը։ Օրինակներ կարող են ծառայել տաճարականները Լատինացոց մէջ և Կոմնենեան իշխանները Յոյների մէջ։ Նոր դարում դրութիւնը բարւոքուեց։ Կաթոլիկների մէջ հոգեկան վերածնութիւն առաջ բերեց իսկապէս մեծ և իսկապէս սուրբ Փրանցիսկոսը իւր աշխարհասասան քարոզով Քրիստոսի աղքատութեան մասին, և Յունաց ազգն էլ անկասկած ԺԳ-րդ դարում անհերքելի է որ ունեցել է իւր վերակենդանութեան շրջանը։ Պետութեան կործանման ազգային սոսկալի դժբախտութիւնը յունական ազնիւ ազգի համար ունեցաւ այնպիսի մաքրեցուցիչ հետևանք, ինչպէս Ռուս ժողովրդի համար ԺԷ դարու սկզբում՝ լեհական գերիշխանութիւնը։ Սակայն մենք ժամանակով դեռ բաւական հեռու ենք այդ հոգեկան յեղաշրջութիւնից։ Մանուէլի մահուան ժամանակ դեռ ևս Յունաց բարձր հասարակութիւնը կատարելապէս շաղախուած էր իւր մեղքերի մէջ, և նրա կատարելատիպն է Անդրոնիկոս Կոմնենը։ Նրա հօրեղբօրորդի Մանուէլը ըստ արժանոյն շատ բարձր էր գնահատում նրա փայլուն արժանիքները, և զարմանալի ներողամտութեամբ, ամենավատ փորձութիւններից յետոյ էլ, իւր շնորհքը չէր պակասեցնում նրանից։ և նորից գործ էր տալիս տերութեան ծառայութեան մէջ։ Բայց այդ կրակոտ անձնաւորութեան արտակարգ փառասիրութիւնը ոչ մի բան ի նկատի չէր առնում և իւր միջոցների ընտրութեան մէջ մինչև անազնուութեան սահմանը՝ անընտրող էր։ Որքև Սերբիայի սահմանի Կուսակալ դաւաճանական յարաբերութեան մէջ մտաւ Մաճառների հետ։ Իբրև Կիլիկիայի զօրապետ անձնական վեհերոտութեամբ այնպէս կոպտաբար ոտի տակ տուեց իւր պարտաւորութիւնը։ որ ստիպուած էր փախչել Ասորիք։ Դամասկոսի և Բաղդատի արքունիքնե-

րին մատնում էր Յունաց պետական գաղտնիքները. Նա Իկոնիայի սուլթանից իրան գործ էր ածել տալիս, ինչպէս Դաւիթը Քրղշատցոց իշխանից։ Նա իւր աւազակային դղեակից յարձակումներ էր գործում Յունաց սահմանային երկրների վրայ, և քրիստոնեայ գերիներին իբրև ստրուկներ տալիս էր իւր հովանաւորողին։ Եւ չնայած դրան, ազնիւ Մանուէլը դարձեալ ներում էր։ Երբ Անդրոնիկոսը, որը անկասկած երդման մասին մոռացում էր ինչպէս երբեմն Լիւզանդրը, հանդիսաւոր կերպով խոստացել էր, միշտ հաւատարիմ լինել նրա և նրա որդի Ալէքսիոսի շահերին, նրան բախշուեց Օյնէոն հարուստ քաղաքը Պափլագոնիայում, իւր հարուստ եկամուտներով։ Բայց Անդրոնիկոսին բարոյապէս կործանել էր իսկապէս նրա անզուսպ զգայական կրքոտութիւնը, որին նա զոհում էր ամեն մի նկատում. և որը նրա լաւ յատկութիւնները թունաւորում էր։

Դրա հետ միասին ունէր անդիմադրելի քաղցրաբարոյութիւն և բոլորովին դիւական հմայութիւն, որին ապահովապէս զոհ էր դնում նա, որին նա թողում էր իւր ցանցի մէջ։ Դրանով կարելի է համեմատել ԺԶ դարու երկու հանճարեղ յանցապարտների հետ, Ալէքսանդր Զ պապի և նրա որդի Ցեզար Բորջիայի հետ։ Մանաւանդ կանայք անձնատուր էին նրան մահու չափ։ Իւր ընտանիքի գեղեցիկ իշխանուհիները, յունական ազնուականութեան կանայքը ինչպէս նաև Ասորու Պաղեստինեան ֆրանսիական իշխանական տների տիկինները նուիրում էին նրան փոփոխակի իրենց շնորհքը։ Ճշմարիտ հաւատարմութիւն և ոգևորուած սէր էր ասում միայն դէպի մէկը՝ Թէոդորան, Երուսաղէմի այրի թագուհին, որ ծագումով Կոմնեն էր, իւր մօտ ազգականը։ Երկուսն էլ պահպանել են իսկապէս զգայուն հաւատարմութիւն, միմեանց հետ կերել են աքսորի հացը և դիմադրել հոգևորականութեան անէծքներին (մօտիկ ազգականութեան պատճառաւ)։ Բայց երկուսն էլ այն ժամանակ այն հասակումն էին, ինչպէս երբեմն Անտոնիոս և Կլէոպատրան, երբ այդպիսի սիրահարական արկածները միայն ծիծաղ են շարժում։ Ահա այդպէս էր այդ զարմանալի մարդը, որին չենք կարող մեր սովորական չափերով չափել։ Միայն մի բան մնում է։ Նրա բարոյական անկայունութիւնը, որ կարող էր տէրութեան օրհնութիւնը լինել, իւր համար անէծք է դառել։

1182 թ. Մայիսի 2-ին ապստամբութիւն ծագեց Մարմարայի՝ ֆրանսիական խնա-

մակալուհու դէմ։ Ժողովրդի և ազնուական-նութեան ազգասէր մասը, ինչպէս նաև օր-թոդոքս հոգևորականութիւնը Անդրոնիկոսին որ արդէն 67 տարեկան էր, հռչակեցին աէրութեան ազատիչ։ Նա երևաց Քաղկեդոնի առաջ որպէս զի երիտասարդ կայսեր ազատի նորա վատ իրատատուներից։ Երբ Լատինները իրենք իրենց կառավարութեան տրամադրութեան տակ դրին, այն ժամանակ Անդրոնիկոս Կոնդոստեփանոս բազմայպիթ հերոսը և նաւատորմիղը անցան Թշնամու կողմը։ Տեղի ունեցաւ ազգային ատելութեան սարսափելի բռնկում։ Յարձակուեցին Լատինների բնակարանների վրայ։ Յոյներին առանձնայատուկ վայրագութեամբ ամենասոսկալի անդթութիւններ գործեցին մարդկանց և կանանց, հոգևորականների և աշխարհականների, նոյն իսկ երեխաների և հիւանդների դէմ։ Աւանդական ընդհանուր պատմութիւնը, աւելի քան արդար կերպով ազդուելով դործի ընթացքից, ըստ այնմ բոլորովին վուդահեռական գործողութիւնների մասին՝ միանգամայն հակառակ արժանիքի դատավճիռ է կարդում։ Սիկիլիան երեկոն ոչնում են իբրև ազատութեան ազնիւ դործ։ Իսկ նման գործողութիւնների համար որ կատարել են Փոքր Ասիացիք Միհրդատ Սեծի ժամանակ, Սեպկյոսը Հնդկաստանում և Յոյները 1186 թ. տալիս են միայն ամենախիստ դատաքննիքներ։ Ինչքան էլ արդարացի է այդ վճիռը, այնու ամենայնիւ պէտք է որոշ չափով արդարութիւն տալ մի ժողովրդի, որ սերնդէ սերունդ ստուել էր ատելութեամբ՝ ծծուելով անխիղճ վաճառականներից դրամատէրներից։ Այդ ազգային կատաղի ատելութիւնը, որին Յոյները այդպիսի զզուելի կերպարանք տուին, պատահաբար չէր թռել նոցա մէջն ընկել, այլ ծագել էր Լատինների բռնած անխիղճ դիրքից։ Վերջինները կրեցին ինչի որ արժանի էին իրենց գործով։

Անդրոնիկոս «ազատարարը» դարձել էր ամենակարող խնամակալ։ 1183 թ. Հոկտեմբերին կայսրակից օծուեց։ 1184 թ. Սեպտեմբերին դժբախտ Ալէքսիոսին խեղդեցին։ Անդրոնիկոսի ամբողջ կառավարութիւնը կալանաւորութիւնների, կուրացումների, սպանութիւնների և յափշտակութիւնների մի զարհուրելի շղթայ է։ Բիւզանդականութեան զզուելի կողմը կարծես թէ այդ ծերի մէջ՝ որ մի և նոյն ժամանակը բարեպաշտ էր ձևանում՝ առաջին հայացքից, կատարելապէս մարմնական էր, բայց իրաւ է միայն առաջին հայեացքից։ Այդ մարդու ուղիղ դատավճիռը առաջին անգամ տուել է Փոլ-

մերայէր պատմաբանը։ Այն ժամանակուայ հռովմէական պետութիւնը մինչև ներքին ուղեղն ու ծուծը այն աստիճան փտած ու նեխած էր, որ միայն հերոսական միջոցների գործածութիւնով հնարաւոր էր նրան փրկել։ Լափող օրէցօր սասաիկ տարածուած արատը աւատականութիւնն էր, որ նկատել էր դեռ Մակեդոնացին։ Ազնուական մեծ հողատիրութիւնը դտել էր ամենալաւ ճանապարհը, ոչնչացնելու գիւղական ազատ դասակարգը, և դրանով այդ հիմնաքարերը, որի վրայ պետութիւնն էր հաստատուած։ Այդ բանում Անդրոնիկոսին կարելի է համեմատել Տիբերիոս կայսեր հետ. նա իւր կատաղութիւնը և արիւնռաշտութիւնը թափում էր համարեա բացարձակապէս միայն կայսերական տուներ, բարձր զինուորական և պաշտօնական ազնուականներին վրայ։ Երբ այդ փտած դասակարգերի մէջից մարդկանց պատժում էին, նոքա միանգամայն արժանի էին։ Եթէ նրան վիճակուած լինէր աւելի երկարատև գործողութիւն, նա կվերականգնէր Ը. դարու կայսրների հին պարզ միապետութիւնը և կոչնչացնէր Արևելահռովմի աւատականութիւնը, ինչպէս Ցեզար Բորջիան՝ եկեղեցական պետութեան բարոնների իշխանութիւնը։ Ուրիշ պայմանների մէջ, և եթէ աւելի լուրջ

վերաբերուէր դէպի իւր միապետական պարտաւորութիւնները։ Անդրոնիկոսը ունէր երկրորդ Բազիլեոս Բուլգարոկտոնոս դառնալու յատկութիւնը։ Անդրոնիկոսի պատմութիւնը գրել են նրա մահացու արիստոկրատ թշնամիները, որոնք այնու ամենայնիւ չէին կարող ուրանալ, որ նրա ներքին կառավարութիւնը օրինակելի էր։ Ժողովրդի հարկերի ծանրութիւնը թեթևացրին, պաշտօնների վաճառումը վերջացրին։ Արքունիքի փարթամ և մեծածախս հանդէսները դադարեցին։ Նա դատաւորներ էր ընտրում բարեխիղճ և անկաշառ մարդիկ։ Նա բարձրացրեց հարկահան և մաքսատան ծառայողների ռոճիկները, որպէս զի դրանով աւելի անմատչելի լինին կաշառակերութեանն։ Դրա հետ չափազանց մարդասէր էր։ Ամենաստորին անձն էլ նրա մօտ ազատ մուտք ունէր։ Թւում էր կարծես թէ կայսրը կամենում էր իւր երիտասարդութեան և իւր գահակալութեան սոսկալի յանձանքները օրինակելի կառավարութեամբ մոռացութեան տալ. նա արդէն ամենալաւ ճանապարհի վրայ էր նահանգներում էլ ժողովրդական դառնալու, երբ ծագեց այն ապստամբութիւնը որ գրգռել էր ասիական ազնուականութիւնը, և որին ուղղութիւն էր տուել Անգելների՝ մեծ ազդեցութիւն ունե-

ցող տունը։ Աւատական ազնուականութիւնը կուռում էր իւր գոյութեան համար։ Նոր կառավարութիւնը նրա կործանումն էր։ Լոպադիոնը, Նիկիան, Պրուզան առնուեցին։ Սակայն առաջինը գրաւեց Ալէքսիոս Բօանասը 1185 թ. ձմեռը, միւս քաղաքները առաւ գարնանը կայսրը, որ անձամբ դուրս էր եկել պատերազմի դաշտ։ Ոտքի կանգնած խռովարարները ըստ արժանոյն խիստ պատիժ կրեցին։ Անդրոնիկոսը ներեց միայն Իսահակ Անգելոսին՝ կարծես իւր կորստեան համար։ Իսահակ Կոմնենը՝ կայսերական տան տակ երկրորդական շառաւիղներից մէկը ապստամբեցրեց Կիպրոսը և ինքն իրան հրատարակեց անկախ ինքնիշխան։ Բայց այդպիսի դահակալութեան ձգտողները Բիւզանդիոնում սովորական էին։ Դրանով նա չէր զլխուել, Վտանգը եկաւ արևմուտքից։

Արդէն Կոստանդնուպօլսի 1182 թ. աբեան բաղանիքից յետոյ իրենց նաւերի վրայ ազատուած Իտալացիները սկսել էին ծովահենական պատերազմ, ծովամնեայ երկիրները մինչև Թեսալոնիկէ կողոպտել էին և եկեղեցիներն ու վանքերը այրել։ Բայց Վենետկի և Պիզայի վաճառականները մնում էին անգործ։ Աւելի եռանդով զինուեց Սիկիլիայի Վիլհելմ Բ-ը (1166—1189)։ 1185 թ. Յու-

նիսին 200 նաւերից բաղկացած արմադան Մարգարիտոնէ ծովապետի և Լեկչէի Տանկրեդ դուքսի ղեկավարութեամբ, որը յետոյ Նորմանների վերջի թագաւորը եղաւ, նաւեց դէպի Դիւռախիոն։ Յունաց Յովհաննէս Բռանաս զօրապետը չվստահացաւ դէմ դնել Նորմանների զօրեղ և պատերազմում վարժ զօրքին։ Դիւռախիոնը յարձակումով առան։ Յետոյ յարձակուող զօրքը բաժանուեց։ Յամաքային զօրքը անարգել առաջ խաղաց մինչև Թեսալոնիկէ։ Օգոստոսի 15-ն նաւատորմիղն երևաց տերութեան երկրորդ գլխաւոր քաղաքի նաւահանգստի առաջ։ Բնակիչների բազմաթիւ օտարազգիները անվստահելի էին։ Օգոստոսի 18-ն գրաֆ Ալեքսինոն յարձակումով առաւ ստորին քաղաքը, և Լատիններին յիշելով 1182 թ. երեկոն, սարսափելի ջրհեղեղ առան Յոյներից։ Արեան այդ հեղեղները, որ հոսեց այն ժամանակուայ ազգային ատելութիւնից, երկու ազգերի միջի պառակտումը հետևեալ ժամանակների համար ևս անբուժելի են դարձրել։

Կոստանդնուպօլսում կատարուեց մրաքների զօրեղ փոփոխութիւն այդ լուրերի ծանր ճնշիչ ապաւորութեան տակ։ Ազնուականները և արտօնեալները որոնց կողոպուտների առաջը կայսրը փակել էր, վաղուց էին

մտածում վրէժխնդրութեան մասին։ Բայց նաև ժողովուրդը, որի սիրելին էր, քանի որ նա յաղթուրդ էր տուել նորա ռամկական սանձարձակ կրքերին, դժգոհ էր, որովհետև կայսրը սահմանափակել էր հասարակական ծախսերը, և սովորութեան համաձայն՝ ինքը իւր ներկայութեամբ չէր պատուում։ Անդրոնիկոսը իւր դէպի մարդիկ ունեցած ատելութեամբ արհամարհել էր սպառնալից վտանգը։ Օդը փոթորիկներով երկուսացած էր և ամենաթեթև առիթից փրթկեց ահեղ փոթորիկը։ Կայսրը խնայել էր Անգելների տան մեծին, երկչոտ և բնաւորութիւնից զուրկ Իսահակին, բոլորովին անվտանգ համարելով։ Յետոյ նրա ոստիկանութեան մինիստրը՝ Հագիոքրիստոփորոսը իւր սեպհական իրաւունքով կամեցաւ նրան կալանաւորել տալ։ Սակայն Իսահակը մահուան օրհասը տեսնելով դիմեց Սոփիա եկեղեցու ապաստանարանին։ Ժողովրդի բոլոր դասակարգերը հաւաքուեցին ի միասին տեղի ունեցան—շլսուած երևոյթ կայսերական ազմկալից ընտրողական ժողովներ։

Իսահակ Անգելոսին կայսր հրատարակեցին 1185 թ. Սեպտեմբերի 15։ Անդրոնիկոսը միայն այդ ժամանակ մայրաքաղաք շտապեց Մելոդիոնի իւր ամարանոցից։ Իւր վարժ սրատեսութեամբ նկատեց որ զուր

կանցնի յոյս տածելը։ Նա համոզուեց, որ ամեն ինչ կորած է, և ցանկացաւ նաւով փախչել Ռուսաստան։ Բայց հակառակ քամիների պատահելով, ընկաւ Իսահակի հալածիչների ձեռքը։ Իսահակը ցոյց տուեց, իւր կատարեալ անպղնուութիւնը, նա սկզբից իւր գլորուած և շղթայուած հակառակորդին՝ արքունիքում մատնեց սրա ոխերիմ թշնամիներին՝ բարձր աղնուականներին, ամենակոպիտ կերպով վիրաւորելու։ Յետոյ բանտի մէջ կտրեցին նրա աջ ձեռքը, դուրս հանեցին աչքը։ Ապա տեղի ունեցաւ սովորական հանդիսաւոր դնացքը մայրաքաղաքի փողոցներով, և դազանացած ամբոխը, որոնց մէջ կանայքը, ինչպէս ֆրանսիական յեղափոխութեան ժամանակ, ամենազզուելի դեր էին կատարում, իրաւունք էր ստացել իւր անասնական անդթութիւնը գործ դնել մինչև յագենալը խեղճ զոհի վրայ։ Ի վերջոյ խեղանդամ, հազիւ շունչ քաշող ծերունուն Հիւպոդրոմում երկու ոտքերից կախ տուին։ Նրանից չկարողացան դուրս հանել յաւի ամենաթեթև ձայն։ Անդադար նա միայն այս խօսքերն էր կրկնում. «Տէր, խղճա ինձի, ինչո՞ւ էք ջախջախում արդէն ջախջախուած եղեգը»։ Անդրոնիկոսի մահով յոյն ազգը ենթակայ դարձաւ այն վիճակին, որին արժանի էր դառնալ։

Իսահակ Անգելոսը (1185—1195), մարմնացեալ չարախիղճը, բազմեց Կեսարների փառաց գահի վրայ։ Ամենից առաջ նա ստիպուած էր դէմ դնել Նորմանների փառագին, որ ծագել էր յունական ազգային զգացումների զոհաբերման պատճառով։ Բայց երևաց որ այդ փառագը աւելի փոքր էր, քան ենթադրել էին։ Զեխ կանքը և խաղողի անչափ գործածութիւնը Նորմանների մէջ տարածեցին չարագուշակ հիւանդութիւններ, նուազացնելով նոցա շարքերը։ Դրա վրայ աւելացաւ նոցա հաղորդութիւնը և անհոգութիւնը, որ ծառայելու էր ի վնաս՝ շարունակ յաղթելու սովորածներին։ Իսահակը այնքան խելօք էր, որ Ցունաց ամենալաւ զօրապետին՝ Ալէքսիոս Բրանասին կարգեց պաշտպանողական զօրքի հրամանատար։ Մոգիւնոպոլսի մօտ յաջող ընդհարումից յետոյ 1185 թ. Նոյեմբերին 5-ն տարան Դեմետրիցայի (Demetrica) արիւնալից յաղթութիւնը, որի ժամանակ նրա ձեռքն ընկան Նորմանների առաջնորդները 4000 մարդով։ Մնացորդը սարսափահար փախաւ Թեսալոնիկէ, այնտեղից Դիւռախիոն կամ Նաւարտորմի վրայ։ 1186 թ. Նորմանները մնացին սահմանափակուած Դիւռախիոնում և յոնիական կղզիներում։ Բայց Դիւռախիոնն էլ և 1191 թ. մինչև անգամ

Կորիւֆոն գրաւեցին Ցոյները։ Միայն Կեփալէնիան և Զակիւնթոսը իրրև սիկիլական սեպհականութիւններ մնացին Մարգարիտոնէ ծովապետի իշխանութեան տակ։ Այդ էր միայն խղճուկ մնացորդը այնքան մեծ յոյսերով սկսած ձեռնարկութիւնից։

Իսահակի իշխանութեան բնական հետևողութիւնն էր, որ այնքան էլ նրա մեղքը չպէտք է համարել, պետական և տնտեսական վարչութեան մէջ կատարեալ յեղաշրջութիւն։ Անդրոնիկոսի այնքան փրկարար կարգադրութիւնները ընդմիշտ ոչնչացրին։ Փողի եկամուտները նորից մանում էին աղնուականութեան և գլխաւոր պաշտօնեաների գրպանները։ Իսահակը սիրում էր փառաւոր արքունիք և աղմկալից հանդիսաւոր տօներ։ Այդ էլ էր ահագին գումարներ կլանում։ Հունգարների հետ, որոնք 1183 թ. Անդրոնիկոսի ժամանակ գրաւել էին յունական Դալմատիան, Իսահակը խաղաղութիւն հաստատեց և ամուսնացաւ թագաւորի աղջիկ Մարգարիտի վրայ, որը հազիւ տաս տարեկան էր։ Այդ բարձր ազգեր բախտաւորացնող դէպքի պատճառով, բոլոր նահանգներից արտակարգ հարկեր հաւաքեցին։ Մանաւանդ առանձնապէս խիստ վարուեցին կայսերական հարկաժողովները Անխիալոսի և Հեմուսի շրջակայ-

քում Բոլգարների և Վլախների հետ։ Ժողովուրդը ոտքի կանգնեց վայրենի կատաղութեամբ։ Երկու ազնիւ բոլեարներ, որոնք, ինչպէս սովորական է յեղափոխութեան հերոսների մօտ, հոչակում էին իրենց ծագումը. հին ազգային թագաւորներից, Պետեր և Յովհաննէս Ասէնը անցան ապստամբութեան գլուխը։ Երբ նոցա պահանջները Բիւզանդիոնում կոպիտ արհամարհանքի ենթարկուեցին, նոքա ժողովուրդը հաւաքեցին Դրնովոյի ս. Դեմետրիոսի եկեղեցում։ Մարգարէական վարդապետներ գուշակեցին որ սուրբը թողել է Նորմաններից պղծուած թեսալոնիկէն և այժմ Բուլգարներին կանչում է փրկութիւն։ Մեծ ոգևորութեամբ Կալոպետրոսին օծեցին Բուլգարիայի և Յունաստանի ցար, իսկ Բարսելին էլ անուանեցին Տրնովոյի անկախ եկեղեցու արքեպիսկոպոս։ Դատակը իսկոյն նոցա դէմ պատերազմ դուրս եկաւ և խռովարարների խումբը 1186 թ. ցիրուցան արեց. բայց այդ ժամանակ Ասէնը միացաւ Կումանների հետ։ Յետոյ էլ Յովհաննէս Սեբաստոկրատորը Բուլգարների դէմ յաղթող հանդիսացաւ։ Բնականաբար կասկածոտ կառավարութիւնը նրան յետ կանչեց, և նրա յաջորդ Կանդակուզենոսը հպարտ անհոգութիւնից յաղթուեց Բուլգարներից. նրա զօրքը

ցիրուցան եղաւ։ Բռանասը, որին պատերազմուղարկեցին, ինքն իրան հակաթոռ կայսր հրատարակեց Ադրիանապօլսում և գլխատուեց։

Հետևեալ տարիների պատերազմներում Բուլգարները դիմացան։ Կումանների հետ միացած, նոքա թալանում էին մինչև Ադրիանուպոլիս և Մակեդոնիան։ երկար ժամանակ ճնշուած ժողովրդի դառնութիւնը արտայայտւում էր սոսկալի անգթութիւններով. կոտորելու նոյն ախորժակն ունէին նոցա դաշնակից Կումանները։ Ասենեանների ձեռքով այդ երկիրների Յոյները հոգի երեսից ջնջուեցին և սահմանափակուեցին ծովափներում և մի քանի կղզիացած դիրքերում, ինչպէս այսօր է։ Ոչ թէ խաչակիրները այլ Սելջուկները Ասիայում, Բուլգարները և Վլախները Եւրոպայում ընդմիշտ անհնար են դարձրել յունական ազգի մեծ պետութեան վերակենդանութիւնը։ Դանուբի և Հեմուսի մէջ ստեղծուել էր արդէն անկախ Բուլգարիա. Զմրշկեկի և Բազիլեյոսի գործը ոչնչացել էր։ Տէրութեան կազմալուծութեան գործը սկսուել էր։

Յոյների ճշմարիտ բախտն էր, որ յաջողեցին նոցա թագուհուն գերի վերցնել։ Դրանով մարդասպան փոքր կռիւները դոնէ մի

առժամանակ 1188 թ. զինադադարով ընդ-
հատուեց։

Ինչքան էլ ողորմելի էր Իսահակը նա
անարդար կերպով է տուժել իւր նախորդների
մեղքերի փոխարէն, թէ Նորմանների պատե-
րազմում և թէ խաչակրաց երրորդ արշա-
ւանքի ժամանակ։ Մանուել կայսեր ձգտումը՝
ստեղծել մեծ պետութիւն, որով նա տոհերա-
ների հետևից էր վազում, քանդել էր արևա-
մուտքի կայսեր այնքան կարևոր նշանակու-
թիւն ունեցող բարեկամական կապերը։ Ռու-
տի հեշտ հասկանալի էր, երբ Երուսաղէմի
անկման սարսափելի լուրը (Յուլիս 1187)
միանգամ ևս ամբողջ Եւրոպան ոգևորեց խա-
չակիր արշաւանք վերակենդանացնելու։ Հռովմայեցոց
կայսրը երիչոտ կասկածանքով էր նայում իւր
գերմանական եղբայր Փրիդրիխ Բարբարուսա
կայսեր մօտենալու վրայ։ Մինչդեռ գերմա-
նական կայսրը ուղղափառ դիտաւորութեամբ
1188 թ. Նիւրնբերգում բանակցութեան մէջ
էր մտել Յունաց դեսպանի հետ երկրից անց-
նելու համար և առաջուց ուղարկել էր մի
փառաւոր դեսպանութիւն։ Բայց բիւզանդա-
կան կայսրը իւր անսահման վախկոտութեամբ
դիմեց ամենայիմար գործողութիւններին։ Երբ
80,000 մարդկանցից բաղկացած գերմանական
զինաւոր դնդերը մօտեցան նրա տերութեան

նը, Իսահակը դաշն կապեց Սալահ-էդ-դինի
խաչակիրների օգնելիք թշնամու հետ ընդ-
դէմ խաչակիրների և այնքան սարսափեցաւ,
որ թոյլ տուեց մուսուլմաններին մայրաքա-
ղաքում մզկիթ շինել։[1] Բացի այդ նրա դիտ-
ւանը անզօր հպարտութեամբ վիրաւորեց
պատերազմի հպարտ հերոսին մանկամիտ տիտ-
պանելով կոչելով՝ «Մեծ իշխան Գերմանիա-
յի»։ 1189 թ. Օգոստոսի 26-ն Փրիդրիխը
հասաւ Փիլիպուպոլիս։ բայց նա ատելութեան
քայքայիչ վիճակի մասին մոնրամաս տե-
ղեկութիւններ քաղեց այդտեղ բնակուող հայ
վաճառականներից։ Յոյները վարում էին չա-
փազանց թշնամաբար և անտանելիօրէն ու
լեռներում յարձակում էին խաչակիր զօրքի
առանձնացած գնդերի վրայ։ Դրա փոխարէն
Սերբիայի Ստեփան Նեմանեան իշխանը հիւ-
րասիրութեամբ ողջունեց Փրիդրիխին։

---

1. Հարկաւոր չէ այստեղ Յունաց եկեղեցու
մասին գեղեցիկ ճառեր անել։ Այն ժամանակուայ Յոյների
հաւ արեւմուտքցիների ընդհանուր կարծիքով այդ իսկոյն հա-
մարւում էր դաւանանութիւն Աստուծոյ դէմ։ Այդ գործը
յիշատակելու է միայն իբրեւ այն խիզացնոր ատելութեան
առաջի արտայայտութիւն, որ հետեւեալ շրջանի Յոյներին
ասել էր տալիս, թէ աւելի շատ է ընդունել թուրքերի հա-
ւատը քան լատինների՝ եւ այդ թոյնը՝ «եւ յորդոյ»—
filioque-ի պատճառով։

շում, և բուլգարների իշխանները նրան առաջարկեցին իրենց դաշինքը և օգնութիւնը 40,000 կումանական և բուլգարական զօրքով եթէ կուզենայ «Ցարիգրադը» առնել։ Բայց կայսրը, հաւատարիմ իւր ուխտին, չկամեցաւ մի քրիստոնեայ պետութեան կործանումով իւր իսկական նպատակը աչքից գցել։ Նրա հաստատակամ դիրքը այնպէս ազդեց յունական թուլամտութի վրայ, որ սա որոշեց համաձայն դաշինքի անարգել թողնել նրա զօրքին անցնել Ասիա։ Ասիական հողի վրայ էլ Ցոյները շարունակեցին իրենց խարդախութիւնները։ Բայց և այնպէս Գերմանացիները նոցա համար մեծ ծառայութիւն մատուցին։ Սելջուկները, որ Թրակեզիոն թեմի յարատև պատուհասներն էին։ Իկոնիայի առաջ հիմնովին ջարդ կրեցին, և նոցա քաղաքն էլ յարձակումով առնուեց։ Սելջուկների իշխանութեան թուլանալը Ցոյների օգուտն էր։ Բայց Իսահակը Ալէքսիոս չէր, որպէս զի այդ յաջող փոփոխութիւնից բոլոր ոյժով հարկաւոր օգուտն ստանար։

Ընդհակառակը՝ կայսրը իտալական հասարակապետութիւնների հանդէպ, այնպիսի խելացի քաղաքականութիւն բռնեց, որ համապատասխան էր աէրութեան վատ դրութեանը։ Որովհետև Նորմանները միացել էին

Կիպրոսի հետ և 1186 թ. յաղթել էին յունական նաւատորմիղը, կայսերական զիւանը փորձեց 1182 թ. յիշատակը մոռացնել տալ և 1187 թ. կանոնաւոր դաշինք հաստատեց Վենետիկի հետ, վերահաստատելով և ընդլայնելով նոցա հին արտօնութիւնները, նա հաստատեց նաև 1192 թ. Պիզացոց և 1193 թ. Ջենովացոց հին իրաւունքները։

Բուլգարների դէմ Իսահակը 1190 թ. Բերոյէայի մօտ ծանր պարտութիւն կրեց. Վարնան, Անխիալոսը, Ծիշը և Տրիպոլիցան նոցա ձեռ գնացին։ Դրա փոխարէն նա կարողացաւ յաղթել հպարտ Սերբին 1193 թ. Նիմանեայի մօտ Մոռավայի վրայ։ Բայց միացեալ Բուլգարները, Կումանները և Վլախները նրան զգալի հարուածներ տուին 1194 թ. Արկադիուպոլսի մօտ։

Դրա վրայ աւելացաւ աէրութեան սպառնացող վտանգը Գերմանացոց կայսր Հենրիկոս Զ-ից, որ կտրուկ եղանակով արտայայտեց իւր դժգոհութիւնը բիւզանդական քաղաքականութեան մասին Մանուէլից սկսած և իբրև Նորմանների իշխանների յաջորդ, պահանջեց իրան տալ Դիւռախիոնը և Թեսալոնիկէն։ Իսահակը պատրաստութեան վրայ էր Բուլգարների դէմ արշաւելու, երբ 1195 թ. Ապրելի 1-ն գահընկէց եղաւ իւր եղբայր Ալէք-

սիոս Գ-ից (1195-1203) և կուրացաւ։ Փոփոխութեանը առաւելութիւններ չունէր։

Իրաւ է տէրութիւնը 1193 թ. Սալահէդ-դինի մահով ազատուեց իւր մի սարսափելի թշնամուց. բայց գերմանական Հէյնրիկոս Զ կայսեր բռնած դիրքը աւելի վտանգաւոր էր։ Ալէքսիոսը յիմարաբար Վենետիկեցոց էլ էր իրենից հեռացրել։ Երբ 1196 թ. հրաժարուեց հաստատել նոցա առանձնաշնորհութիւնները։ Եւ այդ նրանով էր հակաքաղաքական, որ նա միայն նոցա օգնութեամբն էր կարող դիմադրել գերմա-նորմանական մեծ ոյժին. բացի այդ 1193 թ. գոժ էր հաստատուել ծեր Էնրիկո Դանդոլոն, որ առաջնակարգ քաղաքագէտ էր, բայց առանձին համակրանք չունէր դէպի Բիւզանդիոնը, և նրան հարկաւոր չէր գոգռել։ Այդպիսով արևելեան հռովմէական դիւանը նորից բոլորովին առանձնացած էր, երբ 1196 թ. աշնանը եկան Հէյնրիկոսի դեսպանները և սարսափահար կայսեր ընդունել տուին ամենանուաստացուցիչ պահանջներ։ Նա ստիպուած էր, որպէս զի մեծ հողեր տուած չլինի, հարկ վճարել, միայն թէ առաջուց 5000 ոսկու պահանջը իջեցրին 1500-ի։ Սակայն Հէյնրիկոսի մահը 1197 թ. ի մեծ ցնծութիւն հռովմէական ազգի՝ նոցա ազատեց «Ալլեմանների հարկից»։

Ալէքսիոսի կառավարութիւնը, որը հրապարտութեամբ իրան վերակոչել էր Կոմնէն, աւելի լաւ չէր քան նրա եղբայր Իսահակինը։ Եթէ Սորիփնոս ծովապետը ամուրգի էր հանում հնացած նաւեր և անգործածելի իրեղէններ, այսքան էլ վատ չէր. ինչպէս Նիկետաս պատմագիրն է կամենում մեզ հաւատացնել։ Սակայն զուտ բիւզանդական յատկութիւն էր, որ ստացած դրամը գործ էր դրուում ոչ թէ նորերը գնելու համար, այլ մտնում էր այդ բարձր պաշտօնեայի գրպանը։ Սև ծովի ծովահինութեանը կայսրը և ալքունիքը մասնակցում էին իրրև դաղտնի աշխատակիցներ։ Թէև Հռոմի սուլթանի պահանջի հանդէպ ստիպուած էին նրա հպատակների վնասը հատուցանել։

Կայսրը չէր կարող բուլդարների հետ խաղաղութիւն հաստատել նոցա անամոթ պայմանների պատճառով։ Սերէի մօտ նոքա յաղթեցին մի յունական զօրք։ Այդ ժամանակ սարսափելի Յովհաննէս Ասեն Ա-ը 1196 թ. սպանուեց Տրնովոյի պալատում իւր հաւատարիմներից մէկի՝ Իվանկոյի Հելենա թագուհու քրոջ սիրականի ձեռքով։ Նա փախաւ բիւզանդացոց մօտ։ Իսկ Կալոպետրոսի (մեռաւ 1197) կարճատև կառավարութիւնից յետոյ, յաջորդեց Յունաց անհաշտ թշնամի

Կալոջանը (1197—1207), որը իւր խորամանդութեամբ, անզթութեամբ և անողորմ խստութեամբ՝ միացած քաղաքական մեծ խելքի հետ, Յոյների համար այնպէս սարսափելի դարձաւ, ինչպէս երբեմն Բասիլիոս Բ-ը Բուլգարների համար էր։ Մակեդոնիայում էլ Բուլգարները ոտքի կանգնեցին։ Ալէքսիոսը չկարողացաւ ընկճել Դոբրոմիր Ստրէզ բոլեարին. նա նրան կնութեան տուաւ իւր ազգականներից մէկին։ Իվանկոն, որը իբրև Յոյն կոչւում էր Ալէքսիոս, թէև Բուլգարներին յաղթեց Փիլիպուպոլսի մօտ, դաւաճանեց Յոյներին էլ. ինչպէս երբեմն իւր հայրենակիցներին և կարողացան միայն 1200 թ. նրան կալանաւորել, երբ նա կողոպտելով հասել էր մինչև Էգեյեան ծովը։ Վերջապէս 1201 թ. երբ կայսեր եղբօրորդի Կամիցէսը ևս ապըստամբուեց, Յոյները խաղաղութիւն հաստատեցին Բուլգարների հետ, որը վերջիններիս համար խիստ շահաւէտ էր, որով նոքա պահպանեցին իրենց բոլոր տիրապետութիւնները Բելգրադից մինչև Սև ծովը և Վարդարը։ Այդ գործը Կալոջանի նշանաւոր քայլերիցն էր որ Հռովմի հետ հաստատեց երկարատև բանակցութիւններից յետոյ միութիւն, որը սակայն լուրջ չէր։ Իննոկենտ Գ-ի կարդինալ Լէօ դեսպանը Բարսեղին օծեց Բուլգարիայի

արքեպիսկոպոս, իսկ մետրապոլիտ Պալիէնի և եպիսկոպոսների համար—բոլորն էլ բուլգար ցեղից քահանաներ էին—թագեր բերեց. 1204 թ. Նոյեմբերի 8-ն Կալոջանին հանդիսաւոր կերպով օծեց կարդինալը։

Մինչդեռ այդպիսով իրերի դրութիւնը Եւրոպայում Հռովմայեցիների համար անյաջող ընթացք ստացան, Ասիայում էլ նոքա ստիպուած էին շարունակ կռուելու Սելջուկների և ապստամբ նահանգների դէմ։ Յունաց հպատակները դրաւուելով Քայ քոռոսուլթանի առաջարկած նպաստաւոր պայմաններով, մեծ թւով գաղթում էին նրա երկիրը։ Բնական է այդ ոլորմելիները դառն զգում էին որ խաբուած են և աւելի ճնշման տակ ստանում էին իրենց դաւաճանութեան արժանի վարձը։

Ոտալական վաճառականների հպարտութիւնը անտանելի էր դարձել։ Դաֆնոս Ջենովացին, մեծ ծովապետից դրամական տուգանքի ենթարկուելով, ծովահէն դարձաւ և կողոպտում էր անպաշտպան կղզիները և ծովափերը։ Նոյնքան վատահամբաւ Ջիովանի Ստրիոնէն Կալաբրիայից, ընդունուեց կայսերական ծառայութեան մէջ իբրև փոխ ծովապետ, և սա միայն Պիզացիների օգնութեամբ 1198 թ. կարողացաւ անվնաս դարձնել Գա-

ֆոռին։ Սակայն նրա փեսա Վեստրանն շարունակեց ծովահինական կռիւը, և երբ այդ պատճառով յունական կառավարութիւնը ճընշիչ միջոցներ դործ դրեց Ջենովացոց դէմ, սոքա սկսեցին երկարատև բանակցութիւններ և վերջ ի վերջոյ տէրութիւնը ստիպուած եղաւ ՀԷանները տալ։ Նրբ կայսրը Պիզացիներին գերապատուութիւն տուեց, դրանով կատաղացրեց զօրեղ Վենետիկեցոց։ Կորստաբեր էր, որ կայսրը չհասկացաւ լաւ յարաբերութիւն պահպանել հզօր Դանդոլոյի հետ։ Տէրութեան կազմալուծութիւնը մեծ քայլեր էր անում։ Ջանազան նահանգների փառասէր կուսակիցները փորձում էին հաստատուել իրրև անկախ բռնակալներ. նոցա մէջ ամենայայտնին է Լեւոն Սգուրոսը, Նաւպլիոնի ապստամբ, որը 1202 թ. դրաւեց Արգոսը, շուտով նաև Կորինթը։ 1203 թ. նա արշաւեց Աթէնքի դէմ. սակայն Միքայէլ Ակոմինատոս մետրապոլիտի հերոսական պաշտպանութիւնը ազատեց Ակրոպոլիսը (միջնաբերդը)։ Ընդհակառակը Թեբէն իսկոյն անձնատուր եղաւ։ Սակայն Թեսմոպիւլէի մօտ յաղթուեց Թեսալոնիկէի նոր թագաւորի՝ Բոնիֆացիոֆոն Մոնֆերատի պատերազմներում վարժուած ասպետներից։ Նման կիսանկախ դրութիւն ունէր. «իրրև Խալդիայի հերձոգներ» Գաբե-

բաս հայկական տունը, որ ծագում էին Տարօնի հին իշխաններից։ Մեծամեծ աւատական և սեպհական կալուածներ ունէին Էպիրոսում և Իտալիայում Կանտակուզինները, Բռանները, Մելիսոնները ևն։ Մի խօսքով տէրութիւնը աւելի էր աւատական իշխանութեան կերպարանք ստացել, որի կնիքը վերջնականապէս զարկեց Ֆրանկների տիրապետութիւնը։

Տէրութեան վախճանը անդադար մօտենում էր։ Փիլիպ Շվաբացու, գահաղուրկ Իսահակի Էյրենէ աղջկայ ամուսնու ձեռքերը առժամանակ կապուած էին գերմանական հակաթոռ թագաւորից։ Սակայն իրերը նորից ստացան իրենց սովորական ընթացքը, երբ Ինոկենտ Գ մեծը (1198—1216) կարողացաւ իւր նոր խաչակրաց քարոզով ոգևորել մանաւանդ Ֆրանսիական բարեպաշտ, անձնազոհ և պատերազմասէր ազնուականութիւնը ս. երկրին վերստին տիրելու համար։ Ճըշմարիտ պետական մարդու խելք էր մեծ պապի միտքը, զօրեղ յարձակումով Աղեքսանդրիայի և Եգիպտոսի դէմ՝ բուն երկրի մէջ մահացու հարուած տալ Էյյուբիդների պետութեանը, որ իշխում էր Պաղեստինի վրայ։ Վենետիկում հաւաքուեցին Ֆրանկների և Ֆլամանդրացիների խաչակիրները, որպէս զի

պայմաններ հաստատեն հասարակապետութեան գոժի հետ, որ ծովերի իշխողն էր։ Սակայն Էնրիկո Դանդոլոն Եգիպտոսի հետ ամենալաւ յարաբերութեան մէջ էր, որովհետև արևելեան Հնդկաստանից Նեղոսի հովիտը եկող թանկագին ապրանքներն ուղարկուում էին Ջրանցքների քաղաքը։ Այն կրօնական նպատակները, որ պապը իւր աչքի առաջն ունէր նորանցով ոգևորուած էին ազնիւ Ֆրանկները, այդ հանձարեց՝ իշխելու ընդունակ անձի համար, որ սակայն ունէր իւր մէջ զուտ վաճառականական ոգի, միանգամայն օտար էին և անտարբեր։ Բացի այդ, ասպետների խաչակրաց գաղափարով ոգևորուած առաջնորդը՝ Շամպայնի Թիբո Գրաֆը մեռաւ 1201 թ. մայիսի 24-ին և Վիլհարդուին մարշալը ընտրել տուեց Մոնֆերատի Բոնիֆացիո Բ մարկ Գրաֆին, որը քաղաքական միանգամայն առանձին ծրագրեր ունէր և որը բացարձակապէս հակայունական էր։

1201 թ. մայիսին արդէն հասկացել էր Էնրիկո Դանդոլոն խաչակրաց հետ իւր կապած դաշնագրութեան, որ քաղաքագիտական հմտութեան փայլուն վարպետական մի գործ էր, առանց այն էլ անտեսապէս բոլորովին հասարակապետութիւնից կախումն ունեցող ասպետներին կատարելապէս ծառայեցնել իւր շահերին և ծրագրերին։ Մեծ պապը հասկացաւ իւր հակառակորդի միտքը և կամեցաւ դաշնագրութիւնը միայն այն պայմանով ընդունել, եթէ ձեռնարկութիւնը ուղղուած չլինի քրիստոնէականների դէմ։ Սակայն Վենետիկը բացարձակապէս հրաժարուեց ընդունել այդ պարտաւորութիւնը։ Այդպիսով խաչակիրների կրօնական ոգևորութիւնը Վենետիկեցիք ծառայացրին իրենց քաղաքական նպատակներին, այնպէս անվայել եղանակով, ինչպէս Վիեննայի վեհաժողովի քաղաքագէտներն օգտուեցին 1813 և 1815 թ. ժողովուրդների կողմից ազգային գաղափարի համար մատուցած զոհերից։ Դիպուածը օգնեց Վենետիկեցոց։ Իսահակի որդի Ալէքսիոսը Պիզացիների օգնութեամբ փախաւ արևմուտք։ Ինոկենտը բաւական հաստատիմ իւր սկզբունքներին՝ նորան չընդունեց, սակայն իշխանի փեսան Փիլիպ Շվաբացին նրան ընդունեց զրկաբաց։ Խաչակիրների զօրքի մէջ կային բազմաթիւ Գերմանացիներ Հոհենոսի կողմերից։ Բոնիֆացիո Մարկ Գրաֆը Փիլիպի հետ լաւ յարաբերութեան մէջ էր։ Ուստի նրա ցանկութիւնը՝ վերահաստատել Իսահակին և նրա որդուն, մի պայման որ այնքան համաձայն էր Դանդոլոյի ծրագրերին, մեծ հաճոյքով ընդունեցին խա-

չակիրների բանակում։ Իննոկենտ Գ-ի հակառակութիւնը մնաց առանց հետևանքի և Դանդոլօն այնպիսի եռանդով դիմադրեց պապի դեսպանին, որ փոքր առ փոքր պարզուեց ամեն մէկի համար, որ դրութեան իշխողը միայն դօժն է։ Նա էլ ըստ կարեաց այդ հանգամանքից օգուտներ քաղեց։ Հոկտեմբերի սկզբներին 1202 թ. խաչակիրների նաւատորմիղը մտաւ ծով և Նոյեմբերին արդէն դրաւեց Դալմատիայում Զարան՝ որ պատկանում էր Հունգարիայի բարեպաշտ Էմերիխ թագաւորին։ Թէև վերջինս խաչակիր էր, այնուամենայնիւ Վենետիկցիներին արգելք չեղաւ այդ, որովհետև նոքա աչքի առաջ ունէին միմիայն իրենց վաճառականական քաղաքական շահերը։

Վենետիկցիներից Բիւզանդիոնի դէմ ուղղուած արշաւանքը ամբողջ պատմութեան մէջ միայն մի զուգահեռական ունի։ Անգլիայի ծովային արշաւանքը, որի հետևանքը Եգիպտոսի գրաւումն էր, երկու անգամն էլ հաւասարապէս մեծ էր այն կեղծիքը, որով կարողացան քօղարկել քաղաքական իսկական վերջին նպատակը։ Հետաքրքիր է նմանապէս, որ երկու գործողութիւնների ժամանակ էլ պետական գործերի քաղաքական ղեկավարութիւնը յանձնուած էր բազմահմուտ անկոն-

ծերի։ Հռոմը բանադրեց Վենետիկցւոց և հասկացրեց խաչակիրներին, որ նոցա գործը չէ Բոյնների և նոցա կայսեր պատժել նորամեղքերի համար։ Սակայն Ալէքսիոս իշխանը խոստացաւ երկու հարիւր հազար մարկ արծաթ և անհաւատների դէմ կանգնելու համար տասը հազար օգնական զօրք մի տարի ժամանակով և միութիւն հռոմէական եկեղեցւոյ հետ, որոնք խիստ չափաւոր և խելացի պայմաններ էին։ Դեռ խաչակիրներից շատերին խիղճը տանջում էր։ բայց Դօժի և Մարկ զրաֆի համոզեցուցիչ խօսքերը, մանաւանդ անսահման աւարի յոյսը, մեղմացրեց շատ չնչին բացառութեամբ ասպետներին, որոնք ընդհանրապէս անսասանապէս խեղճ վիճակ ունէին։ Աստուծոյ գործը զոհեցին մամոնային։

Դանդոլօն և Բոնիֆացիոն այդ ձեռնարկութեանը ուղղութիւն տուին ճշմարտապէս զարմանք ազդող խոհականութեամբ։ Վենետիկցւոց նաւատորմիղի յառաջապահ մասը ապրելին 1203 թ. վերջերին Դիւռաչիոնը։ Արդէն յունիսի 27-ին նաւատորմիղը, որ ունէր քառասուն հազար կռուողներ, խարիսխ ձգեց Սկիւտարի՝ հին Քրիւսօպօլսի մօտ, կայսեր մայրաքաղաքի դէմ յանդիման։

Կայսրը մայրաքաղաքի մէջ դոցա դէմ

ժողովեր էր, ինչպէս ասում են, վեթսուն հազար մարդկանցից բաղկացած մի զօրք սակայն կարելի էր միայն յուսալ վարեադների վրայ։ Միայն վերջին բոպէին էին մտածել վերանորոգել պարիսպները և կարգի բերել Թոյլ և փթած նաւատորմիղը։ Յարձակումը սկսեցին Պերա արուարձանի դէմ։ Յուլիսի 6-ին ընկաւ Կալաթիայի ամուր աշտարակը։ Կայսեր քաջ փեսան՝ Թէոդորոս Լասկարիսը Վարեադները և Վենետիկեցւոց Թշնամի Պիզանցիք պաշտպանում էին հերոսաբար, երբ յարձակումն ուղղեցին նոյն իսկ մայրաքաղաքի դէմ։ Յուլիսի 17-ին կայսրը համարեա թէ ստիպուած՝ փորձեց քաղաքից դուրս գալ միայն Ֆրանկների քաջութեան առաջ տեղի տուաւ։ Ողորմելի իշխանը գիշերը հեռանալով Թանկագին քարերը և գանձը փախաւ Դերեկտոն։ Այն ժամանակ Կոստանդինը՝ պետութեան գանձապետը, բանտից հանեց կոյր Ասահակին և նրան և նրա որդի Ալէքսիոս Դ. (յուլիսի 18. 1203 —28-ն յունվարի 1204 թ.) հրատարակեց կայսր։ Իշխանը բարոնների առաջնորդութեամբ հանդիսաւոր մուտք գործեց իւր քաղաքը։ Ասչակիների առաջնորդներն ինչան Բլախերների կայսերական պալատում, իսկ ուխտաւորները բանակեցին քաղաքում։ Սակայն Ասահակ

կայսեր խնդրանքով ուխտաւորների բանակը տեղափոխեցին Ղալաթիայի դաշտը և նաւատորմիղը խարիսխ ձգեց Պերայի մօտ։ Երբ Դանդոլոն քաղաքի պարիսպների մի մասը կործանել էր։ Ալէքսիոս Դ-ին ծառայում էր Ֆրանկների պահպան գունդը։ Սկզբից Յոյները վճարեցին հարիւր հազար մարկ սակայն Վենետիկեցիք ուղղակի կէսը իրենց համար վերցրին. մնացածի 35,000 մարկը առան ուխտաւորների պարտքի փոխարէն։ Անհեռատես խաչակիրների մէջ տիրում էր ընդհանուր դժգոհութիւն։ Նոքա չըմբռնեցին ժամանակի նշանները, թէև արդէն այժմ սկսուել էր այն դրութիւնը, որ երկու և կէս դար տևողութիւն պիտի ունենար։ Տէրութիւնը և նրա կայսրը արդեօք Ֆրանկներ էին դոքա թէ Յոյներ, չնայած այն բարձր ինքնահաւանութեան, որ կայսրներն երբեմն արտայայտում էին, կատարելապէս կախուած ունէին իտալական մանրավաճառ ժողովրդի պթութիւնից։ Նոքա դլորուելու էին հէնց որ Վենետիկը յետ քաշուէր, կամ աւելի ճիշտն ասած եթէ նա ստիպուած լիներ վաճառականական-քաղաքական հաշիւների պատճառով հեռանալ նոցանից։ Նախկին յարաբերութիւնը փոխուել էր, առաջուայ ծառաները այժմ դարձել էին տէրեր։ Միայն մայրաքա-

գաքն էր պատկանում երկու կայսրներին. նահանգները դեռ հնազանդ էին Ալէքսիոս Գ-ին որ գնացել էր Ադրիանուպոլիս։ Շուտով ծագեց յունական ժողովրդական ապստամբութիւն, որին զոհ գնացին Պիզացւոց և Ամալֆիտացիների խանութների մթերքները և թաթարների մեշեռը։ Դրա վերայ աւելացաւ մի սոսկալի հրդեհ։ Մինչդեռ Ալէքսիոս Դ-ը Ֆրանկների օգնութեամբ նուաճեց Թրակիան, մայրաքաղաքի մեծամեծները որոշեցին ընդդիմանալ, և վերաշինեցին քաղաքի պարիսպները։ Ռսահակը և Ալէքսիոսը բոլորովին յոգնել էին Ֆրանկների անամօթութիւնից. Դանդոլոյի կոպիտ խօսքերը, ուղղած երիտասարդ կայսեր, կրակի վրայ խոտ աւելացրին. «անամօթ տղայ մենք հանեցինք քեզ ազրի միջից և կարող ենք քեզ ազրի մէջ թաղել»։ Այն ժամանակ յանդուգն և քաջ Ալէքսիոս Դոնկաս Մուիզուլոսը՝ կայսերական տան ազգականներից մէկը, ինքն իրան հրատարակեց տէրութեան խնամակալ։ Յոյները մի քանի անգամ, թէև անպաշտօն, յարձակումներ գործեցին մայրաքաղաքից։ Բայց Ֆրանկների բանակում իշխում էր սոսկալի սով։ Յունվարի 25-ին ծագեց յեղափոխութիւն. աղնուականները, հոգևորականները և ժողովուրդը միացան, կայսերական ընտրութիւն անելու,

որ վերջի ժամանակները սովորական էր դարձել։ Երբ որ յունվարի 28 առանց պատրիարգի համաձայնութեան Նիկողայոս Կանաբոսին կայսր օծեցին, այն ժամանակ պատրիարգը հանդիսաւոր կերպով (1204 թ. փետրուարի 5-ին Մուրզուֆլոսին օծեց օրինաւոր կայսր Ալէքսիոս Ե. անունով։

Ալէքսիոս Դ-ին խեղդեցին. նրա խղճալի հայրը մեռաւ սարսափից։ Անհիմն փթած գիջողութիւնները դադարեցին։ Յոյները և Լատինները կանգնած էին միմեանց դէմ յանդիման իրրև կատաղի թշնամիներ։ Նոր կայսրը իսկոյն դադարեցրեց փող վճարելը և խաչակիր զօրքից պահանջեց հեռանալ. ապատութիւնը կռուի մէջ էր։ Կայսեր յարձակումը Ֆրանկների վերայ, որոնք Սև ծովի հարուստ Փիլէա քաղաքի աւարով ծանրաբեռնուած վերադառնում էին, անցաւ այնպէս անպաշտօն, որ տէրութեան մեծ սրբութիւնը՝ Պանագիա Հոդիգեատրիա՝ զթութեան պատկերը, որ ձեռների վերայ տանում էր պատրիարքը և որը Ղուկաս աւետարանչի ձեռագործն էր, ընկաւ Պիերդը Բրաշեոլի ձեռքը։ Ամբողջ մարտ ամսում Ֆրանկները մեծամեծ պատրաստութիւններ էին տեսնում։ Շինեցին հզօր պաշարողական մեքենաներ և մագլցելու սանդուխներ։ Սակայն Ալէքսիոս

Ե-ը ղեկավարում էր պաշտպանութիւնը խոհեմութեամբ և աներկիւղութեամբ։ Առաջին յարձակումն անյաջող անցաւ։ Ապրելի 12-ին տեղի ունեցաւ գլխաւոր յարձակումը։ Վաբեագները պաշտպանւում էին առիւծի սրտով։ Երկու աշտարակ ընկան։ Պետրոս Ամենացին կործանեց քաղաքի դռներից մէկը։ Հերոս կայսրը զուր էր փորձում ընդհանուր սարսափահարութեան առաջն առնել։ Ինչպէս միշտ, ազգերը խորը անկման ժամանակ իրենց դժբախտութեան յանցանքը բարդում են իրենց քաղաքական առաջնորդների վերայ, կամ զինուորական առաջնորդների վերայ, կամ զինուորական առաջնորդների դաւաճանութեան վերագրում, այդպէս էլ պատահեց Ալէքսիոսի հետ։ Արդէն մատնում էին նրան գահընկէց անել. կոտրուած սրտով հպարտ կայսրն էլ հասկացաւ, որ հայրենիքի բաղդը մարել է։ Նա փախաւ ոսկի դռնով, «որպէս զի վրիժառութեամբ լցուած Լատինների ծընոտների համար կերակուր չծառայէ»։ Ազգասէրների մի խումբ փորձում է Սոֆիայի եկեղեցում կայսր ընտրել Թէոդորոս Դուկասին կամ Թէոդորոս Լասկարիսին. բայց երբ նորից հրաւէր են կարդում ընդդիմանալու, ձայնակցող չեն գտնում, ժողովրդի փոքրագի յուսահատութեան և վարձկանների անտարբերութեան պատճառով։ Լասկարիսը փախչում է Փոքր Ասիա. ի զուր բնակիչների խղճուկ մնացորդը հայցեց Բօնիֆացիոյի գութը։ Հպարտ Բիւզանդիոնը պէտք էր իւր նեղութեան բաժակի վերջին կաթիլը դադարկէր անսանձ զինուորների կատաղութիւնը, որոնք ներս խուժեցին մայրաքաղաքի փողոցները, անընկճելի էր։ «Վենետիկցւոց նշանարանն էր կողոպտել և ոսկի գիզել, Ֆրանսիացիները՝ ծաղրել և պղծել, Գերմանացիներինը՝ լափել և կործանել»։ Ամենամեծ աւերումը հասցրին արևմուտքի գաղթականները, որոնք մինչև այդ ծծել էին կայսեր հպատակներին, իսկ այժմ մարդասպանների մէջ ամենաանգութներն էին։

Արդէն 1204 թ. մարտին կնքել էին բաժանման դաշնադիրը, որի համաձայն աէրութեան մի քառորդը բաժին էր ընկնելու նոր կայսեր և Ցունաց ազգը, որ զրկուեց իւր թագաւորութիւնից, պահպանելու էր իւր հոգևորական իշխանութիւնը՝ պատրիարքութիւնը և Ս. Սոֆիայի եկեղեցու անսահման կալուածները. միւս երեք քառորդը պէտք էր բաժանուէին Վենետիկցւոց և ասպետների մէջ։ Այդ նոր կարգերին ուղղութիւն տուողը բազմահոչակ Դանդոլօն էր։ Նա բացարձակ անհեռատես և սահմանափակ վաճառականական հայեցակէտով հոգ տարաւ միայն Վե-

նետկեցւոց հասարակապետութեան դրամական շահերը պաշտպանելու և յիմար կասկածոտութեամբ, փոխանակ մի զօրեղ լատինական կայսրութիւն հաստատելու, ստեղծեց մի այնպիսի անպէտք գործ որ արժանի չէր արեւի լոյսը տեսնելու։ Այդպէս էլ լատինական կայսրութիւնը հէնց սկզբից մահամերձ, կեանքից յոգնած մի մեքենայ էր, որի ամբողջ գոյութիւնը մի երկարատև հիւանդոտութիւն էր և յարատևող մահ։

Դանդոլօն արգելից հմուտ և գործունեայ Բոնիֆացիոնին կայսր ընտրել։ Նա ընտրել տուեց ճկուն և հանճարեղ Բալդուին Փլանդրացուն, որը հէնց սկզբից ցոյց տուեց, որ միայն անուանական կայսր է, երբ Բոնիֆացիոնին առաջարկեց Բոսֆորի միւս կողմի ամբողջ երկիրը-Հ'իլ-Դը Գրբէոս։ Այդպիսով ամեն ինչ արդէն սկզբից կործանման պատրաստ էր. միայն Վենետկեցիք հասկացան վաճառականական օլիգոզխիայի առանձնայատուկ շահագիտութեամբ ամեն տեղ անցկացնել իրենց սեփական օգուտները։ Ընդարձակ ֆրանսիական հոգևորականութեան ընդդիմութեանը, Թովմաս Մորոսինին պատրիարք կարգեցին, բացի այդ 13 Վենետկեցի կղերականներ հաստատեցին Սոֆիա եկեղեցու կանոնիկոսներ։ Արտաքուստ ստեղծել էին միութիւնը։

Տիեզերական հպարտ պատրիարքութիւնը հին Հռոմի առաջ գլուխ էր խոնարհեցրել։ Իրապէս դրութիւնը մօտաւորապէս այնպէս էր, ինչպէս Ռուսանդիայում անգլիական եկեղեցու ստրապետութեան ժամանակ։ Լատինական բաւական բազմաթիւ հոգևորականներ ապրում էին իրանց փոքր հօտերով, կամ առանց հօտի յունական եկեղեցու հարուստ եկամուտներով. սակայն օրթոդոքսութեան աղքատացած հոգևորականութիւնը իւր կողմն ունէր ժողովուրդը. օտարի լուծի տակ մխիթարում էր նոցա և ապագայի վերակենդանութեան յոյսը վառ պահպանում։

Այստեղ տեղը չէ մանրամասն յիշել, թէ ինչպէս հին միապետական կայսրութեան նահանգները փոփոխութեան ենթարկուեցին արևմտեան աւատական կարգերի համաձայն. ինչպէս որ Հոպֆ պատմագիրը այնպէս օրինակելի կերպով կատարել է։ Նա ունի ԺԳ. ԺԴ դարերի քաղաքակրթութեան կամ Անատոլիայի անտեսութեան պատմութեան կարևոր գլուխներ։ Այստեղ մենք աչքի առաջ ենք ունեցել միմիայն բիւզանդական ժողովրդի քաղաքական պատմութիւնը. ուստի այստեղ չի կարող տեղ բռնել լատինական կայսրների կամ Թեսաղոնիկէի թագաւորների, կամ Աթենքի և Աքէնոյի Հերցոգների, ինչ-

պէս նաև Հռոմի Սելջուկների և Եգիպտոսի Մամելիքների պատմութիւնը, որոնք նոյնպէս նախկին բիւզանդական պետութեան մասերն էին բարբարոսների ձեռքն ընկած։

Բ.

ՆԻԿԻԱՅԻ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆԸ

(1204—1261)։

Ֆրանկների աւատական պետութիւնների կազմակերպութիւնը, որի հետ անհրաժեշտապէս միացած էր բազմիշխանութիւնը և դինուորական ոյժերի բաժան բաժան լինելը։ Յոյների բախտից անկարելի էր դարձնում միացած գործողութիւնը և լատինական բռնաւորների կենդրոնացումը։ Երբ վերջի ազգասէր Ալէքսիոս Ե Մուրզուփլոսը ընդհանուր ընդդիմութեան համար կամեցաւ միանալ Ալէքսիոս Դ-ի հետ, վերջինից կուրացրուեց և խաչակիրները, որոնք կալանաւորեցին իրենց հերոս հակառակորդին, այնքան անգութ էին, որ նրան Թէոդոսի սիւնից նկրքև ցլոցին, նրան հրատարակելով Ալէքսիոս Դ-ի երդմնազանց սպանող։ Անիրաւ Ալէքսիոս Դ-ը իւր արժանաւոր Եւֆրոսիւնէ ամուսնու հետ շնորհքի արժանացաւ Բոնիֆացիոն թագաւորից և աքսորուեց Հալմիւրոսի ախորժելի դղեակը։ Բայց Յունաց ուրիշ մեծամեծներ աւելի բախտաւոր էին և զործունեայ։ Միքայէլ Անգելոս Կոմնենը, Անգելների անհարազատ հօրեղբօր որդին, 1204 թ. տիրացաւ Նիկոպոլիս թեմին և զօրեղ ձեռքով կառավարում էր Էպիրոսի իշխանութիւնը, որ Լատիններից բոլորովին անկախ էր և տարածւում էր Նաուպակտոսից մինչև Դիւռախիոն։ Կարծես պատմութեան մէջ աւելի պիտի մեծանար Թէոդորոս Լասկարիսի անունը։ Նա անցել էր Բիւթինիա և փորձեց Ասիան ազատել Յոյների համար։ Բայց Փիլադելփիայում զլուխ բարձրացրեց Թէոդոր Մանկափասը իբրև հակաթոռ կայսր։ Լեւոն Գաբալասը իրան անկախ հրատարակեց Հռոդոսում, իսկ Մանուէլ Մաւրոզումէսը Մէանդրի հովտում։ Նիկիան նրա առաջ փակեց իւր դռները, դէպի նրա աներ Ալէքսիոս Դ-ը ունեցած տակութեան պատճառով։ 1204 թ. խաչակիրները, զօրեղացած Պալեստինից վերադարձող 10,000 ուխտաւորներով, մեծ պատրաստութիւններ տեսան Փոքր-Ասիային տիրելու։ Ի զուր Լասկարիսը միացաւ Հռոմի

Սելջուկների և Փիլադելփիայի կայսեր հետ։ Պետր դը Բրաշեյլը նրան յաղթեց 1204 թ. Դեկտեմբերի 6ն Պոյմանենոնի մօտ, վերցրեց Լապադիոնը, Ապոլոնէյան և Նիկոմիդիան։ Ընդդիմութիւն ցոյց տուաւ միայն անառիկ Պրուսան։ Մինչ այդ դրաֆ Հէյնրիխը արշաւելով Աբիւդոսից 1205 թ. Մարտի 12-ն յաղթել էր Մանկափասին։ Ամեն ինչ կորած էր համարւում, երբ յանկարծակի լուր հասաւ թէ Բուլգարները Բալդուին կայսեր գերել են. Թէոդոր իշխանը շունչ քաշեց։

Կալոջանը «Հռովմայեցոց կոտորողը» շատ էր աշխատել լաւ յարաբերութիւն ստեղծել Լատինների հետ։ Սակայն նրան մերժել էին, ծաղրելով ամենախայտառակ եղանակով, նա էլ մտածեց վրէժ առնել, որը շուտով սոսկալի կերպով արտայայտուեց։ Ռումանիայի Ցոյները մոլեռանդաբար ատելով լատիններին, միացան իրենց ազգային մահացու թշնամու հետ։ Կալոջանը խոստացաւ օգնութեան գալ իւր բոլոր զօրութիւնով և 10,000 Կումաններով։ Դեռ հազիւ հաղ ընկճուած Ռումանիայի ամբողջ երկրում Ցոյները ոտքի կանգնեցին։ Կայսրը և Դանդոլօն իսկոյն փոքր ոյժով արշաւեցին և պաշարեցին Ադրիանուպոլիսը։ Այն ժամանակ վրայ հասաւ Կալոջանը թուով աւելի մեծ զօրքով և ֆրանկ-

ներին ծանր կերպով յաղթեց։ Ով որ ազատուեց սոսկալի կոտորածից, փախաւ Պրոպոնդիս։ Բալդուին կայսրը մեռաւ բուլգարական գերութեան մէջ։ Այդ օրից սկսած ֆրանկների իշխանութիւնը Ռումանիայում ընդ միշտ վերջացաւ։ Կալոջանը, կատաղած որ Ցոյները շուտով էլի անցան Լատինների կողմը, հետեւեալ տարիները անխնայաբար կոտորում էր խեղճ ժողովուրդը։ Նիկետաս պատմագիրը ողբում է երբեմն ծաղկեալ քաղաքների աւերակների վրայ, այն գաշտերի և պարտէզների անգութ անապատանալու վրայ, որ առաջ այնքան գեղեցիկ և դուրեկան էին, իսկ յետոյ մարդկանց փոխարէն սկսել էին գազաններ բնակուել։ Ամբողջ Մակեդոնիան զոհ գնաց բուլգարական իշխանի վայրագութեանը։ Փիլիպուպոլիսը, Հերակլեան, Պանիոնը, Ռիդեստոսը, Ադարիուպոլիսը, Տրայանուպոլիսը, Մակրէն, Կաւդեապոլիսը, Մոսինուպոլիսը, Պերիբէորիոն և բազմաթիւ ուրիշ քաղաքներ առաւ և բնակիչներին կոտորեց, իսկ խղճուկ մնացորդները տարաւ բնակեցրեց Դանուբեան բուլգարիայում։ Նա ասում էր, որ կամենում է Բազիլեոս կայսեր՝ իւր բուլգար հրապատակների դէմ գործած չարիքների վրէժը լուծել։ Նրան անուանել էին Բուլգարոկտոնոս, իրան էլ հրամայեց անուանել Հռովմէկ-

տոնոս։ 1207 թ. նա մեռաւ Թեսալոնիկէի առաջ։ Յոյների բարեպաշտ առասպելը նրա մահը վերագրում է իրենց ազգային պահապանի՝ ս. Դեմետրիոսի նիզակից առաջացած։ Իսկ բուլգարական ժողովուրդը միշտ բարձր է պահել իւր «մեծ և ամենաբարեպաշտ» ցարի յիշատակը։

Մինչդեռ Լատինների նոր կայսրը Հենրիխը սասափիկ զբաղուած էր, Թէոդորոս Լասկարիսը կայսր ընտրուեց Նիկիայում, որ յոյն Արիստոկրատիայի և հոգևորականութեան ժողովման տեղն էր և 1206 թ. հանդիսաւոր օծուեց Միքայէլ նոր պատրիարքի ձեռքով։ Նա միացաւ Սելջուկների հետ Դաւիթ Կոմնենի դէմ։ Սելջուկները յաղթեցին սրա եղբայր Ալէքսիոսին Ամեսոսի պարիսպների մօտ, մինչդեռ Թէոդորոսը ինքը յաղթեց Դաւիթի զօրապետ Սիւնադիւոսին Սանգօրիոսի մօտ։ Դաւիթը միացաւ Ֆրանկների հետ։ Սակայն Անդրոնիկոս Գիդոսը 1206 թ. ոչնչացրեց նոցա օգնական զունդը Նիկոմիդիայի առաջ։ Սակայն երբ 1206 տարուայ վերջին գործունեայ Հենրիխ կայսրը մեծ զօրքով անցաւ Ասիա, առաւ Կիւզիկոն, Նիկոմիդիա, Խարաքս և Կիբոտոս քաղաքները, Լասկարիսը Կալոջան բուլգարին օգնութեան կանչեց և գրանով սոխպեց Լատիններին բաժանել իրենց զօրքը։ Թէոդորի

սաղ անները՝ Ալէքսիոս Գ-ը։ այդ ժամանակ փախել էր Սելջուկների մօտ, և սոքա պահանջում էին Թէոդորոսից այդ ծերին օրինաւոր կայսր ճանաչել։ Թէոդորը արագ համաձայնութիւն կայացրեց լատինների հետ և Հենրիխ կայսեր հետ 1207-ին հաստատեց երկամեայ զինադադար։ 1209 թ. նա յաղթեց հզօր Պիեռ դը Բռաշէյլին, որին կատաղած Յոյները չարաչար սպանեցին։ Ֆրանկների վարձկանների օգնութեամբ զօրացան 1211 թ. սասափիկ Ջալդ տուեց Քայխոսրովին, որ պաշարել էր Անտիոքը, նրան և ծեր Ալէքսիոս Գ-ին գերեց, որը—ինչ որ շատ մեղմ էր այն ժամանակների համար—վանքերի պատերում փակուած, ապատ ժամանակ ունէր ողբալու իւր բազմաթիւ մեղքերը Թաթարները պարտաւորուեցին ասիական ափերի մեծ մասը զիջանել Յոյներին։ Ֆրանկների համար այդ անտանելի էր։ Հենրիխ կայսրը դուրս եկաւ Թէոդորի դէմ, յաղթեց Լուպարկոսի մօտ, 1212 թ, ներս մտան Փոքր-Ասիայի խորքերը՝ իսկ հիւսիսում Նիկիայի գահակալը նեղն էր գցել Ֆրանկների վասալ՝ Դաւիթ Կոմնենին, նրան հալածելով դէպի արևելք։ նրա ձեռին թողեց միայն Սինոպէի իշխանութիւնը։ Բիւզանդիոնի և Նիկիայի կայսրները շուտով բաւական արդար խաղաղութիւն կապեցին։ Թէո-

դոր կայսրը հզօր օգնական գտաւ յանձին Յովհաննէս Դուկաս Վատացէսի, որին նա 1212 թ. գլխաւոր սենեկապետ էր կարգել և ամուսնացրել իւր Էյրինէ աղջկայ վրայ։ Յոյների առանձին բախտն էր՝ խիստ ընդունակ և եռանդոտ Լատինների Հեյնրիխ կայսեր մահը որ տեղի ունեցաւ 1216 թ. Յունիսի 11ն Թեսալոնիկէում։ Այդտեղից սկսած Թէոդորի գործը թեթևացաւ Կոստանդնուպօլսի թոյլ խնամակալների պատճառով։ Երբ նա 1222 թ. մեռաւ, իւր գայիսոնի տակն էր առել ամբողջ արևմտեան Փոքր-Ասիան բացառութեամբ Բիւթինիայի մի փոքր կտորից, որ Ֆրանկների ձեռին էր։ Իսկ Սելջուկների իշխանութիւնը սկսւում էր միայն Սանդարիոսի և Մէանդրի վերին հոսանքներից։ Նրա անչափահաս Կոնստանդին որդու փոխարէն՝ ընդհանուր համաձայնութեամբ գահ բարձրացաւ Յովհաննէս Դուկաս Վատացէսը (1232—1254), որ թէ ընտիր զօրավար էր և թէ հմուտ կառավարիչ, որի ժամանակ յունական Փոքր-Ասիան հիմնովին վերակենդանացաւ Անգելների անարդ կառավարութիւնից յետոյ։

Յոյն ժողովրդի ազգային ատորացումը և օտար լատինական լծի ամօթը արձակել էին կապանքներից նրա մի շարք գեղեցիկ յատկութիւնները, որ մինչ այդ կաշկանդուած

էին։ Ժողովուրդը ցոյց տուեց, թէ դեռ ինչպիսի ընտիր տաղանդներ ունի իւր մէջ։ Ինչպէս որ Լասկարիսները Ասիայում, այնպէս յաջող կերպով Անգելները Եւրոպայում ուղղութիւն տուին այն հզօր դիմադրութեանը որ Յոյները գործ դրեցին լատինական իշխանութիւնից ազատուելու համար։

Էպիրոսում Միքայէլին յաջորդել էր նրա Թէոդորոս Դուկաս Անգելոս եղբայրը, որ մի բռնակալ և կոպիտ, բայց ընդունակ անձ էր։ Նա ամեն կողմից՝ բուլգարների և ֆրանկների դէմ տարածել էր իւր իշխանութիւնը։ Արևմուտքի ազգասէրները, ինչպէս ազատագրանում են Դեմետրիոս Խոմատիանոսի խիստ կարևոր նամակները, նայում էին նրա վրայ իբրև լատինական և սլաւոնական լուծից ազատողի վրայ։ 1221 թ. նա յարձակուեց Թէսալոնիկէի թագաւորութեան վրայ, որտեղ իշխում էր անզօր Դեմետրիոսը։ 1222 թ. ի մեծ ցնծութիւն Յոյների նոցա ձեռքն ընկաւ Թեսալոնիկէ մայրաքաղաքը, և երբ քաղաքի մետրապօլիտը տատանւում էր խախտելու սիեղերական պատրիարքի առանձնայատուկ իրաւունքները, Ախռիդայի ինքնիշխան արքեպիսկոպոսը՝ Դեմիտրիոս Խոմատիանոսը հանդիսաւոր կերպով նրան օծեց արևմուտքի կայսր։ Ի հաշիւ Բուլգարների տէ-

բութեան սահմանները առաջ տարան մինչև Ադրիանուպոլսի, Փիլիպուպոլսի և Խրիստուպոլսի մոտերքը և ամեն տեղ բուլղար ազգի եպիսկոպոսներին փոխարինում էին յոյն եպիսկոպոսներով։ Մեծ դժուարութեամբ կարողացաւ դաւառական մի եկեղեցական ժողովում, որին նախագահում էր Դեմետրիոսը, Մոգլենայի խելացի և մեղմ եպիսկոպոսը գոնե այն ընդունել տալ, որ օրինաւոր համարուի պաւական ծագում ունեցող օրթոդոքս եպիսկոպոսների կատարած ձեռնադրութիւնը։ Մի զուտ յունական, անհեռատես և մոլեռանդ կուսակցութիւն, որի ղեկավարը Կաստորիայի աւագ եպիսկոպոսն էր։ կամենում էր—իրաւ է անյաջող—այդ էլ չթոյլ տալ։ Այդ չափաւորութիւնը ապացուցանում է, որ Աւսիդայի այն ժամանակուայ արքեպիսկոպոսական դիւանը դժուար խնդիրների վերաբերմամբ ունէր անհամեմատ աւելի մեծ եկեղեցական – քաղաքագիտական իմաստութիւն, քան մեր օրերի փանարը։

Երևում է որ զուր չէր Նիկիայի Գերմանոս պատրիարքի մեղադրանքը, թէև Դեմետրիոսը զօրեղ կերպով բողոքում էր դրա դէմ, թէ նա ձգտում էր արևմտքի պատրիարքութիւն հաստատել։ Որովհետև եկեղեցական և քաղաքական խնդիրներում Թեսալոնիկէի և Նիկիայի Յոյները շատ օտար էին միմեանցից իրենց գործողութիւնների և նպատակների մէջ։ Երկու այնպիսի զօրեղ իշխող բնաւորութիւններ, ինչպէս էին Թէոդորը և Յովհաննէս Գ-ը, ոչ մէկը միւսին չէր ստորադրուիլ։ Սակայն երկուսն էլ 1224 թ. յունուարակեսին լատինական մահմերձ կայսրութեան դէմ։ Թոքերտ կայսրը և նրա բարոնները պարտութիւն կրեցին Թէոդոր կայսրից Սեսաէի մոտ։ իսկ Ֆրանսիացիք Մակէդոնը ս. Մենեհուլդի առաջնորդութեամբ Պոյմանենոնի մոտ Վատացէսից։ Սա առաւ Փըբանկների ամուր դիրքերը Փոքր-Ասիայում, գրաւեց Կոսը, Ռկարիան, Սամոսը, Քիոսը և Լեսբոսը, Հռոդոսը հարկատու արեց և կոչոպատեց Վենետիկցոց Յովանիտայ երկիրները։ Յունաց մի զօրագունդ Իսէս Պրոտոսպատարոսի և Յովհաննէս Կամիւցէսի առաջնորդութեամբ անցաւ Հելլէսպոնտը և հետևելով Ադրիանուպոլսի բնակիչների հրաւէրին, գրաւեց այդ նշանաւոր քաղաքը։ Սակայն այդտեղ հանդէս եկաւ Հռովմայեցոց երկու փառասէր կայսրների շահերի տարբերութիւնը։ Թէոդորոսը Ադրիանուպոլսից դուրս քշեց Նիկիայի գունդը, և Վատացէսը զրաղուած լինելով Ասիայում, Լատինների հետ խաղաղութիւն հաստատեց։ մինչդեռ Թէոդորոսը միացաւ բուլգարների հետ։

Յոյների համար մեծ սպառնալիք էր բուլգարների նոր իշխան Յովհաննէս Ասէնը (1218—1241)։ «Մեծ և բարեպաշտ ցարը, ծեր Ասէն Թագաւորի որդին, որ իւր ունեցած մեծ սիրով առ Աստուած՝ փառաւորեց բուլգարների Թագաւորութիւնը աւելի քան նրանից առաջ բոլոր բուլգար ցարերը»։ Բուլգար վարդապետի գովասանքը հաստատւում է յոյն ճառախօսի վկայութիւնով։ «Բոլորն էլ նայում էին նրա վրայ իբրև մի զարմանալի և բախտաւոր մարդու վրայ։ Որովհետև նա իւր թուրը չէր հանում հայրենակիցների դէմ, ոչ էլ իրան արատաւորում էր արիւնալից գործերով Հռովմայեցիների դէմ, ինչպէս բուլգարական իշխաններից նրա նախորդները։ Այդ պատճառով նա սերուած էր ոչ միայն բուլգարներից, այլ նաև Հռովմայեցիներից և ուրիշ ազգերից»։ Այդ ճշմարիտ բարեպաշտ իշխանը ցոյց տուեց իւր իսկական պետական մարդու իմաստութիւնը նրանով, որ կատարեալ ազատութիւն տուեց Բոգոմիլներին։

Բիւզանդիոնի լատինական կառավարութիւնը, որ ֆիզիքապէս և բարոյապէս անանկացել էր, կամեցաւ 1228 թ. Ռուբերտի մահից յետոյ, անչափահաս Բալդուին Բ-ի խնամակալութիւնը նրան հաւատալ, որ խիստ

խելացի մտածուած քայլ էր, և կարող էր ամենից շատ անհաճելի լինել Նիկիայի և Թեսալոնիկէի արքունիքներում։ Ասէնն էլ բոլորովին պատրաստ էր և խոստացաւ Թրակիան Լատիններին համար առնել Վատացէսից։ Սակայն Յոյների բախտից լատին հոգևորականութիւնը ընդդիմացաւ և թոյլ չտուեց պետութեան մէջ օրթոդոքս կառավարիչ նշանակել։ Քաջ, բայց իբրև քաղաքագէտ անընդունակ Ժան դը Բրիէնը Նիկիայի համար առանձին վտանգ չէր ներկայացնում։ Թէոդորոս Դուկասը՝ Թէսալոնիկէի Կայսրը, որի հետ Ասէնը դաշն էր կռել, ունայն ինքնավստահութեամբ հրաժարուեց մեծ ցարի բարեկամութիւնից և յարձակուեց Թրակիայի վրայ յոյն և ֆրանկ վարձկան զօրքով։ 1230 թ. Ապրելին երկմեռանց Յոյնը—Ասէնը հրամայեց լուծուած դաշնագիրը մի նիզակի ծայրում զօրքի առաջից տանել—կատարեալ պարտութիւն կրեց Կլոկոտնիկայի մօտ և գերի ընկաւ։ Ասէնը մեզմ էր վարուում հասարակ զինուորների հետ։ Անգելների տէրութեան մեծ մասը ընկաւ բուլգարների ձեռքը, և Ասէն ցարը շուտով գրաւեց իւր նոր հպատակների սրտերը իւր հեղութեամբ և մարդասիրութեամբ։ Թեսալոնիկէն և Էպիրոսի իշխանութեան մի մասը շնորհեցին Թէոդո-

լոսի եղբայր Մանուէլ «կայսեր» որ նմանապէս խիստ ընդունակ անձ էր և Ասէնի փեսան էր, ամուսնացած լինելով սրա աղջկայ Մարիա անվանեալ վրայ։ Տրնովոյի եկեղեցու վրայի մի արձանագրութիւն փառաբանում է մեծ ցարի գործերը։[1]

Մինչ այդ Վատացէսը անդադրում գործում էր Վենետիկցոց և Ֆրանկների դէմ։ Նա փորձեց ընկճել Հռոդոսի Լևոն Գաբալա-

1. «1738 թուին (=1230) Գ Ընթիֆիոնին։ Եւ Յովհաննես Ասէն, Բիւսոնով Աստուծոյն հաւատարիմ թագաւոր եւ ինքնակալ Բուլգարաց եւ Ցեր Ասենի որդի, կառուցել եմ այս մեծապատիւ եկեղեցին հիմից ի վեր եւ նկարեցրել կատարելապէս զարդարել ի պատիւ քառասուն սուրբերի, որոց օգնութեամբ ես իմ կառավարութեան 12 տարիներում, երբ նկարում էին տաճարը, դուրս եմ եկել պատերազմելու Ռոմանիայի դէմ, յաղթել եմ Յունաց զորքը եւ գերել եմ Կիր Թոդոր Կոմնին Յարին իրան իւր բոլոր բոլոշարներով։ Եւ տիրել եմ ես բոլոր երկիրներին Օդրինից (Ադրիանուպոլիս) մինչեւ Դուայ (Դիւռախիոն), Յունաց, յետոյ Ալբանացոց եւ յետոյ Սերբերի երկիրը։ Միայն Յարիգրադի շրջակայքի քաղաքները եւ այդ իսկ քաղաքը, ունէին Ֆրանկները (Ժրանկները), բայց սոքա էլ խոնարհուեցին իմ թագաւորութեան ձեռի տակ։ որովհետեւ նոքա չունէին ուրիշ ցար ինձնից բացի, եւ իրենց օրերը անցնում էին իմ կամքով։ որովհետեւ Աստուած այդպէս էր հրամայել։ Որովհետեւ առանց Նորան գլուխ չի գալ ոչ խօսք եւ ոչ գործ։ Նմա եղիցի փառք յաւիտեանս ամէն»։

սին և իւր նաւատորմիղով օգնութեան հասնել Կրետացիներին, որոնք կատաղած էին Վենետիկցոց վատ կառավարութեան պատճառով։ Սակայն Գաբալասը անձնատուր եղաւ հասարակապետութեանը և Վատացէսի զօրքը, որ Կրետէում ավելի էր քան 1235 թ յաղթուեց Վենետիկցիներից։ Նա 1234 թ միացաւ Ասէնի հետ Կոստանդնուպոլսի դէմ և 1235 թ. առաւ և կործանեց Վենետիկցոց Կալլիպոլիսը։ Լամբսակոսում երկու կայսերական ընտանիքները փոխադարձ ամուսնական խոստումներով դաշինքը կնքեցին. և Գերմանոս Բ-ը միւս պատրիարքների համաձայնութեամբ, Տրնովոյի Յովակիմ արքեպիսկոպոսին հանդիսաւոր կերպով օծեց բուլգարիայի ինքնագլուխ եկեղեցու պատրիարք։ Ապա երկու իշխանները դարձան լատինների դէմ. Պրոպոնտիսի և Հերրասի մէջ տեղում Նիկիացիք արտակարգ յաջողութիւն արին։ Սոսկալի նեղ վիճակը 1236 թ. մանգամ էլ ստիպեց լատիններին ոտքի կանգնել։ Պիզայի և Ջենովայի նեղսիրտ վաճառականները, մանաւանդ Վենետիկցիք հասկացան, որ բացի լատինական կայսրութիւնը, իրենց վաճառականութիւնն էլ է վտանգուած։ Աքէայի հերցոգն էլ օգնութիւն ուղարկեց։ Այդպիսով Բալդուինը յաղթեց բուլգարներին

ցամաքի վրայ, Վենետկեցիք՝ Ցոյներին ծովի վրայ։ Կոստանդնուպոլիսը՝ ազատուած էր, մանաւանդ որ շուտով լուծուեց յունա-բուլգարական դաշնադրութիւնը։ Այդպիսով ողորմելի Բալդուին Բ-ը դեռ 25 տարի էլ անցկացրեց իւր աղքատի կեանքը։ Նա շրջում էր արևմուտքում վաճառքի հանելով իւր տէրութեան մայր եկեղեցիների և վանքերի նըշխարները և գնողներ էր գտնում իւր թանկագին սուրբ իրերի համար, որոնցից ամենաեռանդունը մանաւանդ Ս. Լուդովիկոսն էր։ Սա վճարեց նաև Վենետկեցոց մօտ գրաւ դրած փշեայ պսակի գրաւականը։ Այդ բոլորը չէր խանգարում Վատացէսի յառաջադիմութիւնը։ Նա Ֆրանկներից խլեց նոցա վերջին կալուածները ասիական հողի վրայ։ 1240 թ. խեղճ Բալդուինը վաճառել էր իւր ժառանգական վերջին կալուածները խաչակիր զօրք վարձելու համար և կարողացաւ իսկապէս Ցոյներից յետ խլել նշանաւոր Ցուռուլոնը։ Նմանապէս Վենետկեցիք 1241 թ. Ցոյների դէմ մի փառաւոր ծովային յաղթութիւն տարան։ Բայց նոյն տարին Վատացէսը միացաւ Փրեդրիխ Բ-ի հետ ամուսնանալով նրա Աննա աղջկայ վրայ։ Դրա փոխարէն լատինները բարեկամացան Քայխոսրով Բ-ի՝ Հռոմի իշխողի հետ, որը խոստացաւ ընդունել քրիստոնէութիւնը։

Սակայն Մոնգոլների հրոսակների սարսափելի երկիւղը, որոնք հեղեղել էին իսլամական իշխանութեան արևելեան մասը՝ Հայաստանը և Վրաստանը, Ռուսաստանը ջախջախել էին և Հունգարիան գետնով էին զարկել, փոքր ասիական մանր իշխանութիւններին յանկարծ մոռացնել տուեց իրենց բոլոր քաղաքական երկպառակութիւնները և կրօնական վէճերը։ Տրապիզոնի Մեծ իշխանը որոնեց Հռոմի սուլթանի բարեկամութիւնը, և 1244 թ. Վատացէսը ևս վերջինիս հետ դաշն կապեց Տրիպոլսում. որով միաժամանակ Լատիններին զրկեց Սելջուկների օգնութիւնից։ Սակայն Սելջուկները Արզուգայի (Երզնգայի) մօտ Մոնգոլների դէմ յաղթուեցան։ Սոքա յառաջ խաղացին մինչև Անգորա. Հռոմը կարողացաւ ազատ մնալ ծանր հարկի տնով։ Իկոնիայի սուլթանութեան անկման պատուղները քաղեցին Տրապեզունդի և Նիկիայի Ցոյները։ Վատացէսը լաւ յարաբերութիւն հաստատեց Մոնգոլների հետ և անցաւ Եւրոպա Անգելների դէմ։ Այնտեղ ամեն ինչ խռովութեան մէջ էր։ Միքայէլ Բ-ը Միքայէլ Ա-ի հարազատ որդին, Կորիւֆոյում և արևմուտքում հաստատել էր իւր համար անկախութիւն. կուրացած Թէոդորոսը, ազատուելով բուլգարական կապանքներից, փոր-

ձեց իւր Յովհաննէս որդու օգնութեամբ Մանուէլից խլել իւր երկիրը։ Մանուէլը դիմեց Նիկիային, բայց շուտով մեռաւ, և այն ժամանակ Վատացէսը սկսեց իւր գործողութիւնը։ Ծեր Թէոդորոսին 1242 թ. հրապուրելով բերին Նիկիա. յետոյ Վատացէսը անցաւ Եւրոպա և մեծ զօրքով պաշարեց Թեսալոնիկէն։ Սակայն առանց նաւատորմղի նա չէր կարող առնել ամուր քաղաքը։ Ուստի երկուստեք զիջողութիւն եղաւ։ Յովհաննէս Անգելոսը հրաժարուեց կայսերական տիտղոսից և «դեսպոտէս»՝ տէր անունով դարձաւ Նիկիայի վասալ։ Շատ էլ չանցած 1244 թ. մեռաւ։ Նրա եղբօր և յաջորդի վատ կառավարութիւնը Վատացէսի ձեռքը յարմար պատճառ էր միջամտելու։ 1246 թ. անցաւ Հիլէսպոնտոսը։ Նա Բուլգարների երիտասարդ ցարի մահից օգտուեց և նոցանից խլեց Սերէն Մելենիկոսը, Ստենիմաքոս և ամբողջ հիւսիսային Մակեդոնիան։ Նրբ յետոյ Վատացէսը երևաց Թեսալոնիկէի առաջ, Դեմետրիոսը իսկոյն անձնատուր եղաւ։ Յովհաննէս Դ-ը 1246 թ. յաղթանակով վերադարձաւ Նիկիա. և 1247 թ. Լատիններից խլեց Բիզենէն և Ցուռուլոնը։ Հռովմէական պետութեան վերահաստատութիւնը իւր դիւաւոր մասերով արդէն կատարուած էր։ Միևնոյն ժամանակ այդ քաջ հերոսը շարունակ աշխատում էր նաև երկրի ներքին բարեկարգութեան համար։ Նա հովանաւորում էր գիւղատնտեսութիւնը, որով նա ինքը սիրով և հմտորէն պարապում էր։ Նա կանոնաւորեց և մուրքը, պաշտպանում էր և նպաստում վաճառականութեանը և յունական ապրեշումեայ արդիւնագործութեանը։ Վատ էր միայն նրա յարաբերութիւնը իտալացի առուած վաճառականների հետ. բայց Յոյները չէին կարող նոցա հետ ուրիշ կերպ վարուել։ Նաև յունական վերջին անկախ իշխանը՝ Էպիրոսի Միքայէլը ստիպուեց 1254 թ. ընդունել Նիկիայի հզօր կայսեր գերիշխանութիւնը։ Նա 1253 թ. ծեր Թէոդորոս Դուկաս Անգելոսի դրդմամբ դուրս էր եկել Վատացէսի դէմ։ Չնայած որ նա քաջաբար ընդդիմացաւ Թեսալիայում և հարաւային Մակեդոնիայում, կայսրը անարգել առաջ անցաւ, 1254 թ. ընկաւ նշանաւոր Կաստորիան, շուտով նաև Դէսարոլիսը (Devol), որ իշխում էր Ալբանիայի կիրճերի վերայ։ Ալբանացիք ապստամբեցին։ Այն ժամանակ Միքայէլը անձնատուր եղաւ և ծեր խռովարար Թէոդորոսը ստիպուած վանք մտաւ։

Էպերոտեան պատերազմից վերադառնալիս 1254 թ. հոկտեմբերի 30ն Նիւմֆէո-

նում՝ ոչ հեռու Եփեսոսից մահը վրայ հասաւ հզօր կայսեր։ Նրան յաջորդեց նրա ընդունակ որդի Թէոդորոս Լասկարիսը (1254-1258)՝ որ անփոփոխ պահպանեց իւր իւր հօրից աւանդաբար ստացած պետական ընտիր վարչութիւնը՝ մանաւանդ առանց հարկերի ճնշման՝ հիանալի կարգաւորեց տընտեսութիւնը և միևնոյն ժամանակը հովանաւոր էր ուսման և կրթութեան։ Ընդարձակ իւր հիւանդոտութեանը նա շատ լաւ զինուոր էր։ Բուլգարների Միքայել Ասէն ցարը՝ որ կամեցել էր Վատացէսի գործերի վրէժն առնել՝ գրաւել էր Ռոդոպէ լեռների և Վերին Մակեդոնիայի դղեակները։ 1255 թ. Թէոդորոսը գուրս եկաւ նրա դէմ։ Իւր Ալէքսիոս զօրավարը յաղթուեց Սեռէի մօտինքը դրա փոխարէն փառաւոր յաղթութիւն տարաւ Ռուպելիոն կիրճի մօտ։ Նա յետվերցրեց կորցրած երկիրները և երկրորդ յաղթութիւնից յետոյ 1256 թ. ընդունեց խաղաղութիւն Սերբերի Ստեփան Ուռոշ Ա. թագաւորի միջնորդութեամբ։ Նոր 1257 թ. մեռաւ Միքայելը և շուտով նրա տեղն անցաւ Կոնստանդին Սերբացին՝ որը ամուսնացաւ կայսեր Էյրենէ աղջկայ վրայ՝ վերատեղծուեցին լաւ յարաբերութիւններ։

Աւելի անհնազանդ գտնուեց Միքայէլ

Էպիրոսցին՝ որից իրաւէ կայսրը ճշմարիտ բիւզանդական խորամանկութեամբ խլել էր Սերբիա և Դիւրախիոն նշանաւոր քաղաքները՝ բայց դրա փոխարէն խոստացել էին Միքայելի Նիկիփորոս որդուն ամուսնացնել կայսեր Մարիա աղջկայ վրայ։ Միքայելը միացաւ Ալբանցոց և Սերբերի հետ։ Եւրոպական Ցունայ կուսակալը՝ մեծ ճարտասան Գէորգ Ակրոպոլիտէսը՝ որը աւելի գրչի քան զէնքի մարդ էր՝ յաղթուեց և գերի ընկաւ։ Նաև Թէոդորոսի ամենաընտիր զօրապետը՝ Միքայել Կալէոլոգը լեռնային կռիւների մէջ՝ որ միացած էր մեծ դժուարութիւնների հետ՝ չկարողացաւ ոչինչ անել։ Այն ժամանակ 1258 թ. Թէոդորոս Բ Լասկարիսը մեռաւ Մագնեզիայում՝ Հերմոսի վրայ։

Ցիմարաբար նա կայսր էր նշանակել իւր անչափահաս Լասկարիս Յովհաննէս Դ. որդուն Մուզալոն Պրոտոնվեստիարիոնի և Աբսէնիոս պատրիարքի խնամակալութեան տակ։ Այնպիսի կատաղի ժամանակներում անհնար էր մանկան կառավարութիւնը։ Խնամակալը սաստիկ կատաղեցրել էր օտար վարձկաններին իւր զուտ բիւզանդական ընթացքով։ Նա հրաժարուեց նոցա տալու այն դրամական ընծան՝ որ խոստացել էր Թէոդորոսը։ Մուզալոնը և նրա առնը զինուո-

բական խռովութեան զոհ գնացին։ Իշխանները հոգևորականները և զօրքը Միքայէլ Պալէոլոգին դեսպան ուղարկեցին իբրև խնամակալ՝ հրաւիրեցին կառավարութեան գլուխն անցնել։ Պալէոլոգների ցեղը Ալէքսիոս Ա-ի օրերից սկսած տէրութեանը մատուցել էր նշանաւոր ծառայութիւններ։ Վատացեալը լաւ էր գնահատել Միքայէլի զինուորական մեծ արժանիքները և Նրան կնութեան էր տուել իւր եղբօր աղջիկ Թէոդորա Դուկէնային։ Թէոդորոս Բ Լասկարիսը ոչ առանց պատճառի միշտ կասկածանքով էր նայում փառասէր և միջոցների մէջ անընտրող զօրապետի վրայ։ Ընդհակառակն, նրան հաւատացել էր նշանաւոր կուսակալութիւններ, և Միքայէլը հասկացել էր իւր մեծ խորամանկութեամբը կրիտիկական րոպէներում խոյս տալ սպառնացող վտանգից։ Այդ ընթացքով բաւական թուլացել էր Միքայէլի հաւատարմութիւնը թագաւորական տան վերաբերմամբ, և կայսրը պարտաւոր էր իմանալու, որ բիւզանդացու համար երդումը նշանակութիւն չունի։ Ուստի բոլորովին աւելորդ էր, որ նոյն եղանակով Արսէնիոս պատրիարքը փորձեց նոր կառավարչին արամադրել, որ Լասկարիսի տան համար պահպանէ թագը։ Տիրող հանգամանքների փոթորկալից ժամանակը գահի վրայ

պահանջում էր քաջարի զինուորներ։ Օրինաւոր երախաների գահակալական իրաւունքի ապահովութիւնը, տէրութեան համար մեծ վնաս էր։ Արդէն 1261 թ. Յունուարի 1-ն Միքայէլը հանդիսաւոր կերպով օծուեց կայսրակից։ 1261 թ. դժբախտ Յովհաննէս աղնուական կայսեր կուրացրին և բանտ նետեցին։ Շուտով երևաց թէ հռովմէական պետութեան համար ինչքան անհրաժեշտ էր մի զօրեղ ձեռք։

Էպերոսի անհանդիստ Միքայէլը դաշն էր կապել Սիկիլիայի Մանֆրեդի և Աքէայի Վիլհելմարդուինի հետ և սպառնում էր Թեսալոնիկէին։ Միքայէլ Պալէոլոգը, դրանով ստիպուած կանոնաւոր պատերազմ մղելու, շտապեց արագ հարուած հասցնել։ 1259 թ. նրա զօրապետները առան Վոդենան և Էպիրոսներին հալածեցին Կաստորիայի և Պենտոսի յետևը։ Մակեդոնիան Նիկիայի իշխանութեան տակն էր, առնուեցին նոյն իսկ Դեսաբոլիս և Բերատ։ Մինչ այդ հասել էին Ապուլիայից և Աքէայից օգնական դնդերը։ 1259 թ. Հոկտեմբերին ծանր զրահաւորուած ասպետները պարտութիւն կրեցին սելջուկեան, սլաւոնական և կումանական ձիաւորներից և բիւզանդական կայսեր արագաշարժ նետաձիգներից։ Մեծ-Վլախիայի Յովհաննէս դեսպոտը,

Էպիրոսի դեսպոտի անհարազատ որդին, ինքը դաւաճանեց իւր դրօշին։ Ծանր կորուստներ ունեցան մանաւանդ Մոռէայի Ֆրանկները։ Վիլհելմ իշխանը Յունաց ձեռքը դերի ընկաւ։ Պելագոնիայի յաղթութիւնը ահագին նշանակութիւն ունեցաւ տէրութեան համար։ 1262 թ. խաղաղութեամբ Էպիրոսցին ստիպուած էր գոհ լինել միայն իւր ցեղական երկրով, իսկ Վիլհելմը իւր պելոպոնէսիան իշխանութիւնից զիջաւ Մոնեմբասիան, Միւզիթրիան և Մայնան և խոստացաւ յաւիտեան խաղաղութիւն պահպանել Հռոմայեցիների հետ։

Մինչ այդ կատարուել էր նաև Հռոմայեցոց ժողովրդի մեծ բաղձանքը, մայրաքաղաքը առնուել էր։ 1260 թ. Միքայէլը անցել էր Հելլէսպոնտը և լատիններից խլել էր նոցա վերջին երկիրները։ Նա մի տարի զինադադար շնորհեց։ Քաղաքական ասպարիզում եռանդով աշխատում էր։ Բարեկամական կապեր հաստատեց բուլգարների հետ. իսկ Վենետկեցոց համաղօր մրցակիցներին՝ Ջենովացոց բոլորովին իւր կողմը դրաւեց։ Վենետկեցիք նեղսիրտ վաճառականական քաղաքականութեամբ աչքի թոզի էին արել լատինական շահերը։ Յեռոց երբ արդէն ուշ էր, տենդային արագութեամբ զի-

նուում էին և դիմեցին արևմուտքի օգնութեան։ Նիւֆէոնի դաշինքը (1261 թ.) ցոյց է տալիս Միքայէլի մեծ իմաստութիւնը։ Վատացէսի քանիցս կրկնուած անյաջողութիւնները ապացուցել էին, որ Յոյները կորցրել են իրենց ծովային ոյժը։ Ռուսի կայսրը կարիքից ստիպուած Ջենովացիներին առաւել այն բոլոր իրաւունքները և առանձնաշնորհութիւնները, որոնց վրայ հիմնուելով Վենետկեցիք ստեղծել էին իրենց իշխանութիւնը Էգեյեան ծովում, Բոսփորի վրայ և Սև ծովի եզերքում։ Այսուհետև միայն Պելագիների համար էին էլի բաց մնալու տէրութեան և Սև ծովի վաճառականները։ Վենետկեցիք պէտք է զրկուէին Լեվանտի շահաւէտ վաճառականութիւնից։

Միայն 800 մարդով Ալէքսիոս Ստրատեգոպուլոսը կանգնած էր Բոսփորի մօտ. նա լսեց որ Վենետկեցոց նաւատորմիղը Պոդեստա Դանդոլֆոյի առաջնորդութեամբ նաւել է դէպի Դարդանելներ։ Արագութեամբ յունական զօրավարը մայրաքաղաքի բնակիչների հետ համաձայնութիւն կայացրեց։ 1261 թ. Յուլիսի 25-ն բարձրացան քաղաքի պարիսպներով։ Բալդուին Բ կայսրը համարեա առանց կռուի Վենետկեան մի նաւի վրայ փախաւ Նիրէա։ Երբ Ֆրանկները և Վենետկեցիք սկսե-

ցին իրենց թաղերում ընդդիմութիւն ցոյց տալ։ Ստրատեգոպուլոսը այդտեղ կրակ գցեց։ Նաւատորմիղը շատ ուշ հասաւ։ Լատիններին, հոգևորականների և «հերձուածող» պատրիարքի հետ իրենց ունեցածներով գաղթեցին Նիբէա և Վենետիկցոց կղզիները։ Այդպիսով Յոյները առանց նեղութեան, վերջապէս մայրաքաղաքին էլ տիրեցին։ Հին հռովմէական պետութիւնն ամբողջութեամբ վերահաստատուել էր։ և Միքայէլը ժողովրդի անսահման ցնծութիւններով 1261 թ. Օգոստոսի 15-ն մտաւ մայրաքաղաք և երկրորդ անգամ հանդիսով օծուեց երկնային իմաստութեան տաճարում։ Լատինական նախատինքը պատկանում էր անցեալին։

Իբրև յաւելուած այստեղ կաւելացնենք մի համառօտ ակնարկ Տրապիզոնի կայսերական պատմութիւնից։ Անդրոնիկոս Ա Կոմնեն կայսեր սարսափելի դժբախտութեան ժամանակ, երբ նրա ամբողջ տունը ջնջուեց, մի քանի հաւատարիմների յաջողուեց ազնիւ Մանուէլ իշխանի որդիները ապահովապէս փախցնել Վրաստան, որոնք այդ ժամանակ մանկական ամենքնքոյշ հասակումն էին։ Այնտեղ 1184—1212 թ. իշխում էր երկու իշխանների մօրաքոյրը Թամարա մեծ թագուհին, որը տափաստաններում ապրող ցեղերի օգնութեամբ ստեղծել էր վրացոց կարճատև մեծ իշխանութիւնը։ Որովհետև նա Ալէքսիոս Գ.-ի հետ կռուած էր, միջոցներ տուեց իւր քրոջ որդիներին հռովմէական արևմտեան երկիրներում իրենց համար անկախ պետութիւն ստեղծել։ Ալէքսիոսը իւր զինուորներից հռովմայեցիների կայսր հրատարակուեց և 1204 թ. մտաւ Տրապիզոն, որտեղ հաստատեց իւր աթոռը և ընդունեց «Մեծ-Կոմնեն» անունը։ Մինչդեռ իւր եղբայրը յաղթելով հասաւ մինչև Փափլագոնիա։ Ամեն տեղ երկու եղբայրները դրաւեցին հռովմայեցիների սրտերը։ Միայն Սարբասը՝ Ամիսոսի իշխանը, ընդդիմացաւ և Ալէքսիոսը պաշարեց նրա քաղաքը։ Հռովմէական կայսրութեան անկումը, և Նիկիայի կայսրութեան հաստատութիւնը Թէոդորոս Լասկարիսի և Կոմնենի մէջ բարեկամական կապեր հաստատելու որ և է կերպ չնպաստեց։ Ընդհակառակը Դաւիթը փորձում էր օգտուել Փոքր Ասիայի իշխանութեան թուլութիւնից և ընդարձակել իւր սահմանները։ Սակայն երբ Թէոդորոսը միացաւ Սելջուկների հետ, որոնք Ալէքսիոսին հարուածեցին Ամիսոսի մօտ, և Թէոդորոսի Դաւթի դէմ տարած յաղթութիւնը Սանգարիսի ափերում, Կոմնենների յառաջխաղութեան առաջն

առան։ Ի զուր անցաւ նաև այն, որ Դաւիթը Հերակլեայն ապահովելու համար, ընդունեց Լատինների վասալութիւնը, սոցա օգնական գունդը ջնջեց Թէոդորոսը։ 1212 թ. հզօր Լասկարիսը Դաւթից խլեց ամբողջ արևմուտքը և սահմանափակեց նրան Սինոպէի իշխանութեան մէջ՝ Կարամբեսի լեռներից մինչև Հալիս գետը։ Դաւթի համար աւելի վտանգաւոր էին Սելջուկները, որոնք շարունակ ձգտում էին հասնելու ծովը և 1214 թ. յարձակումով առան նրա մայրաքաղաք Սինոպէն, երբ Դաւիթը քաջաբար կռուելով մեռաւ։ Այն երկիրը, որտեղից երբեմն ծագել էին Կոմնենները, ընկաւ Թաթարների իշխանութեան տակ։ Մինչդեռ Դաւթի եղբայրը, Վրացիների օգնութեամբ, կարողացաւ աւելի յաջողութեամբ պաշտպանել Տրապիզոնը Թաթարների յարձակումների դէմ։ Իրաւ է նա էլ ստիպուած էր հարկ վճարել Հռոմին, որպէս զի ճնաստած չլինի երկրի ներսի առևտուրը, որ կենտրոնանում էր Տրապիզոնում։ Նոր կայսրութիւնը բռնում էր մօտաւորապէս հին Պոնտոս Պոլեմոնիակոսը, արևելքից տարածւում էր մինչև Փազիս։ Ալէքսիոս Ա-ի կառավարութիւնը, որ ընտիր կառավարիչ էր և ճշմարիտ իշխանական բնաւորութիւն, ներկայացնում է Տրապիզոնի համեստ իշխանութեան ամենափայլուն շրջանը։ Արդէն նրա մահով սկսում է մի տխուր անկում։ Աւատականութիւնը իւր կռիւներով անկարելի էր դարձնում կարգաւորեալ պետութեան հաստատութիւնը։ Երկու ազնուական դասակարգերի՝ սքոլարների և մեգոսքոլարների կռիւները, որոնք էին Կոմնենների հետ եկած արքունիքի ազնուականները և արևելքում ապրող բնիկ մեծամեծները, տակն ու վրայ արին տէրութիւնը։ Ալէքսիոսին անմիջապէս յաջորդեց նրա փեսա Անդրոնիկոս Գիտոսը, որը իշխեց մինչև 1235 թ. և քաջութեամբ կռուեց Սելջուկների դէմ։ Ալէքսիոսի անդրանիկ որդու կարճատև կառավարութիւնից յետոյ (մեռաւ 1238 թ), յաջորդեց քաջ Մանուէլը, որը Մոնգոլների երկիւղից սերտ միացաւ Հռոմների հետ։ Նրա որդիներից Յովհաննէսը խաղաղութիւն հաստատեց 1282 թ. Պալէոլոգների հետ և մի կողմ թողնելով «Հռովմայեցոց կայսր» տիտղոսը, իրան անուանում էր Արևելքի, Վրաստանի և յայնկոյս ծովի կայսր։ Արտաքուստ այդ շրջանը բաւական խաղաղ էր։ Ալէքսիոս Բ (1297-1330) Կոմնենների մէջ լաւագոյներից մէկը, զէնքի ոյժով կարողացաւ իւր գիրքը պահպանել Ջենովացիների դէմ, որոնք չափը կորցրած էին

վարում՝ ինչպէս Բոսփորի ափերին՝ այնպէս էլ արևելքում։ Նրա մահից յետոյ սկսեցին անտանելի խռովութիւններ։ Անչափահաս Մանուէլի փոխարէն սկիզբը կառավարում էր իւր հօրեղբայր Բաղլեէոսը՝ յետոյ 1340 թ. սրա այրին՝ բիւզանդական Էյրենէ իշխանուհին։ Ազնուականութեան մի մասը օտարուհու դէմ էր՝ միւս մասը պաշտպանում էր։ Քաղաքի փողոցներում փրթկեց կռիւը՝ որի ժամանակ կործանուեց Տրապիզոնի պաշտպան սրբի՝ Ս. Եւգենիոսի վանքը։ Դիարեքիրի թաթարները ասպատակելով հասել էին մինչև քաղաքի դռները՝ նոքա այրեցին արուարձանները և կողոպտեցին օտար վաճառականների դրասենեակները։ Կրկին մի ուրիշ կանայի կառավարութիւն, ազնուական խմբերի կատաղի կռիւներ և գժտութիւններ Ջենովցիների հետ՝ որոնք իրենց դէմ գործած բռնութիւնների վրէժը լուծելով 1348 թ. աւերեցին Կերասոսը և սատակ թուլացրին տէրութիւնը։ Մի և նոյն ժամանակ իշխանական ընտանիքում տիրում էին ուղղակի զզուելի անբարոյական բարք ու վարք։ Սքոլարները 1349 թ. յեղափոխութեամբ գահի վրայ բազմեցրին տասներկու ամեայ Ալէքսիոս Գ-ին՝ որը հասակն առնելով՝ երկիրը բաւական լաւ կառավարեց՝ նոր

դաշնադրութիւն հաստատեց Վենետիկցոց հետ 1367 թ. և ոչնչացրեց Ջենովցիների վնասվաճառութիւնը։ Իսկ քաղաքը զարդարեց եկեղեցիներով՝ վանքերով։ 1390 թ. տէրութիւնը թողեց իւր Մանուէլ Գ որդուն ծաղկեալ դրութեան մէջ։ Սա խոնարհուելով Թեմուր-Լանգի առաջ՝ համարեա անկախ կառավարեց իւր երկիրը մինչև իւր մահը 1417 թ.։ Այստեղից սկսած Մեծ-Կոմնենների պատմութիւնը ներկայացնում է սարսափելի ամենավատ տեսակի խայտառակ գործերի՝ ընութեան հակառակ արատների և հայրասպանութիւնների մի շղթայ։ Այդ բարոյական վայրագութիւնը զարհուրելի ապացոյց է Կոմնենների հին իշխանական տան հոգեկան և փիզիքական կատարեալ անկմանը՝ որտեղ արատները շարունակաբար բարդուել էին սերունդների մէջ։ Հայրասպան Յովհաննէս Դ-ը սատիպուեց Կոստանդնուպօլսի անկումից յետոյ Բարձր-Դրանը հարկ վճարել։ Նա կապեր հաստատեց սպիտակ խոյի թարգմանների հետ և իւր դուստր Կատարինային (Dozpina Katon) Ուզուն—Հասան մեծ խանին կնութեան տուեց։ Երբ նա մեռաւ 1458 թ. նրա եղբայր Դաւիթը՝ հեռացնելով օրինաւոր դահաժառանգին՝ ինքն անցաւ կառավարութեան ղլուխը։ Նա ինչքան էլ երկչոտ

էր և բնաւորութիւնից զուրկ՝ հեռու չմնաց քաղաքական խարդախութիւններից և փորձեց դաշինքներ հաստատել՝ բայց միակ իշխանութիւնը՝ Թուրքմանները արդէն Տաճիկների հետ խաղաղութիւն հաստատեցին։ Տաճկական նաւատորմիղը արդէն պաշարել էր Տրապիզոնը։ Երբ ցամաքային զօրքը մոտեցաւ՝ Դաւիթը անձնատուր եղաւ՝ և աքսոր քշուեց Մաւռոնորոս՝ Սեւէի մոտ։ Սակայն երբ կասկածի տակ ընկաւ՝ թէ յարաբերութեան մէջ է իւր եղբօր ապստամբ՝ մեծ խանի կնոջ հետ՝ կատաղեց սուլթանը։ Որովհետև Դաւիթը աղնուութեամբ հրաժարուեց ընդունել մահմեդականութիւնը՝ մահուան դատապարտուեց իւր եղբօրորդու և եօթը որդիների հետ։ Դեռ աւելի շուտ էր Տրապիզոնը տաճկական քաղաք դարձել։ Սուլթանը մայրաքաղաք տարաւ ազնուականներին և աշքի ընկնող քաղաքացիներին։ Նոցա անները և սեպհականութիւնները բաժանեցին տաճիկ զինուորականների մէջ։ Այդպիսով վերջացաւ՝ Կոստանդնուպօլսի անկումից 8 տարի յետոյ՝ Մեծ Կոմնենի թագաւորութիւնը՝ որը մինչև այդ մոտ երեք դար պետութեան հեռու արևելեան անկիւնում տարածել և պահպանել էր քրիստոնէութիւնը և յունական քաղաքակրթութիւնը։

Թ.

ՊԱԼԷՈԼՈԳՈՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ։

(1261—1453)

Մենակ Յոյների ամենավատ բարեկամները չեն՝ որոնք Կոստանդնուպօլսի վերստին գրաւումը համարում են նոցա ազգային զբաղմունքի ճշմարիտ սկիզբը։ Դրանով նորից վերակենդանացաւ այն դժբախտ ուրուականը՝ որը դեռ այսօր էլ Նոր-Հելլէններին համարեա անպէտք է դարձնում գործնական քաղաքականութեան մէջ՝ քանի որ նոքա հետամուտ են μεγάλη ἰδέα — մեծ դաղափարի օդային պատկերին։ Բուլգարների անխնայ կոտորածները և ոչնչացումը Հիւսիսում և Սելջուկներինը արևելքում թուով այնքան էր նուազեցրել և թուլացրել Յունաց ազգը՝ որ անհնար էր պահպանել առաջուայ մեծ պետութեան դիրքը։ Զնայած դրան՝ հելլենական ազգը դեռ կարող էր դիմանալ՝ եթէ միա-

նար օրթոդոքսութեան միջոցով, երբ այն ժամանակ հաւատոյ կապն այնքան մեծ էր, երկու խիստ ընդունակ և սերտ կապուած սլաւոնական տէրութիւնների հետ, կարող էր իբրև երկրորդական պետութիւն բաւական յարգանք ազդող դիրք ունենալ, եթէ իմաստուն խոհականութեամբ պահպանէր իւր ոյժերը և միջոցները, որ առաջուայ պէս այլ ևս անապառ չէին։ Դրա փոխարէն դեռ Միքայէլը էր հետամուտ ռոմանոիքական ցնորքների, և ինչքան ոգորմելի էր նրա յաջորդների անզօրութիւնը, այնքան աւելի զօրեղացաւ մեծութեան այդ ցնորքը, և այնքան աւելի սկսեցին ցաւակցել և ծաղրի առարկայ դարձնել օրէց օր ղլորուող բիւզանդականութեան նման ընթացքը և այդ անում էր այն գերմանո—ռոմանական տրամաբանը, որ քիչ առաջ դեռ բարբարոսական դրութեան մէջ էր և քաղաքակրթապէս ասիական։ Նոր-Հռովմի առաջը կարել անցել էր։

Միքայէլը ամենալաւ զօրապետ էր և քաղաքագէտ, բայց նա չունէր Վատացէսի վարչական ընդունակութիւնը։ Անգելներից սկսած տէրութիւնը համարեա ոնանկութեան մէջ էր։ Այն ժամանակուայ նախնական արդիական վարչութիւնը դեռ ծանօթ չէր մեծ չափերով փոխառութիւնն։ Սեղ վիճակից ազատուում էին վատ փող կարելով։ Մինչդեռ մինչև Կոմենների ատեն անկումը, բոլոր վաճառականներում իշխում էր բիւզանդական հին լիարժէք Սոլիդոսը և դրանով քիչ չէր նպաստում այն հզօր դիրքին, որ ունէր հռովմէական կայսրութիւնը արևելքի և արևմուտքի բոլոր ազգերի մօտ՝ նոյն Վատացէսը ոսկի դրամները երրորդ մասով խառնել էր։ Այդ եղանակը, որ ՁԼասեց տէրութեան վարկին, Պալէոլոգները այնպիսի մեծ չափերով գործ դրին, որ նոքա արդէն երկրորդ սերնդի ժամանակ գործ էին դնում կիսարժէք ոսկիներ։

Բայց պէտք է ասած այն դժուարութիւնները, որ բարդւում էին նոր կայսր առաջ, շատ մեծ էին։ Աքէայի Վիլհելմը պապի միջոցով լուծեց իւր երդումը, և սկսուեց սահմանային պատերազմ Յոյների և Ֆրանսիացիների մէջ Պելոպոնէսում, որի շնորհիւ երկիրը բոլորովին աւերակ դարձաւ։ Դրա փոխարէն Միքայէլը սատիպեց անհանդիստ Էպիրոդցիներին 1265 թ. իրան զիջանել Յովհաննան, Մինչ այդ փախստական Բալդուին Բ-ը կարողացել էր իբրև դաշնակից գրաւել 1264 թ. Սիկիլիայի Մանֆրեդին, և Ջենովայի ներկայացուցիչը Կոստանդնուպոլսում կամենում էր սոր մատնութեամբ քաղաքը նորից դցել

Լատինների ձեռքը, որի հետևանքն այն եղաւ, որ Միքայէլը Վենետիկեցիների հետ մտնելու առաջի փորձն արեց, որոնք դեռ իշխում էին Ծովերի վրայ և հակաքաղաքական ընթացքով դեռ դանդաղում էին, Ջենովցիներին պատժելով քշեցին Հերակլիա։ Միքայէլը ամեն աեղ թշնամիներ ունէր։ Մարիա Թաթարուհին դժբախտ Յովհաննէս Դ-ի քոյրը, շարունակ գրգռում էր իւր Կոնստանդին ամուսնուն նրա դէմ։ Բուլգարները յաղթութեամբ մտան Մակեդոնիա։ Սակայն Միքայէլը նրանցից խլեց Փիլուպուպոլիսը և Ստենամաքոսը, և յետոյ ահագին նշանակութիւն ունեցող Անքիալոս և Մեղեմբրիա Ծովաքաղաքները։ Ցարը 1265 թ. վայրենի կատաղութեամբ հարաւային Ռուսաստանի Թաթարների հետ այնպէս աւերեց Թրակիան, որ երկար ժամանակ հաւիւ էին դաշտերի մէջ մի երկրագործ նկատում։

Բայց Միքայէլին ղլխաւոր վտանգ սպառնում էր Անժուվիններից։ Պրովանսի Կարոլոս գրաֆը 1266 թ. գրաւել էր Մանֆրեդի տէրութիւնը և երկու Սիկիլիայի Ֆրանսիական թագաւորութիւնը, տարածեց իւր գերիշխանութիւնը նաև Աքէայի վրայ ամեն կերպ օժանդակութիւն գտնելով Կլեմէս Դ պապից որ կուրորէն անձնատուր էր

Ֆրանսիական իշխանին և Բալդուին Բ կայսրից, որ ապրում էր ողորմութիւններով։ Կարլոսը նորոգեց Նորմանների բոլոր պահանջները Ցունաց տէրութեան զանազան մասերի վրայ։

Որպէս զի այդ վտանգի առաջն առնի, Միքայէլը բանակցութիւն սկսեց պապի հետ։ Վերջինիս միջնորդութեամբ 1267 թ. Ջենովցիները նորից ստացան իրենց իրաւունքները. նոցա վաճառականութիւնը Սև Ծովի վրայ սկսեց այնպէս ծաղկել որ երկիւղ էր ազդում Վենետիկեցիներին։ 1275 թ. կայսրը Զաքարիա տանը շնորհեց Փոկէա քաղաքը. այդ տունը ձեռք բերեց ահագին հարստութիւն՝ շահագործելով այնտեղի պաղլեղի հանքերը։

Յետոյ երբ արդէն ուշ էր, հանդէս եկան Վենետիկեցիք. նոքա 1268 թ. հինգ տարի ժամանակով մի դաշնագրութիւն հաստատեցին աւելի անսպասելի պայմաններով, քան որ նոցա առաջարկուել էր 1265 թ։ Բացի այդ, կայսրը պայման դրեց, որ երկու մրցակիցները իրաւունք չպիտի ունենան իրենց մասնաւոր կռիւները մղել իւր տէրութեան ծովերում։ Դեռ միանգամ էլ տէրութիւնը յարգանք ներշնչեց վաճառականներին։

Ամենավտանգաւոր հակառակորդը մնաց

Կարլոս Անժուացին։ 1267 թ. առաւ Կորֆուն։ Միքայել Բ-ի մահից յետոյ (1271 թ)։ դրաւեց Իլլիւրիայի ծովափնեայ երկիրները։ Կաթոլիկ Ալեքսացիք միացան նրա հետ։ 1272 թ. Դիւռախիոնը՝ անձնատուր եղաւ։ Մի առանձին բախտ էր, որ կաթոլիկների հաւատափոխ անելու եռանդը միշտ սարսափեցնում էր օրթոդոքս ազգաբնակութեանը։ Սակայն եռանդոտ Պրովանսացին կարողացաւ Սլաւոն ժողովրդի համակրանքն էլ գրաւել, մինչև որ 1272 թ. Կոնստանդին ցարը Էյրենէի մահից յետոյ ամուսնացաւ Մարիա Պալէոլոգի հետ, որին բաժինք արուեց Մեղեմբրիան և Անքիալոսը։ 1273 նոր ազէտ ծագեց։ Սերբերը 1272 թ. ի վեր, Վարդարի վերին հովտից սկսելով, յաղթութեամբ առաջ էին խաղացել։ Յովհաննէս Դ Լասկարիսը փախաւ Փոջիա, որտեղ Կարլոսը նրան կայսրավայել ընդունելութիւն ցոյց տուեց։ Վենետիկեցիք էլ դաշնագրութիւնը վերջանալուց յետոյ, սկսեցին ծովահինական պատերազմ։ Այն ժամանակ հմուտ քաղաքագէտը, որ միջոցների համար երբէք նեղութիւն չէր կրում, եկեղեցական խնդիր յարուցեց։ Եւ Գրիգոր Ժ-ը բախտ ունեցաւ տեսնելու, որ 1274 թ. Լիոնի ժողովում Միքայէլի դեսպանը՝ Գէորգ Ակրոպոլիտէսը ներկայացրեց յունական եկե-

ղեցու դաւանանքը «filique»—ով և ընդունեց պապի նախապատուութիւնը։ Կայսրը, որպէս զի հանդստացրած լինի Տրնովոյի պատրիարքին և Գեզի ինքնագլուխ մեռրապոլիտին, 1272 թ. ոսկեայ հրովարտակով, որ դեռ պահպանուած է Սինայի վանքում, վերստին հաստատեց Բազիլեոս Բ-ի Օխռիդայի ինքնագլուխ եկեղեցուն բաշխած բոլոր առանձնաշնորհութիւնները։ Այդպիսով Օխռիդայում գտնուող Յոյները ճանաչուեցին երկու պատրիարքութիւնների բոլոր վիճակների տէրեր և հիւսիսի ամբողջ հոգևորականութիւնն ու ժողովուրդը սկսեցին դրաղուել, որ շատ հաճելի էր, մանր վէճերով թեմերի, ինչպէս նաև ազգութիւնների սահմանների խնդիրներով։ Կայսեր կաթոլիկասէր քաղաքականութիւնը հասկանալի էր, եթէ ինկատի առնուի նրա քաղաքական նեղդրութիւնը։ Չնայած դրան, այդ մի ծանր սխալ էր։ Հաւատի խնդիրներում օրթոդոքս հոգևորականութիւնը աւելի էր լսում Աստուծուն քան մարդկանց։ և բացարձակապէս հակառակ էր այն ուսմանը, ըստ որում «պէտք է հեռամուտ լինել շատ հոգիների փրկութեան շահաւէտ անտեսութեան համար»։ Արդէն սկզբից կամակոր Արսենիոսը՝ ազնուութեամբ հաւատարիմ մնալով Լաս-

կարիսի տանը։ Թէև այդ ազրութեան օգուտը չէր։ Նշուել էր կայսերական գահը յափշտակողին։ Յետոյ ինչպէս պատերազմարուեստի վէճերի ժամանակ, հռովմէական տերութիւնից անկախ երկիրները՝ Տրապիզոնը, Նէոպատրէն, Ամբրակիան (Arta) և Բուլգարների թագուհին հանդիսացան օրթոդոքս փախըստականներին հովանաւորողները։ Բայց Միքայէլը մնաց անընկճելի և ըմբոստ ու հակառակասէր Յովսէփ պատրիարքի փոխարէն նշանակեց ճշմարիտ լատինասէր Յովհաննէս Բեկկոսին։ Ամէն կերպ՝ բարոյական վարքով վերջում ցոյց տուած մարտիրոսական առաքինութեամբ, խոհականութեամբ և ուսումնականութեամբ այդ նշանաւոր մարդը շատ էր բարձր կանգնած—կրթական վիճակը վերցրած- իւր և հետևեալ ժամանակների հոգևորական ընդդիմամարտ քարոզիչների և հակաճառող հեղինակներ խմբեց, որոնք սարսափելի սաստ էին. բայց նա էլի ոչինչ չկարողացաւ անել իւր սեպհական հոգևորականութեան դէմ, որ պաշտպանում էր Աստուծոյ և աղդի դատը։ Նկեղեցական վէճերը ամէն տեղ գրգռեցին օրթոդոքս ժողովուրդը այն մարդու կառավարութեան դէմ, որ նրա աղատարարը և քաղաքական իշխանութիւն տուողն էր։

Նեմուս թերակղզու վրայ նրան մեծ նեղութեան մէջ էին ձգել Անգեղները և Ֆրանկները, որոնց հզօրապէս օգնում էր Նէապոլը։ Երբ մանաւանդ Կարլոս Անժուացին պատրաստուեց ինքը գործի գլուխ անցնել, թւում էր թէ նորոգուելու է Նորմանների սոսկալի աղէտը։ Կարլոսը արդէն 1278 թ. Հուգո Ռուսսո դը Սիլլին կարգել էր իւր Էպերոսեան իշխանութեան ընդհանուր զօրապետ և կառավարիչ, որը մեծ եռանդով պատրաստում էր կռուի։ 1280 թ. վերջը նա յոյս ունէր առնել նշանաւոր հերատը։ Բայց Միքայէլը իւր ամենալաւ զօրքով նրան ընդառաջեց։ 1281 թ. Փետրուարին նրա մեծ զօրապետ Միքայէլ Տրաքանիոտէսը հերատի մօտ փառաւոր յաղթութիւն տարաւ։ Սիլլին գերի ընկաւ։ Բայց Մարտին Դ պապի ձեռքով Յուլիս 3, 1281 թ.) Հռովմի, Նէապոլի և Վենետիկի մէջ հաստատած Լիգայի դէմ Միքայէլը կարողացաւ դիմադրել միայն իւր վարժ քաղաքագիտական հնարներով։ Հաւատարիմ Զաքարիա Բենեդետոն և Ջիովաննի դը Պրոչիդան Արագոնի Պետրոս թագաւորին խոստացան յունական փողերով օգնել, եթէ կկռուի Նէապոլի դէմ, և Սիկիլեան երեկոն (10 Մարտի 1282) Կարլոսին բոլորովին թուլացրեց. իսկ կղզին Սպանիա-

ցոց ձեռքը խաղացրեց։ Դրական մտածող Վենետիկեցիք հեռացան անզօր Կարլոսի դաշինքներից։ և 1285 թ. Յոյների հետ հաստատեցին տասնամեայ խաղաղութիւն։ Դեռ փոքր առաջ անխոնջ կայսրը մեռել էր [11 Դեկտեմբերի 1282 թ.) Նէոպատրէի Անգեւների դէմ պրշաւելիս։

ԺԴ դարի վերջի քառորդը առանձին կինք է՝ սատանում օսմանական և սերբական պետութիւնների հաստատութիւնով։ 1288 թ. Օսմանը՝ որ իւր նոր տէրութիւնը հաստատել էր Ռումի աւերակների վրայ՝ մի փառաւոր յաղթութիւնից յետոյ Յոյներից վերցրեց Մէլանգինան (Կարագիհասար)։ Արևմուտքում Սերբիայի Ստեփան Ուրոշ (մեռաւ 1272) և Միլուտին (մեռաւ 1321) թագաւորները կարողացել էին Նեմանա թերակղզու գերիշխանութիւնը ձեռք բերել։ Ընդհանուր պատմական մեծ դժբախտութիւն է՝ որ Կոստանդնուպոլիսի անբախտ օրը խլեց այդ ընտիր ժողովրդից՝ որ բոլոր սլաւոնական ցեղերից ամենաազնիւն էր՝ Նեմանա թերակղզու իշխանութիւնը՝ և այդպիսով ազատ ճանապարհ բաց արեց տաճկական բարբարոսութեան առաջ՝ որի դէմ անզօր էին Յոյները և Վենետիկեցիք։

Միքայէլի որդի Անդրոնիկոս Բ-ը (1282—1328) խելացիութեամբ շտապեց

հաշտութիւն կապել օրթոդոքս հոգևորականութեան հետ։ Նա խաղաղութիւնը հաստատուեց՝ ինչպէս Բիւզանդիոնում սովորութիւն է նման դէպքերում՝ տալով թեան ցոյցերով։ Հասկանալի է՝ որ Բեկկոսը տեղի տուաւ իւր նախորդի՝ Յովսէփի առաջ։ Բայց եկեղեցական վէճերը որ տասնեակ տարիներ շարունակուեցին կենդանի վկայ են՝ թէ նոյն ժամանակուայ հոգևորականութիւնը բարոյապէս և կրօնապէս ինչքան անկեալ վիճակ ունէր։ Վարդապետական զղուելի կռիւները՝ որ վարում էին գլխաւորապէս աննշան և բարոյապէս անարգ եպիսկոպոսները՝ պատում էր համարեա միայն տիեզերական պատրիարքութեան գահակալութեան շուրջը։ Այն կրօնական փայլը՝ որով շրջապատուած էր ս. Յովհան Ոսկեբերանի գահը բոլոր օրթոդոքս ժողովրդների առաջ շնորհիւ գլխաւորապէս սահմանափակ գահակալների այն չափով ընկաւ՝ ինչ չափով ընկնում էր հռովմէական կայսեր փառքը։ Միակամարդը՝ որ ճշմարիտ սրտով մտածում էր եկեղեցու բարօրութեան համար՝ ինքը՝ կայսրն էր՝ որ իւր նոր Էկթեսիսով եկեղեցու մէջ հաստատեց մի կարգ՝ որ համապատասխան էր տէրութեան իսկական դրութեանը՝ որ բաւականաչափ սահմանափակուած էր։

Նրա կարգադրութիւնը, եթէ դեռ արտաքին պատահարները չեն խանգարել, շարունակւում է դեռ մինչև այսօր դոյութիւն ունենալ։

Ցնտեսութիւնը օրէցօր աւելի էր վատանում՝ տէրութեան աճող անկման պատճառով։ Միքայէլը փորձ էր փորձել՝ օգտուելով յունական ծովափի և կղզիների ընտիր մի ծովագնաց ժողովրդից, վերականգնել նաւատորմիղը։ Որպէս թողեց հօր սկսածը։ Ուստի տէրութիւնը ԺԳ դարու վերջի տասնամեակում անզօր խաղալիք էր դարձել երկու ծովագնաց զօրեղ հասարակապետութիւնների վաճառականական կատաղի պատերազմների ժամանակ։ 1303 թ. Վենետիկեցիք Անդրոնիկոսին ստիպեցին խաղաղութիւն հաստատել, որ իրենց համար խիստ շահաւէտ են։ Դրա հետևանքն այն եղաւ, որ կայսրը բոլորովին անցաւ աւելի ազնիւ Ջենովացիների կողմը։

Մինչդեռ կայսերական կառավարութիւնը եւրոպական հողի վրայ առանց հետևանքի շարունակում էր իւր անվերջ կռիւները Անգելների հետ, Ասիայում օսմանական տէրութիւնը օրէցօր աճելով լուրջ վտանգ էր դառնում տէրութեան համար։ և նոքա Բափէոնի մօտ 1301 թ. յաղթեցին Միքայէլ գահաժառանգին։ Միքայէլը Պետեր Արագոնացու հետ բարեկամութիւն ունենալով, Բարսելոնայի վաճառականների առաջ բացել էր Անատոլիայի նաւահանգիստները։ Արևելեան Սպանիայի սատակիկ ազգատ բայց քաջամարտիկ Հիդալգոները (սպանական ասպետները), երբ 1302 թ. խաղաղութեամբ վերջացան Կարլոս Անժուացու հետ մղած պատերազմները մտածեցին նոր գործ որոնել։ Անպարտելի Ռոգեր դը Փլորը 1302 թ. Անդրոնիկոսին առաջարկեց իւր օգնութիւնը՝ 36 նաւ և 6000 Սպանիայի։ Իրաւ է սատակիկ դժուար էր այդ վայրենի զինուորների հետ վարուելը։ Յամենայն դէպս բիւզանդական կառավարութիւնը միանգամայն անզօր էր նոցա զսպելու իւր հին ֆրանկեան անշան դրնդերով և ախրահոչակ բիւզանդական խորամանկութեամբ։ և ստիպուած էր անգործ հանդիստաս լինել, թէ ինչպէս վայրենի վարձկանները Բիւզանդիոնում կռուի բռնուելով Իտալացիների հետ 3000 մարդ սպանեցին։ 1803 թ. յաջղուեց նոցա տանել Ասիա, որտեղ փառաւորապէս ցոյց տուին իրենց քաջութիւնը։ 1304 թ. Տաճիկները արդէն պաշարել էին Փիլադելֆիան, յունական Փոքր Ասիայի ամենահարուստ և զօրեղ քաղաքը, երբ Ռոգեր դը Փլորը իւր կատաղիներով քաղաքին օգնութեան հասաւ։ Սպանական

սուրը սարսափելի կոտորածներ առաջ բերեց Տաճիկների մէջ։ Բայց վիանգամայն անզուսպ հիպալգոնները շուտով ստրուԹեան համար իսկական Թշնամիներից աւելի մեծ պատուհաս դարձան։ Երբ գահաժառանգ Միքայէլը 1305 Թ. խարդախ միջոցով սպանել տուեց Ռոգերին, այն ժամանակ նրա զինուորները վրէժխնդրուԹեամբ լցուած մի տեսակ շարժուն հասարակապետուԹիւն կազմեցին և երկու տարի շարունակ սարսափելից կռիւ մղեցին Յոյների հետ։ Ի վերջոյ այդ անզուսպ զինուորներին քշեցին հարաւ, որտեղ նոքա երկար արկածներից յետոյ 1311 Թ. սոսկալի վախճան պատրաստեցին Աթէնքի և Թեբէի հերձուդուԹեանը Սկրիպուի ճակատամարտի մէջ։ Այնտեղի զրժբախտ Յոյները ստիպուած էին համեմատաբար մեղմ ֆրանսիական իշխանուԹիւնը փոխել սպանական ծանր ստրկուԹեան հետ։

Յոյները գովելի եռանդով կռուում էին առաջ խաղացող Տաճիկների դէմ՝ Բուլգարների և Սերբերի օգնական գնդերով. բայց նոցա նշանաւոր քաղաքները՝ Նիկիան և Պրուսան շարունակ վտանգի մէջ էին Տաճիկների յարձակումներից։ 1320 Թ. մեռաւ Միքայէլ գահաժառանգը։ Սրա զեխ, բայց անձնապէս ասստիկ յարգուած և ոչ անընդունակ Անդրոնիկոս որդին մեծամեծների մէջ իւր համար ստեղծեց զօրեղ կուսակցուԹիւն։ Դրա հետևանքն այն եղաւ, որ պապի, որ իւր ժլատուԹեան պատճառաւ ասստիկ անժողովրդական էր, և թոռան մէջ տեղի ունեցան անհաճելի ընդհարումներ և վերջն էլ ծագեց քաղաքացիական պատերազմ, մինչև որ թոռը աւելի ուժեղանալով ստիպեց 1225 Թ. Փետրուարի 1-ին իրան կայսր օծել և կայսերական դարձաւ։

Ներքին կռիւները ստրուԹեանը բոլորովին թուլացրել էին։ 1326 Թ. վերջապէս Սուլթան Ուրխանի ձեռքով ընկաւ Պրուսան (Brussa), որը դարձաւ տաճիկների մայրաքաղաքը։ 1328 Թ. անձնատուր եղաւ Նիկոմեդիան։ Մինչ այդ երկու կայսրները շարունակում էին կռուել՝ ծերը օգնուԹեան կանչեց Սերբերին, երիտասարդը Բուլգարներին։ Սակայն 1328 Թ. Միքայէլ ցարը յանկարծ անցաւ ծերի կողմը։ Այն ժամանակ երիտասարդը ցոյց տուեց իւր եռանդը։ Սինադենոս պրոտեստարատորը անակնկալ առաւ մայրաքաղաքը. ծերը ստիպուեց հրաժարական տալ և 1330 Թ. վանք մտնել, այնտեղ նա մեռաւ 1332 Թ. Փետրուարի 2-ին։

Անդրոնիկոս Գ-ը մի քանի ընդհարումներից յետոյ խաղաղուԹիւն կապեց Բուլ-

գարնների հետ, որ առաջ էին խաղացել մինչև Դիդիւմոտեյխոն, որով Բուլգարները իրենց բոլոր ոյժը դարձրին Սերբերի դէմ։ 1330 թ. յուլիսի 28-ի Սերբերի թագաւոր Ստեփան Ուրոշը, օգնական ունենալով 300 զրահաւորուած գերմանական վարձկաններ, Վելբուժդի մօտ մի արիւնալից և վճռական յաղթութիւն տարաւ Բուլգարների դէմ։ Միքայէլ ցարը պատերազմում մեռաւ։ Բուլգարների պետութեան ոյժը կոտրուած էր. թէև Սերբերի թագաւորը չոչնչացրեց նրանց կառավարութիւնը։ Մի տարի յետոյ Սերբերի ծեր թագաւորը զոհ գնաց ազնուականների դաւադրութեանը. և գահը բարձրացաւ նրա մանկահասակ Ստեփան Դուժան որդին՝ (1131=1355) սերբական մեծ պետութեան հզօր հիմնադիրը։ Ցաւալի է, որ նրան չյաջողուեց, ինչպէս ծրագրել էր, բոլորովին հեռացնել Ֆրանկներին և Յոյներին և այդպիսով հիմուս թերակղզու վրայ ստեղծել քրիստոնէական դոյութիւն պահպանելու ընդունակ մի միապետութիւն, որով կարող կլինէր զօրեղ պատնէշ կանգնեցնել տաճիկների՝ քաղաքակրթութիւնը ջայջախող բարբարոսութեանը։ Այնուամենայնիւ նրա իշխանութիւնը սաստիկ զօրեղացաւ։ Նա խնամութեամբ միացաւ Բուլգարների նոր ցար

Յովհաննէս Աղէքսանդր Ասէնի հետ (1331—1365)։ Մեծ յաջողութեամբ ընթացաւ Մակեդոնիայում և Իլլիւրիայում։ Օխրիդան, Պրիլիպը, Կաստորիան 1331 թ. ընկան նրա իշխանութեան տակ։

Անդրոնիկոս Գ-ը 1334 թ. Թեսալիայում և Էպիրոսում Անգելների ժառանգի գրաֆ Ջիովաննիի հաշուին հզօրապէս տարածել էր Յոյների իշխանութիւնը. իսկ վերջինի մահից յետոյ 1335 գրաւեց ամբողջ երկիրը։ Սակայն Սերբերի միջամտութիւնը փոփոխութիւն առաջ բերեց։ 1340 թ. դոքա տիրեցին ամբողջ երկրին մինչև Յովհաննինան և իրենց տիրապետութիւնը պաշտօնապէս ընդունել տուին Յոյներին։ Ասիայի մէջ Յոյների ձեռին մնացել էր համարեա միայն Փիլադէլֆիան։ Յունաց Ծովափնեայ քաղաքները Օսմանցիներին հարկ էին վճարում։ Բայց երբ 1337 թ. Ուրխանը փորձեց եւրոպական հողի վրայ հաստատուն դիրք ձեռք դրել՝ Յոյները փառաւորապէս նրան յետ մղեցին։ Բացի այդ, Անդրոնիկոսը միանգամ էլ հասկացաւ Ջենովցիներին յարգանք ազդել։ Երբ որ Փոքր Ասիայի Ծովափերում Սելջուկները կազմակերպել էին կանոնաւոր Ծովահիւսութիւն և մարդորսութիւն, և դրանով մի տեսակ պատուհաս էին ներկայացնում Արխիպելագի բա-

14 + 15 = 29

ժան-բաժան մանր իշխանութիւնների համար։ Բիւզանդացիները սակայն նորից ուշք դարձնել ծովային ուժի վրայ, որը այնքան ժամանակ անխնամ էին թողել։ Ապոկաուկոսը 1329 թ. Ջենովացիներից առաւ Քիոսը, որը ծովի մէջ գլխաւոր կենտրոն դարձաւ Ցաճիկների դէմ։ Փոկէայի Զաքարիան ժառանգները՝ Կոտանտինները սակայն նորից գրաւեցին խոնարհեցնել Բիւզանդացիներին։ Դրա փոխարէն Դոմենիկոն Փոկէայից Նաքսոս և Հոդոս կղզիների բնակիչների հետ միացած 1333 թ. ակրութիւնից խլեց Լիսբոսը։ Սակայն Անդրոնիկասը, որ իւր միջոցների ընտրողութեան մէջ միանգամայն հաւասար էր Դատարացիներին, Սարուխանի Այդնի սելջուկեան Էմիրների հետ դաշինք կապեց Օսմանցիների դէմ, որոնք քիչ առաջ նուաճել էին Կարասուի Էմիրութիւնը։ 1336 թ. Կայսրը տիրեց Լիսբոսին և 1340 թ. Ջենովացիները կորցրին Փոկեան յոյն բնակիչների ապստամբութեամբ։

Անդրոնիկոսի մահից յետոյ (1341 թ. յունիսի 15) գահ բարձրացաւ նրա որդի Յովհաննէս Ե. (1341—1391)։ Խնամակալութիւնը տուել էին այրի կայսրուհի Աննա Սավոյեացու անզօր ձեռքը։ Սակայն ամենակարող Յովհաննէս Կանտակուզէնոսը՝

զօրքի ընդհանուր հրամանատարը, խլեց խնամակալութիւնը, իսկ Ապոկաուկոսն անցաւ խնամակալուհու կողմը։ Մինչդեռ Կանտակուզինոսը 1341 թ. Դիդիւմատեյխոսի մօտ մեծ պատրաստութիւններ էր տեսնում որպէս զի անիշխանութեան մատնուած Մօրեան նորից գրաւի տիրութեան համար, Կոստանդնուպօլսում տեղի ունեցաւ նրան հակառակ յեղափոխութիւն և Ապոկաուկոսը անցաւ կառավարութեան գլուխը։ Այն ժամանակ Կանդակուզենոսն այլ ևս երկար չհամբերից, նա 1341 թ. հոկտեմբերի 26ին Յովհաննէս Զ. անունով կայսր օծուեց։ Դրա հակառակը, արքունիքը հանդիսաւոր կերպով օծել տուաւ մանուկ Յովհաննէս Ե. օրինական պատրիարքի ձեռքով[1] և Ապոկաուկոսը կարգուեց Մեղաս դուքս—Մեծ իշխան. կուսակալների մեծ մասը Կանտակուզինոսի կողմն էին, մինչդեռ ժողովուրդը և տեղական պաշտօնեաները բռնել էին օրինական կառավարութեան կողմը։ Այդ ձևով Ապոկաուկոսը կարողացաւ իւր հակառակորդից խլել Թրակիայի մեծ մասը։ Ադրիանուպօլիսը իւր դրոները փակեց նրա առաջ։ Իսկ Յովհաննէս

1. Յովհաննէս Զ. օծուեց եւ թագ դրաց Դիդիւմօտէյխոսի եպիսկոպոսից։

Անգելոսը Էպիրոսի կուսակալը և Օմար բէկը Այդնի Էմիրը օգնում էին Կանտակուզենին. մինչդեռ կառավարութիւնը արքայական թանկագին քարերը գրաւ էր դնում Վենետիկեցւոց մօտ։ Կանտակուզենը օգնութեան կանչեց Սերբերին։ իսկ նրա ամուսինը պաշարուած լինելով Դիզիմոտեյխոսում կանչեց Բուլգարներին։ Սոքա թէ և հալածեցին Յոյներին։ բայց պահանջում էին բերդն իրենց տալ։ Միայն Այդնի Թուրքերը ազատեցին կայսրուհուն։ Սակայն Յովհաննէս Զ-ի գրժտութիւնը Ստեփան Դուշանի հետ կարծես արագացնելու էր նրա կորուստը. բայց Յովհաննէս Անգելոսի մի յոյժ թական արշաւանքը գրաւեց նրա համար ամբողջ հարաւային Մակեդոնիան. մինչ այդ 1343 թ. պապի ձեռնտուութեամբ Վենետիկեցիների և Կիպրոս կղզու և Արքիպելագոսի Փրանկների մէջ հաստատուած Լիգան նուաճեց Զմիւռնիան։ Թեսալոնիկէն Ապոկաուկոսն ազատեց իւր նաւատորմիղով։ Անօգուտ անցաւ խնամակալուհու դեռ օգնութեան դիմումը՝ Բուլգարներին և Սերբերին։ Ազէքսանդր ցարը գրաւեց իրրև վարձ, իրեն խոստացած Փիլիպուպոլիսը և Ռոդոպէ լեռներում մի շարք դղեակներ։ Ուրիշ ոչինչ չկարողացաւ կատարել։ 1344 թ. Կանտակուզենոսը իւր կողմը գրաւեց Բուլգար-

ների աւազակապետ Մոմչիլոյին։ որը սկիզբը օգնեց նրան 5000 սերբ և բուլգար վարձկաններով։ բայց շուտով բաժանուեց և յարձակուեց Կանտակուզենի բանակի վրայ Մեսենայի աւերակների մօտ։ Կայսրը հազիւ կարողացաւ ազատուել։ Մոմչիլոն ամուր դիրք ստեղծեց Քսանթեյում և սկսեց կողոպտել Խալկիդիկէն։ Այն ժամանակ Կանտակուզենոսին օգնեց իւր հաւատարիմ Օմար բէկը։ Նա 1345 թ. Փրանկներին խիստ ջարդ էր տուել Զմիւռնիայի մօտ և կրկնակի պատճառունէր Մոմչիլոյի վրայ բարկանալու։ որովհետև վերջինս կրակել էր նրա նաւերը Արդերայի մօտ։ Մոմչիլոն շրջապատուելով Պերիթէորիոնի մօտ կայսրից և նրա տաճիկ բարեկամից։ սպանուեց իւր վարձկաններից շատերի հետ։

Նրա Քսանթէյա քաղաքն անձնատուր եղաւ։ 1345 թ. յունիսի 11-ին սպանուեց նաև խստաբարոյ։ բայց քաջ Ապոկաուկոսը. այնպէս որ խնամակալուհին առանձնացած մնալով։ դիմեց Օսմանցիների օգնութեանը։ Սակայն հմուտ քաղաքագէտ Կանտակուզենը նոցա գրաւեց իւր կողմը։ Իւր բարեկամները 1347 թ. փետրվարի 3-ին բաց արին քաղաքի դռները։ Խնամակալուհին ստիպուեց ընդունել բոլոր պայմանները։ Յովհաննէս Զ. հանդի-

սաւոր կերպով նորից օծուեց. նա մենակ պէտք է կառավարէր միայն սասն տարի, յետոյ պէտք է Պալէօլոգին պաշտօնակից անէր։ Գահակալական այդ կոիւը, որ մղուել էր ամենայն խստասրտութեամբ և որի ժամանակ նուիրել էին հիւսիսային նահանգները, ընդ միշտ թոյլացրել էին տէրութեան ոյժերը։ Ճշմարիտ կայսրը Ստեփան Դուշանն էր, որը նուաճեց Սեռէն և Ամֆիպոլիսը (1345 թ.) և Յոյների ձեռքին թողեց միայն Թեսալոնիկէն՝ ու Խալկիդիկէն։ Ռպեկի (Pec) ինքնագլուխ մետրապոլիտը Տրնովի պատրիարքի և Օհրիդոյի ինքնագլուխ արքեպիսկոպոսի համաձայնութեամբ կարգուեց Սերբիայի պատրիարք, որի անունը Յովհաննէս էր։ Նոր պատրիարքը Տրնովոյի Սիմէօն պատրիարքի հետ 1346 թ. Դուշանին օծեցին Սկոպիոյի մայր եկեղեցու մէջ Սերբերի և Յունաց ցար։[1] «Նրա իշխանութիւնը հասնում էր Արդայից մինչև Բելգրատ, Դալմատիայի ժայռոտ ափերից մինչև Մեսատ»։

Այդ կենսունակ մեծ պետութիւնների մօտ, յոյները, որ արդէն երրորդ կարգի պետութիւնների շարքին էին հասել, շարունակում էին իրենց ողորմելի կռիւները։ Յովհաննէս Զ-ը իւր Մատթէոս որդուն, որը ձգտում էր տէրութեան ժառանգը լինել, տուեց Ռոդոպէ հին եպարքոսութիւնը իբրև մի տեսակ սեփականութիւն։ Յետոյ դարձեալ Պալէոլոգների կուսակցութեան դժգոհութիւնը շարժելով, իւր ընդունակ Մանուէլ որդուն ուղարկեց Միւսիթրա, որը վերջինս կառավարում էր գեղեցիկ կերպով։ Կայսրութեան թուլութիւնը երևում էր Ջենովցիների բռնած հպարտ դիրքից, որոնք վաճառականական և մաքսային խնդիրներում այնպէս էին վարում, որ կարծես թէ իրենք էին Յոյների տէրերը։ Այդ պատճառով երբ Վենետիկցիների և Ջենովցիների մէջ շարունակւում էր կատաղի ծովային պատերազմը, որ մղում էին ըստ մեծի մասին յունական ծովերում, կայսրը Վենետիկեցւոց կողմն էր, մինչև որ 1352 թ. Ջենովցիները սարսեցին նրան նոր դաշնագրութիւն հաստատել։ Շուտով երկու կայսրների մէջ վրթիկեց ներքին կռիւ։ Յովհաննէս Ե-ին օգնում էին Վենետիկեցիք և Սերբերը, Յովհաննէս Զ-ին Օսմանցիք։ 1353 թ. վերջիններս յաղթեցին Սերբերին Դիպիւմատէյխոսի մօտ և Կանտակուզենոսը իւր որդի Մատթէոսին կայսրակից կարգեց։

1. Նա իւր նրովարտակների մէջ իրեն անուանում էր ցար եւ իշխան Սերբերի եւ Յոյների, Բուլղարների եւ Արբանցիների։

Նրա պարտազանց խելացնոր փառասիրութեանը, որի պատճառով հրաւիրել էր Օսմացիներին, իսկապէս զոհ գնաց Յոյների պետութիւնը։ 1354 թ. տաճիկները գրաւեցին Կալիպոլիսը. այդպիսով նոցա առաջ բացուած էր Եւրոպայի ճանապարհը։ Այն ընդհանուր ատելութիւնը, որին ենթակայ էր ծեր անարժան կայսրը, հեշտացրեց Պալէոլոգի գործը. և նա կարողացաւ 1354 թ. խորամանկութեամբ տիրել մայրաքաղաքին և իւր ծուղակի մէջ ընկած հակառակորդին ստիպել՝ հրաժարուելու։ Նա վանք մտաւ Յովասաֆ անունով, գրեց իւր պատմութիւնը և անձնատուր եղաւ աստուածաբանական ուսումնասիրութիւնների, մինչև իւր երկարատև կեանքի վերջին օրերը (1383 թ)։ Նրա Մանուէլ որդին, որ հզօրապէս պաշտպանում էր, ճանաչեցին Մեզիթրայի տէր։ Մատթէոսը ստիպուած էր 1357 թ. նոյնպէս հրաժարուել. այդպիսով վերջապէս Յովհաննէս Ե. ճնաց միապետ և օրինաւոր հարստութիւնը վերահաստատուեց։

Մինչդեռ այդ ներքին պատերազմը, որ գաղափարից զուրկ էր, և ծագել էր միայն մի անհատի անձնական փառասիրութիւնից, մաշում էր հռովմէական զառամեալ պետութեան վերջին ոյժերը, մի և նոյն ժամանակ

տէրութեան մտածող դասակարգի մէջ շարժուել էր եկեղեցական կոիւ, որ պատկանում է բոլոր ժամանակների ամենազարմանալի և քաղաքակրթական պատմական ամենահետաքրքիր և արտասովոր երևոյթների կարգին, թէ և աւանդական առասպելը, որ ոսվորցնում են եկեղեցական պատմութեան անուան տակ համալսարաններում և սեմինարիաներում, սովորաբար հայտարարում է այդ գէպքը միայն լոկ ժամանակ վրա ծաղր թափելու համար։ Թէ և, իրաւ է, այդպէս ծաղրելով, ցոյց են տալիս կատարեալ անհասկացողութիւն մարդկային պատմութեան կարևոր խնդիրներն ըմբռնելու մէջ։ Մակեդոնիան կայսրների օրերից սկսած, Մալկիզիկէ Թերակղզին մի տեսակ սրբավայր էր դարձել, որտեղ Պերիկլէսի և Դիմոսթենէսի ժամանակները ծաղկում էին բազմաթիւ յոյն քաղաքներ։ Թերակղզին ծալն է մտնում դէպի հարաւ, կազմելով լեզուակներ, որոնք երեք մատների նմանութիւն ունին. դոցանից ամենահիւսիսայինը, Աթոսի լեռները, ժողովրդի մէջ «սուրբ լեռան» հռչակ ստացան, որովհետև այն տեղի խցերում սկսեցին ապրել սուրբ ճգնաւորներ։

Հռչակաւոր մենաստանի հիմնադիրը Ս. Աթանասն է՝ Նիկեփորոս Փոկասի ժամանա-

կակիցը՝ որին վերջինս շատ էր յարգում. նա նրան իւր հետ վերցրեց իբրև քարոզիչ Նրեաէի արշաւանքի ժամանակ՝ 962 թ. Աթանասը վանքի հիմքը դրեց և ս. լեռան վրայ ոչ առանց հակառակութեան մացրեց ս. Ստիւդիոնի կանոնները։ Յովհաննէս Չմշկկի սահմանադրութիւնը կարդի տակ դրաւ լեռնակեացներին՝ որոնք բաղկացած էին ճգնաւորներից և մենակեացներից. կառավարութիւնը կազմում էին վանականների ժողովն և կայսրից նշանակուած առաջնորդը։ Ո՛չ մի կանացի էակ չէ կարող մրցովել խաղաղութիւնն այդ—Gens aeterpa in qua nemo nascitur—յաւիտենական ցեղի՝ որի մէջ ոչ ոք չէ ծընւում։

Կայսեր շնորհքը և հաւատացեալների ընծայաբաշխութիւնները ամենահեռու արևմուտքում անգամ (Ամալֆիտանների վանքը) բազմացրին վանքերի թիւը մինչև Կոստանդին Մոնոմախոսի ժամանակ՝ որը հրատարակեց երկրորդ սահմանադրութիւնը։ Բոլոր կայսրները՝ Կոմենները ինչպէս նա և Պալէոլոգները մրցում էին միմեանց հետ՝ վերջինները մինչև անգամ իրենց թոյլ ոյժերից վեր՝ ոսկեգիր հրովարտակներ արձակելով և յունական բարեպաշտութեան այդ սրբավայրին հարուստ ընծաներ պարգևելով։ Բոլոր

օրթոդոքս ժողովուրդների ճգնաւորները և միայնակեացները այդ տեղ էին գտնում իրենց հայրենիքը։ Հելլենախօս բազմաթիւ միայնակեացներին միանում էին սերբ՝ բուլգար՝ ռուս և վրացի վանականներ։ Ս. Սաւա՝ Սերբիայի ազգային նուիրապետութեան մեծ հիմնադիրը՝ այդ տեղ հիմք դրեց հռչակաւոր Խիլանդարի վանքին՝ որը յետոյ ահագին նշանակութիւն ունեցաւ սլաւոնական քաղաքակրթութեան պատմութեան մէջ։ Այդտեղ վարդապետական խցերում՝ մտածողութեան նուիրած կեանքում ստեղծուել էր մի տեսակ աստուածային իմաստութեան ուսումն (Theosophie) որ խիստ յիշեցնում էր—ինչ որ առանձնայատուկ է բոլոր խորհրդաւոր դաղանի կրօնների—(mystik)—՝ պարսկական իմաստակութիւնը (sofismus) կամ հնդկական ջղաձգութիւնները (Zogiverzückung)՝ ինչպէս որ Դիմիտրոսցիստները՝ հիպնոզական զառանցմունքի մէջ՝ աչքերը անթարթ օձոքին յառած՝ ընարեալները նայում էին աստուածային անսահման լոյսին՝ որը շրջապատել էր Քրիստոսին Թաբոր լերան վերայ այլակերպութեան ժամանակ։ Զանազան դաւանութիւնների այն օրթոդոքսութիւնը՝ որ միշտ ձգտում է բնական բացատրութիւն տալ բոլոր երևոյթներին և որ սովորական բնազդական տհաճութիւն զգա-

լով գէպի իւրաքանչիւր խորհրդաւորութիւն, հաշուում է այդ ուղղութեան մարդկանց իրրև հերձուածողների, այդպէս էլ վարուել է հին եկեղեցին Աւղիանցոց և Նեքիտացոց հետ, հռովմէական եկեղեցին Ֆրատիկելների և Մոլինիստների հետ. վերջապէս «մաքուր ուսման» լուսերականութիւնը դէմ է եղել որ և է Շվենկֆելդի, Վ. Վիյդելի, Ի. Առնդի կամ Ի. Բեօմի «զառանցութիւններին», որոնք իրրև անձինք բարեպաշտութեամբ խիստ բարձր էին կանգնած։ Բուսնաստանում օրթոդոքսութիւնը խորհրդաւորական գաղտնի ուսման կողմը բռնեց, որովհետև դրա դէմ էին երկու մարդիկ՝ Բարլաամը և Ակինդինոսը, որոնք իրրև լատինասէրներ գրականութեան մէջ ծաղրում էին զառանցքների նուիրուած վարդապետներին. մինչև անգամ Բարլաամը ծաղրում էր Կալաբրիայից, որ թէ և յունական երկիր էր, բայց «հեստեալ էր»։ Այդ արդէն բաւական էր, որ ժողովուրդն ու հոգևորականութիւնը Լեռան սրբերի դատը յունական ազգային գործ համարէր։ Երբ 1341 մինչև 1351 թիւը երկիրը աւերակ էր դառնում ներքին վայրենի պատերազմներից, շարունակ ժողովներ էին գումարում, պատրիարքներ փոխում և հաստատում. սակայն «Օմֆալոփսիխիտները», փառաւոր յաղթութիւն տարան, որոնց գլխաւորներ ներկայացուցիչներն էին Թեսալոնիկէի վերջի արքեպիսկոպոսները՝ Գրիգոր Պալամասը և Նիկեփոր Կարասիլասը, դոքա երկուսն էլ ներկայանում են իրրև յունական կրթութեան և խորհրդաւորութեան ճշմարիտ ակնաւոր ներկայացուցիչներ։ Ս. Լեռան մնաց իրրև ճշմարիտ հնաւանդ Սիոն։

Մի ամբողջ ժողովրդի մահուան այն աշխարհասասան ապէսի և մրցման ժամանակ, երբ Բոյների տերութիւնը անխնայ Օսմանցիների ոտի տակ ջախջախուում էր, Աթոռը ներկայանում էր այնպիսի մի ապաստանարան, դէպի ուր դիմում էին սրտաբէկները խաղաղութիւն որոնելու. մինչև զօրեղ սրտերի տէր մարդիկը, աշխարհային կեանքից յուսահատուած և մոլորուած ուզում էին կռթնել Աստուծոյ հետ այդ առնձնութեան մէջ։ Միայն վարդապետութիւնն էր որ այն ծանր ժամանակներում ճշմարիտ և յարատև մխիթարութիւն էր բերում վիրաւոր ազգին։

Բուսական ազգի միւս մասը, քանի որ երկրային կեանքի փոխարէն իւր համար չէր ընտրել «հրեշտակների վարքը», սարսափահար էր նայում քաղաքական դրութեան վրայ։ 1355 թ. Սաթիան Դուշանի մահը արևելեան քրիստոնէութեան նկատմամբ ընդ-

հանուր պատմական մեծ ազէտ էր։ Աւատա-
կանութեան և ցեղական առանձնացման կենտ-
րոնախոյզ կործանիչ ոյժերը կոր կոր փրշ-
րեցին սերբական թագաւորութեան փառա-
ւոր շինութիւնը, Սերբ և Արբան իշխանները
բաժանուեցին, Բոսնիան անկախութիւն ստա-
ցաւ։ Այդպիսով քրիստոնեաները խելակորոյս
կուրութեամբ իրանք իրենց անդամահատում
և թուլացնում էին, երբ արդէն կորուստը
ինքն իրեն մօտենում էր։

Օսմանցիների առաջի հարուածը ամե-
նից առաջ հասաւ ոպորմելի Ցոյն տէրու-
թեանը։ 1360 թ. սուլթան Մուրատ Ա-ը
անցաւ Հելլէսպոնտը։ Արդէն մի տարի յետոյ
առաւ Ցուռալոն և Դիպիմոտեյխոս նշանա-
ւոր բերդերը, և չնայած քաղաքացոց քաջ
ընդդիմութեանը, Ադրիանուպոլիսն էլ նուա-
ճեց, որ տէրութեան երկրորդ գլխաւոր քա-
ղաքն էր, և որը նա 1365 թ. իւր մայրա-
քաղաքը դարձրեց։ 1363 տիրեց Փիլիպու-
պոլսին, յետոյ Սեռէնն, իսկ 1365 թ. դա-
շինք հաստատեց Ռագուզայի հասարակապե-
տութեան հետ, որ իւր ձեռին ունէր Բալ-
կան թերակղզու ցամաքային վաճառականու-
թիւնը, ընդունելով սոցա առանձնաշնորհու-
թիւնները։

Չնայած Օսմայինները այդպիսի յառա-

ջադիմութիւն էին անում, քրիստոնեայ փոք-
րիկ պետութիւնները չկարողացան միանալ։
Յովհաննէս կայսրը վէճի մէջ էր իւր որդի
Անդրոնիկոսի հետ, և երբ 1365 թ. գնացել
էր Ցրնովս դաշինք կապելու Ցաճիկների հետ,
Շիշման ցարը՝ Անդրոնիկոսի ընկերը, նրան
գերի բռնեց։ Կայսեր օգնութեան հասաւ
1366 թ. իւր հօրեղբօր որդի Սավոյեայի
գրաֆ Ամադէոն, որը առաջ Օսմանցիներից
առաւ Կալիպօլիսը և յետոյ ասպատակելով
բուլղարական Պոնտոսի Ցովհղերքը, Շիշմանին
ստիպեց ազատել կայսեր։ 1369 թ. կայսրը
վճռեց դնալ Ավինիոն, որպէս զի պապից խնդ-
րէ՝ նեղն ընկած տէրութեանը օգնութեան
հասնել։ Բայց ի զուր անցաւ նա և, որ յու-
նական ձեւով, առանց կարգալու ստորագրեց
իւր առաջը դրած հաւատոյ հանգանակը։
Ուրբան Ե. պապը չէր կարող, կամ չկամե-
ցաւ զինուորական օգնութիւն տալ։ Թէ ինչ-
քան խորն ընկել էր Ցոյների կայսեր պա-
տիւը, որ մի ժամանակ ամենակարող էին,
ցոյց է տալիս Վենետիկեցոց արարմունքը։ Այն-
տեղի բանկիրները, որոնք պապի մօտ գնալու
համար կայսեր ճանապարհորդական փող էին
տուել, նրան պահեցին Վենետիկում։ և նրա
որդի Անդրոնիկոսը, որին Կոստանդնուպոլսի
կառավարիչ էր կարգել, հրաժարուեց վճարել

նրա ծախքերը։ Միայն միւս որդի Մանուէլը, որ իշխում էր Թեսալոնիկէում, 1370 թ. մեծ զոհողութիւններով հօրը հնարաւորութիւն տուեց վերադառնալ հայրենիք։ Այդ աղքատ իշխանների խղճալի արարմունքները շարժում էր Եւրոպացոց արհամարհանքը, որոնցից շատ նշանաւոր իշխանական տներ հրաժարւում էին ամուսնական կապեր հաստատել Պալէոլոգների հետ, որոնք նոցա աչքում հաւասար ասպետական չէին։ Յովհաննէսը իւր վրէժը լուծելու համար, 1371 թ. իւր Անդրոնիկոս որդուն զրկել էր գահակալութեան իրաւունքից, և նրա տեղը նշանակել Մանուէլին։ Իսկ իւր փոքր տերութիւնը դարձրեց տաճիկների ուաստականութիւն։ Բայց երբ ստորացած կայսրը իւր զօրքի գլուխն անցած գնաց Ասիա, Անդրոնիկոսը և Մուրատի որդի Սանջին, որ նրա հետ բարեկամացել էր, ապստամբեցին։ Սակայն Մուրատը իւր սովորական արագութեամբ ընկճեց այդ շարժումը։ Տաճիկների իշխանին գլխատեցին, Անդրոնիկոսին կուրացրին։ Երբ կայսրը Վենետիկցոց հետ բարեկամացաւ, Ջենովացիք օգնեցին նրա որդուն. նա բանտից ազատուեց, 1376 թ. ներս մտաւ քաղաքը, գահընկեց արեց հօրը, Հոկտեմբերի 18-ն Անդրոնիկոս Դ անունով օծուեց։ Ցունական այս

փոքրիկ խռովութիւնները շատ աննշան էին և ոչինչ էին համեմատած այն հզօր պատերազմների հետ, որ ծագել էին երկու հասարակապետութիւնների՝ Ջենովայի և Վենետիկի մէջ՝ միացած Միջերկրական բոլոր ծովային պետութիւնների հետ և որ վերջացան միայն 1381 թ. Տուրինի խաղաղութեամբ։

Ինչպէս Ասիայում, Եւրոպայում էլ Օսմանցիները շուտով դարձան բացարձակ հրամանատարներ, երբ նոքա 1389 թ. Կոսովո Պոլիէտաք ճակատամարտում ջախջախել էին Սերբերի տերութեան ոյժը, որ երբեմն այնքան փառաւոր էր։ Սուլթան Մուրատը այդ յաջողութեանը, որ ընդհանուր-պատմական տագին նշանակութիւն ունեցաւ, ինքը զոհ դնաց։ Բայց նրա որդի Բայազիտ Ա-ը կատարելապէս հասկացաւ օգտուել տարած յաղթութիւնից։ Պալէոլոգների հետ վարւում էր արհամարհանքով։ Փիլադելֆիան, որ միակն էր կարողացել Փոքր-Ասիայում պահպանել իւր

յունական անկախութիւնը, ստիպուեց յարմար պայմաններով անձնատուր լինել։ Բայազիտը պահանջել էր դահաժառանգ Մանուէլին հետեւել նրան։ Այդ հանգամանքից օգուտ քաղեց Անդրոնիկոսի որդին՝ Յովհաննէս Է-ը, որը միացած Թեսալոնիկէի և Սելիւմբրիայի հետ, զլորեց իւր պապին և 1390 թ. ինքը գահ բարձրացաւ։ Արդէն նոյն տարուայ Սեպտեմբերին, Մանուէլը վերահաստատեց իւր հօրը։ Բայազիտը ստիպեց ծեր կայսեր իւր ձեռքով քանդել տալ քաղաքի պարիսպների ամրութեան համար կատարած վերանորոգութիւնները։ Յովհաննէսը այդ անպատուութեան վշից մեռաւ 1391 թ. փետրուարի 16-ին երկարամեայ, անփառունակ կառավարութիւնից յետոյ։

Նրա ընտիր Մանուէլ որդին (1391—1423), որ ապրում էր Բայազիտի արքունիքում Բուրսայի մէջ, իսկոյն շտապեց մայրաքաղաք կառավարութեան գլուխն անցնելու։ Օսմանցին պատժեց նրա այդ ինքնագլուխ վարմունքը, աւերելով նրա փոքրիկ իշխանութիւնը մայրաքաղաքի շրջակայքում և ժամանակաւորապէս դրաւելով Թեսալոնիկէն։ Սակայն վայրենի աշխարհակալը իւր ուշքը շուտով դարձրեց հարաւային Սլաւոնների վրայ։ Նա նուաճեց Տրնովոն՝ ցարերի փառաւոր քաղաքը և Բուլգարիան մի փաշայութիւն դարձրեց։ Մի և նոյն ժամանակ Կոստանդնուպոլիսը, ինչպէս երբեմն Նիկիան և Պրուսան, տաճկական հին փորձուած եղանակով, կանոնաւոր պաշարման մէջ դրին։ Տեսան որ դրութիւնը լուրջ է։ Բայազիտը կամենում էր Յոյների տերութեան տուներն էլ ջնջել։ Մանուէլը նեղն ընկած, դիմեց արևմուտքի օգնութեանը, այնտեղ էլ տեսնելով տաճիկների անդադար յառաջդիմութիւնը, միանգամ ևս ոտքի կանգնեցին՝ միացեալ ոյժերով անհաւատների դէմ կռուելու։ Հունգարիայի Սիգիզմունդ թագաւորը մի խառնակ խաչակիր զօրքի գլուխն անցած, որի մէջ գլխաւոր տեղը բռնում էին Ֆրանսիական ասպետները, երկաթի գռներից անցաւ դէպի հիւսիս։ Վալախիայում՝ երկրի Միրզա իշխանն էլ միացաւ նրա հետ, որին 1394 թ. Բայազիտը փառաւոր Ջարդ էր տուել և Դանուբի միս կողմը քշել։ 1396 թ. Սեպտեմբերի 12, քրիստոնեաների զօրքը հասաւ Նիկոպոլիս։ Բայազիտը արագ ընթացքով, թողնելով Կոստանդնուպոլսի պաշարումը, արշաւեց նոցա դէմ և իւր զօրապետական հանճարով փառաւոր յաղթութիւն տարաւ։ Մանաւանդ որ քրիստոնեաների մէջ կարգ չկար և Ֆրանսիական ասպետների գոռոզութեան

պատճառով անկարելի էր եղել պատերազմի համար խելացի ծրագիր կազմել։ Քրիստոնեաները զգային պարտութեան հեռանքները։ Եվրենոս բէկը ապշաւեց Պելոպոնէսի վրայ, որտեղ յունական մասի՝ Միւսիթրայի իշխանութեան հրամանատարն էր կայսեր եղբայր Թէոդորոս Պալէոլոգն՝ 1384 թ. Կանտակուզէնի տան ամուսնից յետոյ։ Նա յաղթուեց Լենոնտարիոնի մօտ և պարտաւորուեց հարկ վճարել Թուրքերին։ Սակայն քաջ իշխանը միացաւ Վենետիկեցոց և Հոռոդոսցիների հետ և նոցա յանձնեց Կորինթը և ուրիշ բերթեր։

Մանուէլի դէմ նորից սկսեցին մայրաքաղաքի շրջափակ պաշարումը. և Յովհաննէս Ը իշխանին էլ նրա դէմ հանդէս հանեցին իրրև գահի իրաւատէր։ Նրա օգնութեան աղաչակը Եւրոպայում առանց արձագանքի չմնաց։ Փրանսիան ուղարկեց Բուսիկոքաջ մարշալին, որը իւր սակաւաթիւ բայց ընտիր զօրքով Կոստանդնուպօլսի շրջակայքը մաքրեց Ցաճիկներից և կայսեր հաշտեցրեց իւր եղբօր որդու հետ։ Վերջինիս կառավարիչ կարգեցին, իսկ Մանուէլը պատում էր արևմուտքի արքունիքները, որտեղ նրան փառաւոր ընդունելութիւն էին ցոյց տալիս. Փրանսիան մինչև անգամ տարեկան թոշակ կարգեց։

Նոյն եղանակով ապրում էր նաև հրեան այնքան դոռոզ տիեզերական պատրիարքը՝ ռուսական ողորմածութեամբ։ Բայց կայսեր օգնութեան եկաւ միայն Ասիան։ Թեմուր Լանգը Անգորայի ահեղ ճակատամարտի մէջ 1402 թ. 20 Յուլիսի, մի հարուածով ջախջախեց Օսմանցոց պետութիւնը։ Հպարտ սուլթանը մեռաւ գերութեան մէջ։ Այդպիսով Յոյները կէս դար էլ կեանք ունեցան։ Մանուէլը 1403 թ. Վենետիկցիների, Ջենովցիների և Հռոդոսցիների հետ բաւական նպաստաւոր խաղաղութիւն հաստատեց, ինչպէս նաև Բայազիտի Սուլեյման որդու հետ, որ հրամայում էր Եւրոպական մասում։ Կայսրը յետ ստացաւ Թեսալոնիկէն և վերջացրեց այն հարկը վճարելուց, որ տալիս էր մինչև այդ։ Բայազիտի որդիների վէճերին վերջ տուաւ Մոհամեդը 1413 թ. Զամոռլուի, որ Սոֆիայից հեռու չէ, դաշտի յաղթութիւնով։ Մոհամեդը, որ սերտ դաշն էր կապել Մանուէլի հետ, և նրա հետ լաւ յարաբերութեան մէջ էր, մակեդոնական և թեսալական շատ հողեր սրան վերադարձրեց, որ իւր այն եղբայրը էր խլել, որ պատերազմի մէջ յաղթուել և ապաստանել էր։ Վերջին անգամ էլ Յոյների համար իրերի դրութիւնը կարծես աւելի բարեյաջող ձև էին ստանում։ Յովհաննէս Ը

խռովարար կայսրակիցը վանք էր քաշուել և շուտով էլ մեռել։ Նրա տեղ Մանուէլը նրա որդուն կարգեց Թեսալոնիկէի կուսակալ։ 1415 թ. Մարտին նա գնաց Միւսիթրիա, որտեղ Թէոդորոս Ա իշխանի մահից յետոյ (1407 թ.) ամեն ինչ տակն ու վրայ էր եղել։ Զօրեղ ձեռքով այնտեղ կարգ հաստատեց, Պելոպոնեսը վերանորոգելով, նորից ամրացրեց Ռսթմոսի կիրճերը և Աքէային Զէնդուրիոնէ իշխանին ստիպեց ընդունել իւր գերիշխանութիւնը։ 1417 թ. Յովհաննէս դահաժառանգը եկաւ Միւսիթրիա, որպէս զի սանձահարէ խռովարար Զենտուրիոնէին։ Բայց որովհետև իւր Ալբանցիներին թոյլ տուեց մտնել Վենետիկցիների երկիրները, հաստատակամութեան հետ խախտեց իւր ունեցած լաւ յարաբերութիւնը, որ սկսեցին օգնել Զենտուրիոնէին և 1419 թ. Յոյներից առան նշանաւոր Մոնեմբասիան (Nopoli di Malvasia)։

Մահմէտը, որ անդուլ գործունէութեամբ նորից ընկճել էր Փոքր Ասիայի էմիրներին, միշտ Յոյների հաւատարիմ դաշնակիցն էր։ Ուստի մեծ անհեռատեսութիւն էր, որ Մանուէլը ռումելական մեծ ապստամբութեան ժամանակ այսպէս կոչուած կեղծ-Մուստաֆային թեթև օգնութիւն ցոյց տուեց, և յետոյ էլ Թեսալոնիկէ ապաստա-

նած Մուստաֆա և Ջունէիդ խռովարարներին կալանաւորել էր և թոշակ կապելով պահում էր Լեմնասում։ Այդ որդին շատ էր վրդովել սուլթանին, սրա վրայ էլ աւելացաւ այն, որ Մանուէլը սուլթանի մահուանից յետոյ իւր որդի Յովհաննէսին լսելով, Մուստաֆային հանդէս հանեց Մուրատ Բ երիտասարդ դահաժառանգի դէմ։ Սակայն մի քանի յաջողութիւններից յետոյ Մուստաֆան հիմնովին ջարդ կրեց Մուրատից. նա մտաւ Ադրիանուպոլիս, և իւր փախստական հակառակորդին բռնել տալով 1422 թ. գլխատել տուեց։ Այնուհետև Թուրքերի սուլթանի միակ միտքը Յոյների կայսրից վրէժ առնելն էր։ 1422 թ. մայրաքաղաքի առաջ ժողովեց մօտ 80,000 զինուոր։ Բայց երբ Ցաճիկները, յուսալով մի նախապուշակութեան վրայ, Բուխարայի շեյխի առաջնորդութեամբ, յարձակում գործեցին մայրաքաղաքի պարիսպների դէմ, կատարեալ անյաջողութիւն ունեցան կայսեր հերոսական ընդդիմութեան շնորհիւ։ Ցաճիկները մինչև անգամ զրկուեցին իրենց պաշարման գործիքներից։ Յոյները միացան սուլթանի դեռ տասներեք տարեկան Մուստաֆայ եղբօր հետ, որը ապստամբել էր իւր եղբօր դէմ և զրանով նրան ստիպեցին թողնել Կոստանդնուպոլսի

պաշարումը։ Սակայն 1422 թ. Մուստաֆայի դաւաճանեցին և խեղդամահ արին։ Ապա Թուրախանին մեծ զօրքով ուղարկեցին Թեսալոնիկէի դէմ, սակայն Վենետիկեցւոց օգնութեան պատճառաւ, յարձակումը անցաջող ելք ունեցաւ։ 1923 թ. Թուրախանը գիմեց Պելոպոնէս, կոտրեց և կործանեց Իսթմոսի ամրութիւնները, և ասպատակեց Յոյների ու Վենետիկեցոց սեպհականութիւնները։

Մանուէլը կաթուածահար լինելով, 1423 թ. հեռացաւ կառավարութիւնից և մտաւ վանք։ Նրա որդի Յովհաննէս Ը (1423-1448) մի կերպ խաղաղութիւն հաստատեց, որով պարտաւորուեց Պելոպոնէսի համար տարեկան 30,000 ոսկի հարկ վճարել և Տաճիկներին զիջանել մակեդոնական և Սև Ծովի ափերի իւր սեպհականութիւններից շատ մասը։ Տէրութիւնը սահմանափակուած էր միայն Բոսփորի թերակղզիով մինչև Սելիւմբրիա և Դերկոն, բացի այդ նրան էին պատկանում Անքիալոսը, Մեսեմբրիան, Աթոսը, Թեսալոնիկէն և Զէյթունը։ Նա միացեալ սեպհականութիւն ունէր դեռ միայն Պելեպոնէսում։ Յովհաննէս Ը դեռ ստիպուած էր այդ խըզճուկ մնացորդներն էլ բաժանել իւր եղբայրների հետ։ Թէոդորոսը և Թոմասը ստացան

Միւսիթրիան, իսկ Կոնստանդինը Անքիալոսը և Մեսեմբրիան։

Վենետիկեցիք 1423 թ. մահաբեր Անդրոնիկոս իշխանից գնել էին Թեսալոնիկէն։ Այդ պատճառով կռիւ սկսեց Մուրատը։ 1426 թ. նա դինադադարի պայմանով քաղաքը թողեց Վենետիկցիներին, պարտաւորեցնելով տարեկան հարկ վճարել։ Բայց հենց որ Մուրատը վերջացրել էր իւր պատերազմութիւնը, սկսեց քաղաքի դէմ յարձակումը, և կարողացաւ 1430 թ. Մարտի 29-ին վերջապէս նրան միացնել Տաճկաց իշխանութեան հետ, սոսկալի գազանական կոտորածներից և աւերումներից յետոյ։

Դրա հակառակ Պալէոլոգները Պելոպոնէսում յաջողութիւն ունէին։ Կայսեր քաջ եղբայրները՝ Թոմասը և Կոնստանդինը 1428—1430 պատերազմներով խլեցին ֆրանկների իշխանութեան վերջի մնացորդները՝ Պատռէի և Աքէայի իշխանութիւնները, և իրանց ձեռքի մէջ առան ամբողջ Պելոպոնէսը բացի վենետիկեան սեպհականութիւնները։

Քանի որ Տաճիկները իրենց իշխանութեան տակ էին գցել ամբողջ բալկանեան թերակղզու իշխանութիւնը. տիրել էին Սերբիային և Բոսնիային, իսկ Հունգարիային չէին տիրել միայն Յովհաննէս Հունիադ հերոսի

շնորհիւ, Բոսփորի անուանական կայսեր վիճակը անտանելի էր դարձել։ Ի մեծ բարկութիւն Մուրատի, նա միանգամ էլ իւր օգնութիւն հայցող հայեացքը յառեց դէպի Եւրոպա։ Որովհետև համարեա ամբողջ հինգ հարիւր տարի Յոյները միշտ, շատ անգամ ուղղակի անամօթաբար խաբել էին պապերին միաբարական առաջակութիւնների ժամանակ, ուստի Եւգէն Դ պապը եռանդով աշխատում էր նորից հաստատել միութիւն։ Սնանկացած կայսեր և նրա հետևորդների համար ճանապարհորդելու և ապրելու փող ուղարկեց։ Այս անգամ, որովհետև դանակը ոսկրին էր հասել, թէ կայսրը և թէ հոգևորականներից շատերը՝ օրինակ տիեզերական Յովսէփ պատրիարքը, Բեսարիոնը և Իսիդորոսը որ յետոյ կարդինալ դարձան, ամենայն լրջութեամբ ցանկանում էին միութիւն։ Եւ Florentinun — Փլորենտիայի դաւանանքը, որ իբրև միութեան հրովարտակ 1439 թ. Յուլիսի 6-ին հանդիսաւոր կերպով կարդացուեց Փլորենտիայի մայր եկեղեցում, այնքան մեծ դրական նշանակութիւն ունեցաւ, որ դա իսկապէս հիմք ծառայեց Ռուսիններին, Ռութինների և ուրիշ օրթոդոքս եկեղեցիների իրական միութեանը, բայց Կոստանդնուպօլսում ուրիշ կերպ էին մտածում։ Ժողովուրդը և

վարդապետները չընդունեցին կառավարութեան և բարձր հոգևորականութեան կնքած դաշնագրութիւնը։ Աստուածաբանական վէճերն Բիւզանդացիների մահուան վերջի ժամերն էլ անգամ աւելի դառնացրին։

Յովհաննէս Ը արևմուտքից համարեա թէ օգնութիւն չստացաւ։ Դրա փոխարէն Մուրատը օգնում էր նրա անարժան Դեմետրիոս որդուն, որը իբր թէ պաշտպան հանդիսանալով ուղղահաւատներին, տաճիկ թափառականներով աւերում էր Կոստանդնուպօլսի շրջակայքը, մինչև որ Կոնստանդին եղբայրը նրան նեղը գցեց և կալանաւորեց։

Բայց Եւգէն Դ-ը սկսեց քարոզել խաչակրաց արշաւանք։ 1443 թ. եւրոպական զօրքը, որ բաղկացած էր գլխաւորապէս Հունգարներից, Լեհերից և Ռուսիներից Վլադիսլավ թագաւորի և Հունիադի առաջնորդութեամբ, արշաւեց Տաճիկների դէմ և 1443 թ. Դեկտեմբերի 24-ին Կունովիջայի մօտ Տաճիկների դէմ փառաւոր յաղթութիւն տարաւ։ Մուրատը տեղի տուեց, և 1444 թ. Յունիսին Ծեգեդինում տասնամեայ խաղաղութիւն կապեցին, որ բաւական նպաստաւոր էր Մաճառների և Սերբերի համար։ Բայց երբ Մուրատը զբաղուած էր Ասիայում տաքարիւն Ջիուլիո Յեզարինի կարդինալ դես-

պանը իւր ոգեւորուած ճառով ապրեց այնպէս, որ հունգարական պետական խորհուրդը բացարձակ խոստմնադրուժ եղաւ։ Օգոստոսի սկզբին հաւատամարտների զօրքը ճանապարհ ընկաւ և հասաւ Բուլգարիա վատ կարգապահութեամբ։ Հազիւ էին հասել Վառնա, երբ Մուրատի մուտքը Եւրոպա սարսափեցրեց խաչակիր զօրքը։ Նա կարողացել էր ծովով անցնել, որովհետև Ջենովցիք անամօթաբար դաւաճանել էին քրիստոնէական հարցին։ 1444 թ. Նոյեմբերի 10-ին տեղի ունեցաւ Վառնայի ճակատը, որը քրիստոնեաները համարեա թէ տարել էին, երբ Վլադիսլավ թագաւորը հակառակ իրանց պայմանին, նախանձելով Հունիւադի յաջողութիւններին, խելակորոյս քաջասրտութեամբ իւր Լեհացի ասպետների հետ յարձակուեց հանիչարների վրայ, որոնք մինչև այդ դիմադրել էին. Վլադիսլաւը ընկաւ։ Նրա մահը թուլացրեց քրիստոնեաների ոյժը։ Բայց Հունիւադը առաջնորդելով քրիստոնեաների կարգաւորեալ նահանջը՝ անցրեց Դանուբից, որով աւելի քիչ կորուստներ ունեցան քան Տաճիկները։ Երբ այդքան զօրեղ ջանքն էլ անյաջող անցաւ, արևմուտքում սկսեց տիրել մի տեսակ խորը վհատութիւն։ Իսկապէս անարդարութիւն է, եթէ արևմուտքին մեղադրում են, իբրև թէ նա կարեկցութիւն չէ ցոյց տուել դէպի Արևելահռովմի դժբախտ վիճակը։ Ընդհակառակը նա Նիկոպոլսի և Վառնայի արշաւանքներով տրել էր, ինչ իւր ոյժերից էր կախուած։ Այժմ Յոյները անպատնայի յանձնուել էին իրենց դժբախտ վիճակին։

Յետոյ Յովհաննէս Ը փորձեց ընծաներով մեղմացնել Մուրատի բարկութիւնը։ Վենետիկցիք, որոնց նաւատորմիղը օգնել էր խաչակիրների զօրքին, 1446 թ. Տաճիկների հետ խաղաղութիւն հաստատեցին։ Միւսիթրայի Կոնստանդինն էլ էր 1444 թ. միացել հակատաճկական դաշնակիցներին։ Նա նուաճել էր Աթէնքի հերցոգութիւնը և դեռ Վառնայից յետոյ շարունակելով պատերազմը, յաղթանակով մտել էր Միջին-Յունաստան։ Նա յոյս ունէր Իսկանդար բէկի օգնութեան վրայ, ասկայն վերջինս պատերազմի բռնուելով Վենետիկի հետ, միանգամայն դրանով էր զբաղուած։ Մուրատը ինքն անձամբ արշաւեց Պելոպոնէսի դէմ 60,000 զօրքի գլուխն անցած։ Զնայած Կոնստանդին եռանդուն և հմուտ ընդդիմութեան, Միջին-Յունաստանի բոլոր ամրոցները ընկան Տաճիկների ձեռքը։ Երկու իշխանները մեծ քաջութեամբ պաշտպանում էին Պելեսամիլիոնը։ Տաճիկները 1446 թ. Դեկտեմբերի 4-ին այդ դիծն էլ

անցան և առան Կորինթը։ Թոմասը և Կոնստանդինը փախան Միւսիթրիա, մինչդեռ Տաճիկները երկու անգամ աւերի ենթարկելով Պելոպոնէսը 60,000 մարդ գերեվարեցին։ 1447 թ. Պալէոլոգներին խաղաղութիւն շնորհեցին և նոցա երկրից դլխահարկ էին առնում։ Այդքան տանելի պայմանների դլուխ դալու պատճառն այն էր, որ Հունիադի և Իսկանդար բէկի հետ պէտք էր հաշիւները վերջացնել։

Յովհաննէս Ը կայսրը 1448 թ. Հոկտ. 3-ին մեռաւ։ Անընդունակ Դեմետրիոսը կամենում էր ինքը դահ բարձրանալ, Բայց նախկին վինիստները և հաւատարիմ Փրանցէսը ընդդիմացան և չթողեցին մայրաքաղաքն առնել։ Մուրատը որոշում տուաւ յօգուտ Կոստանդնի։ 1449 թ. Յունուարի 6-ին նա Միւսիթրիայի դղեակում ստացաւ թագը և իսկոյն շտապեց մայրաքաղաք։ Կայսեր մեծ ցնծութեամբ ընդունեցին իւր նոր քաղաքում, որը, ինչպէս հին յունական ժամանակը, իշխանութիւնը սահմանափակել էր միայն Պօլիսով-քաղաքով։ Միւս երկու եղբայրները Թոմասը և Դեմետրիոսը բաժանեցին Պելոպոնէսը։ Թոմասի դէմ, որը կամենում էր ընդարձակել իւր իշխանութիւնը իւր եղբօր հաշուին, վերջինս դիմեց Տաճիկների օգնութեան որոնք իսկապէս խաղաղութիւնը վերահաստատեցին։

Մինչ այդ 1451 թ. փետրուարի 5 Մոհամեդ Բ-ը յաջորդել էր իւր հօրը։ Ինչպէս միւս փոքր իշխանների՝ այնպէս էլ Յոյների հետ հանդիսաւոր կերպով նորոգեց խաղաղութիւն և բարեկամութիւն։ Մինչդեռ Մոհամեդը Ասիայում հետամուտ էր նուաճելու Կարամանի անհնազանդ էմիրին, Կոնստանտինը յղացաւ մի կորստաբեր միտք՝ Տաճիկներից պահանջել որ կրկնապատկեն Ուրխան իշխանին վճարելիք թոշակը, որը կալանաւորուած էր Կոստանդնուպօլսում։ Յունասէր մեծ վէզիր Խալիլ-փաշան սարսափեց այդ յիմար պահանջից, երբ որ Աքշերի բանակում Յոյն դեսպանները յայտնեցին իրենց դալու նպատակը։ Բայց Մոհամետ Բ-ը ուրախութեամբ օգտուեց այդ յարմար առթից, որպէս զի վերջ դնի Յոյների պետութեանը։

Մոհամեդը ղեկավարում էր պաշարումը ամենամեծ հմտութեամբ։ Յոյները շուտով հասկացան, որ նոցա վերջի ժամուայ մահուան և կեանքի կռիւն է այդ։ Սուլթանը բոլորովին կարեց քաղաքի հաղորդակցութիւնը հիւսիսային կողմից, իսկ հարաւի ամենանեղ տեղում ամրութիւն շինեց։ Երբ Կոնստանտինը բողոք բարձրացրեց նրա կառուցած ամրու-

թիւնների առթիւ, սուլթանը խիստ պատասխան տուեց։ 1452 թ. աշնանը սուլթանը Թուրախանին ուղարկեց Պելոպոնէսի դէմ որպէս զի սոսկալի աւերումի ենթարկի ամբողջ երկիրը. այդպիսով այնտեղի իշխանները անկարող կլինէին որ և է կերպ օգնել իրենց եղբօրը։ Կոնստանտինը 1453 թ. ձմեռը ըստ կարելոյն շատ ուտեստի պաշար հաւաքեց մայրաքաղաքում և վերանորոգեց պարիսպները։ Արևմտեան քրիստոնեաներից Կոնստանտինը օգնութիւն չստացաւ։ Արևմուտքը քիչ քիչ յօգնել էր իւր ոյժերը գործ դնելով Յոյների ազատութեան համար։ Պապը, որը 1452 թ. «Ռուս» Իսիդոր կարդինալին ուղարկել էր միութիւն հաստատելու, պատճառ եղաւ որ դժբախտ կայսրը կորցրեց վարդապետների և ամբոխի համակրանքը։ Բայց մեծամեծներն էլ համարեա բոլորը բացարձակապէս թշնամի էին միաբարութեանը։ Կայսեր ճշմարիտ օգնութիւն տուին միայն մայրաքաղաքում ապրող օտարազգի պատերազմասէր բնակիչները։ Մինչդեռ Պելոպոնեսի մեծ մասը Մոհամեդի հետ խաղաղութիւն կապեցին, ընդհակառակը Յովերի սարսափը, Ջիովաննի Ջիուստինիանի Յովահէնը երկու նաւով և 700 զինուորներով եկաւ քաղաքին օգնութեան։ Կոնստանտինի տրամադրութեան

տակ կային 9000-ից քիչ աւելի մարդիկ։ Այդ ընչին ոյժերով նա սպասում էր դէմ դնելու օսմանական ահեղ ոյժին, որոնք բացի այդ իրանց տրամադրութեան տակ ունէին հրէշաւոր մեծ թնդանօթներ, որ այդ նպատակի համար ձուլել էր Օրբան ինժիները։ Ոսկեղջիւրը փակեցին շղթաներով։

Մոհամեդ Բ 1453 թ. Ապրիլի 5 երեւաց քաղաքի առաջ։ Նա ինքն էր անձամբ ցամաքի կողմից զեկավարում յարձակումը, ինչպէս Կոնստանտինը պաշտպանութիւնը։ 1453 թ. Ապրելի 11-ն սկսեցին յարձակումը. սակայն սկզբում առանց սպասած յաջողութեան։ Օրբանի հսկայ թնդանօթը փշրուեց, իսկ չորս քրիստոնէական նաւեր յունական կրակի օգնութեամբ յաջողութեամբ կռւում էին Ցաճկաց նաւատորմիղի դէմ։ Պարիսպները կոտրելը դադարեցին, և Ապրելի 8-ի առաջի յարձակումը յետ մղուեց։ Այդ ժամանակ Մոհամեդը յարձակումը սկսեց նաև ծովի կողմից, այն էլ Ոսկեղջիւրի ներսից։ Վենետիկցիներից սովորած եղանակով-սաքա էլ օրինակ էին առել հին կորինթեան դիոկլոսներից, նաւերը տախտակների վրայ քաշելով տարան ցամաքի նեղ տեղը և սկսեցին Յոյներին խիստ նեղը ձգել։ Մայիսի 7-ից Օսմանցիները կրկին և կրկին անգամ փորձում

էին յարձակումները, բայց ամեն անգամ յաղթուելով, մեծ կորուստներով յետ էին մղուում։ Անյաջող անցաւ նաև Բլախեռնի դէմ սկսած ականի փորձը, որովհետև Յովհաննէս Գրանտ Գերմանացի ինժիները դրա դէմ հակառակ միջոցներ գործ դրեց։ Սակայն Տաճկաց թնդանօթների հարուածներից պարիսպների մէջ այնպիսի պատռուածքներ էին առաջ եկել, որ Տաճիկները որոշել էին Մայիսի 29 ընդհանուր մեծ յարձակումը, և երբ վերջին անգամ էլ առաջարկեցին քաղաքը յանձնել, Կոնստանտինը հերոսաբար մերժեց առաջարկը։

Երեքշաբթի գիշերը, ժամի 2, 1453 թ. Մայիսի 29, սկսուեց ահեղ մրցումը։ Երկու յարձակում յաղթութեամբ յետ վանեցին։ Այն ժամանակ սուլթանը հրամայեց եանիչարիներին առաջ անցնել։ Նոքա նորից մեծ կորուստներ ունեցան, երբ մի նէտ ծանր վիրաւորեց Ջիուստինիանուն, որ մինչև այդ մեծ հմտութեամբ ղեկավարել էր պաշտպանութիւնը։ Առաջի ուշագնացութիւնից յետոյ նա շտապեց նաւահանգիստը, որպէս զի նաւերից մէկի վրայ վերքը կապել տայ։ Դրանից ծագեց մի տեսակ շփոթութիւն, որ նկատեց Սագանոս փաշան և օգտուեց։ Ընդարձակ պաշտպանողների կատաղի ընդդիմութեանը, մի խումբ եանիչարիներ մնացին պարսպի վրայ

մինչդեռ մի ուրիշ խումբ նկատելով որ փոքրիկ Քսիւլապորտա դուռը բաց է, ներս խուժելով պարսպի վրայով շտապեց դէպի Ադրիանուպոլսի մեծ դուռը։ Իրանց օգնող ընկերներով ուժեղացած, նոքա հետևից կայսեր նրայ յարձակուեցին։ Այդ ժամանակ Տաճկաց թնդանօթներն էլ մի մեծ պատռուածք բացին պարսպի մէջ։ Կոնստանտինը քաջութեամբ կռուելով, մեռաւ հերոսաբար։ Յաղթողները սկիզբը կատաղութեամբ կոտորեցին սակաւաթիւ բերդակալներին և ապա շտապեցին կողոպուտի։ Բնակիչներից 60,000 հոգու գերեցին։ Բաւական թւով դժբախտ անձինք, հաւատալով մի նախագուշակութեան, հաւաքուել էին Սոփիայի եկեղեցու մէջ. նոքա հաւատացած էին որ այդտեղ քրիստոնեաները յանկարծ անսպասելի և զարմանալի օգնութիւն են գտնելու։ Տաճիկները կացիններով ջարդուռեցին դռները, այնտեղ եղողների դէմ գործ դրին պատերազմում սովորական սարսափները, Մայր եկեղեցին արիւնաղաղ արին և պղծեցին։

Ժամի 8-ին առաւօտեան Մայիսի 30 Մոհամեդը մտաւ առնուած մայրաքաղաքը և գրաւեց Սոփիայի եկեղեցին Իսլամի համար։

Ամբողջ արևմուտքը բարձրաձայն ողբաց այն ծանր կորուստը, որ հասաւ քրիստոնէութեանը Յոյների հին մայրաքաղաքի ան-

կումով։ Այն խղճուկ օգնութիւնը, որ ուղարկեցին պապն ու Վենետիկը, շատ ուշ հասաւ։ Պելոպոնէսի տէրերը եօթը տարի յետոյ մայրաքաղաքի վիճակին ենթարկուեցին։ Հռովմէական յունական պետութիւնը պատմութեան տարէդրութիւններից ջնջուեց։

1453 թ. Մայիս ամիսը վերջնականապէս բիւզանդական կայսրութիւնը իջեցրեց գերեզման։ Վատուց էին Թոյները ընկել իրենց աշխարհակալական դիրքից. յետոյ եղած կեղծ պատկերն էլ անհետացաւ։ Բայց Բիւզանդիոնը դատաւ մի հզօր ժառանգ։ Ռուսաց ցարն ամուսնացաւ Պալէոլոգների իշխանուհու հետ. Կոնստանտին Մոնոմախոսի թագը Կրեմլի վրայ իւր գլխին դրեց ընդհանուր Ռուսաց միապետը։ Ռուսական պետութիւնը իսկապէս բիւզանդական կայսրութեան շարունակութիւնն է։ Եւ եթէ երբ և է Սուրբ Սոփիան նորից պէտք է վերապարձնուի ճշմարիտ քրիստոնէական հաւատին, եթէ երբ և է Փոքր Ասիան պէտք է ազատուի տաճկական բռնակալական և աւերիչ անառակների վարչութիւնից, այդ կարող է միայն ռուսական ցարը կատարել։ Անդրիայի հակառակութիւնը դէմ է բնութեան և պատմութեան, ուստի միանգամ ապահովապէս, գուցէ, ուշ, կկոտրուի այդ հակառակութիւնը։ Կոնստանդնուպօլսի

կայսրը կարող է միայն օրթոդոքս եկեղեցու հովանաւորողը՝ Ռուսաց ցարը լինել, եթէ նա գիտակ մնայ այն լուրջ պարտաւորութիւններին, որ կապուած են այդ մեծ խնդրի հետ։

ՅԱՆԿ

ՑԱՏՈՒԿ ԱՆՈՒԱՆՑ

Աբբասիդներ · 161· 164· 171·
Աբգար · · · · 272·
Աբգարա · · · · 447·
Աբգրուահման · · 150·
Աբենգաս · · · · 250·
Աբեթինիա · · · 92·
Աբիրոն · · · · 88·
Աբիւգոս 12· 153· 398·
Աբխազիա · · · 215·
Աբխազներ · · · 214·
Աբու ալ Աբբաս Մոհամէտ 181·
Աբու Հաֆս Օմար· · 174·
Ագաթիաս · · · 110·
Աղապետ պապ· · 86·
Աղելա դահաժառանգ 76·
Աղլաբիդներ · · · 171·
Աղանա · · 229· 306·
Աղրիա· 150· 197· 198· 274· 319·
Աղրիանուպոլիս · 7· 107· 171· 209· 211· 235· 256· 258· 294· 324· 373· 390· 398· 404· 405· 445· 456· 465· 477·
Ամանագելդ Թագաւոր 75·
Ամանաս Ս· Ալէքսանդրացի 13· 451· 453·
Ամենայիս կայսրուհի 15·
Ամէնք 35· 91· 131· 259· 382· 395· 440· 471·
Ամոս · 451· 455· 466·
Ամէրդին Կէյկոբադ· 295·
Ամրէք· · · · · 10·
Ամանիա 238· 254· 258· 321· 413·
Ամանացիք 415· 432· 456· 464·
Ամիգէնպեր · · · 356·
Ամպրինոն գրաֆ· · 373·
Ամէքսէյ ռուսթագաւոր 291·
Ամէքսիոս Կոմնեն կայսր· 311—333· 338·
Ամէքսիոս Ա· 416· 422· 423·
Ամէքսիոս Բ· · 356· 360· 363· 423·
Ամէքսիոս Գ· · 377—380· 385· 390· 396· 397· 400· 401· 421· 424·
Ամէքսիոս Դ· · 388· 389· 391· 392· 396· 397·
Ամէքսիոս Ե· · 391· 396·
Ամէքսիոս Բռանաս · 366· 370·

Ալէքսիոս—Դուկաս Մուիզուլոս 390·
Ալէքսիոս զօրավար · 414·
Ալէքսիոս իշխան · · 387·
Ալէքսիոս պրոտոսեբաստոս 356·
Ալէքսիոս Ստրատիգուպուլոս 419·
Ալէմաններ · · · 378·
Ալմուս իշխան · · 339·
Ալոդրոտորս · · 211·
Ամոդէիր ազգ · · · 93·
Ամուզինոս · 277· 278·
Ամի Ասլան 294· 295· 302· 303· 309· 310·
Ակաթիստոս շաբաթան 154·
Ակակիոս պատրիարք 32·33· 34· 37· 46· 56· 87· 139·
Ակիւնդինոս · · · 454·
Ակրոկորինթ · · · 349·
Ակրոյինոս · · · 154·
Ակրոնոն · · · · 332·
Ակրոպոլիս · · · 333·
Ահտրոն Բուլգար 258· 277·
Աղէքսանդր Ասէն 443· 446·
Աղէքսանդր կայսր 129· 207· —209· 220·
Աղէքսանդր Գ· պապ 352·
Աղէքսանդր Զ· պապ 360·
Աղէքսանդրիա 27· 32· 52· 93· 100· 113· 120· 124· 383·
Աղէքսանդրիայի ժողովներ 62·
Աղէքսանդրիացիք · 29·
Աղուանք · · 215· 295·
Ամադէոն · · · · 457·
Ամալ (Թէոդոհատ) · 68·
Ամալասվիտա Թէոդորիի մեծի աղջիկ 67·
Ամալներ · · · 38· 67·
Ամալրիխ Թագաւոր · 345·
Ամալֆիտաններ 302· 390· 452·
Ամանթիոս սենեկապետ 53· 54·
Ամասիա · · · · 147·
Ամասարիս · · · 185·
Ամբրակիա · · · 434·
Ամենափրկիչ եկեղեցի 349·
Ամիդ · 42· 239· 249·
Ամիսոս · · 400· 421·
Ամորիոն 128· 149· 172· 177· 249·
Ամրու զօրապետ · 124·
Ամֆիպոլիս · · · 448·
Այեոտիոս Ներքինի 167·177·
Այդն · · · 444· 446·
Անաստաս կայսր 33· 39· 40· 42· 44· 46· 49· 52· 53· 60· 62·
Անաստաս կայսրուհի 224·
Անաստաս Բ· պապ · 46·
Անաստաս պատրիարք 102· 159·
Անարզաբա · 225· 229·
Անատոլիա 149· 395· 439·
Անատոլիոս զօրավար 19·
Անատոլիոս պատրիարք Կ·-Պոլսի 26·
Անգելներ 6· 365· 368· 397· 402· 403· 407· 411· 428· 435· 436·

438· 443·
Անգելսաքսեր · 274· 320·
Անգեղոս · · · · · 413·
Անդղիա 129· 319· 341· 386· 478·
Անդորա · · · · 463·
Անխիալոս 50· 145· 371· 377· 430· 432· 466· 477·
Անդրէաս Սուրբ 180· 219·
Անդրոնիկոս Ա· Կոմնեն 242· 356·359—371·420·
Անդրոնիկոս Բ· 436—440·
Անդրոնիկոս Գ· 443· 444· 457· 458·
Անդրոնիկոս Դ· 458· 460· 467·
Անդրոնիկոս Գիտոս 400· 423·
Անդրոնիկոս Դուկաս 303· 306·
Անդրոնիկոս Կոնտրոստեփանոս 346· 355· 362·
Անթիմոս Թիկնապահ 15· 19· 28·
Անթիմոս պատրիարք 35·36·
Անի 261· 263· 285· 295·
Անկիւրիա · · · · 113·
Անկոնա · · 350—352·
Աննա իշխանուհի 249·410· 444·
Աննա պատմագրուհի 334· 335·
Անտեր · · · · · 76·
Անտիոք 33· 36· 37· 40· 46· 48· 78· 81·101· 102· 112· 123· 173· 228· 230· 239· 240· 267· 272· 283· 289· 307· 309· 330· 331· 338· 342· 344· 345· 401·
Անտիոքի դպրոց · · 21·
Անտոնիոս · · · · 361·
Աշոտ բերդակալ · 256·
Աշոտ եղբայր Յովհաննէսի 262· 285·
Աշոտ երկաթ · · 214·
Աշոտ Ա· Թագաւոր · 214·
Augia dives վանք · 139·
Ապամէա · 41· 112· 238·
Ապինինեան թերակղզի 16·
Ապենիններ · · · 74·
Ապոլոնէյա · · · 328·
Ապոխապս (Աբոխաքս) 213·
Ապոկաուկոս · 444—447·
Ապուլիա 281· 302· 315· 331· 350· 417·
Ապսիմարոս Ծովապետ 143·
Ուանդ · · · · · 454·
Ասիմոս · · · · 19·
Ասենիաններ · · · 373·
Ասէն · · · 407—409·
Ասիա 12· 32· 112· 113· 141· 149· 153· 223—225· 229· 235· 238· 246· 287· 296· 300· 306· 312· 316· 329· 343· 362· 373· 376· 381· 397· 400· 403· 405· 438· 439· 443· 459· 463· 469· 478·
Ասկոնիա · · · 76·
Ասորիք եւ Ասորի 27· 45·

56· 70· 78· 84·
93· 94· 100· 101·
104· 109· 113· 115·
120· 123· 128· 154·
161· 203· 227—229·
231· 239· 240· 565·
270· 272· 300· 327·
338· 339· 344· 361·
Ասպար զօրավար 16· 28· 29·
Աղաքներ 96· 97· 104· 107·
109· 112· 114· 118·
119· 135· 136· 154·
Ատպէէ · · · · · 337·
Ատոիկա · · · · 19· 26·
Ատոիկա · · · · · 348·
Ատրպատական 114· 215·
Աքաբիա · · · 93· 123·
Արաբներ 77· 124· 128·
129· 131· 132· 135·
141· 143· 144· 145·
147· 149· 152· 154·
161· 163· 166· 167·
169· 173· 174· 176·
181· 198· 214· 227·
248· 276· 281·
Արագոն · · · · · 435·
Արգիւրոս Եպիսկոպոս 281·
Արգոս · 10· 128· 382·
Արգա · · · · · · 448·
Արեթուզա · · · 48·
Արիւելահռոմ կամ Նոր—
Հռոմ 12· 24· 25·
46· 55—60· 108·
121· 129· 135· 137·
150· 159· 167· 169·
171· 174· 180—182·
164· 197· 198· 211·
215—217· 237· 282·
291· 329· 337· 339·
346· 364· 427· 471·
Արզն (Կարին) · · 287·
Արզուգա (Երզնգա) · 411·
Արէադնէ կայսեր դուստր
29· 31· 35· 40· 52·
Արիոբինթոս կայսր · 49·
Արիմինում · · · 69·
Արխիպելագ · 443· 446·
Արծրունի · · 263·
Արկա · · · · · · 230·
Արկադիոս կայսր 4· 9· 11·
12· 15·
Արկագիուպոլիս 173· 377·
Արմէշ · · · · · · 263·
Արմենիակոն · · · 311·
Արշակ Թագաւոր · 195·
Արշակունիներ · · 195·
Արսէնիոս պատրիարք 415·
416· 433·
Արտաքուրիոս զօրավար 16·
29·
Արտաւազդ զօրապետ 149·
161·
Արտեմիոս Անանասեան 148·
Աւդիանցիք · · · 454·
Աւինիոն · · · · 457·
Աւսարազիան Թագաւոր 70·
Աւրելեան · · · · 289·
Աւքսիմում · · · 70·
Ափրիկա 16· 29· 65· 66·
86· 92· 103· 110·
113· 122· 129· 132·
143· 169· 181· 198·
276· 347·
Ափրիկացիներ · 181· 203·
Աքէա 315· 395· 409· 417·
430· 464· 467·

Աբիլէս · · · · · 255·
Աբշէր · · · · · · 473·
Աքսուխոս մինիստր · 335·
340·
Ա.Գիորտոդոկետիսմոս 89·

Բաբիլոս · · · · · 124·
Բաբիկ · · · · · · 176·
Բագրատունիներ 214· 261·
263· 285·
Բազիլէոս Ապոկապէս 297·
Բազիլէոս Ա· կայսր 151·
193· 194· 197· 199·
202· 214· 226· 287·
310· 365· 373· 399·
Բազիլէոս Բ· կայսր Ռոմա-
նոսի որդի 226· 243·
245· 248· 250—253·
255—267· 285· 290·
330· 433·
Բազիլէոս կանցլեր 241·
244· 246· 247·
Բազիլէոս կառավարիչ 424·
Basilika · · · 202·
Բազիլիկոս կառավարիչ 224·
Բազիլիկոս հրամանատար 29·
—32·
Բալդուին Ֆլանդրացի կայսր
394· 398· 399·
Բալդուին Բ· 409· 410·
419· 429· 431·
Բալդուին Գ· 344· 345·
Բալիանեան Թերակղզի 42·
73· 107· 164· 211·
456·
Բակուրիանոս · · 323·
Բահրամ Զոբին զօրավար
103·
Բաղդատ 213· 239· 359·
Բայազիտ Ա· · 459—463·
Բատուելա կամ Տատուելա
72·
Բաթաղամ · · · 454·
Բարբարուսա 352· 355·
Բարդաս 179· 183· 188·
192·
Բարդաս Սկլերոս զօրապետ
246· 248· 250·
Բարդաս Փոկաս 246· 247·
Բարդաս Փոկաս կայսր 247·
Բաթի 198· 204· 281· 301·
Բարձր դուռ · · 425·
Բարսեղեանա · · · 430·
Բաթսեղ արքեպիսկոպոս 380·
Բասեղ Ա· 228· 272· 286·
Բաքիդկեօնթիում · 228·
Բափէոն · · · · · 438·
Բդիւն · · · · · · 256·
Բելա Գ· · · · · · 346·
Բելա Իշխան · · · 339·
Բելասիկա · · · · 257·
Բելգրատ 296· 380· 443·
Բելիզար զօրավար 63· 65·
66· 68—73· 76· 77·
99·
Բելչատով · · · 323·
Բեկկոս · · · · · 457·
Բեյրութ · · · · · 239·
Բենեւէնտ 98· 131· 204·
Բեռայէա · · 257· 377·
Բեսարաբիա · · · 205·
Բեսաբիոն · · · · 468·
Բերատ · · 417· 435·

Բերքեր . . . . 175·
Բերթա . . . . 224·
Bertha von Sulzbach 345.
Բերկրի . . . . 263·
Բերուլթ . . . 51· 83·
Բեօմ. Ի. . . . . 454·
Բիզենչ . . . . 412·
Բիսոլ . . . . . 257·
Բիւզանդացիք 177· 190· 203· 239·267· 272· 284· 298· 329· 331· 352· 444· 469·
Բիւզանդիոն 3· 12· 15· 26· 39· 51· 64· 69· 89· 110·123· 132· 135· 144· 154·167· 175· 197, 204·207· 211· 223· 224· 243· 291· 305· 308·314· 346· 366· 372·378· 386· 393· 406·437· 439·
Բիւթինիա 355· 397· 402·
Բլախերներ . . . 388·
Բոգդան . . . . 288·
Բոդոմիլներ . 235· 322· 333· 358· 406·
Բոտին . . . . . 309·
Բոթեր (Butera) . 181.
Բոհեմունդ 319—322·328· 330· 331·
Բոյոտիա . . . . 349·
Բոնիֆացիո 382·384· 385· 387·393·394·397·
Բոնոզոս . . . . 110·
Բոնոս պատրիկոս . 114·
Բոսնիա 345· 456· 467·
Բոստրա . . . . 123·
Բոտանիատէս 313· 316·
Բոսֆոր 32· 394·419· 424· 468·
Բորիս ցար . . . 187·
Բորիս Բ· 232· 236· 264·
Բորչիա Ցեղար 361· 364·
Բուլգարիա 181· 196· 231· 256· 278· 284· 309· 322· 323· 372· 373· 461· 470·
Բուլգարներ 76· 119· 136· 137· 141· 145· 147· 162· 166· 170· 171· 173· 187· 188· 204· 205· 209· 211· 219· 232· 235—237·248· 253—258·271· 274· 372· 373· 377· 380· 393· 403· 406· 409· 412· 414· 427· 430· 434· 440—442·446·
Բուլա Ռեգիա . . 65·
Բուլսարա . . . . 465·
Բուլիտներ . . . 235·
Բուսիկո . . . . 462·
Բուտիլինոս . . . 75·
Բուտրթոն . . . 321·
Բուրգոնտիոններ . . 70·
Բուրցէս զօրավար 230·232·
Բռանաներ . . . 383·
Բռանիչովա . . . 339·
Բռիեն . . . . 409·
Բռինգաս . . . . 226·
Բռինդիզիում 281· 347·
Բրանաս . . 323· 373·
Բրիտանիա . . . 337·
Բթիւտայի Մայիսեան տօներ 44·
Բրոյէա . . . . 377·

Գաբալա . . 77· 409·
Գաբերաս . . . . 383·
Գաբրիէլ Ռոման (Rodomar) 257·
Գագիկ Թագաւոր . 261· 262· 285·
Գաղղիա . . . . 9· 16·
Գայնաս 10· 11· 12· 28·
Գանձակ . . . . 115·
Գաթոս . . . . 381·
Գելասիոս պապ . . 44·
Գիլամիր . . . 64· 65·
Գեպիտներ . . 97· 107·
Գետեր . . . . 41·
Գերիկ (Տելերիգոս) 162·
Գերմանիա 113· 354· 375·
Գերմանացիք 2· 11· 39· 59· 63· 186· 343· 344· 376· 377·385· 393·
Գերմանոս· եղբօրորդի կայսեր 73·
Գերմանոս պատրիարք 119· 404· 409·
Գերմանիկէ քաղաք 21· 163·
Գէորգ Ակրոպոլիտէս 415· 432·
Գէորգ Թագաւոր . 263·
Գէորգ Համարտուլոս 213· 227· 240· 263·
Գէորգ Մանիակէս 272·275·
Գէորգ Վոյտէչ (Boïtachos) 309·
Գէորգ Պալէոլոգոս 314·
Գիմնոսոֆիստներ . 453·
Գոբազէս . . . . 79·
Գոթեր 2· 11· 16· 37· 38· 41· 69—75·
Գունալիա դաշտ . 289·
Գուիլլոս . . . . 184·
Գրիգոր եղբայր Հերակլ կայսեր 110·
Գրիգորիոս զօրապետ 250·
Գրիգորիոս Էրզարիս 129·
Գրիգոր Լուսաւորիչ 16·
Գրիգոր Պակուրեանոս 318·
Գրիգոր Մագիստրոս 285·
Գրիգոր Ա. պապ . 102·
Գրիգոր Բ. պապ . 159·
Գրիգոր Է. պապ . 325·
Գրիգոր Թ. պապ . 432·
Գրիգոր Պալամաս . 455·
Գրուլթունգներ . . 10·

Դաթան . . . . 88·
Դաղմատիա 68· 118· 346· 372· 386· 448·
Դամասկոս 112· 123· 226· 230· 344· 359·
Դամատրիս . . . 147·
Դամիանոս Դալասենոս 309·
Դամիան պատրիարք 238·
Դամիետ . . . . 345·
Դան պատմագիր . . 76·
Դանիա . . . . 337·
Դանիացիք . 274· 320·
Դանիէլ Սիւնակեաց . 23·
Դանիշմենդ . . . 338·
Դանուբ 19· 39· 50· 76· 96· 97· 107· 108.

118· 119· 136· 137· 144· 205· 231· 236· 237· 253· 255· 256· 258· 268· 284· 296· 297· 324· 339· 350· 399· 461· 470· 473·
Դանտոլ 382· 385—390· 393· 394· 398·
Դաստակերտ · · · 116·
Դարա 43· 100· 103· 109·
Դաւիթ իշխան · · 261·
Դաւիթ կիւրապաղատ 246·
Դաւիթ Կոմնեն 400· 401· 421· 422· 425· 426·
Դաւիթ մարգարէ · 360·
Դաւիթ պատրիարք · 258·
Դաւիթ ցար · · · 154·
Դեբելտոն · · · 388·
Դելիան ցար · · · 278·
Դեմետրեցա · · · 370·
Դեմետրիաս · · · 203·
Դեմետրիոս իշխան · 469· 472·
Դեմետրիոս Խոմատիանոս 403· 404· 412·
Դեմետրիոս Ս· 136· 278· 372· 400·
Դեմոսթենէս · · · 451·
Դեվոլ · · · · · 331·
Դերկոն · · · · 466·
Դէաբոլիս (Devol) 413. 417·
Դընեպր · · 204· 249·
Դիաբէքիր · · · 424·
Digestae · · · 83.
Դիոդորոս Տարսոնացի 21· 24· 46·
Դիոկղետիանոս կայսր 5· 126·
Դիոսկորոս եպիսկոպոս 26· 27· 30· 52·
Դիւդիւմոտեյխաս 442· 445· 446· 449· 451·
Եիւլախիոն 256· 258· 277· 281· 312· 320· 331· 367· 370· 377· 387· 397· 415· 432·
Դհու Նուվաս · · 92·
Դնեստր 136· 185· 297·
Դոբրոմիր Բոգոմիլ · 322·
Դոբրոմիր Ստրէզ · 380·
Դոլիխէ · · · · 225·
Դոմեստիկոս Սոլոմոն զօրապետ 66·
Դոմինկոս պատրիարք 273·
Դոմինիկոս Միքէլէ դոժ 337· 444·
Դոմինիկո Սելվո · 320·
Դոն · · · · · · 175·
Դոնատոս մեծ · · 88·
Դոռիբլայոն · · · 329·
Դորոստոլոն քաղաք 107·
Դուին · · · · · 99·
Դուկասներ · 261· 292·
Դուկաս իշխան 296· 300· 303· 306· 311· 314· 317·
Դուշան · · · · 448·
Դրագինա · · · · 276·
Դրիգովիչ · · · · 184·
Դրիւոտա Drster-dorostolon 260·
Դրուզներ · · · · 271·
Դրքսաեր (Սիլիստրիա) 137· 231· 236· 238· 328·

Եանտրա · · · · 254·
Եարմուկ · · · · 123·
Եգիպտոս 23· 25· 27· 45· 56· 84· 110· 112· 113· 116· 120· 124· 174· 231· 239· 383· 384· 386· 396·
Եգիպտացիք · · 45· 94·
Եգիպտական Սարակինոսներ 134·
Եդեսը մեծ իշխան · 216·
Եդեսիա 37· 79· 109· 124· 216· 240· 272· 307·
Եղերիտցիք (Եղերցիք) 182·
Եղը կաթողիկոս · · 121·
Եթովպացիներ · · 203·
Ելիսիա · · · · 10·
Եղիա Երուսաղէմացի 47· 48·
Եմեն · · · · · 92·
Եպիդաւրոս—Լիմերա 105·
Եպիփան եպիսկոպոս Կիպրացի 13·
Եպիփանէ քաղաք · 48·
Երեմիա · · · · 235·
Երուսաղէմ 81· 117· 121· 123· 135· 326· 328· 330· 344· 345· 374·
Եւբոյէ · 343· 419· 485·
Եւդինիոս կայսր · · · 9·
Եւդինիոսի վանք · 424·
Եւդէն Դ· պապ 130· 468· 469·
Եւդոկիա (Աթենայիս) 15·
Եւդոկիա կայսրուհի 298· 299· 305·
Եւդոկիա Մակրեմբոլիտիսա 297·
Եւթիմիոս · 206· 207·
Եւստաթէոս Մալեինոս 247· 251·
Եւտիքէս Կոստանդնուպոլսեցի վարդապետ 24·
Եւտրոպիոս Ներբենի · 10·
Եւբինոս · · · · 462·
Եւրոպա· 45· 50· 112· 209· 238· 253· 312· 326· 332· 373· 374· 381· 403· 411· 412· 450· 459· 460· 462· 468·
Եւրոպացիք · · · 458·
Եփեսոս 12· 22· 25· 32· 33· 312· 329· 414·
Եփիմէոս պատրիարք · 45·
Եփրատ 86· 100· 112· 182· 213· 231· 240· 253· 296· 301·
Եւփիտացիք · · · 454·
Եւփրոսիւնէ · · · 397·

Զագորա · · · · 187·
Զակիւնթոս · · · 371·
Զապետրա (Սոզոպետրա) 176·
Զարա · · · · · 386·
Զաքարիա 431· 435· 444·
Զաքարիա պատրիարք 112·
Զէնոն (Թարազիկոտիսա) կայսր 28· 31—41· 114·
Zelenti · · · · 172.
Զեւս · · · · · 222·
Զէյթուն · · · · 466·
Զիւգմին · · · · 346·

Զմիւռնիա 328· 329· 446· 447·
Զոե կայսրուհի 268· 271· 279·280· 287· 289·
Զոե հարճ · 205· 209·
Զուբաա գետ · · · 42·
Զուքնին վանք · · 42·

Էդեսիան Ծով 174· 203· 212· 268· 275·319· 336·337· 351· 380· 419·
Էլ Աքսան տաճար · 81·
Էլիս · · · · · · 10·
Էկթէզիս 122· 130· 437·
Էմէսա · 112· 230· 239·
Էմէրիս Թագաւոր · 386·
Էմիլիա քաղաք · · 99·
Էմպորիում Մոնեմբազիա 105·
Էյջուբիդներ · · · 383·
Էյրենէ դուստր Թէոդոր կայսեր 402·
Էյրենէ Իսահակի դուստր 383·
Էյրենէ դուստր Լասկարիսի 414· 424· 432·
Էյրենէ Թագուհի 334·345·
Էյրենէ կայսրուհի 154·164 —168· 190·
Էննա · · · · · · 181·
Էնրիկօ Դանտոլօ 352· 377·
Epanagoge · · · 202.
Էպիրոս 320·321·383·397· 403·407· 413· 417· 418· 443· 446·
Էպիրոսներ · 417· 418·
Էպիրոտիա 73· 413· 435·
Էրզրում · · · · · 42·
Էտոլիա · · · · · 383·

Թաքիար 303· 327· 329· 330· 401· 420· 422· 425· 430·
Թալաղիկոտիսա Խաւբացի 28·
Թափոր լեռաւ · · 453·
Թեբէ · · · 382· 440·
Թեմուր Լանգ 425· 463·
Թեյս · · · 107· 205·
Թեսալիա 9· 41· 136· 203· 321· 413· 443·
Թեսալոնիկէ 105· 107·129· 136· 141· 203· 255· 277· 278· 297· 344· 366· 367· 370· 372· 377·382· 395· 400—407· 412· 446· 448· 455·458· 460·463—467·
Թերմոպիւլէ · 10· 382·
Թերպիկէ · · · · 199·
Թեվէ · · · 348· 349·
Թէոդահատ · · · 67·
Թէոդիբերդ · · · 70·
Թէոդոս մեծ կայսր 5—9· 11· 16·
Թէոդոս Բ· կայսր 14—18· 20· 25·
Թէոդոսիոս կայսր · 149·
Թէոդոսուպոլիս · · 161·
Թէոդոտէ կայսրուհի 166·
Թէոդորա կայսրուհի 58·

59· 63· 84·
Թէոդորա կայսրուհի 179· 183· 184·
Թէոդորա դուստր Կոստանտին Ը-ի 268· 271· 280· 288· 289·
Թէոդորա Երուսաղէմի Թագուհի 361·
Թէոդորա Թագուհի դուստր Խոքանի 144· 175·
Թէոդորա Դուկէնա · 416·
Թէոդորոս Դուկաս 392·403· 407· 413·
Թէոդորոս եղբայր Յովհաննէս Ը-ի 466·
Թէոդորոս իշխան · 464·
Թէոդորոս Լասկարիս 388· 392·397· 398· 400—402· 405·411· 412· 414·
Թէոդորոս Լասկարիս Բ· 414—416· 421· 422·
Թէոդորոս մինիստր · 142·
Թէոդոր Մանկափաս 397·
Թէոդորիդ Կիւբոսացի 87·
Թէոդորիխ· 2· 38· 39· 51· 58· 67· 194·
Թէոդորոս Մելիսինոս պատրիարք 172·
Թէոդորոս Պալէօլոգ 462·
Թէոդորոս պատրիկոս 175·
Թէոդորոս Ստուդիոնցի 165· 166· 172· 180·
Թէոդորներ · · · 178·
Թէոդորիտոս Կիւրոսացի 26·
Թէոդորոս Մոպսուէստացի 21· 46· 87·
Թէոդուպոլիս (Կարին) 17· 42·
Թէոկրիտոս աղգական Ա-մանթիոսի 53·
Թէոկրիտոս Լոդոթէա 179·
Թէոկրիտոս Բրկլենիոս 182·
Թէոփանէ կայսրուհի 224· 226·229· 232—234·
Թէոփանէս պատմագիր 51·
Թէոփանէս պատրիկոս 216·
Թէոփանոն կայսրուհի 205·
Թէոփիլոս պատրիարք Աղեքսանդրիացի 14· 21·
Թէոփիլոս 173· 174· 176· 178· 248·
Թէոփիլակտոս պատրիարք 200· 223· 279·
Թէոփիլակտոս Սիմոկատէս պատմագիր 111·
Թէոփոբոս իշխան 176· 178·
Թիբօ Գրաֆ · · 384·
Թիֆլիզ · · · · 116·
Թովմաս զօրապետ · 173·
Թովմաս Մարոսին · 394·
Թովմաս Միւնցեր · 322·
Թովմաս որդի կայսեր 466· 467· 472·
Թորոս · · · · · 388·
Թուրախան · 466· 474·
Թուրքեր · · · 96· 205·
Թուրքմաններ · · 466·
Թրակեզիոն · 275· 376·
Թրակիա 9· 12· 28· 38·42· 51· 76· 105· 140· 170· 173· 235· 255· 285· 312· 322· 323·

343· 390·407· 430· 445·

Ժան դը Բրիէն· · 407·
Ժուպան մեծ (Grossjupane) 197· 341·

Իբաս Եդեսացի · 26· 87·
Իկոս (կիւբելէ) չատուա-ծուհի 21·
Իգնատիոս պատրիարք 184· 187· 189· 195· 196·
Իգնատեանք · 189· 202·
Իլլիւրիա · · 432· 443·
Իլլիւրիկա 9· 10· 53· 74· 76· 160· 208· 211·
Իլլուս Խաւրացի 31· 32· 34—37· 50·
Իկարիա · · · · 405·
Ինոկենտ Բ· պապ · 14·
Ինոկենտ Գ· 380· 383· 385· 386·
Իպեկ · · · · · 448·
Իռլանդիա · · · 395·
Խաւրիա · · · · 41·
Խաւրացիք 34· 40· 69· 238·
Խաւրեան երեկոյ · · 31·
Խահակ Անգեղոս կայսր 366· 368—379· 383· 385· 388· 390·
Խահակ Կոմնեն կայսր 288—293· 302· 310· 311·
Խահակ զօրավար · 335·
Խահակ Կոմնեն · 366·
Խէս պրոտոստրատոր 405·
Խթմոս · 76· 464· 466·
Խիդորթուս կարդինալ 474·
Խիդորոս · · · 468·
Խալամ 123· 134· 150· 157· 183· 203· 214· 477·
Խալանդցիք · · · 274·
Խակեսանդար բէկ 471· 472·
Խոպերիկ (Ալպերուհ) 136· 137· 144·
Խատրիա · · · 88· 169·
Խրայէլացիներ · · 106·
Խվայ զօրավար · · 259·
Խվանկո · · 379· 380·
Խուզիա 9· 10· 28· 39· 66· 68—75· 88· 98· 99· 103· 104· 122· 131· 137· 138· 159· 160· 169· 198· 203· 204· 212· 234· 253· 276· 281—283· 301· 302· 320· 322· 331· 350· 352· 381·
Խալիցիք 439· 366· 444·

Լազեր · · · 79· 115·
Լազիկա · · · · 115·
Լազիստան · · 79· 80·
Լակեդեմոնացի · · 105·
Լամբսակոս · · · 409·
Լանգիբարդիա · · 198·
Լանգոբարդներ 74· 97—99· 103· 104· 131· 204· 276· 307· 352·
Լապատիոն · · · 398·
Լասկարիս Յովհաննէս Դ· 393· 397· 400· 403· 415· 416· 422· 433· 434·
Լատերան · · · · 129·
Լատիններ 57· 94· 196· 229· 279· 328· 358· 362· 363· 367· 391· 392· 398—412· 420· 422· 430·
Լարիսա · · 255· 321·
Լաւոդիկիա · 329—330· 337·
Լեկապեններ · 220· 221· 223· 243· 244·
Լեկաս պօղիկեան · 322·
Լեկէչէի Տանկրեան · 367·
Լեհերը · · · 469· 470·
Լեմնոս · · 212· 465·
Լենոնտարիոն · · 462·
Լեսբոս 122· 168· 405· 444·
Լեվանտ · · · · 419·
Լեթարիս հերցոգ · 75·
Լեւոն Գաբալոս 397· 408—409·
Լեւոն եղբայր Նիկեփորոսի 234·
Լեւոն զօրապետ · · 11·
Լեւոն Թուռնիկ · · 287·
Լեւոն կայսր 27—31· 40·
Լեւոն Խաւրացի կայսր 3· 149—162· 264· 300·
Լեւոն Դ· · · · · 163·
Լեւոն Ե· Հայ 170· 171· 173· 183· 184·
Լեւոն Զ· 199—201· 204—207·
Լեւոն մեծ պապ 24· 85· 87·
Լեւոն Թ· պապ 282· 283·
Լեւոն Ութերոս · · 382·
Լեւոն Տբեսլոլսեցի · 203· 212·
Լեւոն փիլիսոպայ · 333·
Լեւոն Փոկաս 210· 223·
Լեւոն Օխրիդայի եպիսկոպոս 283·
Լեւոնտիոս · · · 110·
Լեւոնտիոս եպիսկոպոս 85·
Լեւոնտիոս կայսր 142· 143·
Լեւոնտիոս հրամանատար 35·
Լեւոնտինոս · · · 181·
Լէս կարինալ · · 380·
Լիբանան · · · · 135·
Լիբանեան փիւնիկիա 48· 135·
Լիբանոս · · · · 239·
Լիբերիոս պատրիարք 75·
Լիբունիոն · · · 324·
Լիգուրիա · · · · 70·
Լիլ—դը Գրբէոս · 394·
Լիոն · · · · · 432·
Լիւզանդը · · · 360·
Լիւնիտիս · · · 254·
Լիւկաս · · · · 331·
Լիւկիա · · · · 275·
Լիւկոպոլիս · · · 124·
Լիւտպրանդ եպիսկոպոս 229·
Լոմբարդիա · 352· 354·
Լոնգինոս եղբայր Զենոնի 41·
Լոնգինոս եպիսկոպոս 93·
Լոպոդիոն · · · 366·
Լուդովիկոս Բ· · · 197·
Լուդովիկոս Է· · · 344·
Լուդովիկոս ԺԴ· · · 99·
Լուդովիկոս, սուրբ 410·

Լուկանիա . . . . 72·
Լուսարկոս . . . . 401·
Լուսերկուլեան տներ 44·

Խաղարներ 115, 144· 146· 154· 175·
Խալդիա . . . . 382·
Խալիլ—Փաշա . . 473·
Խալկիդիկէ 447· 448·451·
Խանդաքս . . . . 225·
Խարաքս . . . . 400·
Խարսիանոն թեր 247 - 248·
Խարիթ . . . 77· 79·
Խարիուպոլիս . . . 399·
Խերսոնէս Տաւրիկեան տես Քերսոն·
Խիլանդարի վանք . 453·
Խիրա երկիր . . . 77·
Խլաթ . 263· 301· 303·
Խլոդովիխ . . . . 194·
Խոնաէ . . . . 302·
Խոսրով—Անտիոքիա . 78·
Խոսրով թագաւոր 70· 77—79·
Խոսրով Բ· 100· 103· 109· 112· 116· 185·
Խորասան . . 176· 294·
Խոտմ . . . . . 339·
Խրիստիան արքեպիսկոպոս 351·
Խրիստուպոլիս . . 404·
Խրիւզոխէյր . 198· 199·
Խրիւսոստոմոս ծովապետ 347·

Յիդեպին . . . . 469·

Կալաբրիա 132· 198· 232· 312· 381· 454·
Կալաթիա . . . 388·
Կալանդիոն պատրիարք· 36·
Կալինիկոս քաղաք . 77·
Կալլինիկոս ինժեներ· 134·
Կալլինիկոս պատրիարք 145·
Կալլիպոլիս 409· 450· 457·
Կալոյոս—Յոհաննէս 342· 357·
Կալս—Պետրոս· 372, 379·
Կալոջան 380· 381· 398—400·
Կալֆատէս . . . 280·
Կամարիլա . . . . 47·
Կամենդավ . . . 296·
Կամիւցէս . . . . 380·
Կամպանիա . . . 74·
Կայիրէ . . . . 271·
Կայրուան . . . 230·
Կանտակուզենոս 372· 383· 445—449· 462·
Կապադովկիա 60· 100· 112· 301· 304·
Կապատան Դոկէանոս 281·
Կապիտոն . . . . 286·
Կապոյտներ . . . . 63·
Կապուա . . . . . 75·
Կաստամնա . . . 289·
Կաստորիա 309· 320· 404· 413· 417· 443·
Կատակալոն . . . 289·
Կատարինա . . . 425·
Կարաման . . . . 473·
Կարամբէս . . . 422·

Կարասու . . . . 444·
Կարբէաս . . 183· 198·
Կարթագինա . . . 174·
Կարթագոյ· 66· 76· 103· 132· 143·
Կարին . . . . . 42·
Կարլ Մարտել . . 150·
Կարլոս մեծ· 5· 167· 168·
Կարոլինգներ . . 197·
Կարոլոս Անժուացի 430—432· 435· 436·
Կարս . . . . . 296·
Կաւատ թագաւոր 42· 77· 448·
Կեդէն . . . . 284·
Կելեր . . . . . 43·
Կելլէնէ . . . . 385·
Կելդենէ . . . . 263·
Կեղեստինոս պապ . 22·
Կեսար Յուլիոս 5· 319· 320·
Կեսարիա 112· 310· 424·
Կերպալենիա . 337· 339· 371·
Կիբոտոս . . . . 400·
Կիեվ . . . 232· 249·
Կիլիկիա 141· 144· 198· 225· 327· 331· 333· 338· 359·
Կիպրոս 128· 140· 169· 230· 366· 377· 446
Կիւբելէ (Իզիս) չաստուածուհի 21·
Կիւբերայոտիկոն թեմ· 275· 336·
Կիւզիկոն . . 135· 400·
Կիւնուլիա . . . 105·
Կիւրեղ եպիսկոպոս 2· 7· 21—23· 85·

Կիւրեղ զօրավար . . 50·
Կիւրենայիկա . . . 231·
Կիւրիլլոս . . 185· 186·
Kyriake des orthodoxias 180·
Կիւրժան . . . . 233·
Կիւրոս քաղաք . . 350·
Կիւրոս եպիսկոպոս . 120·
Կիւրոս պատրիարք . 124·
Կլասիս նաւահանգիստ 146·
Կլաւդիուպոլիս 355· 399·
Կլաւդիա Գոթիկոս կայսր 7· 208·
Կլէոպատրա . . . 361·
Կլոկոտնիկա . . . 407·
Կղեմէս եպիսկոպոս . 187·
Կղեմէս Դ· պապ . 430·
Կոլխիս . . . . . 79·
Կոլոման թագաւոր 339·
Կոլոնի· . . . . 306·
Կոկիսոն . . . . 14·
Կոմէս Տրիբիգիլդ . 11·
Կոմսներ 6· 261· 316—318· 336· 340· 358· 361· 421—425· 429· 452·
Կոնոն արքեպիսկոպոս Ապամէի 41·
Կոնոմիլա . . . 469·
Կոնրադ Գ· . . . 343·
Կոպտեր . . . . 124·
Կոսլրոնիմոս (նոյն Կոստանդին է) 161·
Կոս . . . . . 405·
Կոսմաս Ատտիկոս . 322·
Կոսովօ—Պոլէ 436· 459·
Կոստանդին մեծ կայսր 17·

19· 208· 300· 317·
Կոստանդին Բ. Կայսրակից Հռոմակլի 114· 125·
Կոնստանս (Կոնստանտինոս) կայսր Գ· 125· 127· 132· 140·
Կոստանդին Ծիրանածին 206· 208· 210·
Կոստանդինոս Դ· Պոգոնատոս 132· 134· 137· 139· 154· 307·
Կոստանդին Ե· 154· 155· 161· 162· 234·
Կոստանդին Զ· կայսր 164· 166· 167·
Կոստանդին կայսր Է· 219· 223·224·243—245·
Կոստանդին Ը· 226· 267·
Կոստանդին Թ· 4·264·271· 278· 280—287·
Կոնստանդին Ժ· Դուկաս 252· 291·
Կոնստանդին կայսր· 467· 469· 471—477·
Կոստանդին ամուսին Մարիա Թագուհու 430·
Կոնստանդին գահաժառանգ եւ վարդապետ 313·
Կոնստանդին դանձապետ 388·
Կոստանդինոս Դիոգենէս 268· 271· 298·324·
Կոնստանդինոս Դուկաս 208· 209·
Կոստանդինոս հրամանատար 273·
Կոնստանդիանոս կայսրակից 219· 221· 250·
Կոստանդին Կարանինոս 275·
Կոնստանդին Մանոմախոս 452·
Կոնստանդին որդի Թէոդորի 402·
Կոնստանդին Սերբ · 414·
Կոստանդին (Կիւրիլլոս վարդապետ) 185·
Կոստանդին ցար· · 432·
Կոստանդին քաղաք 100· 128·
Կոստանդինոս եպիսկոպոս 157·
Կոստանդիա · · · 13·
Կոստանդինուպոլիս 6·10·31· 36· 47· 52· 57· 65· 71· 73· 81· 83· 114· 134· 146· 153· 160· 229· 253· 260· 261· 270· 272· 273· 313· 344· 356· 366· 367· 402· 409· 410· 425· 426· 445· 457·461—469· 478·
Կոստանդէոններ · · 444·
Կովկաս · · 14· 54· 78·
Կոտիւէ · · · · · 41·
Կորդովա · · 174· 175·
Կորտուբա · · · · 75·
Կորինթ 10· 349· 382· 462· 472·
Կորիւֆոս· 321·348· 371· 411·
Կորֆու · · · · 432·
Կումաններ 296· 322·323· 334· 338· 342· 372·

373· 377· 398·
Կուվրատ · · · · 119·
Կուր իշխան · · · 237·
Կուրկուաս · 214· 216·
Կրասոս · · · · 301·
Կրեմլ · · · · 478·
Կրեմոն · · · 98· 229·
Կրետացի · · · · 409·
Կրետէ 105·118· 135· 143· 174·198· 230· 350· 409· 452·
Կրիմ · · · · · 147·
Կրիսա · · · · · 348·
Կրիվիչ · · · · 134·
Կրոնոս · · · · 222·
Կրովատներ 118· 197·211·
Կրուտ իշխան 170· 171·

Հագար · · · · 214·
Հագարացիներ 141· 213·
Հադրիան Բ. պապ 187·195· 196·
Հալէպ 225·230·247·261· 272· 301·
Հալիս · · · · · 422·
Հալիւս · · 213· 246·
Հալմիւրոս գղեակ · 397·
Համամանիդներ 224· 235· 307·
Հայաստան 18, 42, 78, 93, 100, 103, 113—115, 121, 128, 140· 141, 161, 186, 190, 201, 214, 215, 253, 261, 262, 264· 285· 294· 295·304· 341· 411·
Հայեր 17· 18, 42· 99· 144· 148· 155, 161· 195· 199, 213—215· 227· 233, 240· 256, 263, 286, 287· 301· 307· 327·
Հայկական թեմ · · 149·
Հառալդ Հառդրադէն 275· 276·
Հարուն—առ—Ռաշիդ 164·
Հաքիմ դրուզների աստուած 271·
Հեբրաս · · 141, 409·
Հելգերիքս · · · · 64·
Հելենա Թագուհի · 379·
Հելենա Բաբեկի կինը 176·
Հելենա դուստր Ռոմանոսի· 210·
Հելլէններ · · · 248·
Հելլիոպոլիս · · · 124·
Հելլաս · 106· 119· 162· 164· 255· 349·
Հելլէսպոնդ 141· 153, 250, 405· 412, 418· 458·
Հելիոդաբալոս · · 132·
Հելուրներ · · · · 92·
Հեղի քահանայապետ 221· 257·
Հեղինէ · · 224· 313·
Հեմուս թերակղզի 107, 118· 119· 125· 126, 136· 137· 155· 201· 234· 235· 248· 259· 261· 276· 297· 323· 339· 371· 373· 435, 436· 442·
Հենոտիկոն· 33· 36· 45· 239·

Հէյնրիխ դրաֆ 398· 400—402·
Հենրիկոս Զ· · 377· 378·
Հերակլ կայսր 3· 6· 110—119·122—125·147· 150· 154·246· 326· 346·
Հերակլ Բ· (Հերակլէոնաս) 125· 126·
Հերակլ Գ· · · · 134·
Հերակլ կայսեր եղբայր 81·
Հերակլէս 306· 399· 422· 430·
Հերակլէի ժողով · · 51·
Հերմոս · · · · 415·
Հնդալդոյ · · · 439·
Հիերիոն · · · · 216·
Հիերոկլէս · · · 231·
Հիերոպոլիս · 225· 230·
Հիւդրոս (Otronto) 281—283· 301·
Հիւսլատիոս հակաթոռ կայսր 62·
Հիւսլատիոս զօրավար 50·
Հնդկաստան · 363· 384·
Հոներ 9· 12· 19· 20· 26· 50· 74· 76· 115·
Հոնորիոս եպիսկոպոս 121· 139·
Հոնորիոս կայսր · 9· 16·
Հոպփ· Կ· պատմագիր 106· 395·
Հուռմ (Իկոնիա) 315· 330· 338· 357·379· 411· 422·
Հորմիզդաս պապ 51· 55·
Հուգո Թագաւոր · 224·
Հուգո Ռուսոս դը Սիլէ 435·
Հումբերդ կարդինալ 284·
Հունդարիա 336·411·461· 467·
Հունգարներ 346·371·469·
Հունիւադ · 470—472·
Հուհնոս · · · · 385·
Հուռդոս 128· 149· 169· 397· 405· 408· 444· 462· 463·
Հռոմ 13· 18· 24—26· 34· 37· 44· 46· 51· 54· 56· 57· 68—73· 77—79· 83· 85· 87· 97· 99· 102· 103· 130—132· 138· 139· 144· 145· 148·159—167· 180· 185—206· 212· 213· 255, 282· 283· 291· 310·339—342· 354· 355· 380· 385·395—397· 435·
Հռոմայեցիք 17· 19· 38· 42· 48· 64· 66· 68· 71· 72· 74· 75· 79· 80· 97—100· 112· 118· 120—123· 131· 132· 140· 143· 161· 163· 164· 171· 187· 195—197·210—214· 226—228·232—240· 249· 259· 263· 264· 275· 307· 311· 322· 325· 327· 331· 339· 341· 346· 374· 381· 398· 405· 406· 413· 421· 423·

Ղազարոս · · · · 178·
Ղալաթիա · · · 389·
Ղլիչ Ասլան 324·328· 354· 355·
Ղուկաս աւետարանիչ 391·

Ճորայ պատկեր · · · 8·

Մադնելիա · · · 415·
Մաթէոս Ուռհայեցի 327·
Մալաթիա (Մելիտինէ) 161· 164· 213·
Մալակա · · · · 76·
Մալեյինոս · · · 247·
Մալտա · · · · 197·
Մալքոս · · · · 110·
Մակաբայեցիք · · 183·
Մակեդոնիացիք · · 364·
Մակեդոնիոս պատրիարք 45· 48·
Մակեդոնիա 38· 41· 119· 136· 164·170· 193· 212·219· 221· 238· 254· 256·285·288· 297·324· 373·380· 399· 412· 414·417· 430· 443· 446·451·
Մակէր դը Ս· Մէնեհուլտ 405·
Մակրէն · · · · 399·
Մահմեդականներ 187· 204·205· 296· 338·339· 345· 358·
Մամիկոնեաններ · · 17·
Մամլուն · · · · 262·
Մամուն · · · · 176·
Մայիսեան ոծներ Բրուսայի 44·
Մայլանդ · · · · 70·
Մայնա · · · · · 418·
Մայնց · · · · · 351·
Մանազկերտ 263·287·363· 376·
Մանիակէս 276· 280· 281·
Մանիքէացիք · · · 234·
Մանուէլ կայսր 327· 338· 340—360·374· 377·
Մանուէլ կայսր Թեսալոնիկէի 408· 412·
Մանուէլ որդի Յովհաննէս Զ-ի 449· 450· 458—466·
Մանուէլ զօրապետ 176·
Մանուէլ իշխան կոմնեն Տրապիզոնում 420· 423· 424·
Մանուէլ կոմնեն · 302·
Մանուէլ Գ· Տրապիզոնում 425·
Մանուէլ հօրեղբայր Թէոդորայի 179·
Մանուէլ Մաուրոկոմէս 397·
Մանֆրէտ 417· 429· 430·
Մասլաման · · · 153·
Մատասվինտա · 68· 73·
Մարգոս · · · · 19·
Մատթէոս · 449· 450·
Մար Իոհաննա (Սրիդտա) 228·
Մարաստան ստորին 272·
Մարգարիտա · · · 371·
Մարգարիտոնէ 367· 471·
Մարդաիտներ· 135· 140· 155·

Մարիա թոռ. Ռոմանոս կայսեր 212·
Մարիա Անտիոքի իշխանուհի 345· 356· 361·
Մարիա թագուհի Բուլգարների 218· 258· 259·
Մարիա դուստր Աստենի 408·
Մարիա դուստր Լասկարիսի 415·
Մարիա թագուհի Յովհաննէս Դ-ի քոյրը 430· 432·
Մարինոս · 45· 49· 51·
Մարկիանոս իշխան · 34·
Մարկիանոս կայսր 25—28· 36·
Մարկիանոս պատրիարք 29·
Մարկիանուպոլիս · 107·
Մարկոս Աւետարանիչ 13· 24· 30· 292·
Մարսոս · · · · · · 35·
Մարտին Ա· պապ 129· 130·
Մարտին Դ· պապ · 435·
Մարտինա · · · 125·
Մարտիւրոպոլիս 102· 103· 239·
Մաւուռնորոս · · · 426·
Մաւրեր · · · · 103·
Մաւրիկոս 95· 100—108· 118· 119·
Մաւրոս պատրիկոս 146·
Մաւրիտանացիք · 64· 66·
Մաքսիմոս դեսպան · 20·
Մաքսիմոս Ս· 122· 129· 130·
Մեգարա · · · · 10·
Մեղեմբրիա 171· 211· 322· 430· 432· 450· 466·
Մեթոդիոս առաքեալ 185—187·
Մեթոդիոս խոստովանող 180·
Մելուտին · · · 436·
Մեղանդինա · · 436·
Մելինիկոս · · · 412·
Մելիսենոս 313· 314· 318·
Մելիսոններ · · · 383·
Մելիտինէ 100· 148· 199· 213· 228· 229· 270·
Մելիք – Շահ 310· 311· 332·
Մելոդիոն · · · 368·
Մելքիտէս · · · · 30·
Մելֆին · · · · 281·
Մեմնոն Եփեսացի · 22·
Մեյանդրոս 337· 355· 397· 402·
Մենայոն (Մենայ) · 175·
Մենանդրաս · · · 110·
Մենաս · · · · 84·
Մեսինա 181· 276· 447·
Մեստա · · · · 448·
Մեսրոպ Ս· · 118· 186·
Միզիզիոս (Մժեժ) Հայ 132·
Միլան թագաւորՍերբիայի 2·
Միլենգեցիք (Միլինցիք) 182·
Միհրդատ մեծ · · 362·
Միջագետք 43· 78· 84· 109· 124· 231· 303·
Միջին—Իտալիա տես Իտալիա·
Միսթիա · · · · 147·
Միրզա իշխան · · 461·
Միւլէ (Մելազոյ) · 203·
Միւսիա 9· 50· 107· 119· 137·
Միւսիթրիա 418· 449· 462· 464· 467· 471· 472·
Միւրիոկեֆալոն · 355·
Միքայէլ Ա· · 183· 184·

Միքայէլ Բ· · 172—175·
Միքայէլ Գ· 179· 183—185· 193· 198· 199·
Միքայէլ Դ· Պափլոգոնացի 273· 276· 278· 279· 285·
Միքայէլ Ե· Կալֆատար 273· 279· 281· 283·
Միքայէլ Պարապինակէս կայսրը 306· 308· 312· 314·
Միքայէլ Թ· · 313· 325·
Միքայէլ Ակոմինատոս 382·
Միքայէլ Անգելոս Կոմնեն 397·
Միքայէլ Բալքոս · 193·
Միքայէլ Բորիս 187· 196·
Միքայէլ Դուկաս · 305·
Միքայէլ դահաժառանգ 440·
Միքայէլ Աստենցարի 414· 441· 442·
Միքայէլ զօրապետ · 172·
Միքայէլ Էպիրոտցի · 403·
Միքայէլ իշխան Սերբերի 309·
Միքայէլ Ա· իշխան Կորիւֆոյի 411·
Միքայէլ Բ· իշխան Կորիւֆոյի 411· 413—415· 417—420· 428—435· 438·
Միքայէլ Կերուլարիոս 282· 290·
Միքայէլ Պալէոլոգ 415· 416· 417·
Միքայէլ պատրիարք 400·
Միքայէլ սորատիոտիկոս 289·
Միքայէլ—սուրբ · · 302·
Միքայէլ Տրաքանիոտէս 435·
Մծբին 43· 100· 103· 216· 230·
Մոավիա 127· 128· 134· 135· 185·
Մոգլենա 258· 320· 324· 404·
Մոզիւնոպոլիս · · 370·
Մոլենիտներ · · 454·
Մոհամէդ Բ· 473—477·
Մոհամեդ սուլթան 463· 464·
Մոնֆերատ · · · · 447·
Մոնգոլներ · 411· 423·
Մոնեմբազիա 343· 418· 464·
Մոնոպոլ · · · · 281·
Մոնտանիստներ · · 157·
Մոնֆերատ Բոնիֆացիո Բ· 384·
Մոռավա · · · · 377·
Մոռէա · · 418· 444·
Մոսիւնոպոլիս 255· 299·
Մոսլիմներ 123· 148· 150·
Մոսկուա · · · · 291·
Մուզալոն պրոտոնոտարիոն 415·
Մութասիմ խալիֆ · 176·
Մուհամէտ · · · 230·
Մունդոս · 63· 68· 70·
Մունդիր · · · 77· 79·
Մունկափաս · · · 398·
Մուստափա կեղծ 464—466·
Մուրադ Ա· · 456· 458—460· 464· 465·
Մուրադ Բ· · 465—472·
Մուրզուֆլոս · · 391·
Մոփսուէստիա · · 229·

Յակոբեանները · · 120·
Յեսուայ սիւնակեաց 42·48·
Յոբիանոս կայսր · · 17·
Յոյն 28· 38· 41· 43· 52· 57· 70· 86· եւլն·
Յոնիական Ծովակ · 337·
Յովակիմ · · · · 409·
Յովասափ · · · · 450·
Յովհաննէս Անդէլոս 412· 445· 446·
Յովհաննէս Աղէքսանդրացի 121·
Յովհաննէս Անտիոքացի (Ոսկեբերան) 12·13·15· 22· 32· 159· 191· 437·
Յովհաննէս Ասէն 372· 379· 406·
Յովհաննէս արքեպիսկոպոս 136·
Յովհաննէս Բագրատունի Թագաւոր 262· 263·
Յովհաննէս Բեկկոս · 434·
Յովհաննէս Բռանաս զօրավ· 367·
Յովհաննէս բռնապետ 16·
Յովհաննէս գահաժառանգ 334·
Յովհաննէս զօրավար Գոթացի 36·
Յովհաննէս Գրանտ Գերմանացի 476·
Յովհաննէս դէսպոտ Մեծ Վլախիայի· 417·
Յովհաննէս Դուկաս կեսար 299· 305·
Յովհաննէս Եփեսացի պատմաբան 91·
Յովհաննէս զօրապետ 69·
Յովհաննէս Էլադաս 208· 209·
Յովհաննէս Իսահակ կայսրը եղբայր 292·
Յովհաննէս Կալո-Յովհաննէս 335·
Յովհաննէս Կամիւցէս 405·
Յովհաննէս Կանտակուզէնոս 444·
Յովհաննէս Կապպադովկացի 60·
Յովհաննէս Կուրկուաս 213·
Յովհաննէս Հունիվադ 467·
Յովհաննէս որդի Մանուէլի 464· 465·
Յովհաննէս կայսր որդի Մանուէլի·423· 425· 430·
Յովհաննէս մինիստր · 64·
Յովհաննէս Զմշկիկ 229·232· 233· 338· 452·
Յովհաննէս պապ · · 58·
Յովհաննէս պապ Ը· 186·
Յովհաննէս պահեցող 101·
Յովհաննէս պատրիկոս 143·
Յովհաննէս պատրիարք 178·
Յովհաննէս պատրիարք Սերբիայի 443·
Յովհաննէս Ռադինոս 212·
Յովհաննէս սեբաստակրատոր 372·
Յովհաննէս Դուկաս Վատացէս 355· 402·
Յովհաննէս վարդապետ 273· 274·
Յովհաննէս Վլադիսլաւ 258·
Յովհաննէս Քերական 192·
Յովհաննէս Քսիտելինոս 299

Յովհաննէս եպիսկոպոս Օխռիդայի 260·
Յովհաննէս Բ· Կոմնեն 334· 336—340·
Յովհաննէս Դ· 405· 412· 417·
Յովհաննէս Դ· Լասկարիս 432·
Յովհաննէս Ե· 444· 449· 450·
Յովհաննէս Զ· 445—449·
Յովհաննէս Լ· 457—463·
Յովհաննէս Ը· 196· 466· 469—472·
Յովհանինա· · 429· 443·
Յովսէփ Բռէդաս · 225·
Յովսէփ Բ· · · · 190·
Յովսէփ պատրիարք 434· 437· 468·
Յորդանան · · · 112·
Յուլիան քարոզիչ · · 92·
Յուլիան ուրացող · 286·
Յուլիան սեղանաւոր· 86·
Յունաստան 10· 76· 106· 158· 169· 198·372· 454· 471·
Յուստին Իլլիւրացի կայսր· 53·54·59·60·77·82·
Յուստինիան կայսր· 2·6·42· 53· 56—68· 71· 73· 74· 77· 80· 81· 84· 89—95· 126· 202· 259· 274·282· 307· 352·
Յուստինոս Երկրորդ 94—98· 111·134· 139—147· 248· 262·264· 265·
Նախսոս · · · · 19·
Նակոլէյաս · · · 157·
Նահարվան · · · 116·
Նաուպակտոս · 277· 397·
Նաուպլիա · · 275· 382·
Նապոլէոն Ա· · · 194·
Նարսէս Ներքինի 69· 74· 75· 98· 194·
Նաքսոս · · · · 444·
Նեկսար · · · · 338·
Նեղոս · 124· 295· 384·
Նեստոր 21—23· 26·37·46·
Ներսէս Մեծ · · · 190·
Նետոս · · · · · 181·
Նէապոլ 68· 72· 99· 435·
Նէոպատրէ · 430· 434·
Նիկետաս զօրավար · 110·
Նիկետաս Ներքինի · 239·
Նիկետաս պատրիկոս 113· 230·
Նիկետաս պատմագիր 379· 399·
Նիկետաս վարդապետ 184·
Նիկեփորոս Բոտանիատէս 297· 312·
Նիկեփորոս Բռիենիոս 288· 312· 334·
Նիկեփորոս որդի Լասկարիսի 415·
Նիկեփոր Կաբալաս· 455·
Նիկեփորոս Կալուքէս 349·
Նիկեփորոս կայսր 168—171·
Նիկեփորոս Բ· 223—239· 243—246· 451·
Նիկեփորոս Մելիսենոս 313· 314·
Նիկեփորոս Ուրանոս 256· 261·

Նիկեփորոս պատրիարք 165· 168· 172·
Նիկեփորոս Քսիֆիաս 257·
Նիկիա 7· 33· 62· 63·165· 289·313· 329· 360· 396· 397·400· 401· 404· 405·407· 412· 413· 417·421· 440·
Նիկիու քաղաք· · 124·
Նիկոն · · · 225· 291·
Նիկողայոս Ա· 187· 189· 195· 211·
Նիկողայոս Կանաքոս կայսր 391·
Նիկողայոս Պաւլոս Կանտակաւզոն· 323·
Նիկողայոս միւստիկոս պատրիարք 206·207·220·
Նիկոմեդիա 324· 398·400· 441·
Նիկոպոլիս 277· 289·297· 461· 471·
Նիկոփորիցէս · · 308·
Նիմանիա · · · · 377·
Նինուէ · · · · 116·
Նիշ անապատ 284· 375· 377·
Նիւմֆէոն · · 413· 419·
Նիւրնբերդ · · · 374·
Նոբատներ · · · 93·
Novellae Constitutiones 83.
Նորդբուիկտ· · · 275·
Նոր Հռոմ· տես Արեւելա-Հռոմ·
Նոր Հելլէններ · · 427·
Նորմաններ 266· 276·281· 282· 315·316· 318· 319· 320·321· 322· 324· 331· 337· 344· 346· 347· 348· 349· 350· 351· 353· 367· 370· 372· 374· 376· 377· 431· 435·
Նորվեգիա · · · 275·
Նորվեգցիք · · · 274·
Նուբեացիք · · · 93·
Նումիդեան լեռներ · 65·
Նուբ–էտ–դին · 345·

Շահբարաղ զօրապետ 112· 115· 116· 119·
Շահին զօրավար · 115·
Շամպայն · · · · 384·
Շայիղար · · · · 261·
Շանխայ· · · · · 341·
Շերօէ զօրապետ · 116·
Շեշման Ա· 238· 254· 457·
Շեշմանիդներ · · 261·
Շոտլանդիա · · · 12·
Շվեինկֆէլդ · · · 454·
Շվեցարիա · · · 277·

Ողիւբրիոս · · · 28·
Ոսիաս · · · · · 88·
Ոսկեղջիւր · 197· 475·
Որիգէն · · · · · 21·
Որմիզդ· Թագաւոր պարսից 100·
Ուղեր (Օղուզներ Պոլովցի) 299· 302·
Ուզուն Հասան խան 425·
Ուլդէս Թագաւոր Գոթացոց 12·

Ուրբան Բ· · · · 326·
Ուրբան Ե· պապ · 457·
Ուրխան իշխան · · 473·
Ուրխան սուլթան 441·443·
Ուրսել Բայլէյեւլի 302·311·

Զամուլու · · · · 463·
Զէնտուրիոնէ իշխան 464·
Զիւգմին· · · · · 345·
Զմշկիկ կայսր 234 -245· 255· 339· 373·

Պալերմո · · 347· 349·
Պալէոլոգներ 7· 320· 416· 423·427·429·448— 450· 452·458· 459· 467· 472· 478·
Պալիէն · · · · 381·
Պաղեստին 45· 51· 231· 270· 338·345, 347· 383· 397·
Պահլաւունիներ · · 195·
Պամպրեպիոս պրոֆէսոր 35·
Պամֆիւլեան քաղաքներ 135· 332· 338·
Պանագիա Հոտիդետարիա 391·
Պանոնիա 19· 37· 97·119· 186· 259·
Պանիոն · · · · 399·
Պանորմոս · · · · 175·
Պաչինակներ (Պեցենիգներ) 175 204·210·232· 236· 258·268· 269· 284·291· 296· 297· 323· 324· 338· 339· 342·
Պասլ Թագաւոր Հայոց 17·
Պապիրիոն · · · · 36·
Պարբալիս Բ· պապ · 331·
Պասարեաններ · · 358·
Պասաւիոնում · · · 98·
Պատրէ · · · 169· 467·
Պատրիկոս կայսր · 29·
Պարթեւներ · · · 215·
Պարսիկ 17· 18· 19· 27·42· 43·54·63·71·77·79· 96· 99—119· 147· 154·176· 240· 249·
Պարսկաստան 77· 91· 112· 115·
Պաւկալէ · · · 246·
Պափլագոնիա 285· 332· 360·
Պելեպոնէս 105· 119· 162· 164· 169· 182· 256· 349·429· 462·466· 467· 471· 472·474· 478·
Պելագոնիա · · · 419·
Պենտագակտիւլոս Լ· 182·
Պենտապոլիս · · · 99·
Պետեր Ասէն · · 372·
Պետրոս դէ Բրաշէյլ 391·398· 401·
Պետիր ցար 212· 232· 235· 260·
Պետրա · · · 79· 80·
Պետրոս Թագաւոր Արագոնի 435·
Պետրոս Նաեւ Բոտին ցար 309·
Պետրոս Եպիսկոպոս \ Աղէք-

անդրացի 13, 37.
Պետրոս Ամիենացի . 392.
Պետրոս առաքեալ 87, 160, 180.
Պետեր Արագոնացի 438.
Պետրոս Դեվիանոս . 277.
Պետրոս զօրապետ . 230.
Պետրոս կաթողիկոս 286.
Պետրոս մեծ . . . . 184.
Պետրոս պատրիարք . 283.
Պերա . . . 388, 389.
Պերդամոն . . . . 153.
Պերիբէորիոն . . . 399.
Պերիթէորիոն . . . 447.
Պերիկլէս . . . . 451.
Պերնիկ . . 256, 258.
Պերոտներ . . . 474.
Պերսամիլիոն 464, 471.
Պիտոնացիք . . . 183.
Պիզա 326, 341, 366, 409, 433.
Պիզացիք 331, 377, 381, 382, 385, 390, 419.
Պիթիոս 14
Պիսիդիա 11, 147, 332, 338.
Պիրէոս . . . . . 10.
Պիրենէյեան թերակղզի 75, 117.
Պիցենում . . . . 69.
Պիւրոս պատրիարք . 195.
Պիւրոս երկիր . . 295.
Պլաւտիան . . . . 55.
Պղատոն . . . . 292.
Պղատոն պրեսիկա . 49.
Պղատոն վարդապետ 165, 166.
Պոդոնատոր . . . 238.
Պոդեստա դ. . . . 419.
Politichi . . . 172.
Պոլիբոտոս . . . 332.
Պոլիուկտոս պատրիարք 233.
Պոլիուկտոս . . . 227.
Պոմպեյոս . . . 320.
Պոյմանենոն . 398, 405.
Պոնտոս 301, 422, 457.
Պուատիէ . . . . 150.
Պուլլաններ . . . 338.
Պուլբերիա . . . 25.
Պոեղոս 298, 300, 305, 308.
Պտղոմիանք . . . 61.
Պրեսլաւ 137, 211, 231, 236, 285.
Պրեսպա . . 254, 255.
Պրեսորիաններ . . 300.
Պրիլեպ . . 257, 443.
Պրիմիսլաւ . . . 346.
Պրինկիպոս կղզի . 279.
Պրիսկոս . 20, 107—110.
Procheiros Kanon . 202.
Պրոկղոս պատրիարք. 14.
Պրոկոպիոս . . . 110.
Պրոպոնտիս 332, 399, 409.
Պրովանս 70, 224, 430.
Պրոտէ կղզի . . . 222.
Պրոտերիոս . . . . 29.
Պրոտովեստիարիոս . 313.
Պրուղիանոս . 259, 271.
Պրուղոն . . . . 366.
Պրուսա 398, 440, 441, 460, 461.
Պո դէտ . . . . 71.
Պողիկեանք 157, 182, 198, 199, 234, 332, 334.

Ջենովա 326, 409, 429, 459.
Ջենովացիք 342, 377, 382, 418, 419, 423—425, 430, 443, 444, 449, 463, 470.
Ջիովանի Սարիանէս . 381.
Ջիովանի գրաֆ . . 443.
Ջիովանի դը Պրոչիդա 435.
Ջիուլիս ցեղարինի . 469.
Ջիուստինիանի . . 476.
Ջունէիդ . . . . . 465.

Ռաղուզա 275, 351, 456.
Ռադիմիչ . . . . 185.
Ռամեատի . . . 276.
Ռայմոնդ իշխան Անտիոքի 338, 342.
Ռայմոնդ Շատի Լիոն 344.
Ռանդաբէ Միքայէլ Ա. 170, 184.
Ռավենա 68, 70, 71, 74, 81, 99, 103, 130, 145, 146.
Ռատիարիա քաղաք 107.
Ռեդիոն 203, 282, 283.
Ռեկիմիր Գոթացի . 28.
Ռիդեստոս . . . 399.
Ռոբերտ Գենակարտ 302, 313, 319, 320, 322, 330.
Ռոբերդ կայսր 405, 406.
Ռոգեր 322, 347, 350, 351.
Ռոգեր դը Ֆլոր 439, 440.
Ռոդոպէ Ը. 414, 446, 449.
Ռոմանիա . . 398, 399.
Ռոմանոս Արդիւրոպուլոս 268.
Ռոմանոս Դիոգենէս 286, 298—300, 302—310.
Ռոմանոս Լեկապենոս 210, 212, 215—221, 252.
Ռոմանոս Բ. 224, 225, 226, 244, 269, 273, 274.
Ռոմանացիք . . . 69.
Ռոսանոն . . . . 283.
Ռոտուլցի . . . 233.
Ռուբինեան . . . 383.
Ռուդեր . . . . 39.
Ռուբիններ . . . 468.
Ռում . . . . . 436.
Ռումիններ . 468, 469.
Ռուսիլիան կերտ . 414.
Ռուսաստան 181, 206, 274, 291, 369, 411, 430.
Ռուսներ (Ռուսներ) 184, 185, 216, 224, 227, 229, 231—237, 249, 294, 359.
Ռուփինոս . . . 9, 10.
Ռուֆո . . . . 140.

Սաբա . . . . . 51.
Սաբբաս . . . . 421.
Սաբինիան զօրապետ 38.
Սագանոս փաշա . 476.
Սալահ—էդ—դին 354, 375, 378.
Սալամինեան մարտիկներ 159.
Սալերնո 197, 276, 321.
Սալինա . . . . 231.
Սալոմ Ռամշվագ . 139.
Սահակ Ս. . . 13, 186

Սահարա . . . . 92·
Սամհանումներ—Canstitutio 83·
Սամսրիններ . . . . 90·
Սամոս . . . 203· 405·
Սամոսատա 176·199·272·
Սամուէլ Անեցի . . 327·
Սամուէլ ցար 254—259· 477·
Սանդարիոս 221·311·402·
Սանջի . . . . . 458·
Սավոյեա . . . . 457·
Սատանայի եկեղեցի 102·
Սարակինոսներ 77· 175· 197· 203·227· 240· 247· 275·
Սարդէս . . . . 329·
Սարդինիա . 64· 65· 73·
Սարկելամբոց (սպիտակ տուն) 175·
Սարնոս . . . . 74·
Սարուխան . . . 444·
Սաւա . . . . . 453·
Սաֆաւիդներ . . 235·
Սեբաստիա 100· 263· 338·
Սեբաստուպոլիս . 141·
Սեբերինէ Հադիս· 283·
Սելեմբրիա . 460· 466·
Սելջուկներ 151· 262·264· 266· 285· 286·288· 295·298—301· 305· 307· 312·332· 336· 337· 342·344· 355· 372· 376·381·396· 398—402·411·422· 427· 443·
Սենեքերիմ . . . 263·
Սեպեյոս· . . . . 363·
Սեպտիմուս Սեվերոս 315·
Սեպտուում . . . 143·
Սեռէ 379· 412· 414· 426· 448· 456·
Սեսաէ . . . . 405·
Սեվերոս եպիսկոպոս 47·48· 55· 85· 86·
Սեվերիանոս եպիսկոպոս Սերբիացի 13·
Սերապէյոն . . . . 13·
Սերբիա 181· 345· 359· 375· 415· 436· 448· 449· 453· 459· 467·
Սերգիոս պատրիարք 110· 111· 113· 120—122· 137· 183·
Սերգիոս վարդապետ 221·
Սերգիկա . . 73· 170·
Սերմիում . . 98· 346·
Սերվիա . . . . 256·
Սու ծով 79· 92· 136·236· 379· 391· 419· 431· 466·
Սուերոս . . . . 289·
Սէյֆ Ադդավլա . . 225·
Սիգիզմունդ . . . 461·
Սիգուրդ . . . . 275·
Սիդոն . . . . . 47·
Սիլինդիարա . . . 40·
Սիկիլիա 65· 67· 73· 99· 130· 132· 134· 140· 154· 160· 171· 174· 175· 180· 181· 198· 203· 230· 264· 275· 276· 282· 325· 348· 349· 352· 362· 376· 417· 429· 430· 435·
Սիմէոն պատրիարք . 448·

Սիմէոն ցար 204· 205· 209· 211· 212·231· 260·
Սինայի վանք . . 433·
Սինգիդունում 19· 92· 107·
Սինոպէ 147· 324· 401· 422·
Սիոն . . . . . 455·
Սիսիբուտ թագաւոր 117·
Սիրակուս . . 132· 197·
Սիւկիա (Բերուիթ) . 51·
Սիւնադինոս պրոտեստրատոր 314· 441·
Սիւնադեւոս Սանդարիոս 400·
Սլաւոններ 41·74·76·104—107· 112·118· 119· 136· 137· 141· 150· 155· 162·169· 185· 187· 227·235· 238· 253· 264· 266·271· 299· 321·432· 460·
Սկանդինաւիա 184· 236·
Սկանդինաւցիներ . 274·
Սկիւտար . . . . 387·
Սկիւթացիք . . . 51·
Սկիւլակեոն . . . 282·
Սկլավինա . . . 128·
Սկլերայնա . . . 281·
Սկլերոս—Բարդաս 246·247· 255·
Սկլերոսներ . . . 241·
Սկոդրա . . . . 309·
Սկոպիէ 256· 320· 448·
Սկրեպսու . . . . 440·
Սմարագդուս . . 104·
Սմբատ թագաւոր . 214·
Սմբատ Բ· . . . 261·
Սմբատ . . . . 193·
Սողոպոլիս· . 50· 337·
Սոլեդոս . . . . 429·
Սողոմոն . . . 48· 81·
Սուեքներ . . . . 16·
Սուլէյման 310—313· 321· 463·
Սուլէյման խալիֆ 149· 153·
Սուլլա . . 194· 242·
Սոփիա կայսրուհի . 95·
Սոփիա տաճար 81·269·279· 289· 315· 368· 392· 293· 477· 478·
Սոփիա քաղաք . . 463·
Սոփրոնիոս . 121· 123·
Սպաթարոկանդիտատոս Պետրոնոս Կոմիտորոս 175·
Սպաթուրիոս Էլիաս 147·
Սպանիա 5· 16· 75· 117· 137· 324· 439·
Սպանիացիք . . . 435·
Սպարտա . . . . 10·
Սպարտարիա . . . 76·
Սպերխէյոս . . . 256·
Սպոնդիլոս . 267· 272·
Սպորադեան կղզիներ 325·
Սվեատոսլաւ 231·232·235· 236· 248·
Սվինթիլա . . . 117·
Տաւրակիոս Պատրիկոս 164·
Տաւրակիոս Ներքինի 167· 170·
Տատիւռոս սուրբ . 219·
Տաճեմաքի վանք . 318·
Տանամաքոս 412· 430·
Տեփան Բ· . . . 339·
Տեփան Դուշան 442· 446· 448· 455·

Ստեփաննոս մինիստր 142·
Ստեփան Դեմունեան 375·
Ստեփան Նիմանչա · 346·
Ստեփան Նաուադսրծ 273· 276·
Ստեփան Ուրոշ Ա· թագաւոր 414· 436· 442·
Ստեփանոս Ռոմանոսի որդի 219· 221·
Ստեփան պատրիարք 200·
Սոխիքոն · - · 9· 10·
Ստիւլիանոս Դիոյկեսարացի 202·
Սոխլ · · · · · 257·
Սորին Իտալիա տես Իտալիա
Սուդիոն 170· 291· 313· 452·
Սարաբոս կամ Տիարիոս 38·
Սարագնա · · · 287·
Սարատիգոսլուլոս · 420·
Սարումիկա · · · 258·
Սրիւմոն · · 141· 257·
Սրիւմնոն · · · 379·
Սրեդեց (Սերդիկա· Սոֆիա) 255· 256·284· 298·
Սքեւլայոս · · · · 210·
Սքուլաքներ · · · 424·

Վալախիա · 297· 461·
Վալդէնցիք · · · 183·
Վաղէնտինեան կայսր 7· 17·
Վան · · · · · 263·
Վանայ լիճ · · · 301·
Վանդալներ 16· 19· 29· 63 – 66·
Վասպուրական 215· 263· 287·
Վատացէս 405· 407· 408· 409· 410· 411· 412· 413· 414· 416· 419· 428· 429·
Վարդար 320· 380· 432·
Վարիագներ 243·274·275· 276· 300· 315· 320· 388· 392·
Վարնա 137· 377· 400· 471·
Վելեսուժդ · · · 442·
Վելոնա · · · · 331·
Վենետիկ 169· 197· 277· 309· 319·326· 341· 351· 352· 354· 377· 383· 385· 389· 425· 435· 457· 459· 471·
Վենետիկցիք 159· 319· 320· 321· 332· 336· 337· 350 – 352·378· 382·385 – 389· 393· 394· 405· 408 – 410· 418 – 420·430· 431· 436· 438· 446· 449· 457· 458· 462· 463· 464· 466· 467· 471· 475·
Վերոնա · · · · 39·
Վերինա · 31· 35· 36·
Վեսպասիան · · · 290·
Վեստ – Գոթեր 75· 117· 143·
Via Egnatia · · 281.
Վիգիլիոս պապ · · 87·
Վիգալէ Միքիէլ Բ· 351·
Վիտալիան · 130· 138·
Վիտալիան զօրավար 50·51· 54· 55· 57·

Վիտիզէս թագաւոր 68·69· 78·
Վիտրանոն · · · 382·
Վիննա · · · · 385·
Վիլհարդու 384· 417·
Վիլհելմ աշխարհակալ 274·
Վիլհելմ իշխան · 418·
Վիլհելմ Աքէայի պապ 429·
Վիլհելմ Բ· · 251· 352·
Վիմինացիում · 19·107·
Վ· Վիգել · · · 454·
Վիտալիս – Սան· · · 81·
Վլադիմիր · 248· 249·
Վլադիսլաւ · 469· 470·
Վլախիա – Մեծ · · 417·
Վլախներ 372· 373· 377·
Վոդենա 211· 256 – 258· 417·
Վրացիներ 99· 115· 214· 215· 227·233· 262· 287· 421· 422·
Վրատան 79· 140· 246· 261·267· 295· 411· 421· 423·

Տադինա · · · · 74·
Տաճիկ 176·177·182·227· 319· 426·439· 440· 444·450·457 – 462· 465 – 473· 476·
Տայք · · · · · 261·
Տանիա · · · · · 295·
Տանկրեդ · · · 367·
Տարանտոն · · · 281·
Տարասիոս պատրիարք 165·
Տարենտ · · 131· 328·
Տարսոն 35· 164·230·231· 256· 262·
Տարօն · · · · · 383·
Տաւրոկամոն · · · 324·
Տաւրոսմինիոն · · · 203·
Տաւրոս Կիլիկեան · 340·
Տաւրոս 115·135·182·296·
Տէյա զօրավար · · 74·
Տերվիլի · · · · 144·
Տիարիոս կամ Սարաբոն 38·
Տիբերիոս 95· 97· 98· 100· 134· 143· 146· 157· 364·
Տիգրիկէ · · · · 183·
Տիգրիս · · 213· 239·
Տիզբոն · · 112· 116·
Տիկինում · · · · 98·
Տիմոթէոս Աղէքսանդրիայի արքեպիսկոպոս 86·
Տիմոթէոս որեւ Բազիլիսկոս 30· 32· 48·
Տիւպոս · · · · 130·
Տիւրակ (Տիրախ) 284· 285·
Տիւրոս · · · · 48·
Տոտուէլա կամ Բատուէլա 72· 73·
Տորք · · · · · 299·
Տուսկիա · · · · 98·
Տուղրուլ բէգ 287· 294·
Տուրին · · · · 459·
Տռաւղոս Պոզիկեան 323·
Տրայանուպոլիս · · 399·
Տրապիզոն 263· 411· 420 – 424· 426· 434·
Տրավ · · · · · 351·
Տրիադիցա · 322· 377·
Տրգատ · · · 16· 195·
Տրիկամարոն · · · 65·

Տրիբոնեան իրաւաբան 82·
Տրիպոլիս 64· 230· 240· 261· 272· 411·
Տրոյա · · · · 282·
Տրոկունդոս զօրավար 32·
Տրնովօ 254·372·379·408· 409· 433·448· 457· 460·

Ցաղոն · · · · · 65·
Ցարիգրադ · 249· 376·
Ցախաս · · · · 324·
Ցեղար Բորջիա 281· 360·
Ցելդուխան · · · 323·
Ցեմպօ · · · · · 262·
Ցուռուլոն· 314· 410· 412· 456·

Փաղիս· · · 120· 422·
Փանարիտներ · · 279·
Փարսալոս · · · 320·
Փափլագոնիա · · 421·
Փիլատելփիա 327—329· 443· 459·
Փիլարետ · · 301· 330·
Փիլէա · · · · 391·
Փիլիմելիոն · · · 332·
Փիլիպիկոս 113· 146· 147· 156· 246·
Փիլիպ Շվաբացի 383· 385·
Փիլիպուպոլիս 19· 234·235· 255· 319·375· 380· 399·404· 430· 446· 456·
Փիլիքս Գ· պապ · · 34·
Փիլուղէ · · · · · 70·
Փիննական բուլգարներ 41·
Փիւնիկիա · · 231· 240·
Փլաբիան 24·45·47·48·87·
Փղշտացիք · · · 360·
Փոկաս կայսր · 108—110·
Փոկաս Բարդաս 223—227· 246· 248· 250·
Փոկաներ · · · 241·
Փոկէա քաղաք · · 431·
Փոկիա · · · · 444·
Փոտիոս 185·188·190·192· 195· 196· 200· 204· 249· 284· 321·
Փոքր Ասիա· 12·32·41·56· 91· 109· 115· 116· 125· 126· 128· 134· 140· 150· 154· 155· 164· 173· 177· 185· 193· 246· 248· 262· 265· 275· 289· 296· 312· 324· 328· 329· 330· 332· 338· 345· 362· 393· 397· 401· 402· 405· 421· 439· 443· 459· 464·
Փուաւիտա · · · · 12·
Փաւիգիա 10· 157· 332· 337· 355·
Փրիդրիխ Բ· · · · 410·
Փրիդրիխ Բարբարոսա 374· 375·
Փրիդրիխ Մեծ· · · 17·

Քաղկեդոն 11· 26· 27·30· 32· 33· 109· 113· 119· 128· 306· 362·

Քայ Խոսրով· · 401· 410·
Քերսոն· 142· 146· 147·
Քիոս կղզի· 246· 405· 444·
Քսանթէյ · · · 417·
Քսենայիաս· · · · 47·
Քրիստափորոս կայսր· 210· 219·
Քսիտիլինոս պատրիարք·299·
Քսիւլապորտա դուռ· 477·
Քսիփիս Նիկեփորոս· · 257·
Քրասինեան դուռ· · 315
Քրիսոփիոս· · · 15· 24·
Քրիւսոպոլիս· · · 387·

Օգոստոս կայսր· · · 5·
Օդեսոս· · · · · 50·
Օդրին (Ադրիանուպոլիս)· 408·
Օթման խալիֆ· · · 128·
Օլաֆ սուրբ· · · · 275·
Օխուիդա· 254· 256· 258· 260· 279·283· 403· 404·433· 443· 448·
Օղուզներ· · · · 296·
Օմիդներ· · · · 161
Օմար Ալու Հաֆս· · 174·
Օմար բէկ· · · 446·447·
Օմար խալիֆ· · · 123·
Օմրտագ իշխան· · 171·
Օմիալոփսիւխիտներ· 454·
Օյնէ ոն· · · · · 360·
Օպսիկիոն· 141· 148· 149·
Օսման· · · · · 436·
Օսմանցիներ·443·444·447· 449· 450· 455—463· 475·
Օստրոգոթներ· 10· 66· 68· 73· 75· 99·
Օտտոն Մեծ· · 229· 234·
Օրբան ինժիներ· · 475·
Օրիենտ· · · · · · 9·
Օրիկոս· · · · · 319·
Օրտէիներ· · · · 93·
Օրտոկիտներ· · · 329·

Պատրիարքներ· 230· 239· 261· 270· 275· 326·
Պերկունդոս եպիսկոպոս· 88·
Պինլէյ պատմիչ· 201· 253·
Պլամանդրացիներ· · 383·
Պլանդրիա· · · · 326·
Պլորենտ· · · 325· 468·
Պոլօէ· · · · · · 10·
Պոջիա· · · · · 432·
Պորմոզոս եպիսկոպոս· 196·
Պրանկներ· 5· 69· 70· 74· 75· 113· 167· 187· 189· 197· 327· 328· 330· 343· 344· 383· 388—392·396—410· 418· 419· 435· 442· 446· 447· 467·
Պրանսիա· · · · 462·
Պրանցէս· · · · 472·
Պրանցիսկոս սուրբ · 358·
Պրեդրիխ Բարբարոսա· 374· 375·
Պրուժին· · · 259· 270·
Պօլմրէյեր պատմիչ· 105· 306· 363·

Վրիպակներ

Սխալ	էջ.	տող.	Ուղիղ
մեծ ու փայլ	13	15	մեծ փայլ ու
Արէանդնէ	29	1	Արիադնէ

Գ. Հերակլի հարստութիւնը եւ իսլամի դեմ պատերազմ, վերնագիրը չէ նշանակուած էջ 110. սխալ է վերեւի վերնագիրը՝ էջ 111—136, 397—408.

949 թ,	129	26	649 թ.
699 թ,	134	15	690 թ.
Սին ծով	236	25	Սև ծով
նժոզ	240	14	ուժեզ
ինկվիցիական	270	7	ինկվիզիցիական
միացրին	278	4	մեծացրին
ստրատեֆը	289	21	ստրատեգը
ծընուել էին	343	2	ծըծուել էին
Ախուիդա	403	24	Սխուիդա
»	404	17	»
Դիւասխիոն	415	5	Դիւռոխիոն
թարգմանների	427	21	թաթարների
μεγάλη ἴβέα	427	19	μεγάλη ἰδέα
tilique	433	1	filioque
Նեմուս	435	1	Հեմուս
»	436	17.22	»
իմաստակութիւն (sofismus)	453	17	սուֆիքական փիլիսոփայութիւն (sufismus)
Աթոռը	455	12	Աթոնը

Հայաստանի Ազգային գրա
NL0422758

20 Ft Pt